Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՀՊԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. М. ГЕГАМЯН

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ В АРМЕНИИ В ГОДЫ НЭПА

(1921—1936)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԷՊԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1921—1936)

60911



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1978

9 (С 43) 2
Գ 42

Մենագրության մեջ քննարկվում են հանրապետությունում նոր տնտեսական քաղաքականության կենսագործման օրինաչափություններն ու առանձնահատկությունները։ Ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման ֆոնի վրա լուսաբանվում են Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության ձևավորման ու զարգացման հարցերը։ Հատուկ ուշադրություն է դարձված «ռազմական կոմունիզմի» քաղաքականության, գործազրկության վերացման, հարկային քաղաքականության կենսագործման, գյուղացիության շերտավորման, դասակարգային պայքարի սրման, բանվորագյուղացիական դաշինքի և այլ հարցերի վրա։ Վեր են լուծվում Հայկական ՍՍՀ-ում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական այն վերափոխումները, որոնք հասցրին սոցիալիզմի հաղթանակին։

Պատասխանատու խմբագիր
պատմական գիտ. դոկտոր
Կ. Ս. ՅՈՒԴԱՎԵՐԻՅԱՆ

Գիրքը երաշխավորել
պատմական գիտ. դոկտորներ
Հ. Հ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆԸ և Վ. Ն. ՂԱԶԱԽՅԱՆԸ

Պ 10604
703(02)—78 26—78
© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով երկրում հաստատվեց պրոլետարիատի քաղաքական իշխանությունը, որի առջև կանգնած ամենադժվար խնդիրը նոր հասարակարգի տնտեսական հիմքերի ստեղծումն էր։

Ծանր, արգելակներով ու անակնկալներով լեցուն էր մեր երկրում սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարը։ Ամեն ինչ արվում էր առաջին անդամ՝ փորձի բացակայության և միջոցների պակասության պայմաններում։ Հեղափոխությունից հետո երկրի տնտեսական կյանքում հինն ու նորը այնպես էին միահյուսված ու խճճված, որ դեռևս բավականին ամուր հին կացութաձևի կողքին նորի հաստատման ու զարգացման համար անհրաժեշտ միջոցներից ու կազմակերպչական աշխատանքներից բացի որոշակի ժամանակ էր պահանջվում։ Դա կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանն էր, որը կանխատեսել էին դեռևս Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը։

Մեր երկրում սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո պայքարի հիմնական թատերաբեմը տնտեսական շինարարության բնագավառն էր տեղափոխվել։ Այստեղ էր վճռվում ով՝ ում հարցը։ Բայց քանի որ Ռուսաստանի բնակչության մեծամասնությունը գյուղացիություն էր, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ առանց բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման պրոլետարիատը չի կարող միայնակ կառուցել սոցիալիստական հասարակարգը։ Այստեղից էլ՝ բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման անհրաժեշտությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցման ողջ ժամանակաշրջանում։ Ինչպես նշված է ՍՄԿԿ Ծրագրում, «Լենինը տվեց կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ամբողջ ժամանակաշրջանում պրոլետարական պետության քաղաքականության խոր, գիտական հիմնավորումը։ Նա մշակեց նոր տնտե-

ական քաղաքականությունը (ՆԷՊ), որի նպատակը սոցիալիզմի հաղթանակն էր»[1]:

Նէպի կենսագործումը նպաստեց անմիջապես արտադրության զբաղվողների շահագրգռվածության բարձրացմանը, առանց որի, ինչպես ցույց տվեց կյանքը, հնարավոր չէր հետագա առաջընթացը: Այն պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կապիտալիզմի դեմ կապիտալիստական տնտեսավարության մեթոդներով պայքարելու միջոց էր: Ավելին, նէպի մեջ ի սկզբանե նշմարվում էին նաև սոցիալիստական տնտեսավարության հիմնական սկզբունքները: Խոսելով մեր երկրում նէպ մտցնելու մասին, Լ. Ի. Բրեժնևը ասել է. «Դրա հետ մեկտեղ Լենինն ավելի հեռուն էր նայում: Արդեն այն ժամանակ նա մշակեց սոցիալիստական տնտեսավարության այնպիսի սկզբունքներ, որոնք իրենց նշանակությունը լիովին պահպանում են նաև մեր օրերում..., այսօր էլ հանդիսանում են կուսակցության տնտեսական քաղաքականության կարևորագույն օրիենտիրները»[2]:

Որպես կապիտալիզմից սոցիալիզմին անցման ամբողջ ժամանակաշրջանի գիտականորեն հիմնավորված քաղաքականություն, նէպը միշտ գտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Սովետական պատմաբանները, տնտեսագետները և հասարակական-քաղաքական գործիչները տակավին նախապատերազմյան տարիներին տարբեր առիթներով անդրադարձել են նէպի պրոբլեմներին: Սակայն նէպը բազմակողմանի ուսումնասիրության առարկա դարձավ միայն հետպատերազմյան շրջանում: Է. Գենկինայի, Յու. Պոլյակովի, Ս. Տրապեզնիկովի, Ի. Տրիֆոնովի, Ի. Կատորգինի և ուրիշների աշխատություններ[3] սովետական պատմագրության մեջ ուղի հարթեցին նէպի գիտական ուսումնասիրության համար:

Նոր տնտեսական քաղաքականության հիմնական հարցերը քննվել և գիտական պատշաճ մակարդակով լուսաբանվել են «ՍՍՀՄ պատմու-

---

1 «ՄԿԿ Ծրագիրը», Երևան, 1974, էջ 17:

2 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 2, Երևան, 1970, էջ 116:

3 *Э. Б. Генкина,* Переход советского государства к новой экономической политике (1921—1922), М., 1954; *Ю. Н. Поляков,* Переход к нэпу и советское крестьянство, М., 1967; *С. П. Трапезников,* Ленинизм и аграрно-крестьянский вопрос, т. I, II, М., 1967, 1974; *И. И. Трифонов,* Очерки истории классовой борьбы в СССР в годы нэпа (1921—1937), М., 1960; *И. И. Каторгин,* Исторический опыт КПСС по осуществлению новой экономической политики (1921—1925), М., 1971 և ուրիշներ:

բյան» և «Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմության» բազմահատորյակների համապատասխան բաժիններում[4]։

Մեր երկրում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության գործում պատմագիտական կարևոր նվաճում հանդիսացան նեպի 50-ամյակի առթիվ գումարված համամիութենական գիտական նստաշրջանների նյութերը, որոնք հրատարակվեցին առանձին գրքերով[5]։ Դրանցում ցույց են տրված նեպի կենսագործման անհրաժեշտությունն ու արդյունքները, համարձակ հարցադրումներ են արված (երբեմն վիճելի) նրա այս կամ այն պրոբլեմի շուրջը։ Սակայն այդ ժողովածուներում տեղ չեն գտել անդրկովկասյան հանրապետությունների նվիրված նյութերը։

Դեռևս 1966 թ. «Вопросы истории КПСС» ամսագիրն անդրադառնալով նեպի պրոբլեմների ուսումնասիրմանը, արդարացիորեն նշեց, որ «...ազգային հանրապետություններում և մարզերում նոր տնտեսական քաղաքականության կենսագործման կուսակցության տակտիկայի առանձնահատկությունների հարցը հետագա ուսումնասիրության կարիք է զգում»[6]։ Եվ, իրոք, եթե Միության մասշտաբով նեպի կենսագործման հարցերի խոր և բազմակողմանի ուսումնասիրությունը սկսվել է 1950-ական թվականներից, ապա նույնը չի կարելի ասել ազգային հանրապետությունների մասին։ Միայն 1960-ական թվականներին պատմաբանները (հիմնականում Միջին Ասիայի) ձեռնամուխ եղան այդ խնդրի կատարմանը։ Լույս տեսան Վ. Շերստոբիտովի, Ռ. Ամինովայի, Ի. Չերնենկոյի և ուրիշների աշխատությունները, որոնց մեջ հատուկ ուշադրություն է դարձվում տեղերում նեպի կենսագործման օրինաչափություններին և առանձնահատկություններին[7]։ Այդ հարցերի վրա անհրաժեշտ

---

4 «История СССР с древнейших времен до наших дней», т. VIII, М., 1967; т. IX, М., 1971; «История коммунистической партии Советского Союза», т. IV, кн. I, М., 1970.

5 «Исторический опыт КПСС в осуществлении новой экономической политики», М., 1972; «Ленинское учение о нэпе и его международное значение», М., 1973, «Новая экономическая политика. Вопросы теории и истории», М., 1974.

6 «Вопросы истории КПСС», 1966, № 10, стр. 59.

7 *В. Шерстобитов,* Новая экономическая политика в Киргизии, Фрунзе, 1964; *Р. Аминова,* Аграрные преобразования в Узбекистане в годы перехода советского государства к нэпу, Ташкент, 1965; *И. Черченко,* Переход к новой экономической политике на Украине, Киев, 1965 и другие.

ուշադրություն դարձվեց նաև նէպի 50-ամյակին նվիրված դիտական նստաշրջաններում։

Սակայն ազգային հանրապետություններում նէպի կենսագործման փորձի ուսումնասիրության վիճակը դեռևս բավարար համարել չի կարելի։ Դա վերաբերում է նաև Անդրկովկասին։ Անդրկովկասյան հանրապետություններում գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրների ուսումնասիրությանն է նվիրված Պ. Լոմաշվիլու ուշագրավ աշխատությունը[8], որտեղ խոսվում է նաև Հայաստանում նէպի կենսագործման հարցերի մասին։ Ի տարբերություն այլ հետազոտողների Պ. Լոմաշվիլին ճիշտ է բացատրել Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործման, նէպին անցնելու, նրա խաղացած դերի և այլ հարցեր։ Սակայն նէպի հարցերն այստեղ շոշափվում են հարևանցիորեն, որովհետև դրանք հեղինակի հատուկ քննարկման առարկան չեն հանդիսացել։

Չնայած, սկսած 1950-ական թվականներից, նէպի պրոբլեմներն անընդհատ գրավել են ուսումնասիրողների ուշադրությունը, մինչև այժմ ամբողջական ուսումնասիրություն չկա մեր երկրում նրա կենսագործման օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին (խորությամբ և լայնությամբ)։ Լավագույն դեպքում ուսումնասիրվել են նէպի հետ կապված անցման շրջանի առանձին հարցեր (նրա ազդեցությունը գյուղացիության, դասակարգային պայքարի, կոոպերացիայի, տնտեսական ու հասարակական կյանքի այլ բնագավառների վրա), որով ակամայից շրջանցվել է նրա դրսևորման բազմապլանային կոմպլեքսը, որտեղ բոլոր հարցերը փոխադարձաբար կապված են և պայմանավորված միմյանցով։ Ավելին, եղած գրականությունից հաճախ այն տպավորությունն է ստացվում, որ նէպը ագրարային-գյուղացիական հարցին է վերաբերում, որի պատճառով էլ հետազոտողների տեսադաշտից դուրս են մնացել սոցիալիստական արդյունաբերության վերականգնման ու զարգացման, բանվոր դասակարգի աճի և ամրապնդման, մեր երկրում ծավալած կուլտուրական հեղափոխության վրա նրա ազդեցության և խաղացած դերի հարցերը։ Մյուս թերությունն այն է, որ հիմնական ուշադրությունը բևեռելով նէպի կենսագործման առաջին շրջանի վրա (1921—1925), անհրաժեշտ խորությամբ չեն ուսումնասիրված հաջորդ փուլերը (հատկապես վերջին շրջա-

---

8 *П. Ломашвили*, Великий переворот, Тбилиси, 1972.

նը)։ Որպես անցման շրջանի կուռ և ամբողջական քաղաքականություն, անհրաժեշտ է նրա ուսումնասիրությունը հասցնել մինչև մեր երկրում սոցիալիզմի կառուցումը։ Այլ կերպ հնարավոր չէ նեպը դիտել իր զարգացման ու փոփոխման պրոցեսում, ցույց տալ նրա ներքին դինամիկան՝ կապված մեր երկրում սոցիալիզմի կառուցման հետ։

Նոր տնտեսական քաղաքականության և նրա հետ առնչվող հարցերի ուսումնասիրության այժմյան մակարդակը ռեալ հիմք է կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի տնտեսական և քաղաքական կյանքի խոր, բազմակողմանի ուսումնասիրման համար, իսկ վիճելի հարցերն ու տարակարծությունները վկայում են նեպի հետագա ուսումնասիրման անհրաժեշտության մասին։

Գրականության մեջ միանշանակ կարծիք չկա, նախ՝ նեպի պարբերացման շուրջը։ Դեռևս 1961 թ. Ի. Բերխինը իրավացիորեն նկատել է, որ հատակություն չկա նեպին անցնելու ժամանակաշրջանի մասին եղած կարծիքների մեջ[9]։ Փաստորեն այն չճշտվեց նաև հետագայում։ Ամփոփելով նեպի կենսագործման շուրջը ծավալված բանավեճը, «Вопросы истории КПСС» ամսագիրը 1968 թ. արդարացիորեն նշեց, որ «...նեպի պարբերացման հարցերը հետագա ուսումնասիրության կարիք են զգում»[10]։

Գրականության մեջ որոշակի հատակություն չկա նեպին անցնելու և հատկապես նրա վերջին փուլի ժամանակագրության հարցերում։ Գիտնականները վիճում են նաև «նահանջի» և ուժերի վերախմբավորման ժամանակաշրջանների և այլ հարցերի շուրջը[11]։

Նախ, կարծում ենք, որ հիմնազուրկ են նեպի վերջին փուլի շուրջը եղած վեճերը։ Որպես կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանի ամբողջական քաղաքականություն, այն պետք է ընդգրկի մինչև 30-ական թվականների երկրորդ կեսը, երբ մեր երկրում հիմնականում հաղթանակեց սոցիալիզմը։ Այդ շրջանում ստեղծվեց սոցիալիզմի արդյունաբերական բազան, կենսագործվեց կուլտուրական հեղափոխությունը, վերակառուցվեց գյուղատնտեսությունը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացումն ավարտվեց երկրորդ հնգամյակի վերջում։ Մինչ այդ գյուղացիների զգալի մասը մանր անհատական տնտեսություն էր վարում, որոնց նկատմամբ հնարավոր չէր վարել այլ քաղաքականու-

---

9 Տե՛ս И. Б. Берхин, Некоторые вопросы историографии новой экономической политики в СССР («Вопросы истории КПСС», 1961, № 3).

10 Նույն տեղում, 1968, № 2, էջ 85

11 Տե՛ս „Вопросы истории КПСС" ամսագրի 1966—1967 թթ. համարները։

թյուն՝ բացի նէպից։ ՍՍՀՄ սովետների VII համագումարում (1935) այդ առիթով արձանագրվեց. «Մենք այժմ էլ դեռ չենք ոչնչացրել նէպը, քանի որ նույնիսկ կապիտալիստական տարրերը վերացվելուց հետո մեզ մոտ կան միլիոնավոր մենատնտեսներ՝ իրենց մասնավոր տնտեսությամբ և քանի որ, որոշ դեպքերում, կոլտնտեսականները նույնպես հանդես են գալիս շուկայում, որպես իրենց արտադրանքի մասնավոր վաճառողներ։ Նէպը, որ վերջին աստիճանն է ապրում, շարունակում է իր աշխատանքը հօգուտ սոցիալիզմի»[12]։ Ապրանքադրամական և շուկայական հարաբերությունների խորացումը նույնպես բխում էր նէպի հիմնական սկզբունքներից։ Այնպես որ նէպը ավարտվեց կամ ավելի ճիշտ՝ սպառեց իրեն մեր երկրում սոցիալիզմի կառուցումով[13]։

Տարակարծություններ կան նաև նէպին անցնելու ժամանակաշրջանի հարցի շուրջը։ Ոմանք նախորդների մի մասը փորձում է ցույց տալ, որ նոր տնտեսական քաղաքականությունը ըստ էության 1918 թ. քաղաքականության շարունակությունն է[14]։ Դրանք, պարզապես նման են որպես պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կիրառվող խաղաղ, տնտեսական շինարարության քաղաքականություն։ Նվ. Ի. Լենինն այդ մասին զուգահեռ էր անցկացնում՝ դրանով պայքարում էր բոլոր նրանց դեմ, ովքեր փորձում էին նէպը դիտել որպես կապիտալիզմը վերականգնելու քաղաքականություն։ Նէպի սկզբունքները, որպես տնտեսական շինարարության քաղաքականություն, հիմնականում մշակվեցին 1921 թ. գարնանը։ Նույնիսկ սովետների VIII համագումարի ժամանակ, ինչպես տեղին նկատել է Յու. Պոլյակովը, որոշակիորեն հստակ չէին այդ սկզբունքները։

Գրականության մեջ սովորաբար նէպի կենսագործման առաջին տարին անջատվում է որպես «նահանջի» փուլ։ Մենք լրիվ համաձայն ենք այն հեղինակների հետ (Ա. Մատյուգին, Ի. Տրիֆոնով և ուրիշներ), որոնք այդ «նահանջը» հարաբերական իմաստով են հասկանում[15]։

---

12 «Խորհրդային Հայաստան», 1 փետրվարի, 1935։

13 *Ю. И. Климов,* К вопросу о периодизации новой экономической политики, («Вопросы истории КПСС», 1966, № 11, стр. 61—67).

14 «Экономическое учение В. И. Ленина и современность», М., 1971, стр. 170 — 172.

15 *Н. Матюгин,* О хронологических рамках перехода от «военного коммунизма» к новой экономической политике («Вопросы истории КПСС», 1967, № 3, стр. 66 — 73); *И. Трифонов,* К вопросу о нэпе и новой буржуазии («Вопросы истории КПСС», 1967, № 4, стр. 59—70).

Միանգամայն ճիշտ է Ի. Տրիֆոնովը, որ «նէպը սկսվեց նահանջից։ Սակայն դա ժամանակավոր էր, մասնավոր բնույթ ուներ և ինչ-որ չափով պայմանական էր»[16]։ «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն իր ժամանակի միակ անհրաժեշտ և հնարավոր քաղաքականությունն էր։ Սակայն, երբ փոխվեցին պայմանները, այն դադարեց մեր երկրի հետագա առաջընթացին նպաստել։ Ուստի նէպը, ըստ էության, ոչ թե նահանջ էր, այլ նախորդ քաղաքականության սխալների ուղղում, սխալներ, որոնց հետագա խորացումը սպառնում էր բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդմանը, մեր երկրում սոցիալիզմի կառուցմանը։ 1921 թ. աշնանը նէպի մասին, Վ. Ի. Լենինը գրում էր. «...ներկայումս դրությունը հենց այնպես է, որ մեր նոր տնտեսական քաղաքականությունը դեռ բավականաչափ որոշ չէ պարտիայի լայն շրջանների համար և որ առանց մեր նախընթաց տնտեսական քաղաքականության սխալ լինելը պարզ պատկերացնելու, մենք չէինք կարող հաջողությամբ կատարել մեր աշխատանքը՝ մեր նոր տնտեսական քաղաքականության հիմքերն ստեղծելու և նրա ուղղությունը վերջնականապես որոշելու համար»[17]։ Հետևաբար, այդ սխալներն ուղղելուն և երկիրը ճգնաժամային վիճակից դուրս բերելուն ուղղված քաղաքականությունը նահանջ համարելը ճիշտ չէ։ Վ. Ի. Լենինը կուսակցության XI համագումարում (1922) հայտարարելով, որ «նահանջն ավարտվեց» փաստորեն հակահարված էր տալիս նէպի մեջ միայն նահանջ տեսնող օպորտունիստներին, որոնք չէին հավատում մեր երկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան պլանին։ Հետևաբար, նահանջի մոմենտը այնքան երկրորդական էր մեր երկրում կապիտալիզմից սոցիալիզմին անցման տնտեսական քաղաքականության մեջ, որ այն որպես առանձին փուլ դիտելը ճիշտ չէ, քանի որ դրանով կամա թե ակամա ընդգծվում է նրա էական և կարևոր լինելը։

Մենք համաձայն չենք նաև Յու. Կլիմովի[18], Վ. Կուզմինի[19] և այլոց հետ, որոնք 1922—1925 թթ. դիտում են որպես ուժերի վերախմբավորումն ավարտելու շրջան։ Ուժերի վերախմբավորման շատ կարևոր տարրերից մեկը միջակի մասսայական շրջադարձն էր դեպի կոլեկտիվ տնտեսություններ, որ ինչպես հայտնի է, տեղի ունեցավ 1929 թ.։

---

16 «Вопросы истории КПСС», 1967, № 4, стр. 61.

17 Վ. Ի. Լենին, *Երկեր, հ. 33, էջ 79։*

18 «Вопросы истории КПСС», 1966, № 11, стр. 61—67.

19 *В. Кузьмин,* Новая экономическая политика и смычка социалистической промышленности с мелкокрестьянским хозяйством, («Вопросы истории КПСС», 1967, № 2).

Առանց դրա հնարավոր չէր ամբողջ ճակատով հարձակման անցնել շահագործողական տարրերի դեմ: Ինչպես ամբողջ Միության մեջ, այնպես էլ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում, այդ վերախմբավորումն ավարտվեց 1920-ական թվականների վերջերին, որից հետո սկսվեց ամբողջ ճակատով հարձակման փուլը: Ելնելով այդ բոլորից, մենք նպատակահարմար ենք գտնում նէպի կենսագործումը բաժանել երկու փուլի. 1) նահանջի և ուժերի վերախմբավորման (1921—1929) և 2) ամբողջ ճակատով հարձակման (1930—1936): Այսպիսի բաժանումը միաժամանակ հնարավորություն է տալիս նէպը դիտելու իր զարգացման ու փոփոխման պրոցեսում, որը շատ կարևոր է գիտական ուսումնասիրության համար:

Նէպի պրոբլեմները, նրա կենսագործման արդյունքները և խաղացած դերը մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործում դեռևս ինչպես հարկն է չեն արժանացել սովետահայ ուսումնասիրողների ուշադրությանը: Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի պատմության ուսումնասիրությունը մեր հանրապետությունում հիմնականում սկսվեց հետպատերազմյան տարիներին:

Հրապարակի վրա այդ հարցի մասին եղած գրականությունը կարելի է բաժանել երկու մասի. 1) անմիջապես նէպին վերաբերող սակավաթիվ ուսումնասիրություններ և 2) հանրապետության անցման շրջանի պատմության ուսումնասիրությանը նվիրված գրականություն, որտեղ այս կամ այն չափով արծարծվում են մեզ հետաքրքրող հարցերը (հատկապես անցումը նէպին, նրա առաջին տարվա արդյունքները, ազդեցությունը տնտեսական կյանքի վրա և այլն):

Հանրապետությունում սոցիալիզմի կառուցման պրոբլեմներին նվիրված գրականությունը բավականին հարուստ նյութ է պարունակում մեր հանրապետությունում սոցիալիզմի կառուցման պատմության, կուսակցական կազմակերպությունների գլխավորությամբ բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության մղած հերոսական պայքարի մասին և այլն[20]: Դա զգալիորեն հեշտացրել է մեր աշխատանքը՝

---

20 Ա. Հակոբյան, *Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925)*, Երևան, 1955, Վ. Ներկարարյան, *Հայաստանի կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925)*, Երևան, 1956, նույնի՝ *Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարը երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության վերակառուցման համար (1926—1929)*, Երևան, 1971, Հ. Էլչիբեկյան, Ա. Հակոբյան, *Ուրվագծեր*

նպաստելով նեպի պրոբլեմները խորը և բազմակողմանի քննարկելուն: Անհրաժեշտ է նշել, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի մասին եղած մի շարք աշխատություններում, որոնք նվիրված են հանրապետության ինդուստրացմանը, որպես կանոն, նեպի մասին հիշատակություն անգամ չկա[21]: Եվ դա զարմանալի չէ: Նեպը մեծ մասամբ դիտվում է միակողմանիորեն, որպես գյուղացիության նկատմամբ կիրառվող քաղաքականություն, չնայած հայտնի է, որ նրա վերջնական ու հիմնական նպատակը մեր երկրում սոցիալիզմի կառուցումն էր, որը հնարավոր չէր առանց երկրի ինդուստրացման:

Սովետական Հայաստանի պատմության (1917—1925), Երևան, 1954, Վ. Մելիքսեթյան, Հ. Կարապետյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության (1926—1934), Երևան, 1958, Բ. Օհանջանյան, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին, Երևան, 1958, Հ. Վարդանյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար, Երևան, 1967, Ս. Հարությունյան, Կոլտնտեսային կարգերի զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1960, «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», Երևան, 1960, Հ. Թումանյան, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, Երևան, 1962, Գ. Շաուրյան, Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում (1920—1929 թթ.), Երևան, 1962, Ն. Հովհաննիսյան, Դասակարգային պայքարը գյուղում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում, Երևան, 1969, Ռ. Մովսիսյան, ՍՍՌՄ-ում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը և նրա կենսագործումը, Երևան, 1965, Փ. Ենգոյան, Հայաստանը ինդուստրացման ուղիով, Երևան, 1967, Պ. Ոսկերչյան, Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1920—1940 թթ., Երևան, 1966, Ս. Ա. Մխոյան, Բանվորա-գյուղացիական դաշինքը արդի էտապում, Երևան, 1971, Ա. Վարդապետյան, Հայաստանի արհմիությունների պատմություն, Երևան, 1969, Դ. Դավթյան, Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան տեսության կենսագործումը Հայաստանում, Երևան, 1971, Հ. Ֆելեխյան, Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում, Երևան, 1970, Վ. Վազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը (1920—1929 թթ.), Երևան, 1975, Ս. Բաղմանյան, Հայաստանի կոմկուսը բանվորա-գյուղացիական դաշինքի համար մղած պայքարում, Երևան, 1976, «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, Երևան, 1967, «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն», Երևան, 1968, К. Худавердян, Культурная революция в советской Армении (1920—1940), Ереван, 1969, *С. Аллахвердян,* Роль рабочего класса в победе колхозного строя в Армении, Ереван, 1969, *և այլն:*

21 *Տե՛ս* Ռ. Մովսիսյան, *Մարքսիզմ-լենինիզմը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու օրինաչափությունների մասին, Երևան, 1957,* Փ. Ենգոյան, *նշվ. աշխ.,* Պ. Ոսկերչյան, *նշվ. աշխ. և այլն:*

Քանի որ սովետահայ պատմագրության մեջ նոր տնտեսական քաղաքականությունը հատուկ ուսումնասիրության առարկա չի հանդիսացել, հիմնականում չեն քննարկվել նրա կենսագործման տեղական առանձնահատկությունների, տևողության, պարբերացման, խաղացած դերի ու նշանակության և բազում այլ հարցեր։ Եթե 1920—1930-ական թվականներին դժվար էր այն թարմ հետքերով ուսումնասիրել, երբ դեռևս հիմնական պրոցեսները չէին ավարտվել, որպեսզի անհրաժեշտ ընդհանրացումներ արվեին, ապա 1950-ական թվականներից սկսած բոլոր անհրաժեշտ նախադրյալները կային՝ նէպն իր ամբողջության ու զարգացման պրոցեսում դիտելու և դնահատելու համար։ Սակայն մինչև այժմ դա չի կատարվել։

Անցման շրջանին նվիրված ուսումնասիրություններում սովորաբար հատուկ ուշադրություն է դարձվել նէպին անցնելու, լավագույն դեպքում նաև՝ վերականգնման շրջանում նրա խաղացած դերի հարցերի վրա։ Փաստորեն չեն ուսումնասիրվել նէպի կենսագործման հարցերը սոցիալիստական շինարարության հաջորդ փուլերում (1925—1936), որոնք վճռական նշանակություն ունեցան սոցիալիզմի հաղթանակի համար մղված պայքարում։ Սովետահայ պատմագրության մեջ երբեմն հանդիպում ենք նէպի առաջին փուլի մասին հիշատակության, որն ընդգրկում է 1921—1925 թթ.[22]։ Սակայն անցման շրջանի մյուս տարիների պատմությանը նվիրված աշխատություններում նէպը, որպես կանոն, չի ուսումնասիրվում[23]։ Այս տեսակետից բացառություն է կազմում Դ. Դավթյանի վերոհիշյալ աշխատությունը։ «Նէպի երկրորդ էտապում, —գրում է նա,— երբ ամբողջ ճակատով հարձակում սկսվեց կուլակա-կապիտալիստական տարրերի դեմ, ՍՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեն 1928 թ. հաստատեց գյուղատնտեսական հարկի չափը, իսկ չքավոր և սակավապոր միջակ տնտեսությունները ազատվում էին հարկից»[24], Նախ անհրաժեշտ է նշել, որ նույն նպատակը հետապնդող և նման օրենքներ հաստատվել են գրեթե ամեն տարի։ Եվ որ հիմնականն է, 1928 թ. չի սկզբնավորվել նէպի երկրորդ փուլը և այն երբեք ամբողջ ճակատով հարձակման տարեթվով չի հանդիսացել։ Անշուշտ, սխալվում է նաև Ռ. Մովսիսյանը, որ 1925 թ. հետո ընկած ժամանակաշրջանը,

---

22 Ա. Հակոբյան, նշվ. աշխ., վ. Ներկարարյան, նշվ. աշխ. և այլն։

23 Հ. Թումանյան, նշվ. աշխ., «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, վ. Ներկարարյան, նշվ. աշխ., Ս. Հարությունյան, նշվ. աշխ. և այլն։

24 Դ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 94։

երբ մեր երկրում կառուցվեց սոցիալիստական հասարակարգ՝ հայտարարում է Նէպի երկրորդ շրջան[25]:

Հանրապետության նախապատերազմյան տարիների պատմությանը նվիրված առանձին աշխատություններում, որտեղ անցման շրջանի հարցերը չեն դիտվել փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ, տեղ են գտել առանձին սխալներ և ոչ ճիշտ մեկնաբանություններ: Այսպես, հայտնի է, որ մեր երկրում կոոպերացիան զարգացման նոր փուլ սկսեց Նէպին անցնելուց հետո: Բայց դա չի խանգարել Ն. Հովհաննիսյանին հակառակը գրելու. «Նէպին անցնելիս կոոպակցությունը ելնում էր լենինյան կոոպերատիվ պլանից»[26]: *Նէպի և կոոպերացիայի հարաբերությունը սխալ է մեկնաբանում նաև Դ. Դավթյանը. «Նկատի ունենալով կոոպերատիվների (պետք է լինի «կոոպերացիայի»—Գ. Գ.) մասին եղած սխալ կարծիքները,— գրում է նա,— դեռևս 1924 թ. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Կենտգործկոմը և Ժողկոմխորհը դեկրետ հրապարակեցին՝ գյուղը կոոպերացման ենթարկելու վերաբերյալ»*[27]: *Կամ՝ Ն. Հովհաննիսյանը գրում է. «Չքավորական խմբակները գյուղում եղել են այն կենտրոնները, որոնք միավորել են աշխատավոր գյուղացիության հակակուլակային մասսան, իրենց շուրջը համախմբել միջակներին»*[28]: *Սակայն հայտնի է, որ չքավորական խմբակները մեզ մոտ հապճեպորեն կամպանիոն ձևով կազմակերպվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1925 թ. հոկտեմբերյան և 1926 թ. մայիսյան պլենումներից հետո և 1929—1930 թթ. համատարած կոլեկտիվացման շրջանում ու նույն արագությամբ ցրվեցին կամ անգործության մատնվեցին՝ առանց էական հետք թողնելու գյուղացիության կյանքում: Սխալ է պատճառաբանված նաև չքավորական խմբակներ չկազմակերպելու հարցը: Այդ հարցը ճիշտ չի բացատրված նաև Պ. Լոմաշվիլու մոտ*[29]: *Չքավորական կոմիտեներ չկազմակերպվեցին ոչ թե դրսի ուժերի ազդեցությամբ, ինչպես գտնում է հեղինակը, այլ ներքին, տնտեսական կյանքի սարսափելի անկման, գյուղացիության թուլլ շերտավորման և տեղական իշխանության թուլության պատճառով: Դրանց կազմակերպման համար օբյեկտիվ պայմաններ մեզ մոտ չկային:*

---

25 Ռ. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 42:

26 Ն. Հովհաննիսյան, *Չքավորական խմբակները Հայաստանում*, Երևան, 1967, էջ 35:

27 Դ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 51:

28 Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 61:

29 *П. Ломашвили*, նշվ. աշխ., էջ 60:

Անցման շրջանում մղվող դասակարգային պայքարին նվիրված Ե. Հովհաննիսյանի աշխատության մեջ ցույց չի տրվում գյուղում դրա դրսևորման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, դեպքերն ու փաստերը շարադրված են իրար հետ չկապակցված և առանց լուրջ պատճառաբանության։ Հայաստանում կոնդրատևականների գոյությունն իր ժամանակի որոշումներով հաստատելը, ինչպես անում է հեղինակը, առանց որևէ կոնկրետ փաստ վկայակոչելու, մեր կարծիքով ճիշտ չի[30]։ Ընթերցողը չի համոզվում, որ, իրոք, Հայաստանում նրանք գործել են։

Կուսակցական փաստաթղթերում և Վ. Ի. Լենինի աշխատություններում բազմիցս ընդգծվել է, որ նեպի հիմնական էությունը բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդումն է, առանց որի անհնար է մեր երկրում սոցիալիզմի կառուցումը։ Մինչդեռ Ռ. Մովսիսյանը նեպին անցնելու առթիվ գրում է. «Այդ քաղաքականության մեխը արտադրության բոլոր ոլորտներում անձնական շահագրգռվածության սկզբունքի կիրառումն էր...»[31]։ Այստեղ երևույթի էությունը շփոթված է նրան հասնելու միջոցների հետ։ Հ. Թումանյանի հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման պատմությանը նվիրված ծավալուն աշխատության մեջ նեպի հարցերը քննարկվում են հպանցիկ և այն էլ ընդգրկելով միայն վերականգնման ժամանակաշրջանը։ Մենագրության մեջ տեղ են գտել սխալներ, չհիմնավորված հայտարարություններ և այլն։ Այսպես, հեղինակը գրում է, որ պարենամասնատումը Հայաստանում կատարվում էր «տեղական հեղկոմների և չքավորական կոմիտեների միջոցով»[32]։ Մինչդեռ մեզ մոտ չքավորական կոմիտեներ չեն եղել։

Այսպիսով, կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանին նվիրված սովետահայ պատմագիտական գրականության մեջ նեպի հարցերը քննվել են այս կամ այն առիթով։ Լավագույն դեպքում ցույց է տրվել նրա դերը ժողովրդական տնտեսության վերականգնման գործում, որը հնարավորություն չի տվել ուսումնասիրողներին՝ նեպը դիտելու իր զարգացման ու փոփոխման պրոցեսում, կատարել տեսական ընդհանրացումներ, ցույց տալ կենսագործման տեղական առանձնահատկությունները։ Ըստ էության ուշադրություն չի դարձվել նեպի

30 Ե. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 106—107։

31 Ռ. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 84։

32 Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 21։

պատմաքննական վերլուծությանը, որի պատճառով չի վերհանվել ու գնահատվել նրա դերը մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում: Մենք հետու ենք այն մտքից, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանն ուսումնասիրողները միայն նեպի մասին պետք է գրեն: Սակայն, որպես այդ շրջանի հիմնական տնտեսական քաղաքականություն, նեպն այն հիմնական առանցքն է, որից բխում և որով պայմանավորված են բոլոր տնտեսական, քաղաքական ու գաղափարական միջոցառումները: Ուստի այդ պատմական փուլն ուսումնասիրողները պարտավոր են սոցիալիստական տնտեսության ամրապնդման և հաղթանակի գործում ցույց տալ նեպի խաղացած վիթխարի դերը:

Դեռևս 1930 թ. Ա. Գուլոյանի «Նեպի նոր և վերջին էտապը» հոդվածաշարում արժեքավոր դիտողություններ կան նեպի էության, նրա առջև դրված խնդիրների և հատկապես պարբերացման հարցերի շուրջը: Ցույց տալով նեպի երկակի բնույթը՝ նահանջ և հարձակում, հեղինակն արդարացիորեն հիմնական շեշտը դնում է հարձակման վրա, այն համարելով նեպի հիմնական էությունը: Ճիշտ է նկատում հեղինակը, որ միջակ գյուղացիության մասսայական շրջադարձով նշանավորվեց նեպի երկրորդ փուլը, որը պիտի հասցնի սոցիալիզմի կառուցմանը[33]:

1954 թ. լույս տեսավ Վ. Ներկարարյանի «Անցումը նեպին և նրա առաջին արդյունքները Սովետական Հայաստանում» հոդվածը, որտեղ նեպը դիտվում է որպես անցման շրջանի քաղաքականություն և նրա կենսագործման հարցերը քննարկվում են բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման, կոոպերացիայի զարգացման և այլ հարցերի հետ մեկտեղ: Համոզիչ փաստերով հեղինակը ցույց է տալիս նեպի բարերար ազդեցությունը հատկապես գյուղատնտեսության զարգացման վրա, գնահատում առաջին տարիների ձեռք բերած նվաճումների տնտեսական ու քաղաքական նշանակությունը: Ըստ Վ. Ներկարարյանի, Վ. Ի. Լենինը դեռևս սովետների Համառուսաստանյան VIII համագումարի օրերին (1920) առաջ քաշեց գյուղացիության նկատմամբ եղած քաղաքականությունը փոխելու հարցը: Ավելին, «...պարենհարկի հիմունքները Վ. Ի. Լենինը տվել է դեռևս 1918 թ. սկզբին իր «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատության մեջ... Լենինի նախաձեռնությամբ պարտիան ու սովետական իշխանությունը նորից էր վերա-

33 «Խորհրդային Հայաստան», 10—11 սեպտեմբերի, 1930:

դառնում այդ քաղաքականությանը»[34]: Անշուշտ, դա սխալ է, որովհետև նեպը նախկինում կենսագործվող որևէ քաղաքականության վերակենդանացում չի եղել: 1918 թ. խաղաղ շինարարության ժամանակահատվածն իր խնդիրներով, միջոցներով ու մեթոդներով խիստ տարբերվում է նոր տնտեսական քաղաքականությունից: Դրանց համադրումից ավելի շատ տարբերություն է ընդգծվում, քան՝ նմանությունը: Ճիշտ չէ նաև հեղինակի այն եզրակացությունը, որ «...երկրի զարգացման մի որոշ ստադիայում պարենհարկի կարիքը ևս չի լինելու և նա իր տեղը զիջելու է արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի կանոնավոր փոխանակությանը»[35]:

Հայաստանում նեպին անցնելու և նրա կենսագործման առաջին տարվա արդյունքներին է նվիրված Ս. Խարմանդարյանի ուսումնասիրությունը[36]: Այն ընդգրկում է 1921—1922 թթ., երբ Հայաստանում ամրապնդվեց սովետական իշխանությունը և վճռական միջոցառումներ ձեռնարկվեցին ավերված ու քայքայված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ: Արխիվային և վիճակագրական հարուստ տվյալներով հեղինակը ցույց է տալիս, որ նեպը միակ ճիշտ քաղաքականությունն էր, որի կենսագործմամբ Հայաստանը դուրս եկավ տնտեսական մղձավանջից և բռնեց սոցիալիստական վերածնության ուղին: Սակայն աշխատության սահմանափակ ժամանակաշրջանը հնարավորություն չի տվել հեղինակին՝ նեպը դիտելու որպես կապիտալիզմից սոցիալիզմին անցման քաղաքականություն և վեր հանելու նրա կենսագործման առանձնահատկությունները Հայաստանում:

Անցման շրջանի տնտեսական շինարարության հիմնական խնդիրներից մեկը «հեղափոխական տատանկերությունից» խուսափելն էր, որի մասին պարբերաբար հոդվածներ էին լույս տեսնում ժամանակի մամուլում: Տեղական առանձնահատկությունները ճիշտ հաշվի առնելը և աշխատավորության ուշադրությունը նրա վրա հրավիրելը մամուլի հիմնական խնդիրներից մեկն էր, որը կարևոր նշանակություն էր ստանում նեպի պայմաններում: Այդ տեսակետից ուշագրավ է Հ. Ֆելեքյանի «Նոր տնտեսական քաղաքականության մի քանի հարցերի քննարկումը սովետահայ

---

34 «Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու», № 1, 1954, էջ 65—66:

35 Նույն տեղում:

36 С. Хармандарян, Армянская ССР в первый год новой экономической политики, Ереван, 1955.

մամուլում» հոդվածը[37]: Հեղինակին հաջողվել է համոզիչ փաստերով ցույց տալ, որ սովետահայ մամուլը կարողանում էր աշխատավորությանը ճիշտ կողմնորոշել նեպի կենսագործման բարդ և խճճված պրոբլեմներում: Հոդվածը արժեքավոր է հատկապես նրանով, որ հեղինակը հետաքրքիր փաստեր է վկայակոչում ոչ միայն կենտրոնական, այլև գավառային մամուլից՝ կրկին անգամ հաստատելով այդ քաղաքականության մեծ ժողովրդականությունը: Սակայն, հիմնականում ծանրանալով նեպի կենսագործման առաջին տարվա վրա, հեղինակը տեսադաշտից դուրս է թողել դասակարգային պայքարի սրման, կոոպերացիայի, բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման և այլ հարցեր, որոնց մասին առատ նյութ կա մամուլում:

Անցման շրջանի քաղաքականության պրոբլեմներին է նվիրված նաև Մ. Դալլաքյանի «Նոր տնտեսական քաղաքականության կիրառումը Հայաստանում» հոդվածը[38]: Սակայն այնտեղ բացակայում է նեպի գիտական բնորոշումը, նրա հետ առնչվող պրոբլեմների ուսումնասիրությունը: Ըստ երևույթին հեղինակը նեպը դիտել է լոկ որպես հարկային քաղաքականություն և հիմնականում անդրադարձել 1921—1925 թթ. գյուղատնտեսական հարկ սահմանելու և գանձելու միջոցառումներին՝ թույլ տալով բազում սխալներ ու վրիպումներ: Քաջ հայտնի է, որ ամեն տարի հատուկ դեկրետ էր հրապարակվում գյուղատնտեսական հարկը գանձելու մասին, մինչդեռ նա գրում է. «...գյուղատնտեսական միասնական հարկը մտցվեց Հանրապետությունում ըստ Անդրկովկասյան Կենսագործկոմի և Ժողկոմխորհի 1923 թ. ապրիլի 23-ի և 1924 թ. ապրիլի 24-ի դեկրետների»[39]: Հոդվածում որոշակի հստակություն չկա թե գյուղատնտեսական հարկ գանձելու ինչպիսի կարգ գոյություն ուներ: «Հայաստանում»,— գրում է նա,— 1921 թ. կիրառվեց բազմատեսակ պարենհարկի սխեման»[40]: Պետք է ենթադրել, որ խոսքը գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներից պարենհարկ գանձելու մասին է: Սխալ և պարզունակ են հեղինակի պատկերացումները հանրապետությունում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության վերացման մասին: Վկայակոչելով խուզարկումներն ու բռնագրավումները դադարեցնելու վերաբերյալ պարենային ժողկոմիսարիատի 1921 թ. ապրիլի 16-ի և 29-ի հրամանները, նա գրում է. «Նոր տնտեսական քաղաքականությունը

---

37 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2:

38 «Լրաբեր» (հաս. գիտ.), 1968, № 12:

39 Նույն տեղում, էջ 9:

40 Նույն տեղում:

կիրառելիս հնարավոր սխալներից խուսափելու համար, ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Հայաստանի կառավարությունը հանդամանորեն ուսումնասիրում էին տեղի բոլոր պայմաններն ու առանձնահատկությունները։ Մինչև նէպին անցնելը նրանք ձեռնարկում էին նախնական միջոցառումներ գյուղացիական մասսաներին այդ քաղաքականությանն ընտելացնելու համար»[41]։ Կան նաև այլ կարծիք սխալներ։ «1921 թ. գարնանացանի կամպանիան հաջողությամբ կատարելուց հետո,— գրում է նա,— աշխատավորական մասսաները նախապատրաստվում էին պետությանը հանձնել առաջին պարենհարկը»[42]։ Հայտնի է, որ հարկերը պատրաստվում են վճարել ոչ թե գարնանացանից հետո, այլ՝ բերքահավաքից։ Բավարարվենք այսքանով։ Հեղինակը քննվող հարցի մասին հստակ պատկերացում չունի, որի պատճառով հոդվածը քիչ է առնչվում Հայաստանում նէպի կենսագործման պրոբլեմի հետ։

Նէպի կենսագործման շնորհիվ հանրապետության գյուղատնտեսության վերականգնման և գյուղում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հարցերը բարեխղճորեն քննարկված են Վ. Ղազախեցյանի ծավալուն մենագրության համապատասխան բաժիններում[43]։ Ցույց տալով նէպի ազդեցությունը գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման վրա, հեղինակը միաժամանակ հատուկ ուշադրություն է դարձնում գյուղի շերտավորման, դասակարգային հակամարտությունների սրման, սոցիալիստական կացութաձևի ամրապնդման հարցերի վրա, որոնք օրգանապես կապված են նէպի կենսագործման հետ։

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը հանրապետությունում գլխավորել և նրա անհրաժեշտությունը իրենց գրավոր ու բանավոր ելույթներում հիմնավորել են կուսակցական և պետական այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Ա. Մյասնիկյանը, Ս. Կասյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ս. Լուկաշինը, Հ. Ադամյանը, Ա. Գուլոյանը, Ա. Խանջյանը և ուրիշներ։ Նրանց ելույթներում բազմաթիվ արժեքավոր դիտողություններ կան անցման շրջանի տեսական և պրակտիկ հարցերի, հատկապես Հայաստանում նէպի կենսագործման առանձնահատկությունների, տեղական պայմանները հաշվի առնելու և այլնի մասին։

---

41 Նույն տեղում, էջ 4։

42 Նույն տեղում, էջ 5։

43 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ.։

Հայաստանում նէպի կենսագործման հարցերով զբաղվել է նաև տողերիս հեղինակը[44]։

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում նոր տնտեսական քաղաքականության կենսագործման, նրա դրսևորման ընդհանուր օրինաչափությունների և տեղական առանձնահատկությունների մասին հատուկ ուսումնասիրություն դեռևս չկա։ Եղած մի քանի հոդվածներն ու ուսումնասիրություններում տեղ գտած առանձին հատվածները, որոնք հիմնականում վերաբերում են նէպի առաջին տարիներին՝ նրա մասին ամբողջական պատկերացում չեն տալիս։ Իսկ կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի պատմության վերաբերող գրականության մեջ հիմնականում քննվում են Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեության, ժողովրդական տնտեսության զարգացման կամ կուլտուրական շինարարության հարցերը, որտեղ նէպը, որպես կանոն, հիշատակվում է ընդհանուր առմամբ կամ հարևանցիորեն։ Այդ իսկ պատճառով ուսումնասիրողների ուշադրությունից դուրս են մնացել արմատական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են նէպի պարբերացումը, սոցիալիստական շինարարության տարբեր փուլերում նրա կրած փոփոխությունը, կենսագործման առանձնահատկությունները, նէպը և կոոպերացիայի զարգացումը, դասակարգային պայքարի սրումը (տնտեսական, քաղաքական և գաղափարական), շերտավորման խորացումը, գործազրկության վերացումը, նէպը և բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդումը, պրոլետարիատի դիկտատուրայի դերի բարձրացումը նէպի պայմաններում և այլն։

Սույն ուսումնասիրության մեջ փորձ է արվում այդ հարցերը քննարկել փոխադարձ կապի և պայմանավորվածության, ինչպես նաև անընդհատ փոփոխման ու զարգացման պրոցեսում՝ ընդգրկելով կապիտալիզմից սոցիալիզմին անցման ամբողջ ժամանակահատվածը։ Հիմնական շեշտը դնելով նէպի մշակման ու կենսագործման համընդհանուր օրինաչափությունների վրա, ձգտել ենք ցույց տալ նաև նրա դրսևորման տեղական առանձնահատկությունները։

---

44 «Լենինը և ապրարային հարցի լուծումը» («Լրաբեր» (հաս. դիտ.), 1969, № 2), «Կոլտնտեսային գյուղի վերելքը» (նույն տեղում, 1970, № 11), «Հայաստանում նէպի կենսագործման մի քանի առանձնահատկությունները» (նույն տեղում, 1975, № 1), «Գործազրկության վերացումը Հայաստանում (1921—1930)» (նույն տեղում, 1975, № 10), «Կոոպերացիայի զարգացումը Հայաստանում (1920—1929)» (նույն տեղում, 1976, № 9), «Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը Հայաստանում» («Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1976, № 8) և այլն։

Աշխատությունը պատրաստելիս օգտագործել ենք մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները և հատկապես ձգտել ենք ընդգծել Վ. Ի. Լենինի դերը նոր տնտեսական քաղաքականության մշակման ու կենսագործման գործում: Նշելի մասին արժեքավոր դիտողություններ կան նաև կուսակցական և պետական գործիչների աշխատություններում ու ելույթներում, որոնք անմիջականորեն գլխավորել են նշելի կենսագործումը: Օգտագործել ենք նաև «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում» փաստաթղթերի ժողովածուն, որը հարուստ նյութ է պարունակում մեր երկրի տնտեսական ու քաղաքական զարգացման մասին: Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում հանրապետության կուսակցական և սովետական մարմինների կատարած վիթխարի աշխատանքը ցույց տալու նպատակով լայնորեն օգտագործել ենք Հայաստանի կոմունիստական կուսակցության համագումարների և պլենումների, ինչպես նաև ՀՍՍՀ սովետների համագումարների նյութերը, որոնք պահպանված են ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի (ՄԼԻ ՀՄՄ.) և Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական (ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ.) արխիվներում: Նշելի կենսագործման մասին հարուստ նյութեր են պարունակում ՀՍՍՀ Կենտգործկոմի, Ժողկոմխորհի, վիճակագրական վարչության և առանձին ժողկոմխորհրդատների ֆոնդերը: Այդ նյութերի մեծ մասը առաջին անգամ է մտցվում գիտական շրջանառության մեջ:

Մեր երկրում սոցիալիստական շինարարության հերոսական առօրյան իր հիմնական գծերով արտացոլվել է ժամանակի մամուլի էջերում: Անդրֆեդերացիայի և հանրապետական կենտրոնական թերթերից ու ամսագրերից բացի, լայնորեն օգտագործել ենք նաև տեղական թերթերն ու հանդեսները, որոնք առատ նյութ են պարունակում մեզ հետաքրքրող հարցերի մասին:

Սույն ուսումնասիրության մեջ փորձել ենք հետազոտել Հայաստանում նշելի կենսագործմամբ սոցիալիզմի կառուցման պատմությունը, ցույց տալ նրա ընդհանուր օրինաչափությունները ու տեղական առանձնահատկությունները, գտնելով, որ այն իր քաղաքական-դաստիարակչական նշանակությունից բացի, օգտակար կլինի այդ պրոբլեմով հետագայում զբաղվողների համար:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ՆԱՀԱՆՋԻ ԵՎ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ (1921—1929)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՊԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ «ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ հայ ժողովուրդը ձեռք բերեց խաղաղ, ստեղծագործ աշխատանքի պայմաններ և ակտիվորեն սկսեց պայքարել հանրապետության տնտեսական ու մշակութային վերածննդի համար։ Սակայն շատ ծանր ժառանգություն էր բաժին ընկել նրան։ Հայտնի է, որ տեղական կապիտալի մեջ գերիշխողը առևտրական կապիտալն էր, որն իր կնիքն էր դնում երկրի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի վրա։ Անդրկովկասը, այդ թվում և Հայաստանը, ծառայում էր որպես ապրանքային շուկա և էժան հումքի աղբյուր։ Ուստի տեղական կապիտալիզմի զարգացման համար նպաստավոր պայմաններ չկային և ազգային բուրժուազիան չնչին բացառությամբ նեռվում էր առևտրի ոլորտը՝ իր վրա վերցնելով միջնորդի ոչ սակավ շահավետ դերը։ «Հայաստանը,— գրում է Ս. Կասյանը,— դուրկ էր մնացել ռուսական կապիտալիզմի ներգործությունից։ Նա ենթարկված էր միայն առևտրական կապիտալի քայքայող բրիչին, իսկ արդյունագործական կապիտալի շինող մուրճն ու դնդանը չեն աշխատել այնտեղ»[1]։ *Ենթարկվելով առևտրական կապիտալի ավերիչ շահա-*

1 Ս. Կասյան, *Հայաստանի տնտեսական, դասակարգային ստրուկտուրան, Թիֆլիս, 1923, էջ 12։*

գործմանը, նախասովետական Հայաստանի գյուղացիության մի մասն արտագաղթում էր դեպի Կովկաս և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները, իսկ մյուս մասը շարունակում էր իր խղճուկ գոյությունը՝ ենթարկվելով անմարդկային ճնշման ու կողոպուտի։ Քաղաքի հիմնական բնակչությունը, որտեղ շատ թույլ էր զարգացած արդյունաբերությունը, մանր բուրժուազիան էր՝ արհեստավորները, առևտրականները, մանր տնտեսատերերը։ Այս համատարած աղքատությունն ու քայքայումը ծայրահեղ վիճակի հասան դաշնակների կարճատև տիրապետության շրջանում։ Ուստի նորահաստատ սովետական իշխանության առաջնահերթ և հիմնական խնդիրը՝ ազգաբնակչության ֆիզիկական գոյության պահպանումն էր, որի նկատմամբ մյուս, ոչ պակաս կարևոր խնդիրները հետին պլան էին մղվել։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու սկզբնական շրջանում տնտեսության մեջ հետևյալ կացութաձևերը գոյություն ունեին. 1) բնատնտեսային, որը բավականին տարածված չր հատկապես լեռնային, անասնապահական շրջաններում, 2) մանրապրանքային՝ հարթավայրային գոտում, հիմնականում ընդգրկելով մերձքաղաքային գյուղացիությանը և արհեստավորությանը, 3) մասնավոր կապիտալիզմ՝ գինու-կոնյակի գործարանների, մանր արհեստանոցների, ջրաղացների, ձիթհանքերի տերերը և այլն, 4) սոցիալիստական՝ ազգայնացված ձեռնարկությունները, սովխոզները, կոմունաները։ Հայաստանում պետական կապիտալիզմ չի արմատավորվել։ Այս կացութաձևերին համապատասխան դասակարգային կառուցվածքը հետևյալ պատկերն ուներ։ Կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի համարկենտ ներկայացուցիչները, որոնք խոր արմատներ չունեին երկրի էկոնոմիկայում, հեղափոխությունից հետո հեշտությամբ էքսպրոպրիացիայի ենթարկվեցին։ Միանգամայն այլ էր մանր-ապրանքային արտադրության վրա հենվող մանր բուրժուազիայի խնդիրը, որն ամենատարածված դասակարգն էր և որին չէր կարելի էքսպրոպրիացիայի ենթարկել։ Սակայն մանր բուրժուազիան, որն առանց առևտրի և առանց անընդհատ շրջանառության գոյություն ունենալ չէր կարող, փաստորեն նոր բուրժուազիայի առաջացման մշտական գործող աղբյուր էր և սովետական կարգեր հաստատվելուց հետո էլ կապիտալիզմի հիմնական հենարանն էր։ Նոր առաջացող բուրժուազիայի հետ սոցիալ-տնտեսական և քաղաքական սերտ միության մեջ էր գտնվում կուլակությունը։ Սովետների երկրի դեմ միջազգային իմպերիալիզմի բացահայտ պայքարի ձախողումից հետո մեր թշնամիները հույսեր էին կապում կուլակության և նոր բուր-

ժուզիայի հետ։ Ուստի, մեծ նշանակություն ուներ նրանց նկատմամբ պրոլետարիատի դիկտատուրայի կիրառած ճիշտ քաղաքականությունը։ Դա անցման շրջանի տնտեսական քաղաքականության (և ոչ միայն տնտեսական) ամենադժվար և ամենակարևոր բնագավառն էր։

Երկրում սովետական կարգեր հաստատվելուց հետո Հայաստանի բանվոր դասակարգը չնայած սակավաթիվ լինելուն, դարձավ իշխող քաղաքական ուժ՝ իր ձեռքը վերցնելով պետական ապարատը, հանդիսացավ սովետական իշխանության սոցիալական հենարանը։ Բանվոր դասակարգը սովետական իշխանության առաջին տարիներին չտեսնված տնտեսական դժվարություններ կրեց։ Խիստ կրճատվել էր բարձր որակավորում ունեցող բանվորների քանակը։ Նրանց մի մասը զորակոչվել էր կարմիր բանակի շարքերը, առաջ էր քաշվել կոոպակցական կամ տնտեսական ղեկավար աշխատանքի։ Արդյունաբերության շեշտակի անկման և օրավուր խստացող սովի պատճառով բանվոր դասակարգի հիմնական մասը գյուղ էր գնացել, արհեստավորությամբ, անգամ առևտրով էր զբաղվում։ Անկասկած, այդ բոլորը ղգալի չափով թուլացնում էին պրոլետարիատի դիկտատուրայի սոցիալական բազան։ Դա այն ժամանակ լուրջ վտանգ էր, մանավանդ որ բանվոր դասակարգի թուլության պատճառով կոոպակցության վրա ևս ուժեղանում էր մանրբուրժուական, գյուղացիական ազդեցությունը։ Ուստի, երկրի տնտեսական վերելքին և առաջին հերթին արդյունաբերության վերականգնմանն ուղղված միջոցառումները միաժամանակ հետապնդում էին բանվոր դասակարգի կոնսոլիդացման, նրա քանակական և որակական աճի խնդիրների լուծումը։

Երկրում սովետական կարգերի հաղթանակից, որպես բանվոր դասակարգի դաշնակից, մեծապես շահեց նաև գյուղացիությունը։ Նա ազատագրվեց կալվածատերերի և կապիտալիստների կեղեքիչ շահագործումից և անվճար ստացած հողակտորի վրա պետության բազմակողմանի օգնությամբ ու օժանդակությամբ սկսեց կարգավորել իր տնտեսությունը։ Հանրապետության սակավահողության պայմաններում գյուղատնտեսության առաջընթացի վրա բացասաբար անդրադարձավ այն, որ գաղթականության մի մասը չապահովվեց հողով։

Սովետական կարգերի հաստատումից հետո էլ շարունակվում էր Հայաստանի տնտեսական քայքայվածությունն ու պարենային ճգնաժամը։ «Մենք գիտենք, ընկերներ,— ասել է Ս. Օրջոնիկիձեն,— թե ինչպես հեշտ չէ սովետական իշխանություն կառուցել։ Էլ ավելի դժվար է, միլիոն անգամ ավելի դժվար է այդ իշխանությունը կառուցել այնտեղ,

ստանջված Հայաստանում, որը քիչ էր մնացել վերածվի գաղթականների հանրապետության»[2]։

Փրկության միակ հույսը Ռուսաստանից և սովետական մյուս հանրապետություններից ստացվող եղբայրական օգնությունն էր, որը վճռական նշանակություն ունեցավ սովետական կարգերի ամրապնդման գործում։ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից մի քանի օր անց՝ 1920 թ. դեկտեմբերի 12-ին, լսելով Հայաստանի Հեղկոմի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանի և Ա. Մռավյանի զեկուցումը հանրապետության տնտեսական վիճակի մասին, Վ. Ի. Լենինը ասել է. «Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց Սովետական Հայաստանին օգնենք ամեն կերպ»[3]։ Վ. Ի. Լենինի կարգադրությամբ Հայաստանին բաց է թողնվում երկու միլիարդ ռուբլի սովետական թղթադրամ (600 հազար ռուբլի ոսկով), որը տեղ է հասցնում Ա. Մռավյանը։ Եղբայրական օգնության ձևով մեկնելով հայ ժողովրդին, իրենց սուղ միջոցներից հաց և պարենամթերք էին առանձնացրել Ռուսաստանի, Ադրբեջանի սովետական հանրապետությունները։ Միայն 1921 թ. դեկտեմբերին Ադրբեջանից Հայաստան ուղարկվեց 50 վագոն հացահատիկ, մեծ քանակությամբ նավթ, դեղորայք, գրականություն, թուղթ և այլն։ 1921 թ. ՌՍՖՍՀ-ից Հայաստան ուղարկվեց մեկ և կես միլիոն արշին մանուֆակտուրա, դեղորայք, թուղթ և այլն։ Կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը, Հայաստանին անընդհատ օգնություն էին ցույց տալիս նաև սովետական մյուս հանրապետությունները։ Երբ երաշտի պատճառով Սովետական Ռուսաստանը չկարողացավ անհրաժեշտ քանակությամբ պարենամթերք ուղարկել (նախատեսված էր ամսական 50 հազար փութ), մեկ և կես միլիոն ռուբլի (ոսկով) դրամ հատկացրեց Հայաստանի հանրապետությանը՝ Մակուի խանությունից սերմացու և պարեն գնելու համար[4]։ «Հայաստանի աշխատավորությունը,— գրել է «Կոմունիստը»,— արդեն ղգում է, որ իր թիկունքում կանգնած է վիթխարի Ռուսաստանի անհաղթելի ուժը...»[5]։ Անդրադառնալով 1921 թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի ստացած օգնությանը ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը գրել է. «Հայաստանը Սովետական Ռուսաստանից ստացել է 1,5 միլիոն ռուբլի ոսկով, մեկ միլիոն ռուբլի թղթ-

---

2 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1959, էջ 34։

3 Ա. Մռավյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 222։

4 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, թ. 2, գ. 5, թ. 1։

5 «Կոմունիստ», 6 հունվարի, 1921։

բացրամ՝ ոսկու հաշվով, 3 միլիոն արշին մանուֆակտուրա, 500 հազար փութ հաց, 100 հազար փութ սերմացու, 50 հազար փութ ձուկ, 20 հազար փութ շաքար, 2 հազար փութ բամբակի սերմ, 20 հազար կոմպլեկտ պատրաստի հագուստ, 10 հազար կտոր գյուղատնտեսական գործիք և մեքենա, 10 ավտոմոբիլ, 10 սավառնակ... և այլն: Բացի այդ Սովետական Ադրբեջանը Հայաստանին ձրիաբար բաց է թողել անհրաժեշտ քանակի նավթ և այլ նավթամթերքներ»[6]: Կարծես ամփոփելով Հայաստանի ստացած օժանդակությունը Ս. Լուկաշինը 1922 թ. գրել է. «Մենք անցյալ տարի ապրել ենք Ռուսաստանի օգնությամբ, այնտեղից ստանալով մոտ 5 միլիոն ռուբլի ոսկու արժողությամբ ապրանքներ, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ Ռուսաստանը ունեցել է սով բառիս բուն նշանակությամբ»[7]:

Այսպիսով, իզուր չէր, որ բաղմադարյան աղատագրական պայքարից հետո, հայ ժողովուրդն իր գոյության ու վերածնունդի հույսերը կապեց Ռուսաստանի հետ: Ինչպես երկրում սովետական կարգերի հաստատման, այնպես էլ նրա հետագա ամրապնդման և բնակչության ֆիզիկական բնաջնջումից փրկելու խնդրում անգնահատելի է Ռուսաստանի և սովետական մյուս հանրապետությունների եղբայրական օգնության դերը: Այն վճռական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ճակատագրի, նրա տնտեսական և սոցիալական հետագա զարգացման գործում:

Հանրապետության ծանր վիճակը և սանձազերծված քաղաքացիական կռիվները նորահաստատ սովետական իշխանությանը հարկադրեցին մթերքների ու ապրանքների պաշարներն իր ձեռքում կենտրոնացնելու նպատակով արտատնտեսական միջոցառումների դիմել ոչ միայն խոշոր, այլև մանր արտադրողների (առաջին հերթին գյուղացիության) նկատմամբ: Դա հիմնականում արտահայտվեց «ռազմական կոմունիզմի» քաղաքականությամբ: Ուստի «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը սրբելետարբիատի դիկտատուրայի հրապարակի առարկան չէր, ինչպես փորձում է ներկայացնել բուրժուական պատմագրությունը, այլ չնախատեսված, հարկադրական միջոցառում էր, որի անհրաժեշտությունը բխում էր կոնկրետ պայմաններից: «Ռազմական կոմունիզմ» մտցվեց,— գրել է Վ. Ի. Լենինը,— պատերազմից ու քայքա-

---

6 «Նոր աշխարհ», Թիֆլիս, 1922, № 11:

2 «Խորհրդային Հայաստան», 14 հունվարի, 1922:

յումից հարկադրված։ Նա պրոլետարիատի տնտեսական խնդիրներին համապատասխանող քաղաքականություն չէր և չէր կարող լինել»[8]։

Այն կենսագործվում էր ռազմական մեթոդներով, որի նպատակն էր գյուղի և քաղաքի միջև արտադրանքի անմիջական փոխանակությունն իրականացնել շրջանցելով ապրանքադրամական հարաբերությունները և նպաստել բանվորագյուղացիական ռազմաքաղաքական դաշինքի ամրապնդմանը։

Գրականության մեջ հաճախ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը սխալ է մեկնաբանվում՝ այն դիտվում է որպես միայն պարենմատնատրման քաղաքականություն։ Ճիշտ է, պարենմատնատրումը այդ քաղաքականության կենտրոնական հարցն էր, բայց միայն դրանով չէր բնորոշվում այն։

«Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը տնտեսական միջոցառումների մի ամբողջ համակարգ էր, որը վերաբերում էր ոչ միայն գյուղատնտեսությանը, այլև արդյունաբերությանն ու առևտրին։ Ելնելով ռազմական կարիքներից, արտադրական ձեռնարկությունները, այդ թվում և մանր ու միջին, պետականացվում էին։

Հետագայում անդրադառնալով այդ հարցերին, Վ. Ի. Լենինը հատկապես ընդգծեց, որ սխալ թույլ տրվեց, երբ «ռազմական կոմունիզմի» ժամանակ ազգայնացվեցին նաև մանր ձեռնարկությունները։ Դա նույնպես, ինչպես և առևտրի սահմանափակումը, բխում էր գոյություն ունեցող այն սխալ մտայնությունից, որ հնարավոր է մեկ հարվածով անցնել արտադրության և բաշխման կոմունիստական սկզբունքին՝ հենվելով ուղղակի նյութափոխանակության վրա։ «Մենք արինք այն սխալը,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ վճռեցինք անմիջական անցում կատարել դեպի կոմունիստական արտադրությունն ու բաշխումը։ Մենք վճռեցինք, որ պարենմատնատրման շնորհիվ գյուղացիները կտան հացահատիկի մեզ հարկավոր քանակը, իսկ մենք այն կմատնատրենք ըստ գործարանների ու ֆաբրիկանների և մեզ մոտ կստացվի կոմունիստական արտադրություն ու բաշխում»[9]։

Այսպիսով, հանդես գալով որպես տնտեսական ծանր պայմանների արդյունք և պայմանավորված լինելով քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանի ռազմական անհրաժեշտությամբ, երբ պենքով էր

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 437։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 52։

վճռում նորաստեղծ Հանրապետության գոյության հարցը, «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը սպառեց իրեն խաղաղ աշխատանքի անցնելու առաջին իսկ օրերին: Ավելին, այն սկսել էր արգելակել տնտեսական զարգացմանը, մեր երկրում սոցիալիստական շինարարության գործին:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո մի շարք պատճառներով Հայաստանում սովետական իշխանությունը ուշ հաստատվեց: Ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ իշխանությունն անցավ սովետների ձեռքը, Հայաստանում ստեղծվեցին հեղափոխական կոմիտեներ (հեղկոմներ), որոնք Հայաստանի Հեղկոմի ղեկավարությամբ պիտի պաշտպանեին հեղափոխական օրինականությունը և նախապատրաստական աշխատանքներ ծավալեին սովետներին անցնելու համար:

Սակայն Հայաստանի տնտեսական վիճակը շատ ծանր էր: Ավերվել ու կողոպտվել էին բոլոր երկաթուղային հանգույցները, քայքայվել ու կանգ էին առել Ալավերդու և Ղափանի հանքերն ու մետաղամշակման ձեռնարկությունները, գինու, կոնյակի արտադրությունը: Արդյունաբերության արտադրանքը 1913 թ., առանց այդ էլ խղճուկ մակարդակից իջել էր 12 անգամ[10]: Ավելի ծանր վիճակի մեջ էր գյուղատնտեսությունը: Ցանքատարածությունները 1913 թ. 345,7 հազար հեկտարից 1919 թ. հասել էին 82,7 հազարի, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 65,8 միլիոն ռուբլուց 11,3 միլիոնի[11]: Ավերվել էր ոռոգման սիստեմը, չէին աշխատում էլեկտրակայանները: Ամենուր մոլեգնում էին սովն ու համաճարակային հիվանդությունները: Այսպիսի պայմաններում նորաստեղծ սովետական իշխանության առաջնահերթ խնդիրը երկիրը տնտեսական փլուզումից փրկելը և բնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելն էր:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Հեղկոմը հետևելով Ռուսաստանի օրինակին, շտապեց հանրապետությունում մտցնել «ռազմական կոմունիզմի» քաղաքականություն՝ հույս ունենալով կուտակել անհրաժեշտ քանակի պարենամթերք և որոշ չափով թեթևացնել հանրապետության տնտեսական ծանր վիճակը:

---

10 «Социалистическое строительство Армянской ССР»; 1920—1940, Ереван, 1940, стр. 23.

11 Նույն տեղում, էջ 64, 70:

«Պարենավորման մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի և ռազմական ժողկոմ Սիլինի ստորագրությամբ 1920 թ. դեկտեմբերի 8-ին լույս տեսած Հայհեղկոմի № 6 հրամանում նշվում էր. «Հայտնվում է ի գիտություն բոլոր պետական ու հասարակական հիմնարկությունների, նույնպես և մասնավոր անձանց, որ նրանք... պարտավոր են տեղեկություններ տալ իրենց մոտ գտնված պարենավորման մթերքների, նույնպես և վառելիքի ու լուսավորության վերաբերյալ նյութերի մասին»[12]:

Սա փաստորեն Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության ուղղությամբ կատարված առաջին քայլն էր[13]:

Հայաստանի Հեղկոմի դեկրետից երկու օր անց՝ դեկտեմբերի 10-ին, ՀԿ(բ)Կ կենտկոմը հատուկ կոչով դիմեց գյուղացիությանը. «Գյուղացի աշխատավորներ, Հայաստանի բանվորագյուղացիական կառավարությունը այսօր ձեզ է դիմում. Հայաստանի սահմաններում հայտարարված է հացահատիկի կամավոր հավաքում: Գյուղի կուլակների ու հարուստների համար այդ հայտարարությունը պարտադիր է: Հացի հավաքմանը պետք է մասնակցեն բոլոր գյուղերը, բոլոր գյուղացիները... Պարենավորման պահեստները պետք է լցվեն հացահատիկներով... հավաքիր հացը և փոխադրիր քո սեփական միջոցներով, քո սայլերով ու եզներով»[14]:

Նորաստեղծ տեղական իշխանության թուլության պատճառով առաջին օրերի անկազմակերպ խուզարկություններից ու բռնագրավումներից սկսեցին օգտվել ֆշնամական տարրերը: Դա բաղում բողոքների տեղիք տվեց և պարենժողկոմի հատուկ կարգադրությամբ, ապօրինաբար բռնագրաված մթերքները տերերին վերադարձվեցին: Հայաստանի

---

12 «ՀՍՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջմիածին, 1921, էջ 8:

13 Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործմանն անդրադարձել և արժեքավոր դիտողություններ են արել Ա. Հակոբյանը, Ս. Խարմանդարյանը, Վ. Ներկարարյանը և ուրիշներ: Սակայն քանի որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը սովետահայ պատմագրության հատուկ ուսումնասիրության առարկան չի հանդիսացել, շատ հարցեր դեռևս ինչպես հարկն է չեն արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Այսպես, որոշակի պարզություն չկա նրա կենսագործման անհրաժեշտության և ժամկետների, ինչպես նաև տված արդյունքների այլ հարցերի մասին: Միշտ չէ, որ ճիշտ են գնահատվում նրա տնտեսական և բարոյական հետևանքները (մանրամասն տե՛ս Գ. Գեղամյան, «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Հայաստանում («Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1976, № 8):

14 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 1, գ. 4, թ. 28:

Հեղկոմի դեկտեմբերի 18-ի «Պարենային գործերի կանոնավորման մասին» հրամանում նշվում է. «Այսու հայտարարվում է ի գիտություն բոլորի, որ պարենավորման մթերքների բաշխման նորմանների մշակումն ու որոշումը, ինչպես բանագրավման, տեղափոխության, ստացման ու արտահանման իրավունքը պատկանում է միայն պարենժողկոմին, առանց որի թույլտվության ոչ մի պետական հիմնարկության, ինչպես և մասնավոր հաստատության և անհատ իրավունք չունի այդ ուղղությամբ որևէ գործ անելու»[15]: Ինչպես երևում է հրամանից, առաջին հերթին փորձ էր արվում կանոնավորել մթերքների բաշխման գործը:

Այսուհետև մտցվեց հացի առևտրի պետական մենաշնորհ և արգելվեց հացի մասնավոր առևտուրը: Շուկայում մտցվեցին կայուն գներ:

Իր ձեռքում կենտրոնացնելով պարենամթերքների հայթայթման, կուտակման ու բաշխման գործը, պարենժողկոմատը միշտ չէ, որ կարողանում էր ճիշտ վարել այն: Պաշնակների տիրապետության հատկապես վերջին շրջանում կատարվող անընդհատ բռնագրավումներն ու թալանը ծայրահեղ քայքայման ու սովի դուռն էին հասցրել բնակչությանը: Այս տարի, պրում էին հայցառատությամբ միշտ հայտնի Եղվարդ գյուղի բնակիչները, նկատի ունենալով 1920 թիվը, պաշնակցականները չորս անգամ բռնագրավումներ են կատարել, և ժողովուրդը շատ ծանր վիճակի մեջ է: Եղվարդցիները խնդրում էին Հեղկոմին, հաշվի առնել գյուղացիների ծանր վիճակը և թույլ չտալ պարենի նոր բռնագրավումներ կատարել[16]: Մյուս գյուղերն ավելի վատ վիճակի մեջ էին:

Պարենամատնատրման քաղաքականության անցնելու հետ միևտեղ, Հեղկոմի հատուկ դեկրետներով 1920 թ. դեկտեմբերի կեսերին ռազմական դրության մեջ էին հայտարարվել երկաթուղին, ավտոտրանսպորտը, փոստը, հեռագրատունը[17]: Սա նույնպես բխում էր «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից:

Հանրապետության տնտեսական վիճակը ավելի ծանրացավ 1921 թ. հունվար-փետրվարին: Սովը և համաճարակային հիվանդությունները մոլեգնում էին ամենուր:

Նորաստեղծ սովետական իշխանության գործունեության առաջին հերթին նրա թույլ տված սխալներին դարանակալ հետևող դաշնակցությունը կարողացավ օգտագործել այդ ծանր պայմանները և աշխա-

---

15 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջ 20:

16 Տե՛ս ՀՍՍՀ, ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 102, ց. 1, բ. 32, թ. 1—2:

17 «ՀՍՍՀ դեկրետների ու հրամանների ժողովածու», պրակ I, էջ 10—19:

տավորության, հատկապես արևմտահայ գաղթականության մեջ, որի վիճակն ավելի ծանր էր, լայն հակասովետական աշխատանք ծավալել։ Նրան հաջողվեց խռովություն բարձրացնել սովետական իշխանության դեմ, որը սակայն արագորեն ջախջախվեց բնակչության հերոսական պայքարի շնորհիվ և XI կարմիր բանակի օգնությամբ։

Մինչ այդ Ռուսաստանում հաղթականորեն ավարտվել էին քաղաքացիական կռիվները և գրեթե ամենուր խաղաղ, ստեղծագործ աշխատանք էր սկսվել։ Անցնելով մեր երկրում սոցիալիստական շինարարության, կուսակցության X համագումարը 1921 թվականի մարտին, ելնելով ստեղծված բարենպաստ պայմաններից, հրաժարվեց «ռազմական կոմունիզմից» և անցավ նոր տնտեսական քաղաքականության։ Դա բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման, մեր երկրում սոցիալիզմի կառուցման հանճարեղ ծրագիր էր, որը մշակել էր Վ. Ի. Լենինը։

Դաշնակցականների փետրվարյան ավանտյուրան ջախջախելուց հետո, հիմնականում գարնանացանի համար անհրաժեշտ սերմացու հայթայթելու նպատակով, Հայաստանում որոշ խոզարկումներ և բռնագրավումներ տեղի ունեցան, որոնք, սակայն, լայն տարածում չստացան։ Նախ դրանք հակասում էին կուսակցության X համագումարի որոշումներին և, մյուս կողմից, առիթ կարող էին ծառայել դասակարգային թշնամու նոր պրովոկացիաների համար։ Հաշվի առնելով այդ բոլորը, Հայաստանի Հեղկոմը 1921 թ. ապրիլի 10-ին, հատուկ դեկրետով դիմեց գյուղացիությանը. «...Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղափոխական կոմիտեն, պատրաստ լինելով ամեն տեսակ դյուրություն և աջակցություն ցույց տալ բոլոր երկրագործներին, առաջիկա ցանքերի գործն ապահովելու համար կայացրեց հետևյալ որոշումները։

1. Յանելիք սերմացուն աղատ է որևէ բռնագրավումից.

2. Յանքսերից ստացվելիք բերքը ամբողջությամբ պատկանում է ցանողին և նույնպես չի կարող ենթարկվել բռնագրավման.

3. Տեղական բոլոր հեղկոմները պարտավոր են իրենց պատասխանատվությամբ հսկել այս դեկրետի անշեղ գործադրությունը»[18]։

Սա «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից հրաժարվելու առաջին քայլն էր, որին շուտով հաջորդեցին ավելի վճռական միջոցառումներ, որոնք հետամուտ էին այն նպատակին, որպեսզի ավելի նը-

---

18 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 130, ց. 6, գ. 2, թ. 6։

պաստավոր պայմաններ ստեղծվեն երկրի ավերված տնտեսությունը արագ վերականգնելու համար։ 1921 թ. ապրիլի 16-ին լույս տեսավ պարենժողկոմի հրամանը «Պարենային բռնագրավումների վերացման մասին», որտեղ գրված էր. «Այսօրվանից վերացվում են ամեն տեսակի պարենի բռնագրավում, նույնպես և կայուն գները շուկայում։ Բոլոր գնումները կատարել ազատ գներով»[19]։

Մի քանի օր անց՝ ապրիլի 29-ին, «Բռնագրավումների ամբողջական վերացման մասին» նոր հրամանում հանգամանորեն պարզաբանվում և լրացվում էր նախորդ հրամանը. «...Ի գիտություն բոլոր իշխանությունների, պետական և հասարակական հիմնարկությունների,— գրված է այնտեղ,— որ համաձայն Հայհեղկոմի որոշման՝ իրականացվում են բոլոր տեսակի բռնագրավումները, նույնպես խուզարկությունները որևէ թաքցրած ապրանքներ հանելու նպատակով։ Զանցառուները կենթարկվեն ամենախիստ պատասխանատվության ռազմահեղափոխական ժամանակի օրենքների համաձայն»[20]։

Ինչպես տեսնում ենք, փաստորեն մինչև 1921 թ. ապրիլի կեսերը Հայաստանում իրականացվում էր «ռազմական կոմունիզմի» քաղաքականություն, իր խուզարկումների, բռնագրավումների, առևտրի սահմանափակման ու ապրանքադրամական հարաբերությունների շրջանցման բոլոր ձևերով։ Այն փաստորեն տևեց շուրջ 4 ամիս։

Չնայած իր կարճատևությանը, սկզբնական շրջանում տեղական սովետական իշխանության թուլության հետևանքով այն բավական ծանր անդրադարձավ բազմիցս կողոպտված, կործանման եզրին հասած աշխատավոր դյուղացիության վրա։ Ուստի ճիշտ չեն այն հեղինակները, որոնք ընդունելով Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործման փաստը, դրա անհրաժեշտությունն ու նույնիսկ արդյունավետությունը հաճախ բացատրում են նույն կերպ, ինչպես Սովետական Ռուսաստանում, առանց հաշվի առնելու տեղական մի շարք առանձնահատկություններ, որոնք բավականին վճռական դեր ունեին և որոնք չի կարելի անտեսել։ Սա սովետահայ պատմագրության մեջ իշխող ոչ ճիշտ տեսակետն է։ Ավելին, արմատավորվել է այն կարծիքը, որ իբր Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն առաջ եկավ նույն պատճառներով, ինչ Սովետական Ռուսաստա-

19 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ II, էջմիածին, 1921, էջ 17։

20 Նույն տեղում, էջ 28։

նում: Հայտնի է, որ Ռուսաստանում նրա կենսագործումը պայմանավորված էր քաղաքացիական կռիվներով և վերացվեց խաղաղ աշխատանքներին անցնելուց անմիջապես հետո: 1918 թ. կարճատև դադարի շրջանում, երբ Ռուսաստանի տնտեսական վիճակը սարսափելի ծանր էր, «ռազմական կոմունիզմ» մացնելու փորձ անգամ չկատարվեց: Իսկ Հայաստանում, ընդհակառակը, հաշվի չառնվեցին տեղական պայմանները. այն մտցվեց սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո:

Ինչպես արդարացիորեն նշված է «ՍՄԿԿ պատմության» մեջ, «Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հեղկոմի մեծամասնությունը... փորձում էր Հայաստանում մեխանիկորեն օգտագործել ռազմական կոմունիզմի քաղաքականության մեթոդները, որն այդ ժամանակ սպառում էր իրեն նաև Սովետական Ռուսաստանում: Շեղումները, որոնք արտահայտվեցին չարդարացված բռնագրավումներով, պետական ապարատի չկարգավորված լինելու և քաղաքական-բացատրական աշխատանքի թույլ լինելու պայմաններում, առաջացրին քաղաքի և գյուղի մանր բուրժուազիայի դժգոհությունը»[21]:

Չպետք է նաև մոռանալ, որ ի տարբերություն Ռուսաստանի, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո բռնագրավման ենթակա խոշոր կալվածքներ չլինելու և հողաշինարարական աշխատանքները ձգձգվելու պատճառով դեռևս երկար ժամանակ գյուղացիների որոշ մասը չէր բավարարվել հողով:

Այս և բազում հարցերի հետագա բազմակողմանի ուսումնասիրությունը, անշուշտ, հնարավորություն կտա որոշակի ճշտումներ մտցնելու Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության անցնելու անհրաժեշտության խնդրում: Կպարզաբանվեն նաև նրա իրականացման առանձնահատուկ պայմանները:

Դաղեստանցիներով ու որբերով հեղեղված Հայաստանի տնտեսական ծայրահեղ քայքայման պայմաններում, ուր չկար խոշոր կալվածատիրություն և չնչին տոկոս էր կազմում կուլակությունը, խուղարկումներն ու բռնագրավումները չէին կարող բացասաբար չանդրադառնալ աշխատավոր գյուղացիության վրա: Քանի որ պարենամթերքը գանձվում էր ոչ թե ավելցուկ ունեցող հարուստներից, այլ ամբողջությամբ վերցրած գյուղից, ապա հատկապես տուժում էին միջակ և չքավոր գյուղացինները, որոնք վճարելու գրեթե ոչինչ չունեին: «Պարզ գիտակցելով, որ

---

21 «История КПСС», М., 1968, т. III, кн. II, стр. 530.

խորհրդային կառավարության գլխավոր տեսակետը պայքարելն է գյուղական կուլակների և հարստահարիչների դեմ,— գրում էին Ն. Ղարանլուխի (Մարտունի) գյուղացիները,— խոր զարմանք է առաջացնում, որ պահանջը դրված է անխտիր կերպով բոլոր գյուղացիության վրա... Ամբողջ գյուղը կարող է լրացնել միայն աննշան տոկոսը բոլոր պահանջված կենսամթերքների»։ Գյուղացիները եղրակացնում էին, որ «այդ պահանջը, ըստ երևույթին, թյուրիմացությամբ է առաջացել»[22]։ Նման բողոքներ էին ստացվում համարյա բոլոր գյուղերից։

Պարենամթերքի բռնագրավումները կատարվում էին հիմնականում օրվա պահանջները բավարարելու նպատակով, առանց հարկ եղած չափով խորամուխ լինելու, թե դա որքանով է նպաստում սովետական կարգերն ամրապնդելու և աշխատավոր գյուղացիությանը նրա շուրջը համախմբելու գործին։ Նոր Բայազետի գավառային պարենհայթայթիչ բաժնից 1921 թ. հունվարի 18-ին պարենժողկոմին ուղարկված զեկուցագրում այդ առթիվ նշվում է. «...այդ գործը շատ սխալ հիմքերի վրա է դրված եղել, որովհետև ապագայի մասին ոչ ոք երբեք չէր կամենում մտածել անգամ, այլ միայն վաղվա և շատ-շատ երկու կամ երեք օրվա համար։ Այնինչ, այդ կերպ տարած գործը տանելու էր և իրոք տարավ հայթայթման գործի ներկայումս զգացվելիք կրիզիսին...»[23]։

Հասկանալի է, որ պարենմատնատրման նման սխալ իրականացումը չէր կարող հասնել իր նպատակին, մանավանդ, որ արդյունքը չէր արդարացնում միջոցները։ Բացի այդ, առաջին իսկ բռնագրավումներից հետո ֆշնամական տարրերը լուրեր տարածեցին, թե իբր ամեն ինչ ենթակա է բռնագրավման։ Դա մասսայական խուճապի և վնասարարության տեղիք տվեց և հատկապես ծանր անդրադարձավ անասնապահության վրա։ «Խորհրդային Հայաստան»-ը այդ առթիվ գրել է. «Հայաստանի անասունների կրճատման լրիվ բնութագրի համար անհրաժեշտ է հիշել նաև 1920 թ. վերջերին և 1921 թ. սկզբներին գինվորական կոմունիզմի շրջանի տնտեսական քաղաքականությունը, որը... շատ անախորժություններ է պատճառել գյուղատնտեսությանը։ Դրանից օգտվեցին ամեն տեսակի սպեկուլյանտներ՝ համոզելով բնակչությանը ծախել անասունները, բռնագրավումից խուսափելու համար։ Այդ պատճառից դրված ազգաբնակչությունը... սկսեց սպեկուլյանտներին վաճառել իր անասունների խոշոր մասը՝ ամենացածր գներով»[24]։

---

22 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 1, ց. 88, գ. 33, թ. 56։

23 Նույն տեղում, ֆ. 108, ց. 1, գ. 98, թ. 15։

24 «Խորհրդային Հայաստան», 2 սեպտեմբերի, 1922։

Հայաստանի արտակարգ հանձնաժողովի 1921 թ. փետրվարի 10-ի հրամանում գրված է. «Դաշնակների գաղտնի ագենտները խցկված լինելով մեր երիտասարդ խորհրդային հիմնարկությունները, ինքնագլուխ գործունեությամբ և ազգաբնակչության հետ կոպիտ վարվեցողությամբ ի չիք են դարձնում խորհրդային իշխանությունը։ Վերջին օրերս ինքնագլուխ բռնագրավումներ ու խուզարկություններ են նկատվում»[25]։ Իշխանության տեղական մարմինների թուլության պատճառով նման դեպքեր հաճախ էին տեղի ունենում։ Այդ պայմաններում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Հայաստանում չտվեց սպասվելիք արդյունքը։

Տեղին է հիշել, որ օրինակ Սովետական Ադրբեջանում 1920 թ. սեպտեմբերի վերջերին Հեղկոմի կողմից մտցված պարենմատնատրման քաղաքականությունը երկու շաբաթ անց վերանայվեց Ադրբեջանի կոմկուսի II համագումարի կողմից (1920 թ. հոկտեմբերի 16-ին) և, հաշվի առնելով գյուղացիության ծանր վիճակը, վերացվեցին հացի պարտադիր մթերումները[26]։ Հայաստանի գյուղացիությունն ավելի բարվոք վիճակում չէր։

Դեռևս 1921 թ. մարտի 2-ին Ս. Օրջոնիկիձեին գրած նամակում Վ. Ի. Լենինը պահանջում էր «...ո՛չ թե ռուսական շաբլոնը կիրառել, այլ հմտորեն և ճկունորեն ստեղծել յուրօրինակ մի տակտիկա, որը հիմնված լինի մեծ զիջողականության վրա ամեն տեսակի մանր բուրժուական տարրերի հանդեպ»[27]։ Այդ նույն միտքն էր ընդգծված նաև Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի հայտնի նամակում։

Ցավոք, «ռազմական կոմունիզմի» կիրառման «ռուսական շաբլոնից» Հայաստանում չկարողացան զերծ մնալ։ Դա օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ պատճառներ ունի, որոնք կարող են լուրջ ուսումնասիրության։ Մեր կարծիքով ավերված ու քայքայված, որբերով ու գաղթականներով հեղեղված Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը կարելի էր շրջանցել՝ բավարարվելով առանձին բռնագրավումներով։ ՀՍՍՀ սովետների I համագումարում (1921), խոսելով նոր տնտեսական քաղաքականություն մտցնելու անհրաժեշտության մասին, Ա. Մյասնիկյանը նշել է. «Հայաստանի նման մի երկրում, ուր աշխատավորական դասակարգերի մեծ մասը կազմում է գյուղացիու-

---

25 «Коммунист», 12 փետրվարի, 1921։

26 «История Азербайджана», т. III, ч. I, Баку, 1963, стр. 247—248.

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 189—190։

թյունը, ուր մեծ մասամբ տնտեսությունը մանր է, մենք միայն այս քաղաքականությունը կարող ենք վարել (խոսքը նէպի մասին է.—Գ. Գ.): Եթե այսօր Ռուսաստանի քաղաքականությունը համարվում է նոր, այդ քաղաքականությունը հենց սկզբից պիտի կիրառվեր Հայաստանում»[28]: *Ինչպես տեսնում ենք, Մյասնիկյանն այն կարծիքին էր, որ Հայաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը պարտադիր չէր: Նույն կարծիքին էր նաև Ս. Լուկաշինը*[29]:

Տեղական առանձնահատկությունները ճիշտ հաշվի առնելու և ճկուն տնտեսական քաղաքականություն վարելու դեպքում հնարավոր էր Հայաստանում խուսափել «ռազմական կոմունիզմի» ոչ ցանկալի հետևանքներից: Մանավանդ, որ այդ նույն ժամանակամիջոցում Ռուսաստանում արդեն ակնհայտ էին դարձել նրա բացասական հետևանքները, և կուսակցությունն ուղիներ էր որոնում այն նոր, գյուղացիությանն ավելի մատչելի ու ճեռնտու քաղաքականությամբ փոխարինելու համար: Բոնագրավումների քաղաքականությունը պետք է կիրառվեր միայն կուլակային տնտեսությունների, վաշխառուների և սպեկուլյանտների նկատմամբ: Դա սովետական իշխանության միջոցառումները չաբաշահելու քիչ հնարավորություն կտար դասակարգային թշնամուն, և որ կարևոր է, աշխատավոր մասսաներին դժգոհելու առիթ չէր ծառայի:

Ուստի հիմնավորված չի կարելի համարել պատմական գրականության մեջ իշխող այն տեսակետը, թե «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումով էր, որ Հայաստանում ապահովվեց սովետական կարգերի գոյությունը, նրա ամրապնդումն ու հետագա զարգացումը: Սովետական սոցիալիստական հասարակարգի հաղթանակը, նրա ամրապնդումն ու հետագա զարգացումը մեզ մոտ ապահովվեցին աշխատավորության հերոսական պայքարի և, առաջին հերթին, Սովետական Ռուսաստանի ռազմական ու նյութական օգնության շնորհիվ:

---

28 Ալ. Մյասնիկյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1957, էջ 393—394:

29 «Խորհրդային Հայաստան», 14 փետրվարի, 1922:

ԱՆՑՈՒՄ ՆԷՊԻՆ

1. ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Քաղաքացիական կռիվների ժամանակ տարած փայլուն հաղթանակները, ներքին և արտաքին հակահեղափոխության ջախջախումը և խաղաղ, ստեղծագործ աշխատանքների անցնելը, ուղենշեցին մեր երկրում սոցիալիստական շինարարության նոր փուլը։ Սովետական իշխանության առաջին տարիներին կիրառվող «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից դյուղացիությունը սկսել էր դժգոհություն հայտնել։ Ամենակարճ ճանապարհով սոցիալիզմ կառուցելու, «ճակատային գրոհի» քաղաքականությունն արդեն սպառել էր իրեն և օբյեկտիվորեն սկսել էր խանգարել սոցիալիստական շինարարության առաջընթացին։

Սակայն մանր մասնավոր դյուղացիությունը (բանվորության դդալի մասը նույնպես) չէր կարող միանգամից անցնել տնտեսվարության սոցիալիստական եղանակին։ Անհրաժեշտ էր նրան հնարավորություն տալ, որպեսզի ակտիվորեն պայքարի տնտեսությունը քայքայված վիճակից դուրս բերելու համար։ Նոր տնտեսական քաղաքականության անցնելու հիմնական էությունն այն էր, որպեսզի օգտագործվեն արտադրողական ուժերի վերականգնմանը նպաստող բոլոր խթանները (չխորշելով նաև կապիտալիստականից) բարելավեն բանվորների և դյուղացիների դրությունը, բոլոր միջոցներով ամրապնդվի նրանց դաշինքը, որպեսզի նրանք շահագրգռվեն արտադրության զարգացմամբ[1]։ Հասկանալի է, որ դա ավելի հաստատուն և հետևողական պայքար էր ենթադրում, քան անմիջական սոցիալիստական անցման փորձերը։ Այդ ծանր և բավականին հակասական պայմաններից դուրս գալու ելքը պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական քաղաքականության փոփոխումն էր, «ռազմական կոմունիզմի» սահմանափակումների ու վարչարարության վերացումը և մանրաբուրժուական տարրերի նկատմամբ ավելի մեղմ, համոզման քաղաքականության անցնելը։

Մեր երկրում խաղաղ շինարարության անցնելու առաջին իսկ օրվանից առաջին հերթին հատուկ ուշադրություն էր դարձվում կազմալուծված գյուղատնտեսության վերականգնման վրա։ Սովետների համա-

---

[1] *В. И. Ленин.* ПСС, т. 43, стр. 398.

ռուսաստանյան VIII համագումարում (1920 թ. դեկտեմբեր) Վ. Ի. Լենինը նշեց, որ «...առանց մանր գյուղացիության տնտեսության գործնական, մասսայական բարելավման՝ մեզ համար փրկություն չկա. առանց այդ բազայի՝ անկարելի է որևէ տնտեսական շինարարություն, և ինչպիսի մեծ պլաններ էլ լինեն՝ ոչինչ են»[2]: Համագումարը հատուկ որոշում ընդունեց «Գյուղացիական տնտեսությունների ամրապնդման ու զարգացման միջոցառումների մասին», որով ի թիվս այլ միջոցառումների, նախատեսվում էր բարձր նվաճումներ ձեռք բերած անհատ գյուղացիներին ու գյուղական համայնքներին արժանացնել պարգևատրման: Հետաքրքրական է այն փաստը, որ արդեն այդ ժամանակ, համագումարում ելույթ ունեցողներից շատերը դժգոհություն էին հայտնում պարենամասնատարման քաղաքականությունից:

Երկրի տնտեսական վիճակը ավելի ծանրացավ 1920 թ. աշնանային հետևանքով: Փաստորեն տնտեսական խնդիրները սերտաճել էին քաղաքականի հետ և փոխադարձաբար լրացնում էին միմյանց: Տնտեսական և քաղաքական այս բարդ իրավիճակում լենինյան հանճարն էր պետք, որպեսզի կարողանար գտնել այն հիմնական օղակը, այն միջոցը, որով հնարավոր կլիներ խթանել աշխատավորությանը, առաջին հերթին ավերված տնտեսությունը վերականգնելու և միաժամանակ նպաստել բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդմանը, առանց որի հնարավոր չէր մեր երկրում սոցիալիզմի կառուցումը: Սոցիալիստական տնտեսության զարգացմամբ շահագրգռված բանվոր դասակարգի և իր տնտեսությունն ամրապնդելու ջանքեր գործադրող մենատնտես գյուղացու շահերը միացնող օղակ առաջադրվեց նյութական շահագրգռվածության բարձրացման սկզբունքը: Իսկ դա անհնար էր կենսագործել առանց ազատ ապրանքաշրջանառության, առանց առևտրի և ապրանքադրամական հարաբերությունների զարգացման: Ահա թե ինչն էր պնդում Վ. Ի. Լենինը նէպի հիմքում, որը բախտորոշ նշանակություն ունեցավ կապիտալիզմից սոցիալիզմին անցման ամբողջ ժամանակաշրջանի համար:

Կոմինտերնի III կոնգրեսում խոսելով այն մասին, որ քաղաքացիական կռիվներից հետո բոլորի համար պարզ էր, որ հին ձևով այլևս շարունակելը հնարավոր չէր, Վ. Ի. Լենինը նշում էր. «Այսպիսով առաջացավ մեր տնտեսական քաղաքականության փոփոխությունը, բռնադրավմանը փոխարինելու եկավ բնահարկը: Այդ միտքը միանգամից

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 640:

չհղացավ։ Դուք կարող եք բոլշևիկյան մամուլի մեջ ամիսներ շարունակ տրված մի շարք առաջարկներ գտնել, բայց իսկական հաջողություն խոստացող նախագիծ դեռ գտնված չէր»[3]։

Առաջին անգամ 1921 թ. հունվարի 4-ին Վ. Ի. Լենինը նշեց, որ անհրաժեշտ է ճիշտ փոխհարաբերություններ սահմանել բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, ցանկություն հայտնելով որպեսզի պարենմասնատրումը փոխարինվի որոշակի բնահարկով։ Ի դեպ, նման ցանկություններ էին հայտնում նաև կուսակցական և սովետական տեղական աշխատողները։ 1921 թ. փետրվարի 8-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի նիստի ժամանակ, երբ քննարկվում էր գարնանացանի նախապատրաստման և գյուղացիության վիճակի հարցը, Վ. Ի. Լենինը գրեց «Գյուղացիների վերաբերյալ թեզիսների նախնական սևագիր ուրվագիծը», որտեղ որոշակիորեն նշվում էր պարենհարկ մտցնելու մասին։ Այդ ուրվագծում Վ. Ի. Լենինն անհրաժեշտ էր համարում.

«1. Բավարարել անկուսակցական գյուղացիության ցանկությունը մասնատրումը (ավելցուկները վերցնելու իմաստով) հացի հարկով փոխարինելու մասին։

2. Նվազեցնել այդ հարկի չափը անցյալ տարվա մասնատրման համեմատությամբ։

3. Հավանություն տալ հարկի չափը հողագործի ջանասիրությանը համապատասխանեցնելու սկզբունքին՝ հարկի տոկոսը հողագործի ջանասիրությունը բարձրացնելու դեպքում՝ իջեցնելու իմաստով։

4. Ընդլայնել հողագործի կողմից իր հարկից ավել մնացորդները տեղական տնտեսական շրջանառության մեջ օգտագործելու ազատությունը, հարկը արագ և լրիվ մուծելու պայմանով»[4]։

Սա փաստորեն պրոլետարիատի և գյուղացիության միջև նոր փոխհարաբերություններ հաստատելու հիմքն էր։ Լենինյան այս հանճարեղ թեզիսները գործողության ծրագիր հանդիսացան նույն նիստում ստեղծված հատուկ հանձնաժողովի համար։

Կուսակցության X համագումարի հիմնական հարցերից մեկը, եթե ոչ ամենահիմնականը, պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու կամ նոր տնտեսական քաղաքականության անցնելու հարցն էր։

Համագումարում պարենմասնատրումը պարենհարկով փոխարինե-

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ, 32, էջ 630։

4 Նույն տեղում, էջ 154։

լու մասին զեկուցումով հանդես եկան Լենինն ու պարենժողկոմ Ցյուրուպան։ Վ. Ի. Լենինը նշեց, որ չնայած դա տնտեսական հարց է, բայց ըստ էության նաև խոշոր քաղաքական հարց է, որի ճիշտ լուծումով է պայմանավորված բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման, հետևաբար նաև սոցիալիստական հեղափոխության ճակատագրի հարցը։ Նէպի հիմնական էությունը, նրա հիմնական խնդիրն այն է, որպեսզի ամրապնդի այդ դաշինքը և հնարավորություն տա բազմամիլիոն գյուղացիությանը ներգրավելու սոցիալիստական շինարարության մեջ։ Նէպը համապատասխանում էր գյուղացու մասնավոր սեփականատիրական ձգտումներին, հնարավորություն տալով որպեսզի նա իր եկամուտները ճիշտ հաշվարկի և տնօրինի ըստ հայեցողության։

Սոցիալիստական հեղափոխությունից հետո, առանց անհրաժեշտ նյութատեխնիկական բազա ստեղծելու, հնարավոր չէր գյուղացիությանը միանգամից փոխադրել սոցիալիստական ուղու վրա։ Տասնամյակներ էին անհրաժեշտ ինչպես նյութական բազայի, այնպես էլ գյուղացիության հոգեբանական վերափոխման համար։ Եվ ահա, սովետական իշխանությունը հաշվի առնելով այդ և ելնելով գյուղացիության մասնավոր սեփականատիրական հոգեբանությունից, նրա հետ մտնում էր առևտրական, շուկայական հարաբերությունների մեջ։ Ինչ խոսք, որ շուկայական հարաբերությունների վերականգնումն իր հերթին տանում էր դեպի կապիտալիստական տարրերի որոշակի աշխուժացում։ Սակայն այլ ելք չկար։ Փաստորեն այնպես էր ստացվում, որ սկզբնական շրջանում մեր երկրում սոցիալիստական շինարարությունը տարվում էր ոչ թե կապիտալիզմի մնացորդների վերացման, այլ աշխուժացման, մանր արտադրության ոչ թե վերակառուցման, այլ բազմակողմանի զարգացման միջոցով։ Կոմսակցության X համագումարում Վ. Ի. Լենինը հատուկ ընդգծեց, որ բանվոր դասակարգն օգտագործելով իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները, պետք է օգնի գյուղացիությանը, և առաջին հերթին չքավորներին ու միջակներին, որպեսզի վերջիններս ամրապնդեն իրենց տնտեսությունը և աստիճանաբար անցնեն կոլեկտիվ, հանրային տնտեսությունների ուղին։ Նէպը բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդմանն ուղղված անցման շրջանի այնպիսի քաղաքականություն էր, որն արտահայտում էր երկու հիմնական դասակարգերի շահերը։ Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ էր ամրապնդել գյուղացիների տնտեսական վիճակը։ «Այժմ ամենից ավելի անհետաձգելի են այն միջոցառումները,— գրում էր Վ. Ի. Լենինը,— որոնք կարող են անմիջապես բարձրացնել գյուղացիական տնտեսության ար-

ատադրողական ուժերը: Միայն այդ միջոցով կարելի է հասնել թե՛ բանվորների դրությունը բարելավելուն և թե բանվորների ու գյուղացիների դաշինքն ամրապնդելուն, պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելուն»[5]: Ինչպես տեսնում ենք, նէպին անցնելու առաջին իսկ օրերից նախատեսվում էր գյուղացիական տնտեսությունների ամրապընդման միջոցով վերականգնել ամբողջ գյուղատնտեսությունը, իսկ վերջինիս օգնությամբ՝ արդյունաբերությունը: Գյուղատնտեսության վերականգնմանն ուղղված միջոցառումներն ինքնանպատակ չէին: Այդ իսկ պատճառով նէպի կենսագործման հիմնական ծանրությունը, հիմնական պատասխանատվությունը բանվոր դասակարգի վրա էր դրված, որի առաջատար դերը վճռական նշանակություն ուներ ոչ միայն արդյունաբերության, այլև գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման գործում:

Գյուղացիությունը մեծ ոգևորությամբ ընդունեց կուսակցության X համագումարի որոշումը նէպին անցնելու մասին: Կուսակցության Կենտկոմը և «Պրավդա»-ի խմբագրությունը, ստանում էին բազմաթիվ նամակներ, որոնց միջոցով գյուղացիները շնորհակալություն էին հայտնում պարենհարկին անցնելու, իրենց նկատմամբ հոգատարություն ցույց տալու համար: Այժմ անհրաժեշտ էր նէպի սկզբունքները լայնորեն պարզաբանել, դարձնել բոլորի սեփականությունը: «Մոմենտի արմատական քաղաքական խնդիրը,— գրել է Վ. Ի. Լենինը 1921 թ. մայիսին,— նոր տնտեսական քաղաքականության լրիվ յուրացումն ու ճշգրիտ կիրառումն է կուսակցական և սովետական բոլոր աշխատողների կողմից:

Կուսակցությունը գտնում է, որ այդ քաղաքականությունը սահմանված է երկար, մի շարք տարիներ ընդգրկող ժամանակաշրջանի համար և բոլորից պահանջում է անպայման խնամքով ու բարեխղճությամբ կիրառել այն»[6]: Այժմ անհրաժեշտ էր գյուղացիությանը համոզել, որ նոր տնտեսական քաղաքականությունը կոնյուկտուրային, ժամանակավոր միջոցառում չէր, այլ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ամբողջ ժամանակաշրջանի պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքականություն: Անհրաժեշտ էր, որպեսզի մանր սեփականատեր գյուղացիությունը հավատար, որ պրոլետարիատի իշխանությունն անկեղծորեն ձգտում է բարելավել նրա վիճակը:

---

5 Նույն տեղում, էջ 435:

6 Նույն տեղում, էջ 557:

Նեպի սկզբունքները մասսայականացնելու, մամուլում պրոպագանդելու խնդրում վիթխարի նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թ. մայիսին հրատարակված «Պարենհարկի մասին» գրքույկը, որտեղ ի դեպ առաջին անգամ տրվեց նոր պայմաններում կոոպերացիայի դերի գնահատականը։

1921 թ. մայիսին ՌՍՖՍՀ Կենտգործկոմի որոշմամբ մտցվեց պարենհարկ։ Ընդ որում, 1921—1922 թթ. համար սահմանվեց 240 մլն. փութ, նախորդ տարվա պարենմատնատրման 423 մլն. փթի դիմաց։ Դա հիմնականում ուղղված էր գյուղացիության տնտեսական վիճակը բարելավելուն և պիտի նպաստեր գյուղատնտեսության ընդհանուր վերելքին։ Այդ որոշմամբ նեպի սկզբունքները տարածվում էին նաև արդյունաբերության վրա։ Սրանից կերպ խրախուսվում էր մանր և արհեստավորական արդյունաբերության զարգացումը, որը տվյալ պայմաններում բավականին մեծ դեր էր խաղում որպես պետական արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանն օժանդակող ճյուղ։ Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս հիմնականում խրախուսվում էր մանր արտադրությունը և տեղական նախաձեռնությունը։ Հանձինս նեպի կուսակցությունը հայտնաբերեց անցման շրջանի այն լավագույն միջոցը, որը հնարավորություն է տալիս գյուղացիական մանր տնտեսությունները փոխադրել սոցիալիզմի ուղու վրա։ Ավելին, այն հնարավորություն էր տալիս նախկինում հետամնաց ժողովուրդներին՝ միանգամից անցում կատարել դեպի սոցիալիզմ, շրջանցելով հասարակական մյուս ֆորմացիաները։ Սա շատ կարևոր նշանակություն ուներ ազգային ծայրամասերի ժողովուրդների համար։

Հիմնական ուշադրությունը բևեռվում նեպի վրա, կուսակցությունն անընդհատ ընդգծում էր ինդուստրացման և էլեկտրիֆիկացման վճռական նշանակությունը երկրի պաշտպանունակության ամրապնդման և սոցիալիզմի կառուցման գործում։ Նախ անհրաժեշտ էր աշխուժացնել մանր արտադրությունը (առաջին հերթին գյուղատնտեսությունը), ապա դրա հիման վրա վերականգնել ու զարգացնել խոշոր արդյունաբերությունը, կառուցել նոր հասարակարգի նյութատեխնիկական բազան։ Այնպես որ, սխալ է այն պատկերացումը, թե նեպը մտցվում էր միայն գյուղատնտեսությունը զարգացնելու համար։ Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ սոցիալիզմի տնտեսական հիմքը խոշոր արդյունաբերությունն է։ Իսկ նեպը մտցվում էր սոցիալիզմ կառուցելու համար։ Հետևաբար, գյուղատնտեսության վերականգնումը միջոց էր ծանր արդյունաբերության վերա-

կանգնման ու վերակառուցման համար: Սա էր նեպի կենսագործման վերջնական նպատակը:

Տրոցկիստներն ու կուսակցության լենինյան գծի մյուս հակառակորդները նեպով գյուղացիությանը կատարած զիջումը դիտում էին որպես մեխանիստական քայլ: Նրանք գտնում էին, որ նեպի էությունը նահանջն է, որը տանելու է դեպի պրոլետարիատի դիկտատուրայի բուրժուական վերասերում: Նրանք փորձում էին կուսակցության վրին փաթաթել գյուղացիության շահագործման հաշվին արդյունաբերության զարգացնելու սխալ տեսությունը, որը փաստորեն տանում էր դեպի բանվոր դասակարգի մեկուսացում, դեպի բանվորագյուղացիական դաշինքի խզում: Դա կարող էր վտանգավոր հետևանքներ ունենալ:

Պայքարելով տրոցկիզմի դեմ, Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ տնտեսական զիջում կատարելով գյուղացիությանը, սովետական իշխանությունը ամրապնդում է բանվորագյուղացիական դաշինքը, որտեղ առաջատար դերը պրոլետարիատին է պատկանում: Տվյալ պայմաններում միակ ճիշտ քաղաքականությունը, որը կարող էր երկիրը փրկել տնտեսական փլուզումից և խոշոր արդյունաբերության զարգացման համար ռեալ բազա ստեղծել՝ նոր տնտեսական քաղաքականությունն էր:

Սակայն կուսակցությունը քաջ գիտակցում էր, որ նեպը այս կամ այն կերպ բերելու է կապիտալիզմի աշխուժացում: Եվ քանի որ դա անխուսափելի է, անհրաժեշտ էր այնպես անել, որ մանր բուրժուական տարերայնության ալիքը մեծ թափ չառնի և չկլանի սոցիալիզմի ծիլերը: Դա տվյալ էտապի ամենագլխավոր վտանգն էր, որը կանխելու համար ամենայն խստությամբ դրվեց հաշվառման ու վերահսկողության հարցը. ինչպես արտադրության, այնպես էլ բաշխման բնագավառում: Իսկ դա հնարավոր չէր առանց ապրանքադրամական հարաբերությունների զարգացման, որն իր հերթին պարարտ հող էր հանդիսանում կապիտալիզմի համար: Վ. Ի. Լենինը գտնում էր, որ դրա դեմ պայքարելու լավագույն միջոցը վերածնվող կապիտալիզմը պետկապիտալիզմի հունով տանելն էր: Պետական ղեկավարման բարձունքներն իր ձեռքում պահող պրոլետարիատը կարող էր պետկապիտալիզմի արմատավորմամբ վերահսկողություն մտցնել մասնատիրական արտադրության նկատմամբ: Ըստ էության մտցնելով նեպը, Վ. Ի. Լենինը նպատակ էր հետապնդում մեր երկրում կապիտալիզմի զարգացումն ուղղելը պետկապիտալիզմի հունը, իսկ պետկապիտալիզմը՝ սոցիալիզմի: Դա նպաստում էր ինչպես

ապրանքների անընդհատ ավելացման, այնպես էլ բանվորության դրաղվածության բարձրացմանը[7]:

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործման ժամանակ շատ կարևոր էր որոշել առևտրի և ապրանքադրամական հարաբերությունների ծավալման սահմանները: Այն չէր կարող անսահմանափակ և առանց պետական վերահսկողության ծավալվել: Այդ հարցը նույնպես անհրաժեշտ վերլուծության ենթարկվեց «Պարենային հարկի մասին» դրքույկի մեջ: Ճիշտ է, այդ ժամանակ դեռևս կուսակցությունը մեծ տեղ էր հատկացնում ապրանքափոխանակմանը, և առևտուրը նախատեսվում էր իրագործել միայն տեղական մասշտաբով, սակայն նէպի կենսագործման արդեն առաջին ամիսներին պարզվեց, որ դա հնարավոր չէ:

Վ. Ի. Լենինը նշում էր, որ բոլոր միջոցներով պետք է ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան, բանվոր դասակարգի ղեկավար դերը, որպեսզի կապիտալիզմի զարգացումը որոշակի շրջանակների մեջ առնվի և երկրի տնտեսական վերելքն ուղղվի սոցիալիզմի կառուցման ուղին: Նէպի պայմաններում խիստ կերպով բարձրանում է պետության դերը տնտեսությունը կարգավորելու, պլանավորելու, ինչպես նաև սեփականատիրական, շահագործողական տենդենցները սահմանափակելու գործում: Պատահական չէ, որ դեպի պարենհարկը կատարած շրջադարձը համընկավ պետպլանի կազմակերպման հետ: Մրցության լայն ասպարեզ բացելով հակամերժ տնտեսաձևերի համար, պետությունն իր ձեռքում էր կենտրոնացնում խոշոր արդյունաբերությունն ու առևտուրը (մեծածախ), նէպմանին թողնելով սպառողական ապրանքների և շուկայի մանրածախ առևտրի բնագավառները:

Նէպի սկզբունքները լայնորեն պրոպագանդելու և հատկապես նրա սխալ մեկնաբանությունները կանխելու նպատակով անհրաժեշտ համարվեց հրավիրել կուսակցության արտահերթ կոնֆերանս: Մերկացնելով նէպի հակառակորդներին, որոնք այն դիտում էին որպես կոմունիստական շինարարությունից հրաժարվելու և կապիտալիզմ վերականգնելու փորձ, կոնֆերանսում Վ. Ի. Լենինը մեկ անգամ ևս ընդգծեց, որ նէպը ոչ թե ժամանակավոր, տակտիկական նկատառումով կիրառվող միջոցառում է, այլ մտցվում է երկար ժամանակով: «Տնտեսական քաղաքականության մասին» որոշման մեջ կուսակցության XI կոնֆերանսը նորից հաստատեց նէպի հետևողական կենսագործման անհրաժեշտությու-

7 Տե՛ս նույն տեղում, էջ 589:

նը, այն դիտելով որպես անցման շրջանի հիմնական քաղաքականություն[8]։ Ամփոփելով կոնֆերանսի աշխատանքները, Վ. Ի. Լենինը նշեց, որ այժմ պայքարի հիմնական ասպարեզը տնտեսական շինարարությունն է, որից մեծ մասամբ կախված է սոցիալիզմի կառուցման ճակատագիրը։ «Այժմ միջազգային հարաբերության վրա,— ասաց նա,— մեր գլխավոր ներգործությունն անում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ... Կլուծենք այդ խնդիրը և այն ժամանակ մենք կշահենք միջազգային մասշտաբով հաստատապես և վերջնականապես»[9]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինի կողմից մշակված և կենսագործված նոր տնտեսական քաղաքականությունը բխում էր մեր երկրի զարգացման կոնկրետ պայմաններից։ 1921 թ. գարնան տնտեսական ճգնաժամն արագացրեց այդ անցումը։ Դրանով փաստորեն մշակվեց մեկ առանձին, հիմնականում գյուղացիական, երկրում սոցիալիստական շինարարության այն մայրուղին, որը համաշխարհային պատմական նշանակություն ունեցավ։

2. ԱՆՑՈՒՄ ՆԵՊԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երբ Ռուսաստանում մարվեց նկուղը, ՍՍՀՄ-ը դեռ չէր կազմավորվել։ Ուստի սովետական մյուս հանրապետությունները, այդ թվում Հայաստանը, պետք է հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները, օգտագործեին Ռուսաստանում կենսագործվող նոր քաղաքականության հիմնական սկզբունքները, որպեսզի կարողանային դուրս գալ տնտեսական ծանր վիճակից։

Հայաստանում սովետական կարգերը հաստատվելուց անմիջապես հետո ավելի շատ ջանքեր էին գործադրվում քաղաքական իշխանությունն ամրապնդելու վրա, քան տնտեսական հարցերով զբաղվելու։ Եվ դա բնական էր։ «Հեղափոխության սկզբնական շրջանում,— նշված է պաշտոնական փաստաթղթերից մեկում,— մենք չէինք կարող տնտեսությամբ զբաղվել, որովհետև այն ժամանակ մեզ զբաղեցնում էր քաղաքական իշխանության խնդիրը։ Բայց նոր տնտեսական քաղաքականության հետ միասին հրատապ դրվեց և մեր արդյունաբերության ու գյուղատնտեսության բարձրացման խնդիրը»[10]։

---

8 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», հ. I, Երևան, 1954, էջ 574։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 562։

10 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 131, ց. 3, գ. 19, թ. 1։

Քաղաքական իշխանությունն ամրապնդելու հետ մեկտեղ տնտեսական խնդիրներով զբաղվելը, որը ժամանակի հրատապ հարցն էր, բավականին ծանր վիճակի առջև կանգնեցրեց Հայաստանի նորաստեղծ սովետական իշխանությանը: Հիմնական դժվարություններից մեկը, եթե ոչ ամենահիմնականը, ամենուր զգացվող կուսակցական և սովետական ղեկավար կադրերի պակասն էր, որը լրջորեն խոչընդոտում էր կուսակցության քաղաքականությունը հետևողաբար կենսագործելուն: Դրանից հաճախ օգտվում էին բուրժուական կադրերն ու մասնագետները, որոնք հույսերը չիարելով կապիտալիզմի վերականգնումից, ամեն կերպ խուսափում էին սովետական իշխանության հետ համագործակցելուց: Քանի որ հայ պրոլետարիատը հիմնականում ձևավորվել էր Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի արդյունաբերական կենտրոններում, հայազգի քաղաքական և հեղափոխական գործիչները նույնպես մեծ մասամբ նրա սահմաններից դուրս էին գտնվում: Այդ իսկ պատճառով սովետական կարգերը հաստատվելուց հետո ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ (1920 թ. դեկտեմբեր) Հայաստանում աշխատելու ուղարկվեցին մեծ թվով կուսակցական-քաղաքական գործիչներ (Ս. Սրապիոնյան—Լուկաշին, Ալ. Շահվերդյան, Ա. Կարինյան, Ս. Համբարձումյան, Ա. Երզնկյան, Պ. Մակինցյան, Ա. Իվանյան, Ս. Շադունց, Ս. Խանոյան, Հ. Բալյան և ուրիշներ): Դրանց թվում էր նաև Ալ. Մյասնիկյանը (Մարտունի), որը Հայաստան մեկնելուց առաջ Հանդիպում ունեցավ Լենինի հետ: Նա Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների Հանրապետության կոմունիստներին բերեց Վ. Ի. Լենինի հայտնի նամակը, որը, փաստորեն, նրանց համար գործողությունների ծրագիր հանդիսացավ: Այդ նամակում Վ. Ի. Լենինն առաջին հերթին ընդգծում էր Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրապնդման անհրաժեշտությունը, ըստ երևույթին, ի նկատի ունենալով ոչ հեռավոր անցյալի ազգամիջյան ընդհարումների և բուրժուական ազգայնական տարրերի կողմից դեռևս հնարավոր հրահրումները: Դա կարծանարար կլիներ բոլոր հանրապետությունների համար: «...Ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել,— գրում է պրոլետարիատի առաջնորդը,— որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուադիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[11]: Նամակում Կովկասի կոմունիստներին բացատրվում էր, որ սոցիալիստական

11 Նույն տեղում, էջ 402:

հասարակարգ կառուցելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պահպանել և ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ Անդրկովկասում սոցիալիստական շինարարություն ծավալելու համար անպայման պետք է օգտագործել Ռուսաստանի և մյուս հանրապետությունների փորձը։ Բայց բոլոր միջոցներով պետք է խուսափվեր այն նույնությամբ կրկնելուց և ճիշտ հաշվի առնվեին տեղական առանձնահատկությունները։ Երկրամասում նոր հասարակարգի շինարարության հաջողությունը կախված է նրանից, որպեսզի «...Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց հանրապետության դրության յուրօրինակությունը ի տարբերություն ՌՍՖՍՀ դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[12]։ Այդ նամակում Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս Կովկասի և Ռուսաստանի պայմանների հիմնական տարբերությունները, որպեսզի երկրամասի կոմունիստներն այն հաշվի առնեն իրենց առօրյա գործունեության ընթացքում։ Նախ Ռուսաստանը հարկադրված էր մեն-մենակ, տարիներ շարունակ ծանր պայքար մղել Անտանտայի արշավանքների և ներքին հակահեղափոխության դեմ։ Այդ պայքարը վիթխարի ջանքեր ու միջոցներ կլանեց, որպիսի զոհողություններ Կովկասի հանրապետությունները հարկադրված չեն անելու, որովհետև միայնակ չեն և միշտ կստանան Ռուսաստանի և մյուս հանրապետությունների քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակությունը։ «Այդ արմատական տարբերություն է»,— նշում էր Վ. Ի. Լենինը[13]։ Մյուս տարբերությունն այն է, որ Կովկասի հանրապետությունները ձեռնամուխ լինելով տնտեսական շինարարությանը, չեն վախենա ոչ Անտանտայի նոր արշավանքներից, ոչ էլ ներքին հակահեղափոխությունից։ «Ռուսաստանը «դաղել է» Անտանտայի ձեռքերը՝ և այդ նրան կհարկադրի, հավանորեն, որոշ ժամանակ մի փոքր ավելի զգույշ լինել»[14]։ Այնուհետև, որպես հիմնական արմատական տարբերիչ գիծ, Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ կովկասյան հանրապետություններն ավելի գյուղացիական երկրներ են քան Ռուսաստանը։ Ծայրամասերում, օրինակ, սովետները հիմնականում գյուղացիական են, բայց նրանց միջոցով կենսագործվում է պրոլետա-

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, էջ 403։

բիատի դիկտատուրայի քաղաքականությունը։ Ուստի իր իշխանությունը պահպանելու համար պրոլետարիատին անհրաժեշտ է անմիջապես «...բարելավել գյուղացիների դրությունը»։ Գյուղացիների մոտ դարերի ընթացքում մշակվել է մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը, որը միանգամից վերացնել հնարավոր չէ։ Անհրաժեշտ է մեծ զգուշությամբ և աստիճանաբար վերափոխել նրան։ Գյուղացին ինքը պետք է համոզվի այդ վերափոխման անհրաժեշտության մեջ։ «Անցումը դեպի կոլեկտիվ հողագործությունը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— պրոլետարական պետական իշխանությունը պետք է իրագործի միմիայն մեծ զգուշությամբ և աստիճանականությամբ, օրինակի զորությամբ, առանց որևէ բռնության միջոց գյուղացիության նկատմամբ»[15]։ Ուստի, Կովկասի կոմունիստները իշխանությունը պահպանելու և սոցիալիստական շինարարություն ծավալելու համար ավելի շատ պետք է ցուցաբերեն «...մեղմություն, զգուշություն, զիջողականություն մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ»[16]։ Այս հանճարեղ ցուցումը դժբախտաբար հետևողական կիրառում չգտավ, չնայած Վ. Ի. Լենինը մարգարեաբար զգուշացնում էր. «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ... Ահա թե ինչ է հարկավոր հասկանալ և կարողանալ իրականացնել ի տարբերություն մեր տակտիկայից»[17]։ Վերջապես նա նշում էր այն տարբերությունը, որ Ռուսաստանը մեկուսացված է առաջավոր կապիտալիստական երկրներից և ոչ բոլորն են կամենում նրա հետ տնտեսական հարաբերությունների մեջ մտնել, իսկ Կովկասի հանրապետությունները կարող են և պետք է անմիջապես կապիտալիստական երկրների հետ ապրանքափոխանակություն սկսեն իրենց տնտեսական վիճակը բարելավելու համար։ «Սրանք բոլոր տարբերությունները չեն,— գրում է նա։ —Սակայն հենց մատնանշված տարբերություններն էլ բավական են հասկանալու համար այլ տակտիկայի անհրաժեշտությունը»[18]։

Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին խորհուրդ էր տալիս բոլոր միջոցները մոբիլիզացնել բանվորների ու գյուղացիների դրությունը բարելավելու և մտավորականությանը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու համար։ Տնտեսական ծանր վիճակից դուրս գալու հա-

---

15 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 31, էջ 181։

16 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 32, էջ 403։

17 Նույն տեղում, էջ 494։

18 Նույն տեղում, էջ 403։

մար առաջին հերթին անհրաժեշտ էր վերականգնել գյուղատնտեսությունը, նպաստել նրա զարգացմանը։ Նկատի ունենալով ոռոգման անգնահատելի դերը Կովկասում, Վ. Ի. Լենինը գրում էր. «Ոռոգումը հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը ինչ գնով էլ լինի բարձրացնելու համար»[19]։ Նա նշում էր, որ էլեկտրիֆիկացիան և հատկապես ոռոգումը մեծապես նպաստելով անտեսական վերելքին, կվերացնեն երկիրը, կբարելավեն աշխատավորության դրությունը և վերջին հաշվով կհեշտացնեն անցումը դեպի սոցիալիզմ։ Կովկասի կոմունիստներին առաջնորդի ուղղած նամակը գործողության ուղեցույց հանդիսացավ նաև Ռուսաստանի այլ ծայրամասերի համար, որոնք սոցիալ-անտեսական զարգացման մոտավորապես նույն մակարդակի վրա էին գտնվում։ Ամեն մի ժողովրդի, տնտեսական ամեն մի գոտու սոցիալական և բնակլիմայական առանձնահատկությունները բազմակողմանիորեն հաշվի առնելու և ձևոք բերած նվաճումներն ու առաջավոր փորձը տեղական պայմաններին հարմարեցնելու՝ ստացված արդյունքով նրա օգտավետությունը գնահատելու կարողությունից է կախված մեր երկրում սոցիալիզմի կառուցման հաջողությունը։ Այս էր լենինյան նամակի հիմնական բովանդակությունը։ Քանի որ ծայրամասերը չէին անցել պայքարի և տնտեսական շինարարության այն հարուստ դպրոցով, ինչ Ռուսաստանը՝ կենտրոնի փորձը մեխանիկորեն չպիտի ընդօրինակվեր, այլ քննադատաբար յուրացվեր՝ ելնելով տեղական առանձնահատկություններից։

Ղեկավարվելով մեր երկրում սոցիալիստական շինարարության ծավալելու մասին լենինյան ցուցումներով և կոմսակցության X համագումարի որոշումներով, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները գաղափարական և կազմակերպչական զգալի աշխատանք ծավալեցին այդ ուղղությամբ։ Ամենուր բացատրվում էր նոր տնտեսական քաղաքականության անցնելու անհրաժեշտության և գյուղատնտեսության վերականգնմանը պետական բազմակողմանի օգնության ցույց տալու մասին։ Բազում միտինգներ ու ժողովներ տեղի ունեցան, որոնք ջերմորեն աղջունում էին տնտեսական շինարարության նոր կուրսը և պատրաստակամություն հայտնում օգնելու նրա ճիշտ կենսագործմանը։ 1921 թ. բոլոր գավառներում անկուսակցական գյուղացիների համագումարներ հրավիրվեցին, որոնք ջերմորեն ընդունեցին նէպին անցնելու մասին որոշումը։

19 Նույն տեղում, էջ 404։

Փաստորեն 1921 թ. ապրիլից արգելվեցին բոլոր տեսակի խուզարկումներն ու բռնագրավումները և մինչև հունիս դյուղացիությունը (մասամբ նաև բանվորությունը) հարկային և տուրքային պարտավորություն չէր կատարում պետության հանդեպ: Դա քաղաքացիական կռիվներից հետո եկող շրջանն էր, երբ ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր գարնանացանը ժամանակին կատարելու վրա: Մյուս կողմից, այդպիսի վիճակ էր առաջացել, որովհետև փետրվարյան հակահեղափոխական ևլույթի հետևանքով լիովին ավերվել էր տնտեսությունը, թալանվել էին վերջին բարիքները: Այլևս վերցնելու ոչինչ չկար: Ավելին: Հայաստանի Հեղկոմը վճռական միջոցառումների էր դիմում գյուղացիությանը սերմացու և գործիքներ բաժանելու համար, որպեսզի չձախողվեն գարնանացանի աշխատանքները: 1921 թ. ապրիլի 24-ի դեկրետով Հեղկոմը սերմացու բաժանեց չունևոր տնտեսություններին և պահանջեց, որպեսզի բոլոր հողամասերում պարտադիր կարգով ցանք կատարվի[20]: Անցնելով նէպին վերակառուցվեցին ու ամրապնդվեցին կուսակցական և սովետական մարմինները: ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1921 թ. մայիսյան պլենումը նպատակահարմար գտավ Հայաստանի Հեղկոմը վերակառուցել Ժողկոմխորհի և ամբողջ իշխանությունը հանձնել նրան՝ մինչև սովետների սահմանադիր համագումարի հրավիրումը: Պետական ռազմահեղափոխական ապարատի վերակառուցման և Ժողկոմխորհի կազմակերպման գործում կարևոր դեր խաղաց Ալ. Մյասնիկյանը: Կուսակցական և պետական ապարատի ամրապնդման հետ մեկտեղ լուրջ աշխատանքներ էին ծավալվում նոր տնտեսական քաղաքականության կենսագործման ուղղությամբ, որը լուրջ դժվարությունների էր հանդիպում, որոնց շրջանցելը հնարավոր չէր: Այսպես, եթե ռուսական գյուղը, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, 1921 թ. գարնանը համահարթվել և հիմնականում միջակացել էր, ապա հայկական գյուղը, մանավանդ քաղաքացիական կռիվներից հետո, տատապում էր համատարած աղքատության մեջ, որն արդյունք էր հողի, գործիքների և քաշող ուժի չտեսնված սակավության: Եթե Ռուսաստանում նէպին անցնելու նախօրյակին հիմնականում ապրարային հեղափոխությունը ավարտվել էր, ապա Հայաստանում այն միաժամանակ պիտի կատարվեր: Դրությունն ավելի էր ծանրանում բազմահազար գաղթականների ու որբերի առկայության պատճառով: Հաշվի առնելով այս տեղական առանձնահատկությունները և նրանց պատճառած լրացուցիչ դժվարությունները, Հայաստանի կոմիտասը և

20 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, գ. 17, թ. 20:

ժողկոմխորհը քայլ առ քայլ հրաժարվելով «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից անցում կատարեցին նէպին:

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործմամբ նախատեսվում էր բարձրացնել գյուղացիության հետաքրքրությունը կուլտուրական տնտեսավարության նկատմամբ, ի տարբերություն մի կերպ յոլա գնալու պապենական սովորույթների: Սովետական կառավարությունը բոլոր միջոցներով նպաստում էր տնտեսությունը դիտակտորեն վարելու ճիշտ ձևերի ընտրությանը: Մինատնտես գյուղացու տնտեսությունը բարձրացնելը համեմատաբար հեշտ էր. դժվար էր նրա դարավոր կացութաձևի փոփոխումը: Նէպի շնորհիվ այս երկու, երբեմն համեմատ թվացող տենդենցների զարգացումը միաժամանակ էր կատարվում, տարբեր էտապներում առաջնությունը տալով կողմերից մեկին: Նէպի կենսագործմամբ գյուղացիությունը պիտի սոցիալիզմ կառուցեր անձնական շահադրգռվածության բարձրացմամբ, իր անհատական տնտեսության ամրապնդմամբ: Դա որքան հակասական, նույնքան իմաստուն քաղաքականություն էր:

1921 թ. հունիսի 24-ին ՀՍՍՀ ժողկոմխորհը ընդունեց «Պարենտուրքի մասին» հայտնի դեկրետը, որով փաստորեն սկսվեց նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը Հայաստանում: Այնտեղ գրված էր.

«1. Կարմիր բանակի, բանվորների, խորհրդային ծառայողների և խնամատարության կարոտ որբերի ու փախստականների կարիքները բավարարելու համար՝ պահանջվում են պարենային մեծ ծախքեր: Այդ ծախքերի մի մասը ծածկելու համար ՀՍԽՀ ժողկոմխորհը հանրապետության ամբողջ տերիտորիայում ժամանակավորապես սահմանում է պարենային տուրք: Յուրաքանչյուր մի քաղաքացի՝ որ պարապում է հացաբույսերի, գետնախնձորի, տեխնիկական և արդյունաբերական բույսերի վար ու ցանքով, ինչպես և մեղվաբուծությամբ, անասնաբուծությամբ և կենդանաբուծությամբ՝ պարտավոր է պետությանը վճարել բնական տուրք:

2. Գյուղական տնտեսությունը խրախուսելու և իմպերիալիստական ազգայնական կռիվներից չափազանց տուժած գյուղացիության կացությունը բարելավելու համար պարենային տուրքի չափերը սահմանվում են այնպես, որ չծանրաբեռնի գյուղացու տնտեսությունը: Այդ տուրքից ազատվում են միայն սակավազոր տնտեսությունները...

6. Պարենի, հում նյութերի և ֆուրաժի այն բոլոր պաշարը, որ

տուրք վճարելուց հետո մնում է հողագործի մոտ, գտնվում է նրա լիակատար տրամադրության տակ և չի կարող ենթարկվել ոչ ոքի կողմից բռնագրավման և կոնֆիսկացիայի»[21]:

Ինչպես տեսնում ենք, պարենային տուրքը սահմանվում էր պետական կարիքների մի մասը հոգալու համար և ժամանակավոր բնույթ էր կրում: Հայտնի է, որ այն ժամանակ դեռևս կենսունակ էր գյուղի և քաղաքի միջև պարզ ապրանքափոխանակության միջոցով սոցիալիզմ կառուցելու գաղափարը: Ուստի և ընդգծվում էր պարենտուրքի ժամանակավոր լինելը: Կարևոր էր այն, որ դեկրետում ընդգծվում էր, որ պարենտուրքը պիտի նպաստեր գյուղացիության տնտեսական վերելքին, նրա պայմանների բարելավմանը: Այն ի սկզբանե դասակարգային բնույթ ուներ, բայց ելնելով տնտեսական ծանր պայմաններից, խիստ սակավաղոր տնտեսություններն էին միայն ազատվում հարկից: Դեկրետով կառավարությունը հատուկ ընդգծում էր, որ տուրքը վճարելուց հետո մնացած ամբողջ բերքը գտնվում է հողագործի լիակատար տնօրինության տակ: Այսպիսով, «Պարենտուրքի մասին» դեկրետով Հայաստանում սկսվում է անցումը նէպին, որը շատ կարևոր դեր խաղաց մանրգյուղացիական, անհատական տնտեսությունները ամրապնդելու, գյուղատնտեսությունը վերականգնելու գործում:

Հայաստանում նէպին անցնելը ոչ միայն պատմականորեն անհրաժեշտ էր, այլև փրկության միակ ճիշտ ուղին էր, միակ խելացի միջոցը տնտեսությունը վերականգնելու և ավերված ու կողոպտված երկիրը շենացնելու, աղգաբնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Խոսելով Հայաստանում նէպ մտցնելու անհրաժեշտության մասին, Ս. Լուկաշինը Հայաստանի սովետների I համագումարում նշել է. «...մինչև ապրիլի մեկը մեզ մոտ ոչ միայն չի գործադրվել որևէ մտածված տնտեսական սիստեմ, այլ նույնիսկ Ռուսաստանում գոյություն ունեցող տնտեսական ձևերը անուշադիր են թողնված եղել... Մեր երկրում չկա խոշոր արդյունաբերություն, չկան և բանվորներ այն տոկոսով, որքան Ռուսաստանում, հետևաբար նա (նէպը—Գ. Գ.) ավելի անհրաժեշտ է մեր երկրի համար քան Ռուսաստանի»[22]:

Նույն կարծիքն է հայտնել նաև Ալ. Մյասնիկյանը, գտնելով, որ Հայաստանի պայմաններում ի սկզբանե պետք է օգտագործվեր նման

---

21 «ՀՍԽՀ կառավարության օրենքների և հրամանների ժողովածու», պրակ II, էջ 61—62:

22 «Խորհրդային Հայաստան», 14 փետրվարի, 1922:

քաղաքականությունը. «...եթե այսօր Ռուսաստանի քաղաքականությունը համարվում է նոր, այդ քաղաքականությունը Հայաստանի համար ամենատկզբից պետք է լիներ հին»[23]:

Պարենտուրքը պրոլետարիատի դիկտատուրայի իդեալը չէր: Այն երևան եկավ, որովհետև տեղերում գոյություն ունեցող դրամական ոչ կայուն վիճակը և շրջանառության թույլ լինելը պետությանը հարկադրում էին գործ ունենալ ավելի ռեալ ռեսուրսների հետ, բնամթերքով հավաքել հարկերը, որպեսզի հնարավոր լիներ զորքի և աշխատավորության կարիքները բավարարելու համար որոշակի պաշար կուտակել: Դա ոչ թե հարկ հավաքելու լավագույն ձևն էր, այլ առավել նպատակահարմարը: Պարենտուրքը զգալիորեն պակաս էր պարենմասնատարումից և նշանակվում էր հաշվի առնելով ոչ միայն բերքի չափը, այլև ընտանիքի անդամների թիվը: ՀՍՍՀ Ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 29-ի «Հացահատիկի և գետնախնձորի վրա դրած բնական տուրքի մասին» դեկրետով ավելի կոնկրետացվեց հունիսի 24-ի դեկրետը և վերոհիշյալ երկու չափանիշներից բացի հարկի հիմքում դրվեց նաև երրորդը՝ ցանքատարածությունը: Արդեն առաջին իսկ դեկրետից զգացվում էր նրա արմատական տարբերությունը «ռազմական կոմունիզմի» պարենմասնատարումից: Այժմ գյուղացիական տնտեսությունները ըստ իրենց կարողության (վարելահողի չափի և շնչերի քանակի) բաժանվում էին հինգ կարգի, իսկ ըստ բերքատվության՝ վեց խմբի: Այս բաժանումների շնորհիվ հիմնականում ընդգծվում էր հարկի դասակարգային բնույթը: Առաջնորդվելով նեպի հիմնական սկզբունքներն ամենաճանաբար կենսագործելու մասին կուսակցության X համագումարի որոշումներով, հանրապետության Ժողկոմխորհը 1921 թ. հունիսի 27-ին և 31-ին դեկրետներ հրատարակեց կաթնամթերքի և մսի բնահարկի մասին, օգոստոսի 16-ին՝ խաղողի, բրդի բնահարկի մասին: Ապա աստիճանաբար մինչև 1921 թ. աշունը սահմանվեց նաև մյուս մթերքների հարկի չափը:

Գյուղացիությանն իր տնտեսության զարգացմամբ շահագրգռելու և նրան բանվոր դասակարգի շուրջը համախմբելու նպատակով Ժողկոմխորհի հատուկ դեկրետներով մի շարք արտոնություններ սահմանվեցին ցանքատարածություններն ավելացնող և բերքատվությունը բարձրացնող մենատնտես գյուղացիների համար: Նեպի սկզբունքների հետևողական կենսագործման շնորհիվ մենատնտես գյուղացին փորձով համոզվում էր իր նկատմամբ իշխանության ցուցաբերած հոգատարության մեջ:

23 Նույն տեղում:

Դա բանվորագյուղացիական դաշինքի կարևոր հանգույցն էր, որի վրա այդքան շատ էր ուշադրություն դարձվում։ Վերջին հաշվով դասակարգային ինչնամուն մեկուսացնելու լավագույն միջոցը աշխատավոր գյուղացիների տնտեսությունների ամրապնդումն էր, նրա վիճակի բարելավումը։ Նէպը խթանելով գյուղացիների շահագրգռվածությունը, մեծապես նպաստում էր բանվոր դասակարգի շուրջը նրա համախմբվելուն։ Դա մեր երկրում սոցիալիստական շինարարության հիմնական պայմաններից մեկն էր։

Գյուղացիությունը, անշուշտ, սկզբնական շրջանում որոշ կասկածանքով, թերահավատությամբ էր ընդունում նէպին անցնելը։ Սակայն կուսակցական և սովետական մարմինների հետևողական աշխատանքների շնորհիվ գյուղացիությունն աստիճանաբար համոզվեց, նոր քաղաքականության շահավետության մեջ և ձեռնամուխ եղավ իր տնտեսության վերականգնմանը։ «Իսկ այժմ,— գրված է նէպ մտցնելու առթիվ Նոր Բայազետի գավկոմի կոչում,— կիրառելով մեր նոր տնտեսական քաղաքականությունը, լիահույս ենք, որ Հայաստանի աշխատավորությունը պիտի վերաշինի չուր ավերած երկիրը, և մոռացության գիրկը տա այն բոլոր տանջանքները, որ հարուցեցին դաշնակները»[24]։

Հայաստանի աշխատավորությունը հիմնականում ճիշտ ընկալեց նէպի էությունը և մեծ խանդավառությամբ ընդունեց այն։ Իրոք համաժողովրդական պայքար ծավալվեց գյուղատնտեսական արտադրության զարգացման համար։ Առաջին տարվա պարենհարկը, չնայած տնտեսական ծանր պայմաններին, հաջողությամբ կատարվեց։ Նախատեսված 700 հազարի դիմաց հավաքվեց 726 հազար փութ մթերք։ Դա նոր տնտեսական քաղաքականության լավագույն գնահատականն էր։ Հարկը մուծելուց հետո գյուղացիները մնացած մթերքներն ազատ վաճառելու և իրենց կարիքները հոգալու հնարավորություն ստացան՝ մեկ անգամ ևս համոզվելով սովետական իշխանության հոգատարության մեջ։ Դա բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման լավագույն միջոցն էր։

Անցումը նէպին կարճ շրջադարձ էր սովետական պետության և գյուղացիության փոխհարաբերությունների մեջ։ Սակայն նէպի խթանիչ, շահագրգռիչ սկզբունքները միայն գյուղացիության վրա չէին տարածվում, ինչպես հաճախ ներկայացվում է գրականության մեջ։ Պարզապես գյուղատնտեսության վերականգնումը առաջնահերթ նշանակություն ուներ, որից շատ բանով կախված էր սոցիալիստական շինարարության

24 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 1, գ. 181, թ. 5։

ճակատագիրը։ Որպես անցման շրջանի քաղաքականություն, նէպը կարևոր դեր խաղաց նաև արդյունաբերության վերականգնման գործում։ Այն հատկապես շրջադարձային նշանակություն ունեցավ մանր և միջին ձեռնարկությունների վերականգնման խնդրում, ձեռնարկություններ, որոնք բավականին մեծ դեր էին խաղում ժողովրդական տնտեսության մեջ։ 1921 թ. գարնանից սկսած, Հայաստանի Հեղկոմի կարգադրությամբ նախկին տերերին վերադարձվեցին կամ կապալով տրվեցին բոլոր մանր դործարանները, ջուլհականոցները, արհեստանոցները և այլն։ Ընդ որում, տերերը պարտավորվում էին ձեռնարկությունները միշտ պահել գործող վիճակում և առաջին հերթին կատարել պետական հանձնարարությունները։ ՀՍՍՀ ժողկոմխորհի 1921 թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ նախկին տերերին վերադարձվեցին նաև ջրաղացները և դինգերը։ Որպեսզի նրանք չշահագործեն աշխատավորությանը, սահմանվեց աղունավարձի կայուն չափ, իսկ պետական հացահատիկը պարտավոր էին աղալ առանց հերթի ու վարձի։ Ուշագրավ է, որ նախկին տերերին չէին վերադարձվում այն ձեռնարկությունները, որոնք ազգայնացումից առաջ վարձով կամ կապալով էին տրվել[25]։ 1921 թ. կեսերին ժողկոմխորհին էին դիմել Երևանի էլեկտրաաղացների տերերը, խնդրելով իրենց վերադարձնել էլեկտրաաղացները[26]։ Նման դիմումներ էին ստացվում նաև արհեստանոցների, ջուլհականոցների և այլ ձեռնարկությունների տերերից, որոնք հիմնականում բավարարվում էին։ Նրանց հետ կնքված առանձին-առանձին պայմանագրերում շարադրվում էին կողմերի պարտավորությունները։ Նույնպիսի պայմանագրեր էին կնքվում նաև մյուս ձեռնարկատերերի հետ։ Ելնելով Սովետական Ռուսաստանի փորձից, Հայաստանի ժողտնտխորհը նույնպես նպատակահարմար գտավ չաղգայնացնել մինչև 10 բանվոր ունեցող մանր արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես նաև միջակ գյուղացիությանը պատկանող ջրաղացները, ձիթհանքերը և այլն։ Նույնիսկ դեպքեր են եղել, երբ ժողտնտխորհը գնել է մասնավոր անձանց ձեռնարկությունները և պայմանագրով հանձնել նախկին տերերին, որպեսզի նրանք անպայման աշխատեցնեն դրանք։

Նէպի շահագրգռիչ սկզբունքներն աստիճանաբար տարածվում էին նաև ժողովրդական տնտեսության մյուս բնագավառների վրա։ Ժողկոմխորհի դեկրետներով մասնավոր անձանց թույլատրվում էր բացել

25 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 115, ց. 1, գ. 7, թ. 8։

26 Նույն տեղում, գ. 793, թ. 21։

բժշկական հիմնարկություններ (հիվանդանոցներ, սանատորիաներ, դեղատներ), տպարաններ, լիտոգրաֆիաներ, ցինկոգրաֆիաներ և այլն, իրավունք տալով ընդունելու ինչպես պետական և հասարակական հիմնարկությունների, այնպես էլ մասնավոր անձանց պատվերները։ Աճուրդով մասնավորներին էին տրվում նաև Սևանա լճի ձկնորսարանները։

Այսպիսով, «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից հետևողականորեն անցնելով նեպին, անհրաժեշտ պայմաններ էին ստեղծվում և բոլոր միջոցներով խրախուսվում մանր արտադրության (առաջին հերթին գյուղատնտեսության) զարգացումը, որը բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման հիմքն էր հանդիսանում։ Դա մեր երկրում սոցիալիզմի կառուցման հիմնական նախապայմանն էր։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔԵՐԴ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՍԿԻԶԲԸ

1. ԴՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կենսագործելով նեպի գործող սկզբունքները, սովետական իշխանությունը ձգտում էր առաջին հերթին վերականգնել ավերված ժողովրդական տնտեսությունը։ Ընդ որում, տնտեսության վերականգնման ու վերակառուցման աշխատանքները միաժամանակ էին տեղի ունենում և գնալով առաջին պլան էին մղվում սոցիալիստական կազմության ամրապնդման նպատակով կատարվող վերափոխումները։

Սակայն, հայտնի է, որ այդ ժամանակ ամբողջ ժողովրդական տնտեսությունը միանգամից վերականգնելու համար անհրաժեշտ միջոցներ չկային։ Ուստի անհրաժեշտ էր եղած միջոցներն ուղղել այն ճյուղերի զարգացման վրա, որոնց արտադրանքի կարիքն ավելի շատ էր զգացվում և որոնք քիչ միջոցներ ներդնելով հնարավոր էր արագ վերականգնել։ Այդպիսի ճյուղերից էր գյուղատնտեսությունը, որի զարգացման անհրաժեշտությունը զգացվում էր ամբողջ երկրում (պարեն, հումք և այլն) և առանց որի հնարավոր չէր վերականգնել ու զարգացնել արդյունաբերությունը։ Դա բխեցվում էր նաև նրանով, որ հանրապետության բնակչության հիմնական մասը գյուղացիությունն էր և միայն գյուղատնտեսական արտադրության կարգավորումն ու վերականգնումը կարող էր նրան փրկել կործանումից։ «...1921—1923 թթ. երկրի գրեթե

ամբողջ բնակչությունը,— գրված է ՀՍՍՀ հողժողկոմատի զեկուցագրերից մեկում,—չնչին բացառությամբ հողօգտագործման մեջ էր տեսնում իր ֆիզիկական գոյությունը պահպանելու միակ աղբյուրը»[1]։

Սովետական Հայաստանի տնտեսական վիճակը 1920-ական թվականների սկզբներին ավելի ծանր էր, քան Միության որևէ այլ հանրապետությանը։ Համատարած սովն ու համաճարակային հիվանդությունները սպառնում էին բնակչության ֆիզիկական գոյությանը։ 1922 թ. ամռանը Զանգեզուրից կառավարությանը հաղորդում էին, որ տնտեսական ծանր պայմաններից հարկադրված գյուղացիությունը մասսայաբար արտագաղթում է դավառից. «Գյուղացիության վիճակը սարսափելի ծանր է, ապրում են կիսաքանդ բնակավայրերում, շատ խիստ զգում են հագուստի կարիք... Շատերը լրիվ մերկ են»[2]։ «Քաղցածների թիվը օր-օրի վրա բազմապատկվում է շրջանիս գյուղերում,—1924 թ. փետրվարին գրում էր Համամլուի (Սպիտակ) գավգործկոմի նախագահը,—և ապագա սովի ուրվականը ծառանում է բնակչության առաջ»[3]։ Մյուս գավառների վիճակն ավելի լավ չէր։ Բնակչության զգալի մասը նորից բռնել էր արտագնացության ուղին։ Աշխատավորության մի մասի վիճակն այնքան ծանր էր, որ նույնիսկ չէր կարողանում մշակել իր սահմանած հողամասը։ 1922 թ. անմշակ հողերի վիճակագրությունը պարզեց, որ չնայած սակավահողությանը, հանրապետությունում զգալի քանակությամբ հողատարածություններ չէին մշակվում։ Ինչպես երևում է գյուղացիների պատասխաններից, դրա հիմնական պատճառներն էին «անասուններ և սերմացու չունենալը», «չքավորությունը», «գործիքներ չունենալը», «աշխատող չունենալը» և այլն[4]։ Այլ կերպ ասած՝ հողը մշակող չուներ, մշակողը՝ միջոցներ։ Հասկանալի է, որ Հայաստանի կառավարությունն իր վիճակի չէր իր միջոցներով այդ վիճակից դուրս գալու ելք գտնել։ Միայն սովետական մյուս հանրապետությունների և առաջին հերթին Ռուսաստանի եղբայրական օգնությունն օգնեց հայ ժողովրդին՝ հաղթահարելու այդ ծանր դժվարությունները։ Հայաստանի կուսակցական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ մոբիլիզացնել ինչպես ներքին ռեսուրսները, այնպես էլ դրսից ստացված օգնությունը և

---

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ, ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 260, թ. 228։

2 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 2, գ. 277, թ. 61։

3 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 102, ց. 1, գ. 580, թ. 31

4 Նույն տեղում, ֆ. 163, ց. 1, գ. 4։

առաջին հերթին կանխել արտադրության հետագա փլուզումը և ապահովել հանրապետությունը դուրս բերել այդ ծանր, մղձավանջային վիճակից։ Միայն 1922 թ. գարնանը (մինչև ապրիլ ամիսը) հանրապետության կառավարությունը 270 հազար փութ սերմացու բաժանեց գյուղացիներին, այդ թվում 100 հազար փութ՝ պարենհարկից, 70 հազար փութ՝ գնված արտասահմանից, իսկ շուրջ 100 հազար փութը ստացվել էր սովահար Սովետական Ռուսաստանից[5]։ Կուսակցության ազդեցությունը գյուղում ուժեղացնելու և գյուղացիության քաղաքական ակտիվությունը բարձրացնելու գործում կարևոր նշանակություն ունեցան ՀԿ(բ)Կ Կենտկոմի հատուկ հրահանգով 1923 թ. հունվար-փետրվարին անցկացված անկուսակցական, գյուղացիական կոնֆերանսները։

Հայաստանում գյուղատնտեսության վերականգնմանն ու զարգացմանն ուղղված առաջին ագրարային միջոցառումը, որը հիմք ծառայեց նրա սոցիալիստական վերակառուցման համար՝ Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 28-ի դեկրետն էր, որով վերացվեց հողի մասնավոր սեփականությունը։ «Բանվորագյուղացիական ազգաբնակչության հողազուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով,— գրված էր դեկրետում,— այլևս հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նադելի, եկեղեցական, վանքային, վակուֆային, մելեթային, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը դառնում են Հայաստանի խորհրդային հանրապետության սեփականությունը»[6]։ Դա, հիմնականում, բխում էր սովետների համառուսաստանյան II համագումարի ընդունած հողի մասին դեկրետի ոգուց։ Հողի ազգայնացման շնորհիվ կալվածատերերից, եկեղեցիներից, վանքերից և մասամբ կուլակներից բռնագրավվեց շուրջ 200 հազար հեկտար հող և անհատույց հանձնվեց աշխատավորությանը։ Դա բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման ամենահզոր գործոնն էր։ Սակայն հողերի բաշխման աշխատանքների ուշացման պատճառով սովետական իշխանության հաստատման առաջին տարում տեղերում գյուղացիները ինքնագլուխ հողեր էին զավթում և սկսում մշակել։ Դա տեղիք էր տալիս անարխիայի և ինքնադատաստանի, որը կարող էր վտանգավոր հետևանքներ ունենալ։ Ուստի, հողժողկոմատը հատուկ շրջաբերականով իր տեղական մարմիննե-

---

5 «Խորհրդային Հայաստան, 6 ապրիլի, 1922։

6 «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)», Երևան, 1974, էջ 142։

րին հանձնարարեց «...իբրև վճռական պահանջ հայտարարել գյուղացիությանը, որ իրենց հողազուրկ վիճակից դուրս գալու համար, նրանք ապօրինի և բռնի գրավումներ կատարելու քայլեր չպետք է անեն, այլ ամեն դեպքում պետք է դիմեն պատշաճ հաստատություններին»[7]։ Ապա ղեկավարվում էր, որ 1921 թ. հունվարի 1-ից հետո կատարված հողային ինքնագլուխ գործարքները լուծարքի կենթարկվեն և հողերը կբռնագրավվեն պետության կողմից։ Ինքնին հասկանալի է, որ նէպին անցնելու հետևանքով ագրարային քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնելու անհրաժեշտություն էր զգացվում։ Դա փաստորեն սկսվեց 1921 թ. գարնանից և հիմնականում ամփոփվեց 1922 թ. վերջերին, երբ հաստատվեց ՌՍՖՍՀ հողային կոդեքսը։

Դաշնակցության 1921 թ. փետրվարյան ավանդատուրան ջախջախելուց հետո նորաստեղծ սովետական իշխանությունն իր հիմնական ջանքերն ուղղեց գարնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու և հաջողությամբ ավարտելու վրա, որից մեծ չափով կախված էր աշխատավորության սովից փրկելու ծրագրի կենսագործումը։ Այդ նպատակով, առաջին հերթին աշխատանքներ ծավալվեցին սերմացու հայթայթելու և գյուղացիությանը բաժանելու ուղղությամբ։ 1921 թ. մարտին միայն Երևանի և Էջմիածնի գավառների գյուղացիներին մոտ 100 փութ սերմացու բաժանվեց, չհաշված սովյալներին ցույց տրված օգնությունը։ Բացի այդ, գյուղացիության մի զգալի մասը 1920—1921 թթ. սովի տարիներին գյուղի հարուստներից բավականին ծանր պայմաններով պարտք էր վերցրել, որը չէր կարողանում վերադարձնել։ Տեղեկանալով այդ մասին, ՀՍՍՀ ժողկոմխորհը 1922 թ. հունիսի 30-ի որոշմամբ չեղյալ հայտարարեց այդ պարտքերը։ Դա կուլակության դեմ պայքարելու, նրա վաշխառուական գործունեությունը սահմանափակելու առաջին միջոցառումներից էր, որը դրականապես անդրադարձավ գյուղատնտեսության վերականգնման աշխատանքների վրա։ Ինչպես ցույց են տալիս ՀՍԽՀ ժողկոմխորհի 1920—1922 թթ. հաշվետվության նյութերը, խաղաղ աշխատանքների անցնելու հաջորդ տարիներին արդեն որոշակի տեղաշարժեր կատարվեցին ինչպես ցանքատարածությունների ավելացման, այնպես էլ անասնագլխաքանակի աճի մեջ։ 1919 թ. 82,7 հազար հեկտար ընդհանուր ցանքատարածության փոխարեն 1922 թ. կար 97 հազար հեկտար։ Ընդ որում, առաջին հերթին վերականգնվում էր հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների ցանքատարածությու-

7 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 131, ց 3, գ. 311, թ. 12։

նը։ Անաստասպահության բնագավառում հիմնականում վերականգնվում էր քաշող ուժի գլխաքանակը, որը ներմուծվում էր Իրանից, մասամբ նաև Ռուսաստանից։ 1919 թ. խոշոր եղջերավոր անասունների 294 հազար գլխի փոխարեն 1922 թ. կար 334 հազար գլուխ[8]։ Փաստորեն 1921—1922 թթ. Հայաստանի գյուղատնտեսության քայքայման պրոցեսը կասեցնելու, աշխատավորության վիճակը որոշ չափով բարելավելու, բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման և տնտեսավարության սոցիալիստական սեկտորի առավելությունները պրոպագանդելու տարիներ էին։ Դա, ըստ էության, ապրարային ռեֆորմի կենսագործման նախապատրաստական շրջանն էր։

Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի գյուղացիության համար մեծ չարիք էր ցարիզմի հողաշինարարության հետևանքով ինչպես գյուղերի միջև, այնպես էլ դրանց ներսում առաջացած անհավասարությունը։ Այդ էր պատճառը, որ սովետական կարգերի հաստատումից հետո, շուրջ մեկ տարվա ընթացքում, հողժողկոմատը զբաղված էր արհեստականորեն խճճված այդ ծանր վիճակի կարգավորմամբ, սահմանակից համայնքների բշնաժական վեճերին վարչական լուծում տալով և միայն 1921 թ. աշնանից (նոյեմբեր) հնարավորություն ստացավ լուրջ կերպով զբաղվելու հողաշինարարությամբ[9]։ 1922 թ. ընթացքում հողժողկոմատի կողմից անցկացվեց գյուղացիների 17 տեղամասային համագումար և 414 հասարակական ժողով, որտեղ նրանց բացատրվում էր կուսակցության ապրարային քաղաքականության էությունը, հողօգտագործման հիմունքները և այլն։ Դրա շնորհիվ մի կողմից գյուղացիները նախապատրաստվում էին ապրարային ռեֆորմին, իսկ մյուս կողմից՝ ուսումնասիրվում էին նոր պայմանների առանձնահատկությունը, պահանջները, միջոցներն ու հնարավորությունները։ Մեր հանրապետությունում հողաշինարարության առանձնահատկությունները հիմնականում հետևյալն էին.

1) Համընդհանուր սակավահողությունը և հողատեսքերի խիստ բազմազանությունը։

2) Դաշնակցականների տիրապետության շրջանում Հայաստանից հեռացած և սովետական կարգեր հաստատելուց հետո վերադարձած ազգային փոքրամասնություններին հողով բավարարելը։

3) Ավելի քան 200 հազար գաղթականների հողով բավարարելը։

---

8 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1923, էջ 24։

9 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 16, գ. 31, թ. 38։

4) Անընդհատ ներգաղթող (արտասահմանից և հարևան հանրապետություններից) ընտանիքներին տեղավորելը։

5) Արոտավայրերից օգտվելու հարցի կարգավորելը։

Հայաստանում փաստորեն հողաշինարարությունը երկու էտապով կատարվեց։ Նախ ամեն ինչ արվեց հիմնական հողահավասարեցում կատարելու և չքավոր ու սակավահող տնտեսություններին հողով բավարարելու համար, ապա լուծվեցին հողացրվածության, ջրի, ճանապարհների և այլ հարցեր (հիմնական հողաբաժանություն)։ Դա բխում էր նաև նրանից, որ ընդառաջելով գյուղացիության ցանկությանը՝ հողը պարբերաբար վերաբաժանվում էր։ Հեղափոխության առաջին տարիներին անհրաժեշտ էր, որպեսզի հողահավասարարության քաղաքականության կենսագործմամբ հողազուրկ տնտեսությունները բավարարվեն հողով։ Սակայն նէպի կենսագործմամբ, երբ պայմաններ ստեղծվեցին գյուղացիական տնտեսություններն ամրապնդելու և նրանց արտադրությունն ավելացնելու համար, հողի պարբերական վերաբաժանումը սկսել էր խոչընդոտել դրան։ Նախ, գյուղացիական տնտեսություններն անընդհատ մանրանում էին, և տնտեսական անկայուն վիճակ էր ստեղծվում հողն ավելի արդյունավետ օգտագործելու խնդրում։ Որպեսզի գյուղացին շահագրգռվեր իր հողակտորն ավելի արդյունավետ մշակելու մեջ, անհրաժեշտ էր դադարեցնել հողի հետագա մանրատումը։ Դրանով, փաստորեն, անցում կատարվեց կայուն հողօգտագործմանը. «Մինչև հիմա,— գրված է Լոռի-Փամբակի գավգործկոմի 1924 թ. մի որոշման մեջ,— կատարած հողաբաժանության հիմնական ուշադրությունը կենտրոնացված է եղել հողազուրկներին և հողապակասներին հողով բավարարելու խնդրին՝ ի հաշիվ հողատերերի։ Այդ աշխատանքների ժամանակ բավարար ուշադրություն չի դարձվել հողաշինարարության հիմնական պահանջների բավարարելուն՝ այն է հողացրվածության, հողահեռավորության, ճանապարհների, ջրային և այլ խնդիրների վերաբերյալ»[10]։ Եվ դա բնական էր, որովհետև սկզբնական շրջանում հիմնականում ուշադրությունը և բոլոր միջոցները ուղղված էին սովի դեմ պայքարելուն։

Հայաստանի սակավահողության պայմաններում հողի ազգայնացմամբ փաստորեն չլուծվեց հողազուրկ և սակավահող տնտեսություններին, այդ թվում նաև գաղթականությանը հողով բավարարելու խնդիրը։ Անհրաժեշտ էր կարգավորել հողօգտագործումը, վերացնել գոյություն ունեցող անհավասարությունը և խճճված հողային հարաբերություններն

10 Նույն տեղում, ֆ. 158, ց. 1, գ. 117, թ. 65։

ընդհանուր կարգի բերել։ «Հայաստանում,— գրված է արխիվային փաստաթղթերից մեկում,— հողերի բռնագրավումը չավեց այն արդյունքը, ինչ-որ մյուս հանրապետություններում։ Նա ավելի շուտ սկզբունքային, քան որևէ էական տնտեսական նշանակություն ունեցավ սակավահող գյուղացիության շահերի տեսակետից»[11]։ Բայց հողի ազգայնացումը կարևոր հիմք և սկիզբ հանդիսացավ հողաշինարարության ծավալման համար, որը հնարավորություն տվեց վերացնելու հողային այն անհավասարությունը, որը գոյություն ուներ ինչպես տարբեր գյուղերի միջև, այնպես էլ ամեն մի գյուղի ներսում։

ՀՍՍՀ կառավարությունը դեռևս 1921 թ. աշնանը հատուկ ցույց էր տվել հողը աշխատավորությանը բաժանելու ժամանակ չմոռանալ գյուղում սոցիալիստական կազմաձևի ամրապնդման անհրաժեշտությունը։ «Եթե գյուղացիության այլևայլ հատվածներ ցանկանան կոոպերատիվ, արտելային և կոմունալ տնտեսություն անցկացնել, հատկացնել նրան առաջին հերթին հարմար հողամաս, ապա միայն բաժանել մնացած ազատ հողերը գյուղացիության մեջ[12]»։ Սա միանգամայն ճիշտ դասակարգային կողմնորոշում էր, որը պարունակում էր տնտեսության սոցիալիստական վերակառուցման սաղմերը։ Դա միաժամանակ խիստ կերպով թուլացնում էր կուլակության տնտեսական հիմքերը։ Այսպիսով հասկանալի է, թե ինչու էին դասակարգային թշնամիները բոլոր միջոցներով ձգտում խանգարել հողաշինարարական աշխատանքներին։ Ի նկատի ունենալով, որ մեր հանրապետությունում ծավալված միջգյուղական հողաշինարարության և ներքին հողաբաժանության հարցերը հանգամանորեն ուսումնասիրված են[13], հարկ չենք համարում նորից անդրադառնալ դրանց։ Սակայն Հայաստանում հողաշինարարության կենսագործման ընթացքում, ելնելով տնտեսական ծանր պայմաններից, որոնք պայմանավորված էին մի շարք պատճառներով, հատկապես սկզբնական շրջանում (1922—1925) հետևողական դասակարգային գիծ չի տարվել։ Այդ շրջանում կուլակային տնտեսություններից վերցվում էին հողային ավելցուկները՝ նրանց թողնելով իրենց ունեցած նախկին լավորակ հողերը։ Գյուղացիության բոլոր շերտերը հավասարապես, համարյա ա-

---

11 Նույն տեղում, ֆ. 123, ց. 16, գ. 258, թ. 4։

12 Վ. Ներկարարյան. Հայաստանի կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում, էջ 203։

13 Գ. Շաոյան. Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում 1920—1929 թթ., Երևան, 1962, Նույնի Գյուղի ներքին հողաբաժանությունը Սովետական Հայաստանում, Երևան, 1965, Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ։

ռանց խորականության, հող էին ստանում։ Դա բխում էր նրանից, որ անհրաժեշտ էր բոլոր միջոցներով ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, բնակչությանը փրկել սովի ճիրաններից։ Հետագայում, ժողովրդական տնտեսության վերականգնումից հետո, հողաշինարարական աշխատանքներ կատարվում էին առաջին հերթին սոցիալիստական տնտեսությունների ամրապնդման ուղղությամբ։ Այդ իմաստով կուսակցության XV համագումարից հետո հողաշինարարական աշխատանքների մեջ որոշակի բեկում մտցվեց. հողաշինարարությունը կատարվում էր այնքանով, որքանով այն առնչվում էր կոլտնտեսությունների և սովխոզների կազմակերպման հետ։ Այժմ շեշտը դրվում էր սոցիալիստական սեկտորի համար անհրաժեշտ տարածություն ստեղծելու, հողերն առանձնացնելու և կենտրոնացնելու վրա։ Հետևաբար, ըստ էության մինչև 1929—1930 թթ. հողաշինարարական աշխատանքները կատարվել են անհատական տնտեսություններն ամրապնդելու ուղղությամբ, հիմնական ուշադրությունը բևեռելով հողը աշխատավորությանը բաշխելու, առուծախը արդելելու, անհավասարությունները վերացնելու վրա։ Այն, փաստորեն, քիչ էր նպաստել սոցիալիստական ամրապնդմանը։ 1929 թ. հետո հողաշինարարությունը հիմնականում կատարվում էր հողատարածությունները կոլեկտիվ ձևով մշակելուն և մեքենահարմար դարձնելուն նպաստելու, սոցիալիստական սեկտորն ամրապնդելու համար։

Մեր հանրապետության համար ոռոգումը գյուղատնտեսության զարգացման հիմնական գործոններից է։ Պատահական չէր, որ Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին ուղղված վերոհիշյալ ծրագրային նամակում խորհուրդ էր տալիս անմիջապես սկսել ոռոգման աշխատանքները։ Ղեկավարվելով առաջնորդի ցուցումներով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը մշակեցին ոռոգման ծավալուն պլան, որն ընդգրկում էր ինչպես հին ջրանցքների վերականգնման, այնպես էլ նորերի կառուցման աշխատանքները։ Առաջին հերթին անհրաժեշտ էր մաքրել և վերականգնել եղած ջրանցքներն ու առուները։ Դեռևս 1921 թ. ջրանցքների մաքրման աշխատանքների համար պետությունը հատկացրեց 750 փութ ցորեն և 800 ռ. (ոսկով) դրամ։ Հաջորդ տարում այդ նպատակների համար հատկացվեց 14 հազար ռուբլի (ոսկով) չհաշված բնամթերքը։ 1921—1924 թթ. վերանորոգվեց և սկսեց գործել շուրջ 430 ջրանցք և առու (ավելի քան 3000 կմ ընդ-

հանուր երկարությամբ[14]։ Փաստորեն այս բնագավառում նույնպես 1921—1922 թթ., հիմնականում մաքրման ու վերանորոգման աշխատանքներ էին տարվում ջրանցքները հետագա ավերումից պաշտպանելու նպատակով։ Բացի այդ, ջրանցքաշինարարության ծավալումը, որը մեր հանրապետությունում նոր հողեր յուրացնելու հիմնական միջոցն էր, ուներ նաև սոցիալական խոշոր նշանակություն[15]։ Փաստորեն ոռոգելի հողատարածությունների ընդլայնումով մի կողմից դրվում էին կայուն և բարձր բերք ստանալու հիմքերը, իսկ մյուս կողմից՝ որոշ չափով մեղմացվում էին սակավահողությունից հայ գյուղացու կրած տառապանքները։

Նէպի առաջին փուլում վերանորոգվեցին ու կառուցվեցին մի շարք նոր ջրանցքներ ու ջրհան կայաններ (էջմիածնի, Շիրակի, Շահումյանի, Կարճևանի, Սարդարապատի, Արազդայանի ջրանցքները, Խոր-Վիրապի ոռոգման սիստեմը և այլն), կատարելագործվեց ջրօգտագործման սիստեմը և մինչև 1928 թ. նոր ոռոգելի հողերի աճը կազմեց 8,6 հազար հեկտար[16]։ Միայն 1926/27 և 1927/28 տնտեսական տարիներին ոռոգման վրա ծախսվեց 3,7 միլիոն ռուբլուց ավելի[17]։ Հիմնականում Արազդայան-Ղամարլու դաշտում սկսվեց մի շարք ջրհան կայանների շինարարություն։ Ոռոգման ցանցի ընդլայնումը ռեալ հիմքեր ստեղծեց հանրապետության գյուղատնտեսության վերակազմման ու վերակառուցման համար։

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման 1922—23 թթ. արդյունքներն ամփոփվեցին սովետների երրորդ համագումարում (1923 թ. դեկտեմբեր)։ Այլ հարցերի շարքում քննարկվեց նաև հողժողկոմատի հաշվետվությունը հողաշինարարության ընթացքի մասին։ Այդտեղ ընդգծվեց նէպի անգնահատելի դերը տնտեսության վերելքի գործում և ցույց տրվեց, որ ամուր հիմքեր են ստեղծվել նրա հետագա զարգացման համար։ Եվ իրոք, նէպի կենսագործմամբ մի կողմից գյուղացիների շահագրգռվածության բարձրացումը և սովետական իշխանության բազմակողմանի օգնությունը նրանց, մյուս կողմից կոոպերացիայի արմատավորումը գյուղում, կարևոր նախա-

---

14 «Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում», Երևան, 1960, էջ 47։

15 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿՄ, ֆ. 131, ց. 3, գ. 5, թ. 61։

16 «Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում», էջ 49։

17 «ՀՍՍՀ կառավարության 1926—27, 1927—28 թթ. հաշվետվություն», Երևան, 1929, էջ 63։

պայման հանդիսացան գյուղատնտեսության վերականգնման գործում։ Վերականգնման տարիների Հանրապետության գյուղատնտեսության նվաճումները պարզորոշ երևում են հետևյալ աղյուսակից[18]։

	1922 թ.	1923 թ.	1924 թ.	1925 թ.
Դաշտավարություն				
Ցանքերի ընդհանուր տարածությունը (հազար հեկտար)	97	212	273,6	295,7
Այդ թվում՝				
Հացաբույսեր	91,2	187,0	238,5	255
Տեխնիկական կուլտուրաներ	0,6	5,6	22,8	22,8
Կարտոֆիլ, բանջարաբոստանային կուլտուրաներ	5	8,6	12,5	14,5
Անասնապահություն (անասունների գլխաքանակը հազարներով)				
Խոշոր եղջերավոր անասուններ	334	434	482	643
Այդ թվում՝ կով	99	132	147	182
Ոչխար և այծ	421	644	792	1160
Խոզ	8	21	34	34

Ինչպես տեսնում ենք, 1923 թ. սկսած Հանրապետության ցանքատարածությունները աճում էին՝ մոտենալով նախապատերազմյան մակարդակին։ Դա սովետական իշխանության խոշոր նվաճումն էր։ Ընդ որում, որոշակի զգայվում է պետության ակտիվ միջամտությունը ավելի անհրաժեշտ և տնտեսապես ավելի շահավետ կուլտուրաների (հատկապես տեխնիկական) մշակումը խթան կերպով ավելացնելու գործում։ Փաստորեն Հանրապետության գյուղատնտեսության զարգացումը տանում էր դեպի նախապատերազմյան մակարդակի վերականգնում, որի ընթացքում այն միաժամանակ վերակառուցվում էր։ Հաջողություններն ավելի մեծ եղան հաջորդ տարիներին։ Այսպես, օրինակ, 1927 թ. ցանքատարածությունները հասան 319 հազար, իսկ 1928 թ.՝ 331 հազար հեկտարի։ Ցանքատարածությունների ավելացման հետ կարևոր ուշադրություն էր դարձվում բերքատվության բարձրացման վրա։ Տեղական մարմինները լայնորեն աշխատանքներ ծավալեցին հողատարածություններն առաջավոր եղանակով մշակելու, ցուցադաշտեր կազմակերպելու և գիտության ու տեխնիկայի նվաճումները պրոպագանդելու ուղղությամբ։ 1926 թ. Հանրապետության տարբեր շրջաններում գյուղացիների հողերի

18 «Խորհրդային Հայաստանը հինգ տարում», էջ 113, և 437 և «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր», Երևան, 1929, էջ 62։

վրա կազմակերպվել են 351 ցուցադաշտեր, որից 160-ը հացահատիկային կուլտուրաների մշակման, 66-ը՝ տեխնիկական, 78-ը՝ ցանովի խոտաբույսերի համար[19]: Կազմակերպվել է պայքար այգիների վնասատուների, մկների, մորեխի դեմ և այլն: Արդյունավետ էր հատկապես առաջավոր և օրինակելի տնտեսությունների մրցանակաբաշխության և ցուցահանդեսների կազմակերպումը: Հանրապետության գյուղացիությանը ՀԿ(բ)Կ Կենկոմի 1925 թ. ուղղած դիմումներից մեկում նշվում էր, որ սովետական պետության հիմնական նպատակն է բարելավել գյուղացիության դրությունը, օգնել նրան՝ աստիճանաբար վերափոխելու իր նահապետական սակավարդյունավետ տնտեսությունը: «Այդ բոլորով հանդերձ,— նշվում է դիմումում,—կուսակցությունը և պետությունը որոշել են այս տարվանից պարգևատրել այն գյուղացիներին, որոնք ըսկըսել են կենսագործել ագրոնոմների խորհուրդները և այս կամ այն նորարարությունն են մտցրել իրենց տնտեսության մեջ... Այնուհետև պարգևատրվում են նաև այն գյուղացիները, որոնք կիրառում են ճիշտ ցանքաշրջանառություն... և ամենաբարձր բերքը ստանում իրենց գյուղում»[20]: Մրցանակաբաշխությունը ճիշտ անցկացնելու համար ստեղծվել էին գավառային և կենտրոնական հանձնաժողովներ: 1925 թ. մրցանակաբաշխություն անցկացնելու համար հատկացվել էին շուրջ 100 հազար ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, սերմացու և այլն[21]: Ինչպես 1925 թ., այնպես էլ հաջորդ տարիներին մրցանակաբաշխության հիմնական մասնակիցները մենատնտես գյուղացիներն էին (չնայած մասնակիցների թվի կեսը նախատեսված էր կոոպերատիվների և արտելների համար): Գյուղատնտեսության մեջ առաջավոր փորձի նվաճումները ներդնելու գործում կարևոր նշանակություն ուներ նաև 1925 թ. էջմիածնում կազմակերպված փորձադաշտը, որն ուներ շուրջ 40 հեկտար հողամաս և փորձեր էր կատարում հացահատիկի և բամբակի նոր տեսակներ աճեցնելու համար: Այգեգործության զարգացման համար նման փորձեր էր կատարում № 1 սովխոզին կից 1927 թ. կազմակերպված այգեգործական փորձակայանը[22]: Ինչպես տեսնում ենք, նէպի առաջին փուլում զգալի աշխատանքներ կատարվեցին ցանքատարածությունների ընդարձակման և բերքատվության բարձրացման ուղղու-

19 «ՀԱՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1927, էջ 7:

20 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 7, գ. 301, թ. 63:

21 Նույն տեղում:

22 «ՀԱՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1929, էջ 70—75:

թյամբ: Մեծ էին նվաճումները նաև գյուղատնտեսության մյուս ճյուղերում:

Բավականին ծանր էր անասնապահության վիճակը: Նորաստեղծ սովետական իշխանությունը պայքար էր ծավալում ինչպես անասունների գլխաքանակի ավելացման, այնպես էլ ցեղայնության բարելավման և մթերատվության բարձրացման համար: Սովետական իշխանության բազմակողմանի օժանդակությունն ու օգնությունը առաջին իսկ տարում դրական արդյունք տվեցին: Սկզբնական շրջանում ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր առաջին հերթին անասունների գլխաքանակի ավելացման վրա: Քանի որ տեղական անասունները հիմնականում մանր և սակավ մթերատու էին, գլխաքանակի ավելացման հետ միևտեղ, ցեղայնությունը բարելավելու նպատակով, կազմակերպվեցին մի շարք ցուցադրական ֆերմաներ (հատկապես աչքի էր ընկնում Նոր Բայազետում (Կամո) գործող ֆերման): 1923 թ. Լոռի-Փամբակի և Դիլիջանի գավառներում բացվեցին անասնաբուծարաններ, որոնց հիմնական խնդիրն էր բարելավել այդ շրջանների խոշոր եղջերավոր անասունների ցեղայնությունը: Հետագայում նման բուծարան բացվեց Յանըղում (Մարտունու շրջան): Հանրապետության խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը շեշտակի վերելք ապրեց հատկապես 1925 թ. հետո, երբ տնտեսությունները բավականին ամրապնդվել էին: 1925/26 տնտեսական տարում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը հասավ 718,8 հազարի, իսկ 1927/28 տնտեսական տարում՝ 781,6 հազարի: Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը նույն ժամանակաշրջանում 1781 հազարից աճեց 1874 հազարի[23]: Հատուկ ուշադրություն էր դարձվում նաև անասունների շրջանում տարածված հիվանդությունների դեմ պայքարելու վրա: 1927/28 տնտեսական տարում հանրապետությունում գործում էին 28 անասնաբուծական կետեր և կայաններ, որոնք օգնություն էին ցույց տալիս նաև այլ հանրապետություններից մեզ մոտ եկող քոչվոր անասնապահներին: Հայաստանի կառավարության ձեռնարկած վճռական միջոցառումների շնորհիվ, օպտագործելով նեպի ընձեռած հնարավորությունները, գյուղի համատարած կոլեկտիվացման նախօրյակին անասնաբուծության զարգացման ասպարեզում խոշոր նվաճումներ ձեռք բերվեցին: 1927 թ. համեմատությամբ 1929 թ. խոշոր եղջերավոր անասուններով բնակչության ապահովվածությունը հետևյալ փոփոխությունն էր կրել (տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)[24]:

23 Նույն տեղում, էջ 75:

24 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 12, գ. 103, թ. 15:

	1927 թ.	1929 թ.
Կով չունեցող տնտեսություններ	35,8	33,8
Մեկ կով ունեցողներ	27,6	31,0
Երկու կով ունեցողներ	18,8	21,6
Երեք կով ունեցողներ	8,3	8,1
Չորս և ավել կով ունեցողներ	9,5	6,1

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս դասակարգային ճիշտ քաղաքականություն վարելու շնորհիվ, որն այնքան անհրաժեշտ էր նեպի պայմաններում, Հանրապետությունում 1927—1929 թթ. որոշ չափով կրճատվել է կով չունեցողների քանակը և խիստ կերպով նվազել չորս և ավելի կով ունեցող տնտեսությունների թիվը։

Սովետական իշխանության առաջին տարիներին ամենուր զգացվում էր նաև մեքենաների և գյուղգործիքների խիստ պահանջ։ Գյուղատնտեսական բարդ մեքենաներ դեռևս չկային (չհաշված մի քանի անգործության մատնված տրակտորները)։

Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման ղուգընթաց, քանի դեռ գյուղատնտեսական բարդ մեքենաներ դեռևս չկային, այդ կարևոր ճյուղի նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ հետևյալ հաջողություններն էին ձեռք բերվել[25]։

Թվականը	Գութան	Արոր	Սայլ
1919	5293	22,3 հազար	
1922	7555	35,7 »	29,5 հազար
1923	8227	40,1 »	33,2 »
1924	9647	45,3 »	35,3 »
1925	12051	50,1 »	43,5 »
1927	13000	50,3 »	47,4 »

Ինչպես տեսնում ենք, դեռևս գյուղում իշխողը հնադարյան արորն ու հասարակ գեղջկական սայլն էին, որով պայմանավորված էր մանր գյուղացիական հողատիրությունը։ Հասկանալի է, որ այդպիսի միջոցներով անհնար է գյուղատնտեսությունը զարգացման լայն ուղի դուրս

25 «Խորհրդային Հայաստանը 5 տարում», էջ 438, «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1927, էջ 5։

բերել։ Էլ չենք խոսում այն մասին, որ եղած գործիքները էլ հավասարապես չէին բաշխված։ Դրանց զգալի մասը կենտրոնացված էր ունևորների ձեռքում և շահագործման միջոց էր ծառայում։

Գյուղատնտեսական գործիքներով գյուղացիության ապահովվածությունը պարզելու նպատակով 1926 թ. կոռի-փամբակի գավառում ընտրովի հետազոտություն կատարվեց։ Այդ տվյալների հիման վրա մեր կողմից կազմած աղյուսակը պարզորոշ վկայում է գյուղացիության անմխիթար վիճակի մասին[26]։

	Ստուգվել է		Գութան		Տափան		Արոր	Կամ
Տեղամաս	դյուղ	տնտ.	գործ.	տեղական	մետաղյա	փայտյա		
Ստեփանավան	19	2554	72	27	134	41	56	285
Ալավերդի	24	2125	38	8	1	50	182	381
Համամլու	19	2177	15	19	5	33	249	260
Վարաքելիսա (կիրովական)	20	2378	41	5	52	64	230	299
Վորոնցովկա (կալինինո)	20	1781	50	2	112	9	16	158

Ինչպես ցույց են տալիս տվյալները, տնտեսությունների մեծ մասը ամենահասարակ գործիքներ անգամ չունեին։ Դա տիպական էր ամբողջ հանրապետության համար։ Արտադրության միջոցների պակասն ու անհավասար բաշխումը, հողային հարցի կարգավորման ձգձգումը և տնտեսական ծանր վիճակը հարկադրում էին, որպեսզի գյուղացիները որոշ վարձակալային հարաբերությունների մեջ մտնեն միմյանց հետ։ Դեռևս 1922 թ., ելնելով չքավոր գյուղացիության շահերից, պաշտոնապես թույլատրվում էր հողի վարձակալությունը։ Բանն այն է, որ հող ստացած գյուղացիության զգալի մասը այն մշակելու հնարավորություն չուներ և ստիպված էր վարձով տալ ուրիշներին։ Որպես կանոն, հողը վարձով մշակելու էին տալիս չքավոր գյուղացիները (հակառակ կապիտալիզմի ժամանակաշրջանին), իսկ վարձողները հիմնականում ունևոր գյուղացիներն էին, որոնք իրենց միջոցներով կարող էին մշակել այն։ Հայաստանում վարձակալային հարաբերություններում իշխողը նատուրալ ձևն էր. դրամայինը շատ թույլ էր տարածված։ Դա ապրանքադրամական հարաբերությունների թույլ զարգացման արդյունք էր։ Վարձա-

26 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 1, գ. 26, թ. 2—6։

կալուվյունն ըստ էության ունևորների համար լրացուցիչ եկամտի աղբյուր էր, կուտակման միջոց, իսկ չքավորության համար՝ գոյության խղճուկ միջոց։

1925 թ. գյուղացիական տնտեսությունների 10% հետազոտման վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ գյուղացիների մի մասը քաշող ուժ և գործիքներ չունենալու պատճառով կա՛մ իր հողն էր վարձով մշակման տալիս ունևորներին, կա՛մ ինքն էր վարձում նրանց գործիքներն ու անասունները։ Վիճակագրության մեջ սովորաբար հաշվառման չեն ենթարկվել բանող անասունների վարձակալումը և այն չի կարդալորվել պետության կողմից։ Բայց որ այդպիսի հարաբերություններ եղել են, փաստ է, քանի որ քաշող ուժ չունեցող գյուղացիները բավականին շատ էին և հասկանալի է, առանց վարձակալության չէին կարող իրենց տնտեսությունները վարել։ Այստեղ շահագործումը քողարկվում էր «օգնության» վարագույրով, որն ավելի հեշտ էր անել քան այլ ձյուղերում։ Սակայն, եղած փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ կուլակային շահագործման հիմնական ձևերից մեկն էլ քաշող ուժի միջոցով շահ ստանալն էր։ Նույն 10%-ի վիճակագրության տվյալներով 1924/25 տնտեսական տարում տնտեսությունների միայն 37%-ն է իր հերկն ու վարը կատարել սեփական գործիքներով ու լծկաններով։ Հանրապետության տարբեր գավառներում այդ թիվը տատանվում է 18—52%-ի միջև։ Այսպես, Զանգեզուրում այն հասնում էր 52, Ղափանում՝ 88, Սիսիանում՝ 76, Լենինականում՝ 48, Դիլիջանում՝ 42, Դարալագյազում՝ 33, Էջմիածնում՝ 28, Նոր-Բայազետում՝ 24, Երևանում՝ 20 և Մեղրիում՝ 18%-ի[27]։ Ըստ նույն տվյալների, գյուղացիների 15%-ն այդ աշխատանքները կատարել է հարաբաշ եղանակով, որը բավականին տարածված էր Գորիսում՝ տնտեսությունների 58%-ը, Փաշալուսում՝ 42, Բասարգեչարում՝ 42, Ելենովկայում՝ 39%-ը և այլն[28]։ Այն քիչ էր տարածված Լենինականի, Դիլիջանի և Երևանի գավառներում։ Վերջապես, գյուղացիության 42%-ը վարն ու հերկը կատարում էր վարձու գործիքներով և քաշող ուժով։ Դա գերակշռող էր հատկապես դաշտային շրջաններում (Էջմիածնի գավառում հասնում էր տնտեսությունների 65, Երևանում՝ 56, Դիլիջանում՝ 26, Զանգեզուրում՝ 15%-ին և այլն)[29]։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ հանրապետության լեռնային շրջան-

---

27 «Խորհրդային Հայաստան», 25 փետրվարի, 1927։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում։

ներում վարձու աշխատանք էին կատարում հիմնականում տեղացիները, իսկ հարթավայրային շրջաններում՝ եկվորները (մեծ մասամբ լեռնային շրջաններից)։

Հայաստանում հողը վարձու տալու մի քանի ձևեր էին տարածված.

1) դրամով՝ երբ վարձողը հողատիրոջը որոշ դումար էր վճարում և հողը անօրինում, ինչպես կամենում էր։ Հողատերը չէր խառնվում նրա գործին՝ մինչև պայմանագրի ժամկետի լրանալը։

2) Բերքով՝ դրամի փոխարեն վարձողը մթերք է տալիս հողատիրոջը։ Մնացած պայմանները նույնն էին։

3) Խառը՝ վարձողը հողատիրոջը վճարում էր և՛ մթերքով, և՛ դրամով։

4) Աշխատանքի դիմաց՝ վարձողը որոշ աշխատանք էր կատարում հողատիրոջ համար և փոխարենը հողը վերցնում մշակելու։

5) Կիսովի՝ երբ հողատերն ու վարձողը հողը համատեղ մշակում և բերքը կիսում էին։ Սա բավականին բարդ ու խճճված ձևերով էր դրսևորվում։

Ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի թուլությունը չքավորությանը հարկադրում էր որոշակի հարաբերություններ մտնել կուլակային և ունևոր տարրերի հետ՝ իր հողաբաժինը մշակելու համար։

Նպատակադրվելով ուժերի վերախմբավորում կատարել հօգուտ սոցիալիզմի, կուսակցությունը մեծ տեղ էր հատկացնում գյուղատնտեսության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծման վրա։ «Մեքենան այն կարևոր գործոնն է,— նշել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. հուլիսյան պլենումը,— որը կարող է միավորել տնտեսությունները։ Առանց մեքենաների կոլեկտիվ տնտեսությունն անիմաստ է[30]»։ Սակայն մեքենաների քանակը նույնիսկ գյուղի սոցիալիստական վերակառուցման նախօրյակին դեռևս քիչ էր։ Թերևս դա էր պատճառներից մեկը, որ գյուղի սոցիալիստական վերակառուցումից հետո, սկզբնական շրջանում, նրա արդյունավետությունն այնքան էլ բարձր չէր։ Տրակտորների քանակը 1920-ական թվականներին փոխվել է հետևյալ կերպ[31]։

---

30 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 11, գ. 2, թ. 106։

31 Նույն տեղում, ց. 19, գ. 375, թ. 23։

1920 թ. —	8 տրակտոր	1925 թ. —	78 տրակտոր
1921 թ. —	16 »	1926 թ. —	158 »
1922 թ. —	16 »	1927 թ. —	186 »
1923 թ. —	50 »	1928 թ. —	184 »
1924 թ. —	50 »	1929 թ. —	187 »

Եթե նէպի սկզբնական շրջանում գյուղացիները միջոցներ չունեին մեքենաներ գնելու համար և հաճախ դրանք կուլակների ձեռքն էին ընկնում, ապա ժողովրդական տնտեսության վերականգնումից հետո վարկային ընկերությունները չէին հասցնում կատարել գյուղացիների պատվերները։ Այսպես, 1927/28 տնտեսական տարում գյուղացիները ներկայացրել էին 300 գութանի, 4 սերմացուիչ մեքենայի, 15 շարքացանի և գյուղատնտեսական այլ գործիքների պահանջներ։ Սակայն ստացվեց 188 գութան, 1 սերմացուիչ մեքենա, կամ պատվերները կատարվեցին 52%-ով[32]։ Դա բացասաբար էր անդրադառնում գյուղատնտեսական արտադրության բարձրացման, ինչպես նաև գյուղի սոցիալիստական վերակառուցման վրա։ Չնայած 1920-ական թվականներին ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման բնագավառում ձեռք բերված վիթխարի հաջողություններին, ապրանքային արտադրությունը գյուղատնտեսության վերելքին համապատասխան չէր աճում[33]։ Դա, ըստ երևույթին, պետք է բացատրել պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում գյուղում տեղի ունեցող նոր կարգի շերտավորմամբ, երբ չքավորության ու կուլակների կրճատման հետևանքով աստիճանաբար գյուղի հիմնական զեմքն է դառնում միջակ գյուղացիությունը։ Իսկ միջակ տնտեսությունների արտադրանքի ապրանքայնությունը միշտ էլ ավելի ցածր է քան կուլակային տնտեսություններինը։ Այստեղից էլ առաջ է գալիս գյուղատնտեսական արտադրության ապրանքային մասի նվազումը, որը բնավ չի նշանակում գյուղատնտեսական արտադրության մակարդակի իջեցում։ Ընդհակառակը, դա վկայում է, որ գյուղացիությունը բռնել է միջակացման ուղին, որը, վերջին հաշվով, նէպի պայմաններում նրա վերելքի ուղին էր հանդիսանում։

Հողազուրկ և սակավահող տնտեսությունների (մեծ մասամբ գաղթականների) վիճակը որոշ չափով բարելավելու նպատակով հաճախ նրանց կազմակերպված ձևով տեղափոխում էին այլ շրջաններ։ Գյուղա-

32 Նույն տեղում, ֆ. 1, ց. 12, գ. 153, թ. 18։

33 Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 43։

ցիության վերաբնակեցման քաղաքականությունը կարևոր միջոցառում էր գյուղատնտեսության արտադրողական ուժերը զարգացնելու գործում։ Դա խրախուսելու, ինչպես նաև տեղափոխվող տնտեսությունների համար տանելի պայմաններ ստեղծելու նպատակով 1923 թ. հոկտեմբերին ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահությունը հետևյալ որոշումն ընդունեց. «այն գյուղացիները, որոնք կտեղափոխվեն համաձայն հողժողկոմատի մշակած ծրագրի, մեկ շրջանից մյուսը՝ ազատել բոլոր տեսակի հարկերից և հասարակական պարտավորություններից երեք տարի ժամանակով, հաշվելով 1924 թվականից»[34]։ Այս արտոնությունները կարևոր նշանակություն ունեցան առանձին վայրերում խաթացող և կուլակության շահագործման առարկա հանդիսացող գյուղացիության ուժերն ավելի արդյունավետ օգտագործելու խնդրում։

Հայաստանում գյուղացիության վերաբնակեցումը հիմնականում երկու նպատակ էր հետապնդում. 1) գաղթականությանը հողով բավարարել, 2) որոշ չափով թեթևացնել սակավահող շրջանների գյուղացիության վիճակը։ Հետևաբար, մեր հանրապետությունում վերաբնակեցումը չէր կատարվում նոր, ազատ հողեր յուրացնելու համար, ինչպես այլուր։ Ելնելով հանրապետության այդ առանձնահատուկ պայմաններից, մշակվել էր վերաբնակեցման հնգամյա պլան, որի ծախսերը հիմնականում հոգում էր միութենական կառավարությունը։ Հանրապետությունում վերաբնակեցման աշխատանքները որոշակի ծավալվեցին 1925/26 թ. երբ ավարտվեց միջգյուղական հողաշինարարությունը և պարզվեց տարբեր շրջանների հողապահովվածության վիճակը, ինչպես նաև բնակչության մոտավոր խտությունը։ Սակայն, 1925—1927 թթ. վերաբնակեցումը անկազմակերպ էր տեղի ունենում և հիմնականում վերաբնակեցվում էին գաղթականները։ Առաջին հնգամյակի տարիներին նախատեսվում էր ոռոգման ցանցի ընդլայնմամբ ձեռք բերած նոր հողերի վրա տեղավորել 6800 ներգաղթողների 35000 հողազուրկ գաղթականների և 15100 սակավահող գյուղացիների։ Ոռոգման միջոցով նոր հողեր ձեռք բերելուց բացի, հատուկ ուշադրություն էր դարձվում հողազուրկների մի մասին հողաշինարարության շնորհիվ լեռնային շրջանների նոր հողերում տեղավորելու վրա, որտեղ մեծ մասամբ արտելներ և կոմունաներ էին կազմակերպվում։

Ժողովրդական տնտեսության վերականգնումից հետո նոր խնդիրներ էին դրվում գյուղատնտեսության աշխատողների առջև։ Դա բխում

---

34 ՀՍՍՀ ՀՀՍՇ, ՊԿՄ., ֆ. 128, ց. 1, գ. 18, թ. 104։

էր այդ ճյուղի ինտենսիվ զարգացման և սոցիալիստական վերակառուցման շահերից։ 1926 թ. մարտին հրավիրված Հայաստանի գյուղի աշխատողների երկրորդ համագումարը, որտեղ զեկուցումով հանդես եկան Ս. Համբարձումյանը, Ա. Երզնկյանը և ուրիշներ, պահանջեց գիտական, բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել հանրապետության գյուղատնտեսությունը, տալ նրա զարգացման հեռանկարները և կատարել գիտական շրջանացում[35]։ Համագումարից հետո այդ նպատակի համար ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ (պրոֆ. Չելինցևի, Դիսկունի, Զախարովի գլխավորությամբ), որոնք հսկայական աշխատանք կատարեցին հանրապետության գյուղատնտեսական տարբեր գոտիներն ուսումնասիրելու գործում և միջոցառումներ մշակեցին գյուղատնտեսության հետագա զարգացման, ինչպես նաև սոցիալիստական վերակառուցման համար։ Նրա սկզբնական շրջանում հիմնական ուշադրությունը բևեռված էր հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների մշակման վրա, ապա վերականգնման շրջանից սկսած առաջին պլան մղվեցին տեխնիկական կուլտուրաների (հատկապես բամբակի) մշակությունը։ Դա ուներ մի քանի նշանակություն, և պետությունը բոլոր միջոցներով շահագրգռում էր նրա մշակումը։ 1926/27 տնտեսական տարում 11,15 հազարի փոխարեն 1927/28 տնտեսական տարում այն հասավ 13,262 հազար հեկտարի, գերազանցելով նախատեսված պլանները[36]։

Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման և ընդհանրապես նրա վերելքի գործում կարևոր նշանակություն ունեցավ Համկ(բ)Կ XV համագումարը, որը հենվելով մեր երկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան պլանից, նպատակահարմար գտավ գյուղացիական մանր, փոշիացած տնտեսությունները նորագույն տեխնիկայի բազայի վրա աստիճանաբար միավորել, ստեղծել խոշոր տնտեսություններ և նախապատրաստվել ամբողջ ճակատով կուլակության դեմ հարձակման անցնելու համար։

Համագումարի որոշումներն ուղենիշ հանդիսացան Հայաստանի կուսակցական կազմակերպությունների համար։ Նրանց կենսագործման շնորհիվ հայկական գյուղում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերի վերլուծությանն էր նվիրված ՀԿ(բ)Կ VI համագումարում (1929) Ա. Խանջյանի զեկուցումը՝ «Գյուղում տարվող աշխատանքների մասին», որտեղ փաստորեն ամփոփվում էր 1920-ական թվականներին

35 Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 16, գ. 217։

36 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1929, էջ 74։

կատարված ամբողջ աշխատանքը։ Համագումարում ցույց տրվեց, որ գյուղատնտեսությունն իր հիմնական ցուցանիշներով հասել է նախապատերազմյան մակարդակին և լիովին ավարտելով վերականգնումը՝ թևակոխել է սոցիալիստական վերակառուցման շրջանը։ Գյուղում բնակվում էր Հանրապետության բնակչության 81%-ը, որն արտադրում էր ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի 70%-ը։ Հասկանալի է, որ Հանրապետությունում գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակի մեխանիկական վերականգնում տեղի չէր ունեցել, այլ ըստ էության, այն միաժամանակ սոցիալիստական վերակառուցման էր ենթարկվում։ Համագումարում նշվեց, որ գյուղատնտեսության վերականգնման պրոցեսում տեղի են ունեցել «...որակական փոփոխություններ, որոնք զգալի կերպով փոխում են մեր գյուղի և գյուղատնտեսության ընդհանուր տեսքը, փոփոխություններ, որոնք ունեն հսկայական նշանակություն և ամրացնում են կառուցվող սոցիալիզմի դիրքերը գյուղում»[37]։ Այդ ժամանակաշրջանում բարձրացել էր գյուղատնտեսական արտադրության ապրանքայնությունը։ Ճիշտ է, այն միայն մոտավորապես էր նախապատերազմյան մակարդակին հասել, սակայն նրանում նոր երևույթներ էին ի հայտ եկել։ Նախապատերազմյան շրջանում ապրանքային արտադրությունը կենտրոնացած էր ունևոր և կուլակային տնտեսությունների ձեռքում, որոնք դաժան շահագործման էին ենթարկում գյուղացիության հիմնական մասսային։ Այժմ, ընդհակառակը, ապրանքային արտադրանքը տալիս էր գյուղի հիմնական զանգվածը հանդիսացող միջակ գյուղացիությունը, որը, սակայն, ընդհանրապես դեմ չլինելով կոոպերացիային, դեռևս վերջնականապես չէր կողմնորոշվել դեպի կոլտնտեսությունները[38]։ Ուստի ՀԿ(բ)Կ VI համագումարը որոշեց պայքարել գյուղացիությանը հանրային տնտեսությունների շուրջը համախմբելու համար և անցնել համատարած կոլեկտիվացման[39]։

Այսպիսով, նոր տնտեսական քաղաքականության կենսագործման շնորհիվ սեղմ ժամկետում գրեթե լիովին վերականգնվեց Հանրապետության գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը, կարգավորվեցին հայկական գյուղում գոյություն ունեցող հողային բարդ և խճճված հարաբերությունները։ Վերականգնման հետ մեկտեղ, փաստորեն տեղի էր ունենում գյուղի սոցիալիստական վերակառուցումը և սո-

37 Ա. Խանջյան, Դեպի գյուղի սոցիալիստական վերակառուցումը, Երևան, 1929, էջ 7։
38 Նույն տեղում, էջ 22։
39 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 13, գ. 4, թ. 328։

վետական պետության ակտիվ միջամտությամբ նոր հունի մեջ էր դրվում նրա սոցիալ-տնտեսական զարգացումը։ Կուսակցության ագրարային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ 1920-ական թվականների վերջերին անհրաժեշտ նախադրյալներ ստեղծվեցին համատարած կոլեկտիվացման բազայի վրա վերջին շահագործող դասակարգի՝ կուլակության, վերացման և մեր երկրում սոցիալիստական հասարակարգի հիմքերի կառուցման համար։

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Սովետական Հայաստանը ծանր ժառանգություն ստացավ հատկապես արդյունաբերության բնագավառում։

Տնտեսության քայքայման և ավերածության ավելի ծանր վիճակ հնարավոր չէր պատկերացնել։ Մանավանդ, որ ցարիզմի գաղութային քաղաքականության հետևանքով մեզ մոտ արդյունաբերությունը շատ թույլ էր զարգացած։ Ավելին, Հայաստանի արդյունաբերությունը (չհաշված պղնձարդյունաբերությունը) հիմնականում կապված էր տեղական, դյուղատնտեսական հումքի մշակման հետ (գինու-կոնյակի, կաշեգործական և այլն), որի քայքայումն իր հերթին բավականին ծանր անդրադարձավ արդյունաբերական ձեռնարկությունների վրա (դրանց մեծ մասի գործունեությունը հումք չլինելու պատճառով դադարեց)։ Ըստ երևույթին պատճառներից մեկն էլ դա էր, որ նէպի կենսագործմամբ հատուկ ուշադրություն էր դարձվում դյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման վրա, որպեսզի այն հիմք ծառայի արդյունաբերության զարգացման համար։ Սա մեր հանրապետության տնտեսական զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկն էր։ Փաստորեն նէպի կենսագործմամբ գյուղատնտեսության վերականգնումը ոչ միայն միջոցներ կուտակելու հնարավորություն էր տալիս, այլև արտադրական հիմք էր ծառայում արդյունաբերության զարգացման համար։ Դրանով պետք է բացատրել գյուղատնտեսության որոշ ճյուղերի վերելքով (բամբակագործության, այգեգործության, անասնապահության և այլն) պետության արտակարգ շահագրգռվածությունը և այդ նպատակով կատարվող հատկացումների անընդհատ ավելացումը։

Վ. Ի. Լենինի այն հանճարեղ դուգումը, որ «...սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր, մեքենայական արդյունաբերու-

թյանը»[40] *վերաբերում է ոչ թե ազգային կամ տնտեսական ամեն մի գոտու առանձին վերցրած, այլ ամբողջ երկրին, ՍՍՀՄ-ի մասշտաբով սոցիալիզմի նյութական բազա ստեղծելուն։ Այդ առիթով բավականին պատկերավոր է արտահայտվել Ս. Օրջոնիկիձեն. «...երբ այնտեղ (կենտրոնական գոտում—Գ. Գ.) առաջընթաց է կատարվում... տնտեսական տեսակետից, ապա մենք այստեղ զգում ենք, որ մեր երակների մեջ նոր, թարմ արյուն է լցվում»*[41]։ *Վերջին հաշվով մեր երկրում սոցիալիստական հասարակարգը կառուցվում էր ոչ թե առանձին գոտիներով ու շրջաններով կամ առանձին հանրապետություններով, այլ ամբողջ Միության մասշտաբով, որի նյութական հիմքը նույնպես ստեղծվում էր Միության մասշտաբով և ամեն մի հանրապետություն իր արդյունաբերական զարգացմամբ մասնակցում ու նպաստում էր այդ բազայի ստեղծմանը։ Իսկ դա անպայման ենթադրում էր ամեն մի հանրապետության տնտեսական զարգացման հնարավորություններն ու առանձնահատկությունները ճիշտ հաշվի առնելու անհրաժեշտություն։ Վճռականապես դեմ լինելով սոցիալիզմի կառուցման կենտրոնական շրջանների փորձը մեխանիկորեն ծայրամասերը տեղափոխելուն, Վ. Ի. Լենինը նշել է, «...թե՛ տեղական տարբերությունները, թե՛ տնտեսական կացութաձևի առանձնահատկությունները, թե՛ կենցաղային ձևերը, թե՛ բնակչության պատրաստականության աստիճանը, թե՛ այս կամ այն պլանն իրականացնելու փորձերը՝ այս բոլորը պետք է արտացոլվի սոցիալիզմի ուղու առանձնահատկության մեջ»*[42]։

Սովետական Հայաստանի ինդուստրացման հիմնական, կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր (որն իր կնիքն էր դնում արդյունաբերության առաջընթացի վրա), որ լինելով գերազանցապես գյուղատնտեսական երկիր, նրա արդյունաբերությունը չնչին տեսակարար կշիռ ուներ, և հաճախ չէր կարող բավարար ծառայել նրա զարգացման համար։ Այդ իսկ պատճառով սովետական հանրապետությունների եղբայրական օգնությունը (ֆինանսական և նյութական), որը բխում էր լենինյան ազգային քաղաքականությունից, մեր հանրապետության տնտեսական և սոցիալիստական զարգացման անհրաժեշտ պայմաններից մեկն էր։

Ավերված ու քայքայված հնի վերականգնման ու վերակառուցման հետ մեկտեղ շատ մեծ նշանակություն էր ձեռք բերում նորի կառուցու-

40 Վ. Ի. Լենին, *երկեր*, հ. 21, էջ 591։

41 Գ. Կ. Օրջոնիկիձե, *Ընտիր հոդվածներ և ճառեր*, Երևան, 1950, էջ 154։

42 Վ. Ի. Լենին, *երկեր*, հ. 29, էջ 181։

մը, որի կարիքն ավելի շատ էր զգացվում։ Այդ էր հիմնական պատճառը, որ 1920-ական թվականներին արդյունաբերական նոր ձեռնարկությունների շինարարությունը Հայաստանում (և ազգային մյուս ծայրամասերում) ավելի բարձր տեմպեր ուներ, քան կենտրոնական գոտում։ Դա լենինյան ազգային քաղաքականության կոնկրետ արտահայտությունն էր։

Նէպի առաջին տարիներին գյուղատնտեսության վրա հատուկ ուշադրություն դարձնելը բնավ չէր նշանակում, թե կուսակցությունը հետին պլան էր մղել երկրի ինդուստրացման հարցերը։ Ելնելով նէպի սկզբունքներից, 1922 թ. ՀՍՍՀ ժողտնտխորհը արդյունաբերության միասեռ և երկար լրացնող ձեռնարկությունները միավորեց տրեստների և սինդիկատների մեջ։ Ազգայնացված մանր ձեռնարկությունների մի ղգալի մասը վերադարձվեց տերերին, իսկ անշահավետները՝ փակվեցին։ Սակայն, հիմնականում միջոցների (ֆինանսական և նյութական) պակասության պատճառով, մինչև վերականգնման շրջանի ավարտը հանրապետության արդյունաբերությունը որոշակի, էական տեղաշարժեր չապրեց։ Հետագայում արդյունաբերական հումք արտադրող գյուղատնտեսական ճյուղերի (բամբակագործություն, այգեգործություն, անասնապահություն և այլն) վերականգնման և դրամական ռեֆորմի շնորհիվ հանրապետության ֆինանսական վիճակի կայունացումն ու բարելավումը, կազմակերպչական աշխատանքների փորձը և այլն, հնարավորություն տվեցին որպեսզի սկսած 1924/1925 տնտեսական տարվանից որոշակի աշխատանքներ ծավալվեն արդյունաբերության զարգացման համար։

Նէպի առաջին փուլում հանրապետության արդյունաբերական զարգացման ծրագրում մեծ տեղ էր հատկացվում պղնձարդյունաբերության վերականգնմանը, որը սերտորեն կապված էր Միության ժողովրդական տնտեսության վերականգնման հետ, առանց որի հնարավոր չէր անհրաժեշտ միջոցներ հատկացնել և սարքավորումներ ներմուծել։ Այսպես, Ալավերդու պղնձարդյունաբերության վերականգնման համար առաջին խոշոր հատկացումը (մեկ միլիոն ռուբլուց ավելի) կատարվեց 1924/25 տնտեսական տարում։ 1924 թ. սկսվեցին նաև Զանգեզուրի պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները՝ լայն հետախուզական աշխատանքներ ծավալելով։ Միժամանակ սկսեցին վերականգնվել «Կոնդուրովյան» և Միրախորի էլեկտրակայանները, որոնք էժան էներգիա պիտի մատակարարեին շրջանին։ 1925 թ. սկսած, հետախուզական աշխատանքներ ծավալվեցին նաև Քաջարանի հանքավայրերում։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության վերականգնման տարինե-րին առաջին քայլերն էին արվում պղնձարդյունաբերության վերա-կանգնման ուղղությամբ։ Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերու-թյան վերականգնման համար խոշոր միջոցներ բաց թողնվեցին հատ-կապես 1920-ական թվականների վերջերին։ 1925/26 և 1927/28 տնտե-սական տարիներին այդ նպատակով ծախսվեց 5,2 միլիոն ռուբլի[43]։ Դա հնարավորություն տվեց լայն հետախուզական աշխատանքներ ծավալե-լու, ինչպես նաև պղնձարդյունաբերության արտադրանքն ավելացնելու և նախապատերազմյան մակարդակը վերազանցելու։

Իր տնտեսական նշանակությամբ հանրապետության արդյունաբե-րության մյուս կարևոր ճյուղը՝ գինու-կոնյակի արտադրությունն էր։ Այն սերտորեն կապված էր այգեգործության հետ, որի վերականգնումը նրա զարգացման հիմքն էր հանդիսանում։ Հայաստանի Հեղկոմը առաջին իսկ օրերին հատուկ դեկրետներով այնպիսի պայմաններ ստեղծեց, որ-պեսզի այգեգործությունը փրկվի հետագա քայքայումից։ Գյուղացիների շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով նրանց ձեռնտու պայ-մաններով երկարաձև վարկ բաց թողնվեց այգեգործության զարգաց-ման համար։ Դրան զուգահեռ նպաստեցին նաև հումքի գնման բավա-կանին բարձր գները, որոնք նախապատերազմյան գներից երբեք ցածր չեն եղել[44]։

Տակավին 1921 թ. օգոստոսին Հայաստանի Հեղկոմն ազգայնացրեց Սարաջևի, Աֆրիկյանի և Սողոմոնյանի գինու-կոնյակի արտադրության խոշոր գործարանները Երևանում, «Նա վերե» և «Արաքս» գործարանները Ղամարլուում. (Շուստովի գործարանը պետականացվել էր դաշնակցա-կանների տիրապետության ժամանակ)։ Այդ գործարանները 1923 թ. ապ-րիլի 1-ին միավորվեցին «Արարատ» տրեստի մեջ, որի արագ վերականգ-նումը պայմանավորված էր մի կողմից հումքի ավելացմամբ և արտադրա-կան բազայի ամրապնդմամբ, իսկ մյուս կողմից՝ առևտրի ծավալման և առաջին հերթին ռուսական շուկա դուրս գալու հնարավորությամբ, որտեղ իրացվում էր արտադրանքի շուրջ 80%-ը։ Ինչպես հայտնի է, մինչև 1922 թ. արգելված էր խմիչքների վաճառքը և այն հիմնականում բաշխվում էր։ Նեպի կենսագործմամբ, աստիճանաբար արմատավոր-վող ապրանքադրամական հարաբերություններն ընդգրկեցին նաև գի-

43 «ՀԽՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1929, էջ 37։

44 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 5 տարում», էջ 143։

նու-կոնյակի արտադրությունը, որը մեծ չափով նպաստեց «Արարատ» տրեստի արտադրական վերելքին։ Այն հիմնականում սկսեց արտադրանք թողարկել արտաքին շուկայի համար։ Իրար հետևից նրա բաժանմունքները բացվեցին Մոսկվայում (1922), Լենինգրադում (1923), Դոնի Ռոստովում (1924) և այլուր։ Արտադրական վերելքը, բնականաբար, հանգեցրեց բանվորության ավելացմանը. եթե 1923 թ. հոկտեմբերին ամբողջ տրեստում աշխատում էին 45 բանվոր և 16 ծառայող (61 մարդ), ապա 1924 թ. հոկտեմբերին՝ 97 բանվոր և 29 ծառայող (126 մարդ), իսկ 1925 թ. հոկտեմբերին՝ 142 բանվոր և 46 ծառայող (188 մարդ)[45]։

Այգեգործության հետագա վերելքի շնորհիվ տարեցտարի դինու-կոնյակի արտադրությունն աճեց և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նախօրյակին այն բավականին ծանրակշիռ տեղ էր գրավում Հանրապետության արդյունաբերության մեջ։

Արդյունաբերության մյուս ճյուղը, որը վերականգնման շրջանում կարևոր դեր էր խաղում՝ կաշեգործությունն էր։ Նախասովետական Հայաստանում կաշվի արդյունաբերությունը հիմնականում կիսատնտայնագործական բնույթ էր կրում։ Կաշի վերամշակող ձեռնարկությունները շուտով միավորվեցին և հիմնադրվեց կոշիկի ու ձիասարքերի գործարանը, որտեղ աշխատում էին 131 բանվորներ։

Ժողովրդական տնտեսության վերականգնման հետ մեկտեղ, մի կողմից կաշվի հումքի ավելացման, մյուս կողմից գործարանների վերանորոգման ու ընդլայնման շնորհիվ արդեն 1924/25 տնտեսական տարվանից կաշեգործությունը դարձավ շահութաբեր և սկսեց վերելք ապրել։ 1926 թ. այն հասավ նախապատերազմյան մակարդակին, տարեկան վաճառքի գումարը հասցնելով 691 հազարի[46]։ 1925/26 տնտեսական տարում այդ գործարաններն ընդլայնվեցին, նորանոր արտադրամասեր բացվեցին և նոր սարքավորումների տեղադրումով զգալիորեն մեքենայացվեց կաշվի մշակումը[47]։ Դա հնարավորություն տվեց զգալիորեն ընդլայնելու կաշվի արտադրությունը։ Այդ մասին է վկայում հետևյալ աղյուսակը[48].

---

45 Նույն տեղում, էջ 144։

46 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 115, ց. 1, գ. 752, թ. 61։

47 Մանրամասն տե՛ս Կ. Կոզմոյան, Երևանի Ստ. Շահումյանի անվան կաշվի գործարանի 75 տարին, Երևան, 1969։

48 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 115, ց. 1, գ. 752, թ. 61—62։

	1923/24	1924/25	1925/26	1926/27
Մշակվող կաշիներ բոլոր տեսակի (հատ)	58,150	96,700	115,500	146,800
Վաճառքի գումարը (հազար ռ.)	332,6	542,5	891,0	1023,3

Կաշեգործությունը նոր վերելք ապրեց հետագա տարիներին, որը պայմանավորված էր մի կողմից անասնապահության չտեսնված վերելքով, իսկ մյուս կողմից՝ աշխատավորության նյութական բարեկեցության աճով։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո հատուկ ուշադրություն դարձվեց կիսավեր էլեկտրակայանների վերականգնման վրա։ 1922 թ. ՀՍՍՀ ժողտնտխորհին առընթեր կազմվեց էլեկտրական բաժին, որն առաջին հերթին ձեռնամուխ եղավ էլեկտրակայանների վերականգնման ու շահագործման աշխատանքներին։ ՀՍՍՀ պետպլանը հատուկ ուսումնասիրություններ կատարեց Հանրապետության հիդրոէներգետիկ ռեսուրսները ճշտելու համար։ Կազմվեց Հանրապետությունում էլեկտրաշինարարության պլան, որով նախատեսվում էր մի քանի նոր էլեկտրակայանների շինարարություն։ Ըստ պլանի 1923 թ. պետք է կառուցվեր 9 էլեկտրակայան, իսկ 1927 թ.՝ 23[49]։ Միայն 1923—1927 թթ. էլեկտրակայանների շինարարության վրա ծախսվեց ավելի քան 5,6 միլիոն ռուբլի։ 1920-ական թվականներին Հանրապետությունում կառուցվեցին Երևանի, Լենինականի, Ղարաքիլիսայի, Նոր-Բայազետի, Իջևանի, Ստեփանավանի և այլ հիդրոէլեկտրակայաններ, սկսվեց Զորագեղի շինարարությունը, վերաստեղծվեցին հները և այդ բոլորը հիմք ծառայեց արդյունաբերության զարգացման և աշխատավորության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման համար։

Հանրապետությունում բուռն զարգացում ապրեց նաև պոլիգրաֆ արդյունաբերությունը։ Այդ գործում կարևոր նշանակություն ունեցան 1924—1925 թթ. Մոսկվայից ստացված տպագրական և լինոտիպ մեքենաները։ 1924/25 տնտեսական տարում պոլիգրաֆ արեստի մեջ մտնում էին 8 արտադրական ձեռնարկություններ։ Ելնելով ժողովրդական տնտեսության զարգացման պահանջներից, տարեցտարի վերակառուցվում և ընդլայնվում էին եղած տպարանները (կառուցվեցին նորերը նաև Ղարաքիլիսայում (Կիրովական) և Լենինականում), ավելացվում էին սար-

[49] «Экономический вестник Армении», 1928, № 8—10, стр. 49—50.

քավորումներն ու դազգահները: Պոլիգրաֆ արդյունաբերությունը մեծ դեր խաղաց հատկապես նեպի պայմաններում անընդհատ սրվող գաղափարական պայքարում պրոլետարական գաղափարախոսության հաղթանակի և աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացման գործում:

Հայաստանի մեքենաշինական արդյունաբերության առաջին ձեռնարկությունը Տեր-Ավետիքովի փոքրիկ արհեստանոցն էր, որը կազմակերպվել էր 1891 թ.: Սովետական կարգեր հաստատվելու ժամանակ այն դադարել էր գործելուց: Գործարանի վերանորոգման աշխատանքներն սկսվեցին 1922/23 տնտեսական տարվանից, սակայն մեծ թափ ստացան 1924 թ., երբ Լենինգրադից նվեր ստացվեց 32 մետաղահատ հաստոց: Ամբիճանաբար ընդլայնելով արտադրությունը, բացվեցին նոր ցեխեր, ավելացավ բանվորների թիվը: 1926 թ. սկսած գործարանն արդեն պատվերներ էր ընդունում տարբեր տրեստներից ու արտադրական մի ավորումներից՝ նրանց համար անհրաժեշտ գործիքներ ու սարքավորումներ արտադրելու համար: Հատկապես մեծ աշխատանքներ էին կատարվում գյուղատնտեսական գործիքների պատրաստման ու վերանորոգման ասպարեզում: Բացի այդ, Լենինականում գործում էր կիսատնայնագործական տիպի մեխանիկական-չուգունաձուլական գործարանը, որը վերականգնվել էր 1923 թ.: Հանրապետությունում գործում էին նաև մետաղամշակման արհեստանոցներ և գյուղական դարբնոցներ, որոնք հիմնականում գյուղատնտեսական գործիքներ էին պատրաստում:

Նեպի կենսագործմամբ որոշակի աշխուժություն ապրեց նաև փայտամշակման արդյունաբերությունը, որն արտադրում էր ինչպես տեղական կարիքների բավարարման, այնպես էլ՝ առևտրի համար: Հանրապետության գյուղատնտեսության վերականգնման շնորհիվ ռեալ հիմքեր ստեղծվեցին բամբակագործության զարգացման համար (գործվածքային, կարի արդյունաբերության, բամբակազտիչ գործարաններ, Լենինականի տեքստիլ ֆաբրիկա և այլն): Զգալի չափով զարգացան նաև բրդագործությունն ու մետաքսագործությունը:

Այսպիսով, ժողովրդական տնտեսության վերականգնման ծանր և դժվարին տարիներին Սովետական Հայաստանում խոշոր աշխատանքներ ծավալվեցին արդյունաբերության վերականգնման ուղղությամբ: Սակայն վերականգնվում էր ոչ թե նախկին, հետամնաց ծայրամասի արդյունաբերությունը, այլ հենի բազայի վրա փաստորեն կառուցվում էին ացիալիստական նոր արդյունաբերության հիմքերը: Անհրաժեշտ է նշել, որ ճիշտ չէ պատմատնտեսագիտական գրականության մեջ ամրա-

պնդված այն տեսակետը, որ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին վերականգնվել է նաև հանրապետության արդյունաբերությունը։ Ընդհանրապես նման հարցադրումը ճիշտ չէ։ Նախասովետական Հայաստանում եղած կիսատնայնագործական արհեստանոցները, որոնք զուրկ էին տարրական հարմարություններից (շինքեր, հաստոցներ, գործիքներ և այլն), որոշակի դեր չէին խաղում հանրապետության տնտեսական կյանքում։ Հիմնականը գինու-կոնյակի արտադրությունն էր և պղնձարդյունաբերությունը, որոնց վերականգնման աշխատանքները բավականին ուշ սկսվեցին։ Այնպես որ, Հայաստանում ոչ թե արդյունաբերության վերականգնման խնդիրն էր հիմնականը, այլ նորի կառուցման խնդիրը, որը փաստորեն լուծվեց նախապատերազմյան հնգամյակների տարիներին։ Դա նշանի կենսագործման կարևոր առանձնահատկությունն էր մեր հանրապետությունում։ Անշուշտ վերը շարադրածից չպետք է եզրակացնել, թե ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին քիչ բան է արվել Հայաստանում արդյունաբերության զարգացման և եղածի վերականգնման ուղղությամբ։

Սոցիալիստական տնտեսավարության ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ արդյունաբերությունն անընդհատ մոտեցվում էր հումքի բազային, որով միաժամանակ հնարավորություն էր ըստեղծվում վերացնելու ցարիզմի քաղաքականության հետքերը։ Դրա լավագույն ապացույցն էին Հայաստանի արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումները։ Վերականգնման շրջանը, փաստորեն, Հայաստանի արդյունաբերության զարգացման նախապատրաստական շրջան կարելի է համարել, երբ ժողովրդական տնտեսության և հատկապես գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած նվաճումները ռեալ հիմքեր ստեղծեցին արդյունաբերության զարգացման համար։ 1925 թ. հետո մեր հանրապետությունում արդյունաբերությունն սկսեց անշեղ վերելք ապրել, ի հայտ բերվեցին հումքի նորանոր աղբյուրներ, որոնց բազայի վրա ձևավորվեցին արդյունաբերական նորանոր ճյուղեր։ Այդ շրջանում վերականգնվեց ու հիմնովին վերակառուցվեց Ալավերդու և Զանգեզուրի պղնձարդյունաբերությունը, ստեղծվեց էլեկտրաարդյունաբերություն, մեքենայական, մանածագործական, շինաքարերի արտադրություն, քիմիական արդյունաբերություն և այլն։ Քիմիական արդյունաբերության զարգացման համար օբյեկտիվ նախադրյալներ ստեղծվեցին ավելի ուշ՝ 1930-ական թվականներին։ Այն հիմնականում կենտրոնացվեց Երևան, Կիրովական, Ալավերդի քաղաքներում։

Արդյունաբերության արմատավորումն ու զարգացումը մեր հանրապետության համար ուներ նաև սոցիալական կարևոր նշանակություն։

Սոցիալիստական արդյունաբերության զարգացման շնորհիվ անընդհատ աճում էր քաղաքային բնակչությունը, փոխվում էր նրա սոցիալական կառուցվածքը։ Եթե նախահեղափոխական Հայաստանի քաղաքային բնակչության մեծ մասը, ինչպես տեսանք, բուրժուազիան էր, կալվածատերերը, կուլակները, առևտրականներն ու մանր արհեստավորները և շինին տոկոս էին կազմում բանվորներն ու ծառայողները, ապա ինդուստրացման շնորհիվ քաղաքներում արագ տեմպերով աճեց բանվոր դասակարգը, ավելացան ծառայողները։ Կալվածատերերն ու խոշոր բուրժուազիան վերացվեցին, իսկ արհեստավորների ճնշող մասը կոոպերացվեց։ Այս սոցիալական տեղաշարժերը վճռական դեր խաղացին քաղաքի և գյուղի փոխհարաբերությունների, նրանց արտադրական մերձեցման խնդրում։ Սոցիալիստական արդյունաբերության զարգացման տնտեսական ու քաղաքական արդյունավետությունը և նրա սոցիալական նպատակասլացությունը հաշվի առնելով, սովետական պետությունը տարեցտարի ավելացնում էր դրա համար կատարվող հատկացումները։ Եթե 1925/26 տնտեսական տարում հանրապետության արդյունաբերական շինարարության վրա ծախսվել է 2498 հազար ռուբլի, ապա 1926/27 տնտեսական տարում՝ 7400 հազար, իսկ 1927/28 տնտեսական տարում՝ 9416 հազար։ Դրա հիմնական մասը հատկացվում է էլեկտրակայանների կառուցման, տեքստիլ, քիմիական և լեռնային արդյունաբերության զարգացման համար[50]։

Կյանքը լիովին հաստատեց դեռևս նէպի առաջին տարիներին Վ. Ի. Լենինի կողմից արված այն դիտողության ճշմարտությունը, որ գյուղատնտեսության վերականգնումից հետո վիթխարի քայլերով կառաջադիմեն ամբողջ ժողովրդական տնտեսությունը և նրա զարգացման հիմք հանդիսացող սոցիալիստական արդյունաբերությունը[51]։ Արդեն ժողովրդական տնտեսության վերականգնումից հետո մի կողմից միջոցների ավելացումը, մյուս կողմից՝ ղեկավարման ու տնտեսվարման բնագավառում ձեռք բերած փորձը, հնարավորություն տվեցին նոր թափով զարգացնելու արդյունաբերությունը, որի շնորհիվ տարեցտարի ավե-

---

50 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1929, էջ 42։

51 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 32, էջ 440։

լացավ նրա տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ։ Այսպես, 1925/26 տնտեսական տարում այն կազմել է 22,8%, 1926/27 տնտեսական տարում՝ 24,1/%, իսկ 1927/28 տնտեսական տարում՝ 28,1%[52]։ Սա դեռևս շատ բարձր տեսակարար կշիռ չէ, բայց բազմաթիվ արդյունաբերական նոր ճյուղերի ձևավորումն ու զարգացումն ավելի բարձր տեմպ էր խոստանում հետագայում։ Արդյունաբերության զարգացմանը համապատասխան ավելանում էր նաև բանվորների քանակը, բարձրանում մասնագիտական պատրաստվածությունը։ Եթե 1925 թ. ապրիլին ժողտնտխորհի ձեռնարկություններում 1475 բանվոր կար և 184 ծառայող, ապա 1927 թ. հունիսին այն հասավ համապատասխանաբար 4134-ի և 401-ի[53]։

Այսպիսով, մեր հանրապետության ինդուստրացման կարևոր առանձնահատկությունն այն էր, որ հիմնական ծանրությունը դրվում էր նորի կառուցման վրա, որն իր հետ բերում էր գիտական և տեխնիկական ավելի բարձր մակարդակ և նորանոր պահանջներ ներկայացնում ժողովրդական տնտեսության զարգացմանը։ Դա միաժամանակ նպաստեց այն բանին, որ 1920-ական թվականներին արդյունաբերության բնագավառում մասնավոր սեկտորը հիմնականում արտամղվեց և իր հատատուն տիրապետությունը հաստատեց սոցիալիստականը։ Խոշոր արդյունաբերության ոլորտում մասնավոր կապիտալը 1928 թ. կազմում էր միայն մեկ տոկոս[54]։ Հասկանալի է, որ բացառվում էր նրա մասնակցությունը սոցիալիստական խոշոր ձեռնարկությունների շինարարությանը, որը հիմնական տիրապետողն էր այդ շրջանում։ 1920-ական թվականներին հանրապետության ցենզային արդյունաբերությունը հետևյալ պատկերն ուներ[55]։

Տնտեսական տարի	Ձեռնարկությունների թիվը	Բանվորների թիվը
1921—22	4	241
1922—23	4	243
1923—24	4	325
1924—25	5	468
1925—26	6	540
1926—27	8	748
1927—28	10	2302
1928—29	13	3174

52 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1929, էջ 49։
53 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1927, էջ 18։
54 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1929, էջ 64։
55 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1931, էջ 9, 20։

Սոցիալիստական արդյունաբերության համակողմանի զարգացման և հատկապես ազգային ծայրամասերում այն կազմակերպելու և հիմնավորելու խնդրում վճռական նշանակություն ունեցան հնգամյա պլանները, որոնց մշակման ժամանակ հանգամանորեն հաշվի էր առնվում արդյունաբերության ավելի արագ տեմպերով զարգացման անհրաժեշտությունը։

Ինչպես տեսնում ենք, նէպի հետևողական կենսագործմամբ ժողովրդական տնտեսության վերականգնման և հաջորդ տարիներին զգալի տեղաշարժեր եղան հանրապետության տնտեսության մեջ։ Գյուղատնտեսության վերականգնմանն ու զարգացմանը զուգընթաց զգալիորեն ամրապնդվեց սոցիալիստական արդյունաբերությունը։ Եթե սկզբնական շրջանում արդյունաբերության թույլ զարգացման պատճառով ժողովրդական տնտեսության մեջ բավականին ծանր էր սոցիալիստական սեկտորի վիճակը և ցածր բանվոր դասակարգի տեսակարար կշիռը, որի պատճառով բավականին ակտիվ էր գործում մանրբուրժուական անարխիան, ապա 1920-ական թվականների վերջերին արագ տեմպերով աճող սոցիալիստական արդյունաբերությունը փոխեց ուժերի հարաբերակցությունը՝ հօգուտ սոցիալիզմի։ Այդ շրջանում խիստ կերպով մեծացավ արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումների ծավալը, ավելացավ բանվոր-ծառայողների թիվը, բարելավվեցին նրանց կուլտուրա-կենցաղային պայմանները։ Փաստորեն սոցիալիստական ինդուստրացման հաջող կենսագործումն ընդլայնեց պրոլետարիատի դիկտատուրայի սոցիալական բազան՝ արդյունաբերական զարգացման հետ մեկտեղ նպաստելով բանվոր դասակարգի անընդհատ ավելացմանը, որով բարձրանում էր նրա տեսակարար կշիռը երկրի հասարակական կյանքում։ Ուստի հանրապետության պետպլանը նախատեսում էր 1923—1930 թթ. բանվորների թիվը ավելացնել 14 անգամ։ Դա նէպի ամենակարևոր արդյունքն էր, որը միաժամանակ բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման հիմքն էր հանդիսանում։

* * *

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի սոցիալական կարևոր պրոբլեմներից մեկը գործազրկության վերացումն է, որի ուղղությամբ ՍՄԿԿ պատմական փորձը վիթխարի նշանակություն ունի։ Դեռևս հեղափոխության առաջին տարիներին, երբ երկրում զգալի թիվ էին կազմում գործազուրկները, կուսակցությունը դիմում էր բոլոր

միջոցներին՝ նրանց աշխատանքի տեղավորելու և բանվորական ուժը փրկելու համար։ «Մի երկրում,— գրել է Վ. Ի. Լենինը,— որն ավերված է, առաջին խնդիրն է փրկել աշխատավորին։ Ամբողջ մարդկության առաջին արտադրողական ուժը բանվորը, աշխատավորն է։ Եթե նա կենդանի մնա, մենք ամեն ինչ կփրկենք, կվերականգնենք»[56]։

Սովետական Հայաստանում գործազրկության հիմնական արմատները գտնվում էին գյուղում (մասամբ նաև քաղաքում) իշխող մանրապրանքային արտադրության մեջ։ Դրան ավելանում էին նաև անցյալից ժառանգած մի շարք օժանդակ գործոններ (արտադրողական ուժերի խիստ անկում, ավերված տնտեսություն, գաղթականության զանգվածային կուտակում, սակավահողություն և այլն), որոնց ազդեցությամբ այն ավելի սուր էր արտահայտվում։ Գործազրկությունը բացասաբար էր անդրադառնում նաև աշխատանք ունեցող բանվորների վրա՝ ինչպես աշխատանքը կորցնելու, այնպես էլ բարոյաքաղաքական իմաստով. գործազուրկների վրա փորձում էին ազդեցություն գործել բոլոր տեսակի հակասովետական տարրերը։

Անցյալի ժառանգություն լինելով՝ գործազրկությունը շարունակում էր աճել նաև սովետական իշխանության առաջին տարիներին։ 1920-ական թվականների սկզբներին Հայաստանի ավերված ժողովրդական տնտեսությունը, հասկանալի պատճառով, չէր կարող աշխատանքով բավարարել բոլորին, և զգալի թվով մարդիկ գործազուրկ էին։ Դրան ավելանում էին ինչպես գյուղական գերբնակչությունը, որը գործազրկության հիմնական աղբյուրներից մեկն էր, այնպես էլ բանակից զորացրվածներն ու շարունակվող ներգաղթը։ «Հայաստանում գործազրկության աղբյուրը առայժմ հորդառատ է,— գրված է աշխժողկոմատի 1922 թ. զեկուցագրերից մեկում,— և մի քանի վտակներ ունի։ Մի կողմից Հայաստանի արդյունաբերության բարձրացման հետ կապված հարևան հանրապետություններից դեպի Հայաստան հոսող հայ բանվորությունը, մյուս կողմից՝ գաղթականությունը։ Խնդիրն ավելի է բարդանում և դժվարանում մասամբ էլ նրանով, որ գործազուրկների գրեթե 75—80% անորակ և սևագործ ձեռքեր են, իսկ 20—25%-ն էլ ցածր որակի»[57]։

Գործազրկության հիմնական պատճառներից մեկը գյուղատնտեսության հետամնացությունն էր, որի պատճառով գյուղից քաղաք էին տեղափոխվում մասնագիտական որակավորում չունեցող բազմաթիվ

---

56 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 443։

57 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 4, գ. 188, բ. 141։

մարդիկ։ Բնականաբար, գործազրկության վերացման ուղղությամբ առաջին խոշոր քայլը կուսակցության ագրարային ծրագրի կենսագործումն էր։ Գյուղացիությանը հողով բավարարելը կարևոր նշանակություն ունեցավ մասսայական արտագնացությունը որոշ չափով մեղմացնելու և գործազուրկների քանակը նվազեցնելու գործում։ Եվ այդուհանդերձ, քանի դեռ գյուղում տիրապետողն անհատական սեփականությունն էր, և նեպի պայմաններում ուժեղանում էր գյուղացիության շերտավորումը, գյուղացիության հոսքը քաղաք շարունակվում էր։ Հայաստանում դա ավելի խիստ էր արտահայտվում, որովհետև գյուղացիության մի մասը (հատկապես գաղթականությունը) հողով չէր բավարարվել, իսկ հողաբաժին ստացողներն էլ չէին կարողանում դրանով հոգալ իրենց կարիքները և տարվա զգալի մասը աշխատում էին արդյունաբերության կամ շինարարության մեջ։

Հանրապետությունում գործազրկության մեղմացմանը մեծ չափով նպաստում էին ժողովրդական տնտեսության վերականգնմանն ուղղված միջոցառումները, որոնք աշխատավորության զբաղվածությունը բարձրացնելու հիմնական միջոցն էին։ Գործազրկության վերացման համար հատուկ պայքար էին մղում բազմաթիվ օրգաններ՝ կուսակցության կենտկոմին առընթեր հանձնաժողովը, աշխատանքի ժողկոմատը, աշխատանքի բորսան, տեղական սովետները, արհմիութենական կազմակերպությունները և այլն։ Արհմիությունների համառուսաստանյան V համագումարում (1922 թ. սեպտեմբեր) ՌՍՖՍՀ աշխժողկոմ Օ. Շմիդը հաղորդեց, որ գործազրկության դեմ կազմակերպված պայքար մղելու նպատակով որոշված է բոլոր վայրերում աշխատանքային բորսաներ բացել։ Չնայած մինչ այդ առանձին վայրերում գոյություն ունեին աշխատանքային բորսաներ, բայց այդ որոշման իրականացմամբ դրանց աշխատանքներն ավելի կազմակերպված և գործնական բնույթ ստացան։ Դրան մեծ չափով նպաստեց նաև այն, որ 1923 թ. հուլիսին ՍՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհուրդը (ԱՊԽ) հաստատեց աշխատանքային բորսաների կանոնադրությունը։ Աշխատանքային բորսաները դարձան բանվորական ուժի հավաքագրման ու բաշխման, աշխատանքի առաջարկի և պահանջարկի կարգավորման կարևոր միջոց։ Բորսան կարևոր դեր էր խաղում նաև բանվորական կադրերի պատրաստման գործում՝ տարբեր տեսակի դասընթացներ ու խմբակներ կազմակերպելու միջոցով մասնագիտական որոշ որակավորում տալով գործազուրկներին։ Բորսաների խնդիրն էր նաև լայն պայքար ծավալել ազատ վարձակալության դեմ, որից մեծ մասամբ օգտվում էին շահագործո-

զական տարրերը։ Գոյություն ունեցող աշխատանքային օրենսդրության համաձայն, աշխատանքային բորսաները հիմնարկ-ձեռնարկություններից հայտեր էին ստանում և ըստ այդմ աշխատանքով ապահովում գործազուրկներին։ Սկզբնական շրջանում արգելվում էր առանց բորսաների համաձայնության որևէ մեկին աշխատանքի ընդունել։

Հայաստանի խոշոր քաղաքներում (Երևան, Լենինական) աշխատանքային բորսաներ հիմնադրվեցին 1921 թ. աշնանը։ Դրանք իրենց մասնաճյուղերն ունեին բոլոր գավառներում։ 1923 թ. բորսաներում գրանցված գործազուրկների թիվը հունվարին 450 էր, փետրվարին՝ 575, մարտին՝ 1125, ապրիլին՝ 1792, մայիսին՝ 2159, հունիսին՝ 2551, հուլիսին՝ 2956[58]։ Այս աճը հիմնականում կապված էր այն բանի հետ, որ վերացվել էին գոյություն ունեցող սահմանափակումները և բոլորին թույլատրվել էր ցուցակագրվել։ Բացի այդ, ցուցակագրված գործազուրկներն օգտվում էին մի շարք արտոնություններից, և շատերը (մանր և խոշոր սեփականատերեր, տնայնագործներ և այլն) ցուցակագրվում էին հենց այդ նկատառումով։ Ձևական ցուցակագրումներն այն աստիճանի էին հասել, որ գործազուրկները հրաժարվում էին շրջաններում աշխատելուց[59]։

Հետագայում բանգյուղտնօրության (ԲԳՏ) ստուգումները զգալիորեն բեռնաթափեցին այդ ցուցակները։ Միաժամանակ, բորսային կոմիտեն կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների աջակցությամբ ստուգում էր պարբերաբար ցուցակագրվածներին և զրոում մինչև բորսային դիմելը հանրօգուտ աշխատանքով չզբաղված անձանց։

Այդուհանդերձ, գործազուրկների թիվը տարեցտարի ավելանում էր։ Ի տարբերություն կապիտալիստական երկրների, մեզ մոտ գործազրկության աճը տեղի էր ունենում արդյունաբերության անընդհատ զարգացման և բանվոր դասակարգի ավելացման պայմաններում. «...գործազրկության աճը,— արձանագրեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1926 թ. նոյեմբերյան պլենումը,— բարձրանում է մեր արդյունաբերության զարգացմանը զուգահեռ»։ Եթե կապիտալիստական երկրներում արդյունաբերական ճգնաժամը փողոց է նետում հազարավոր բարձրորակ բանվորների, ապա «մեր գործազրկությունը ծագում է գյուղից և կրում է

58 Նույն տեղում, ց. 2, գ. 279, թ. 4։

59 Նույն տեղում, ց. 6, գ. 19, թ. 21։

միանգամայն այլ բնույթ»[60]։ Դա նշանակում է, որ մեզ մոտ գործազրկությունը կապված էր ոչ թե արդյունաբերական ճգնաժամերի հետ, այլ, ավելի շուտ, անցյալից ժառանգած քայքայված տնտեսության և ագրարային գերբնակչության արդյունք էր։ Հայաստանի սակավահողության պայմաններում ավելի ցայտուն էր շեշտվում գյուղացիական ավելորդ ձեռքերի առկայությունը։

Ի տարբերություն կապիտալիզմի, մեր երկրում գործազուրկներն օգտվում էին բոլոր հասարակական-քաղաքական իրավունքներից։ Գործազուրկ կուսակցականները հաշվառման մեջ էին իրենց նախկին կազմակերպություններում։ Ավելին, գործազուրկները կարող էին ընդունվել կուսակցության մեջ։ Նրանց հետ հասարակական-քաղաքական լայն աշխատանք էր տարվում, խմբակներ էին կազմակերպվում՝ անգրագիտության վերացման, մասնագիտական որակավորում տալու համար։

Հայաստանում գործազրկության կարևոր առանձնահատկությունը նրա սեզոնային բնույթն էր։ Գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանում (ապրիլ-սեպտեմբեր) գործազուրկների թիվը նվազում էր, իսկ ձմռանը՝ աճում։ Այսպես, Լենինականի գավառի արհմիությունների գավառային խորհրդի տվյալներով գործազուրկների թիվը 1928 թ. հունվարին 1800 մարդ էր, փետրվարին՝ 2392, մարտին՝ 2468, ապրիլին՝ 2575, մայիսին՝ 2352, հունիսին՝ 1846, հուլիսին՝ 1648, օգոստոսին՝ 1372, սեպտեմբերին՝ 1204, հոկտեմբերին՝ 1871, նոյեմբերին՝ 1537 և դեկտեմբերին՝ 1756[61]։ Ինչ խոսք որ միայն գյուղացիության հաշվին չէր կատարվում այդ ավելացումը։ Աշխժողկոմատի ղեկուցագրերից մեկում իրավացիորեն նշվում է, որ «...Հայաստանի գործազրկության աղբյուրներն են իմպերիալիստական պատերազմի հետևանք հանդիսացող տաճկահայ գաղթականությունը, որբերը, քայքայված, հողազուրկ գյուղացիությունը, հարևան երկրներից Հայաստան վերադարձող բանվորությունը, ներգաղթը և բանակից զորացրվածները»[62]։ Դառնալով ազգապահպանման հիմնական կենտրոն, Սովետական Հայաստանը դեռևս չէր կարողանում աշխատանքով բավարարել բոլոր ներգաղթողներին։

Գործազրկության վերացման հարցում, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումից բացի, կարևոր նշանակություն ու-

---

60 Նույն տեղում, ց. 7, գ. 4, թ. 10։

61 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 131, ց. 3, գ. 326, թ. 18։

62 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 4, գ. 188, թ. 143։

նեին նաև անասնագործության ու կոոպերացիայի զարգացումը, ինչպես նաև գործազուրկներին նյութական կամ դրամական օգնություն ցույց տալը և այլն։ Դեռևս 1921 թ. նոյեմբերին ՌՍՖՍՀ ժողկոմխորհի դեկրետով մեր երկրի բանվորների և ծառայողների համար սահմանվեց սոցիալական ապահովագրություն։ Ապահովագրական մուծումներ էին կատարում բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները։ Գործազուրկների տնտեսական վիճակը որոշ չափով թեթևացնելու նպատակով կուսակցության XV կոնֆերանսը նպատակահարմար գտավ զգալիորեն ավելացնել սոցապին հատկացվող միջոցները։ Դա հնարավորություն տվեց մի կողմից ավելացնել սոցապ նպաստի չափը (աշխատավարձի մինչև 33,5%), իսկ մյուս կողմից՝ ավելացնել նպաստ ստացողների քանակը։ Բացի այդ, աշխժողկոմատը կազմակերպում էր արտելներ, որտեղ գործազուրկները ժամանակավորապես աշխատում էին։ Նրանց որոշ մասը (մոտ 10—15%-ը) ապահովագրված էր և 6 ամիս աշխատավարձ էր ստանում մինչև նոր աշխատանքի անցնելը, իսկ մի զգալի մասը նյութական օժանդակություն էր ստանում։ 1923 թ. և 1924 թ. 1-ին կիսամյակի ընթացքում Երևանում գործազրկության նպաստ էին ստացել 18.592, Լենինականում՝ 340, Լոռի-Փամբակում՝ 344, Նոր Բայազետում՝ 938 մարդ և այլն (ընդամենը Հանրապետությունում 29.814 մարդ)։ Երևանում գործում էր 300 հոգիանոց ձրի ճաշարան և 50 տեղանոց հանրակացարան։ Նույնն էր նախատեսվում կառուցել նաև Լենինականում[63]։

Չնայած վերականգնվող ժողովրդական տնտեսությունն անընդհատ կլանում էր գործազուրկների նորանոր ջոկատներ, սակայն նրանց թիվը տակավին շարունակում էր ավելանալ։ Երևան և Լենինական քաղաքներում, որտեղ կենտրոնացված էր գործազուրկների հիմնական մասը, 1924 թ. մարտին գրանցված 5229 գործազուրկների թիվը հունիսին հասել էր 9702-ի։ Նույն ժամանակաշրջանում աշխատանքի էր տեղավորվել 3747 մարդ[64]։ 1924 թ. առաջին եռամսյակում գործազուրկների թիվը հանրապետությունում հասնում էր 5408-ի (որից 616-ը անչափահաս), իսկ 1925 թ. 2-րդ կիսամյակում՝ այն հասավ 5204-ի[65]։ Սրանք միայն

---

63 Նույն տեղում, ց. 7, գ. 19, թ. 26, և ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 120, ց. 1, գ. 20, թ. 56։

64 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 120, ց. 1, գ. 20, թ. 14։

65 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 17, գ. 141, թ. 44 և ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 120, ց. 1, գ. 23, թ. 1։

աշխատանքային բորսայում գրանցվածներն էին, իսկ իրականում գործազուրկների քանակն անհամեմատ ավելի էր[66]։

Քանի դեռ նէպի կենսագործմամբ գյուղական բնակչության շերտավորումը խորանում էր և սակավազոր տնտեսությունները դեռևս զգալի թիվ էին կազմում, իսկ արդյունաբերության ու շինարարության տեմպերը հնարավորություն չէին տալիս բոլորին ընդգրկելու աշխատանքի մեջ, հանրապետության գործազուրկների թիվն անընդհատ աճում էր։ Գործազրկության առաջացման հին աղբյուրներին ավելանում էին նորերը (չափահաս դարձած որբեր, զորացված բանակայինների կենտրոնացում քաղաքներում, յոթնամյա և միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների մեծ մասի՝ ուսումը շարունակելու պատճառով քաղաքներում աշխատանք որոնելը, վարչական ապարատի կրճատումներ և այլն)։ Միայն Երևանի, Լենինականի բորսաներում ցուցակագրված գործազուրկների քանակը 1925—1927 թթ. (առ 1 հունիսի) փոփոխվել էր հետևյալ կերպ[67]։

Թվական	Տղամարդ	Կին	Ընդամենը
1925	2521	1340	3861
1926	2537	1482	4019
1927	4237	1768	6005

Սովորաբար ամռանը գործազուրկների թիվը նվազագույնի էր հասնում և, չնայած դրան, բորսաներում մի քանի հազար ցուցակագրված գործազուրկներ կային, որոնք ընտանիքի հայր կամ մայր էին։

Գործազրկության աճի հետ մեկտեղ հանրապետության հիմնարկ-ձեռնարկություններում մեծ մասում զգացվում էր որակյալ բանվորների կարիք, ուստի ՀԿ(բ)Կ կենտկոմի 1926 թ. մայիսյան պլենումը, ելնելով ժողովրդական տնտեսության կարիքներից, նպատակահարմար գտավ կարճատև դասընթացների միջոցով մասնագիտություն չունեցող գործազուրկներին որակավորում տալ[68]։

Այդ նպատակին էր ծառայում նաև դեռևս 1924 թ. սկսած գործազուրկների համար աշխատանքային կոլեկտիվների կազմակերպումը, որտեղ հիմնականում ընդգրկում էին անչափահասների և երիտասարդ-

---

66 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 120, ց. 1. գ. 23, թ. 6—7։

67 Մկի ՀՄԱ, ֆ. 1, ց. 7, գ. 19, թ. 25։

68 Նույն տեղում, գ. 1, թ. 29։

ների։ 1924—1925 թթ. աշխժողկոմատը կազմակերպել էր 15-ից ավելի աշխատանքային կոլեկտիվներ (կոշկակարների, հյուսների, ներկարարների և այլն)։ Դրանց շնորհիվ ամեն տարի 4—5 հազար մարդ տեղավորվում էր աշխատանքի[69]։ 1920-ական թվականների վերջերին հասարակական աշխատանքներ քիչ էին կազմակերպվում և հիմնական միջոցները հատկացվում էին աշխատանքային կոլեկտիվների կազմակերպմանը։ Վերջիններս գործազուրկների որակավորման կարևոր միջոց էին։

Գործազրկության վերացման խնդրում վճռական դերը պատկանում էր սոցիալիստական արդյունաբերության զարգացմանը։ Մի կողմից անընդհատ ընդլայնվելով՝ այն բանվորական նորանոր կադրերի պահանջ էր ներկայացնում, իսկ մյուս կողմից՝ ժողովրդական տնտեսության ամբապնդման շնորհիվ մեծանում էր գործազուրկներին օգնելու նպատակով ավելի շատ հատկացումներ կատարելու հնարավորությունը[70]։

Սակայն Հանրապետության արդյունաբերության զարգացման թույլ տեմպերը բոլորին աշխատանքով բավարարելու հնարավորություն չէին տալիս։ Այդ պայմաններում գործազրկությունը թեթևացնելուն ղգալի չափով կարող էր նպաստել տնայնագործության զարգացումը, որի համար կային օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններ։ Նախ Հանրապետությունն առատ էր արհեստագործության զարգացման համար անհրաժեշտ հումքով։ Մյուս կողմից՝ շատ գաղթականներ լինելով բարձրորակ արհեստավորներ, չէին կարողանում համապատասխան աշխատանք ճարել։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1926 թ. մայիսյան պլենումն անդրադառնալով այդ հարցին, իրավացիորեն ընդգծեց, որ «...ներկա պայմաններում մենք պետք է ուշադրություն դարձնենք մեր տնայնագործական արդյունաբերության զարգացման վրա, որը դանվում է բարձիթող վիճակում... մենք պետք է միջոցներ դտնենք, որպեսզի բարձրացնենք տնայնագործական արդյունաբերությունը, որպեսզի մենք կարողանանք թեթևացնել գործազրկությունը և ագրարային գերբնակչությունը»[71]։ Եվ իրոք, 1926 թ. հետո ավելի լայն թափ հաղորդվեց տնայնագործական արհեստանոցների կազմակերպման, մանր արհեստավորներին վար-

---

69 Նույն տեղում, գ. 19, թ. 25—26։

70 Նույն տեղում, գ. 20, թ. 25։

71 Նույն տեղում, գ. 4, թ. 11։

կով և նյութական միջոցներով օգնելու գործին։ Սակայն միջոցները բավականին սուղ էին և չէին բավարարում գործազրկության դեմ լայն պայքար ծավալելուն։

Գործազրկությունը բացասաբար էր անդրադառնում հատկապես երիտասարդության վրա, որը կազմում էր գործազուրկների 10—15%-ը։ Նկատի առնելով, որ գործազուրկ երիտասարդությունը ավելի հեշտությամբ կարող էր ընկնել քշնամական տարրերի ազդեցության տակ, սովետական կառավարությունը դեռևս 1922 թ. հատուկ որոշում էր ընդունել երիտասարդներին աշխատանքի մեջ ընդգրկելու մասին։ Դրա կենսագործումը հիմնականում դրված էր կոմերիտմիության վրա, որի ներկայացուցիչները աշխատանքային բորսաների կոմիտեների անդամ էին։ Երիտասարդության գործազրկության դեմ պայքարելու հիմնական միջոցը մասնագիտական ուսուցման կազմակերպումն էր, որի լավագույն ձևը համարվեց ֆաբրիկա-գործարանային ուսումնարանների կազմակերպումը, չժխտելով բրիգադային և անհատական ուսուցման անհրաժեշտությունը։

Հայտնի է, որ օպոզիցիոն և հակահեղափոխական բոլոր խմբավորումները գործազրկությունն օգտագործում էին սոցիալիստական շինարարության լենինյան պլանի դեմ պայքարելու համար և դրանով փորձում էին «ապացուցել» մեր երկրում սոցիալիզմի կառուցման անհնարինությունը։ Միտումնավոր կերպով անտեսելով մեր և կապիտալիստական երկրների գործազրկությունների տարբերությունը, նրանք սոցիալիստական հիմնարկները համարում էին պետական-կապիտալիստական և հայտարարում, որ գործազրկությունը ոչ թե ապրարային գերբնակչության արդյունք է, այլ տնտեսական սխալ քաղաքականության՝ նկատի ունենալով նեպը։ Գտնելով, որ չպետք է զարգացնել սոցիալիստական արդյունաբերությունը, նրանք գործազրկության մեղմացման միջոց էին համարում գյուղատնտեսական հարկերի ավելացումը։ Հասկանալի է, որ դա ուղղված էր բանվորագյուղացիական դաշինքի դեմ։ Օպոզիցիոն խմբավորումները փորձում էին գործազրկությունն օգտագործել երիտասարդ բանվորության սովետական իշխանության դեմ դուրս բերելու համար։ Սակայն կուսակցության հետևողական քաղաքականության շնորհիվ գործազրկության հիվանդագին հետևանքները զգալի չափով վերացվեցին, և սոցիալիստական տնտեսության զարգացմամբ պայմաններ ստեղծվեց այն լիովին վերացնելու համար։ Ժողովրդական տնտեսության վերականգնմանը զուգընթաց, ինչպես ամ-

բողջ Միության մեջ, հանրապետությունում նույնպես նկատվում էր գործազուրկների թվի որոշ կայունացում։ Այսպես, գործազուրկների միջին տարեկան մնացորդը և նրանց ցույց տրված օգնությունը ըստ տարիների կազմել են[72]։

	1926/27 թթ.	1927/28 թթ.	1928/29 թթ.	1929/30 թթ.
Գործազուրկներ	6417	7414	7820	7911
Նրանց ցույց տրված օգնության չափը (հազար ռուբ.)	54	149	93	315

Մեր երկրում գործազրկության վերացման հարցը սկսեց արմատական լուծում ստանալ 1920-ական թվականների վերջերին։ Երկրի ինդուստրացման արագ տեմպը, ամենուր ծավալվող շինարարության թափը և կոլեկտիվացումը ոչ միայն հիմք հանդիսացան գործազրկության վերացման համար, այլև նոր ձևով դրեցին բանուժի կարիքները բավարարելու հարցը։

Գյուղատնտեսության մասսայական կոլեկտիվացումը բացում այլ հարցերի շարքում, փաստորեն, լուծեց նաև ագրարային գերբնակչության վերացման հարցը, որը գործազրկության հորդառատ աղբյուր էր։ Կոլեկտիվացումը յուրովի լուծեց գյուղացիությանն աշխատանքով ու հողով բավարարելու խնդիրը։ Արտադնացության դիմող հիմնական մասսան (չքավորներ ու միջակներ) համախմբվեց կոլտնտեսություններին մեջ և պետությունից ստանալով ամեն տեսակի օգնություն ու օժանդակություն, կարողացավ սեղմ ժամկետում զգալիորեն ավելացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, բարելավել իր արտեսական վիճակը։ Գյուղի սոցիալիստական վերակառուցումը փոխեց գյուղացիության վերաբերմունքը արտադրության նկատմամբ։ Այժմ գյուղացին շահագրգռված էր կոլտնտեսության ամրապնդմամբ և ծայրահեղ դեպքում էր աշխատանք որոնում այլ վայրերում։ Գյուղացիության արտադնացության դեմ բոլոր միջոցներով պայքարում էին նաև կոլտնտեսությունների վարչությունները։ Սակայն դա այնպիսի ծայրահեղության հասավ, որ կառավարությունը, ելնելով ժողովրդական տնտեսության համաչափ զարգացման շահերից, 1930 թ. մարտի 16-ին հատուկ որոշում ընդունեց գյուղացիության արտադնացությունը չարգելելու մասին։

72 Նույն տեղում, ց. 14, գ. 70, թ. 12—14։

Գործազրկության վերացմանը մեծ չափով նպաստեց նաև մեր երկրում կենսագործվող կուլտուրական հեղափոխությունը, կյանքի կոչելով ուսուցիչների, բժիշկների, գիտության ու արվեստի աշխատողների, կուլտուր-լուսավորական հիմնարկների ծառայողների մի ամբողջ բանակ, որի հիմնական մասը նոր ձևավորվող սովետական մտավորականությունն էր՝ կազմված նախկին բանվորներից ու գյուղացիներից։ 1920-ական թվականներին լայն թափով կենսագործվող կուլտուրական հեղափոխությունը և առաջին հերթին անգրագիտության վերացումը, մեծ դեր խաղաց գյուղատնտեսության և մյուս բնագավառների համար բարձրորակ կադրեր պատրաստելու գործում։ Մյուս կողմից՝ վերացավ բարձրորակ մասնագետների գործազրկությունը, և նրանք լայնորեն ընդգրկվեցին սոցիալիստական շինարարության մեջ։ Բացի այդ, անգրագիտության վերացման շնորհիվ հնարավոր եղավ նոր մասնագիտություններ սովորեցնել բազմաթիվ գործազուրկների և նրանց տեղավորել աշխատանքի։ Գործազրկությունը գնալով նվազում էր նաև այն պատճառով, որ նոր սերունդը մասսայաբար ընդգրկվելով հանրակրթական դպրոցներում, հեշտությամբ էր մասնագիտորեն կողմնորոշվում։

Սոցիալիստական շինարարության հզոր թափն ու վերելքի ծավալը ոչ միայն կլանեց հավելյալ բանվորական ուժը, այլև որակյալ բանվորներ պատրաստելու և արտադրությունն անընդհատ համալրելու հրամայական պահանջ ներկայացրեց։ Տնտեսության բոլոր ճյուղերում աշխատող ձեռքի կարիք էր զգացվում, որը գնալով աճում էր։ Ելնելով այն փաստից, որ արդեն 1930-ական թվականների սկզբներին մեր երկրում գործազրկությունը որպես սոցիալական երևույթ վերացել էր, պետությունն աստիճանաբար դադարեցրեց գործազուրկներին տրվող օգնությունը և թողեց միայն կադրերի պատրաստման և վերապատրաստման վրա կատարվող ծախսերը։

ՀՍՍՀ աշխժողկոմատը որոշում էր ընդունել մինչև 1930 թ. նոյեմբերի 29-ը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման տասնամյակը, հանրապետությունում գործազրկությունը վերացնելու մասին։ Նախատեսվում էր մասնագիտություն ունեցողներին պարտադիր կարգով տեղավորել աշխատանքի, իսկ չունեցողների համար դասընթացներ կազմակերպել և որևէ մասնագիտություն սովորեցնել[73]։ Այդպես էլ արվեց։

Գործազրկության վերացումը մեր երկրում ավելի արագ տեմպերով ու-

---

73 «Խորհրդային Հայաստան», 28 հոկտեմբերի, 1930։

նեցավ, քան նախատեսվում էր առաջին հնգամյա պլանով։ Դրա շնորհիվ փոխվեցին աշխատանքային բորսաների ֆունկցիաները։ Նրանք վերակառուցվեցին կադրերի վարչությունների, որոնք բանվորական ուժ էին հավաքագրում և պլանաչափ կարգով մատակարարում ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերին։ 1930 թ. վերջին ՀՍՍՀ-ում վերացվեցին նաև գործազուրկների կոլեկտիվները։

Հետևաբար, ինչպես տեսնում ենք, կենսագործելով Լենինի հիմնական սկզբունքները, սեղմ ժամկետում վերականգնվեց հանրապետության ժողովրդական տնտեսությունը, աստիճանաբար ամրապնդվեց սոցիալիստական կացութաձևը, որը գնալով վճռական դեր խաղաց սոցիալիզմի հիմքերի կառուցման խնդրում։ Սոցիալիստական արդյունաբերության վերականգնումն ու զարգացումը նեպի կենսագործման հիմնական արդյունքներից մեկն էր։

3. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԵՊԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ

Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում կոոպերացիայի տնտեսական և քաղաքական դերի բազմակողմանի հիմնավորումը տրվեց Վ. Ի. Լենինը։ Լենինյան կոոպերատիվ պլանը քաղաքի և գյուղի մանր արտադրողներին սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու միակ ճիշտ ուղին էր։

Սովետական իշխանությունն իր հաստատման առաջին իսկ տարիներին ուղիներ էր որոնում կոոպերացիան արդյունավետ օգտագործելու համար։ Այդ նպատակով «ռազմական կոմունիզմի» տարիներին կոոպերացիայի վրա դրվեց աշխատավորությանը մթերքներ բաշխելու պարտականությունը, որը կատարվում էր պետական վերահսկողության ներքո։ «Ռազմական կոմունիզմի» պայմաններում կոոպերացիայի դերն ու խնդիրներն ընդհանրացվեցին 1919 թ. մարտի 20-ին Վ. Ի. Լենինի ստորագրած դեկրետում[74]։ Վ. Ի. Լենինը հույս էր հայտնում, որ մոտ ապագայում ամբողջ երկիրը «կվերածվի աշխատավորների մի մեծ կոոպերատիվի»[75], որ կոոպերացիան հնարավոր է օգտագործել սոցիալիստական շինարարության մեջ՝ պետական վերահսկողության պայմաններում[76]։

---

74 «Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам», т. I, М., 1957, стр. 117—120.

75 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 418։

76 Նույն տեղում, էջ 615—617։

Կոոպերացիայի մասին լենինյան ուսմունքը հետագա զարգացում ապրեց նէպին անցնելուց հետո։ Նէպի պայմաններում կոոպերացիան միակ տնտեսական կազմակերպությունն էր, որը կարող էր միավորել մանր արտադրողներին և հնարավորություն տալ վերահսկելու նրանց գործունեությունը։ Այդ էր պատճառը, որ նէպին անցնելուց հետո անհրաժեշտ եղավ նոր քաղաքականություն մշակել նաև կոոպերացիայի վերաբերյալ։ «Իզուր չէր,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ պարենհարկի դնկրևոը առաջ բերեց կոոպերացիայի կանոնադրության անմիջական վերանայում և նրա «ազատության» ու իրավունքների որոշ ընդլայնում»[77]։

Կուսակցությունը կոոպերացիան դիտում էր որպես նէպի կարևորագույն, բաղկացուցիչ մաս, որի ճիշտ օգտագործումը զգալիորեն կհեշտացներ մանր արտադրության սոցիալիստական վերակառուցումը։ Պատահական չէ, որ, չնայած կուսակցության X համագումարի օրակարգում կոոպերացիայի մասին հատուկ հարց չկար, սակայն պարենտուրքի մասին Վ. Ի. Լենինի դեկուցումից հետո հատուկ բանաձև ընդունվեց նաև կոոպերացիայի մասին[78]։

Նէպին անցնելուց հետո Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ անհրաժեշտ է կոոպերացիային ինքնուրույն գործելու հնարավորություն տալ։ ՌՍՖՍՀ ԺողկոմխորհԻ 1921 թ. ապրիլի 12-ի դեկրետով կոոպերացիան անջատվեց պարենժողկոմատից և նպատակահարմար գտնվեց, որպեսզի այն բոլոր գործողությունները ծավալի իր հաշվին։ Պետությունը կոոպերացիային օժանդակելու նպատակով վարկ էր բաց թողնում։ Այդ որոշումը ինքնուրույնություն և գործողությունների ազատություն տրվեց կոոպերացիային։

Կոոպերացիայի դերի և խնդիրների մասին իր դիտողությունները Վ. Ի. Լենինն ամփոփեց «Կոոպերացիայի մասին» հանճարեղ աշխատության մեջ, մշակելով պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կոոպերացիայի մասին ամբողջական ուսմունք։ Լենինյան կոոպերատիվ պլանը մեր երկրում սոցիալիստական շինարարության ծրագրի բաղկացուցիչ մասն է։ «Կոոպերացիան...,— գրում էր Վ. Ի. Լենինը,— հեշտացնում է միլիոնավոր բնակչության, ապա նաև անխտիր ամբողջ բնակչության միավորումը, իսկ այս հանգամանքն իր հերթին հսկայական

---

77 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 444։

78 Նույն տեղում, էջ 271—272։

պլյուս է պետական կապիտալիզմից հետագայում սոցիալիզմին անցնելու տեսակետից»[79]:

Նէպի տարիներին մեր երկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները վճռական ազդեցություն ունեցան նաև կոոպերացիայի զարգացման վրա՝ միանգամայն նոր բովանդակություն հաղորդելով դրան: Կոոպերատիվ ձեռնարկություններն իրենց բնույթով աստիճանաբար մոտենում էին սոցիալիստական ձեռնարկություններին: «Գոյություն ունեցող մեր հասարակարգում,— գրում էր Վ. Ի. Լենինը,— կոոպերատիվ ձեռնարկությունները տարբերվում են մասնավոր կապիտալիստական ձեռնարկություններից, որպես կոլեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն տարբերվում սոցիալիստական ձեռնարկություններից, եթե նրանք հիմնված են այն հողի վրա, ունեն այնպիսի արտադրամիջոցներ, որոնք պատկանում են պետությանը, այսինքն՝ բանվոր դասակարգին»[80]: Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ նոր պայմաններում կոոպերատիվներն իրենց էությամբ չեն տարբերվում սոցիալիստական ձեռնարկություններից: «Այժմ մենք պետք է դիտակցենք,— նշում էր Վ. Ի. Լենինը,— և գործ դարձնենք այն, որ ներկայումս այն հասարակարգը, որին պետք է օժանդակենք սովորականից ավել, կոոպերատիվ հասարակարգն է»[81]:

Կոոպերացիայի ձևերը նէպի պայմաններում տարբեր փոփոխությունների էին ենթարկվում: Գյուղատնտեսական կոոպերացիայի պարզ միավորներն աստիճանաբար վերաճում էին արտադրական կոոպերացիաների, արհեստագործական կոոպերացիայի շրջանակները զնալով սեղմվում էին ինդուստրացման և կոլեկտիվացման ձեռք բերած հաջողություններին համապատասխան և, վերջապես, սպառողական կոոպերացիան ավելի էր լայնացնում իր գործունեությունը՝ կատարելով գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակման իր հիմնական ֆունկցիաները: Տարեցտարի բարձրանում էր նաև կոոպերացիայի քաղաքական դերը:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո կոոպերատիվ ընկերությունները միավորվեցին սպառկոոպերացիայի մեջ և դրվեցին պարենժողկոմատի տրամադրության տակ: «Վարկային և փոխատու խնայողական կոոպերատիվ ընկերությունները, ինչպես և

79 Նույն տեղում, էջ 445:

80 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 562—563:

81 Նույն տեղում, էջ 558:

նրանց միությունները ձուլել տեղերում գործող և բացվելիք սպառողական ընկերությունների և նրանց միությունների հետ»,— գրված է պարենժողկոմի 1921 թ. հունվարի 8-ի հրամանում: Սակայն Սովետական Հայաստանի կառավարությունը կոոպերացիայի հարցերով լրջորեն կարողացավ զբաղվել միայն քաղաքացիական կռիվներից հետո: 1921 թ. գարնանը Երևանում կազմակերպվեց «Այգեստան» առաջին գյուղատնտեսական կոոպերատիվը, որը շուտով իր ճյուղերը բացեց էջմիածնում, Աշտարակում և Ղամարլուում (Արտաշատ): Գյուղատնտեսական կոոպերացիայի ծավալումը մեծ դեր պիտի խաղար հանրապետության ավերված տնտեսությունը վերականգնելու և աշխատավորության դրությունը բարելավելու գործում:

1921—1922 թթ. հողժողկոմատը գյուղատնտեսական արտելներ և ընկերություններ հիմնելու մի քանի անհաջող փորձեր կատարեց: 1923 թ. սկսած՝ այդ խնդիրները դրվեցին Հայկոոպի վրա, որն այդ հարցում հատուկ հետաքրքրություն հանդես չէր բերում: Գյուղատնտեսության կոոպերացման գործում որոշակի տեղաշարժեր նկատվեցին 1924 թ., երբ հիմնվեց Հայգյուղկոոպը:

Ժողովրդական տնտեսության վերականգնման հետ մեկտեղ ծավալվում էր նաև վարկային կոոպերացիան: Նէպի պայմաններում այն կարևոր միջոց էր վաշխառուների և առևտրականների շահագործողական գործունեությունը սահմանափակելու խնդրում: 1924 թ. հունվարին Հայաստանում գործում էին 5 գյուղվարկային ընկերություն, 6 կաթնարտել և 2 հողօգտագործական ընկերություն, որոնցում ընդգրկված էր 1384 մարդ[82]: Հանրապետության բոլոր գավառներն ընդգրկվել էին կոոպերացիայի ցանցի մեջ, որը մեծ դեր էր խաղում տնտեսության վերականգնման խնդրում:

Սակայն պրոլետարիատի դիկտատուրայի նպատակը նախահեղափոխական գյուղատնտեսության վերականգնումը չէր՝ իր դասակարգերով և դասակարգային հարաբերություններով: Վերականգնման հետ մեկտեղ նաև վերակառուցման աշխատանքներ էին տարվում, ամեն կերպ նպաստելով սոցիալիստական տնտեսաձևի ամրապնդմանը: Այդ խնդրում անգնահատելի դեր էր խաղում գյուղատնտեսության արտադրական կոոպերացումը, որն այլևս չէր տեղավորվում սպառկոոպերացիայի շրջանակներում և որա առանձնացումն ու ինքնուրույն գործունեության ասպարեզ տալը օրակարգի հարց էր: 1924 թ. օգոստոսի 30-ին

82 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1941, թ. 1:

ՀՍՍՀ կենտգործկոմը հատուկ դեկրետ ընդունեց գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման մասին. «Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը համարելով երկրի գյուղատնտեսական բարգավաճման և գյուղացիական աշխատավոր մասսաներին սոցիալիստական շինարարությանը հաղորդակից անելու կարևորագույն միջոցառումներից մեկը, կենտգործկոմը որոշում է... Հայկական ՍՍՀ սահմաններում գյուղատնտեսությամբ կամ նրա հետ կապված արհեստներով զբաղվող բոլոր քաղաքացիներին... թույլատրվում է կազմել կոոպերատիվ միություններ (ընկերություններ, արտելներ, կոմունաներ)»[83]: Դեկրետով մեծ արտոնություններ էին տրվում չքավոր և միջակ գյուղացիությանը:

Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի հարցերը բազմակողմանի քննարկելու նպատակով 1924 թ. սեպտեմբերի 20-ին Երևանում բացվեց գյուղկոոպերացիայի I համագումարը: «Գյուղական մանր տնտեսությունների կոոպերացումը մի խոշոր գործ է,— նշեց ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Հովհաննիսյանը,— որի միջոցով մենք ամրացնում ենք չքավոր և միջակ գյուղացիների դասակարգային դիրքը ընդդեմ կուլակների և գյուղի ու քաղաքի շահագործող մյուս տարրերի»[84]: Համագումարում արդարացիորեն նշվեց, որ գյուղատնտեսական կոոպերացիայի դերը մանրգյուղացիական Հայաստանում ավելի մեծ է, որովհետև այն ոչ միայն մանր կամ խոշոր տնտեսություններ հիմնելուն է նպաստում, այլև՝ գյուղում սոցիալիզմի կառուցմանը: «Կոոպերացիան գյուղացիության դասակարգային կազմակերպությունն է,— գրված է համագումարի որոշման մեջ,— գյուղի բարձր խավերը և վերջին տարիներում ուռճացած էլեմենտները տեղ չունեն կոոպերացիայում»[85]: Համագումարն ընդգծեց, որ Հայգյուղկոոպն առանց միջանկյալ օղակների պետք է զբաղվի գյուղատնտեսական կոոպերացիայի թե՛ կազմակերպական և թե արտադրական հարցերով:

Նէպի հետևողական կենսագործման շնորհիվ ամբողջ ժողովրդական տնտեսության վերելքը, գյուղատնտեսական արտադրության ապրանքայնացման աճը, գյուղացիության ներսում խորացող շերտավորումը և, վերջապես, աշխատավորության ընդհանուր բարեկեցության աճը կարևոր հիմք հանդիսացան կոոպերացիայի հետագա զարգացման և ամ-

---

83 «ՀՍՍՀ կառավարության հրամաններն ու որոշումները», 1924, № 11, էջ 43:

84 «Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի ֆրոնտում», Երևան, 1925, էջ 4:

85 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 4, գ. 131, թ. 4—5:

բապնդման համար։ Գյուղացիությանը կուլակային շահագործումից փրկելուց բացի կոոպերացիան փաստորեն նրա տնտեսական վիճակը բարելավելու հիմնական միջոցն էր։ Նէպի պայմաններում կոոպերացիան նաև քաղաքական կարևոր դեր էր խաղում։ Ուստի կուսակցության ղեկավարությունն ու անդուլ պայքարը կոոպերացիայի ամրապնդման և այն ճիշտ ուղիով տանելու գործում անգնահատելի նշանակություն ուներ։

Հայգյուղկոոպի ստեղծումը կարևոր դեր խաղաց կոոպերացիայի ցիրուցան միավորումների համախմբման, նրանցում ավելի շատ գյուղացիների ընդգրկման, ինչպես նաև վերջիններիս գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ մատակարարելու գործը կարգավորելու խնդրում։ Այդ ժամանակ կոոպերացումը հիմնականում կատարվում էր ըստ գյուղատնտեսության ճյուղերի (մասնագիտական կոոպերացում), որն ավելի մատչելի էր գյուղացիությանը։ 1928 թ. Հանրապետությունում գործում էին 95 կաթնարտելներ, 41 գյուղվարկային, 25 այգեգործական, 17 մեքենաօգտագործական, 32 հողօգտագործական և բազմաթիվ այլ ընկերություններ[86]։ Արագ թափով էր ծավալվում ճյուղային կոոպերացումը, որը գյուղացիներին մատչելի լինելուց բացի, նպատակահարմար էր նաև արտադրության կազմակերպման տեսակետից։ Բացի այդ, անհաշտ պայքար ծավալելով վաշխառուների և սպեկուլյանտների դեմ կոոպերացիան տարեցտարի ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ էր մթերում՝ մեծ օգնություն ցույց տալով մանր տնտեսատերերին։ Հայաստանի սահմաններում 1924/1925 տնտեսական տարում գյուղկոոպերացիան մթերել էր բոլոր մթերքների 2,5, 1925/1926 տնտեսական տարում՝ 21,1, իսկ 1926/1927 տնտեսական տարում՝ 45,3%-ը[87]։

Գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունների աճի հետ մեկտեղ արագ տեմպերով ավելացավ նաև դրանց անդամների թիվը։ Հիմնականում սկսելով կոոպերացիայի պարզ ձևերից՝ վարկային և հողօգտագործման ընկերություններից, գյուղացիությունն աստիճանաբար անցում կատարեց դեպի արտադրական (ճյուղային) կոոպերացիան։ Սակայն դա համատարած բնույթ չէր կրում. դեռևս գյուղացիության հիմնական մասը ձեռնպահ էր հատկապես արտելների նկատմամբ։

---

86 «Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի («Հայգյուղկոոպի») գործունեության հաշվետվությունը, 1926 թ. հոկտեմբեր—1928 թ. հուլիս», Երևան, 1928, էջ 8։

87 «Խորհրդային Հայաստան, 3 մայիսի, 1928։

«Գյուղացիությունը դեպի արտելներն ունի մեծ հետաքրքրություն,— գրված է Նոր Բայազետի գավկոմի 1926 թ. զեկուցագրում,— սակայն շարունակում է մնալ սպասողական, պահպանողական դրության մեջ։ Ամենուրեք ընդհանուր տրամադրություն կա՝ սպասել, տեսնել մասնակիցները ինչ արդյունք են ստանում...»[88]։ Հասկանալի է, որ գյուղացիության՝ դարերի ընթացքում ձևավորված հոգեբանությունը հնարավոր չէր միանգամից վերափոխել։ Դրա համար բացում այլ պայմաններից բացի, անհրաժեշտ էր ժամանակ, որպեսզի գյուղացին սեփական փորձով համոզվեր մանր ապրանքային տնտեսության սակավարդյունավետության մեջ։ Որպես կանոն, պետք է նշել, որ կոոպերացիան խոր արմատներ էր գցում հատկապես այն շրջաններում, որտեղ զարգացած էր ապրանքային արտադրությունը։

Հայգյուղկոոպի հաշվետվությունները վկայում են, որ տարեցտարի կոոպերացիայի անդամներին քանակը աճում էր, հետզհետե գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակության գործը։ Ահա այդ տվյալները[89]։

Թվականը	Գյուղացիական տնտեսությունների թիվը	Կոոպերացված տնտեսությունների թիվը	Կոոպերացման %-ը
1924	149720	8919	5,9
1925	151163	19153	12,7
1926	152606	30075	19,7
1927	158900	46331	29,2
1928	161000	61646	38,5

Աղյուսակից երևում է, որ ընդամենը հինգ տարվա ընթացքում գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ ընդգրկված գյուղացիության տեսակարար կշիռը 5,9%-ից հասավ 38,5-ի։ Դա, իրոք, խոշոր աճ էր։ Հետաքրքրական է, որ ճյուղային արտադրության կոոպերացումը ավելի բարձր տեսակարար կշիռ ուներ շերամապահության, մեղվաբուծության, ծխախոտագործության բնագավառում, քան, օրինակ, անասնապահության մեջ։ Դա կրկին հաստատում է, որ կոոպերացումը բարձր տեսակարար կշիռ ուներ արդյունաբերական կուլտուրաների մշակման բնագավառում, որի զարգացմամբ առաջին հերթին շահագրգռված էր պետությունը։ Ուշագրավ է, որ երբ գյուղատնտեսական կոոպերացիայում

88 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 130, գ. 1, գ. 382, թ. 51։

89 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 8, գ. 80, թ. 37։

գերիշխողը նրա պարզ ձևերն էին, դրանք ավելի տարածված էին լեռնային շրջաններում (Սևանի ավազան), իսկ երբ անցում կատարվեց ճյուղային, արտադրական կոոպերացիային՝ հիմնական կենտրոնը դարձավ Արարատյան հարթավայրը, որտեղ բարձր էր գյուղատնտեսական արտադրության ապրանքայնությունը։ Ըստ գավառների կոոպերացումն ավելի բարձր էր Էջմիածնում, Երևանում, Լոռի-Փամբակում և ցածր էր Դարալագյազում, Շիրակում[90]։

Անընդհատ կողոպտված և տնտեսապես քայքայված հայ գյուղացու հոգեբանության մեջ հույսը միայն իր վրա դնելու մասնավոր սեփականատիրական զգացումը խոր արմատներ էր ձգել։ Այդ էր պատճառը, որ նույնիսկ փոքրիկ անհաջողության դեպքում կոոպերացիայի անդամների որոշ մասը շտապում էր դուրս գալ նրանից և իր կարիքները հոգալ այլ միջոցներով։ Դրա հետևանքով էլ որոշ կոոպերատիվներ կազմակերպվում ու քայքայվում էին առանց գյուղատնտեսության զարգացման վրա որոշակի հետք թողնելու։ Սակայն սովետական իշխանության հոգատարության շնորհիվ կոոպերացիան այնպիսի ամուր հիմքերի վրա էր դրված, որ գյուղացիության հիմնական մասն արդեն համոզվել էր նրա օգտակարության մեջ և լայն հոսքով անդամագրվում էր կոոպերացիային՝ աստիճանաբար ազատագրվելով անհատական տնտեսավարության նեղ շրջանակներից։

Նախկի պայմաններում կոոպերացիան առաջին հերթին նպաստում էր սակավազոր տնտեսությունների ամրապնդմանը, ուստի կուսակցությունը հատուկ ուշադրություն էր դարձնում նրա անդամների սոցիալական կազմի վրա։ Հայգյուղկոոպը 1926 թ. վերջերին հատուկ ուսումնասիրեց 24,5 հազար տնտեսությունների սոցիալական վիճակը (կոոպերացիայի բոլոր անդամների 76%-ը) և պարզեց, որ դրանց 28,8%-ը չքավոր են, 66,1%-ը՝ միջակ, իսկ 5,1%-ը՝ ունևորներ։ 1929 թ. գյուղկոոպում ընդգրկված 78,5 հազար տնտեսություններից չքավորների տեսակարար կշիռը հասել էր 60,7, միջակներինը՝ 36,4, իսկ ունևորներինը՝ 2,9%-ի[91]։ Անշուշտ, այս տվյալները չեն կարող տալ գյուղկոոպում ընդգրկվածների սոցիալական կազմի լրիվ և ճշգրիտ պատկերը։ Սակայն, եթե դրանք նույնիսկ մոտավոր ճշտությամբ են արտացոլում իրական վիճակը, ապա թույլ են տալիս եզրակացնելու, որ մեզ մոտ նույնպես, չնայած դանդաղ տեմպերով, գյուղացիությունը բռնել էր միջակացման ուղին։

---

90 Նույն տեղում, ց. 11, գ. 188, թ. 11—12։

91 ՄԼի ՀՄԱ, ֆ. 1, ց. 17, գ. 218, թ. 2։

Գյուղատնտեսական կոոպերացիան զբաղվում էր նաև գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ։ 1926—1927 թթ. նրա իրավասության տակ գործում էին 58 պանրագործարան (88 բանվոր), Երևանի և Մեղրու պահածոների գործարանները (90 բանվոր), 7 օղու գործարան (96 բանվոր) և Ղափանի մետաքսագործարանը (102 բանվոր)[92]։

Գյուղատնտեսության արտադրական կոոպերացման համար Հայաստանում որոշակի պայմաններ էին ստեղծվել մի կողմից նեպի հետևանքով խորացող դասակարգային շերտավորման և չբավոր ու միջակ գյուղացիության դասակարգային դիտակցության բարձրացման, իսկ մյուս կողմից՝ նրա ավելի պարզ ձևերի արմատավորման շնորհիվ։ Գյուղացիությունն աստիճանաբար համոզվում էր պետության բազմակողմանի օգնությամբ հիմնված խոշոր տնտեսությունների առավելությունների մեջ։ Ժողովրդական տնտեսության վերականգնումից հետո հնարավոր եղավ լուրջ ուշադրություն դարձնել առաջին կոլեկտիվ տնտեսությունների վրա, որոնք օրինականացվել էին Հայգյուղկոոպի կողմից։ Արխիվային նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ առ 1927 թ. հուլիսի 1-ը հանրապետությունում գոյություն են ունեցել 2 կոմունա, 2 կոլեկտիվ տնտեսություն և համատեղ հող մշակող 5 ընկերություններ (վերջիններս տարեվերջին վերածվեցին կոլտնտեսությունների)[93]։ 1928 թ. փետրվարի 1-ի դրությամբ՝ Հայգյուղկոոպում գրանցված են եղել հետևյալ կոլեկտիվ տնտեսությունները[94]։

գավառ	գյուղ	կոլտնտեսության անունը
1. Էջմիածնի	Սարդարապատ (Հոկտեմբերյան)	Լուկաշինի անվան
2. »	Մեծ Շահրիար (Նալբանդյան)	Կարմիր ուղի
3. »	Ղուզիգեղան (Այգեշատ)	Կարմիր ռանչպար
4. »	Մոլլա Բայազեդ (Բամբակաշատ)	Փարոս
5. »	Արբաթ	Համերաշխություն

92 «Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի («Հայգյուղկոոպի») գործունեության հաշվետվությունը, 1926, հոկտեմբեր—1928 թ. հուլիս», էջ 70։

93 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 42, ց. 1, գ. 932, թ. 40։

94 Նույն տեղում, գ. 1064, թ. 38։

6.	»	Թաքիա (Բազմաղբյուր)	Նոր կյանք
7.	Երևանի	Խոտորջուր	Խոտորջրի
8.	Դարալագյազի	Արփա	Ռանչպար
9.	Լենինականի	Օջախղուլի (Առափի)	Նոր կենցաղ
10.	»	Թափադոլակ (Արևիկ)	Նորեկ
11.	Լոռի-Փամբակի	Վորոնցովկա (Կալինինո)	Բեղնոտա
12.	»	Միխայլովկա (Կրասնոսելսկ)	Կրեստյանսկայա կուլտուրա

Հանրապետության կոլտնտեսային շարժման այս առաջին ծիծեռնակներն ամեն տեսակի օգնության և խրախուսանքի էին արժանանում ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական կուսակցական և սովետական մարմինների կողմից։ 1928 թ. գարնանը գրեթե բոլոր գավառներում սկսում են կոլտնտեսություններ կազմակերպվել և հաճախ այնպիսի արագությամբ, որ Հայգյուղկոոպը չէր հասցնում հաստատել դրանք։ 1928 թ. ապրիլի 1-ին արդեն կար 54 կոլտնտեսություն (4 կոմունա, 50 արտել), որոնցում ընդգրկված էր 975 տնտեսություն (չքավորները կազմում էին 74%, միջակները՝ 21,9, բատրակները՝ 4,1%)[95]։ Դրանք բավականին թույլ և սակավանդամ կոլտնտեսություններ էին, որոնցում հիմնականում միավորված էին հողն ու պապենական գործիքները։ Դեռևս չկար աշխատանքների կազմակերպման ու վարձատրության կայուն կարգ։ Դա, փաստորեն, որոնումների շրջան էր, երբ կոլտնտեսային կարգը հարստանալով կոնկրետ փորձով՝ ուղի էր հարթում հետագա առաջընթացի համար։

Կոլտնտեսային շինարարության ծավալման և նրա առջև կանգնած խնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1928 թ. նոյեմբերին Երևանում կայացած կոլեկտիվ տնտեսությունների I համագումարը։ Այն ժամանակ Հանրապետությունում մոտ 80 կոլտնտեսություն կար, որտեղ ընդգրկվածների 75,6%-ը չքավորներ էին, 18,1%-ը՝ միջակներ, 5,8%-ը՝ բատրակներ և 0,3%-ը՝ ունևորներ[96]։

Այսպիսով, կոոպերացիայի պարզագույն ձևերի արմատավորմամբ գյուղացիությունն աստիճանաբար սկսեց համոզվել խոշոր տնտեսությունների առավելությունների մեջ։ Կոոպերացիան նպաստելով գյու-

---

95 «Խորհրդային Հայաստան», 26 հունիսի, 1928։

96 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 42, ց. 1, գ. 110, թ. 6—7։

ղատնտեսության վերականգնմանը, միաժամանակ կարևոր դեր խաղաց գյուղացիության սոցիալիզմի ոգով վերադաստիարակելու գործում։

Նոր տնտեսական քաղաքականությունը զարգացման անսպառ հնարավորություններ տվեց ինչպես գյուղի, այնպես էլ քաղաքի մանր արտադրողներին։ Սակայն պրոլետարիատի դիկտատուրայի այդ քաղաքականությունը չէր կենսագործվում ինքնանպատակ՝ հանուն մանր արտադրողի ամբողջության։ Դա նրա երազանքը չէր։ Մանր արտադրության տարերքը որոշ չափով կարգավորելու, տնտեսության զարգացումը հատատուն հիմքերի վրա դնելու և դեպի սոցիալիզմ կողմնորոշվելու խնդրում, ինչպես նշվեց, անգնահատելի էր կոոպերացիայի դերը։

Սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիայի հետ միասին նեպի պայմաններում բավականին մեծ էր նաև արհեստագործական կոոպերացիայի դերը, որը լայնորեն տարածված էր ինչպես գյուղական վայրերում, այնպես էլ քաղաքում։ Անշուշտ, դրան նպաստում էր որակյալ մասնագետների ու հումքի առատությունը, ինչպես նաև արդյունաբերության զարգացման ցածր մակարդակը։ Մանր արհեստագործության զարգացման վրա բարերար ազդեցություն ունեցավ նոր տնտեսական քաղաքականությունը։ Նեպը խոշոր արտոնություններ սահմանեց արհեստագործության զարգացման համար, ամեն կերպ խրախուսելով մանր արհեստավորների կոոպերացումը։ Դրան էր ուղղված Հայաստանի Ժողկոմխորհի 1921 թ. օգոստոսի 10-ի դեկրետը[97], որով հանրապետության կառավարությունը արհեստագործության զարգացումը խրախուսելով հանդերձ, վճռական միջոցառումներ էր նշում արհեստավորների նեպմանական ձգտումները սահմանափակելու համար։

Վիճվարչության տվյալներով 1924 թ. Հայաստանում գործել է արհեստագործական 846 մանր ձեռնարկություն, որից 594-ը՝ գյուղական վայրերում։ Այդ ձեռնարկություններում աշխատում էր 1070 մարդ[98]։

Մանր ապրանքային արհեստագործության տեղաբաշխման ուսումնասիրությունը վկայում է, որ մասնագիտացման հիմքը հիմնականում տեղական կարիքները բավարարելու համար տեղական հումքի վերամշակումն էր[99]։ Հայաստանում առավել լայնորեն տարածված տնայնագործական արհեստներից էին բրուտագործությունը, բամբակի ու բրդի մշակումը, կաշեգործությունը և մետաղամշակությունը։

Բրուտագործությունը լայնորեն տարածված էր Լենինականի, Դիլի-

97 «ՀՍՖՀ դեկրետների և որոշումների ժողովածու», էջմիածին, 1921, էջ 10։

98 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 19, գ. 1, թ. 3։

99 Նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1295, թ. 10։

ջանի, Լոռի-Փամբակի գավառներում։ Դրա խոշոր կենտրոններից էր Յուվա (Շահումյան) գյուղը։ Բամբակի և բրդի մշակումը տարածված էր Լոռի-Փամբակի, Ջանդեզուրի, Նոր Բայազետի, Դարալագյազի, Լենինականի գավառներում։ Սրևանում գործում էին շուրջ 70 արհեստանոց և երկու արտել[100]։ Փայտամշակման արհեստագործությունը, բնականաբար, տարածված էր հանրապետության հյուսիս-արևելյան անտառապատ գոտում։ Դրա հիմնական կենտրոնը Դիլիջանի գավառն էր։ Մյուս կարևոր արհեստագործական ճյուղը կաշեգործությունն էր։ 1925 թ. կար շուրջ 350 կաշեգործական արհեստանոց, որտեղ բավականին պարզունակ եղանակով և ծանր պայմաններում կաշի էին մշակում և կոշիկ արտադրում։ Մետաղագործությունը նույնպես հիմնականում տեղական կարիքներն էր բավարարում։ 1925 թ. հանրապետությունում կար 386 մետաղամշակման արհեստագործական ձեռնարկություն (դարբնոց, վերանորոգման արհեստանոց և այլն), յուրաքանչյուրում 4—6 բանվոր[101]։ Դրանք մեծ դեր էին խաղում արտադրության միջոցներ և կենցաղային առարկաներ արտադրելու գործում։ Երևանի «Վան» և «Վասպուրական» ընկերություններում համախմբվել էին մի քանի տասնյակ ոսկերիչներ, որոնց գործունեությունը բավականին դժվարությունների հետ էր կապված (առաջին հերթին հումքի պակաս)։

Կային նաև այլ արհեստներ, որոնց կոոպերացումը կարևոր նշանակություն ուներ ժողովրդական տնտեսության զարգացման և աշխատավորության կարիքները բավարարելու համար։ Այդ խնդիրները դրվեցին Հայտնարկոոպի վրա, որը հիմնականում զբաղվում էր արհեստագործական արտելներին հումք մատակարարելու և դրանց արտադրանքն իրացնելու գործով։ Մինչև 1927 թ. մայիսը Հայտնարկոոպը կազմակերպել էր 17 արտել։ Այսպիսով, դրանց ընդհանուր թիվը հասել էր 38-ի՝ շուրջ 500 արհեստավորով։ Այդ արտելների վնասով չաշխատելը վկայում էր դրանց զարգացման լայն հնարավորությունների մասին։

Հայտնարկոոպի կազմակերպական աշխատանքները նոր թափ ստացան 1927 թ. հետո։ Եթե 1928 թ. հունվարին Հայաստանում կար արհեստագործական 45 կոոպերատիվ (720 անդամով), ապա նույն թվականի հուլիսին՝ 66 արտել (շուրջ 1500 անդամով), իսկ 1929 թ.՝ արտելներում ընդգրկված արհեստավորների թիվը հասավ 6000-ի[102]։

---

100 Նույն տեղում, թ. 29։

101 Նույն տեղում, ֆ. 163, ց. 1, գ. 1278, թ. 45։

102 «Խորհրդային Հայաստան», 11 մայիսի, 1930։

Սակայն արհեստագործական արտելների կազմակերպումը դանդաղ էր ընթանում։ Արհեստավորների ղգալի մասը արտելներից դուրս էին մնացել և աշխատում էին միայնակ, որի հետևանքով նրանց արտադրանքը մեծ մասամբ ընկնում էր առևտրականների ձեռքը։ Վիճվարչության տվյալներով՝ 1928 թ. Հայաստանում կար 28977 արհեստավոր։ Դրանցից շուկայի համար աշխատում էր 18966 մարդ (գյուղական վայրերում՝ 12594, քաղաքներում՝ 6372 արհեստավոր)։ Կոոպերատիվների մեջ ընդգրկված էր նրանց սոսկ 15,8%-ը[103]։ Բացի այդ, արհեստավորների մի ղգալի մասը գաղտնի էր աշխատում և փաստորեն հաշվառումից դուրս էր։

Ի տարբերություն Միության այլ հանրապետությունների, Հայաստանում արհեստագործական արդյունաբերությունը հիմնականում տարածված էր գյուղական վայրերում։ 1929 թ. հաշվառման ենթարկված 29161 արհեստագործներից գյուղական վայրերում աշխատում էին 21578-ը և տալիս էին արհեստագործական արտադրության հիմնական մասը[104]։

Հանրապետությունում արհեստագործական արդյունաբերության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ ժողկոմխորհի 1929 թ. մայիսի 10-ի որոշումը, որով արտելներում աշխատող արհեստագործները բանվորներին հավասար իրավունքներ էին ստանում։ Նրանց աշխատանքային ստաժը բանվորական էր համարվում։ Այդ որոշումը բարերար ազդեցություն ունեցավ արհեստագործական կոոպերացիայի զարգացման վրա։ 1930 թ. սկզբներին արհեստագործական արտադրական միավորների թիվը հասել էր 18107-ի, որտեղ ընդգրկված էր 30146 մարդ (գյուղական վայրերում 14331 արտադրական միավոր՝ 22241 բանվորով)։ Հայտնարկոոպի արտելների թիվը հասել էր 102-ի[105]։ Ինչպես տեսնում ենք, Հայաստանի սովետական իշխանությունը հետևողաբար կենսագործելով Լենինի սկզբունքները, բազմակողմանի օգնություն էր ցույց տալիս և ամեն կերպ խրախուսում արհեստագործական արդյունաբերության զարգացումն ու կոոպերացումը։

Այսպիսով, լենինյան կոոպերատիվ պլանը նոր տնտեսական քաղաքականության կենսագործման պայմաններում սովետական իշխանության ձեռքին ծառայեց որպես հզոր միջոց՝ գյուղի և քաղաքի մանր ար-

---

103 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 11, գ. 159, թ. 6։

104 Նույն տեղում, թ. 5։

105 Նույն տեղում, ց. 17, գ. 141, թ. 20։

տադրողներին միավորելու և կապիտալիստական տարրերի դեմ կազմակերպված պայքար մղելու համար։ Այն կարևոր դեր խաղաց մանր արտադրական անարխիան որոշ չափով կարգավորելու, ինչպես նաև աշխատավորության սոցիալիստական վերադաստիարակության գործում։ Կոոպերատիվ միավորումները կարևոր հիմք հանդիսացան հանրապետության սոցիալիստական արդյունաբերության զարգացման համար և նախապատրաստեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումը նոր, լայն հնարավորություններ տվեց նաև առևտրական կոոպերացիայի զարգացմանը, որպեսզի այն կապիտալիզմի կցորդ լինելուց վերածի հասարակության վերակառուցման գործիքի։ Միայն «ռազմական կոմունիզմի» կարճատև շրջանում, երբ արգելված էր ամեն տեսակի առևտուրը և չէր խրախուսվում ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը, կոոպերացիան հարկադրված էր բավարարվել եղած մթերքների ու ապրանքների բաշխման պարզունակ դերով։ Անդրադառնալով «ռազմական կոմունիզմի» շրջանում կոոպերացիայի խաղացած դերի գնահատմանը, կուսակցության XIII համագումարն արձանագրեց. «...կոոպերացիան այն ժամանակ իր ապարատի միջոցով պարենբաշխիչի դեր էր կատարում պետության հանձնարարությամբ և այդ աշխատանքում հսկայական աջակցություն է ցույց տվել բանվորական պետության ամրապնդման գործում»[106]։

Կոոպերացիայի դերն ընդհանրապես և սպառողական կոոպերացիայինը մասնավորապես, խոշոր փոփոխությունների ենթարկվեց նէպին անցնելուց հետո[107]։ 1921 թ. նոյեմբերին ՀՍՍՀ Ժողկոմխորհի դեկրետով Հայաստանի սպառողական կոոպերացիան առանձնացվեց պարենային ժողկոմատից, և սկսեց գործել որպես ինքնուրույն միավոր։ Սակայն «ռազմական կոմունիզմի» ժամանակ կիրառվող ապրանքափոխանակության պայմաններում կոոպերացիան փաստորեն ինքնավերացման էր ենթարկվել։ Սպառողական կոոպերացիայից մնացել էր բաշխման կիսավեր ապարատը։ Նէպին անցնելով և կոոպերացիայի ինքնուրույնությունը վերականգնելով անհրաժեշտ էր վիթխարի աշխատանք կատարել մի կողմից քայքայված կազմակերպությունը վերականգնելու,

---

106 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս II, էջ 46։

107 Մանրամասն տե՛ս Գ. Պիճիկյան, նշվ. աշխ., Կ. Կարագյան. Սպառողական կոոպերացիայի ծագումն ու զարգացումը Հայաստանում, Երևան, 1957։

իսկ մյուս կողմից՝ մասսաների մեջ կոոպերացիայի հեղինակությունը բարձրացնելու համար։ Հասկանալի է, որ դա հնարավոր էր կատարել միայն պետության կողմից բազմակողմանի օգնություն ստանալու դեպքում։ Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելուց հետո կոոպերացիան իրավունք ստացավ (1921 թ. ապրիլից) մթերումներ ու գնումներ կազմակերպելու, ինչպես նաև արտադրությամբ զբաղվելու[108]։ Դա նրա ինքնուրույնությունն ու հեղինակությունը վերականգնելու լավագույն միջոցն էր։ Բացի այդ, նեպին անցնելուց հետո առևտրին սիրապահելը օրակարգի հարց էր դարձել։ Այժմ արդեն կոոպերացիան պետությունից ստանալով բազմակողմանի օգնություն և աջակցություն, շուկայում պայքար էր մղում կապիտալիստական տարրերին շուկայից դուրս մղելու համար։ 1923—1924 թթ. հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության մեջ պետական առևտրի տեսակարար կշիռը կազմում էր 7,7%, կոոպերատիվ առևտրինը՝ 30,8% և մասնավորինը՝ 61,5%[109]։ Այստեղից էլ այն հատուկ ուշադրությունը, որ դարձվում էր սպառողական կոոպերացիայի ամրապնդման վրա, որը, փաստորեն, պետք է տնտեսական ճիշտ փոխհարաբերություններ սահմաններ բանվոր դասակարգի և գյուղացիության միջև։ Կոոպերացիան կարող էր տնտեսական հարաբերությունների մեջ մտնել բոլոր հիմնարկների հետ, գնել, մթերել և վերամշակել մթերքներն ու պատրաստի արտադրանքը վաճառքի հանել։ Ինչպես տեսնում ենք, ապրանքներ բաժանողի պարզունակ աշխատանքներից կոոպերացիան նեպի շրջանում անցնում է առևտրի ու արտադրության կազմակերպման բավականին բարդ աշխատանքներին և միաժամանակ մրցության մեջ մտնում մասնավոր առևտրի ու ազատ շուկայի հետ, ջանում նրանց արտամղել ապրանքաշրջանառության ոլորտից։ Իսկ դա հեշտ խնդիր չէր։ Հայաստանի գյուղական վայրերում բավականին ուժեղ էր մասնավոր առևտուրը[110]։ Թե որքան մեծ էր նեպի պայմաններում առևտրի կազմակերպման դերը, երևում է նրանից, որ 1922 թ. հունվարի վերջերին գումարված ՀՍՍՀ սովետների I համագումարում, ի թիվս այլ հարցերի, լսվեց նաև Հայկոոպի վարչության հաշվետվությունը և միջոցառումներ մշակվեցին նրա աշխատանքները բարելավելու ուղղությամբ։ Արդեն նորմալ հունի մեջ

---

108 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 102, ց. 1, գ. 261, թ. 32։

109 «Սովետական առևտրի զարգացումը Հայաստանում», Երևան, 1961, էջ 20։

110 «Համահայաստանյան կոոպերատիվ առաջին համագումարը», Երևան, 1923, էջ 28։

էր մտնում Հանրապետության տնտեսական կյանքը, որն այնքան անհրաժեշտ էր բազմիցս ավերված ու կողոպտված կոոպերատիվների վերականգնման համար: Համագումարից հետո, 1922 թ. սկսվեցին կոոպերացիայի վերակառուցման աշխատանքները և 147 տեղական կոոպերատիվ կազմակերպությունների փոխարեն ստեղծվեց 62 կոոպերատիվ: Իսկ գավառային 9 բաժանմունքները, որոնք իրենց գոյության սեղմ ժամկետում վարկաբեկվել էին աշխատավորության աչքում՝ վերացվեցին: Տնտեսական կյանքի ակտիվացման հետ մեկտեղ, հատկապես քաղաքային վայրերում ուժեղացող շուկայի ճնշումը որոշ չափով մեղմացնելու նպատակով կազմակերպվեցին նաև մի քանի բանկոոպներ:

Մինչև 1922 թ. դեկտեմբերը Հանրապետությունում գոյություն ունեին բանվորական և համաքաղաքացիական կոոպերատիվներ, որոնք շուտով միավորվեցին: 1922 թ. կեսերին կազմակերպվեց Պետառը, որը կենտրոնացրեց պետական առևտրի բոլոր կետերը և բազմակողմանի օգնություն ստանալով, աշխույժ գործունեություն ծավալեց: Հասկանալի է, որ Պետառի կազմակերպումով զգալիորեն նվազեց կոոպերացիային բաց թողնվող ապրանքների քանակը, որը չէր կարող բացասաբար չանդրադառնալ նրա գործունեության վրա[111]:

Մանր տնտեսատեր գյուղացիության շահագրգռվածության բարձրացման քաղաքականությունը, որը հետևողականորեն կիրառվում էր նէպի տարիներին, սեղմ ժամկետում դրական արդյունք տվեց: Արդեն 1924/25 տնտեսական տարում, ըստ բորսային ապրանքների Երևան և Լենինական քաղաքների ապրանքաշրջանառության նախորդ տարվա համեմատությամբ աճել էր ավելի քան 4 անգամ: Սա վկայում է և՛ արտադրության բարձրացման, և՛ բնակչության գնողունակության աճի մասին: Անշուշտ, դրան նպաստեց նաև գների քաղաքականության մեջ թույլ տրված սխալների ուղղումը: 1924 թ. հունվարից Հայաստանում սկսեց գործել ներքին առևտրի հատուկ հանձնաժողով, որն զբաղված էր արդյունաբերական ապրանքների գների իջեցմամբ և գյուղատնտեսական մթերքների գների որոշ չափով բարձրացմամբ[112]: Բացի այդ առևտրի, ապրանքադրամային հարաբերությունների ծավալման վրա բարերար ազդեցություն ունեցավ դրամային կուրսի կայունացումը: ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1924 թ. մարտի 7-ի՝ «Դրամային ռեֆորմի մասին» դիմումի մեջ արդարացիորեն նշվում է, որ «...դրամային ռեֆորմը մեր

111 «Խորհրդային Հայաստան», 4 հոկտեմբերի, 1924:

112 Նույն տեղում, 24 մարտի, 1928:

տնտեսական ու քաղաքական զարգացման շրջադարձային կետն է... Սովետները դրամային պատ էին առաջացրել գյուղի և քաղաքի միջև, իսկ կայուն դրամը խաղալու է նրանց միջև կամուրջի դեր»[113]: 1923 թ. հունվարից շրջանառության մեջ մտցվեցին անդրկովկասյան նոր դրամները, իսկ մեկ տարի անց՝ 1924 թ., ՍՍՀՄ դրամային նշանները: Դա խոշոր հարված հասցրեց մասնավոր առևտրին:

Նէպի առաջին տարիներին առևտրից բացի կոոպերացիան զբաղվում էր նաև արդյունաբերական գործունեությամբ: Հայկոոպը կազմակերպել էր ծխախոտի, կոշիկի արտադրություն, փայտամշակում (Շամշադին), էլեկտրաաղացներ (Ալեքսոլում) և այլն: Հայկոոպի Երևանի օճառի գործարանը ամենամեծն էր Հայաստանում: Հայկոոպը զգալի դեր էր խաղում նաև գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելու գործում, գնումներ կատարելով ոչ միայն երկրի ներսում այլև նրա սահմաններից դուրս (Էնզելի, Բավրիդ):

Ինչպես տեսնում ենք, նէպի պայմաններում կոոպերացիան նեղ, առևտրական գործունեությունից անցել էր նաև արտադրական ակտիվ գործունեության: Բացի այդ, ինչպես արդարացի կերպով նշվել է ՀՍՍՀ սովետների I համագումարում, կոոպերացիան կոչված էր օգնելու գյուղացիության սոցիալիստական վերադաստիարակության գործին: Մեծ էր նրա դերը «...անհատական հոգեբանությամբ տոգորված մանր ու միկրոսացած արտադրողին ապագա սոցիալիստական տնտեսության գիրկը մղելու և նրա մեջ կոլեկտիվ ոգի ու հարաբերություններ մշակելու գործում»[114]: Հետագայում՝ 1923 թ., խոսելով կոոպերացիայի դերի մասին, ղեկավարվելով լենինյան կոոպերատիվ պլանի հիմնական դրույթներով, Ալ. Մյասնիկյանը գրել է. «...Մասնավոր առևտրին, սպեկուլյացիային կռիվ հայտարարող ու աշխատավորավարի, էժան գներով առևտուր անող կոոպերատիվների և գյուղի, գյուղատնտեսության ծախքերը թեթևացնող ու գործով գյուղացուն համայնավարության պատրաստող կոոպերացիայի գումարը՝ դա իմիջ սոցիալիզմն է, որ սկսել է քայլել ու նորոգել արդի գյուղը, մեր դաշտերն ու տափարակները»[115]: Փաստորեն մինչև 1923 թ. կեսերը Հայաստանի կոոպերացիան նէպի պահանջներին համապատասխան ավարտել էր իր նախապատրաստա-

---

113 «Директивы КПСС и Советского правительства», т. I, стр. 446.

114 «ՀՍՍՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա համագումար», Երևան, 1922, էջ 121:

115 «Մարտակոչ», 29 սեպտեմբերի, 1923:

կան և վերակազմակերպչական աշխատանքները։ Այդ շրջանում փոխվել էր առևտրի սոցիալական դերն ու նշանակությունը։ Եթե նէպով առևտուրը ազատություն էր մտցվում, դա դեռևս չէր նշանակում գների տարերային խաղի թագավորության հաստատում երկրում։ Ընդհակառակը, իր նկատի ունենալով հնարավոր անարխիան, ենթադրվում էր պետության կարգավորիչ դերի ուժեղացում, որն իր հարկային ու վարկային քաղաքականությամբ, և հատկապես կոոպերատիվ ու պետական առևտրի ուժեղացմամբ կակտիվացներ պայքարը մասնավորի դեմ։ «Մենք մասնավոր առևտուրը չենք խափանում,— գրել է «Խորհրդային Հայաստանը»,— բայց նրա դեմ առաջադրում ենք տնտեսական կռիվ, մասնավոր, շահադիտական ու անառողջ առևտրին հակադրում ենք կոոպերացիա»[116]։

Հանրապետության կոոպերատիվ տնտեսությունների ամրապնդման ու հետագա զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի կոոպերատիվների I համագումարը, որը հրավիրվեց Երևանում՝ 1923 թ. մայիսին։ Բացելով համագումարը, Հայկոոպի փոխնախագահ Ս. Տեր-Մինասյանը նշեց, որ իրենց վարչությունը մի նշանակովի մարմին է եղել, որովհետև «...չունեինք կոոպերացիա, խոսքի ամենալայն իմաստով, այլ Հայաստանում գոյություն ունեին մանր կոոպերատիվ ապարատներ, որոնք կատարում էին պետական հայթայթման գործը»[117]։ Մինչև նէպի կենսագործումը այլ խնդիրներ էին դրված կոոպերացիայի առջև։ «...Զինվորական կոմունիզմի շրջանում,—համագումարում նշեց Գ. Պիճիկյանը,— կոոպերացիան պարենավորման կոմիսարիատի ձեռքում մի բաշխիչ ապարատ դարձավ. ամբողջ ժողովուրդը կազմակերպվեց կոոպերատիվների մեջ։ Այդ շրջանում կոոպերացիան ընդգրկում էր ամբողջ հասարակությունը, բաշխելով նրան պետությունից ստացած իր բոլոր միջոցները»[118]։

Համագումարի որոշման մեջ նշված է, որ բոլոր գավառներում, քաղաքներում ու գյուղերում ստեղծվում են միասկոոպներ (բանվորական շրջաններում՝ բանկոոպներ, գյուղական վայրերում՝ գյուղկոոպներ)։ 1923 թ. վերջերին, վերացնելով անգործության մատնված կոոպերացիայի տեղական բաժանմունքները, կազմակերպվեցին 10 միասկոոպներ և 37 գյուղկոոպներ։ Միասկոոպների մեջ ձուլվեցին մինչև այդ

---

116 «Խորհրդային Հայաստան», 9 սեպտեմբերի, 1922։

117 «Համահայաստանյան կոոպերատիվ առաջին համագումարը», էջ 3։

118 Նույն տեղում, էջ 8։

գոյություն ունեցող բանվորական և համաքաղաքային կոոպերացիաները։ Այդ առթիվ որոշման մեջ նշվեց. «...գավառային բաժանմունքների լիկվիդացիայով Հայկոոպն աղատվեց անկենդան ու անարդյունավետ, բայց ահագին գումարներ կլանող հիմնարկներից»[119]։ Վերացվեցին նաև նրա արտասահմանյան գրասենյակները։ Հանրապետության կոոպերատիվների I համագումարը հատուկ ընդգծեց, որ Հայկոոպի հիմնական խնդիրն է մանրածախ առևտրի ծավալումը, որպեսզի հնարավոր լինի ինչպես հարկն է պայքարել մասնավոր առևտրականի դեմ (որը բավականին ուժեղ էր այդ բնագավառում)։ Փաստորեն դրանով համագումարն ընդգծում էր կոոպերացիայի քաղաքական դերը. այն կոչված էր ոչ միայն առևտուր ծավալելու, այլև ակտիվորեն պայքարելու մասնավոր կապիտալիզմն ապրանքաշրջանառությունից արտամղելու համար։ «...Առևտրի բնագավառում կոոպերացիայի կարևորագույն խնդիրն է,— նշվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1924 թ. փետրվարյան ընդլայնված պլենումում,— սառնի բջիջների ցանցի ընդլայնումը գյուղական շուկան լայնորեն ընդգրկելու համար, նպատակ դնելով մանրածախ առևտրից հետևողաբար արտամղել գյուղական միջնորդին՝ առևտրականին»[120]։ Կարևոր էր նաև այն, որ համագումարը նպատակահարմար գտավ սպառողական կոոպերացիայի հետ մեկտեղ արմատավորել նաև վարկային և գյուղատնտեսական (արտադրական) կոոպերացիան։ Վերջինիս ֆունկցիաները փաստորեն իր վրա էր վերցրել սպառողական կոոպերացիան։ «Սպառողական կոոպերացիան թե՛ Ռուսաստանում և թե մեզանում իրերի բնական թելադրանքով իր վրա էր վերցրել գյուղատնտեսական կոոպերացիայի ֆունկցիաները»,— նշվեց համագումարում[121]։

Առաջին համագումարից հետո, որին մասնակցում էին 27 կոոպերատիվների ներկայացուցիչները, նոր թափով ուժեղացավ կոոպերատիվ աշխատանքը։ Նախ կրճատվեց Հայկոոպի բավական ուռճացած ապարատը՝ 210 աշխատողից թողնվեց 40-ը[122]։ Դրանով այն ավելի ճկուն դարձավ և ավելի օպերատիվ ղեկավարությամբ կարողացավ լուծել նէպի առաջադրած խնդիրները։

Հայաստանի կոոպերացիայի զարգացման պատմության մեջ բնկման տարի հանդիսացավ 1924 թ.։ Մինչև այդ բոլոր տեսակի կոոպերա-

---

119 Նույն տեղում, էջ 109։

120 ՄԼԻ ՀՄԱ ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 8։

121 «Համահայաստանյան կոոպերատիվ առաջին համագումարը», էջ 14։

122 Նույն տեղում, էջ 55։

տիվներում ընդգրկված էր գյուղացիության միայն 4%-ը[123]։ Գյուղացիությունը դեռևս չէր ձգտում դեպի կոոպերացիան, որովհետև նրա միջոցով չէր կարողանում ձեռք բերել իրեն անհրաժեշտ ապրանքները և հաճախ էր դիմում խորամանկ ու ճկուն մասնավորի «օգնությանը»։ Եթե գյուղացու սպառողական պահանջները բավարարելու համար միջին հաշվով պահանջվում էր տարեկան 50 ռուբլու ապրանք, դրված է փաստաթղթերից մեկում, ապա նա կոոպերացիայի միջոցով ձեռք է բերում հազիվ 5 ռուբլու ապրանք, որովհետև նրա ուղածը չկար[124]։ Կոոպերացիայի մասին 1923 թ. Լոռուց ներկայացրած զեկուցագրերից մեկում նշվում է, որ Օձունի կոոպերատիվը ապրանքը ձեռք է բերում մասնավորից և ինքն էլ իր հերթին ավելի թանկ է վաճառում քան սպեկուլյանտները[125]։ Ալեքսոլի (Լենինական) կոոպերատիվների զավառային համագումարը (1923 թ.) հարկադրված արձանագրեց. «գյուղացիությունը հեռու է փախչում կոոպերատիվներից, որովհետև ապրանքներն ավելի թանկ են, քան շուկայում»[126]։ Ուշագրավ է, որ մինչև 1924 թ. կեսերը կոոպերացիային ապրանքներ մատակարարողների շարքում առաջին տեղում էին կոոպերատիվ արդյունաբերական մատակարարումները (հիմնականում մանուֆակտուրա), երկրորդ տեղում՝ մասնավոր առևտրականները և վերջապես չորրորդ տեղում՝ պետական հիմնարկները[127]։ Հասկանալի է, որ մատակարարման նման եղանակը չէր կարող դրական ազդել կոոպերացիայի աշխատանքների վրա։ Ընդհանրացնելով կոոպերացիայի աշխատանքները, ՀԿ(բ)Կ Կենտկոմի 4-րդ պլենումն արձանագրեց. «Ներկայումս տեսնում ենք, որ գյուղական մասսաները տրրտունջում են կոոպերատիվի աշխատանքներից, որովհետև նրանք չեն կարողանում ռեալիզացիայի ենթարկել գյուղացու մթերքը և փոխարենը նրան ապրանք տալը»[128]։ Փաստաթղթերի և վիճակագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1924 թ. ավելի շատ մասնավոր առևտրական ձեռնարկություններ են քայքայվել, քան ավելացել են կոոպերատիվ հիմնարկները[129]։ Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ չնայած մասնավոր ձեռնարկությունների քանակը նվազել է,

---

123 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 42, ց. 1, գ. 23, թ. 5։

124 Նույն տեղում։

125 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 2, գ. 119, թ. 5։

126 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 131, ց. 2, գ. 19, թ. 80։

127 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 3, գ. 19, թ. 7։

128 Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 5, թ. 69։

129 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1920, թ. 1—5։

նրանց ապրանքաշրջանառությունն ավելացել է։ Մեր Հանրապետությունում մասնավոր առևտուրը հիմնականում երկու աղբյուրից էր սնվում՝ տեղական, պետական առևտրից և արտաքին շուկայից։ Պետական առևտուրը հիմնականում մատակարարում էր արդյունաբերական արտադրանք՝ մանուֆակտուրա, շաքար, նպարեղեն, նավթ, օճառ, լուցկի և այլն։ Ընդ որում, առևտրականներին ապրանք էր բաց թողնվում ավելի բարձր գներով քան կոոպերացիային. եթե կոոպերատիվ ձեռնարկություններին բաց թողնվող ապրանքներին վերադիր էր արվում 3—5%-ի սահմաններում, ապա մասնավորներին՝ մինչև 10%-ի։ Ինչպես երևում է Անդրպետառի Երևանի բաժանմունքի հաշվետվությունից, մինչև 1926 թ. վերջերն արտասահման ուղարկվող ապրանքների մեծերումը նույնպես կատարվում էր մասնավոր տեսուչների կամ գործավարների կողմից, որոնց ավանդավորում էին դրամով և մանուֆակտուրայով։ Սակայն տեղերում կոոպերացիայի ամրապնդման հետ մեկտեղ այդ աշխատանքները դրվեցին կոոպերատիվների վրա, և ավելի բարձր արդյունք ստացվեց[130]։

1924 թ. կոոպերացիան աճեց քանակապես և որակապես։ Այն «...սկսեց ընդգրկել կյանքի բոլոր ճյուղերը, իջավ մինչև աշակերտական նստարանները, մինչև հաշմանդամների բնակարանները ու ծավալվեց, տարածվեց այնպիսի տեղեր, որոնք մինչ այդ կոոպերացիայի մասին միայն հեռվից հեռու էին իմացել»[131]։ Կոոպերատիվ առևտրի շրջանառությունը 1923/24 տնտեսական տարվա առաջին կիսամյակի 948,9 հազար ռուբլուց երկրորդ կիսամյակում հասավ 3206,7 հազար ռուբլու։ Դա նշանակում է, որ եթե առաջին կիսամյակում հանրապետության ամբողջ առևտրի մեջ կոոպերատիվ առևտրի տեսակարար կշիռը 17% էր, ապա երկրորդ կիսամյակում այն հասավ 75%-ի։ Առանձին գավառներ զարգացման ավելի բարձր ցուցանիշներ ունեին[132]։

Հայաստանում բուռն վերելք ապրեցին սպառողկոոպերացիայի երեք ձև. բանկոոպը, խառը կոոպերատիվները և գյուղկոոպը։ Բանվորական կոոպերացիաները հիմնականում կազմակերպվում էին Երևանում ու Լենինականում, որոնց անդամների թիվը 1925 թ. ապրիլին հասավ 9,1 հազարի։ Բանկոոպներն այդ ժամանակ ունեին 45 ձեռնարկություն՝

130 Նույն տեղում, ֆ. 124, ց. 1, գ. 81, թ. 2—3։

131 «Խորհրդային Հայաստան», 3 հուլիսի, 1924։

132 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1920, թ. 8—12։

88 հազարից ավելի դրամագլխով։ 1924 թ. հոկտեմբերից մինչև 1925 թ. ապրիլը՝ կես տարվա ընթացքում, նրանց դրամագլուխն աճեց 30%-ով։ Դա հիմնականում կապված էր արդյունաբերության վերականգնման ու վերակառուցման հետ, որին արդեն ձեռնամուխ է եղել հանրապետության կառավարությունը։

Խառը տիպի կոոպերատիվներն այն սպառակոոպներն էին, որոնք միաժամանակ սպասարկում էին թե՛ քաղաքի և թե գյուղի աշխատավորությանը։ Այս տիպի կոոպերատիվները լայն զարգացում ունեցան Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Էջմիածնի, Նոր-Բայազետի և Գորիսի շրջաններում։ Ա.ո 1925 թ. ապրիլի մեկը խառը կոոպերացիաներն ունեին 5 հազարից ավելի անդամ, 36 ձեռնարկություն, և հիմնական դրամագլուխը հասնում էր շուրջ 45 հազարի։

Ամենալայն տարածում գտածը գյուղական սպառակոոպերացիան էր, որի ննթակայության տակ եղած ձեռնարկությունների թիվը 1924 թ. հոկտեմբերից մինչև 1925 թ. ապրիլը 106-ից աճել էր 173-ի, անդամների թիվը՝ 14,5 հազարից 25,9 հազարի, իսկ հիմնական դրամագլուխը՝ 32,4 հազարից 83,2 հազար ռուբլու[133]։ Այսպիսի աճ կոոպերացիայի ոչ մի տեսակ չէր ունեցել նախորդ տարիներին։

Կոոպերացիայի այդ հիմնական ձևերից բացի կային նաև Հայկոոպին չանդամագրված կոոպերացիաներ, ինչպես օրինակ, Զակոոպը (երկաթգծի աշխատողների), Բայեցը (սահմանապահ զորքերի), աշակերտական և այլն։ Վերջիններիս թիվը 1925 թ. ապրիլին հասնում էր 87-ի՝ շուրջ 5000 անդամով[134]։ Դրանք հիմնականում զբաղված էին զրենական պիտույքների վաճառքով։

Կուսակցական և սովետական մարմինների ղեկավարությամբ անընդհատ ընդլայնելով իր ցանցը և ավելացնելով անդամների թիվը, Հայկոոպը հաջողությամբ շուկայից դուրս էր մղում մասնավոր առևտուրը։ Մանրածախ առևտուրը, որտեղ մասնավորը բավականին ամուր էր, ինչպես ցույց են տալիս 120 էջի աղյուսակի տվյալները, նույնպես սկսել էր իր դիրքերը զիջել կոոպերատիվ առևտրին[135]։

Եթե մինչև 1923/24 տնտեսական տարին մոտ կրկնակի անգամ մասնավոր առևտրի տեսակարար կշիռը բարձր էր կոոպերատիվ առևտրից, ապա հաջորդ տարում արդեն նրանք հավասարվում են, որից

---

133 «Խորհրդային Հայաստան», 3 հուլիսի, 1925։

134 «Սովետական առևտրի զարգացումը Հայաստանում», էջ 80։

135 «Խորհրդային Հայաստան», 6 հունվարի, 1928։

հետո կոոպերատիվ սեկտորը սկսում է առաջ անցնել՝ մասնավորի սահմանափակումից ստիճանաբար դուրս մղելու կուրս վերցնելով։ Պրոլետարիատի դիկտատուրան կայուն տիրապետություն է հաստատում նաև այս բնագավառում։

Տնտեսական տարին	Կոոպերատիվ առևտուրը (տոկոսներով)	Մասնավոր առևտուրը (տոկոսներով)
1923/24	30,8	61,5
1924/25	44,9	45,7
1925/26	49,0	39,2
1926/27	51,6	36*

Նէպի կենսագործմամբ մինչև այդ թաքնված չարչիներն ու առևտրականները մասսայաբար ասպարեզ նետվեցին և ազատ մրցություն սկսեցին պետական և կոոպերատիվ առևտրի հետ։ Ի դեպ, Հայաստանում բավականին շատ էին այդ մանր միջնորդները, որոնք կարծես թե փոխարինելու էին դուրս նկել նէպի զոդման բազաբականությանը։ «...Դեկավար սկզբունքներից մեկը նէպի օրով պիտի լինի գյուղի և քաղաքի մեջ ցանկալի կապի ստեղծումը,— գրում է «խորհրդային Հայաստանը»,—ու բոլոր տեսակի «միջնորդների» վերացումը, որոնք առանձնապես շատ են Հայաստանում և վխտում են մեր բոլոր գավառներում ու գյուղերում, իրենց «կապը» ստեղծելով գյուղի և քաղաքի միջև»[136]։

«Մանրգյուղացիական տնտեսության ցաքուցրիվ վիճակը,— արձանագրեց կուսակցության XIII համագումարը,— անխուսափելի է դարձնում, որ նրան շատ զգալի չափով ապասարկի մասնավոր առևտրական ապարատը»[137]։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ նէպով թույլատրված մասնավոր կապիտալի աշխուժացումը գործողության լայն ասպարեզ գտավ մանրածախ առևտրի բնագավառում, որը վկայում է պետական և կոոպերատիվ առևտրի թուլության մասին։ «Ստեղծվել է հակասություն,— նշվեց համագումարում,— երբ արդյունաբերությունը գտնվում է պետության ձեռքին, իսկ նրա և գյուղացու միջև իբրև միջնորդ հանդես է գալիս մասնավոր առևտուրը»[138]։ Համագումարը գտավ,

* Մնացածը Պետառի տնօրինության տակ էր։

135 «Խորհրդային Հայաստան», 23 սեպտեմբերի, 1924։

137 «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», մաս II, էջ 42։

138 Նույն տեղում, էջ 45։

որ սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիայի միավորումը սխալ է։ Կոոպերացիայի այդ ձևերը իրենց առանձին և շատ կարևոր դերն ունեին խաղալու։ Որոշման մեջ արձանագրվեց, որ գյուղում կոոպերացիայի խնդիրը ոչ միայն այն է, որ գյուղացուն կազմակերպի որպես սպառողի (առևտրի ծավալում) այլև որպես արտադրողի։ «Սխալ են սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիայի միավորման ձգտումները, որ տեղ-տեղ հայտարարել են տեղերում։ Կոոպերացիայի երկու տեսակները միաձուլելու այդ տրամադրություններն ստեղծվում են գլխավորապես այն պատճառով, որ պրակտիկայում բավականաչափ պարզություն չէր մտցվել գյուղում աշխատանքի ձյուղերի բաժանման մեջ կոոպերացիայի մեկ և մյուս տեսակի համար»[139]։ Կուսակցությունը խնդիր էր դնում նաև հատուկ ուշադրություն դարձնել բանվորական կոոպերացիայի ամրապնդման վրա, կազմակերպել նրանց բարձրորակ ապրանքներով ու մթերքներով մատակարարելու գործը. «...բանվորական կոոպերացիայի թույլ կողմը մինչև հիմա հանդիսանում է բանվոր սպառողի դեռևս անբավարար ընդգրկումը և նրա աշխատավարձի թույլ իրացումը, որի մեծ մասն իր ձեռքն է գցում մասնավոր շուկան»[140]։ Դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի բանվորական կոոպերացիան ավելի մատչելի գներով ապրանք վաճառի, քան մասնավորը։ Հետևելով շուկայական տարերքին, բանվորական կոոպերացիան հիմնականում կարողանում էր այդ հարցն ավելի հաջողությամբ լուծել, քան սպառողական կոոպերացիան։ Ստորև համեմատվում են մի շարք ապրանքների Երևանի բանկոոպի և շուկայական գները (կոպեկներով)[141]։

	Շուկայական դինը	Բանկոոպի դինը
Ձուկ (արշինը)	40—45	30
Բյուզ (արշինը)	38—46	29
Սատին (արշինը)	50—55	37
Նավթ (ֆունտը)	8	4
Շաքար (ֆունտը)	50—60	33
Յուղ հալած (ֆունտը)	90	70
Պանիր (ֆունտը)	69	45

139 Նույն տեղում, էջ 49։

140 Նույն տեղում, էջ 51։

141 «Խորհրդային Հայաստան», 2 հոկտեմբերի, 1924։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության վերականգնման հետ մեկտեղ, նէպի պայմաններում ձևավորվող նոր կոոպերացիան, ամրապնդելով ու ընդլայնելով իր ցանցը և պետությունից բազմակողմանի օժանդակություն ստանալով հաջողությամբ էր կատարում մասնավորի գործունեությունը սահմանափակելու և աշխատավորության հիմնական մասն իր շուրջը համախմբելու խնդիրը։

Հանրապետության տնտեսական նվաճումները և առաջին հերթին արդյունաբերության վերականգնման ու վերակառուցման հաջողությունները նոր հիմք հանդիսացան կոոպերատիվ աշխատանքները լայնորեն ծավալելու համար։ Սոցիալիստական արդյունաբերության ձեռք բերած նվաճումների շնորհիվ աստիճանաբար հետին պլան մղվեց Հայկոոպի արտադրական գործունեությունը, որի նշանակությունը խիստ կերպով նվազել էր։ Դա հնարավորություն էր տալիս արտադրական նպատակների համար նախատեսված միջոցները փոխադրել առևտրի բնագավառ և նոր թափ հաղորդել նրա զարգացմանը։ Եթե սկզբնական շրջանում մասնավոր առևտուրը դեռևս որոշ հաջողություններ ուներ, քեկուզ գյուղական շուկայում, ապա հետագայում նէպի հետևողական կենսագործման շնորհիվ արտադրողական հիմնական ուժերի ծավալուն վերակառուցումը հնարավորություն տվեց ավելի ակտիվորեն սահմանափակելու մասնավոր արտադրության և մասնավոր առևտրի գործունեության շրջանակները։ Այդ պայմաններում փոփոխության էին ենթարկվում նաև կոոպերացիայի խնդիրներն ու նրա աշխատանքների գնահատման չափանիշները։ Միջնորդի պարզունակ գործողությունն այլևս նրան չէր բավարարում. այն պիտի ակտիվ պայքար ծավալեր մասնավոր առևտրի դեմ և կազմակերպեր օրավուր աճող բանվոր դասակարգի և արագորեն միջակացող գյուղացիության պահանջների բավարարումը։ Եթե պրոլետարիատի դիկտատուրան ձգտում էր կոոպերացիայի միջոցով գյուղացուն օգնել բարձրացնելու իր անհատական տնտեսությունը, կտրել նրան չարչիներից ու սպեկուլյանտներից, պաշտպանել կուլակի շահագործումից և ամուր դաշն կնքած տանել սոցիալիստական շինարարության հունով, ապա անհրաժեշտ է ընդգծել, որ գյուղացու շահերը, որպես մանր արտադրողի, նույնպես պահանջում էին դաշնակցել բանվոր դասակարգի հետ, առանց որի նա չէր կարող ինչպես հարկն է բարձրացնել իր տնտեսությունը և ավելի շատ եկամուտ ստանալ։ Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում այդ ձգողական ուժը երկկողմանի էր և փոխադարձաբար լրացնող։

Փոփոխված պայմանները ճիշտ հաշվի առնելով իր աշխատանքները վերակառուցեց նաև Հայկոոպը, ձգտելով ավելի լավ բավարարել աշխատավորության պահանջները։ Ուստի զարմանալի չէ, որ անընդհատ ավելանում էին քաղաքի և գյուղի կոոպերատիվ ընկերությունները, ընդլայնվում էր նրանց առևտրական ցանցը, մեծանում ապրանքաշրջանառությունը։ 1925/26 տնտեսական տարում ապրանքաշրջանառության բնագավառում պետական և կոոպերատիվ ընկերությունները տնօրինում էին 16,7%-ը, մասնավորը՝ 83,3%-ը[142]։ Չնայած հանրային սեկտորը դեռևս թույլ էր, սակայն նրա զարգացման տեմպերը բավականին բարձր էին։ Այս շրջանին հատուկ էր այն, որ կոոպերատիվ առևտրի ցանցը քաղաքում որոշ չափով նվազում էր (ուժեղանում էր պետական առևտուրը), իսկ գյուղում այն բավականին դանդաղ էր աճում։ Դրա փոխարեն գյուղում բավականին արագ էր աճում քաղաքից արտամղված մասնավոր առևտուրը։ Ուշագրավ է հետևյալ աղյուսակը (տոկոսներով)[143]։

	1924/25 Տնտեսական տարում		1925/26 Տնտեսական տարում	
	քաղաք	գյուղ	քաղաք	գյուղ
Պետական և կոոպերատիվ առևտուրը	5,4	6,5	5,4	10,2
Մասնավոր առևտուրը	65,3	22,8	51,1	33,3
	100		100	

Ընդ որում, չպետք է մոռանալ, որ մեծածախ ապրանքաշրջանառության մեջ հիմնական իշխողը պետական և կոոպերատիվ առևտուրն էր. 1924/25 տնտեսական տարում նրան ընկնում էր 93,2%-ը, իսկ մասնավորին՝ միայն 6,8%-ը։ Հաջորդ՝ 1925/26 տնտեսական տարում հանրային սեկտորին էր պատկանում 97,8%-ը իսկ մասնավորին՝ 2,3%-ը։ Պատկերն այլ էր մանրածախ առևտրի բնագավառում։ Այստեղ պետական և կոոպերատիվ առևտուրը 1924/25 տնտեսական տարում կազմում էր 46,3, մասնավորը՝ 53,7%-ը։ Հաջորդ տարում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 54,2 և 46,8[144]։ Չնայած կոոպերա-

142 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 43, ց. 1, գ. 15, թ. 169։

143 «Խորհրդային Հայաստան», 20 դեկտեմբերի, 1927։

144 Նույն տեղում, 23 դեկտեմբերի, 1927։

ցիայի բացահայտ աճին, մասնավորը դեռևս բավականին ամուր էր գյուղական մանրածախ առևտրի բնագավառում։

Այդ շրջանում բավականին ուժեղացավ նաև Երևանի և Լենինականի բանկոոպների, ինչպես նաև գործարանային կոոպերատիվների (Ալավերդու՝ «Գորնյակ», Շամլուղի՝ «Հանքափոր», Ղափանի՝ «Սյունիք» և այլն) գործունեությունը։ Երևանի բանկոոպը 1922 թ. ուներ 300 անդամ, 1923 թ.՝ 329, իսկ 1924 թ. հոկտեմբերին՝ 2485 անդամ[145]։ «Երևանի բանկոոպը՝ կոոպերատիվ այն ամենախոշոր կազմակերպությունն է,— գրում էր «Խորհրդային Հայաստանը»,— որն իր վրա է վերցրել Հայաստանի մայրաքաղաքում մասնավոր առևտրի հետ կռվելու մեծ գործը։ Այդ կռիվը վարելու համար բանկոոպը հենվում է իր անդամների, արհմիությունների և վերջապես մեր խորհրդային ամբողջ պետության բարոյական ու նյութական աջակցության վրա»[146]։ Ապրանքաշրջանառությունն ընդհանրապես առևտրական կազմակերպության գործունեության չափանիշն է հանդիսանում։ 1924 թ. հունվարին Երևանի բանկոոպի ապրանքաշրջանառությունը կազմել է 46,5 հազար ռուբլի, փետրվարին՝ 71,3, մարտին՝ 94,8, ապրիլին՝ 137,5, մայիսին՝ 208 և հունիսին՝ 220 հազար ռուբլի[147]։

1920-ական թվականների երկրորդ կեսում, երբ կոոպերացիան թափով ծավալվում էր գյուղական վայրերում, որոշակի փոփոխություններ տեղի ունեցան Հայկոոպի գործունեության մեջ ընդհանրապես։ Հայտնի է, որ սովետական իշխանության վճռական միջոցառումների շնորհիվ մասնավոր կապիտալը դուրս մղվելով արդյունաբերության և մեծածախ առևտրի բնագավառներից, հիմնականում հանգրվանել էր մանրածախ առևտրի մեջ և բավականին ժամանակ հաջողությամբ մրցում էր ինչպես պետական, այնպես էլ կոոպերատիվ առևտրի հետ։ Ժողովրդական տնտեսության վերականգնման և սոցիալիստական տնտեսաձևի ամրապընդման հետ մեկտեղ կոոպերացիան հիմնականում հարձակման անցավ մասնավոր առևտրականներին արտամղելու համար։ Տեղական կուսակցական և սովետական մարմինների բազմակողմանի աջակցության շնորհիվ 1920-ական թվականների վերջերին, երբ ավարտվում էր ուժերի վերախմբավորման շրջանը, մասնավոր առևտուրը հիմնականում

145 Նույն տեղում, 8 փետրվարի, 1925։

146 Նույն տեղում, 2 հոկտեմբերի, 1924։

147 Նույն տեղում։

վերացվեց մանրածախ առևտրի ոլորտից և այստեղ նույնպես հաստատվեց պետական և կոոպերատիվ առևտրի անբաժան տիրապետությունը։

Ահա մանրածախ առևտրի բնագավառում տեղի ունեցած փոփոխությունը։ Մանրածախ ապրանքաշրջանառությունը 1928—1930 թթ. (միլիոն ռուբլիներով)[148]։

	1928	1929	1930
Հանրային սեկտոր	38,5	51,2	78,2
որից			
Պետական առևտուր	7,4	5,2	6,2
Կոոպերատիվ առևտուր	31,1	46,0	72,0
Մասնավոր առևտուր	23,9	20,2	11

Ինչպես տեսնում ենք, կապիտալիստական տարրերի դեմ վճռական հարձակման շրջանում մասնավոր առևտուրը դադարել էր տնտեսության մեջ էական դեր խաղալուց։ Նույն տարիներին մասնավոր առևտրական կետերի թիվը 2114-ից նվազելով հասել էր 104-ի։

Անհրաժեշտ է նշել, որ չնայած տնտեսության զարգացմանը զուգընթաց անընդհատ նվազում էր մասնավոր առևտրի դերը, ՍՍՀՄ միջին տվյալների համեմատությամբ մեզ մոտ այն դեռևս զգալիորեն բարձր էր։ Դրա բազում պատճառների շարքում, անշուշտ, չպետք է մոռանալ գաղթականության հոծ զանգվածի դերը, որի մի մասը չէր բավարարվել հողով և եկամտի ոչ մի աղբյուր չուներ, որոնց համար շարչիությունն ու մասնավոր առևտուրը գոյությունը պահելու միակ միջոցն էր (այն էլ ոչ այնքան հուսալի)։

Պետական ու կոոպերատիվ առևտրի հետագա զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան Համկ(բ)Կ կենտկոմի և ԿՎՀ-ի 1931 թ. դեկտեմբերյան միացյալ պլենումի որոշումները։ 1931 թ. մասնավոր առևտուրը լիովին արտամղվել էր, իսկ պետական առևտուրը դուրս գալով մանածախ առևտրի շրջանակներից, լայն գործառնություն էր ծավալել նաև մանրածախ առևտրի մեջ։

Այսպիսով, անցնելով նոր տնտեսական քաղաքականությանը, սովետական կառավարությունը տեղական նախաձեռնությունը խրախուսելու հետ միևտեղ, հսկայական նյութական միջոցներ հատկացրեց

148 Նույն տեղում, 2 հունվարի, 1932։

կոոպերացիան վերականգնելու, նրա աշխատանքները վերակառուցելու, մանր արտադրողներին նրա շուրջը համախմբելու և գյուղի ու քաղաքի վաշխառուա-սպեկուլյանտային տարրերի դեմ պայքարելու համար։ Երկու-երեք տարվա նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքների ավարտից հետո սպառկոոպերացիան բուռն վերելք ապրեց և դարձավ աշխատավորության սպասարկման հիմնական միջոցը։ Կոոպերատիվ ընկերությունների ցանցը 1924 թ. հունվարին եղած 43-ից 1929 թ. հունիսին հասավ 110-ի, առևտրական կետերի թիվը 60-ից աճեց 625-ի, իսկ կոոպերացիայի անդամների թիվը՝ 8148-ից՝ 140,705-ի։ Աճեց փայադրամագլխի գումարը, ապրանքաշրջանառությունը և այլն։ Ահա սպառկոոպերացիայի աճի դինամիկան 1924—1929 թթ.[149]։

Թվական	Ընկերութ. թիվը	Առևտրական կետերի թիվը	Անդամների թիվը	Փայադրամագլուխը (ռուբ.)	Ապրանքաշրջանառությունը (ռուբ.)
1924	43	60	8148	27728	94000
1925	68	276	25903	136854	410000
1926	81	309	65750	234925	1119200
1927	90	360	89422	388672	1535800
1928	86	471	109926	730731	2144000
1929	110	625	140705	1118767	2958500

«Նէպի գոյության 9 տարիների ընթացքում,— նշել է «Խորհրդային Հայաստանը»,— սպառկոոպերացիան քայլ առ քայլ դրավել է սպառողական շուկան քաղաքում և գյուղում, համառ պայքարի միջոցով դուրս է վռնդել մասնավորին»[150]։ Դա խոշոր նվաճում էր։

Առաջին հնգամյակի տարիներին ապրանքաշրջանառության ոլորտից իսպառ վերացվեց մանրածախ առևտուրը և այն կենտրոնացվեց պետական ու կոոպերատիվ առևտրի ձեռքում։ Դրանով փաստորեն առևտրի բնագավառից վերացվեցին շահագործողական տարրերի վերջին մնացորդները։ Սոցիալիստական արդյունաբերության նվաճումները և գյուղի սոցիալիստական վերակառուցումը նոր թափ հաղորդեցին առևտրի զարգացմանը, որն իր հերթին կարևոր խթան հանդիսացավ այդ ճյուղերի հետագա վերելքի գործում։

149 «Սպառկոոպերացիան 9 տարում և նրա հնգամյակը», Երևան, 1929, էջ 8—10, ՄԼի ՀՄԱ, ֆ. 1, ց. 12, գ. 44, թ. 8։

150 «Խորհրդային Հայաստան», 30 մայիսի, 1930։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՆԵՊԸ ԵՎ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

1. ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

Նէպի կենսագործմամբ Հանրապետության ժողովրդական տնտեսությունը մեծ վերելք ապրեց։ Այդ պայմաններում հասարակության բոլոր դասակարգերն ու խավերը չտեսնված ակտիվություն հանդես բերեցին։ Կոմունիստական կուսակցության վիթխարի ջանքերի շնորհիվ, հանրային արդյունաբերության ամրապնդման ու զարգացման հետ մեկտեղ, քանակապես ու որակապես աճեց բանվոր դասակարգը, որը հանդես էր գալիս որպես երկրի տեր, որպես մյուս աշխատավոր դասակարգերի ու հասարակական խավերի առաջնորդ։ Գյուղատնտեսության վերականգնումը վերելք ու աշխուժություն առաջ բերեց գյուղացիության շրջանում, որը բանվոր դասակարգի օգնությամբ ամրապընդելով իր տնտեսությունը, սկսեց ակտիվորեն մասնակցել երկրի հասարակական-քաղաքական կյանքին։

Սակայն այդ բոլորով հանդերձ քաղաքի և գյուղի հասարակական-տնտեսական զարգացումը շատ բանով տարբեր էր։ Արդյունաբերության զարգացմամբ, որը հիմնականում սոցիալիստական ուղիով էր գնում, ձևավորվեց ու զարգացավ միակուռ և մարտական բանվոր դասակարգը, որը գլխավորում էր սոցիալիզմի կառուցումը մեր երկրում։ Իսկ գյուղում գյուղատնտեսության զարգացման հետ մեկտեղ գնալով խորանում էր գյուղացիության շերտավորումը։ Փաստորեն գյուղում ոչ միայն տընտեսական, այլև քաղաքական լուրջ տեղաշարժեր էին կատարվում, որի ընթացքում ձևավորվում էր դասակարգային ուժերի նոր հարաբերություն։ Սովետական իշխանությունը ճիշտ գնահատելով դա և հաշվի առնելով, որ շահագործողական տարրերը չեն կարող գոյություն ունենալ առանց չքավորներին ու բատրակներին շահագործելու, բոլոր միջոցներով օգնում էր վերջիններիս, որպեսզի նրանք տնտեսապես ամրապընդվեն և կախման մեջ չընկնեն ունևորներից։ Դրանով մի կողմից ամրապնդվում էր պրոլետարիատի դիկտատուրայի սոցիալական հենարանը գյուղում, իսկ մյուս կողմից՝ սահմանափակվում էին շահագործման հնարավորությունները։

Գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման հետ մեկտեղ, կուսակցությունը ծրագրում էր կենսագործել գյուղի սոցիալիստական

վերակառուցումը, որով մեկընդմիշտ կվերացվեին շահագործողական հարաբերությունները ծնող պայմանները։ Ուստի պետության կողմից գյուղացիությանը ցույց տրված նյութական և ֆինանսական օժանդակության նպատակն էր ոչ միայն վերականգնել գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և վիճակը, այլ հիմնական հենարան ունենալով գյուղի չքավոր և միջակ մասսային, տնտեսության վերելքն ուղղել զարգացման ճիշտ հունը՝ ամեն կերպ սահմանափակելով գյուղի հարստահարիչների գործունեությունը։

Սովետական կարգերի հաստատմամբ և հատկապես նէպի կենսագործմամբ, առաջին հերթին փոփոխության ենթարկվեց գյուղի սոցիալական զարգացման ուղին։ Հայկական գյուղի նէպի տարիների սոցիալ-տնտեսական հարաբերությունները անցման շրջանի հարաբերություններ էին, երբ սկզբում տիրապետող կապիտալիստական և առաջին հերթին մանրգյուղացիական տնտեսաձևը աստիճանաբար իր տեղը զիջեց սոցիալիստական հարաբերություններին։

Սովետական իշխանության ագրարային քաղաքականությունն արմատապես փոխեց գյուղի սոցիալական դեմքը և նախադրյալներ ստեղծեց գյուղացիության նոր տիպի շերտավորման համար։

Պատմագիտական գրականության մեջ, սովորաբար, ընդունված է Ռուսաստանում գյուղի շերտավորման պրոցեսը բաժանել երեք փուլի։ Առաջինը՝ 1917—1919 թթ., երբ գյուղացիության միջակացման շնորհիվ զգալիորեն կրճատվեցին սուր անկյունները (կուլակությունն ու չքավորությունը)։ Երկրորդ փուլը՝ 1919—1922 թթ., երբ քաղաքացիական կռիվների հետևանքով տեղի ունեցավ համատարած աղքատացում և երբ գյուղը նորից անկում ապրեց, որի պատճառով համարյա բացակայում էր արտահայտված շերտավորումը։ Երրորդ փուլն ընդգրկում է 1922 թ. հետո մինչև կոլեկտիվացումը ընկած շրջանը, երբ նէպի կենսագործմամբ նոր թափով ուժեղանում է գյուղացիության շերտավորումն ու արագանում միջակացման պրոցեսը։

Հայաստանի գյուղացիության շերտավորման պրոցեսը դժվար է նման պարբերացման ենթարկել։ Սովետական կարգերի ստացած բավականին ծանր ժառանգությունը, ապա քաղաքացիական կռիվներն այնպիսի համատարած սովի ու աղքատության էին հասցրել երկիրը, որ նէպի առաջին տարիներին շերտավորման խորացման մասին խոսք անգամ լինել չէր կարող։ Փաստորեն 1921—1922 թթ. գյուղատնտեսության ընդհանուր վերականգնման համար պայքարի շրջան էր, երբ պրոլետարիատի դիկտատուրան բոլոր միջոցները մոբիլիզացնում էր աշխա-

տավորությանը սովի ճիրաններից փրկելու համար։ Հայկական գյուղի շերտավորումը արագ թափով սկսվեց 1923 թ.։ Ուրեմն, մեզանում գյուղի շերտավորման պրոցեսը երկու փուլ է ապրել. առաջինը՝ 1921—1922 թթ., երբ շերտավորման պրոցեսը շատ թույլ էր արտահայտվում և 1923 թ. մինչև կոլեկտիվացման շրջանը, երբ տնտեսությունների արագ շերտավորման շնորհիվ խիստ կերպով նվազեց չքավորների քանակը, որոշ չափով ավելացավ կուլակների թիվը և հիմնականում տեղի ունեցավ գյուղացիության միջակացում։ Ընդ որում, գյուղացիության շերտավորումը մեր հանրապետությունում հավասարաչափ չէր տեղի ունենում։ Արարատյան հարթավայրի քաղաքամերձ շրջաններում այն ավելի արագ տեմպերով էր տեղի ունենում, հիմնականում կապված առևտրի ծավալման, ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետ։ Իսկ լեռնային շրջաններում, որտեղ բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր, շերտավորումը բավականին դանդաղ էր տեղի ունենում։ Այստեղ խորն էր բևեռացումը (գոյություն ունեին մեծատուն հարուստներ և տարրական միջոցներից զուրկ հազարավոր չքավորներ)։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի տնտեսությունը հիմնականում տարբեր կացութաձևերի յուրօրինակ խառնուրդ է։ Բայց հիմնականը, առանցքայինը մասնավոր կապիտալիզմի և սոցիալիզմի միջև մղվող դաժան պայքարն էր։ Առաջինը բավականին ամուր տնտեսական հիմք ուներ հանձինս մանրապրանքային տնտեսությունների, որոնք նեպի պայմաններում նպաստում էին կապիտալիզմի զարգացմանը, իսկ երկրորդը՝ հենվելով արտադրության միջոցների հանրային սեփականության և կոոպերացիայի վրա, պետության մշտական օգնությունն ստանալով արագ տեմպով ամրապնդվում ու զարգանում էր՝ դառնալով տնտեսության վճռական, հիմնական ուժը։

Հետևողականորեն կենսագործելով կուսակցության ագրարային քաղաքականությունը, մեզ մոտ գյուղի շերտավորումը նոր ուղիով գնաց. աննկատ նվազում էր չքավոր տնտեսությունների քանակը և ամրապնդվում ու ավելանում միջակ գյուղացիությունը, որը դառնալով գյուղի հիմնական դեմքը, գյուղատնտեսական արտադրության հիմնական մասը կենտրոնացրել էր իր ձեռքում։ Ինչ խոսք, նոր տնտեսական քաղաքականությունից օգտվեց նաև կուլակությունը։ Հատկապես նրա կենսագործման առաջին տարիներին կուլակությունը կարողացավ արագ ամրապնդել իր տնտեսությունը և ընդլայնել շահագործումը։ Կուլակները վարձով էին տալիս գյուղատնտեսական գործիքները, քաշող ուժը,

սերմացուն, հող էին վարձակալում, առևտուր անում և այլն[1]։ Այդ է պատճառը, որ նէպի առաջին տարիներին կուլակությունն ավելի արագ տեմպերով աճեց։ «Չպետք է աչք փակել այն բանի հանդեպ,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ մասնատումը հարկով փոխարինելը նշանակում է այն, որ կուլակությունը տվյալ կարգից էլ ավելի կաճի քան մինչև այժմ։ Նա այժմ կաճի այնտեղ, որտեղ առաջ չէր կարող աճել»[2]։

Կուլակության արագ աճի պատճառներից մեկն էլ այն էր, որ հեղափոխական ուղիով վերացնելով ֆեոդալական-կալվածատիրական մնացորդները, պրոլետարիատի դիկտատուրան, փաստորեն, որոշ ասպարեզ բացեց կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար։ Օգտագործելով այդ պայմանները, կուլակությունը աշխուժացում ապրեց, որոշ բացարձակ աճ տվեց։ Սակայն սովետական իշխանության կարգավորիչ ձեռքի զորությամբ գնալով նվազում էին կուլակության աճի տեմպերը և որ շատ կարևոր է, սահմանափակվում էին նրա շահագործողական տենդենցները։

Նէպի առաջին տարիներին կուլակության ամրապնդման ու աճի հիմնական աղբյուր էին բանվորական ուժի շահագործումը, չքավոր գյուղացիների հողերի վարձակալումը, առևտրական և վաշխառուական գործարքները, որոնց մեծ մասը քողարկվում էր «օգնության» և այլ անվանումների տակ։ Դա նպաստեց գյուղի շերտավորման խորացմանը, որը նէպի կենսագործման անմիջական սոցիալական արդյունքն էր։ «Ամբողջ Հայաստանում,— ՀԿ(բ)Կ IV համագումարում (1926) նշում է ելույթ ունեցողներից մեկը,—սկսած բարձր կուլտուրաների մշակության վայրերից մինչև Նոր Բայազետի խուլ անկյունը շերտավորում կա և կուլակն ղգալի չափով ակտիվացել է»[3]։

Լինելով տնտեսապես ամուր և բավականին կազմակերպված դասակարգ, կուլակությունը ղգալի ակտիվություն հանդես բերեց նէպի առաջին տարիներին։ Սակայն պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում գյուղի զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ կապիտալիստական տարրերին դիմակայում էին ոչ միայն բատրակներն ու չքավորները (մասամբ նաև միջակները), այլև ամբողջ սովետական իշխանությունը՝ իր վարչական ու տնտեսական բոլոր միջոցներով։

---

1 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս I, էջ 446։

2 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 32, էջ 277։

3 ՄԼՒ ՀՄԱ, ֆ. 1, ց. 5, գ. 5, թ. 11։

Նէպի պայմաններում ամրապնդվող և ուռճացող կուլակային տնտեսությունների կողքին Հայաստանում բավականին մեծ թիվ էր կազմում անհող, անասնազուրկ գյուղացիությունը։ Արդեն 1924 թ. այդ բևեռացումը որոշակի էր։ «Հայաստանում այնպիսի սոցիալական պրոցեսներ են տեղի ունենում,— նշվեց ՀԿ(բ)Կ III համագումարում (1924),— որ մի կողմից կուլակն է առաջ գալիս, մյուս կողմից շերտավորված բատրակներն ու չքավոր գյուղացիությունը»[4]։ Հայաստանում նէպի շրջանում գյուղի շերտավորման պրոցեսի վրա մեծ չափերով ազդում և արագացուցիչ դեր էր կատարում գաղթականությունը, որի հիմնական մասը դեռևս ծանր վիճակի մեջ էր գտնվում և հաճախակի դիմում էր ունևորների «օգնությանը»։

Հայաստանում նույնպես գյուղի շերտավորումը տանում էր դեպի գյուղացիության միջակացում, նվազեցնելով հակադիր բևեռների՝ չքավորների և կուլակների տեսակարար կշիռը։ Սակայն դա չէր նշանակում թե միջակ գյուղացիությունն այլևս շերտավորման չի ենթարկվում։ Միջակների ընչին մասն ուռճանալով նպաստում էր կուլակության աճին, մի մասն էլ (նույնպես ընչին մասը) քայքայվելով դառնում էր չքավոր։ Բայց քանի որ չքավորության միջակացման պրոցեսն ավելի արագ էր տեղի ունենում, քան միջակների աղքատացման կամ հարընտացման պրոցեսը, միջակ գյուղացիությունն աստիճանաբար ավելի էր կայունանում և դառնում գյուղի հիմնական դեմքը։ Փաստորեն սովետական իշխանության հաստատմամբ և ակտիվ միջամտությամբ կյանքի կոչվեցին միանգամայն նոր երևույթներ ու օրինաչափություններ, որոնք հատուկ չէին կապիտալիզմին և որոնց ներգործության շնորհիվ ամրապնդվում էր գյուղի միջակ տարրը։

Սակայն, մի կողմից գյուղացիության տարբեր շերտերի (միջակ, կուլակ, չքավոր) ոչ հստակ սահմանումը, մյուս կողմից կյանքում դրանց բավականին դժվար սահմանազատումը, հաճախ առիթ էին ծառայում կուսակցության ազգարարային քաղաքականության շեղումների, սխալների և պատճառ հանդիսանում աշխատավորության մեջ դժգոհություն առաջացնելու համար։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ պրակտիկայում բավականին դժվար է որոշել գյուղացու շերտավորման պրոցեսը։ «...Անհրաժեշտ է այնպիսի անսխալ չերմաչափ,— գրում էր նա,— որպեսզի այն կարելի լինի գյուղացու թևի տակ դնել և ասել՝ միջակ է նա թե ոչ։ Դրա համար հարկավոր է իմանալ այդ գյուղացու տնտեսու-

---

[4] Նույն տեղում, ց. 4, գ. 1, թ. 27։

թյան ամբողջ պատմությունը, նրա վերաբերմունքը գեպի ստորին ու բարձր խմբերը,— իսկ ստուգապես իմանալ այդ մենք չենք կարող»[5]։

Գյուղացիության շերտավորման հիմքում, ինչ խոսք, ընկած են ցանքատարածությունները, անասունների գլխաքանակը, գործիքների, մեքենաների առկայությունը և այլն։ Սակայն դրանցով միայն շերտավորման մոտավոր պատկերն է որոշվում։ Գյուղացիության շերտավորման շուրջը ծավալվող վիճաբանություններն ու թյուրըմբռնություններն այն տեղն էին հասնում, որ օրինակ, ՀԿ(բ)Կ III համագումարում առաջարկում էին կուսակցության քաղաքականությունը գյուղում կենսագործելիս հենվել միայն բատրակների վրա։ ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Աշ. Հովհաննիսյանն արդարացիորեն նշում էր, որ հայկական գյուղի բատրակները գյուղական պրոլետարներ չեն եվրոպական իմաստով, դրանք նոքարներ են, որոնց վրա հենվել՝ նշանակում է կտրվել գյուղացիությունից։ «Մեր ուշադրության գլխավոր առարկան գյուղում հանդիսանում է չքավոր և միջակ գյուղացիությունը... գյուղում ակտիվ տարրերը պատկանում են գլխավորապես դրանց»[6]։ Անշուշտ, դա ճիշտ դիրքորոշում էր և բխում էր ամբողջ երկրում կենսագործվող ագրարային քաղաքականությունից։

Տնտեսական զարգացման հետ մեկտեղ, նէպի կենսագործմամբ արմատավորվող ապրանքադրամական հարաբերություններն էլ ավելի էին սրում դասակարգային հակամարտությունները։ Կուլակությունն այդ շրջանում բավականին կազմակերպված էր հանդես գալիս, իսկ գյուղի չքավորությունը գտնվում էր բավականին թույլ և հետամնաց վիճակում։ Կուսակցական կազմակերպությունները միշտ չէ, որ կարողանում էին անհրաժեշտ օգնություն ցույց տալ չքավորներին, ղեկավարել նրանց, որի պատճառով էլ կուլակը հաճախ ավելի ակտիվ էր հանդես գալիս։ «Մեր կուսակցական կազմակերպչական ապարատները,—նշվեց ՀԿ(բ)Կ III համագումարում,— չեն կարողացել բավարար չափով ընդգրկել գյուղի չքավորությունը, որը համեմատաբար գտնվում էր ավելի թույլ և հետամնաց վիճակի մեջ։ Իսկ գյուղի կուլակներն ընդհակառակը, ավելի գիտակից են իրենց շահերին ու դերին, ավելի աչքաբաց են և ավելի ակտիվ տարրը գյուղական կյանքում»[7]։ Եվ դա բնական էր։ Ամրապնդվելով և տնտեսապես ուժեղանալով կուլակները բոլոր միջոցնե-

---

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 246։

6 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 3, գ. 1, թ. 159։

7 Նույն տեղում, թ. 27։

րին դիմում էին նաև քաղաքական ասպարեզ դուրս գալու համար։ «Խորհրդային Հայաստան»-ը բազմաթիվ փաստեր է վկայակոչում, թե ինչպես էին նրանք փորձում սովետներում, կոոպերացիայում, գյուղի հասարակական կազմակերպություններում և նույնիսկ կուսբջիջներում իրենց մարդկանց խցկել, սիրաշահել կամ վախեցնել չքավորներին։

Ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքում կապիտալիստական տարրերի աշխուժացումը թույլատրվում էր տնտեսության ընդհանուր վերելքին նպաստելու, առաջին անհրաժեշտության ապրանքների ու մթերքների սովը որոշ չափով մեղմացնելու նպատակով։ Հասկանալի է, որ որքան շատ է ավերված ու քայքայված երկիրը, վերականգնելու համար այնքան շատ են ջիջումներ արվում շահագործողական տարրերին։ Դա բխում էր տնտեսության զարգացման մասին լենինյան ցուցումներից։ Հայաստանի տնտեսական փլուզումը կանխելու և զարգացման շատ թե քիչ նորմալ պայմաններ ստեղծելու համար պահանջվեց շուրջ հինգ տարի, որի ընթացքում հանրապետության կառավարությունը բոլոր միջոցները գործադրեց մի կողմից ներքին ռեսուրսներն ավելացնելու, իսկ մյուս կողմից՝ ստացվող օգնությունը խելացի օգտագործելու միջոցով ավերվածության ծանր հետևանքները վերացնելու, սովն ու տարափոխիկ հիվանդությունները հաղթահարելու համար[8]։ Այդ ժամանակ դեռևս քիչ էր ուշադրություն դարձվում շահագործողական տարրերի գործունեության վրա, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանք չէր կատարվում չքավորների ու բատրակների կազմակերպման ուղղությամբ։ «Եթե մինչև այժմ,— ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1925 թ. հոկտեմբերին տեղի ունեցած պլենումում հայտարարեց Ս. Լուկաշինը,— մեր կուսակցությունը մտահոգված է եղել իմպերիալիստական, ազգամիջյան պատերազմների ընթացքում քանդվածները վերականգնելու աշխատանքով, այժմ, սակայն, մեր կուսակցության ամբողջ քաղաքականությունը ուղղված պետք է լինի չքավոր ու միջակ գյուղացիության ակտիվը առաջ քաշելու վրա»[9]։

Շահագործողական տարրերը խրախուսված նեպի ընձեռած հնարավորություններով, սկսել էին ընդլայնել իրենց գործունեության շրջանակները և ոգևորված կուսակցության ներսում գոյություն ունեցող օպոզիցիոն խմբավորումների պայքարով, որոշակիորեն ակտիվացրել էին նաև իրենց հասարակական գործունեությունը։ Այս պայմաններում կուսակցությունը չէր կարող չակտիվացնել իր աշխատանքները չքավոր-

8 «Խորհրդային Հայաստան», 10 ապրիլի, 1925։

9 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 5, գ. 18, թ. 4։

ների ու միջակ գյուղացիների մեջ։ Այդ էին թելադրում գյուղում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները։ «Գյուղի սոցիալական շերտավորումը մի փաստ է,— արձանագրեց Հ(բ)Կ Կենտկոմի IV պլենումը,— որը անհրաժեշտ է ուշադրությամբ ուսումնասիրել թե՛ կապիտալիզմի ու կոմունիզմի միջև պայքարի գծով և թե՛ գյուղացիության սոցիալ-տնտեսական վերախմբավորումների գծով»[10]։ Այդ վերախմբավորումների առանցքը նեպն էր, որը փաստորեն արագացուցիչի դեր խաղաց գյուղի շերտավորման խնդրում։

Վիճակագրական տվյալները, ժբախտաբար, հնարավորություն չեն տալիս վերականգնելու գյուղի շերտավորման ռեալ պատկերը։ Եղած տվյալներն էլ թերի են, կասկածելի։ 1923/24 տնտեսական տարում Հանրապետությունում կատարվել է գյուղացիական տնտեսությունների 5% ընտրովի վիճակագրություն, իսկ 1925/26 տնտեսական տարում՝ 10%։ Տնտեսություններն ընտրվել են մեխանիկորեն։ Յավալի է, որ այդ վիճակագրությունները կատարվել են տարբեր ծրագրերով և դժվար է դրանք համադրելը։ Բացի այդ, վերոհիշյալ նյութերը մեծ վերապահությամբ պետք է օգտագործել, որովհետև գյուղացիական տնտեսությունների խմբավորումը կատարվել է ոչ թե ըստ նրանց տարեկան եկամուտների, այլ ըստ ցանքատարածությունների։ Դա կարող է թյուրիմացությունների տեղիք տալ, որովհետև գյուղացիության հատկապես ունևոր շերտերը կապված էին նաև արդյունաբերության և առևտրի հետ։ Միայն մեխանիկական տվյալներով դժվար է ճիշտ սահմանազատել գյուղացիության տարբեր շերտերը։ «Իրական կյանքի մեջ,— այդ առթիվ գրված է վիճվարչության փաստաթղթերից մեկում,— տնտեսություններն այնպես են մոտենում միմյանց հետ իրենց կարողությամբ, որ ներկայացնում են միաձույլ մի սյուն, որն ունի երկու հակադիր՝ հաստ և բարակ ծայրեր և միջին մաս, բայց որտեղից է սկսվում այդ միջինը և որտեղ է վերջանում՝ դժվար է որոշել»[11]։ Հասկանալի է, որ գյուղի սոցիալական խմբերը միշտ էլ հանդես են եկել խառը վիճակում։ Վիճակագրական տվյալները միշտ չէ, որ հնարավորություն են տալիս ճիշտ սահմանազատելու սոցիալական խմբերը։ Միանգամայն ճիշտ է նկատում Յու. Պոլյակովը, որ խոշոր տնտեսությունները, որոնք մի քանի աշխատող ձեռք ունեն և հիմնական աշխատանքներն իրենք են կատարում՝ չպետք է շահագործող համարվեն[12]։ Եթե դա ճիշտ է Ռու-

10 Նույն տեղում, թ. 3։

11 Նույն տեղում, ց. 8, գ. 60, թ. 47։

12 Ю. Поляков, նշվ. աշխ., էջ 241։

սաստանի խոշոր անտեսությունների նկատմամբ, որոնք անհամեմատ մեծ և ամուր էին, քան հայկականը, ապա նույն վերապահումը պետք է անել նաև մեր գյուղի նկատմամբ։

1925—1926 թթ. վիճակագրական ընտրովի ուսումնասիրությամբ գյուղացիությունը հիմնականում բաժանվում է 4 խմբի։

Առաջին խմբի մեջ են մտնում ցանք չունեցող գյուղացիները, որոնք կազմում են բոլոր անտեսությունների 15,2%-ը։ Սրանց 96%-ը քաշող անասուն չունի, 82%-ը՝ կթվող անասուն։

Երկրորդ խումբն ընդգրկում է մինչև երկու դեսյատին ցանք ունեցողներին, որոնք կազմում են ընդհանուրի 64%-ը։ Սրանց կեսից ավելին անասնազուրկ է. 61%-ը լծկան չունի, 45,5%-ը՝ կթան։

Երրորդ խումբը 2,1-ից մինչև 5 դեսյատին ցանք ունեցողներն են, որոնք կազմում են բոլոր անտեսությունների 18,3%-ը։ Սրանցից լծկան չունեին 18, կթան՝ 18,8%-ը։

Չորրորդ խումբը 5—16 դեսյատին ցանք ունեցողներն են, որոնք ընդամենը 2,5%-ն են կազմում։ Սրանք անասուններով ապահով են. լծկան չունի միայն 1,3%-ը, կթան՝ 3,1%-ը[13]։ Ճիշտ է, այս տվյալները չեն տալիս գասակարգային շերտավորման պատկերացում, բայց դրա որոշակի առկայությունն այստեղ պարզորոշ ուրվագծված է։ Ցանք չունեցողներն ու մինչև 2 դեսյատին ունեցողները կազմում են շուրջ 80%-ը, որը վկայում է չքավորության մասսայական բնույթի մասին։ Ի տարբերություն այլ հանրապետությունների, մեզ մոտ գյուղացիության միջակացման, ինչպես նաև կուլակության աճի տեմպերը բավականին դանդաղ էին ընթանում։ Դա ավելի ցայտուն է երևում, եթե Հայաստանի տվյալները համեմատում ենք այլ հանրապետությունների հետ։ Այսպես, Ռուսաստանի գյուղացիության համեմատությամբ, 1925 թ. տվյալներով, հետևյալ աղյուսակը կստանանք (տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)[14]։

	Հայաստան	Ռուսաստան
1. Ցանք չունեցողները	15,2	4,2
2. Մինչև 2 դեսյատին ունեցողները	64,0	33,0
3. Մինչև 2—6 դեսյատին ունեցողները	19,3	49,3
4. 6—10 դեսյատին ունեցողները	1,3	10,2
5. 10 դեսյատինից ավելի ունեցողները	0,2	3,3

13 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 8, գ. 60, թ. 46։

14 Նույն տեղում, թ. 49։

Եթե 6 դեսյատինից ավել ցանք ունեցողներին պայմանականորեն համարենք ունևոր և կուլակային տնտեսություն, ապա Հայաստանում այն կկազմի 1,5, իսկ Ռուսաստանում՝ 13,5%։ Մինչդեռ, մինչև 2 դեսյատին ցանքատարածություն ունեցողները Հայաստանում կազմում են 80, իսկ Ռուսաստանում՝ 37%։ Սրանք հիմնականում չքավոր տնտեսություններն էին։ Ինքնին հասկանալի է, որ Հայաստանի առանձնահատուկ պայմանները (սակավահողությունը, գաղթականության զանգվածային կուտակումը և այլն) իրենց որոշակի կնիքն էին դնում գյուղի սոցիալական շերտավորման վրա։ Յավոք, այդ առանձնահատկությունները միշտ չէ, որ հաշվի են առնվում և հաճախ առանձին ուսումնասիրողներ գյուղի շերտավորման կամ սոցիալական տարբեր շերտերի գնահատման ռուսաստանյան չափանիշները մեխանիկորեն տեղափոխում են մեզ մոտ կամ մոտավոր թվեր հրապարակում։ Այսպես, պրոֆ. Դ. Դավթյանը առանց աղբյուրը վկայակոչելու և նույնիսկ առանց ժամանակաշրջանը նշելու հայտարարում է, որ Հայաստանում կուլակությունը «կազմում էր մոտավորապես 4—5 տոկոս»[15]։ Մի քանի էջ հետո նա դարձյալ առանց աղբյուրը ցույց տալու գրում է. «Սովետական գյուղի դասակարգային կառուցվածքը 1927 թ. ուներ հետևյալ պատկերը. ամբողջ գյուղացիական բնակչության մեջ միջակները կազմում էին 60%, չքավորները՝ 35, իսկ կուլակները՝ մոտավորապես 5%[16]»։ Սրանք գիտական տվյալներ չեն։ Մինչև 1920-ական թվականների վերջերը Հայաստանում գյուղացիության միջակացման պրոցեսը շատ դանդաղ էր ընթանում, և չքավորությունը բավականին մեծ տեսակարար կշիռ ուներ։

Չնայած Հայաստանի գյուղացիության շերտավորման մասին տարբեր, երբեմն հակասական տվյալներ գոյություն ունեն և ճգրիտ պատկերը դժվար է վերականգնել, մեր կարծիքով իրականությանն ավելի մոտ են ըստ գյուղատնտեսական հարկի կատարվող խմբավորումները։ Հայտնի է, որ չքավոր տնտեսությունները ազատվում էին հարկից, միջակների հարկը տարեցտարի թեթևացվում էր և հիմնական ծանրությունը կուլակների վրա էր ընկած։ Ըստ գյուղատնտեսական հարկի Հայաստանի գյուղացիության շերտավորումը 1929—1930 թթ. հետևյալ պատկերն ուներ. չքավորները՝ 58%, միջակները՝ 40,5, և կուլակները՝ 1,5%[17]։

---

15 Դ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 76։

16 Նույն տեղում, էջ 83։

17 Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 293։

Հասկանալի է, որ գյուղի շերտավորման ուժեղացման հետ մեկտեղ ուժեղանում էր դասակարգային հակամարտությունը, սրվում ով՝ ում հարցը։ Փաստաթղթերի ուսումնասիրությունը հետաքրքիր օրինաչափության է հանգեցնում. նէպի առաջին տարիներին ունևոր խավերը օգտագործելով իրենց միջոցներն ու փորձը և օգտվելով պետության անկայուն ֆինանսական վիճակից, հարկային ու վարկային հիմնարկների, ինչպես նաև կոոպերացիայի թուլությունից, ավելի մեծ ակտիվություն հանդես բերեցին քան մյուս խավերը։ Ավելին, օգտագործելով տնտեսական միջոցները, գյուղի կուլակները հաճախ հանդես էին գալիս որպես ամբողջ գյուղացիության շահերի արտահայտիչներ, ձգտելով իրենց շուրջը համախմբել գյուղացիներին։ «Շատ հետաքրքիր երևույթ ենք դիտում գյուղում,—նշեց Ս. Օրջոնիկիձեն Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների 1925 թ. սեպտեմբերյան պլենումում,—ամբողջությամբ վերցրած գյուղի շահերը պաշտպանում են ոչ թե կոմունիստները, ոչ թե միջակներն ու չքավորները, այլ կուլակները»[18]։ Հայաստանում դա ավելի խիստ էր արտահայտվում, որովհետև չքավորների ու բատրակների տնտեսական դրությունը սոսկալի ծանր էր։ Հատկապես հեռավոր, լեռնային գյուղերում կուլակությունն օգտագործելով սովետական մարմինների և հասարակական կազմակերպությունների թուլությունը, ավելի մեծ ազդեցություն ուներ գյուղում։ «Գյուղում աղքատներն ավելի կապված են հարուստներին, քան թե միջակ տարրերին,— նշվում է Արագածից 1925 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկված զեկուցագրերից մեկում,—որովհետև հարուստներն իրենց հասարակական դիրքը ուժեղացնելու համար, ի դեպս հարկին, օգնության են գալիս չքավորությանը, նորա տալիս են փող 7—8 տոկոսով, նաև հացահատիկով օգնում են չքավորներին, որոնց փոխարեն ստանում են հաջորդ կալի ժամանակ, մի բան, որն ավելի ձեռնտու է չքավոր գյուղացիության համար, քան ստանալ բանկից 12%-ով»[19]։ Նման միջոցներով ունևորներից կախման մեջ ընկնելով, չքավոր գյուղացիությունը հաճախ գործիք էր դառնում նրա ձեռքին։

Չքավոր գյուղացիության տնտեսական անապահով վիճակը հնարավորություն չէր տալիս նրան՝ տնտեսական և հասարակական ակտիվ գործունեություն ծավալելու։ «Հետզհետե ավելի ու ավելի բարձրացող գյուղացիական տնտեսության հողի վրա,— արձանագրվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի IV պլենումի (1925) որոշման մեջ,—մեր գյուղը նէպի պայ-

18 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 5, գ. 62, թ. 7։

19 Նույն տեղում, գ. 37, թ. 10։

մաններում բնականաբար ենթարկված է սոցիալ-տնտեսական շերտավորման։ Ունևոր խմբերի և հարուստ վերնախավի (թեև սրանց տոկոսը մեծ չէ) առաջ գալը տնտեսապես անխուսափելի է դառնում։ Դրա հետ միասին գյուղացիության ամենալայն մասսաները (չքավորներն ու միջակները) պրոլետարիատի այդ իսկական դաշնակիցները զրկված են իրենց դրությունն արագորեն և էականապես բարելավելու հնարավորությունից»[20]։

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործմամբ երկրում ստեղծված բարդ և հակասական սոցիալ-տնտեսական հարաբերությունները հաճախ սխալ էին մեկնաբանվում ու գնահատվում։ Հանրապետության կուսակցական և սովետական աշխատողների որոշ մասը թերագնահատում էր ինչպես կուլակային վտանգը, այնպես էլ միջակի հասարակական-քաղաքական դերը։ «Ընդհանրապես պետք է քաջալերել գյուղական տնտեսությունների հզորացումը,— գրված է 1925 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկված զեկուցագրերից մեկում,— որովհետև պարզվում է, որ մի շարք անփորձ ընկերներ սովոր են գործ կատարած լինելու համար միջակ գյուղացուն կուլակ դարձնել և բարեկեցիկ տնտեսություններ չհանդուրժել»[21]։ Հասկանալի է, որ միայն նեպը թյուր ըմբռնելու դեպքում կարելի էր գյուղական տնտեսությունների հզորացում քարոզել, որը կամա թե ակամա, պիտի տաներ դեպի կուլակային խավի ուժեղացում։ Դա մասնավոր կարծիք չէր։ Նման կարծիք արտահայտվեց նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի IV պլենումում, որտեղ քննարկվում էր գյուղում տարվող աշխատանքի հարցը. «Այն կուսակցությունը,— հայտարարեց Ելույթ ունեցողներից մեկը,— որի ձեռքին է գտնվում քաղաքական իշխանությունը,— չի կարող ենթադրել, որ կուլակների հետ կարող է ունենալ այն բախումը, ինչ որ այստեղ մտավախությամբ արտահայտում են մեր ընկերները։ Այդ մտավախությունն ունենալ նշանակում է երևան բերել մեր թուլությունը... մեր տնտեսական զարգացման խաղաղ պայմաններում, հանդարտ միջոցներով, ունենալով մեր ձեռքում զորեղ կազմակերպություններ, ինչպիսիք են կոոպերացիան, վարկային ընկերությունները և այլն, մենք կարող ենք կուլակների զարգացումը դնել նեղ շրջանակների մեջ, կանխել պայքարի սուր ձևերը»[22]։ Ինչպես տեսնում ենք, նեպի պայմաններում խորացող սոցիալական շերտավորումը

---

20 Նույն տեղում, գ. 13, թ. 136։

21 Նույն տեղում, ց. 5, գ. 39, թ. 12։

22 Նույն տեղում, գ. 5, թ. 50։

և դրա հետևանքով ուժեղացող դասակարգային պայքարը սխալ հասկանալու պատճառով փորձ էր արվում պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով «կանխել պայքարի սուր ձևերը»։ Պլենումը դատապարտեց այդ տեսակետները որպես սխալ ու վնասակար և ճիշտ բնութագրեց նէպի պայմաններում ստեղծված սոցիալական վիճակը։

Գյուղացիության շերտավորման, կուլակության դերի գնահատման հարցում եղած թեր և դեմ կարծիքներին, ինչպես նաև տարբեր շերտերի նկատմամբ կուսակցության վերաբերմունքի հարցերին հանգամանորեն անդրադարձավ ՀԿ(բ)Կ IV համագումարը (1925 թ. նոյեմբեր)։ Ճիշտ վերլուծելով նէպի կենսագործմամբ մեր երկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական տեղաշարժերը և ցույց տալով կուլակության ուժեղացման հետևանքով սրված ոլ՝ ում հարցը, միջակ գյուղացիության համար մղվող պայքարի էությունը, բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման նշանակությունը նոր պայմաններում, համագումարն ընդարձակ որոշում ընդունեց գյուղում կատարվող աշխատանքների մասին, որը շատ կարևոր նշանակություն ունեցավ կոչերի ճիշտ կազմ.նորոշման և գյուղում կուսակցության քաղաքականության ճիշտ կենսագործելու խնդրում։

ՀԿ(բ)Կ IV համագումարի որոշման մեջ նույնպես ընդգծվում էր գյուղում սոցիալիստական տարրերի ուժեղացման, բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման, ինչպես նաև կուլակության դեմ կազմակերպված պայքարի, նրա շահագործողական գործունեության սահմանափակման անհրաժեշտությունը[23]։

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործմամբ գյուղացիության շերտավորման ուժեղացումն այնպիսի չափերի էր հասել, որ այն չհաշվելը և հաշվի չառնելը հնարավոր չէր։ Սովետական իշխանության միջոցառումների կենսագործման և հատկապես տեղական սովետների ընտրությունների ժամանակ այն բավականին ցայտուն էր դրսևորվում։ 1926 թ. գյուղխորհուրդների ընտրությունների ժամանակ ընտրված 6153 հոգուց 89,9%-ը գյուղացիներ էին, 6,5%-ը ծառայողներ, 1,8%-ը բատրակներ և նույնքան էլ բանվորներ։ Հետաքրքիր է, որ նախորդ, 1925 թ. ընտրություններում գյուղացիները կազմում էին 74,4%-ը, ծառայողները՝ 2,7%-ը, բատրակները՝ 17,7%-ը և բանվորները՝ 5,2%-ը։ Այդ ընտրությունների արդյունքներն ըստ սոցիալական դրության հետևյալ պատկերն ունեին (տոկոսային արտահայտությամբ)[24].

---

23 Նույն տեղում, գ. 17, թ. 14։

24 Նույն տեղում, ց. 8, գ. 76, թ. 4։

Թվականը	Չքավորներ	Միջակներ	Ունևորներ
1925	58,7	38,8	2,5
1926	45,7	50,8	3,5

Տվյալները ցույց են տալիս, որ մեկ տարվա ընթացքում զգալի տեղաշարժեր են կատարվել գյուղում՝ հօգուտ միջակ տնտեսությունների ամրապնդման։ Մասամբ ավելացել էին նաև ունևորները։ Միջակ գյուղացու աճը հիմնականում տեղի էր ունեցել չքավորության կրճատման հաշվին, որը վկայում է պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային ճիշտ քաղաքականության մասին։ Չնայած դրան, մեր հանրապետությունում չքավորության տեսակարար կշիռը դեռևս բավականին բարձր էր։

Կուլակային շահագործման աղբյուր էին առևտուրը, վարձակալությունը և այլն։ Նէպի առաջին էտապում մեր երկրում վարձակալային հարաբերությունները թույլատրվեցին պետականորեն։ Անշուշտ, դա արմատապես տարբերվում էր նախկին վարձակալությունից։ Այժմ ոչ թե ունևորներն էին հողը տալիս չքավորությանը, այլ ընդհակառակը, արտադրության միջոցներից զուրկ չքավոր գյուղացիությունն էր հողը մշակելու տալիս ունևորներին։ Փոխվել էր վարձակալային հարաբերությունների թե՛ բնույթը և թե սոցիալ-տնտեսական բովանդակությունը։ Այն հիմնականում բխում էր աշխատավորության շահերից թեև հիմք էր հանդիսանում կուլակային շահագործման համար։ Այստեղ շատ մեծ էր պետության կարգավորիչ դերը։ Ըստ պրոֆ. Չելինցևի 1926 թ. Հայաստանում կատարած ուսումնասիրությունների, որքան ուժեղ էր տնտեսությունը, այնքան շատ էր նրա վարձակալած հողերի քանակը և ընդհակառակը, որքան թույլ էր տնտեսությունը, այնքան շատ հող էր վարձով տալիս մշակելու և այդ սոցիալական խումբն ավելի ու ավելի էր կախման մեջ ընկնում առաջինից[25]։ Այսպիսով, վարձակալային հարաբերությունների առկայությունը, անկախ նրանց ձևերից ու բնույթից, վկայում է շերտավորման խորացման և գոյություն ունեցող շահագործման մասին։

Սակայն անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում այն յուրահատուկ ձևով էր դրսևորվում։ Տնտեսական քայքայվածությունն ու սակավահո-

25 Նույն տեղում, ց. 12, գ. 20, թ. 66։

ղությունն իրենց կնիքն էին դրել նաև վարձակալային հարաբերությունների վրա։ Վարձակալողների ճնշող մասը (ըստ գավառների 71—87%), որոնք ղբաղեցնում էին վարձակալած հողերի 54—86%-ը՝ միջակ գյուղացիներն էին[26]։ Դա նախ վկայում է կուլակության թուլության մասին, և երկրորդ, որ նէպի առաջին էտապում, հանրապետության ցանքատարածությունների հիմնական ընդլայնողները, որոնք և գյուղատնտեսական մթերքների հիմնական արտադրողներն էին հանդիսանում՝ միջակ գյուղացիներն էին։ Դա նպաստավոր պայմաններ էր ստեղծում բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման համար և հեշտացնում կուլակության դեմ պայքարելը։ Հիմնականում վարձակալում էին վարելահողը և միայն առանձին տեղերում՝ խոտհարքները։ Ընդ որում, վարելահողի դիմաց վճարում էին բնամթերքով, իսկ խոտհարքների դիմաց՝ դրամով[27]։

Նոր տնտեսական քաղաքականության առաջին էտապում կուլակության տնտեսական ուժեղացումը, բնականաբար, նրան մղում էր նաև հասարակական ակտիվ գործունեության։ Սովորաբար դրականության մեջ ընդգծելով կուլակների տնտեսական ուժեղացումը, անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում նրա քաղաքական աճի հարցերի վրա։ Որպես դասակարգ, կուլակությունը սովետական իշխանության օրոք որոշ էվոլյուցիա ապրեց։ Հասարակական ու տնտեսական անշեղ վերելքը, կոոպերացիայի ծավալումը, սովետների գործունեությունը և այլն, որոշակի քաղաքական դաս հանդիսացան նաև կուլակության համար։ Նա օգտվում էր սովետական իշխանության կուլտուր-լուսավորական միջոցառումներից, ուշի-ուշով հետևում պրոլետարիատի դիկտատուրայի ներքին ու արտաքին քաղաքականությանը։ Առևտրավաշխառուական գործունեությունը նրան ավելի ճարպիկ էր դարձրել։ 1920-ական թվականների կուլակը շատ էր տարբերվում իր նախասովետական շրջանի տգետ ու կամայական նախատիպից։ «Կուլակն աճում է նաև քաղաքականապես,— գրված է 1926 թ. փաստաթղթերից մեկում։— Այդ հանգամանքը հաստատվեց վերջին վերընտրությունների ժամանակ, երբ նրանք ձգտում էին իրենց ներկայացուցիչներին անցկացնել գյուղխորհուրդներում, եթե դա նրանց չէր հաջողվում ընտրում էին իրենցից կախման մեջ ընկած որևէ չքավորի կամ բատրակի»[28]։

---

26 Նույն տեղում, թ. 68։

27 Նույն տեղում,

28 Նույն տեղում, ց. 6, գ. 202, թ. 88։

Նէպի շնորհիվ գյուղում տեղի ունեցած փոփոխությունները, հատկապես դասակարգային տեղաշարժերը մշտապես գտնվում էին կուսակցության ուշադրության կենտրոնում։ Բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման շահերը պահանջում էին, որպեսզի տեղերում հատկապես միջակ, աշխատավորական տնտեսությունները չշփոթվեն կուլակայինների հետ։ Որոշակիություն չկար նաև չքավոր գյուղացուն ճիշտ բնութագրելու խնդրում. «...մինչև այժմ չկան չքավորությանը բնորոշելու ճշգրիտ չափեր ու մեթոդներ,— գրված է փաստաթղթերից մեկում,— մի դեպքում չքավոր են համարում նրանց, ովքեր հողից բացի ոչինչ չունեն, մի այլ դեպքում՝ ով ունի հող և մի զույգ եզ, մեկ կով և տաս ոչխար»[29]։ Հասկանալի է, որ սոցիալական շերտավորման մեջ հարաբերական մոմենտը միշտ էլ կա, սակայն չի կարելի այն ամբողջությամբ հարաբերական համարել։ Դա խանգարում էր չքավորությանը համախմբելու, նրանց պայքարը կազմակերպելու և տնտեսական վիճակը բարելավելու աշխատանքներին։ Այստեղից էլ տեղերում նկատվող ինքնահոսը, որը տնտեսական ծանր պայմաններում գտնվող չքավորությանը կամա թե ակամա դուրս էր մղում հասարակական տնտեսական աշխատանքներից։ «Գյուղի ամենապատասխ մասը չքավորն է,—նշվում է կուսակցության կենտկոմի հանձնարարությամբ կատարված մի ուսումնասիրության մեջ,— որը չնայած խորհուրդներում մեծամասնություն է կազմում, բայց չի կարողանում ակտիվ մասնակցել նրա աշխատանքներին... Անհրաժեշտ է պրակտիկայում, ոչ միայն նրանց տնտեսապես պոկել կուլակներից ու ունևորներից։ Դա առաջնահերթ նշանակություն ունի»[30]։

Այսպիսով, նէպի կենսագործման շնորհիվ մեր Հանրապետությունում 1920-ական թվականներին գյուղացիության շերտավորումը գնալով խորանում էր, և կուսակցությունն իր առօրյա պայքարում հաշվի առնելով այդ հանգամանքը, հիմնականում հենվելով չքավորների ու միջակ գյուղացիության վրա, պայքարում էր կուլակների մեկուսացման, նրանց գործունեության սահմանափակման համար։ Այդ աշխատանքներում տեղ գտած վրիպումներն ու սխալները հիմնականում բխում էին նրանից, որ դժվար էր հստակ սահմանել գյուղացիության տարբեր շերտերը, մանավանդ որ ունևոր խավը դիմում էր զանազան միջոցների՝ իր դասակարգային պատկանելությունը քողարկելու համար։ Անհրաժեշտ է

---

29 Նույն տեղում, ց. 7, գ. 179, թ. 48։

30 Նույն տեղում, ց. 6, գ. 262, թ. 8։

նշել, որ դեռևս բավականին թույլ էին նաև կուսակցական և սովետական մարմինների աշխատանքները, որոնք, հաճախ, առիթ էին ծառայում օբյեկտիվ և սուբյեկտիվ կարգի բազում սխալների համար։

Սովետական Միության մյուս հանրապետությունների համեմատությամբ հայկական գյուղում շերտավորումը բավականին թույլ էր տեղի ունենում։ Դա, ըստ երևույթին, պետք է բացատրել ինչպես սակավահողությամբ ու զաղթականության առկայությամբ, այնպես էլ տնտեսության սոցիալիստական կազմության համեմատական թուլությամբ, որի հետևանքով, հաճախ, գյուղատնտեսության առաջընթացի գործում ավելի վճռական դեր են խաղում մասնավոր-սեփականատիրական սեկտորը և ունևոր տարրերը, քան չքավորներն ու բատրակները։ Լոռի-Փամբակի Վորոնցովկայի (Կալինինո) շրջանում 1928 թ. կատարված մի ուսումնասիրության մեջ նշվում է, որ «...գյուղատնտեսության նկատվող վերելքը գնում է հիմնականում բնակչության ունևոր և կուլակային շերտերի հաշվին և մասնավոր կապիտալիստական հունով»[31]։ Սա հատուկ էր հանրապետության հիմնական գյուղատնտեսական շրջաններին, որտեղ մի կողմից բավականին թույլ էր զարգացած սոցիալիստական տրնտեսաձևը, մյուս կողմից՝ պետական անհրաժեշտ օգնության բացակայության հետևանքով, փաստորեն, գյուղատնտեսության վերելքը մասնավոր կապիտալիստական հունով էր գնում (չէ որ միջակ գյուղացու անհատական տնտեսությունը, որը գերիշխող էր դառնում, սոցիալիստական տնտեսություն չէր)։ «Ունևոր և կուլակային տնտեսությունների տնտեսական աճի հետ մեկտեղ,— գրված է արխիվային փաստաթղթերից մեկում,— իր աճի մեջ ծայրահեղ կերպով հետ է մնում չքավորական և մասամբ միջակ տնտեսությունը, որոնք անհրաժեշտ օժանդակություն չստանալով պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից, մշտապես տնտեսական կախման մեջ են ունևոր և կուլակային էլեմենտներից»[32]։

Կյանքը ցույց տվեց, որ անհատական հարկադրումը շահագործողական տարրերի տնտեսական գործունեությունը սահմանափակելու լավագույն միջոցներից մեկն էր, որի տարեցտարի ծանրացող բեռը ի վերջո քայքայեց կուլակային տնտեսությունները։ Նրանց քաղաքական ասպարեզից հեռու պահելուն մեծապես նպաստում էր ձայնադրման

---

31 Նույն տեղում, գ. 149, թ. 5։

32 Նույն տեղում, ց. 11, գ. 250, թ. 2։

քաղաքականությունը։ Դա ավելի վառ կերպով դրսևորվեց 1929—1930 թթ., երբ նէպի կենսագործման շնորհիվ ավարտվել էր ուժերի վերադասավորման, վերախմբավորման փուլը և նախապատրաստվում էր ամբողջ ճակատով հարձակման անցնելու նոր փուլ։ Բնականաբար, այս պայմաններում դասակարգային թշնամին զգալով իր վրա գործադրված ճնշումը, ավելի կատաղի դիմադրություն էր ցույց տալիս։ Ուստի պատահական չէր, որ կուսակցությունը, հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, պահանջում էր ավելի շատ ուշադրություն դարձնել չքավորների կազմակերպման վրա և չանտեսել կուլակային վտանգը։ Նախորդ տարիներին այդ բնագավառում նկատվող թերացումներն ու սխալները նոր պայմաններում, երբ ուժեղացվում էր հարձակումը, կարող էին վնասակար և ծանր հետևանքներ ունենալ։ 1929 թ. ապրիլին ՀԿ(բ)Կ կենտկոմը կուսակցական կազմակերպություններին ուղղած նամակում ընդգծելով վճռական գոտեմարտի նախօրյակին բանվորա-գյուղացիական դաշինքի էլ ավելի ամրապնդման անհրաժեշտությունը, զգուշացնում էր, որ տեղերում թերագնահատվել է ինչպես կուլակային վտանգը, այնպես էլ չքավորությանը կազմակերպելու անհրաժեշտությունը[33]։

Կուլակների և կուլակային տնտեսությունների դեմ պայքարի լավագույն ձևերից մեկը սովետական իշխանության հարկային ու վարկային քաղաքականությունն էր։ Աստիճանաբար գյուղատնտեսական հարկի հիմնական ծանրությունը դրվեց ունևորների և կուլակների վրա։ 1928/29 տնտեսական տարում գյուղհարկից ազատվել էր հանրապետության գյուղացիության 46%-ը, նորմալ հարկադրված էին 52,4%-ը և անհատական կարգով հարկ էին տալիս 1,6%-ը[34]։ Վեդու շրջանում, նույն տարում, գյուղատնտեսական հարկից ազատվել էր գյուղացիության 64,3%-ը, նորմալ կարգով հարկված էր՝ 35,0%-ը, և անհատական կարգով 0,7%-ը։ Ընդ որում, ուշագրավ է, որ հաջորդ՝ 1929/30 տնտեսական տարում մեկ ընտանիքի հաշվով եկամուտը կազմում էր. հարկից ազատվածներինը՝ 65 ռ., նորմալ հարկվածներինը՝ 226 ռ., անհատապես հարկվածներինը՝ 1026 ռ. (հանրապետությունում համապատասխանաբար 66, 240 և 1053 ռ.)[35]։ Էջմիածնի շրջանում 1930 թ. հուն-

33 Նույն տեղում, ց. 14, գ. 9, թ. 22։

34 Նույն տեղում, գ. 15, 236, թ. 19։

35 Նույն տեղում, գ. 238, թ. 5։

վարին գյուղատնտեսական հարկից ազատված էր գյուղացիության ճնշող մեծամասնությունը՝ 81,6%-ը։ Անշուշտ, դրանք նախկին անկարող տնտեսությունները չէին։ Պարզապես շրջանի հարկերի 50%-ը վճարում էին գյուղացիության 16,6%-ը կազմող միջակ և ունևոր տնտեսությունները, իսկ մյուս կեսը՝ 1,8%-ը կազմող կուլակները[36]։

Ինչպես տեսնում ենք, սովետական իշխանությունը ուշադիր հետևելով գյուղում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխություններին, որոշակի հարկային քաղաքականություն էր մշակել և այն հետևողաբար կիրառում էր գյուղացիության տարբեր շերտերի նկատմամբ։ Դրա շնորհիվ ավելի էր ամրապնդվում բանվորագյուղացիական դաշինքը և ուժեղանում պայքարը կուլակության դեմ։ Սակայն լինում էին ծայրահեղություններ և սխալներ։ Հատկապես մեծ վտանգ էր ներկայացնում կուլակության դեմ պայքարի մեթոդները միջակ գյուղացիության վրա տարածելը։ Խոսելով նման դեպքերի մասին, ՀՍՍՀ սովետների VI համագումարում (1929) նշվեց, որ «...գյուղերում չեն կարողանում պարզ որոշել այս կամ այն գյուղացու սոցիալական դրությունը։ Շատ դեպքերում շփոթում են միջակին ու կուլակին»[37]։ Դա հատկապես արտահայտվում էր անհատական հարկման ժամանակ, երբ ելնելով տարբեր պատճառներից (անհատական նկատառումներով, թայֆայական պայքար կամ պարզապես շատ հարկ հավաքելու միտումով) ավելի շատ տնտեսությունների էին հարկադրում, քան կարելի էր։ ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին բարտուղար Ա. Խանջյանի ստորագրությամբ տեղական կազմակերպություններին ուղղված նամակներից մեկում նշվում է, որ 1928/29 տնտեսական տարում անհատական կարգով հարկադրվածների շարքում ընդգրկվել են նաև բավականին թվով ոչ կուլակային տնտեսություններ, որի դեմ բազում բողոքներ են ստացվել։ Հատուկ ստուգումների միջոցով պարզվեց, որ անհատական կարգով հարկ նշանակելու համար ցուցակագրված 3582 տնտեսություններից (հանրապետության գյուղացիության 2,14%-ը), կուլակային են ճանաչվել 2637-ը (կամ 1,6 տոկոսը)։ Նման սխալները հղի էին լուրջ հետևանքներով։

ՀՍՍՀ վիճակագրական վարչության և գյուղբանկի հարկային տվյալներով 1920-ական թվականների վերջին, գյուղացիության շերտավորումը հետևյալ պատկերն ուներ (տոկոսներով)[38]։

---

36 Նույն տեղում. գ. 224, թ. 1։

37 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 809, թ. 78։

38 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 6, գ. 4, թ. 9 և ց. 13, գ. 251, թ. 25։

	1928/29	1928/30
1. Գյուղատնտեսական հարկից ազատված տնտեսություններ	46	62,6
2. Ընդհանուր կարգով հարկված տնտեսություններ	52,4	35,8
3 Անհատական կարգով հարկված տնտեսություններ	1,6	1,6

Ինչպես տեսնում ենք, տարեցտարի ավելանում էր հարկից ազատվող տնտեսությունների թիվը, և ծանրությունը դրվում էր ունևորների՝ առաջին հերթին կուլակների վրա: Եթե վերցնենք նույն տարիներին այդ խմբերի՝ ընդհանուր եկամուտներից ստացած բաժնի փոփոխությունը, ապա կտեսնենք, որ մեկ տարվա ընթացքում զգալիորեն ավելացել է առաջին խմբի եկամուտը (15,7%-ից հասնելով 27,4%-ի), որոշ չափով նվազել է II խմբի բաժինը, և աճել է III խմբի եկամուտը (9,6%-ից հասել 10,5%)[39]: Այստեղ կարևորը չքավորների և միջակ տնտեսությունների որոշ մասի տնտեսական ամրապնդումն է, որին ձգտում էր սովետական իշխանությունը: ՀԿ(բ)Կ VI համագումարում (1929) ցույց տրվեց, որ պետական օգնության և կոլեկտիվացման ծավալման շնորհիվ չքավորները բավականին ինքնուրույնություն են ձեռք բերել և հիմնականում ազատվել կուլակային շահագործումից:

Փոխվել էր նաև միջակ գյուղացու տնտեսական և հասարակական դերը: Լինելով գյուղական բնակչության հիմնական մասը (Հայաստանի ոչ բոլոր շրջաններում էր այն մեծամասնություն կազմում), միջակները զգալիորեն ամրապնդել էին իրենց տնտեսությունները և նրանց վերնախավի հաշվին աննշան չափով աճում էր կուլակությունը: Միջակ գյուղացին նույնպես ուշադիր հետևում էր սովետական իշխանության կողմից գյուղում տարվող քաղաքականությանը: Հաշվի առնելով կուլակության նկատմամբ գործադրվող սահմանափակումները, միջակը հիմնականում պահպանում էր իր ամուր, ուրիշի շահագործման վրա չհիմնված տնտեսությունը: Փաստորեն 1920-ական թվականների վերջերում, գյուղատնտեսության ընդհանուր վերելքի, չքավոր ու միջակ գյուղացիների տնտեսական ամրապնդման ու հասարակական դերի բարձրացման շնորհիվ կուլակները մեկուսացվել էին և չնայած որոշ, աննշան աճին, այլևս չէին խաղում այն դերը, ինչ սկզբնական շրջանում: ՀԿ(բ)Կ VI համագումարն ամփոփելով գյուղում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները, արձանագրեց. «Այժմյան հայկական գյուղի սոցիալական դեմքը բնորոշվում է ա) միջակ գյուղացու դերակշռու-

39 Նույն տեղում, ց. 6, գ. 4, թ. 9 և ց. 13, գ. 251, թ. 25:

թյամբ, որը, ինչպես քանակով, այնպես էլ տնտեսական նշանակությամբ մեր գյուղի հիմնական դեմքն է հանդիսանում։ բ) Անցյալից գյուղի ծանր ժառանգության շնորհիվ մինչև այժմ դեռևս շատ բարձր տոկոս են կազմում չքավորական տնտեսությունները, որոնք սակայն, բարելավելով իրենց տնտեսական վիճակը, ուժեղացնում են միջին շերտերին։ գ) Ներտավորման պրոցեսի շարունակության շնորհիվ, որոշ չափով շարունակում է կուլակների աճը, որը տեղի է ունենում միջակ գյուղացիության վերնախավի հաշվին»[40]։

Ինչպես նշեցինք, կուլակության դեմ ուժեղացող տնտեսական պայքարի հետ մեկտեղ ուժեղանում էր նաև քաղաքական պայքարը, հատկապես նրան ձայնազրկելու և հասարակական կյանքից արտամղելու իմաստով։ Այդ իսկ պատճառով ընտրական իրավունքից զրկելու շուրջը հանրապետությունում սուր և լարված դասակարգային պայքար էր ծավալվում, որովհետև ձայնազուրկները, որպես կանոն, համարվում էին ոչ հարազատ տարրեր և զրկվում քաղաքացիական իրավունքներից, ինչպես նաև հաճախ ընկնում անհատական հարկման տակ։ Հատկապես գյուղական վայրերում ամեն կերպ ձգտում էին պահպանել ձայնի իրավունքը, նույնիսկ եթե նրանից օգտվելու ոչ մի հեռանկար չունեին։

1929 թ. սովետների ընտրությունների շուրջը ծավալված պայքարի շրջանում ընտրական իրավունքից զրկվել էր 38533 մարդ, ընդ որում, գյուղական վայրերում՝ ընտրական իրավունք ունեցողների 6,5%-ը, իսկ քաղաքներում՝ 16,2%-ը[41]։ Դրանք մեծ մասամբ վարձու աշխատանքից օգտվողներն էին, անաշխատ եկամուտով ապրողները, առևտրականները, նախկին ցարական պաշտոնյաները, դատապարտվածները և այլն։ Այս խնդրում ևս, ինչպես և անհատական հարկման ցուցակները կազմելիս, ըստ երևույթին, տեղական ղեկավարները, հատկապես գյուղական վայրերում, ավելորդ ջանքեր էին գործադրել ձայնազուրկների ցուցակը որքան կարելի է մեծացնելու համար։ ՀՍՍՀ սովետների VI համագումարն անդրադառնալով այդ հարցին նշեց, որ «մեր գյուղերում այսքան մեծ տոկոս կուլակություն և խորհրդային իշխանության անհրաժեշտ տարրեր չկան»[42]։ Նույնիսկ տնտեսապես քայքայված և թույլ զարգացած Ապարանի կամ Համամլուի (Սպիտակ) շրջաններում ձայնազուրկների քանակն անցնում էր 8—9%-ից։ «Դա բխում է նրանից,—

---

40 Նույն տեղում, ց. 13, գ. 7, թ. 12։

41 Նույն տեղում, ց. 12, գ. 993, թ. 49—50։

42 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 809, թ. 34։

նշվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմին ղրված մի նամակում,— որ տեղական կազմակերպությունները չափազանց ձևական են մոտեցել ընտրական ցուցակները կազմելուն և դրա հետևանքով իրենց իրական կացությամբ միջակները և նույնիսկ շատ տեղերում չքավորները ղրկվել են ձայնից»[43]: Ինչ խոսք, հարցը միայն ձևական մոտեցման մեջ չէ: Իշխանությունը ուժ է, իսկ ուժը օգտագործելու համար որոշ հմտություն և կարողություն է անհրաժեշտ: Հակառակ դեպքում նրա գործադրումը կարող է վնասակար հետևանքներ ունենալ: Շատ տեղական ղեկավարներ չկարողանալով բարձր մակարդակով ղեկավարել քաղաքական և տնտեսական կյանքը, հաճախ խճճվում էին առօրյա մանրուքների մեջ և դասակարգային պայքարը հանգեցնում թայֆայական կամ անհատական գզվռոցի: Դա երբեմն ունենում էր սոցիալական տխուր հետևանքներ:

Այսպիսով, 1920-ական թվականներին ՀԿ(բ)Կ գլխավորությամբ Հայաստանում կենսագործված ազրարային քաղաքականության շնորհիվ գյուղատնտեսությունը բռնեց անշեղ վերելքի ուղին, զգալիորեն գերազանցելով նախապատերազմյան մակարդակը: Սակայն դա սոսկ նախկին մակարդակի վերականգնումը չէր: Դասակարգային ճիշտ քաղաքականության հետևանքով այդ ժամանակաշրջանում գյուղում տեղի ունեցավ շերտավորման նոր պրոցես, երբ ուժեղացավ և գյուղի կենտրոնական դեմքը դարձավ մջակ գյուղացիությունը: Սովետական իշխանության կողմից կենսագործվող նոր տնտեսական քաղաքականության շնորհիվ զգալի չափով բարելավվեց չքավոր գյուղացիության վիճակը, բարձրացավ նրա հասարակական-քաղաքական դերը, որը որպես գյուղում պրոլետարիատի հենարան վիթխարի դեր խաղաց բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման գործում: Կուլակությունը չնայած այդ շրջանում որոշ չափով ավելացավ, բայց էության մեջ զուրկ էր գյուղացիության մյուս շերտերից և դուրս մղվեց ինչպես տնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության ասպարեզից: Զգալով իր մոտալուտ կործանումը, կուլակությունն ավելի ակտիվ պայքար սկսեց սովետական իշխանության դեմ, որը և հարկադրեց վերջինիս՝ վերցնելու կուլակությունը որպես դասակարգ վերացնելու կուրսը: Դա կենսագործվեց մեր երկրում գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման տարիներին:

---

43 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 14, գ. 4, թ. 24:

2. ԲԱՆՎՈՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը բախտորոշ նշանակություն ունեցավ նաև բանվոր դասակարգի կոնսոլիդացման և նրա քանակական ու որակական աճի տեսակետից։ Սակայն նէպին անցնելով այդ հարցերն անմիջապես չլուծվեցին։ Ավելին, սկզբնական շրջանում նույնիսկ էական փոփոխություններ տեղի չունեցան։ Բանվոր դասակարգի քանակական նվազումն ու կենսամակարդակի անկումը արդյունաբերության քայքայման ու անկման հետևանքն էր։ Ուստի նրա հավաքագրման համար առաջին հերթին անհրաժեշտ էր վերականգնել արդյունաբերությունը։ Սակայն կուսակցությունը զգում էր, որ այդ քայքայման ու ավերվածության պայմաններում արդյունաբերության վերականգնումը հնարավոր չէր առանց գյուղատնտեսության վերականգնման։ Դա է հիմնական պատճառը, որ իշխանությունը վերցրած և տընտեսական բարձունքներն իր ձեռքում պահող բանվոր դասակարգն առաջին հերթին մտահոգված էր մանր արտադրության վրա հենվող գյուղացիական տնտեսությունների վերականգնման ու ամրապնդման խընդրով։ Այնպես որ, նէպը բանվոր դասակարգի կոնսոլիդացման լավագույն միջոցն էր հանդիսանում։

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններն ու արհեստանոցները որակյալ մասնագետներով ապահովելու նպատակով կառավարության հատուկ որոշմամբ բոլոր քաղաքացիների համար ըստ մասնագիտության ու արհեստի աշխատելը հայտարարվեց պարտադիր, և ոչ իրենց մասնագիտությամբ աշխատողների հաշվառում անցկացվեց[44]։ Ամենուր սկսեցին կազմվել մասնագետների ցուցակներ և ներկայացվել կառավարությանը։ Դրա հետ մեկտեղ, աշխժողկոմատը, որպեսզի կարողանա հիմնարկ-ձեռնարկություններին կազմակերպված ձևով բանուժ մատակարարել և որոշ չափով կարգավորել աշխատանքային շուկան՝ բանվորական ազատ ուժերի հաշվառում էր անց կացնում։ Ձեռնարկված այս միջոցառումները կարևոր դեր խաղացին տեղական արդյունաբերության վերականգնման, բանվորական ուժի և համապատասխան մասնագետների հավաքագրման գործում։ Դրանց շնորհիվ տարեցտարի Հանրապետության բանվոր դասակարգը աճեց և աստիճանաբար դարձավ հասարակական-տնտեսական զարգացման առաջատար ուժը։ Հանրապետության միայն ցենզային արդյունաբերության մեջ աշ-

---

44 Նույն տեղում, ց. 4, գ. 118, թ. 98։

խառող բանվորների թիվը 1923—1927 թթ. աճեց ավելի քան 16 անգամ։ Այդ մասին են վկայում հետևյալ աղյուսակի տվյալները[45]։

Տնտեսական տարի	Ձեռնարկությունների թիվը	Բանվորների թիվը
1923/24	25	345
1924/25	40	1999
1925/26	51	3703
1926/27	73	5821

Սակայն, ցեղային արդյունաբերության ձեռնարկությունները հիմնականում մանր էին և տեխնիկապես թույլ զինված։ 1926/27 տնտեսական տարում հանրապետությունում միայն 10 ձեռնարկություն կար, որտեղ աշխատող բանվորների թիվն անցնում էր 100-ից, իսկ հիմնական մասը՝ (մոտ 40-ը) ուներ մինչև 30 բանվոր[46]։ *Բացի այդ, ցեղային արդյունաբերությունը դեռևս վճռական դեր չէր խաղում բանվոր դասակարգի ձևավորման խնդրում։ Բավականին մեծ էր մանր արդյունաբերական ձեռնարկությունների դերը։ 1925 թ. հարկման և հաշվառման տվյալներով Հայաստանում քաղաքային մանր արդյունաբերական ձեռնարկությունների թիվը հասնում էր 1127-ի, որտեղ զբաղված էր 2496 աշխատող (որից 749-ը վարձու բանվոր), իսկ գյուղական վայրերում՝ 6449 ձեռնարկություն, 8632 աշխատողով (որից վարձու՝ 1465 մարդ)։ Այսպիսով, մեր հանրապետությունում գործում էին 7576 մանր արդյունաբերական ձեռնարկություններ՝ ավելի քան 11 հազար աշխատողներով, որոնցից 2214-ը՝ վարձու բանվորներ*[47]։ *Ինչպես տեսնում ենք, ցեղային արդյունաբերությունը, որտեղ կենտրոնացված էին սոցիալիստական ձեռնարկությունները, իրենց սակավաթիվ բանվորական կադրերով հանրապետության տնտեսական կյանքում դեռևս չէին խաղում այն վճռական դերը, ինչպես օրինակ, հարևան հանրապետություններում։ Իսկ մանր արդյունաբերական ձեռնարկությունները, չնայած նույնպես աչքի չէին ընկնում բանվորական խոշոր կուտակումներով, սկզբնական շրջանում ավելի էական դեր էին խաղում, ինչպես բանվո-*

45 «Խորհրդային Հայաստանը թվերով» 1923—1927, Երևան, 1928, էջ 124
46 Նույն տեղում, էջ 132։
47 Նույն տեղում, էջ 135։

բության հավաքագրման, այնպես էլ աղգաբնակչության կարիքների բավարարման հարցում։

Սակայն այդ բոլորով հանդերձ չպետք է մոռանալ նաև, որ հանրապետության բանվոր դասակարգը միատարր չէր։ Նրա ավելի առաջավոր, ավելի կազմակերպված, բարձր որակավորում ունեցող մասն էր հիմնականում իր ուսերի վրա կրում հասարակության վերափոխման ամբողջ ծանրությունը՝ հանդես գալով որպես նորի ու առաջավորի կրող։ Գոյություն ուներ նաև հակառակ ծայրը՝ հիմնականում գյուղական բնակչությունից համալրված բանվոր դասակարգի առավել հետամնաց մասը, որը դեռևս չէր ազատագրվել մանրաբուրժուական գաղափարախոսությունից։ Մեր երկրում սոցիալիզմի կառուցման բոլոր գույնի ու երանգի հակառակորդները չկարողանալով տարբերել բանվոր դասակարգի այս երկու, իրարից շատ բանով տարբեր ծայրերը, կուսակցության դեմ մղած իրենց պայքարում հենվում էին նրա առավել ետ մնացող մասի վրա՝ այն ներկայացնելով որպես ամբողջ բանվորության շահերի արտահայտիչ։

Վերականգնելով և վերակառուցելով սոցիալիստական արդյունաբերությունը, զգալիորեն փոխվեց նաև ինքը՝ բանվոր դասակարգը։ Նախ փոխվեց նրա սոցիալական դեմքը, և ձևավորված դասակարգային նոր հարաբերություններն օբյեկտիվորեն նոր պայմաններ ստեղծեցին բանվոր դասակարգի շուրջը աշխատավորության մյուս խավերին համախմբելու համար։ Սոցիալիստական ինդուստրացման շնորհիվ փոփոխության ենթարկվեց նաև բանվոր դասակարգի մասնագիտական կառուցվածքը։ Մի շարք հին, ցածր արտադրողական մասնագիտություններ իրենց տեղը զիջեցին նոր, բարձր որակավորում պահանջող, հատկապես արտադրության մեքենայացման հետ կապված մասնագիտություններին։ Միաժամանակ տեղի ունեցավ բանվոր դասակարգի երիտասարդացում, որը թարմ հոսանք մտցրեց նրա մեջ, բարձրացավ տեխնիկական մտավորականության դերը արտադրության ղեկավարման մեջ և բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական կյանքում։ Փոխվեց բանվոր դասակարգի սեռական կազմը. ավելացավ կանանց քանակը, որոնք ընդգրկվեցին ոչ միայն արտադրական, այլև հասարակական գործունեության ասպարեզը։

Հայաստանի համար կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ գաղթականության մեջ մեծ թվով արհեստավորներ կային, երբեմն բավականին բարձրորակ, որոնք սկզբնական շրջանում համապատասխան աշխատանք չէին կարողանում գտնել։ Նրանց աշխատանքի

տեղավորման հարցը, ինչպես նաև մասնագիտական որակավորումը հաշվի առնելով արդյունաբերության (հիմնականում թեթև և սննդի) այս կամ այն ճյուղը զարգացնելը շատ կարևոր նշանակություն ուներ նէպի առաջին տարիներին։ Թերևս դա էր պատճառը, որ մեզ մոտ առանձին, մասնագիտությունների գծով (ջուլհակներ, ներկարարներ, կոշկակարներ և այլն) կադրերի պատրաստման վրա այնքան էլ մեծ ուշադրություն չէր դարձվում, ինչպես մյուս հանրապետություններում։

Նէպի առաջին էտապում սակավահող կամ հողազուրկ գյուղացիությունն իր գոյությունը պահպանելու համար աշխատանք էր որոնում ինչպես հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Դա բացատրաբար էր անդրադառնում բանվոր դասակարգի քանակական և որակական աճի վրա։ Զանգեզուրի գավառից 1926 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմ ներկայացված զեկուցագրերից մեկում նշված է հետևյալը. «Ուշադրության արժանի երևույթ է այն, որ բանվորների խոշոր տոկոսը չի կտրված գյուղական տնտեսություններից. ընդհակառակը, նա ավելի է կապված այդ տնտեսության հետ։ Շատ անգամ հանքերում իրենց գրությունը բարելավելով հեռանում են արտադրությունից և գյուղ քաշվում»[48]։ Համարյա նույն վիճակն էր նաև արդյունաբերական մյուս կենտրոններում[49]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման և առաջին հերթին սոցիալիստական արդյունաբերության զարգացման շնորհիվ հանրապետության բանվոր դասակարգը արագ տեմպերով սկսեց ավելանալ։ 1923—1927 թթ. հանրապետության բանվոր դասակարգի աճը հետևյալ թվերով է բնորոշվում. եթե 1923 թ. բանվորների քանակը ընդունենք 100%, ապա 1924 թ. այն կազմեց 145, 1925 թ.՝ 193, 1926 թ.՝ 233, իսկ 1927 թ.՝ 342%[50]։ Առանձին ճյուղերում (օրինակ տեքստիլ արդյունաբերության մեջ) այդ աճն ավելի բարձր էր։

Բանվոր դասակարգի ավելացման հիմնական աղբյուրներն էին գյուղը, գաղթականությունն ու ամերիկյան որբանոցների մեծահասակ որբերը։ Հասկանալի է, որ այդպիսի համալրումով դժվար էր հետևողականորեն կենսագործել պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքականությունը։ Լենինականի երկաթգծի բանվորության սոցիալական վիճակի

48 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 7, գ. 159, թ. 49։

49 Նույն տեղում, ց. 2, գ. 209, թ. 203։

50 «Խորհրդային Հայաստան», 30 սեպտեմբերի, 1927, ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 163, ց. 1, գ. 31, թ. 4։

Թուրքիկ ուսումնասիրությունը պարզեց, որ նրա շուրջ 70%-ը կապված էր գյուղի հետ (կային նույնիսկ գյուղում բատրակ պահողներ)[51]: Պարզ է, որ դրանք արդյունաբերության հետ իրենց սերտորեն կապված չէին ղղում և գործարանի վրա նայում էին որպես եկամուտի լրացուցիչ աղբյուրի: Բանվորության մի մասի այդ անկայուն վիճակը բացասաբար էր անդրադառնում ամբողջ բանվորության վրա:

Վ. Ի. Լենինը կուսակցության X համագումարում նշում էր, որ մինչև 1921 թ. գարունը, դեռևս սովետական իշխանությունը չէր կարողացել տնտեսական կայուն պլան մշակել սոցիալիստական արդյունաբերության և մեծամասնությամբ գյուղացիության հարաբերությունները ճիշտ կերպով կարգավորելու համար: Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը մի այնպիսի երկրում, որտեղ բնակչության մեծամասնությունը գյուղացիությունն էր, տնտեսական շինարարության հաջողությունը հիմնականում կախված էր մանրբուրժուական մասսայի հետ ճիշտ փոխհարաբերություն սահմանելու բանվոր դասակարգի կարողությունից: Սովետների Համառուսաստանյան IX համագումարում Վ. Ի. Լենինը նշել է. «Իհարկե, նոր տնտեսական քաղաքականության էությունը պրոլետարիատի և գյուղացիության դաշինքն է, էությունը պրոլետարիատի ավանգարդի և գյուղացիական լայն մասսայի զոդումն է»[52]: Միայն բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդմամբ էր հնարավոր վերականգնել ժողովրդական տնտեսությունը և հիմքեր ստեղծել սոցիալիստական հասարակարգի կառուցման համար: Բացի այդ, միջակ գյուղացիության հետ պրոլետարիատի դաշինքի ամրապնդումն ուներ նաև քաղաքական կարևոր նշանակություն. մենշևիկների և հատկապես էսէռների ոտքի տակից խլվում էր այն հողը, որի վրա նրանք հենվում էին կոմունիստական կուսակցության դեմ իրենց մղած պայքարի ընթացքում:

Հոկտեմբերյան հեղափոխությունը տեղի ունեցավ միջակի չեզոքացման պայմաններում, հենվելով չբավոր գյուղացիության վրա: Միջակն այն ժամանակ դեռևս գյուղի հիմնական դեմքը չէր: Բայց, երբ պրոլետարիատի դիկտատուրայի կողմից կենսագործվող ագրարային վերափոխումների հետևանքով միջակը դարձավ գյուղի կենտրոնական դեմքը, իսկ դա շատ արագ տեղի ունեցավ, նրան այլևս շրջանցել հնարավոր չէր: Անհրաժեշտ էր լեզու գտնել նրա հետ: Պատահական չէ, որ

---

51 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 168, թ. 183—185:

52 Վ. Ի. Լենին, երկեր հ. 33, էջ 194:

միջակի հետ դաշնակցելու գաղափարը Վ. Ի. Լենինն առաջին անգամ արտահայտել է 1918 թ. օգոստոսի 6-ին՝ Ելեցկի բանվորներին հղած նամակում. «Մենք այդպիսի դաշինքի,— գրում է նա,—միջակ գյուղացիության հետ համաձայնության գալուն կողմնակից ենք, որովհետև պետք չէ, որ մենք, բանվոր կոմունիստներս նրա հետ տարակարծիք լինենք և մենք պատրաստ ենք նրան մի շարք զիջողություններ անելու»[53]։ Կուսակցության VIII համագումարից սկսած հետևողական պայքար էր մղվում միջակ գյուղացիության հետ դաշինքն ամրապնդելու համար։ Սակայն այդ պայքարն ավելի սրվեց նէպին անցնելուց հետո, որը ինչպես հարկն է շոշափեց բոլոր խավերի և կուսակցությունների շահերը։ Հասկանալի է, որ այդ պայմաններում բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման համար մղվող պայքարը առաջնահերթ նշանակություն էր ստանում։

Կուսակցությունը գտնում էր, որ բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման և բանվոր դասակարգի առաջատար դերն ապահովելու համար անհրաժեշտ է առաջին հերթին հոգ տանել պետության ձեռքում գտնվող տնտեսական հրամանատարական բարձունքների արագ տեմպով զարգացման համար (խոշոր արդյունաբերություն, տրանսպորտ, ֆինանսներ, վարկային սիստեմ և այլն), ապա վերականգնելով գյուղատնտեսությունը, գյուղում լայնորեն արմատավորել կոոպերացիան (իր տարբեր ձևերով) և աստիճանաբար այն մղել զարգացման սոցիալիստական ուղին։ Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ էր հետևողական պայքար մղել կապիտալիստական տարրերին ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության ու առևտրի բնագավառներից արտամղելու համար։ Դաշինքի ամրապնդման խնդրում սակավ կարևորություն չուներ բանվորների և գյուղացիների նյութական ու կուլտուրական մակարդակի, ինչպես նաև նրանց քաղաքական ակտիվության բարձրացումը։ Ինչպես տեսնում ենք բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդումը միջոցառումների մի ամբողջ սիստեմ է, որով բնորոշվում էր կուսակցության քաղաքականությունը անցման շրջանում։

Անշուշտ, այդ բոլորը չի նշանակում թե կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում, երբ ամեն ինչ արվում է դաշինքի ամրապնդման համար, ոչ մի հակասություն գոյություն չունի սոցիալիստական կացութաձևի վրա հենվող բանվոր դասակարգի և գյուղացիական մանրապրանքային արտադրության միջև։ Այդ հակասու-

53 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 44։

թյունը հիմնականում դրսևորվում էր սովետական իշխանության հարկային քաղաքականության, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի գների մեջ և այլ հարաբերություններում, որտեղ բավականին մեծ դեր ուներ պրոլետարիատի դիկտատուրայի կարգավորիչ ձեռքը։ Թեև դրանք իրարամերժ հակասություններ չէին, նրանց ճիշտ հաշվի չառնելը կարող էր բացասաբար անդրադառնալ բանվորագյուղացիական դաշինքի վրա։

Եթե տնտեսության ինդուստրացման, սոցիալիստական արդյունաբերության զարգացման հարցերը հիմնականում լուծվում էին միութենական մասշտաբով, որից և մեծ չափով կախված էր տնտեսական ամեն մի գոտու կամ ազգային հանրապետության նյութական բազայի ստեղծման բախտը, ապա գյուղատնտեսության վերականգնման և այդ գործում բանվոր դասակարգի խաղացած դերի հարցը, որն ի վերջո բանվորագյուղացիական դաշինքի կոնկրետ արտահայտություններից մեկն էր, ամեն մի հանրապետությունում իր առանձնահատուկ դրսևորումն է ունեցել՝ կապված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների հետ։ Հայաստանի ավելի գյուղատնտեսական լինելը, բանվոր դասակարգի սակավաթվությունը, արդյունաբերության խաղացած տնտեսական թույլ դերը և այլն, անկասկած դաշինքի ամրապնդման այլ ուղիներ ու միջոցներ էին առաջադրում, քան մյուս վայրերում։ Այստեղ, անկասկած, դոնե սկզբնական շրջանում, առաջին պլան էր մղվում գյուղացիությանը ցույց տրվող քաղաքական և տնտեսական օգնությունը, որը վճռական դեր խաղաց գյուղացիությանը համախմբելու հիմնական շահագործող տարրերի՝ կուլակության դեմ համատեղ պայքարելու, ինչպես նաև բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման գործում։ Այդ իմաստով կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի սովետական իշխանության կողմից կենսագործվող ագրարային քաղաքականությունը՝ հողաշինարարական աշխատանքները, ոռոգման ցանցի ընդլայնումը, գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը, հարկային ու վարկային քաղաքականությունը և մանավանդ չքավոր ու միջակ գյուղացիներին տրվող արտոնությունները։ Բանվոր դասակարգի կողմից գյուղացիությանը ցույց տրվող օգնության բազմազան ձևերից անհրաժեշտ է հիշատակել նաև գյուղացու տների կազմակերպումը քաղաքներում։

Հայտնի է, որ հայ բանվոր դասակարգը հիմնականում ձևավորվել է Կովկասի արդյունաբերական կենտրոններում։ Հանրապետությունում սովետական կարգեր հաստատելուց հետո էլ, զգալի թվով բարձրորակ

բանվորներ շարունակում էին աշխատել դրսում: Դա յուրահատուկ պայմանների մեջ էր դնում գյուղին օգնություն և օժանդակություն ցույց տվող բանվորներին: Եթե Միության մեջ, որպես կանոն, բանվորները արձակուրդներին գյուղ էին գնում (իրենց ծննդավայրը) և ակտիվորեն մասնակցում տեղի աշխատանքներին, ապա Հայաստանում դա հնարավոր չէր: Հայազգի բանվորները հիմնականում աշխատում էին Կովկասի արդյունաբերական կենտրոնում և միշտ չէ, որ կարող էին իրենց ծննդավայրը վերադառնալ: Այդ պայմաններում ծնվեցին այսպես կոչված «հայրենակցական միությունները», որոնք զգալի չափով նպաստեցին իրենց գյուղերի տնտեսական և կուլտուրական վերելքին: 1924 թ. սեպտեմբերի 3-ին «Խորհրդային Հայաստան» թերթում նյութեր հրապարակվեցին այն մասին, որ Ջանգեզուրի Հալիձոր գյուղի նախկին բնակիչները, որոնք որպես բանվոր էին աշխատում Բաքվի նավթահանքերում, իրենց միությունն են ստեղծել գյուղին օգնություն ցույց տալու համար: Հալիձորցի բանվորների հայրենակցական միությունն ուներ իր կանոնադրությունը, որով նախատեսվում էր միջոցներ կուտակել գյուղի ոռոգելի տարածություններն ընդարձակելու նպատակով ջրանցք կառուցելու համար, օգնել գյուղի կոոպերատիվի ամրապնդմանը, բացել դպրոց, կառուցել փոքրիկ հիվանդանոց և այլն: Սա, փաստորեն, բանվոր դասակարգի նոր վերաբերմունքի արտահայտությունն էր իր համագյուղացիների նկատմամբ, նրա հոգատարության դրսևորումը: Հալիձորցիների այդ նախաձեռնությունը լայն արձագանք գտավ առաջին հերթին Ջանգեզուրի մյուս գյուղերից արդյունաբերական կենտրոններում աշխատող բանվորների մեջ: Շուտով բազմաթիվ հայրենակցական միություններ կազմակերպվեցին Բաքվում, Թիֆլիսում և մյուս վայրերում: Դրանց միջոցով գյուղերին դրամ, գրականություն, գյուղատնտեսական մեքենաներ, մանուֆակտուրա և այլն էին ուղարկում: «Այդ կազմակերպությունները,—ՀԿ(բ)Կ Կենտկոմին հայտնում էին Ջանգեզուրից,— խոստանում են մեծ ապագա գյուղերին աջակցելու գործում»[54]: Հետագայում, երբ շեֆական աշխատանքներն ավելի կազմակերպված բնույթ ընդունեցին, Համկ(բ)Կ Կենտկոմին կից գործող կենտրոնական շեֆական հանձնաժողովը 1929 թ. հունիսի 3-ի որոշման մեջ բարձր գնահատելով հայրենակցական միությունների կատարած աշխատանքները համագյուղացիներին օգնություն ցույց տալու գործում, միաժամանակ նշեց, որ «...իրենց գյուղերին սիստեմատիկ և կազմակերպված օգնություն ցույց

54 Նույն տեղում, ֆ. 1, ց. 13 գ. 396, թ. 19:

տալու համար միևնույն գյուղից դուրս եկած բանվորների միավորումը պետք է դառնա շենքական ընկերությունների հիմնական խնդիրներից մեկը, որի համար անհրաժեշտ է մասսայական աշխատանքներ ծավալել քաղաքներում»[55]: Հայրենակցական միությունները նպաստելով գյուղատնտեսության վերելքին, բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդմանը, նոր թափ ու բովանդակություն ստացան գյուղի սոցիալիստական վերակառուցման շրջանում:

Կենսագործելով կուսակցության կանխագծումները բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման և գյուղում սոցիալիստական կացութաձևի զարգացման խնդրում, սովետական կառավարությունը մեծ տեղ էր հատկացնում քաղաքի և գյուղի աշխատավորների միջև անմիջական, ընկերական կապերի հաստատմանն ու ամրապնդմանը: Դրա լավագույն ձևերից մեկը հանդիսացավ Ռուսաստանում՝ հատկապես Մոսկվայում, Պետրոգրադում, Իվանովո-Վոզնեսենսկում և այլ քաղաքներում շենքական բջիջների կազմակերպման ուղղությամբ կուտակված փորձի մասսայականացումը մեզ մոտ[56]: Սակայն քանի որ Հայաստանում չկային խոշոր արդյունաբերական կենտրոններ, և բանվոր դասակարգի ջոկատները դեռևս նոսր ու թույլ էին, ի տարբերություն Միության մյուս վայրերի, շենքական աշխատանքներ ծավալելու կոչին առաջինն արձագանքեցին պետական հիմնարկների ծառայողներն ու զինվորական միավորները: Այսպես, հաշվի առնելով Շիրակի ջրանցքի նշանակությունը հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում, սովետական ապարատի աշխատողների արհմիությունը որոշեց 1922 թ. դեկտեմբեր ամսվա մեկ օրվա աշխատավարձը հատկացնել նրա շինարարությանը[57]: Շուտով այդ ջրանցքի կառուցումը համաժողովրդական շինարարություն հայտարարվեց և Հանրապետության տարբեր քաղաքներից ու զորամասերից օգնության եկան՝ այն ժամանակին կառուցելու համար: 1923 թ. փետրվարին Հայաստանի արտակարգ հանձնաժողովի կոմունիստական բջիջը վերցրեց Հրազդանի շրջանի Թաղագյուղ և Նորագավիթ գյուղերի շենքությունը: Եվ այսպես, մեր հանրապետությունում ևս ծայր առան շենքական աշխատանքները, որոնք մամուլի օգնությամբ լայնորեն մասսայականացվեցին ու տարածվեցին: ՀԿ(բ)Կ II համագումարը (1923 թ. փետրվար) ամփոփելով շենքական աշխատանքների առաջին արդյունքները,

---

55 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 4, գ. 199, թ. 8:

56 «Խորհրդային Հայաստան», 3 փետրվարի, 1923:

57 Նույն տեղում, 19 հունվարի, 1923:

հատուկ որոշում ընդունեց այն լայնորեն ծավալելու մասին՝ գյուղերին տնտեսական և կուլտուրական օգնություն ցույց տալու նպատակով։ 1923 թ. մարտին նույնպիսի որոշում ընդունեց նաև ՀԿ(բ)Կ Երևանի քաղկոմը, իսկ ապրիլին Երևանի 15 կուսակցական բջիջներ արդեն վերցրել էին քաղաքամերձ 23 գյուղերի շեֆությունը[58]։ Այսպես, «Արարատ» գործարանի բանվորները ձեռնամուխ եղան Ղամարլուի (Արտաշատ) ճահիճների չորացման աշխատանքներին և բավականին մեծ գործ կատարեցին այդ ուղղությամբ։ Լենինականի կոմունալ տնտեսության կոմունիստական բջիջը ենթաշեֆ Հոռոմ գյուղում կազմակերպեց խրճիթ-ընթերցարան[59]։ Հանրապետության համարյա թե բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները շեֆական աշխատանք ծավալեցին այս կամ այն գյուղի նկատմամբ, հոգ տանելով նրա տնտեսական ու կուլտուրական զարգացման մասին։

Բացի նյութական օժանդակությունից, շեֆական աշխատանքներում մեծ տեղ էր հատկացվում նաև անգրագիտության վերացման և կուլտուր-լուսավորական աշխատանքներին։ Կուսակցությունը քաջ գիտակցում էր, որ որքան բարձր լինի գյուղացիության կուլտուրական մակարդակը, այնքան հեշտ կլինի պրոլետարիատին՝ կենսագործել իր քաղաքականությունը գյուղում։ Իսկ դրան մեծապես նպաստում էին գյուղում խրճիթ-ընթերցարանների, դպրոցների կառուցումը, անհրաժեշտ գրականությունով ապահովելը և այլն։ Հատկապես նեպի կենսագործմամբ հասարակական բոլոր շերտերի ակտիվացման և ուժերի վերակառուցման շրջանում գյուղում տարվող կուլտուր-դաստիարակչական աշխատանքները շատ կարևոր նշանակություն ունեին, ինչպես գյուղացիության կուլտուրական մակարդակի բարձրացման, այնպես էլ հասարակական բարդ և խճճված հարաբերություններում նրանց ճիշտ կողմնորոշելու խնդրում։ Դա փաստորեն պայքարի որոշակի բնագավառ էր, որը մղվում էր գյուղացիությանը մարքս-լենինյան գաղափարներով դաստիարակելու համար, որի թուլացումից շահում էին միայն թշնամիները։ «Քաղաքի և գյուղի կուլտուրական կապի թուլության պատճառով,— նշված է ՀԿ(բ)Կ կենտկոմի 1923 թ. շրջաբերականներից մեկում,— գյուղացիական, աշխատավորական մասսան պատրաստ է կուլ գնալ նեպի հետևանքով զարգացող մանրբուրժուական իդեոլոգիական

58 С. Аллахвердян, նշվ. աշխ., էջ 52։

59 «Խորհրդային Հայաստան», 10 հուլիսի, 1924։

տարբերին»[60]: Կուլտուրական շինֆության հարցը դիտելով որպես գյուղի և քաղաքի բանվորագյուղացիական փոխհարաբերության կարևոր բնագավառ, կուսակցությունը պահանջում էր չտարվել առանձին կամպանիաներով և հետևողական աշխատանք ծավալել:

Նէպի կենսագործմամբ երկրում տեղի ունեցած դասակարգային փոփոխությունները նոր պահանջներ առաջադրեցին պրոլետարիատի դիկտատուրային՝ գյուղացիությանը տնտեսական և քաղաքական օգնություն ցույց տալու խնդրում: Ավելի քան երբևէ անհրաժեշտ էր ամրապընդել բանվորագյուղացիական դաշինքը, օգտագործել դասակարգային մերձեցման ու զոդման բոլոր ձևերը, որպեսզի հնարավոր լինի մեկուսացնել փարթամացող շահագործողներին և կանխել նրանց բոլոր տեսակի մեքենայությունները: «Կոմունիստական կուսակցության ամենակարևոր ու անհետաձգելի հարցերից ու խնդիրներից մեկն է դարձել,— գրված է ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1924 թ. շրջաբերականներից մեկում,— գյուղի և քաղաքի կապի, գյուղում տարվելիք աշխատանքների խորացումը և ուժեղացումը: Գյուղատնտեսության ընդհանուր և զգալի զարգացումը և դրանից առաջացած մեր գյուղացիության թե՛ չքավորի, թե՛ միջակի և թե կուլակի ակտիվացումը, մեր բոլորիս առջև դնում է գյուղում տարվելիք խորհրդային, կուլտուրական և տնտեսական աշխատանքների խորացման ու ծավալման անհետաձգելի հարցը»[61]: Այդ պայմաններում առաջնահերթ նշանակություն էր ստանում պրոլետարիատի օգնությամբ գյուղի չքավոր և միջակ տնտեսությունների ամրապնդումը, որոնք աստիճանաբար համախմբվելով բանվոր դասակարգի շուրջը, ամուր հիմք էին հանդիսանում սովետական իշխանության համար: Քանի որ մեր հանրապետության արդյունաբերության թույլ զարգացած լինելու հետևանքով, տնտեսության մեջ գերիշխողը գյուղատնտեսությունն էր՝ պրոլետարիատի քաղաքական դիծն անցկացնելու համար ավելի շատ էր զգուշություն պահանջվում: Տնտեսական և քաղաքական ընդհանուր ակտիվության պայմաններում, երբ ակտիվանում էին սոցիալական բոլոր շերտերը, անհրաժեշտ էր այնպիսի քաղաքականություն վարել, որպեսզի մի կողմից հնարավոր լիներ ապահովել բանվոր դասակարգի դեկավարությունը սոցիալական մյուս տարրերի նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ գյուղում ապահովել չքավորների ու միջակների դաշինքը: Կուսակցության Լոռի-Փամբակի գավկոմի IV պլենումի (1925) բանաձևում այդ առթիվ նշված է. «Նոր

60 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 4, գ. 520, թ. 42:

61 Նույն տեղում, թ. 49:

տնտեսական քաղաքականության պայմաններում տնտեսապես և կուլտուրապես իր վերելքի շրջանն ապրող գյուղը կոմունիստական կուսակցության առջև բարձրացնում է նոր խնդիրներ, որոնք կապված են գյուղի զանազան շերտերի ակտիվացման և մեր պրոլետարական քաղաքականության ապահովման հարցի հետ։ Գյուղի սոցիալական վերելքի ապահովումը ինչպես տնտեսական, այնպես էլ կուլտուրական առաջարելում, դրա հետ գյուղացիության հիմնական զանգի՝ միջակ գյուղացիության հետ պրոլետարիատի դաշնակցության ապահովումը և պայքարը զարգացող կուլակային տարրերի ու նրա աղդեցության դեմ, պահանջում են գյուղում գտնվող մեր հենարանի՝ այն է պրոլետարական և կիսապրոլետարական տարրերի կազմակերպումը, չքավոր ու միջակ գյուղացիության մերձեցման ուժեղացումը և դրա հետ միասին գյուղում տարվելիք աշխատանքների ձևերի հարմարեցումը նոր պայմաններին և նոր խնդիրներին»[62]։ Ահա այդ նոր խնդիրների ճիշտ գնահատման և նրանց ճիշտ հաշվի առնելու անհրաժեշտությունն էր, որ վճռական նշանակություն էր ստանում պրոլետարիատի դիկտատուրայի՝ անցման շրջանի քաղաքականության կենսագործման ժամանակ։ Այդ նկատառումով և ընդհանրապես գյուղում տեղի ունեցած սոցիալական տեղաշարժերի նկատմամբ աշխատավորության հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով «Խորհրդային Հայաստան» թերթը 1925 թ. երկրորդ կեսում բազմաթիվ նյութեր ու հոդվածներ տպագրեց գյուղում աշխատանքի մեկնած կուսակցականների, կոմերիտականների և մասնագետների մասին։

Եթե մինչև 1926 թ. Հայաստանում շեֆական աշխատանքների հիմնական կազմակերպողները կուսակցական բջիջներն ու նրանց հանձնաժողովներն էին, ապա 1926 թ. սկսած, ՌՍՖՍՀ-ի օրինակով, մեզ մոտ նույնպես կազմակերպվեցին շեֆական ընկերություններ, որոնք այդ գործի մեջ պիտի ընդգրկեին բանվորական լայն զանգվածներին։ 1926 թ. սկզբներին շեֆական ընկերություններ կազմակերպվեցին Երևանի, Լենինականի, Լոռի-Փամբակի գավառներում։ Այդ ընկերությունների համար հատուկ օրինակելի կանոնադրություն մշակվեց, որտեղ նրանց գործունեության նպատակը բնորոշվում է հետևյալ կերպ. «Ընկերության նպատակն է ամրապնդել քաղաքի բանվորության և գյուղացիության կապը, գյուղին քաղաքական և կազմակերպական տնտեսական օգնություն ցույց տալ, գյուղական մասսաների մեջ հետաքրքրություն առա-

62 Նույն տեղում, ց. 6, գ. 187, թ. 87։

չացնել դեպի սոցիալիստական շինարարությունը և այլն։ Ընկերությունը հենվում է գյուղի չքավոր ու միջակ խավերի վրա և օժանդակություն է ցույց տալիս սովետական ու հասարակական բոլոր կազմակերպություններին»[63]։ Ինչպես տեսնում ենք, շեֆական ընկերությունները բավականին լուրջ, պատասխանատու կամպանիաները մերժող կազմակերպություններ էին, որոնք պատրաստ էին ամեն տեսակի օգնություն ցույց տալ գյուղատնտեսության զարգացմանը։ 1926 թ. ընթացքում Լենինականի գավառում կազմակերպվեցին 15 շեֆական ընկերություններ, Երևանում՝ 11, Լոռի-Փամբակում՝ 7, Դիլիջանում՝ 2 և այլն։ Դրանք սովորաբար կազմակերպվում էին գործարաններում և արդյունաբերական ձեռնարկություններում, բանվորների ամենալայն մասնակցությամբ։ Դա, իրոք, բանվորական շեֆություն էր, բանվորագյուղացիական դաշինքի յուրահատուկ դրսևորում։

Փոխվեց նաև շեֆության բովանդակությունը։ Այժմ հիմնական օգնությունը ցույց էր տրվում չքավոր ու միջակ գյուղացիներին՝ նրանց կոոպերատիվ տնտեսություններում համախմբելու համար։ Գյուղացիությունն աստիճանաբար նախապատրաստվում էր զարգացման սոցիալիստական ուղին բևեռխելու համար։ Դա էր 1920-ական թվականների շեֆական աշխատանքների հիմնական բովանդակությունը։

1928—1929 թթ. բանվորական կոլեկտիվները մասսայաբար բրիգադներ էին ուղարկում ենթաշեֆ գյուղերը՝ գյուղատնտեսական կամպանիաներին օգնելու, աշխատանքները կազմակերպելու, մեքենաները վերանորոգելու և այլ աշխատանքներ կատարելու համար։ 1929 թ. հոկտեմբերին բազմաթիվ բանվորական բրիգադներ գյուղ մեկնեցին հեղափոխության առնակատարությունը անցկացնելու և գյուղացիությանը օգնություն ցույց տալու համար[64]։ Նրանք իրենց աշխատանքով ու գյուղացիների հետ ունեցած զրույցներով մեծ դեր էին խաղում գյուղատնտեսական կամպանիանները հաջող կատարելու և չքավորներին ու միջակներին պրոլետարիատի դիկտատուրայի շուրջը համախմբելու գործում։ Այդ աշխատանքներում աչքի ընկան Ալավերդու, Ղափանի, «Արարատ» տրեստի, Լենինականի ձեռնարկությունների բանվորները։ Սա արդեն արտադրական շեֆություն էր, որը չնայած, չէր անտեսում կուլտուր-լուսավորական աշխատանքները, սակայն առաջնային նշանակություն էր տալիս արտադրության կազմակերպմանն ու զարգացմանը։

63 Նույն տեղում, ց. 5, գ. 163, թ. 8։

64 «Խորհրդային Հայաստան», 12 նոյեմբերի, 1929։

1929 թ. աշնանը Հատուկ կամպանիա ծավալվեց հաջորդ տարվա գարնանացանը կազմակերպված անցկացնելու համար, որը տեղի էր ունենում գյուղատնտեսության կոլեկտիվացման նշանաբանով։ Այդ հարցը լայնորեն քննարկվեց բոլոր գործարաններում, ֆաբրիկաներում ու արտադրական ձեռնարկություններում և համաժողովրդական օգնություն կազմակերպվեց գյուղին։ Անցնելով մասսայական կոլեկտիվացման կուրսին, անհրաժեշտ էր ապացուցել նրա տնտեսական արդյունավետությունը, ցույց տալ նրա առավելությունները մասնավոր գյուղատնտեսական արտադրության նկատմամբ։ ՀԱՄԽ-ը 1929 թ. վերջերին հատուկ որոշում ընդունեց գործարաններից 300 առաջավոր բանվոր ուղարկել գյուղ՝ գարնանացանի աշխատանքներին օգնելու համար։ Երևանի մեխանիկական գործարանի բանվորները 1929 թ. վերջերին հանդես եկան կիրակի օրերը աշխատելու և ստացած աշխատավարձը գյուղին տրամադրելու կոչով, որին արձագանքեցին կարբիդի գործարանի, Ալավերդու և Ղափանի բանվորները։ Նոր թափ ստացավ շեֆ բրիգադների միջև ծավալված մրցությունը։ Երևանի մեխանիկական, կարբիդի գործարանների և «Արարատ» տրեստի շեֆական բրիգադների անունից Մանուկ Գրիգորյանի, Համայակ Դիլանյանի և Սեդրակ Գևորգյանի ստորագրությամբ հատուկ կոչ հրապարակվեց «Խորհրդային Հայաստանում», որով նրանք դիմում էին հանրապետության բանվոր դասակարգին՝ բոլոր միջոցներով օգնության հասնել գյուղացիությանը՝ նրա առջև դրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար[65]։

Բանվորական շեֆական բրիգադները ակտիվորեն մասնակցելով գյուղի տնտեսական կյանքին, անտարբեր չէին նրա քաղաքական կյանքի նկատմամբ։ Ընդհակառակը, նրանք ակտիվորեն մասնակցում էին կուլակության դեմ գյուղացիության մղած պայքարին՝ այդ նպատակով համախմբելով չքավորներին ու միջակներին։ Բանվորական բրիգադները մերկացնում էին կուլակների մեքենայություններն ու շահագործման գաղտնի ձևերը, նպաստում նրանց տնտեսական ու քաղաքական մեկուսացմանը։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը բանվոր դասակարգը մասնակցում էր պարտքի խոր ղգացումով, քաջ գիտակցելով, որ դա բխում էր մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցման շահերից։ 1929 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած զեկուցագրերից մեկում Լենինականի կայարանի դեպոյի բանվորները գրել

---

65 Նույն տեղում, 19 դեկտեմբերի, 1929։

Ն. «Գիտակցելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հսկայական նշանակությունը և այն, որ կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, տրակտորային կայանների կառուցումը կարող է զարգանալ միայն բանվորական մասսաների ակտիվ մասնակցությամբ և օգնությամբ... հայտարարում ենք, որ ամենակարճ ժամանակաշրջանում կկազմակերպենք բանվորական լավագույն բրիգադներ, երկար ժամանակով կուղարկենք գյուղ, կոլտնտեսություններին, գյուղի չքավորությանը և միջակներին օգնելու, իրենց տնտեսությունները սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու գործում և ավելի կուժեղացնենք հարձակումը գյուղի կապիտալիստական էլեմենտների դեմ»[66]: Կարևոր նշանակություն ուներ նաև այն, որ բանվորական ջոկատների ներկայացրած զեկուցագրերի հիման վրա վերադաս մարմինները համապատասխան միջոցառումներ էին մշակում գյուղին օգնելու համար:

Այսպիսով, 1920-ական թվականներին, նէպի կենսագործման առաջին էտապում, երբ երկրում ուժերի վերախմբավորում էր տեղի ունենում ու տնտեսության մեջ աստիճանաբար ամրապնդվում էր սոցիալիստական կազմաձևը, անգնահատելի էր բանվոր դասակարգի օժանդակող ու կարգավորող դերը, որն ամրապնդելով բանվորագյուղացիական դաշինքը, նպաստում էր մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցմանը: Միաժամանակ, բանվոր դասակարգը հսկայական ջանքեր էր գործադրում սոցիալիստական արդյունաբերության զարգացման համար, որը վերջին հաշվով, ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման, ինչպես նաև բանվորագյուղացիական դաշինքի ամրապընդման հիմքն էր հանդիսանում:

3. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ

Նէպի տարիներին յուրահատուկ էին դասակարգային պայքարի դրսևորման բազմազան ձևերը, որոնք հիմնականում ընթանում էին մի կողմից բանվոր դասակարգի և գյուղացիության միջև եղած հակասությունների հաղթահարման և նրանց դաշինքի ամրապնդման, իսկ մյուս կողմից՝ քաղաքի և գյուղի շահագործողական տարրերի աստիճանական վերացման ուղիով: Դա դասակարգային բախումների ու հակամարտությունների բավականին սուր ժամանակաշրջանն էր: «Դասակարգերի ոչնչացումը երկարատև, դժվար, համառ դասակարգային պայքարի գործ

66 Նույն տեղում, 28 դեկտեմբերի, 1929:

է,— գրել է Վ. Ի. Լենինը, նկատի ունենալով կապիտալիզմից սոցիալիզմին անցման էտապը,— պայքար, որը կապիտալի իշխանությունը տապալելուց հետո, բուրժուական պետությունը խորտակելուց հետո չի անհետանում (ինչպես երեկայում են հին սոցիալիզմի ու հին սոցիալ-դեմոկրատիայի գործիչները), այլ միայն փոխում է իր ձևերը, շատ անսահմաններից էլ ավելի կատաղի դառնալով»[67]։

Բուրժուազիայից քաղաքական իշխանությունը նվաճելուց հետո պրոլետարիատը դեռևս երկրի տնտեսական կյանքում որոշիչ դեր չի կատարում։ Ուստի իր շուրջը համախմբելով քաղաքի և գյուղի շահագործվող տարրերին, նա շարունակում է պայքարը քաղաքական կյանքից հեղափոխականորեն արտամղված բուրժուազիայի տնտեսական գործունեությունը սահմանափակելու և աստիճանաբար վերացնելու համար։ Վ. Ի. Լենինը մի առիթով նշում է, որ իշխանությունը վերցնելուց հետո պրոլետարիատի դասակարգային պայքարը հիմնականում հետևյալ ձևերով է դրսևորվում. 1) շահագործողների դիմադրության ճնշում, 2) քաղաքացիական պատերազմ, 3) մանր բուրժուազիայի և առաջին հերթին գյուղացիության «չեզոքացում», 4) բուրժուական մասնագետների օգտագործում և 5) նոր կարգապահության հաստատում[68]։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի դասակարգային պայքարի պատմության ուսումնասիրման ուղղությամբ սովետահայ պատմագրության կողմից որոշ փորձեր կատարվել են։ Բայց պետք է նշել, որ հիմնական ուշադրությունը բևեռելով այդ պայքարի դրսևորման համընդհանուր օրինաչափությունների վրա, փաստորեն մոռացության են մատնվել տեղական առանձնահատկությունները, որոնք, մեր կարծիքով, տվյալ պայմաններում ոչ պակաս վճռական նշանակություն ունեին։ Դասակարգային պայքարի դրսևորման տեղական առանձնահատկությունների անտեսումը հանգեցրել է նրան, որ մինչև այժմ փաստորեն չի մշակվել նրա պարբերացումը և լավագույն դեպքում տեղական փաստերով մեկ անգամ ևս հաստատվել է արդեն գոյություն ունեցող սխեման (հիմնականում «Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի» մեջ նշված պարբերացումը)։ Յարդ անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել այդ պայքարի էվոլյուցիայի, նրա կրած փոփոխությունների վրա, վեր չեն հանվել այդ պայքարի տարբեր ձևերն ու մեթոդները՝

67 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 29, էջ 477։

68 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 30, էջ 101—103։

կապված մեր երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետ։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում Հայաստանում դասակարգային պայքարի ծավալման պատմությունը կարելի է բաժանել երեք հիմնական փուլի։ Առաջին փուլն ընդգրկում է 1921 թ. մարտից մինչև 1922 թ. մարտը (կուսակցության X և XI համագումարների միջև ընկած ժամանակաշրջանը)։ Այս փուլին բնորոշ է ավերված ու քայքայված տնտեսությունը վերականգնելու և բանվորա-գյուղացիական դաշինքն ամրապնդելու նպատակով որոշակի նահանջի դիմելը՝ գյուղացիության մանր սեփականատիրական, առևտրական պահանջները բավարարելու խնամատով։ Այս փուլում առաջին պլան էր մղված աշխատավորության ֆիզիկական գոյությունը պահպանելու խնդիրը, որին ստորադասվում էին բազում այլ, երկրորդական նշանակություն ունեցող խնդիրներ։ Անշուշտ, այդ նահանջը ժամանակավոր և բավականին սահմանափակ բնույթ ուներ։ Պարենհարկ մտցնելը և առևտրի որոշ ազատություն տալը գրալիորեն ամրապնդեցին գյուղացիության հետ տնտեսական դաշինքը և նպաստեցին արտադրողական ուժերի զարգացմանը։

Երկրորդ փուլն ընդգրկում է 1922—1929 թթ., երբ նեպի կենսագործմամբ արագ տեմպերով զարգացող ժողովրդական տնտեսության մեջ աստիճանաբար ամրապնդվում է սոցիալիստական կացութաձևը, տեղի է ունենում ուժերի վերախմբավորում և սրվում դասակարգային հակամարտությունը աշխատավորության և շահագործողական տարրերի միջև։ Ամբողջ ճակատով հարձակման նախապատրաստման և վերջին շահագործող դասակարգին՝ կուլակությանը, վերացնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ այս փուլում բուրժուական գաղափարախոսության տարբեր դրսևորումների ջախջախումը կուսակցության կողմից։ Ուժերի վերախմբավորման այս փուլում կուսակցության գլխավորությամբ մղած հերոսական պայքարի շնորհիվ տնտեսական, քաղաքական և գաղափարական նախադրյալներ ստեղծվեցին կապիտալիզմի դեմ վճռական հարձակման անցնելու համար։

Երրորդ փուլով (1930—1936) ավարտվում է մեր երկրում սոցիալիզմի կառուցումը, որով, փաստորեն, սպառվում է նաև նեպի կենսագործումը։ Սոցիալիզմը հարձակման է անցնում ամբողջ ճակատով և կապիտալիզմն արմատախիլ է արվում մանրապրանքային արտադրության սոցիալիստական վերակառուցման միջոցով։ 1929 թ. հետո, չքավորներից բացի, կոլտնտեսություն մտավ միջակ գյուղացին։ Դա շրջա-

դարձային նշանակություն ունեցավ գյուղում սոցիալիստական կացութաձևի ամրապնդման գործում: Սրվեց դասակարգային պայքարը: Անընդհատ ուժեղացող կուլակային դիմադրությունը հարկադրեց սովետական իշխանությանը՝ նրա դեմ կիրառվող տնտեսական սահմանափակումներից բացի դիմել նաև վարչական միջոցների: Այս փուլում սպառվեց սոցիալիստական շինարարության մեջ բուրժուազիային օգտագործելու խնդիրը. հին մասնագետները որոշակի անցում կատարեցին դեպի սոցիալիզմ: Կենսագործվեց կուլտուրական հեղափոխությունը: Հաղթանակող սոցիալիզմի հարվածների տակ որպես դասակարգ քայքայվեց նոր բուրժուազիան, և մասնավոր արդյունաբերությունն այլևս որոշակի դեր չէր խաղում ժողովրդական տնտեսության մեջ: Վերացավ նաև մասնավոր առևտուրը: Այժմ հիմնական ուշադրությունը կենտրոնացվում էր աշխատավորության սոցիալիստական վերադաստիարակման, նրա գիտակցության մեջ կապիտալիզմի մնացորդների վերացման վրա:

Այսպիսին է հիմնականում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանի դասակարգային պայքարի պատմության պարբերացումը, որը բխում է մեր երկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանից, նրա կենսագործման տարբեր փուլերում կուսակցության առաջադրած խնդիրների լուծման համար աշխատավորության մղած հերոսական պայքարից:

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործմամբ խաղաղ ստեղծագործ աշխատանքի անցնելով դասակարգային պայքարի ծանրության կենտրոնը մեր երկրում տեղափոխվեց տնտեսական շինարարության բնագավառը: Այդ ժամանակ հիմնական դասակարգային թշնամին նոր բուրժուազիան էր (կուլակության հետ միասին), որը գլխավորում էր հակասովետական տարրերի պայքարը: Նէպմանը իշխող դիրք գրավելով հատկապես առևտրի բնագավառում, լայն կապերի մեջ էր գտնվում բուրժուական մասնագետների հետ և հարմարվելով նոր պայմաններին, դիմում էր դասակարգային պայքարի նորանոր (հիմնականում «անմեղ») ձևերի, փորձում էր անընդհատ ընդլայնել իր գործունեությունը: Սովետական իշխանությունը դրան հակադրում էր բանվորագյուղացիական դաշինքը, որի ամրապնդումը վճռորոշ նշանակություն ուներ սոցիալիզմի հաղթանակի համար: Տնտեսական հիմնական բարձունքները կենտրոնացնելով իր ձեռքում, պրոլետարիատը վճռական գերազանցություն ունենալով բուրժուազիայի նկատմամբ, նրան պահելով որոշակի շրջանակներում՝ հարկադրում էր ծառայել սոցիալիստա-

կան շինարարության շահերին։ Դա ժամանակավոր տնտեսական համագործակցություն էր, որի անհրաժեշտությունը բխում էր տվյալ սոցիալ-տնտեսական պայմաններից։

Նոր տնտեսական քաղաքականությունը որոշակի փոփոխություն մտցրեց նաև դասակարգային պայքարի տեղաբաշխման բնագավառում։ Քաղաքում, ինչպես հայտնի է, պրոլետարիատի դիկտատուրան գործում էր ավելի վճռական և հետևողական՝ հենվելով սոցիալիստական ինդուստրացման, բանվոր դասակարգի վրա։ Ուստի նէպի պայմաններում դասակարգային պայքարի հիմնական թատերաբեմ էր դարձել գյուղը, որտեղ չնայած հողը ազգայնացված էր, հիմնական արտադրողները մանր գյուղացիական տնտեսություններն էին, որոնք, բնականաբար, ձգտում էին օգտագործել նէպի ընձեռած հնարավորությունները և հարըստանալ։ Գյուղում էր գտնվում նաև հիմնական շահագործող դասակարգը՝ կուլակությունը, որն իր շուրջը համախմբելով հակասովետական բոլոր տարրերին, համառ և հետևողական պայքար էր մղում սովետական իշխանության դեմ։ Եվ վերջապես, նէպի պայմաններում ձևավորվող նոր բուրժուազիան, որը հիմնականում առևտրով էր զբաղվում (երբեմն փորձեր կատարելով տիրանալ նաև արդյունաբերական կապիտալին), խուսափում էր քաղաքներում լայն գործունեություն ծավալելուց, որտեղ պրոլետարական հսկողությունն ուժեղ էր և իր մագիլները տարածում էր առավել հեռավոր գյուղերում։ Այդ բոլորը սրում էր դասակարգային պայքարը գյուղում։ Հիմնական դասակարգային թշնամին կուլակությունն էր, որին չէր կարելի մեկ հարվածով վերացնել։

Նէպի առաջին փուլում փարթամացող կուլակության դեմ մղվող պայքարը տնտեսական բնագավառում հանգում էր նրա շահագործողական գործունեության սահմանափակմանը, քաղաքական ասպարեզում՝ նրա մեկուսացմանը և գյուղացիական մյուս խավերի վրա (հատկապես միջակի) վրա ունեցած ազդեցության թուլացմանը[69]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի ամփոփագրերից մեկում (1925) այդ առթիվ նշվում է. «Գյուղի տնտեսական շերտավորումը և կուլակության հետագա տնտեսական աճը, որն իր ճանապարհին հանդիպում է արգելակների՝ հանձինս սովետական իշխանության տնտեսական ու քաղաքական միջոցառումների, հարկադրվում է նրան պայքարել այդ արգելքների դեմ»[70]։

---

69 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս II, էջ 416։

70 ՄԼԻ ՀՄԱ, ց. 11, գ. 38, բ. 44.

Սակայն չպետք է մոռանալ, որ նեպի կենսագործման առաջին տարիներին աճող և ամրապնդող բուրժուազիան զգալիորեն տարբերվում էր նախահեղափոխական շրջանի բուրժուազիայից: Նա զրկված էր քաղաքական իրավունքներից, մեկուսացված պետական գործունեությունից և հանդես էր գալիս որպես ենթակա դասակարգ: Պրոլետարիատի դիկտատուրան ընտրելով բուրժուազիայի հետ ժամանակավոր համագործակցության տակտիկան, միաժամանակ անհաշտ պայքար էր մղում նրա դեմ՝ որպես շահագործող դասակարգի: Նեպը պրոլետարիատին հնարավորություն էր տալիս սոցիալիզմ կառուցելու համար առավել չափով օգտագործել բուրժուազիայի տնտեսական-կազմակերպչական փորձը, իսկ բուրժուազիան զարգացման որոշ հնարավորություն ստանալով հույս էր տածում պրոլետարիատի դիկտատուրան հարմարեցնել իր շահերին և այն օգտագործել կապիտալիզմի վերականգնման համար: Բնական է, որ նեպի կենսագործմամբ ծավալվող սոցիալիստական շինարարությունն առաջին հերթին ամրապնդում էր պրոլետարիատի իշխանությունը: Դա տարեցտարի ավելի ու ավելի էր սրում ու բորբոքում դասակարգային հակամարտությունը, և բուրժուազիան հենվելով կոնկրետ պայմաններից, պայքարի նորանոր ձևերի էր դիմում: Այն հատկապես սուր բնույթ էր ընդունել գյուղում: Կուլակությունը ձգտում էր օգտագործել մեր երկրում սոցիալիստական շինարարության դժվարությունները, իրենից տնտեսական կախման մեջ ընկած բատրակներին ու չքավորներին, բորբոքել ազգային կրքերը, պնդավորել ներհեղեցական համայնքների գործունեությունը, տարբեր միջոցներով վարկաբեկել կուսակցական և սովետական աշխատողներին և այլն: Այս «անմեղ» պայքարով կուլակները «...ամեն կերպ ձգտում էին ապացուցել, որ սովետական իշխանությունը չի պաշտպանում գյուղացիության շահերը, դրանով իսկ փորձելով գյուղացիությանը զրդռել կուսակցության և սովետական իշխանության դեմ»[71]: Հասկանալի է, որ հիմնական պայքարը մղվում էր գյուղացիության շուրջը և ինչպես բազմիցս նշվել է կուսակցական փաստաթղթերում, այն բանից էր կախված հեղափոխության բախտը, թե ո՞ւմ հետ կգնա բնակչության մեծամասնություն կազմող միջակ գյուղացիությունը: Նեպը խորացնելով դասակարգային շերտավորումը գյուղում, որոշակի պարզություն էր մտցրել այդ հարաբերություններում:

Քաղաքականապես պարտված բայց տնտեսապես դեռևս որոշակի ուժ ներկայացնող բուրժուազիան ըմբռնելով նեպական փոխզիջումը,

---

71 Նույն տեղում, ց. 11, գ. 148, թ. 147:

դարանակալ հետևում էր սովետական իշխանության ներքին ու արտաքին քաղաքականությանը, հարմար պահի սպասելով նրա դեմ հանդես գալու համար։ 1921 թ. աշնանը (հոկտեմբեր) դավառի բոլոր շրջկոմներին ու կոմբջիջներին ուղղած շրջաբերականում նշված է, որ բացահայտ ճակատամարտում պարտված հակահեղափոխությունը հարկադրված է «...հրաժարվել բացարձակ ռազմադաշտ դուրս գալուց ու իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել է մի այլ շրջանի վրա։ Նրանք աշխատում են թափանցել, մտնել մեր գինվորական, պարենավորման ու կառավարման հիմնարկների մեջ։ Շատերը նրանցից թաքնված այժմ մեր գյուղերում, քաղաքներում թնդեսա և լռել են, բայց սպասում են հարմար րոպեի մեր դեմ դուրս գալու համար։ Նրանք աշխատում են համառորեն և պարբերաբար քայքայել մատաղ, դեռևս չամրացած մեր սոցիալիստական կառավարության հիմքերը։ Նրանք... աշխատում են իրենց գործունեությամբ միշտ վարկաբեկել խորհրդային իշխանությունը։ Այդ նոր ձևի հակահեղափոխությանը հաղթելու համար անհրաժեշտ են ոչ սակաս ջանքեր բայց ճակատում»[72]։ Դասակարգային տրայբարի այս նոր ձևերը հատուկ էին ոչ միայն Լոռվա դավառին, այլև ամբողջ հանրապետությանը։ Դասակարգային թշնամին հարմարվում էր նոր պայմաններին և օգտագործում մեր կյանքում տեղ գտած թերությունները և սխալները։

Ինչպես ամբողջ Միության մեջ, այնպես էլ Հայաստանում դասակարգային պայքարը միշտ համաչափ ու միատեսակ չի եղել։ Կապված ՍՍՀՄ միջազգային դրության, ներքին դժվարությունների և հատկապես կոլեկտիվացման լենինյան գծի դեմ օպոզիցիոն խմբավորումների մղած պայքարի հետ, դասակարգային կռիվը մերթ ակտիվացել, մերթ դանդաղել է, բայց երբեք չի մարել։ Հիմնականում փոխվել են պայքարի ձևերն ու մեթոդները։ Ընդ որում, պայքարի նոր ձևերին անցնելով հանդերձ հակասովետական տարրերը չէին հրաժարվում հին ձևերից։ Պատմաղեկտական գրականության մեջ անցման շրջանի դասակարգային պայքարի մասին խոսելիս ուսումնասիրողները սովորաբար բավարարվում են վնասարարության կամ տեռորի այս կամ այն փաստի հիշատակումով և դասակարգային թշնամուն ավելի շատ դեղծարարի կամ հանցագործի դերում են հանդես բերում։ Այնինչ դա որոշակի գաղափարախոսություն ունեցող և որոշակի նպատակներ հետապնդող դասակարգային կռիվ էր, երբ թշնամին չէր խորշում պայքարի ոչ մի ձևից։ Նա

72 Նույն տեղում, ց. 1, գ. 113, թ. 18։

վարպետորեն էր օգտագործում հատկապես սոցիալիստական շինարարության պրոցեսում թույլ տրված սխալներն ու բացերը և հաճախ ծանր վիճակի առաջ կանգնեցնում այս կամ այն շրջանի աշխատավորությանը։

Դասակարգային թշնամին մեր հանրապետությունում տակտիկական տարբեր միջոցառումների էր դիմում, որպեսզի պյուռացիությանը հետու պահի սոցիալիզմի գաղափարներից։ Այդ նպատակով նա ձգտում էր առաջին հերթին ակտիվացնել ազգայնականության մնացուկները և դրանք օգտագործել ազգամիջյան կրքեր բորբոքելու համար։ Դա հիմնականում տարվում էր բամբասանքի բնույթ կրող կուլակային պրոպագանդայի միջոցով։ Նման հերյուրանքները միշտ չէ, որ անպատուհաս էին մնում և որոշ ազդեցություն էին ունենում թույլ կամ տատանվող տարրերի վրա։

Դասակարգային թշնամիները փորձում էին օգտագործել նեպի կենսագործմամբ երկրում առաջացած բարդ և հակասական վիճակը, խտացնել դժվարությունները, դրա մեջ մեղադրելով տեղական զեկավարներին, իսկ իրենց ներկայացնել որպես բարերարների։ Սահիանավանի շրջանի Սլոբոդկա գյուղում, հաշվի առնելով 1928 թ. հացի մատակարարման դժվարությունները, կուլակները ցուցադրական կերպով վճարում էին ամենաչքավոր գյուղացիների տուրքը. «Ահա իշխանությունը թալանում է, իսկ մենք օգնում ենք,— ասում էին նրանք,— գյուղացին գյուղացուն միշտ պետք է օգնի»[73]։ Դա եզակի դեպք չէր։ «Մի շարք տեղերում,— գրված է ՀԿ(բ)Կ Կենտկոմի շրջաբերականում (1928),— կուլակները միջակ և չքավոր գյուղացիներին իրենց կողմը գրավելու համար գործի են դնում մանավանդ օգնելու, հյուրասիրելու, կաշառելու միջոցները»[74]։

Ուշագրավ է, որ գյուղացիությանը նվաճելու նպատակով կուլակներն իրենց հայտարարում էին սովետական իշխանության կողմնակիցներ, գովաբանում այն ամենը, ինչ ընդհանուրի կողմից դրականապես էր ընկալվում, նույնիսկ նշում Վ. Ի. Լենինի ծննդյան օրը, Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձը, Մայիսի 1-ը և այլն[75]։

Դասակարգային թշնամիները հատուկ ուշադրություն էին դարձնում սովետական կարգերին չհամակրող մտավորականության օգտագործման վրա, որի ազդեցությունը դեռևս բավականին մեծ էր աշխա-

---

73 Նույն տեղում, ց. 13, գ. 382, թ. 7։

74 Նույն տեղում, գ. 230, թ. 97։

75 Նույն տեղում, գ. 382, թ. 7։

տավորության վրա։ Նրանք ճիշտ էին գնահատում գաղափարական պայքարի դերը և որոշակի աշխուժություն հանդես բերում հակասովետական գաղափարներ տարածելու գործում։ Նրանք ձգտում էին օգտագործել նաև հակակրոնական պրոպագանդայի ժամանակ թույլ տրված սխալներն ու հավատացյալներին մղել սովետական իշխանության դեմ[76]։ Ինչպես տեսնում ենք, դասակարգային թշնամիները պայքարի բոլոր բնագավառներում (տնտեսական, քաղաքական և գաղափարական) կանխամտածված և բավականին կազմակերպված ձևով էին հանդես գալիս։

Նէպի առաջին փուլում, երբ դասակարգային հակամարտությունը տարեցտարի սրվում էր, կուլակությունը նորանոր ձևեր էր որոնում նրան ավելի զգույշ ու «անմեղ» տեսք տալու համար։ Անշուշտ օգտագործվում էին նաև պայքարի հին ձևերը։ Պրակտիկ պայքարի ընթացքում այդ շրջանում բավականին սուր դրսևորվել են հետևյալ ձևերը, որոնք տարածված էին նաև մեր Հանրապետությունում.

ա) Սովետական իշխանության հաստատման սկզբնական շրջանում, երբ դեռևս վաո էին այն հեշտությամբ տապալելու հույսերը, դասակարգային թշնամին օգտագործում էր զգալի տարածված բանդիտական շարժումը։ «Քաղաքական բանդիտիզմը» կամ «կուլակային բանդիտիզմը» ինչպես անվանում էին այն ժամանակ, մեծ մասամբ կապված էր պարենամասնատրման դժվարությունները կուլակների կողմից օգտագործելու հետ։ Դա դասակարգային պայքար էր, որը ավյալ կոնկրետ պայմաններում պաշտպանվում էր հիմնականում կուլակների կողմից։ Ըստ էության, բանդիտիզմը քողարկված կուլակային շարժում էր, որն ուղղված էր սովետական իշխանության ամրապնդման դեմ։ Բանդիտիզմի սոցիալական հիմքը կուլակությունն էր[77]։

բ) Կուլակները փորձում էին օգտագործել երիտասարդության նյութական ծանր վիճակը և նրան դուրս բերել սովետական իշխանության դեմ։ Կուլակները չէին խորշում կաշառելուց, չքավոր գյուղացիներին քեֆերի հրավիրելուց, նույնիսկ իրենց զավակներին նրանց հետ ամուսնացնելուց։

գ) Կուլակները բոլոր միջոցներով ձգտում էին իրենց ներկայացուցիչներն ունենալ տեղական սովետներում և հասարակական կազմակերպություններում։ «Այս տարի,— որոշել էին մեղրեցի կուլակները

76 Նույն տեղում, ց. 11, գ. 198, թ. 151։

77 Նույն տեղում, ց. 1, գ. 332, թ. 26։

1926 թ.,— բոլոր միջոցներով պետք է ձգտել գյուղխորհուրդներում ընտրել մեր մարդկանց, այդ ուղղությամբ անհրաժեշտ է լուրջ աշխատել»[78]։ Ղարդուղուլու Քյարիմարխ (Հոկտեմբերյանի շրջանի Սովետական) գյուղի կուլակները գաղտնի ժողովում որոշել էին. «...մեր մեղքով է, որ սովետական իշխանությունը ոտնձգում է մեզ։ Ինչու մենք նախապես աշխատանք չենք տանում գյուղխորհուրդներում մեր կողմնակիցներին ընտրելու, որպեսզի նրանք մեզ պաշտպանեն։ Մենք հնարավորություն ենք տալիս ընտրել նրան, ում ուզում են կոմունիստները։ Անհրաժեշտ է սովետներում լինեն մեր մարդիկ, որպեսզի ազատվենք այդ լակոտներից»[79]։ Ընտրությունների և այլ կամպանիաների ժամանակ աշխատավորներին իրենց հետևից տանելու կուլակների փորձերը, որպես կանոն, ձախողվեցին, որը և հասցրեց նրանց տնտեսական ու քաղաքական մեկուսացմանը[80]։

Սովետական իշխանության ձեռնարկած ամեն մի կամպանիայի կուլակությունը հակադրում էր իր «կամպանիան»։ Քանի որ դրանք մեծ մասամբ բերքահավաքից հետո էին լինում (աշնանն ու ձմռանը) կուլակները այդ օրերին քեֆեր ու հարսանիքներ էին կազմակերպում և հրավիրում գյուղացիներին։

դ) Կուլակները հանդես էին գալիս չքավորության «պաշտպանի» կամ պարզապես «բարերարի» դերում։ «Կուլակներն այս տարի,— հաղորդում են Զանգեզուրից 1928 թ.,— մի քանի հազարներ են ծախսել, քեֆեր ու խնճույքներ կազմակերպելու վրա, որտեղ հրավիրել են գյուղացիության մեծ մասին, աչքաթող չանելով բատրակներին»[81]։ Կուլակների հակասովետական քմահաճույքով մոլորեցված չքավոր գյուղացիներն ու բատրակները հաճախ համախոհականներ էին գրում իրենց գյուղի հակահեղափոխական տարրերին ձերբակալելու դեմ։ Դարալագյազի գավառում, օրինակ, բատրակները, «...գալիս էին գավառային ընտրական հանձնաժողով և խնդրում վերականգնել իրենց տերերի ընտրական իրավունքը՝ հակառակ դեպքում (տերերը—Գ. Գ.) իրենց կաղատեն աշխատանքից»[82]։ Չքավորների այս որոշ մասի մուրացկանային հոգեբանությունը կուլակներն օգտագործում էին նրանց իրենց ազդեցության տակ պահելու և սովետական իշխանության դեմ պայքարելու համար։

78 Նույն տեղում, ց. 12, գ. 95, թ. 65,

79 Նույն տեղում, թ. 67։

80 Նույն տեղում, ց. 11, գ. 148, թ. 154։

81 Նույն տեղում, գ. 46, թ. 4։

82 Նույն տեղում, գ. 148, 150։

ե) Նէպի բացատական հետևանքների արտահայտությունն զգացվում էր նաև կուսակցության որոշ անդամների վրա, որոնք սկսել էին տնտեսապես ուռճանալ և խորթանալ սովետական իշխանությանը: Ղուզիդիդան գյուղի ուռճացած կոմունիստները գաղտնի պայմանավորվել էին. «Մենք, ներքո ստորագրողներս, խոսք ենք տալիս մեկամեկու, որ կոլեկտիվը քայքայենք: Եվ խոսք ենք տալիս, որ այդ պատճառով մեկս մեկին չհեռացնենք կոմունիստական կուսակցությունից»[83]: Նոր Բայազետի գավառի Օրդակլու գյուղի կուսակցականները իրենց այնքան վատ էին պահել, որ գյուղի չքավորները գաղտնի ժողով էին հրավիրել և դատապարտել բջջի հակասովետական քաղաքականությունը[84]: «Կան կուսակցականներ,— գրված է Կենտկոմի ամփոփագրերից մեկում,— որոնք բատրակներ են պահում: Ոմանց տնտեսությունը ոչնչով հետ չի մնում կուլակների տնտեսությունից: Նրանք գյուղի մի քանի հարուստներից մեկն են: Նրանց այդ վիճակը... կարում է նրանց կուսակցական կյանքից և մոտեցնում ունևոր, կուլակային շերտերին»[85]: Փաստորեն նէպի պայմաններում տեղի էր ունենում նաև որոշ կուսակցականների կուլակացման պրոցես, որի դեմ հետևողական պայքար էր մղվում[86]:

զ) Կուլակներն անողոք ու հետևողական պայքար էին մղում սովետական իշխանության այն միջոցառումների դեմ, որոնք ուղղված էին նրկրի տնտեսական ամրապնդմանը: «...Մի ընդլայնեք ցանքատարածությունները,— դիմում էին նրանք գյուղացիներին,— որովհետև պետությունն այդ անում է հարկերը բարձրացնելու նպատակով... իմաստ չունի հողերը պարարտացնելը, որովհետև շուտով այդ հողերը տրվելու են կոլտնտեսություններին»[87]: Դասակարգային թշնամին արդեն համոզվել էր, որ նէպի միջոցով կապիտալիզմի վերականգնումը հնարավոր չէ և համառորեն պայքարում էր ժողովրդական տնտեսության զարգացման դեմ[88]:

է) Տարեցտարի ուժեղանում էր կուլակության պայքարը տնտեսության կոլեկտիվ ձևերի կազմակերպման դեմ: Եթե ժողովրդական տնտե-

---

83 «Խորհրդային Հայաստան», 6 փետրվարի, 1929:

84 Նույն տեղում, 9 օգոստոսի, 1928:

85 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 11, գ. 198, թ. 157:

86 Նույն տեղում, գ. 148, թ. 157:

87 Նույն տեղում, ց. 13, գ. 268, թ. 2:

88 Նույն տեղում, ց. 11, գ. 48, թ. 160—161:

սության վերականգնման տարիներին նրանք հիմնականում բավարարվում էին կոլեկտիվ միավորները ծաղրի ենթարկելով, որտեղ հավաքված մի քանի չքավորները լուրջ վտանգ չէին ներկայացնում, ապա հետագայում տեսնելով, որ կոլտնտեսային շինարարությունը հիմնականում ուղղված է իրենց դեմ, դիմեցին պայքարի զանազան ձևերի՝ այն ձախողելու համար։ Կոլտնտեսությունները վարկաբեկելու միտումով նրանք լուրեր էին տարածում, թե իբր բոլորին մի ամանից են ճաշ-բաժանելու և ընդհանրացնելու են կանանց ու երեխաներին։ Այսպես, օրինակ, Յուվալի կոմունայի ձգողական ուժը թուլացնելու, և աշխատավորների հոսքն այնտեղ խափանելու նպատակով կուլակները պնդում էին, թե «Յուվալի կոմունան պատրաստել է 60 մետրանոց մի վերմակ և կոմունայի բոլոր անդամները՝ տղամարդ, կին, տղա, աղջիկ, բոլորը մի վերմակի տակ պիտի քնեն»[89]։ Դա բացասաբար էր անդրադառնում գյուղացիության որոշ մասի վրա։

Կուլակները կոլեկտիվ տնտեսությունների դեմ պայքարում էին նաև այն պատճառով, որ լավագույն հողամասերը տրամադրվում էին դրանց և ձգտում էին գյուղացիներին հեռու պահել կոլտնտեսություններից։ Անշուշտ, գյուղացիների որոշ խավեր կուլակների ազդեցության տակ ընկնելով հեռանում էին կոլտնտեսություններից, մյուսները զերադասում էին դեռևս սպասել, չշտապել[90]։

Կուլակությունը չէր խորշում պայքարի ոչ մի ձևից, առաջնորդվելով նպատակն արդարացնում է միջոցները նշանաբանով։ ՀԿ(բ)Կ Կենտկոմ ներկայացրած զեկուցագրերից մեկում այդ առթիվ նշված է. «...կուլակությունը չհրաժարվելով բացահայտ պայքարի ձևերից և օգտագործելով նրանց այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ դա հնարավոր է և անհրաժեշտ, դրա հետ մեկտեղ իր պայքարի միջոցները հարմարեցնում և կատարելագործում է ելնելով կոնկրետ պայմաններից»[91]։ 1920-ական թվականների վերջերին մասսայական պայքարի ձևերից հիմնական դերը հատկացվում էր տեռորին՝ սպանությունների միջոցով աշխատավորությանը վախեցնելու և սոցիալիստական շինարարությունից հետ պահելու քաղաքականությանը։ Դեռևս 1925 թ. հուլիսին կուլակները երկար նախապատրաստվելուց հետո սպանեցին Աղջաղալայի

89 «Խորհրդային Հայաստան», 12 հոկտեմբերի, 1929։

90 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 12, գ. 95, թ. 62։

91 Նույն տեղում, ց. 11, գ. 148, թ. 162։

(Բալինի շրջանի Բազմաբերդ գյուղ) գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խաշոյանին[92]։ 1926 թ. Ալավերդու Մոտկորի ենթաշրջանի Շամուտ գյուղի կուլակներն իրենց կողմը գրավելով առանձին չքավորների, դաժան հաշվեհարդար տեսան կարմիր պարտիզան Արտուշի հետ։ Հաջորդ տարում նրանք սպանեցին կոմերիտականներ Ղազար Նալբանդյանին և Մովսես Հովհաննիսյանին[93]։ 1928 թ. նոյեմբերի 16-ին կուլակները սպանեցին Բասարգեչարի Թաղի-Քյանդի գյուղխորհրդի նախագահ Հումբեթ Մամեդովին, դեկտեմբերի 30-ի գիշերը Փոքր Մազրայի կուլակները սպանեցին Նոր Բայազետի գավգործկոմի փոխնախագահ Մ. Խաչինյանին[94]։ Սամաղարի շրջանի Ալիբեկլու (Էջմիածնի շրջանի Ա-թաբեկյան) գյուղի կուլակները խեղդամահ արեցին բատրակ Խաչիկ Պողոսյանին և ձգտում էին սպանել կոմերիտական Պ. Մանուկյանին, չքավոր Հ. Ղարիբյանին և ուրիշների[95]։ «Շուտով բոլշևիկները կհեռանան Կովկասից,— ասում էին նրանք,— այն ժամանակ մենք ձեր բոլորին ոչխարների պես կմորթենք»[96]։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում դասակարգային ինչնամին պայքարի նորանոր ձևերի էր դիմում, ամեն կերպ ձգտելով խանգարել մեր երկրում սոցիալիստական շինարարությանը։ Կուլակությունն էր հանդիսանում Հայաստանում բավականին տարածված բայֆայական պայքարի հրահրողը, հայկական բնակչության և ռուս-մոլոկաններների ու ադրբեջանցիների միջև ինչնամություն սերմանողը, կրոնական քողի տակ հակասովետական շարժման սկզբնավորողը[97]։ Ձգալով պրոլետարիատի դիկտատուրայի տարեցտարի սահմանափակող քաղաքականությունը, կուլակությունը օրհասական պայքար էր մղում իր գոյությունը որոշ չափով երկարացնելու համար։ 1927—1928 թթ. ընթացքում կուլակների հակասովետական ելույթների համեմատությունը որոշակիորեն հաստատում է այդ։ Ահա այդ տվյալները[98]։

---

92 Նույն տեղում, ց. 7, գ. 23։
93 Նույն տեղում, ց. 11, գ. 3, թ. 1։
94 Նույն տեղում, թ. 6։
95 Նույն տեղում, ց. 5, գ. 50, թ. 30։
96 Նույն տեղում, ց. 12, գ. 48, թ. 57։
97 Նույն տեղում, գ. 97, թ. 73։
98 Նույն տեղում, թ. 58։

	1927 թ.	1928 թ.
1. Հակասովետական, հակահեղափոխական ագիտացիա	431 դեպք	768 դեպք
2. Պայքար ցանքի կոմպանիայի դեմ	132	230
3. Տեղական մարմինները խոչընդոտում են սովետական տարրերի պայքարը իշխանության դեմ	50	111
4. Գյուղական ժողովրդականության ելույթներ	43	155
5. Կուլակության մասսայական ելույթներ	2	4
6. Տեռոր, բռնություն, սպանություններ	41	70

Այսպիսով, կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում նոր տնտեսական քաղաքականության կենսագործմամբ աշխուժացող դասակարգային ընդհարմին օգտագործելով պայքարի բացահայտ ու քողարկված ձևերը, չանք չէր խնայում սովետական իշխանության միջոցառումները ձախողելու և իր ազդեցությունը գյուղացիության վրա ուժեղացնելու համար։ Դրան մասամբ նպաստում էր ինչպես հանրապետության տնտեսական ծանր վիճակը (սակավահողությունը, սոցիալիստական կացութաձևի դանդաղ ամրապնդումը, բանվոր դասակարգի սակավաթիվ լինելը, գաղթականությունը և այլն), այնպես էլ որոշ կուսակցական և սովետական աշխատողների մեջ նկատվող ուռճացումը, տեղերում թույլ տրված սխալներն ու վրիպումները և այլն։ Սակայն տարեցտարի ամրապնդվող բանվորագյուղացիական դաշինքի շնորհիվ կուլակությունն աստիճանաբար մեկուսացվեց թե՛ տնտեսական և թե քաղաքական բնագավառներում։

Նեպի կենսագործմամբ մինչև այդ թաքնված չարչիներն ու առևտրականները մասսայաբար ապստիղ նետվեցին և մրցություն սկսեցին պետական ու կոոպերատիվ առևտրի հետ։

Հայաստանում նեպմանի գործունեության հիմնական ոլորտը առևտուրն էր, քանի որ պետական և կոոպերատիվ սեկտորները գեռևս բավականին թույլ էին։ Դա պայմանավորված էր նաև նրանով, որ ժողովրդական տնտեսության վերականգնման շնորհիվ զգալիորեն բարելավվել էր գյուղացիության տնտեսական վիճակը և բարձրացել նրա պահանջները արդյունաբերական ապրանքների նկատմամբ։ Անընդհատ ավելանում էր նաև քաղաքային բնակչությունը։ Այդ բոլորը արդյունաբերական ապրանքների սով էր առաջացնում, որից փորձում էր օգտվել ճարպիկ նեպմանը։ Ուշագրավ է, որ նեպմանն ավելի ուժեղ էր մանրածախ առևտրի բնագավառում (մանր խանութներ, կրպակներ, բեյարաններ և այլն), որը հիմնականում գյուղական վայրերում էր տարածված,

իսկ մեծածախ առևտրի հիմնական տնօրինողը՝ պետական և կոոպերատիվ սեկտորն էր։ Ուստի սովետական իշխանությունը նեպմանների դեմ պայքարում էր մի կողմից զարկ տալով պետական և կոոպերատիվ առևտրին, իսկ մյուս կողմից՝ իր հարկային ու վարկային քաղաքականությամբ անընդհատ սահմանափակելով նրա գործունեությունը։ Ջնաջած նեպմանների ճարպկությանն ու ձեռներեցությանը, 1920-ական թվականներին մասնավոր առևտուրը ավելի դանդաղ տեմպերով էր աճում, քան պետական և կոոպերատիվ առևտուրը։ Անընդհատ իջնում էր մասնավորի տեսակարար կշիռը մանրածախ առևտրի մեջ։ Այսպես 1923 թ. այն կազմում էր 61,5 տոկոս, 1925 թ.՝ 39,2 տոկոս, իսկ 1927 թ. հասավ 36 տոկոսի[99]։ Այստեղ մեծ դեր էր խաղում սովետական պետության կարգավորիչ ձեռքը։

Անկասկած, ինչպես ամեն մի շահագործողական տարր, այնպես էլ նեպմանները, հեշտությամբ չէին զիջում իրենց տեղը։ Լինելով բավականին ճկուն և իրադրությանն արագ համակերպվող, նրանք կարողանում էին մեծ շահույթ ստանալ գյուղատնտեսական մթերքները էժան գնելով և արդյունաբերական ապրանքները թանկ վաճառելով։ Նրանք օգտագործում էին առևտրի և սպասարկման ոլորտներում տեղ գտած թերությունները և մրցում պետական սեկտորի հետ։ Նեպմանների դեմ ամբողջ Միության մեջ կազմակերպված պայքարը ծավալելու նպատակով 1927 թ. ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Գ. Օրջոնիկիձեի գլխավորությամբ։ Սկսած մինչև 1928 թ. նեպմանների նկատմամբ կիրառվում էր սահմանափակման քաղաքականություն, ապա ժողովրդական տնտեսության զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումները և հատկապես արդյունաբերության վերակառուցման հաջողությունները, հնարավորություն տվեցին անցնելու նրանց արտամղելու քաղաքականության։ Մեր հանրապետությունում նեպմանների գործունեությունը բավականին թույլ էր, և նրանց նկատմամբ կիրառվող արտամղման քաղաքականությունը շուտով մեծ արդյունք տվեց։ 1928—1929 թթ. մասնավոր առևտրականները որպես հանրօգուտ աշխատանքով չզբաղվողներ՝ ձայնազուրկ արվեցին։ Դա քաղաքական ճնշման ուժեղացում էր, որը, սակայն, զուրկ չէր տնտեսական հիմքից։ Սովորաբար ձայնազուրկների վրա բարձր (անհատական) հարկ էր նշանակվում և նրանց արգելվում էր ժողովրդական տնտեսության որևէ ճյուղում աշխատել։ Այդ միջոցառումները կարևոր դեր խաղացին նեպի պայմաններում աշխուժացող

99 «Խորհրդային Հայաստան», 6 հունվարի, 1928։

առևտրավաշխառուական այդ խավի սոցիալական հիմքը թուլացնելու և նրան աստիճանաբար տնտեսական կյանքից արտամղելու խնդրում։ Մանրավաճառների այդ հոծ բազմությունը չդիմացավ սովետական իշխանության տնտեսական քաղաքականությանը և աստիճանաբար քայքայվելով վերացավ։ Եթե 1928 թ. մասնավորի ձեռքում էր մանրածախ առևտրի 23,9%-ը, ապա 1929 թ.՝ 20,2%-ը, իսկ 1930 թ.՝ 11%-ը։ 1931 թ. այն լիովին արտամղվեց[100]։ Նեպմաններին՝ որպես միջնորդների, արտամղումն ունեցավ այն քաղաքական նշանակությունը, որ սոցիալիստական արդյունաբերությունը անմիջականորեն կապվեց գյուղատնտեսության հետ։ Դա մեծապես նպաստեց բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդմանը։ Քանի որ նեպմանները մեր հանրապետությունում լուրջ տնտեսական և քաղաքական ուժ չէին ներկայացնում, կուսակցությունը նրանց վրա չատարածեց բռնի վերացման լոզունգը, ինչպես արվեց կուլակության նկատմամբ։ Սովետական իշխանության հետևողական տնտեսական պայքարի և ձեռք բերած հաջողությունների շնորհիվ նեպմանական բուրժուազիան քայքայվեց՝ մասնավոր ձեռնարկատերերն ու առևտրականները հարկադրված դադարեցրին իրենց գործողությունը։ Նրա վերացումը տնտեսական արտամղման ուղիով տեղի ունեցավ, որով խաղաղ ճանապարհով վերացվեց պարազիտային կյանք վարող մանր շահագործողների մի ամբողջ բանակ։

* * *

Ինչպես ամբողջ Միության մեջ, այնպես էլ մեր հանրապետությունում, կենսագործելով նոր տնտեսական քաղաքականությունը, սովետական իշխանությունը կարողացավ առաջին հերթին փրկել ազգաբնակչությանը՝ ֆիզիկական կործանման վտանգից։ Կուսակցության դասակարգային նուրբ և ճկուն քաղաքականության շնորհիվ պայմաններ ստեղծվեցին սոցիալիստական կացութաձևի ամրապնդման ու զարգացման համար, որն աստիճանաբար վճռական ուժ դարձավ ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։ Ամրապնդվեց բանվորագյուղացիական դաշինքը և նախապատրաստվեց մեր երկրում շահագործողական տարրերի վերջնական վերացումը։ Դա անցման շրջանի հիմնական նվաճումն էր։

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործման 10-ամյակի առթիվ «Խորհրդային Հայաստանը» գրել է. «Այդ տաս տարիները եղել են պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման, տնտեսական հըս-

100 Նույն տեղում, 2 հունվարի, 1932։

կայական վերելքի, դժվարությունների հաղթահարման, կապիտալիստական էլեմենտների վերացման և սոցիալիզմի կառուցման հարաճուն վերելքի տարիներ»[101]: Եվ իրոք, նէպի կենսագործմամբ վերականգնվեց ավերված ու քայքայված գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, մասսայական պայքար ծավալվեց անգրագիտության վերացման համար: Մի կտոր հացի կարոտ, սովի ու վարակիչ հիվանդությունների ծանր բեռի տակ խարխափող հայ գյուղացին բազմակողմանի օգնություն ստանալով սովետական իշխանությունից, սեղմ ժամկետում կարողացավ ուղղել իր կորացած մեջքը և ամրապնդելով իր տնտեսությունը՝ մեկընդմիշտ կողմնորոշվեց դեպի սոցիալիզմը: Դա նէպի առաջին էտապում հայ աշխատավորության մղած պայքարի հիմնական արդյունքն էր:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման վեցերորդ տարեդարձի առթիվ հանդես գալով բնդարձակ հոդվածով, Ս. Լուկաշինը հիմնական գծերով դասակարգել է հանրապետության վեցամյա ուղին: «Խորհրդային Հայաստանի առաջին երկու տարիները մի կտոր հացի համար մղվող պայքարի տարիներ էին: Միայն բանվորագյուղացիական մասսաների ու նրանց իշխանության հերոսական ջանքերով և Խորհրդային Ռուսաստանի աշխատավորների օգնությամբ այդ դժվարին տարիները հաղթահարվեցին և հետևյալ տարիներում հիմք դրվեց երկրի հարաճուն վերելքին»[102]: Եվ իրոք, ավերված տնտեսության վերականգնման առաջին քայլերը, առաջին հաջողությունները հիմք հանդիսացան հետագա առաջընթացի համար: «Սովի ուրվականն այս տարի ավելի ուշ երևաց,— գրված է 1923 թ. ամփոփագրերից մեկում,— և նա այնքան սարսափելի չէր ինչպես անցյալ տարի»[103]: «...1923 և 1924 թվականները,— շարունակում է Ս. Լուկաշինը,—երկրի տնտեսության նորմալ, օրինաչափ զարգացման առաջին տարիներն էին... 1925 և 1926 թվականներից հիմնականում ավարտվեցին Խորհրդային Հայաստանի և ողջ Խորհրդային Միության տնտեսության վերականգնման պրոցեսը: Այդ նույն տարիներին երկրի տնտեսության զարգացման դինամիկայի ծանրության կենտրոնը սկսում է թեքվել գյուղատնտեսության ասպարեզից դեպի արդյունաբերությունը»[104]:

---

101 Նույն տեղում, 21 մարտի, 1931:

102 Նույն տեղում, 28 նոյեմբերի, 1926:

103 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 2, գ. 271, թ. 62:

104 «Խորհրդային Հայաստան», 28 նոյեմբերի, 1926:

Հայաստանում նէպի կենսագործմամբ սեղմ ժամկետում բուժվեցին 6—7 տարիների անընդհատ ավերումների ու թալանի վերքերը, և զարգացման նորմալ պայմաններ ստեղծվեցին ժողովրդական տնտեսության համար։ Այդ շրջանում որոշ աշխուժացում տեղից դասակարգային ընդհարմին, որը բոլոր միջոցներով փորձեց յուրովի օգտվել նէպից։ Սակայն պրոլետարիատի դիկտատուրայի կարգավորիչ ձեռքի զորությամբ խափանվեցին նրա բոլոր փորձերը։ Սովետական իշխանությունը պայքարեց առաջին հերթին ժողովրդական տնտեսությունը վերականգնելու համար, որը միաժամանակ պայքար էր սոցիալիստական արտադրանակի հաստատման համար (թե՛ քաղաքում, թե՛ գյուղում)։

Նէպի կենսագործմամբ ժողովրդական տնտեսության արագ վերականգնումը, որը մեր հանրապետության համար միաժամանակ վերակառուցման շրջան էր, բնականաբար, բոլոր պայմանները ստեղծեց սոցիալիստական սեկտորի ամրապնդման ու զարգացման համար։ Դա հանգեցրեց ուժերի նոր վերախմբավորման։ Նախ, այդ շրջանում լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ Հայաստանը դարձավ համայն հայության կենտրոնաձիգ օջախը և իր գիրկը հավաքեց տասնյակ հազարավոր տարաբախտ հայերի, որոնք Թուրքական յաթաղանից մազապուրծ ցրվել էին աշխարհով մեկ։ Հանրապետության տնտեսական կյանքի նորմալացումը, ազգամիջյան երկպառակությունների վերացումը, խաղաղ ստեղծագործ աշխատանքի ծավալումը առաջին հերթին բարերար ազդեցություն ունեցավ ՀՍՍՀ բնակչության ավելացման վրա։ ՀՍՍՀ կառավարությանը ներկայացրած փաստաթղթերից մեկում ամփոփ ձևով արված է 1922—1930 թթ. բնակչության աճի դինամիկան, որը որոշ վերապահումներով կարելի է ընդունել իրականությանը համապատասխանող։ Ահա այդ թվերը (հազարներով)[105]։

Թվականը	Բնակչության ընդհանուր թիվը	Գյուղական բնակչ.	Քաղաքային բնակչ.
1922	781,0	646,4	134,6
1923	783,3	646,5	136,8
1924	805.7	658,6	147,1
1925	831,1	675.9	155,2
1926	861,2	696,2	165,0
1927	882,6	722,1	160,5
1928	922,8	750,1	172,7
1929	960,8	774,4	186,4
1930	999,2	794,1	205,1

105 *Մի՛ ՀՄԱ, ֆ. 1, ց. 18, գ. 35, թ. 32։*

Աղգաբնակչության այսպիսի աճը, լինի այն բնական թե մեխանիկական, նրա նյութական և կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման լավագույն վկայականն է։ Դա միաժամանակ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության քանակական և որակական աճի բնական հիմքն էր, որը հնարավոր էր դարձնում անընդհատ համալրելու նրա շարքերը։ Եվ իրոք, այդ շրջանում նախ ամրապնդվեց և քանակական ու որակական խոշոր փոփոխությունների ենթարկվեց բանվոր դասակարգը, որն առանց դրան չէր կարող կատարել իր վրա դրված պատմական խնդիրները։

Կոմունիստական կուսակցության հեղինակության բարձրացման և բանվոր դասակարգի բարոյաքաղաքական միասնության ամրապնդման վրա բարերար ազդեցություն ունեցավ մանրբուրժուական կուսակցությունների (էսէռներ, մենշևիկներ, դաշնակցականներ) հասարակական-քաղաքական ասպարեզից հեռանալը։ Դա զգալիորեն ամրապնդեց բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական վիճակը, որի շնորհիվ է՛լ ավելի աճեց նրա դեկավար դերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում։ Վերածնված բանվոր դասակարգն ապացուցեց, որ կարող է իր շուրջը համախմբել աշխատավորական լայն զանգվածներին, գլխավորել նրանց պայքարը սոցիալիզմի կառուցման համար։ Այնպես որ պատահական չէ, որ ժողովրդական տնտեսության զարգացման բոլոր էտապներում սովետական իշխանությունը հիմնական ուշադրությունը բևեռել էր սոցիալիստական արդյունաբերության բաղմակողմանի ամրապընդման ու զարգացման վրա։

Նէպի կենսագործման սկզբնական շրջանում հատուկ ուշադրություն էր դարձվում գյուղատնտեսության վրա։ Աղգաբնակչության կարիքները բավարարելուց բացի, այն պետք է անհրաժեշտ հումք տար առաջին հերթին արդյունաբերության զարգացման համար։ Քանի որ այդ շրջանում գյուղատնտեսության վերականգնումից էր հիմնականում կախված արդյունաբերության վերելքն ու բանվոր դասակարգի վիճակի բարելավումը, ուստի գյուղատնտեսության զարգացմանն ուղղված միջոցառումները կարևոր նշանակություն ունեին պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման գործում։ Ճիշտ չէ, երբ այդ միջոցառումների միայն տընտեսական էֆեկտն է գնահատվում։ Նույնիսկ այնպիսի ծայրամասում, ինչպիսին Հայաստանն էր, որն անհամեմատ ավելի գյուղատնտեսական երկիր էր քան Ռուսաստանը, ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման տարիներին հիմնական միջոցներն ու ուշադրությունը արդյունաբերության զարգացմանն էր հատկացվում (որոշ աշ-

խաոտուբյուններում նկատվող ծյուրիմացուբյունից խուսափելու համար նկատենք, որ Հայաստանի արդյունաբերության հիման վրա չէ, որ ձևավորվում էր հանրապետության արտադրական բազան. այն փաստորեն ստեղծվում էր միութենական մասշտաբով՝ բոլոր հանրապետությունների համատեղ ջանքերով)։ Այսպես, սովետական կարգերը հաստատվելուց մինչև 1927/28 տնտեսական տարին (մինչև առաջին հնգամյակը) հանրապետության հիմնական արդյունաբերական արտադրության մեջ ներդրվել է 27,2 միլիոն ռուբլի, իսկ գյուղատնտեսության մեջ՝ 17,8 միլիոն[106]։ Բացի այդ, չհաշված սովետական իշխանության առաջին տարիները, երբ ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր ազգաբնակչության սովի ճերմակներից փրկելու վրա, մյուս տարիներին արդյունաբերության զարգացման տեմպերը ավելի բարձր են եղել, քան գյուղատնտեսությանը։ Եթե արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման նախապատերազմյան մակարդակը ընդունենք 100 տոկոս, ապա աճի հետևյալ պատկերը կստանանք[107]։

Տնտեսության ճյուղեր	*1913 թ.*	*1923/24*	*1924/25*	*1925/26*	*1926/27*
Գյուղատնտեսության	100	58,6	67,2	71,9	84,5
Արդյունաբերության	100	23,5	54,9	72,4	89,7

Ինչպես տեսնում ենք, արդյունաբերության զարգացման տեմպերը արդեն 1926/27 տնտեսական տարվանից սկսած գերազանցում էին գյուղատնտեսության զարգացման տեմպերին։ Դա ավելի ցայտուն դրսևորվեց հաջորդ տարիներին, երբ արդյունաբերության տարեկան աճը անհամեմատ բարձր էր գյուղատնտեսության արտադրությունից։ Այսպես, եթե արդյունաբերության ամբողջ տարեկան արտադրությունը նախորդ տնտեսական տարվա համեմատությամբ 1927/28 տնտեսական տարում աճեց 36,3, 1928/29 տնտեսական տարում՝ 36,5 և 1929/30 տնտեսական տարում՝ 37,2%-ով, ապա գյուղատնտեսական տարեկան ամբողջ արտադրությունը հետևյալ աճը տվեց նախորդ տնտեսական տարվա համեմատությամբ. 1927/28 տնտեսական տարում՝ 8%, 1928/29 տնտեսական տարում՝ 12% և 1929/30 տնտեսական տարում՝ 7%[108]։ Եվ վերջապես ՀՍՍՀ պետպլանի տվյալներով գյուղատնտեսության և ար-

106 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 20, 43.

107 *Մշի ՀՄԱ, ֆ. 1, գ. 80, ց. 8, թ. 1։*

108 *Նույն տեղում, ֆ. 15, գ. 5, թ. 10—11։*

դյունաբերության համախառն արտադրանքի արժեքը, 1926/27 տնտեսական տարվա գներով, հետևյալ փոփոխությունն է կրել (հազար ռուբլիներով)[109]։

Տնտեսության ճյուղեր	1926/27	1927/28	1928/29	1929/30
Գյուղատնտեսություն	81,236	87,838	98,422	108,430
որից				
Հանրայնացված բաժինը	1,062	1,708	5,029	10,436
Հանրայինի տեսակարար կշիռը	1,3	1,9	5,6	9,6
Արդյունաբերություն	28,529	38,920	53,125	78,016
որից				
Հանրայնացված բաժինը	17,150	26,954	40,763	64,968
Հանրայինի տեսակարար կշիռը	60,2	66,7	76,7	83,4

Ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը չորս տարում ավելացել էր մոտ 27 հազար, իսկ արդյունաբերությանը՝ 49,5 հազար ռուբլով (որից 47,8 հազար ռուբլին հանրային բաժնից)։ Ընդ որում, գյուղատնտեսական արտադրանքի մոտ 10%-ն էր տալիս հանրայնացված բաժինը, իսկ արդյունաբերությանը՝ 83%-ը։ Փաստորեն ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի հետ միասին տեղի էր ունենում նաև վերակառուցում, որի ընթացքում ամրապնդվում ու զարգանում էր սոցիալիստական սեկտորը։

Չնայած արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ դեռևս բավականին ցածր էր գյուղատնտեսությունից (1929/30 տնտեսական տարում այն մոտ 1/3-ն էր կազմում) և միայն առաջին հնգամյակի պլանների կատարմամբ պիտի գերազանցեր նրան, սակայն զարգացման տեմպերն արդեն ուրվագծել էին այն թռիչքը, որ պիտի կատարվեր հետագայում։ Դրան մեծապես նպաստում էր և այն, որ մեր հանրապետությունում եղած արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման ու ընդլայնման հետ մեկտեղ նոր ձեռնարկություններ էին հիմնվում ու արմատավորվում արդյունաբերական նոր ճյուղեր (յուղագործական, տեքստիլ, շինանյութերի արտադրության, փայտամշակման, ծխախոտի, կարբիդի և այլն)[110]։ Բնականաբար, դա հանգեցնում էր բանվոր դասակարգի քանակական ու որակական փոփոխության։

109 Նույն տեղում, ց. 14, գ. 70, թ. 2։

110 Նույն տեղում, ց. 13, գ. 23, թ. 180։

Այսպես, եթե 1922 թ. Հանրապետության ժողովրդական տնտեսությունում զբաղված բանվոր ծառայողների միջին տարեկան քանակը 30 հազար էր, որից բանվորներ 21 հազար (այդ թվում միջին սպասարկող անձնակազմը և պահակային աշխատողները), ապա 1926 թ. այն կազմել 55 հազար (բանվորներ՝ 40 հազար), 1928 թ.՝ 62 հազար (բանվորներ՝ 45 հազար)[111]:

Հասկանալի է, որ բանվոր դասակարգի աճը, հատկապես նրա կազրային միջուկի ավելացումը, հնարավորություն էր տալիս ավելի հետևողականորեն կենսագործել պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքականությունը և ավելի մեծ օգնություն ցույց տալ ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի վերականգնմանն ու զարգացմանը: Անհրաժեշտ է նշել, որ որքան երկիրը գյուղատնտեսական է, այնքան ավելի մեծ ու անգնահատելի է սոցիալիստական արդյունաբերության զարգացման և նրա շուրջը ձևավորվող բանվոր դասակարգի դերն ու նշանակությունը հասարակության սոցիալիստական վերափոխման գործում: Դա մեր Հանրապետությունում նեպի կենսագործման առաջին փուլի կարևոր նվաճումներից էր, որը վճռական նշանակություն ունեցավ հասարակության ներսում սոցիալական տեղաշարժերի կարգավորման գործում:

Անտարակույս, նեպը մտցվեց առաջին հերթին գյուղատնտեսության վերականգնման, աշխատավորության նվազագույն պահանջմունքների բավարարման, բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման համար, որը սոցիալիստական արդյունաբերության զարգացման և կապիտալիստական շրջապատում, մեկ առանձին երկրում սոցիալիստական հասարակարգ կառուցելու հիմնական նախապայմանն էր: Նեպի կենսագործմամբ, սակայն, նպատակ չէր դրվում վերականգնել գյուղատնտեսությունն ընդհանրապես. հիմնական խնդիրը գյուղում սոցիալիստական հատվածի ամրապնդումն ու զարգացումն էր, բատրակի ու չքավորի տնտեսության ամրապնդումը, և կուլակային շահագործման սահմանափակումը: Նեպի առաջին տարիներին գյուղում դասակարգային հակամարտություններն ավելի ուժեղ էին արտահայտվում, որովհետև արտադրության մեջ հիմնականում տիրապետողը մանրգյուղացիական տնտեսությունն էր և դեռևս որոշակի դեր էին խաղում ունևորներն ու կուլակները: Նեպի կենսագործմամբ գյուղում դասակարգային նոր վերախմբավորում տեղի ունեցավ: Հայտնաբերում նույնպես, ինչպես ամբողջ Միու-

[111] «Народное хозяйство СССР», 1922—1972, М., 1972, стр. 62.

ՀՅան մեջ, նէպի կենսագործմամբ փոխվեց գյուղացիության շերտավորման սոցիալական էությունը։ Նախ, սովետական իշխանության օգնությամբ չքավոր գյուղացիությունը ոտքի կանգնեց, որի շնորհիվ զգալի չափով նվազեց նրա տեսակարար կշիռը։ Չքավորների և բատրակների կրճատման հաշվին գյուղի հիմնական զանգվածը դարձավ միջակ գյուղացին, որը համոզվելով սովետական կարգի առավելությունների մեջ, անվերադարձորեն հակվեց դեպի պրոլետարիատը։ Նէպը անգնահատելի դեր խաղաց բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման գործում, առանց որի աննկատելի է նոր հասարակարգի կառուցումը։

1920-ական թվականների վերջում հայկական գյուղում նույնպես հանդես եկան կոլտնտեսություններ և այլ կարգի կոոպերատիվ անտեսություններ, որոնք շրջադարձային նշանակություն ունեցան գյուղի արտադրական և հասարակական հարաբերությունների զարգացման գործում՝ կողմնորոշելով նրան դեպի սոցիալիզմ։ Այդ բոլորի շնորհիվ դեռևս 1920-ական թվականներին խոշոր փոփոխություններ տեղի ունեցան գյուղի սոցիալական կառուցվածքում։ Վերացվեց կալվածատերերի դասակարգը։ Կուլակները քաղաքականապես մեկուսացվեցին և անտեսական բնագավառում մղվեցին երկրորդական դիրքերը։ Աշխատավոր գյուղացիությունը 1920-ական թվականների վերջերին գյուղատնտեսական մթերքների հիմնական արտադրողն էր։ Միջակը, որը գյուղի հիմնական զեմքն էր, բանվոր դասակարգի հուսալի դաշնակիցն էր գյուղում։ Նէպի կենսագործմամբ նկատելիորեն բարձրացել էր գյուղացիության անտեսական և քաղաքական ակտիվությունը։ Անքակտելի էր դարձել բանվորագյուղացիական դաշինքը։ Ուշագրավ է, որ դեռևս ժողովրդական անտեսության վերականգնման տարիներին բանվոր դասակարգի և գյուղացիության միջև նկատվող հակասությունները (գների քաղաքականություն, շուկա և այլն, և այլն) վերացվում էին փոխադարձ զիջում ների և փոխադարձ համաձայնության միջոցով։ Արդեն այդ ժամանակից սկսած նրանք իրարամերժ չէին։ Դասակարգային հակամարտությունն անընդհատ սրվում և խորանում էր գյուղացիության և կուլակների միջև։ Դա էր դասակարգային կռվի առանցքը անցման շրջանում։ Սոցիալիստական սեկտորի ամրապնդումն ու ձեռք բերած նվաճումները, բնականաբար, սեղմում էին դասակարգային թշնամու գործունեության շրջանակները և այդ հողի վրա ավելի էր սրվում դասակարգային պայքարը։ Տնտեսական որոշ աշխուժացում ապրող կուլակությունը զգալով, որ տարեցտարի կորցնում է իր աղդեցությունը գյուղացիության

վրա, պայքարի տարբեր միջոցների էր դիմում՝ սոցիալիստական շինարարությանը խանգարելու համար։

Նեպի շնորհիվ փոխվեց վերաբերմունքը կոոպերացիայի նկատմամբ, որի տարեցտարի ընդլայնվող ցանցը հնարավորություն ավեց մի կողմից պայքարելու կուլակային վաշխառուական շահագործման դեմ, մյուս կողմից՝ գյուղացիությանը նախապատրաստելու տնտեսվարության համալնական ձևերին անցնելու համար։ Կոոպերատիվ և պետական առևտրի զարգացման շնորհիվ, աստիճանաբար շրջանառությունից դուրս մղվեց նեպման-առևտրականը, որի վտանգը հատկապես լուրջ էր գյուղական վայրերում։ Արդեն 1920-ական թվականների վերջերին մասնավոր առևտուրը հանրապետության տնտեսական կյանքում էական դեր չէր խաղում։

Ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արդյունաբերության ու առևտրի բնագավառներում նեպի առաջին փուլում տեղի ունեցած փոփոխությունները վկայում են, որ հանրապետությունում տնտեսության վերականգնման հետ մեկտեղ, սովետական իշխանության ճկուն քաղաքականության շնորհիվ անընդհատ ամրապնդվում ու վճռական ուժ էր դառնում սոցիալիստական սեկտորը, որը հնարավորություն ավեց ավարտելու հարցը լուծելու հօգուտ սոցիալիզմի։ Դա հիմք հանդիսացավ կուլակության գործունեության սահմանափակումից անցնելու նրա՝ որպես դասակարգի վերացմանը։ Դրանով նեպի կենսագործման առաջին էտապը, որի հիմնական խնդիրն էր ավարտել ուժերի վերախմբավորումը և նախապատրաստել վերջին շահագործողների դեմ ամբողջ ճակատով հարձակումը ավարտվեց հաջողությամբ, և Սովետական Հայաստանը ամբողջ երկրի հետ մեկտեղ թևակոխեց սոցիալիստական շինարարության նոր էտապը։ Նեպի առաջին էտապում կուսակցության ճկուն և խելացի քաղաքականության շնորհիվ փաստորեն վերացվեցին արդյունաբերական կենտրոնական շրջանների և նախկին հետամնաց ծայրամասերի հիմնական, էական տարբերությունները։ Սա կարևոր նվաճում էր, որը էական նշանակություն ուներ ՍՍՀՄ ժողովուրդների ինքնուրույնության և բարեկամական միասնության ամրապնդման հարցերում։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄԲՈՂՋ ՃԱԿԱՏՈՎ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՓՈԽ
(1929—1936)

ԳԼՈՒԽ ԱՐԱՋԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Նէպի հետևողական կենսագործմամբ նրա առաջին փուլում ուժերի որոշակի վերախմբավորում տեղի ունեցավ հօգուտ սոցիալիզմի, ամրապնդվեց սոցիալիստական կացութաձևը, որը հասարակության առաջընթացի հիմնական առանցքն էր դարձել։ Երկրի տնտեսության մեջ կատարված սոցիալական տեղաշարժերը կուսակցությանը հնարավորություն տվեցին ամբողջ ճակատով հարձակման անցնելու վերջին շահագործող դասակարգը վերացնելու համար։ Կոոպերացիայի առաջին, պարզունակ բջիջները նէպի պարարտ հողում արագորեն տարածվեցին՝ վերաճելով արտադրական կոոպերացիայի, որը վճռական նշանակություն ունեցավ գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։ Հանձինս կոոպերացիայի, կուսակցությունը գտավ այն. հիմնական օղակը, որտեղ լավագույն ձևով են զուգակցվում մանր արտադրողի անձնական և ամբողջ հասարակության շահերը։ Ըստ էության, դա նէպի հետագա զարգացումն էր, երբ հիմնական շեշտը դրվում էր տնտեսական մրցության պայմաններում ուժերի այնպիսի վերախմբավորման վրա, որը հնարավորություն կտար ամբողջ ճակատով հարձակման անցնելու կուլակության դեմ։ Դրա համար անհրաժեշտ էր կոոպերացիայի արմատավորման միջոցով այնպիսի պայմաններ ստեղծել, որպեսզի հնարավոր լիներ նախ տնտեսապես արտամղել կուլակությանը, ապա այն վերացնել որպես դասակարգ։ Հետևաբար, չնայած նէպը զարգացման

որոշ հնարավորություն էր տալիս նաև շահագործողական տարրերին, ամբողջությամբ վերացրած՝ ուղղված էր նրանց դեմ.

Գյուղի սոցիալիստական վերակառուցման շրջադարձով փոխվեցին նաև նեպի կենսագործման մեթոդներն ու ձևերը. փաստորեն այն թևակոխեց իր զարգացման վերջին էտապը: Անշուշտ, նոր տնտեսական քաղաքականությունը մեկընդմիշտ տրված, քարացած քաղաքականություն չէր և մեր երկրում սոցիալիստական շինարարության տարբեր էտապներում տարբեր ձևով էր արտահայտվում նրա այս կամ այն սկզբունքը: Հիմնականն այն է, որ նեպի կենսագործմամբ սովետական իշխանությունը կարողացավ 1920-ական թվականներին վերականգնել ժողովրդական տնտեսությունը և իր հարկային ու վարկային քաղաքականությամբ, մի կողմից սահմանափակելով կուլակների ու նեպմանների գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ ամրապնդելով չքավորների ու բատրակների տնտեսությունը, երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները ցանկալի հունի մեջ դրեց: Գյուղի հիմնական դեմք հանդիսացող միջակ գյուղացիության շրջադարձը դեպի սովետական իշխանություն, հնարավորություն ավեց ուժեղացնելու հարձակումը շահագործող տարրերի դեմ: Եթե նեպի առաջին էտապին բնորոշ էր սահմանափակման քաղաքականությունը, ապա երկրորդ էտապում առաջին պլան մղվեց շահագործողների դեմ լայն ճակատով հարձակման անցնելու կուրսը:

«Անցնելով ամբողջ ճակատով հարձակման,— նշվեց կուսակցության XVI համագումարում,— մենք դեռևս չենք վերացնում նեպը...»[1]: Սվ իրոք, նեպի այս կամ այն սկզբունքի վերացումը կամ դերի նվազումը դեռևս չի նշանակում նեպի վերացում: Այսպես, պարենհարկի վերացմամբ, կուլակության՝ որպես դասակարգի վերացմամբ դեռևս նեպը չէր վերանում: Ավելին, կուսակցության XVI համագումարը պարզաբանեց, որ սոցիալիզմի ծավալուն կառուցման ժամանակ ևս նեպը շարունակվում է, քանի դեռ մեր երկրում առկա են կապիտալիստական տարրեր, մասնավոր, անհատական տնտեսություններ, ապրանքադրամական հարաբերություններ և այլն: Պատահական չէ, որ գյուղատնտեսության կոոպերացման պրոցեսում հանդես եկած բազմազան ձևերից կուսակցությունն ընտրեց գյուղատնտեսական արտելը, որովհետև այդտեղ լավագույն ձևով էին զուգակցվում գյուղացու անհատական և հասարակական շահերը: Դա

---

1 «XVI съезд ВК(б)П», стенографический отчет, М., 1938, стр. 37.

Նայնպես բխում էր գյուղացիությանը համոզելու, նրա հետ մերձենալու, նրա նկատմամբ բռնություն թույլ տալուց խուսափելու պահանջից, որը վերջին հաշվով նեպի հիմնական սկզբունքներից մեկն էր։

Այսպիսով, բևեռելով սոցիալիզմի ծավալման շինարարության շրջանը, նոր տնտեսական քաղաքականության կենսագործման պրոցեսում ևս տեղի էին ունենում որոշ փոփոխություններ։ Հաշվի առնելով մեր երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական տեղաշարժերը և ելնելով կոնկրետ պատմական պայմաններից, կուսակցությունը շարունակելով նեպի հիմնական սկզբունքների կենսագործումը, բոլոր միջոցներով ամրապնդելով բանվորագյուղացիական դաշինքը, զարգացնում էր սոցիալիստական արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, նպաստում ապրանքադրամական հարաբերությունների ծավալմանը, ձգտելով նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմամբ մեր երկրում կառուցել սոցիալիստական հասարակարգի հիմքերը։ Սոցիալիստական արդյունաբերության և մանր գյուղացիական տնտեսությունների անհամաչափ զարգացումը բացասաբար էր անդրադառնում բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման վրա, և կարող էր լուրջ հետևանքներ ունենալ։ Տվյալ պայմաններում գյուղատնտեսության կոլեկտիվացումը օբյեկտիվ անհրաժեշտություն էր դարձել, առանց որի հնարավոր չէր տնտեսական հետագա առաջընթացը։ 1920-ական թվականների վերջերում, երբ գյուղում կոոպերացիայի ամրապնդման շնորհիվ սոցիալիստական սեկտորը վճռական ուժ էր դառնում, մանավանդ երբ միջակ գյուղացիության գլխավոր մասը շրջադարձ կատարեց դեպի կոլտնտեսությունները, կուլակային արտադրության հասարակական արժեքը նվազագույնի հասավ և այն չէր կարող խանգարել սովետական իշխանության միջոցառումների կենսագործմանը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման բնագավառում ձեռք բերված հաջողությունները և մեր երկրում տեղի ունեցած սոցիալական փոփոխությունները հնարավորություն ստեղծեցին կուլակության սահմանափակումից անցնելու նրան որպես դասակարգ վերացնելուն։ Դա միասնական հեղափոխական պրոցես է, որը վերափոխում է գյուղի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ինչպես զարգացած շրջաններում, այնպես էլ տնտեսապես հետամնաց ազգային ծայրամասերում։

Հայաստանում գյուղատնտեսության կոլեկտիվացումը որոշ առանձնահատուկ պայմաններում էր տեղի ունենում, որով այն տարբերվում էր Ս֊Իության մյուս հանրապետությունների գյուղացիության կո-

լեկտիվացումից։ Հայաստանը տնտեսապես թույլ զարգացած, ագրարային երկիր էր, որտեղ սովետական իշխանության ջանքերով 1920-ական թվականներին հաղիվ բուժվեցին ավերումների ու կողոպուտների հետքերը՝ քիչ ժամանակ ու միջոցներ թողնելով տնտեսության ինտենսիվացմանը։ Բացի այդ բավականին թույլ էր հանրապետության գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան և հիմնական աշխատանքները ձեռքի պարզունակ գործիքներով էին կատարվում։ Հողի հերկման 95%-ը 1929 թ. արորով և այլ գործիքներով էր կատարվում և միայն 5%-ը տրակտորով[2]։ Այս և այլ պատճառներով Հայաստանում գյուղատնտեսության կոլեկտիվացումը բավականին ուշ սկսվեց, չնայած միջակ գյուղացիության տեսակարար կշռի բարձրացմանը, անհամեմատ շատ էր չքավոր գյուղացիությունը, որի կողմից կազմակերպված առաջին կոլտնտեսությունները թույլ էին և հիմնականում սպառողական բնույթ ունեին։

Հանրապետության գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցերին հանգամանորեն անդրադարձան ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. հունվար—փետրվարյան, 1929 թ. նոյեմբերյան պլենումները, ՀԿ(բ)Կ VI համագումարը։ 1927 թ. դեկտեմբերին ՀՍՍՀ Հողժողկոմատում հատուկ խորհրդակցություն հրավիրվեց, որտեղ քննարկվեց կոլեկտիվ հողօգտագործման նախապատրաստման հարցը։ Վկայակոչելով, որ Ռուսաստանում կոլեկտիվ տնտեսությունները խոշոր նվաճումների են հասել, խորհրդակցությունում նշվեց. «Մեզանում կոլեկտիվ տնտեսությունները առաջանում են ներքևից և տարերային կերպով, և որովհետև մենք չենք կարողանում ժամանակին օգնության գնալ՝ նրանք կարճ ժամանակամիջոցում լուծվում են»[3]։ Խորհրդակցությունը նպատակահարմար գտավ կոլեկտիվացման գործը կազմակերպված և խելացիորեն ղեկավորելու նպատակով ստեղծել հատուկ մարմին՝ Կոլտնտեսկենտրոն։ Ելնելով կուսակցության համապատասխան որոշումներից, այն կազմակերպվեց 1928 թ. նոյեմբերին։ Կոլտնտեսկենտրոնի կազմակերպումը զգալիորեն նպաստեց կոլեկտիվացման ծավալմանը։ Հանրապետության գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցերը բազմակողմանի քննարկման առարկա դարձան ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. հունվար—փետրվարյան պլենումում։ Հատկապես արժեքավոր էին Հողժողկոմ Ա. Երզնկյանի և Հ. Ազատյանի ելույթները, որոնք գտնում էին, որ անհրաժեշտ է նուրբ և

2 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 13, գ. 4, թ. 318։

3 Նույն տեղում, ց. 8, գ. 90, թ. 37։

մասնավոր ձևով կենսագործել կոլեկտիվացումը, որպեսզի կոլտնտեսությունների կազմակերպման դաղափարը չարատավորվի։ «Առաջին հերթին,— ասում էր Երվնկյանը,— մենք պետք է կազմակերպենք կոլեկտիվ անտեսություններ այն շրջաններում ու գյուղերում, ուր շերտավորումն ուժեղ է և ուր գյուղատնտեսական կոոպերացիան ուժեղ է և ուր կոոպերատիվ հասարակությունը դրված է ամուր հիմքերի վրա և որոշ չափով նախապատրաստված է գյուղացիության միտքը... եթե մենք կազմակերպենք թվով շատ, բայց շատ թույլ կոլխոզներ, այն ժամանակ մենք կվնասենք կոլխոզային շարժմանը...»[4]։

Հանրապետությունում կոլտնտեսային շինարարության ծավալմանը խոչընդոտում էր նաև գյուղատնտեսության թույլ տեխնիկական բազան. «Շատ դեպքերում գյուղատնտեսական գործիքներ չունենալու պատճառով,— գրված է 1928 թ. վերջերին ՀԿ(բ)Կ կենտկոմ ներկայացված զեկուցագրերից մեկում,—կոլեկտիվի անդամների զգալի մասը չի կարողանում աշխատանքի լծվել։ Պատահում են դեպքեր, որ Հայգյուղկոոպի կողմից մատակարարված գործիքները կամ փչացած են լինում կամ մասնիկները պակաս, որոնք կանգնեցնում են ամբողջ աշխատանքը»[5]։ Դա թուլացնում էր հանրային տնտեսության ձգողական ուժը։

Հանրապետության գյուղատնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը հատուկ քննարկվեցին ՀԿ(բ)Կ VI համագումարում (1929)։ Ինչպես հայտնի է, մինչև 1928 թ. Հայաստանում կար 8 կոլտնտեսություն, որոնք թույլ և փոքր էին և ամուր արմատներ չունեին հայկական գյուղում (դրանց մի մասը հետագայում քայքայվեց)։ 1928 թ. հոկտեմբերին գոյություն ունեին 75 կոլեկտիվ տնտեսություններ, որից 64-ը գյուղատնտեսական արտելներ էին, 5-ը՝ կոմունա և 6-ը՝ հողը համատեղ մշակող ընկերություններ։ Այդտեղ ընդգրկված էին գյուղացիական տնտեսությունների 0,9 և ցանքատարածությունների 0,59 %-ը։ ՀԿ(բ)Կ կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումը, որը հատուկ զբաղվեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցով, այդ առթիվ նշեց հետևյալը. «Եթե վերցնենք կոլտնտեսային շարժման հատկապես առաջին շրջանը, ապա մենք կտեսնենք, մի կողմից կոլտնտեսային շարժումը կոլտնտեսային խաղի վերածելու թերություններ, մյուս կողմից՝ առկա են թերություններ, որոնք վկայում են այն մասին, որ որոշ տեղերում գյուղացիության շարժումը փոխարինվում է

---

4 Նույն տեղում, ց. 11, գ. 2, թ. 199։

5 Նույն տեղում, ց. 13, գ. 357, թ. 72։

վարչարարությամբ»[6]: 1929 թ. հոկտեմբերին Հանրապետությունում կար 245 կոլտնտեսություն, որից 6 կոմունա էր, 96-ը՝ հողօգտագործական ընկերություն և 143-ը՝ գյուղատնտեսական արտել, որոնցում ընդգրկված էր գյուղացիական տնտեսությունների 2,4%-ը[7]: Նրանք զբաղեցնում էին վարելահողերի 3,1%-ը[8]: Այդ կոլտնտեսությունների նյութական բազան շատ թույլ էր: 1929 թ. հուլիսի 1-ի տվյալներով մեկ կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում էր. գութան՝ 2,2 հատ, տափան՝ 0,1, կուլտիվատոր՝ 1,3, խոտ հնձող մեքենա՝ 0,1, սերզատ մեքենա՝ 0,2, տրակտոր՝ 0,2, սայլ՝ 3,6 հատ և այլն[9]: Նման պայմաններում գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման կուրս վերցնելն առնվազն լուրջ չէր: Ավելին, միջակ գյուղացին 1929 թ. դեռևս վերջնականապես չէր կողմնորոշվել դեպի կոլտնտեսությունները: 1929 թ. նոյեմբերյան պլենումի նախօրյակին Հանրապետության 245 կոլտնտեսություններում ընդգրկված էր 6390 տնտեսություն[10]: Ինչպես ժամանակի փաստաթղթերում, այնպես էլ ուսումնասիրողների կողմից վկայակոչվում է, որ այդ տնտեսությունների մոտ 25%-ը (1574 տնտեսություն), միջակ գյուղացիներ էին և նպատակահարմար, որ միջակը որոշակի շրջադարձ էր կատարել դեպի կոլտնտեսությունները: Ժամանակին դրանով է պատճառաբանվել և հետագայում ուսումնասիրողների կողմից արդարացվել 1929 թ. վերջին և 1930 թ. սկզբներից համատարած կոլեկտիվացման անհրաժեշտությունը մեր Հանրապետությունում: Սակայն վիճակագրական տվյալները վկայում են, որ դա սխալ է: 1929 թ. Հայաստանում կար 151.724 գյուղացիական տնտեսություն, որի 52,4%-ը միջակ գյուղացիներ էին[11]: Հետևաբար, մոտ 79,5 հազարի հասնող միջակ տնտեսություններից միայն 1574-ն էր ընդգրկված կոլտնտեսությունների մեջ, որը կազմում էր միջակ տնտեսությունների 1,9%-ը: Հասկանալի է, որ դա չի կարող միջակ գյուղացու մասսայական շրջադարձի չափանիշ հանդիսանալ: Փաստորեն գյուղացիության հիմնական մասը 1929 թ. երկրորդ կեսին դեռևս տատանվում էր և չէր համոզվել կոլեկտիվացման շահավետության մեջ: Դա, անշուշտ, ենթադրում էր

---

6 Նույն տեղում, գ. 16, թ. 300:

7 Նույն տեղում, ց. 20, գ. 79, թ. 38:

8 Նույն տեղում, ց. 19, գ. 164, թ. 2:

9 Նույն տեղում, ց. 14, գ. 93, թ. 6:

10 Նույն տեղում, ց. 13, գ. 20, թ. 92:

11 Նույն տեղում, ց. 13, գ. 10, թ. 26 և «Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1938, էջ 118—119:

կոլեկտիվացման ավելի դանդաղ տեմպ, որի պայմաններում ավելի հեշտ կլիներ ինչպես կոլտնտեսությունների կազմակերպումը, այնպես էլ նրանց օգնելն ու ղեկավարելը: Ի տարբերություն մյուս վայրերի, Հայաստանում միջակ գյուղացին ավելի ուշ կողմնորոշվեց դեպի կոլտնտեսությունը: 1931 թ. հունվարի 1-ի տվյալներով, կոլտնտեսություններում միջակները կազմում էին 26,2% (բատրակները՝ 19, չքավորները՝ 54,8%)[12]: Նույն թվականի աշնանը միայն միջակը մասսայաբար կոլտնտեսություն մտավ, հոկտեմբերին կազմելով կոլեկտիվացված տնտեսությունների 48,1%-ը[13]:

Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ մանրգյուղացիական տնտեսությունների կոոպերացումը պետք է կատարել համոզման միջոցով, օրինակի ուժով: Նա դեմ էր այդ հարցում վարչարարությանը և բռնությանը: «...Դեկրետների, օրենքների միջոցով հողի հանրային մշակում մտցնելու փորձը մեծագույն անհեթեթություն կլիներ»,— գրել է նա[14]: Ելնելով Լենինյան ցուցումներից և հաշվի առնելով ինչպես առաջավոր շրջանների կոլեկտիվացման նվաճումները, այնպես էլ երկրի տարբեր գոտիների առանձնահատկությունները Համկ(բ)կ Կենտկոմը 1930 թ. հունվարի 5-ին ընդունեց «Կոլեկտիվացման տեմպերի և կոլտնտեսային շինարարությանը պետության կողմից օգնություն ցույց տալու մասին» որոշումը: Նախ պահանջվում էր, որպեսզի կուսակցական և սովետական մարմիններն ավելի լուրջ և գործնական ղեկավարություն հանդես բերեն այդ կարևոր գործի նկատմամբ: Փաստորեն փոխվել էր բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդման մասին կուսակցության լոզունգը. այժմ կուսակցությունը գյուղում իր քաղաքականությունը կենսագործում էր հենվելով կոլտնտեսությունների վրա և պայքար մղելով դեռևս դուրս մնացած աշխատավոր մենատնտեսներին այնտեղ ընդգրկելու համար: Սա կարևոր նշանակություն ուներ: Հունվարի 5-ի որոշմամբ նախատեսվում էր կոլտնտեսային շինարարությունն Անդրկովկասում հիմնականում ավարտել 1933 թ.: Փաստորեն դրանով վերանայվում էին հնգամյա պլանով նախատեսված ժամկետները՝ այն արագացնելու միտումով: Հայտնի է, որ հնգամյա պլանով նախատեսվում էր Հայաստանում կոլեկտիվացնել գյուղացիական տնտեսությունների 17,2%-ը[15]: Կենտրոնական մարմինների այս արագացուցիչ ցուցումները տեղերում

12 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 14, գ. 74, թ. 51:
13 Նույն տեղում, ց. 7, գ. 210, թ. 29:
14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 165:
15 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 224, թ. 29:

ինքնամոռաց մրցության պատճառ հանդիսացան՝ ամենասեղմ ժամկետում համատարած կոլեկտիվացումն ավարտելու և այդ մասին ժամ առաջ զեկուցելու համար։ Դարալագյազի գավառից ՀԿԿ Կենտկոմին ներկայացված զեկուցագրերից մեկում նշվում է, որ «...եղել են դեպքեր, երբ բրիգադի անդամները և տեղի ընկերները գյուղացիներին ավել են սպառնալիք, որ եթե կոլեկտիվ չգնաս կդրկվես վարկից և ամեն մի արտոնությունից։ Օրինակ մի ընկեր կազմում է երկու ցուցակ և գյուղացիներին հայտարարում. սրանցից մեկը սոցիալիզմն է, մյուսը՝ կապիտալիզմը։ Ով որտեղ ուզում է թող գրվի։ Մի այլ տեղ ագիտատորը հայտարարում է. ովքեր կոլխոզ չեն ուզում մտնել, թող առանձնանան, որ մենք մեր թշնամիներին ճանաչենք»[16]։ Նման փաստեր կարելի է վկայակոչել հանրապետության բոլոր շրջաններից։ Այստեղ խոսք անգամ չէր կարող լինել կամավորության մասին։ Ավելին, լուռ դժգոհությունը երբեմն բացահայտ պոռթկումների տեղիք էր տալիս, ընդգրկելով նաև այն գյուղացիներին, որոնք մինչև համատարածը որոշակի համակրանք ունեին կոլտնտեսությունների նկատմամբ։

1930 թ. ապրիլին գյուղի աշխատողների խորհրդակցությունում աված զեկուցման մեջ Ա. Խանջյանը նշեց, որ համատարած կոլեկտիվացման ժամանակ հիմնականում հետևյալ սխալներն են տեղ գտել մեր հանրապետությունում. բանակական ցուցանիշներով տարվելը, կամավորության սկզբունքի խախտումը, կոլտնտեսությունների կազմակերպման, ֆինանսավորման և այլ հարցերում թույլ տրված սխալները[17]։

Համատարած կոլեկտիվացման շրջանում որոշակի թշնամական վերաբերմունք էր ցույց տրվում անհատական տնտեսությունների նկատմամբ, որը նեպի սկզբունքների կոպիտ խախտում էր։ Դա հիմնականում բխում էր այն սխալ պատկերացումից, որ անհատական տնտեսությունների վրա որքան շատ ոտնահարական ճնշում գործադրվի, այնքան շուտ նրանք կմտնեն կոլտնտեսություն[18]։ Բասարգեչարի (Վարդենիս) շրջանի կոլեկտիվացման ընթացքի ստուգումից պարզվեց, որ «...տեղական կազմակերպությունները և գյուղխորհուրդները չափազանց կոպիտ վերաբերմունք են ցույց տալիս կոլխոզից հեռացող կամ կոլխոզ չմտնող չքավոր և միջակ տնտեսությունների հանդեպ... չեն վերադարձնում

16 Նույն տեղում, ց. 14, գ. 73, թ. 102։

17 «Խորհրդային Հայաստան», 1 հուլիսի, 1930։

18 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 142, թ. 8։

նրանց սերմացուն, ինվենտարը, չեն վարկավորում և այլ չարչարանքների են ենթարկում, որի հետևանքով գարնանացանը վտանգի տակ է»[19]։ Նույնն էին գրում Նոր Բայազետի գավառից[20]։ Հասկանալի է, որ կոպիտ կերպով խախտվել էր նեպի՝ գյուղացիության հետ տնտեսապես մերձենալու պահանջը, որը հակասում էր կուսակցության ագրարային քաղաքականությանը։ ՀԿ(բ)Կ VII համագումարը (1930) դատապարտելով նման երևույթները, ընդգծեց, որ անհրաժեշտ է ամեն կերպ օգնել անհատական տնտեսություններին, նպաստել նրանց զարգացմանը. «...կոպիտ սխալ կլիներ դեմքով շրջվել դեպի կոլեկտիվացումը, մոռացության մատնել դեռևս կոլտնտեսությունների մեջ չընդգրկված չքավորների ու միջակների անհատական տնտեսությունների բարձրացման շահերը»[21]։ Ելնելով այդ բոլորից, ՀՍՍՀ կենտգործկոմի և ժողկոմխորհի 1930 թ. ապրիլի 12-ի որոշմամբ, որտեղ նշվում էր, որ անհատական տնտեսությունների նկատմամբ (այդ թվում և կոլտնտեսություններից հեռացածների) տեղերում անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում, պահանջվում էր «վճռաբար կասեցնել անտարբերությունը կոլտնտեսություններից դուրս եկած կամ կոլտնտեսություն չմտած անհատական, սակավազոր այն տնտեսությունների նկատմամբ, որոնք ցանկանում են, սակայն հնարավորություն չունեն իրագործելու իրենց ցանքի պլանը»[22]։

Կոլտնտեսային շինարարության տեմպերն արագացնելու մասին Համկ(բ)Կ կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի որոշումը ժամկետից շուտ կատարելու կուրս վերցրեց նաև Համկ(բ)Կ Անդրերկրկոմը՝ տեղերին ցուցում տալով անմիջապես համատարած կոլեկտիվացում սկսելու մասին։ Մի քանի ամիս անց, 1930 թ. ապրիլի 10-ի որոշման մեջ, թույլ տրված սխալներն ուղղելու մասին պիտի գրվեր. «Համկ(բ)Կ Անդրերկրկոմը ընդունում է Անդրերկրկոմի և հանրապետությունների կոմկուսների կենտկոմների թույլ տրված սխալները կոլեկտիվացման տեմպերի վերաբերյալ։ Սխալ էր ԱՍՖՍՀՀ-ն համատարած կոլեկտիվացման գավառների «դեկրետավորումը»[23]։ Հայաստանում, դա հիմնականում, արտահայտվեց ՀԿ(բ)Կ կենտկոմի 1930 թ. հունվարի 6-ի որոշման մեջ, որի կենսագործման համար բոլոր օկրուգներն ու

19 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 586, ց. 1, գ. 44, թ. 84։
20 Մշի ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 141, թ. 27։
21 Նույն տեղում, ց. 11, գ. 2, թ. 264։
22 Մշի ՀՄԱ, ֆ. 1, ց. 7, գ. 18, թ. 125։
23 «Մաճկալ», 21 ապրիլի, 1930։

շրջանները պայքար սկսեցին՝ «գարնանացանը դիմավորել կոլեկտիվացման ավարտած» լոզունգով։ Նույնիսկ Սևանի գավառը, որը հանրապետության հետամնաց, լեռնային շրջաններն է ընդգրկում, նախատեսված էր համատարած կոլեկտիվացման գոտի հայտարարել[24]։ «Բարձրացած ալիքը նույն արագությամբ սկսեց հետ գալ,— գրված է ՀԿԿ Կենտկոմին ներկայացված զեկուցագրերից մեկում,— տեղի տալով մի շարք մասսայական բողոքների և անդամ ցույցերի»[25]։ Կոլտնտեսություններից մաղումներ շատ եղան հատկապես Գորիսի, Իջևանի, Ղափանի, Նոր Բայազետի, Ստեփանավանի, Մարտունու շրջաններում, որտեղ մինչև համատարածը· կոոպերացիայի հիմնական ձևը հողօգտագործական կամ անասնապահական ընկերություններն էին։ Համեմատաբար ավելի կայուն դուրս եկան Արարատյան հարթավայրի կոլտնտեսությունները[26]։ ՀԿ(բ)Կ VII համագումարում բազմաթիվ փաստեր վկայակոչվեցին այն մասին, թե համատարածի ժամանակ ինչպես էին կոլտնտեսություններ կազմակերպվում։ «Երբ մենք գյուղ էինք գնում,— ասաց պատգամավորներից մեկը,— տեղի կազմակերպությունների կարծիքը հաշվի չէինք առնում, 2—3 ժամվա ընթացքում ամբողջ գյուղը համատարած էին համարում, ընկնում տոկոսների հետևից և հեռագիր հեռագրի հետևից էինք տալիս, թե այսքան տոկոս արդեն կոլեկտիվացված է։ Առանց նախապատրաստական աշխատանքներ տանելու 3 ժամվա ընթացքում ամբողջը համատարած էինք համարում»[27]։

Կոլտնտեսություն չմտնողը կամ կոլտնտեսությունից հեռացողը ֆինանսի էր հայտարարվում և զարմանալիորեն վերածվում մարմինները «չէին նկատում» դա[28]։

Փաստորեն համատարածի ժամանակ որոշ տեղերում կոլեկտիվացումը փոխարինվել էր կոլտնտեսականների ցուցակներ կազմելով։ Սովորաբար գյուղ եկած բրիգադներն իրենց աշխատանքներն ավարտված էին համարում, երբ կազմում էին ցուցակները ու այդ մասին հաղորդում վերադաս մարմիններին։ Պատահական չէ, որ այսպես կազմակերպված կոլտնտեսությունները հեշտությամբ քայքայվեցին։ «Խորհրդային Հայաստանը» հետևյալն է հաղորդում Սուխոյ Ֆանտանի (Ֆանտան) կոլտնտեսությունը կազմակերպելու մասին. «Երեք օրվա մեջ կազմակերպ-

---

24 ՀՍՍՀ ՀՀՍ ՊԿԱ, ֆ. 586, ց. 1, գ. 44, թ. 16։

25 Մլի ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 22, թ. 32։

26 Նույն տեղում, ց. 14, գ. 93, թ. 17 և ց. 20, գ. 79, թ. 33։

27 Նույն տեղում, ց. 15, գ. 1, թ. 194։

28 Նույն տեղում, ց. 16, գ. 20, թ. 4 և ֆ. 1, ց. 17, գ. 251, թ. 3։

վեց կոլխոզը, հանրայնացրին բոլոր անասուններին, տեղավորեցին գոմերում... Ցողնելով անխնամ ու առանց կերի»[29]։ Պարզ է, որ այդ ձևով «կազմակերպված» կոլտնտեսությունները երկար դիմանալ չէին կարող։

Անշուշտ սխալ է որոշ ուսումնասիրողների այն կարծիքը, որ իբր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ընթացքում թերություններն ու սխալները ի հայտ եկան միայն համատարածի ժամանակ։ Դեռևս 1927—1928 թթ., երբ հիմնականում տեղական նախաձեռնությամբ էին կոլտնտեսություններ կազմակերպվում, նկատվում էին այն սխալները, որոնք գնալով պիտի աճեին և որակ իջեցնեին (ձայնապուրկ անելու, անհատապես հարկադրելու, վարկ չտալու և այլ հարցերում)։ Դեռևս այդ ժամանակ, փաստորեն, անտեսվում էր միջակ գյուղացու հետ մերձենալու նէպի հիմնական պահանջը։ «Կոլեկտիվացումը, ուռուցիկ կերպով հետադարձեց մեզ բոլոր սխալները, որոնք եղել են մինչև համատարած կոլեկտիվացումը»,—արդարացիորեն նշվեց ՀԿ(բ)Կ VII համագումարում[30]։

1930 թ. փետրվարի վերջերից կոլտնտեսշարժման բնագավառում սկսվեց որոշակի տեղաավություն, որի ժամանակ գյուղացիների որոշ մասը դուրս եկավ կոլտնտեսություններից։ Քայքայված կոլտնտեսությունները հիմնականում հապճեպ կազմակերպված տնտեսություններն էին, իսկ ամուր կոլտնտեսությունները դիմացան և շարունակեցին իրենց գոյությունը։ 1930 թ. փետրվարի 25-ից մինչև մայիսի 25-ը (3 ամսվա ընթացքում) կոլտնտեսություններում ընդգրկված 90,3 հազար տնտեսություններից 67,9 հազարը հեռացան (ավելի քան երկու երրորդը), իսկ մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը հեռացավ ևս 5515 տնտեսություն։ Քայքայվեց 268 կոլտնտեսություն։ Կոլեկտիվացման տոկոսը իջավ 9,5-ի[31]։ Առանձին տեղերում որպես ակտիվ կազմալուծիչներ հանդես եկան կուլակները, որոնք օգտագործելով թույլ տրված սխալները, գյուղացիներին հրահրում էին սովետական իշխանության դեմ։ Այդ բոլորը բավականին ծանր անդրադարձավ գյուղատնտեսության վրա (անասունների ջարդ, այգիների ոչնչացում և այլն), և կարող էր ծանր հետևանքներ ունենալ եթե կուսակցությունը վճռական միջոցառումների չդիմեր սխալներն ուղղելու համար[32]։ Այդ սխալներից կարևոր էր նաև այն, որ չպետք է անտեսվեին կոոպերացիայի պարզ ձևերը, որոնք ավե-

29 «Խորհրդային Հայաստան», 2 ապրիլի, 1930։

30 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 1, թ. 260։

31 Նույն տեղում, գ. 164, թ. 16—17։

32 Նույն տեղում, ց. 15, գ. 218, թ. 18։

լի մասշելի էին գյուղացիությանը. «Ինչպես հայտնի է,— գրված է հոդվածողկոմատի 1930 թ. հաշվետվություններից մեկում,— համատարած կոլեկտիվացման շրջանում գոյություն ունեին գյուղական ընկերությունների և ընդհանրապես ամեն տեսակի կոոպերատիվ միությունների նկատմամբ լիկվիդատորական վերաբերմունք. տարեսկզբին եղած 155 միություններից (այդ թվում նաև սպառողական) փետրվարի վերջերին մնացել էր 32-ը»[33]:

Կուսակցությունը պահանջում էր անուշադրության չմատնել նաև գյուղացիական անհատական տնտեսություններին օգնելու հարցը: Համկ(բ)կ XVI համագումարը հատուկ ընդգծեց, որ կոլտնտեսություններից դուրս եկողների և մենատնտեսների դեմ մղվող պայքարը օբյեկտիվորեն վնասում է կոլեկտիվացման գործին[34]: Մինչև այդ, անհատական տնտեսությունների նկատմամբ գոյություն ունեցող ոչ բարյացակամ վերաբերմունքը խիստ կերպով քննադատվել էր Համկ(բ)կ Կենտկոմի քաղբյուրոյի 1930 թ. փետրվարի 28-ի նիստում[35]: Նման դիրքորոշումը բխում էր նեպի էությունից և միակ ճիշտ քաղաքականությունն էր հանդիսանում:

Կուսակցության հետևողական պայքարի շնորհիվ աստիճանաբար շտկվեցին համատարածի ժամանակ թույլ տրված սխալները[36]: Եթե 1930 թ. սեպտեմբերի 1-ին կոլեկտիվացված էին գյուղացիական տնտեսությունների 9,5%-ը, ապա նոյեմբերի 1-ին՝ 10,3, դեկտեմբերի 1-ին՝ 11,2, դեկտեմբերի 15-ին՝ 11,8%-ը[37]: Կարևոր է այն հանգամանքը, որ այժմ կոլտնտեսությունների ղգալի մասը, հատկապես լեռնային շրջաններում, հողը համատեղ մշակող ընկերություններ էին (ՏՈՋ)[38]: Հատուկ ուշադրություն դարձվեց նրանց նյութական բազայի վրա: Դեռևս 1930 թ. գարնանացանի ժամանակ կառավարության որոշմամբ Հանրապետության բամբակմիության սիստեմում կազմվեցին 4 մեքենատրակտորային շարասյուներ (Ղամարլուում, Վաղարշապատում (Էջմիածին), Ուլուխանլուում (Մասիս) և Դավալուում (Արարատ): 1930 թ. փետրվարից գործել սկսեց նաև Հանրապետության առաջին՝ Սարդարաբադի (Հոկտեմբերյան) մեքենատրակտորային կայանը (ՄՏԿ), որը խոշոր

33 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 33, գ. 112, թ. 11:

34 «Խորհրդային Հայաստան», 21 մայիսի, 1930:

35 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 32, թ. 6:

36 «Խորհրդային Հայաստան», 6 մարտի, 1931:

37 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 16, գ. 688, թ. 4:

38 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 18, գ. 31, թ. 55:

գեր խաղաց շրջանի կոլտնտեսությունների ամրապնդման գործում։ Տրակտորի ավելացող տրակտորներն ու գյուղատնտեսական մյուս մեքենաներն արմատապես փոխեցին գյուղատնտեսության նյութական բազան և կարևոր խթան հանդիսացան կոլտնտեսային կարգերի հետագա զարգացման համար[39]։

Կոլտնտեսությունների ամրապնդման և հանրային արտադրության բարձրացման գործում կարևոր նշանակություն ունեցավ աշխատանքների կազմակերպման և հատկապես աշխատանքի գնահատման ու վարձատրության կարգավորումը։ 1931 թ. մայիսին ՍՍՀՄ սովետների VI համագումարը նպատակահարմար գտավ կոլտնտեսություններում աշխատանքի հաշվառման ու եկամուտների բաշխման չափանիշ համարել աշխօրը։

Այսպիսով, գյուղի սոցիալիստական վերակառուցման պրոցեսում, չնայած թույլ տրված սխալներին ու թերություններին (հատկապես համատարածի շրջանում), կուսակցությունը կարողացավ իր շուրջը համախմբել աշխատավոր գյուղացիությանը և հենվելով կոոպերացման բնագավառում նրա ձեռք բերած փորձի վրա, արմատավորել արտադրական կոոպերացիան։ Դա արմատական բեկում էր գյուղացիության դարավոր կացութաձևի մեջ։ Ամրապնդելով կոլտնտեսությունների նյութա-տեխնիկական բազան, կատարելագործելով աշխատանքների կազմակերպման, հաշվառման ու բաշխման սիստեմը, սովետական իշխանությունը լավագույն ձևով զուգակցեց գյուղացու անհատական և հասարակական շահերը և առաջին հնգամյակի տարիներին, այդ բնագավառում վիթխարի նվաճումների հասավ։

Չնայած կոլտնտեսային շինարարության բնագավառում ձեռք բերված հաջողություններին, այն դեռևս հեռու էր բավարար լինելուց և կուսակցական կազմակերպությունների հիմնական խնդիրներից մեկը, եթե ոչ ամենահիմնականը, մնում էր գյուղում տարվելիք աշխատանքը՝ ըստ կրսած հեղաշրջումը մինչև վերջ հասցնելը։ Առավել ևս դա վերաբերում էր մեր հանրապետությանը. «Հայաստանի ազգաբնակչության 76 տոկոսը գյուղացիներ են,—նշել է Ա. Խանջյանը ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. 3-րդ պլենումում,— այն էլ հետամնաց գյուղացիներ։ 1935 թ., ինչպես և 1936 թ. մեր ուշադրության կենտրոնը մնալու է գյուղը»[40]։ 1932 թ. հուլիսի 1-ի տվյալներով հանրապետությունում կային 892 կոլտնտե-

39 «ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 8-րդ համագումարին», Երևան, 1932, էջ 68։

40 «Խորհրդային Հայաստան», 31 հոկտեմբերի, 1930։

սությունները, որտեղ ընդգրկված էր գյուղացիության 37,3, իսկ ցանքատարածությունների՝ 39,2%-ը[41]: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը հասել էր 60,8 միլիոն ռուբլու: Կոլտնտեսությունները զգալիորեն ամրապնդվել և խոշորացել էին. եթե 1928 թ. հունվարին մեկ կոլտնտեսությանը հասնում էր 22 տնտեսություն, ապա 1933 թ. հունվարին՝ 77: Մեկ կոլտնտեսությանն ընկնող ցանքատարածությունը նույն ժամկետում 25 հեկտարից հասավ 177-ի[42]: Այդ ժամանակաշրջանում բարձրացել էր կոլտնտեսականների աշխատանքային ակտիվությունը. եթե 1931 թ. մեկ կոլտնտեսությունում միջին հաշվով ծախսվել էր 11,640 աշխոր, իսկ մեկ տնտեսության վաստակած աշխօրերի թիվը՝ 117 էր, ապա 1932 թ. մեկ կոլտնտեսության աշխօրերի ծախսումը հասել էր 14295-ի, իսկ մեկ տնտեսության վաստակածը՝ 218-ի[43]: 1933 թ. հանրապետության տարբեր շրջաններում առանձին կոլտնտեսական-հարվածայիններ վաստակում էին 180—200 աշխօր[44]: Պատահական չէր, որ Ա. Խանջյանը 1933 թ. նոր բեկման տարի էր համարում. «1933 թ. Հայաստանի գյուղատնտեսության համար բեկման նոր, ընդհանուր վերելքի սկիզբը հանդիսացավ»[45]: Նախ մինչ այդ, ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով կոլտնտեսությունների ամրապնդման վրա, որոշ չափով թուլացվեց նոր կոլտնտեսությունների կազմակերպման հարցը: Իսկ 1933 թ. նոր թափով սկսվեց մենատնտես գյուղացիների հոսքը դեպի կոլտնտեսությունները: Այժմ նույնիսկ խուսափում էին բոլոր դիմողներին ընդունելուց և առիթներ էին որոնում մերժելու համար[46]: «Խորհրդային Հայաստանը» պարբերաբար հանդես էր գալիս մենատնտես գյուղացիներին անհիմն մերժելու դեմ, պայքարում որպեսզի արհեստականորեն չդանդաղեցվեն կոլեկտիվացման տեմպերը:

Երկրորդ հնգամյակում խնդիր էր դրվում ավարտել գյուղատնտեսության կոլեկտիվացումը, կոլտնտեսությունները տնտեսապես ու կազմակերպչորեն ամրապնդել, բարձրացնել արտադրողականությունը և դրանք դարձնել սոցիալիստական օրինակելի տնտեսություններ: «Մենք սովորեցինք օգտագործել կոլտնտեսությունների առավելությունները ցանքերի տարածությունն ընդարձակելու համար,— նշել է ՍՍՀՄ հող-

41 Նույն տեղում, 12 հուլիսի, 1932:
42 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 21, գ. 233, թ. 2:
43 Նույն տեղում, թ. 53:
44 Նույն տեղում, գ. 336, թ. 16:
45 Նույն տեղում, ց. 22, գ. 56, թ. 5:
46 Նույն տեղում, ֆ. 4, ց. 21, գ. 84, թ. 12:

ժողկոմ Յակովլևը,— սակայն դեռևս չենք սովորել օգտագործել այդ առավելությունները, բերքատվությունը բարձրացնելու համար»[47]։ Երկրորդ հնգամյակի տարիներին հիմնականում փոխվեց կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազան, անցում կատարվեց ժամանակակից մեքենայական սպասարկման (ՄՏԿ-ների միջոցով), որը վճռական նշանակություն ունեցավ կոլտնտեսային արտադրության զարգացման և եկամուտների ավելացման գործում։ Եթե 1932 թ. Հանրապետության կոլտնտեսությունների համախառն եկամուտը կազմում էր 45,4 միլիոն ռուբլի, ապա 1937 թ. այն հասավ 171,1 միլիոնի[48]։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման ավարտումը երկրորդ հնգամյակի տարիներին նոր խնդիրներ դրեց բանվոր դասակարգի առջև, որի ղեկավարությամբ տեղի էին ունենում այդ վերափոխումները։ Կոլտնտեսությունների կազմակերպական ամրապնդման շրջանում վճռական նշանակություն էր ստանում կադրերի պրոբլեմը, որը գյուղացիությունն իր ուժերով լուծել չէր կարող։ Երևանի, Լենինականի, Կիրովականի և Ղափանի արդյունաբերական ձեռնարկությունները երկրորդ հնգամյակի տարիներին վերցրին հոգ մնացող գյուղերի շեֆությունը և պարբերաբար օգնություն էին ցույց տալիս նրանց։ Միայն Երևանից 1933—34 թթ. 64 առաջավոր բանվորներ ուղարկվեցին գյուղ՝ այնտեղ աշխատելու համար[49]։ Հատուկ ուշադրություն էր դարձվում գյուղական կուսակցական կազմակերպությունների ամրապնդման վրա, որոնց ղեկավարությամբ գյուղ մեկնած շեֆական բրիգադները մեծ աշխատանք էին կատարում դասակարգային թշնամու դեմ գյուղացիության պայքարը կազմակերպելու և տնտեսությունները ամրապնդելու գործում[50]։ Բանվոր դասակարգի անմիջական ազդեցությամբ և ակտիվ օգնությամբ գյուղում արմատավորվեցին աշխատանքի կազմակերպման ու եկամուտների բաշխման նոր մեթոդները, որոնք կարևոր նշանակություն ունեցան գյուղի սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսությունների ամրապնդման գործում։ Հատկապես մեծ նշանակություն ունեցավ կոլտնտեսություններում ըստ աշխատանքի բաշխման սոցիալիստական սկզբունքի արմատավորումը։

Համկ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4-ի որոշմամբ նպատակահարմար գտնվեց աշխատանքների կազմակերպման հիմնական օղա-

---

47 «Խորհրդային Հայաստան», 8 հոկտեմբերի, 1931։

48 «Советская Армения за 40 лет», Ереван, 1960, стр. 141.

49 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, գ. 21, գ. 153, բ. 57։

50 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 63, ց. 3, գ. 1545, 1892, 1893։

կը դարձնել արտադրական բրիգադները, որոնք պետք է մշտական կազմ ունենային և կատարեին որոշակի տեղամասի բոլոր աշխատանքները[51]։ Ելնելով այդ որոշումը նպատակասլաց կենսագործելու շահերից, Հանրապետությունում կազմակերպվեցին երեք փորձնական բրիգադներ (Հոկտեմբերյանի շրջանի Սարդարաբադ, Ղարաքիլիսայի՝ Համզաչիման և Համամլու (Սպիտակ) գյուղերում), որոնց աշխատանքները ուսումնասիրվեց և 1932 թ. գարնանը մասսայականացվեց բոլոր շրջաններում։ Կոլտնտեսկենտրոնը խորհուրդ էր տալիս բոլոր կոլտնտեսություններում աշխատանքները կազմակերպել բրիգադներով, նրանց ամրացնելով բանուժ, հողամաս և անհրաժեշտ գործիքներ։ Սակայն այդ շրջանում տեղերում կազմակերպվող արտադրական բրիգադների կողքին դեռևս լայնորեն օգտագործվում էր աշխատանքների կատարման գործավարձային սիստեմը, որն ավելի էր մատչելի երեկվա մենատնտեսին։ 1935 թ. Հանրապետության բոլոր կոլտնտեսություններում բրիգադները դարձել էին հիմնական արտադրական օղակ։ Կազմակերպվել էին նաև անասնապահական ֆերմաներ, որոնք չնայած դեռևս շատ փոքր էին, բայց հիմք էին հանդիսանում հանրային անասնապահության հետագա զարգացման համար։

Մեր երկրում կոլտնտեսային շինարարության հաջողություններն ու ձեռք բերած փորձը հիմք հանդիսացան գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրություն մշակելու համար։ Այդ նպատակով 1935 թ. փետրվարին հրավիրվեց հարվածային կոլտնտեսականների համամիութենական II համագումարը, որը միաձայն հավանություն տվեց նոր կանոնադրությանը և Համկ(բ)կ Կենտկոմն ու ՍՍՀՄ ԺողկոմխորհԸ 1935 թ. փետրվարի 17-ին հաստատեցին այն և գյուղատնտեսական արտելներին խորհուրդ տվեցին նրա սկզբունքների հիման վրա, երեք ամսվա ընթացքում, ելնելով տեղական առանձնահատկություններից, մշակել իրենց կանոնադրությունը։ 1935 թ. առաջին կիսամյակում ՀՍՍՀ բոլոր կոլտնտեսությունները մշակեցին իրենց կանոնադրությունները։ Դա անգնահատելի նշանակություն ունեցավ կոլտնտեսությունների կազմակերպական և տնտեսական ամրապնդման գործում։

Կուսակցական կազմակերպությունների հետևողական պայքարի, կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման, կոլտնտեսային արտադրության բարձրացման շնորհիվ երկրորդ հնգամ-

---

51 «Директивы КПСС и советского правительства по хозяйственным вопросам», М., 1968, т. 2, стр. 34.

յակի տարիներին հանրապետությունում հիմնականում ավարտվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը։ Դա այնքան էլ հեշտ չէր, մանավանդ որ հնգամյակի սկզբում գյուղացիության ճնշող մասը դեռևս կոլտնտեսություն չէր մտել։ Երկրորդ հնգամյակի տարիներին կոլտնտեսությունների քանակը 892-ից հասավ 1072-ի, որտեղ ընդգրկված էր գյուղացիության 88,7%-ը[52]։ Հանրապետությունում չկար որևէ գյուղ, որը չունենար իր կոլտնտեսությունը։ Հատուկենտ ցրված մենատնտես գյուղացիներն արդեն վճռորոշ դեր չէին խաղում գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, որն առաջին հնգամյակի տարիներին իջել էր ավելի քան 11,5 միլիոն ռուբլով, երկրորդ հնգամյակի տարիներին 60,8 միլիոնից հասավ 99,1 միլիոն ռուբլու[53]։ Մեկ կոլտնտեսությունում ընդգրկված տնտեսությունների քանակը միջին հաշվով 1933 թ. հունվարին 71 էր, իսկ 1938 թ. հունվարին՝ 156։ Ցանքատարածությունը նույն ժամանակաշրջանում 177 հեկտարից աճեց 348 հեկտարի։ Վերոգրյալի շնորհիվ մեկ կոլտնտեսության համախառն եկամուտն այդ ընթացքում 68 հազար ռուբլուց հասավ 168,6 հազարի[54]։ Դա կարևոր նվաճում էր, որը միաժամանակ վկայում էր կոլտնտեսային գյուղացիության կենսամակարդակի բարելավման մասին։ Կոլտնտեսային կարգի հաղթանակի շնորհիվ գյուղատնտեսության մեջ նույնպես տիրապետող դարձավ սոցիալիստական տնտեսաձևը, աճեց գյուղացիության տնտեսական ու քաղաքական դերը, ձևավորվեց սոցիալիստական նոր գյուղացիությունը։

Կենսագործելով գյուղի սոցիալիստական վերակառուցումը, սովետական իշխանության հոգատարության հիմնական առարկան դարձավ կոլտնտեսությունների ամրապնդումն ու զարգացումը։ Այս պայմաններում, հատկապես 1930-ական թվականների սկզբներին, հանրապետության կուսակցական և սովետական մարմինների ուշադրությունից որոշ չափով դուրս մնացին աշխատավորական անհատական տնտեսությունները (չնայած նրանք կազմում էին գյուղական բնակչության մեծամասնությունը)։ Շուտով զգացվեց դրա բացասական հետևանքը. խիստ կերպով նվազեց անհատական տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքը։ Կուսակցության Անդրերկրկոմի 1933 թ. ապրիլյան պլենումում Ս. Տեր-Գաբրիելյանն արդարացիո-

52 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 42.

53 Նույն տեղում, էջ 47։

54 Նույն տեղում, էջ 53։

բեն դժգոհում էր. «...չնայած Հայաստանի գյուղացիական տնտեսությունների 60 տոկոսից ավելին դեռևս կոլտնտեսություններից դուրս են գտնվում, այնուամենայնիվ գոյություն ունի անհատական սեկտորի անթույլատրելի ԻԻերագնահատումը, որի հետևանքով անհատական սեկտորը զարնանացանի նախապատրաստության ասպարեզում զգալիորեն հետ է մնում շրջանային միջին ցուցանիշներից»[55]։

Համատարած կոլեկտիվացումից հետո մենատնտես գյուղացիներին օգնություն ցույց տալու հարցը բավականին բարդ էր հատկապես տեղական աշխատողների համար։ Ոմանք գտնում էին, որ եթե օգնություն ցույց տան մենատնտեսներին, նրանք կամրապնդվեն և այլևս կոլտնտեսություն չեն մտնի։ Այսօրվա շատերն այն սխալ եղրակացությանն էին հանգում, որ որքան շատ քայքայվեն անհատական գյուղացիական տնտեսությունները (հատկապես միջակները), այնքան շուտ կընդգրկվեն կոլտնտեսությունների մեջ։ Անշուշտ, դա ոչ միայն սխալ, այլև վնասակար տեսակետ էր, որը կարող էր ծանր վիճակի առջև կանգնեցնել ժողովրդական տնտեսության զարգացումը։ Միջակ տնտեսություններին անհրաժեշտ էր օգնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու համար, քանի դեռ կոլտնտեսություններն ու սովխոզները ի վիճակի չէին բավարարելու հասարակության պահանջները։ Նրանց ոչ թե քայքայմամբ պետք է հարկադրեին կոլտնտեսություն մտնել, այլ կոլտնտեսային արտադրության այնպիսի զարգացման միջոցով, որ միջակն ղգար իր անհատական տնտեսության անօգտակարությունը։ Դա էր մանր արտադրողին համոզելու լենինյան սկզբունքը, որը դրվեց նեպի հիմքում։ Դա անհամեմատ դժվար էր, քան տնտեսական ու արտատնտեսական հարկադրանքով կոլեկտիվացման պլաններ կատարելը։ Սկսած 1933 թ. որոշակի շրջադարձ է նկատվում ինչպես կոլտնտեսությունների ամրապնդմանը, այնպես էլ անհատական տնտեսություններին անհրաժեշտ օգնություն ցույց տալու իմաստով։ Այժմ կուսակցական և սովետական մարմիններն ավելի հաճախ էին անդրադառնում մենատնտեսների աշխատանքներին, օգնում նրանց մեքենաներով, պարարտանյութերով ու դեղամիջոցներով, հսկում որպեսզի ժամանակին կատարվեն նախատեսված աշխատանքները։ «Խորհրդային Հայաստանի» 1933 թ. մարտի առաջնորդողներից մեկում («Ապահովենք անհատական սեկտորի ցանքի պլանի կատարումը») խնդիր էր դրվում բոլոր միջոցներով օժանդակել մենատնտեսներին, որպեսզի նրանք կարողանան կա-

55 «Խորհրդային Հայաստան», 21 ապրիլի, 1933։

տարել գարնանացանի աշխատանքները. «Մեր տեղական կուսկազմակերպությունները պետք է ըմբռնեն,— գրում էր Թերթը,— որ իրենք պատասխանատու են ոչ միայն սոցիալիստական սեկտորի, այլև անհատական սեկտորի ցանքի հաջողության համար»[56]: Թերթի անհանգստությունն անհիմն չէր: Կուլակների և ունևորների ազդեցությամբ (ինչպես և նույլ տրված սխալների հետևանքով) 1933 թ. մենատնտես գյուղացիները նախորդ տարվա համեմատությամբ զգալիորեն կրճատել էին ցանքատարածությունները: Դա կանխելու նպատակով հանրապետության տարբեր շրջաններում մենատնտես գյուղացիների հավաքներ հրավիրվեցին, որտեղ քննարկվում էին գարնանացանի, կոլեկտիվացման, կուլակների մերկայացությունների և այլ հարցեր: Կուսակցական կազմակերպությունների հետևողական պայքարի շնորհիվ գյուղացիները սկսեցին խոստովանել, որ կուլակներն իրենց խաբել են. «...առաջ մեզ խաբում էին,— Ալավերդու շրջանի մենատնտեսների հավաքում նշում է Օձունի պատգամավորը,— թե մեկ ա, որ շատ ցանենք՝ կառավարությունը տանելու ա: Մենք էլ էդ խոսքով ցանքը պակասեցրինք: Ով չցանեց, սոված մնաց, ով էլ ցանեց, էս օր տեսնում ենք, որ իր հացի տերն ա»[57]: Այդ հավաքները նպաստեցին, որպեսզի գյուղացիները լրիվ օգտագործեն իրենց հողամասերը:

Երկրորդ հնգամյակի տարիներին հիմնականում կարգավորվեցին կոլտնտեսությունների և մենատնտես գյուղացիների փոխհարաբերությունները՝ վերջիններիս օգնություն ցույց տալով և աստիճանաբար համոզման մեթոդով նրանց կոլտնտեսությունների մեջ ընդգրկելու միջոցով: Այսպես, 1933 թ. Փոքր Ղարաքիլիսայի (Ախուրյանի շրջանի Աղատան գյուղ) կոլտնտեսության աշխատանքները սուուգող ՀԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովը արձանագրեց հետևյալը. «Կուսբջջի աշխատանքները մենատնտեսների հետ բավարար է: Որպես դրա ապացույց ծառայում է այն, որ մենատնտեսները հաջողությամբ են նախապատրաստվել գարնանացանին, մենատնտեսների կողմից պետության հանդեպ ստանձնած պարտավորությունները լրիվ կատարվել են: Մենատնտես գյուղացիները (նաև միջակները) պատրաստակամություն են հայտնում օգնել կոլտնտեսությանը, մշակել 1—2 հեկտար կոլտնտեսային հող: Մենատնտեսները ակտիվորեն մասնակցում են կոլտնտեսային արտադրության խնդիրների շուրջը գումարված ժողովներին և նույնիսկ

---

56 «Հարհրդային Հայաստան», 29 մարտի, 1933:

57 Նույն տեղում:

հանդես են գալիս իրենց առաջարկներով»[58]: Սա շատ կարևոր հանգամանք է, քանի որ կոլտնտեսություններից դուրս մնացած գյուղացիներին այլևս օտարածին մարմիններ չէին համարում: Գյուղատնտեսական կամպանիաների ժամանակ մենատնտեսներն ու կոլտնտեսությունները փոխադարձաբար օգնում էին միմյանց, նպաստելով ընդհանուր արտադրության աճին[59]: Այս բարիդրացիական հարաբերությունները կարևոր դեր էին խաղում մենատնտես գյուղացիներին կոլտնտեսությունների մեջ ընդգրկելու խնդրում: Եվ իրոք, մի կողմից կոլտնտեսությունների ամրապնդման հետևանքով ձեռք բերած հաջողությունների, մյուս կողմից՝ անհատական գյուղացիական տնտեսությունների նկատմամբ կիրառվող ճիշտ քաղաքականության շնորհիվ, շուտով մասսայական շրջադարձ տեղի ունեցավ դեպի կոլտնտեսությունները, որը հասցրեց կոլտնտեսային կարգի հաղթանակին մեր երկրում:

2. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ՝ ՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ, ՎԵՐԱՑՈՒՄԸ

Նեպի առաջին տարիներին աշխուժացող կապիտալիստական տարրերի նկատմամբ սովետական իշխանությունը կենսագործում էր սահմանափակման քաղաքականություն՝ ամեն կերպ ձգտելով մեղմել նրանց շահագործողական գործունեությունը: Ժողովրդական տնտեսության վերականգնումից հետո, երբ որոշակի նվաճումներ ձեռք բերվեցին սոցիալիստական կացութաձևի ամրապնդման և պետական ու կոոպերատիվ առևտրի զարգացման գործում, աստիճանաբար ուժեղացվեց հարձակումը կապիտալիստական տարրերի դեմ, որոնց վերացումը չնայած որոշակի դժվարությունների հետ էր կապված, սակայն անհրաժեշտ փուլ էր հանդիսանում սոցիալիստական հասարակարգ կառուցելու գործում:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, գյուղում սոցիալիզմի կառուցումն աններելակայելի էին առանց կուլակության՝ վերջին ու ամենաբազմամարդ շահագործողական դասակարգի, վերացման: Կուլակության վերացումը հնարավոր էր միայն համատարած կոլեկտիվացման բազայի վրա: Ըստ էության դա կոլտնտեսությունների կազմակերպման ու զարգացման անհրաժեշտ մասն էր, նրա բնական լրացումը: Ուստի համատարած կոլեկտիվացումը և որպես դասակարգի կուլակության վերացումը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ժամանակաշրջանի երկու հիմնական և փոխադարձաբար

58 *Մեծ ՀՄԱ, ֆ. 1, ց. 19, գ. 69, թ. 57:*

59 *Նույն տեղում, ց. 22, գ. 71, թ. 98:*

պայմանավորված խնդիրներն էին։ Դա մեր երկրում սոցիալիստական շինարարության ամենադժվար պրոբլեմն էր։

Մինչև համատարած կոլեկտիվացումը կուլակության շահագործողական տենդենցի սահմանափակման հիմնական միջոցներից մեկը պրոլետարիատի դիկտատուրայի հարկային քաղաքականությունն էր, երբ սովորաբար սակավազոր տնտեսություններն ազատվում էին հարկ վճարելուց, միջակ գյուղացիները հարկվում էին մասամբ և հիմնական ծանրությունը դրվում էր ունևոր և կուլակային տնտեսությունների վրա։ Դա կուլակներին տնտեսապես թուլացնելու նպատակով էր արվում։ 1928 թ. սկսած, ՍՍՀՄ Կենտգործկոմի որոշմամբ, գյուղատնտեսական հարկի կեսից ավելին դրվում էր կուլակային տնտեսությունների վրա։ Այսպես, մեր հանրապետությունում կուլակներն ու ունևորները, որոնք 1927 թ. կազմում էին գյուղացիական տնտեսությունների մոտ 12%-ը, 1927 թ. վճարել են գյուղհարկի 49, իսկ, 1928 թ.՝ 61,%-ը։ Միջակ գյուղացիների վճարած հարկը նույն տարիներին 51%-ից իջել է 33-ի[60]։ Հարկային ճնշումն ավելի ուժեղացվեց 1929 թ.։ Հանրապետության գյուղացիության 54 %-ը, որը ստանում էր գյուղատնտեսական եկամուտների 15,7 %-ը (հիմնականում չքավորները) ազատվել էր հարկ վճարելուց։ Միջակ գյուղացիները, որոնք գյուղատնտեսական եկամուտների 51,7 %-ն էին ստանում, վճարում էին հարկերի 24,7 %-ը, իսկ գյուղատնտեսական եկամուտների 9,6 %-ն ստացող կուլակային տնտեսությունները վճարում էին հարկի 33 %-ը[61]։ Դրանով փաստորեն կարգավորվում էին գյուղում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները։

Կուլակային տնտեսությունների անհատական հարկման դինամիկան[62] (ռուբլիներով)

Թվականները	Կուլակային տնտեսությունը	Մեկ տնտեսության եկամուտը (ռուբլիներով)	Հարկի չափը (ռուբլիներով)	Եկամտի որ տոկոսն էր վերցվում
1928	2623	1120	230	20,7
1929	2382	1130	290	21,6
1930	2092	920	300	32,6
1931	1967	1190	380	34,5

60 «Խորհրդային Հայաստան», 16 դեկտեմբերի, 1928։

61 ՄԼի ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 15, թ. 56։

62 Նույն տեղում, ց. 17, գ. 137, թ. 28։

Ինչպես տեսնում ենք, արտամղման քաղաքականությունը հետևողական կենսագործման շնորհիվ կուլակային տնտեսությունների քանակը տարեցտարի նվազում էր, և փոխարենը անընդհատ ավելանում էր նրանց վրա դրվող հարկի չափը։

Հարկային ու վարկային միջոցառումները ճկուն գործիքներ էին պրոլետարիատի դիկտատուրայի ձեռքում՝ կուլակության շահագործողական գործունեությունը սահմանափակելու և նրան աստիճանաբար արտամղելու գործում։ Այդ միջոցառումների շնորհիվ, չնայած նեպի նպաստավոր պայմաններին, կուլակության աճը խիստ սահմանափակվեց (առանձին տեղերում իջավ) և 1929 թ. կուլակությունը կազմում էր հանրապետության ազգաբնակչության 1,6%-ը[63]։ Սահմանափակելով կուլակության տնտեսական գործունեությունը և նրան մեկուսացնելով քաղաքական ասպարեզից, կուսակցությունը նախապատրաստվում էր անցնելու գյուղի սոցիալիստական վերակառուցման քաղաքականությանը, որի կենսագործումն անհնար էր առանց կուլակության վերացման։ Այդ քաղաքականությունը խիստ կերպով տարբերվում էր մինչ այդ կենսագործվող սահմանափակման քաղաքականությունից։ Այժմ խնդիր էր դրվում բռնագրավել կուլակության արտադրության միջոցները և նրանց որպես սոցիալ-տնտեսական կատեգորիա վերացնել։ Դա հնարավոր էր կենսագործել միայն գյուղի համատարած կոլեկտիվացման բազայի վրա։ Այդպես էլ տեղի ունեցավ։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման նոր շրջանում՝ 1930 թ. փետրվարի 1-ից, ՍՍՀՄ Կենտգործկոմի և ժողկոմխորհի որոշմամբ, արգելվեց վարձու աշխատանքի օգտագործումը և հողի վարձակալությունը։ Դա որոշակի զրոհ էր կուլակության վրա։ Ավելին, նույն որոշմամբ, ելնելով գյուղում տեղի ունեցող սոցիալական լուրջ փոփոխություններից, թույլատրվում էր համատարած կոլեկտիվացման շրջաններում բռնագրավել կուլակների արտադրամիջոցները։ Նախատեսվում էր թշնամաբար տրամադրված կուլակներին և հատկապես դիմադրություն ցույց տվողներին արտաքսել իրենց հիմնական բնակավայրերից։ Կուլակության, որպես դասակարգի վերացման հարցը դրվում էր օրակարգի մեջ։

Անդրկենտկոմի 1930 թ. փետրվարի 8-ի որոշմամբ կուլակության երեք կարգ սահմանվեց երկրամասի համար։ Առաջին կարգի մեջ մտնում էր կուլակության հակահեղափոխական մասը, որը զենքը ձեռքին պայքարել էր սովետական իշխանության դեմ։ Կոլեկտիվացման շրջանում նրանք բացահայտ պայքարում էին կուսակցության ազրարա-

63 «Լենինյան ուղի», 1929, № 8—9, էջ 106։

յին քաղաքականության դեմ։ Ապակուլակացումից հետո դրանք պետք է պատասխանատվության ենթարկվեին, իսկ ընտանիքի անդամները, ավյալ գյուղի հասարակության ընդհանուր ժողովի որոշմամբ (և գավգործկոմների հաստատումից հետո), պետք է արտաքսվեին հանրապետության սահմաններից դուրս։ Երկրորդ կարգի մեջ մտնում էին թշնամաբար տրամադրված, բայց բացահայտ պայքարի չելած, մեծ կարողություն ունեցող կուլակները, որոնք ապակուլակացումից հետո պետք է արտաքսվեին հանրապետության հեռավոր շրջանները (համատարած կոլեկտիվացման շրջաններից հեռու)։ Նրանց հիմնականում փոխադրում էին Սևանի գավառի Կրասնոսելսկի և Բասարգեչարի շրջանները՝ յուրաքանչյուր գյուղում 8—10 տնտեսություն բնակեցնելով։ Նրանց թույլատրվում էր նաև լքյալ հողերում մինչև 40 տնտեսություն ունեցող գյուղեր հիմնել։ Այսպիսիք մեր հանրապետությունում քիչ էին, և եղածները ապակուլակացումից հետո հեռացան անհայտ ուղղություններով։

Երրորդ կարգի մեջ մտնում էին մնացած բոլոր կուլակային տնտեսությունները, որոնց ապակուլակացումից հետո թույլատրվում էր մնալ իրենց բնակավայրերում և կոլեկտիվացումից դուրս մնացած հողատարածություններից ստանալ, իրենց շնչապատկան հողամասը։ Սրանք, ինչպես նաև երկրորդ կարգի մեջ մտնողները, պարտավոր էին ժամանակին ցանք կատարել իրենց հատկացրած հողամասերում, որի համար տեղական սովետները պարտավոր էին նրանց օգնել սերմացուով ու գործիքներով։

Կուսակցությունը բազմիցս զգուշացրել էր, որ ապակուլակացումը պետք է կիրառել միայն համատարած կոլեկտիվացման շրջաններում, որտեղ գյուղացիության շուրջ 70%-ն ընդգրկված էր կոլտնտեսության մեջ։ «Կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացնելու քաղաքականությունը,— նշված է Անդրերկրկոմի 1930 թ. փետրվարի 6-ի որոշման մեջ,— պետք է կենսագործել միայն համատարած կոլեկտիվացման շրջաններում... Մնացած բոլոր շրջաններում, համատարած կոլեկտիվացման շրջաններից բացի, պետք է կենսագործել կուլակության սահմանափակման քաղաքականություն»[64]։ Նշվում էր նաև, որ վերացված կուլակային տնտեսությունները չպետք է գերազանցեին գյուղացիության ընդհանուր թվի 3—5%-ը։

Մեր հանրապետությունում եղած կուլակների հիմնական մասը պատկանում էր երրորդ կարգին, որոնք սովետական կարգերի դեմ բացահայտ պայքար չէին մղել և խոշոր տնտեսական հզորություն չունեին։

64 «Սովետական Հայաստան», 9 փետրվարի, 1930։

Սակայն համատարած կոլեկտիվացման շրջանում ապակուլակացումից հետո նրանց մեծ մասն արտաքսվեց իրենց բնակավայրերից (հաճախ առանց ընդհանուր ժողովների որոշման)։ Դա գյուղացիության մեջ դժգոհությունների տեղիք տվեց։ Այդ հարցն ուսումնասիրող ՀԿ(բ)Կ կենտկոմի հանձնաժողովը հարկադրված էր արձանագրել, որ «Կուլակների մեծ մասը, որոնք այժմ գնչուների պես թափառում են մի գյուղից մյուսը՝ համապատասխանում էին երրորդ կարգին»[65]։ Թույլ տրված սխալներն ուղղելու և տեղերում ծայր առնող դժգոհությունները մեղմելու նպատակով ՀՍՍՀ կենտգործկոմի և ժողկոմխորհի 1930 թ. մայիսի 14-ի որոշմամբ համատարած կոլեկտիվացման շրջաններից (Զանգեզուր, Սևանի ավազան, Շիրակ), ապակուլակացված և վտարված անձանց թույլատրվեց վերադառնալ իրենց բնակավայրերը, և նրանց վերադարձվեցին բռնագրավված բնակարանները[66]։ Սակայն այդ որոշումից քչերը օգտվեցին, որովհետև ապակուլակացվածների մեծ մասը տեղափոխվեց Հանրապետության և Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնները, որտեղ աշխատուժի մեծ կարիք էր զգացվում։

Կուլակությանը որպես դասակարգ վերացնելու ժամանակ առանձին տնտեսությունների նկատմամբ թույլ տրված ավելորդ խստությունները չարիքի փոքրագույնն էին։ Հիմնական սխալը, որ մասսայական բնույթ էր կրում մեր Հանրապետությունում՝ միջակ գյուղացիական տնտեսությունների ապակուլակացումն էր։ Դա լուրջ վտանգի կարող էր հասցնել. «...այս տարվա սկզբներին, փետրվարին և մարտին,—ՀԿ(բ)Կ VII համագումարում ասաց Ա. Խանջյանը,— դասակարգային թշնամին, կուլակը կարողանում է օգտագործել մեր կոպիտ սխալները, ուժեղացնելու համար հակակոլտնտեսային շարժումը։ ...Հայաստանի երեք շրջաններում՝ Վեդիում, Դարալագյազում, Շամշադինում կուլակ և դաշնակ էլեմենտները փորձեցին հակակոլտնտեսային շարժմանը տալ հակասովետական բնույթ։ Կուսակցության համագումարում մենք պետք է ընդունենք, որ փետրվարին և մարտին մենք անկասկած կանգնած էինք միջակի հետ դաշինքի խախտման անմիջական սպառնալիքի առաջ»[67]։ Անդրկովկասյան կուսակցական կազմակերպությունների VI համագումարում նույնպես արձանագրվեց, որ Հայաստանի Կոմկուսի կենտկոմը գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման ժամանակ թույլ էր տվել կոպիտ սխալներ, որոնք «...դարձան գլխավոր պատճառը մի-

65 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 180, թ. 29 և գ. 143, թ. 62։

66 «ՀՍՍՀ կառավարության դեկրետները», Երևան, 1930, էջ 179։

67 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 1, թ. 46։

ջակի տատանման և մի շարք շրջաններում ստեղծեցին նրա հետ դաշինքը խզելու ուղղակի սպառնալիք, պատճառ դառնալով միջակների առանձին խմբերի ելույթներին սովետական իշխանության դեմ»[68]: Սա նէպի հիմնական սկզբունքի անտեսման արդյունքն էր:

ՀԿ(բ)Կ VII համագումարում բազում փաստեր վկայակոչվեցին, թե ինչպես տեղերում շրջանցել են կուսակցության ցուցումները՝ կուլակությունը համատարած կոլեկտիվացման բազայի վրա վերացնելու մասին: Դեպքեր են եղել, որ ապակուլակացում է կատարվել այնպիսի գյուղերում, որտեղ դեռևս կոլտնտեսություններ չեն եղել, և մենատնտես գյուղացիները կուլակների ունեցվածքը բաժանել են իրար միջև: Ըստ Աշխարակի կուսշրջկոմի քարտուղարի, այդ սխալների պատճառն այն էր, որ «...աշխատանքների համարյա թե բոլոր ասպարեզներում տիրել է ատամանովշչինան և ամեն ինչ կատարվել է տնավարական ձևով»[69]: Դրան զոհ էին գնում շատ աղնիվ գյուղացիներ և միջակ տնտեսություններ, որոնք ակամայից հակվում էին կուլակների կողմը:

Եղակի չեն փաստերը, երբ համատարածի ժամանակ տեղական ղեկավարներն անձնական հարաբերություններից ելնելով կուլակների շարքն էին դասում միջակ, աշխատավորական տնտեսություններին[70]: «Շատ դեպքերում,— նշված է ՀԿ(բ)Կ Կենտկոմի զեկուցագրերից մեկում,— անհատական հաշիվներով միջակներին դասել են կուլակի շարքը: Կուլակների իրերը անհատները բաժանել են իրենց մեջ, կարծելով թե ռազմական կոմունիզմի ժամանակն է: Պատահել են դեպքեր, երբ կուսակցականները կուլակի հագուստը հանել և իրենք են հագել»[71]: Այսպես, օրինակ, Լենինականի գավառում բռնագրավել էին կուլակների անձնական իրերը, մթերքները (յուղ, ալյուր, հավ և այլն) և բաժանել իրար միջև[72]: Ապակուլակացված տնտեսությունների մեջ կային նաև նախկին բատրակներ և ընչազուրկ գաղթականներ, որոնք սովետական իշխանության օգնությամբ էին կազմակերպել ու ամրապնդել իրենց տնտեսությունը[73]: Վաղարշապատի Խզնաուղ (էջմիածնի շրջանի Արագած) գյուղի մի բնակիչ իր դիմումի մեջ գրել է. «...եղել եմ սոսկ աշխատող գյուղացի, էլ ուրիշ ոչինչ, բայց շնորհիվ խորհրդային իշխանու-

---

68 «Խորհրդային Հայաստան», 17 հունիսի, 1930:
69 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 14, գ. 9, թ. 247:
70 Նույն տեղում, ց. 16, գ. 19, թ. 90:
71 Նույն տեղում, ց. 15, գ. 32, թ. 30:
72 Նույն տեղում, ց. 16, գ. 17, թ. 3:
73 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 221, ց. 1, գ. 4, թ. 10:

Բյան աշխատանքի խաղաղ պայմաններին ես աշխատել եմ իմ տնտեսությունը բարեկարգել և այսպիսով ինձ դարձրել են վերնախավ»[74]։ *Նման կարգի բողոքները շատ-շատ էին*[75]։

1930 թ. ապրիլին Հանրապետության Կենտգործկոմի և Ժողկոմխորհի հատուկ հանձնաժողովները զբաղվեցին կուլակության վերացման ժամանակ թույլ արված սխալների ուղղման հարցով։ Այսպես, ստուգված ութ շրջաններում ապակուլակացված 446 տնտեսություններից 256-ը միջակ տնտեսություններ էին, որոնց սխալմամբ էին կուլակների շարքը դասել։ Հանձնաժողովները չեղյալ հայտարարեցին Ալավերդու (Թումանյան), Ղափանի, Ղուրդուղուլու (Հոկտեմբերյան) շրջանների ապակուլակացումը[76]։ *Այդ սխալների հիմնական մասն ուղղվեց։ Դա կարևոր նշանակություն ունեցավ միջակի հետ դաշինքն ամրապնդելու գործում և վերականգնվեց սովետական իշխանության նկատմամբ նրա որոշ մասի խախտված հավատը։ Այդ բոլորը մեծապես նպաստեցին կուլակության վերացման քաղաքականության ճիշտ կիրառմանն ու գյուղի սոցիալիստական վերակառուցմանը։*

Կուլակության՝ որպես դասակարգի, վերացմանն անցնելու շրջանում, փոխվեց գյուղում դասակարգային պայքարի բնույթը։ Եթե նախկինում դասակարգային պայքարը հիմնականում մղվում էր շահագործողների (կուլակների, հարուստների) և շահագործվողների միջև (չքավորներ, բատրակներ), որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր իր կողմը գրավել միջակ գյուղացուն, ապա այժմ մի կողմից կոլտնտեսային գյուղացիությունն էր, որին աջակցում են աղնիվ մենատնտես գյուղացիները, մյուս կողմից՝ կուլակն ու նրանց բացահայտ կամ գաղտնի օգնողները։ Դասակարգային թշնամու պայքարը, չնայած իր բազմազան ձևերին, հիմնականում ուղղված էր կոլտնտեսությունների դեմ։ Միայն 1930 թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը արձանագրվել են կուլակների կազմակերպած հետևյալ հակակոլտնտեսային ելույթները. ցույցեր՝ 24 վայրում, շուրջ 2500 մասնակիցներով (հիմնականում Երևանի, Լոռվա օկրուգներում), կուսակցական և կոմերիտական ակտիվին ծեծել՝ 19 դեպք, սեռոր՝ 6, սպանություն՝ 2, խոշոր հրկիզումներ՝ 11, դիմադրություն սովետական մարմիններին՝ 6 դեպք[77]։ *Հաճախ գոհ գնալով կուլակության խարդավանքներին և չկարողանալով ճիշտ կողմնորոշվել այդ*

74 Նույն տեղում, ֆ. 221, ց. 1, գ. 9, թ. 25։

75 Տե՛ս նույն տեղում, ֆ. 211, ց. 1, գ. 4, 9, 11, ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 7, գ. 190։

76 Նույն տեղում Ֆ. 112, ց. 1, գ. 648, թ. 24։

77 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 224, թ. 39։

բարդ իրադրության մեջ, գյուղի որոշ աղնիվ աշխատողներ հեռանում էին իրենց բնակավայրերից, գոյության միջոց որոնելով այլ վայրերում, հաճախ նաև այլ հանրապետություններում։ Կուլակների պայքարի ձևերից մեկն էլ կոլտնտեսությունները ներսից քայքայելու փորձն էր։

Ինչպես արդարացիորեն նշվեց ՀՍՍՀ սովետների VII համագումարում, կուլակության դասակարգային պայքարի ձևերից մեկը ցանքատարածությունների կրճատումն էր, որով հույս ունեին հանրապետությունը տնտեսական ծանր վիճակի առջև կանգնեցնել։ Այսպես, 6 հեկտարից ավելի ցանք կատարող տնտեսությունները 1927 թ. ցանել էին 39,8, իսկ 1929 թ.՝ 30,1 հազար հեկտար[78]։ Չնայած այդ շրջանում կոլտնտեսությունների և սովխոզների ցանքատարածությունների աճի շնորհիվ դա որոշակի դեր չխաղաց, ՀՍՍՀ Ժողկոմխորհը 1930 թ. փետրվարի 20-ին որոշեց. «1. Երբ կուլակային կամ ունևոր տնտեսությունը համատարած կոլեկտիվացման շրջաններից դուրս իր օգտագործության տակ գտնվող ամբողջ վարելահողը կամ նրա մի մասը թողնում է առանց մշակման կամ ցանելու, այդ հողերը հանվում են նրա օգտագործությունից և հանձնվում կոլտնտեսություններին։

2. Եթե կոլտնտեսությունների կողմից այդ հողամասերն օգտագործելը հնարավոր կամ նպատակահարմար չէ, այդ հողամասերը հանձնվում են այն հողազուրկ և սակավահող գյուղացիներին, որոնք հնարավորություն ունեն այդ հողերն օգտագործել՝ ցանելու նպատակով»[79]։

Երբ համատարածի շրջանում ուժեղացվեց հարձակումը կուլակության դեմ՝ վերջինս բացահայտ պայքարի դուրս եկավ սովետական իշխանության դեմ, չխորշելով պայքարի ոչ մի ձևից։ 1930-ական թվականների սկզբում հանրապետությունում նորից տարածվեց բանդիտական շարժումը։ Բանդիտները հիմնականում կուլակային, դաշնակցական տարրերն էին, որոնց երբեմն հարում էին պրովոկացիաներին զոհ դարձած միջակ և չքավոր գյուղացիները։ Բանդիտիզմը բավականին տարածված էր Մարտունու, Վեդու, Թալինի, Ղամարլուի շրջաններում, Զանգեզուրի, Լոռու, Դարալագյազի գավառներում։ Հայտնի էին Սարաֆիկովների և բալա Սարգսի բանդաները՝ Լոռիում, Մարուքի, Կարոյի և Այվազի խմբերը՝ Թալինում, Լազոյի խումբը՝ Դավալուում, Պարույրի բանդան՝ Դարալագյազում և այլն[80]։ ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության

78 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 818, թ. 8։

79 «ՀԽՍՀ կառավարության դեկրետները», Երևան, 1930, էջ 93։

80 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 70, թ. 5։

1930 թ. նոյեմբերի 22-ի ընդլայնված նիստում, որին մասնակցում էր Ս. Կիրովը, նշվեց, որ Հանրապետության «...երեք շրջաններում զինված պայքար է եղել սովետական իշխանության մարմինների դեմ, որին մասնակցել են մոտ երկու հազար զինված գյուղացիներ, չհաշված ոչ փոքր թիվ կազմող այն գյուղացիներին, որոնք ակտիվ կամ ոչ ակտիվ կերպով օգնում էին բանդիտներին»[81]: Բանդիտական շարժմանը մասնակցող գյուղացիների զգալի մասը, ինչպես նաև նրանց լուռ կամ բացահայտ համակրողների մեծ մասը միջակ (կամ նույնիսկ չքավոր) գյուղացիներ էին, որոնց նկատմամբ համատարած ժամանակ անհարկի բռնություններ էին թույլ տրվել (կուլակների շարքն էին դասել և այլն): Կային նաև անմեղ մոլորվածներ: «1930 թ. համատարած կոլեկտիվացման ժամանակ դաշնակները օգտագործեցին մեր սխալները և կարողացան իրենց կողմը գրավել միջակների և չքավորների զգալի մասը: Որոշ գյուղերում դաշնակների և նրանց համակրողների թիվը զգալիորեն գերազանցում էր կուսակցականների քանակը»,—գրված է ՀԿ(բ)Կ Կենտկոմ ներկայացված զեկուցագրերից մեկում[82]: Կուսակցությունը հատուկ կոչով դիմեց աշխատավորությանը, ցույց տալով բանդիտական շարժման դասակարգային բնույթը: Տեղական սովետական մարմինները, աշխատավորության ամենաակտիվ օժանդակությամբ սեղմ ժամկետում վերացրին այդ շարժումը: Նրանց մասնակցողների մեծ մասը, զրկվելով գյուղացիության պաշտպանությունից, հանձնվեց իշխանությանը: Սա սովետական իշխանության դեմ հակահեղափոխության վերջին, հուսակտուր փորձերից մեկն էր, որը գլխավորեց կուլակությունը:

Վերջին շահագործող դասակարգի տնտեսական հզորությունը ջախջախելուց հետո կուսակցությունը հետևողաբար շարունակեց նրա վերացման քաղաքականությունը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շնորհիվ ոչնչացրեց շահագործողական հարաբերություններ ծնող պատճառները:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջադարձային բեկման՝ համատարած կոլեկտիվացման շրջանում մեր երկրում վերացվեց շահագործողների ամենաբազմամարդ դասակարգը՝ կուլակությունը: Սակայն կուլակության վերացումից հետո էլ դասակարգային պայքարը գյուղում շարունակվեց՝ վերափոխվելով ու հարմարվելով նոր

---

81 Նույն տեղում, գ. 9, թ. 42:

82 Նույն տեղում, ց. 19, գ. 14, թ. 69:

պայմաններին։ Երբ կոլտնտեսությունները բավականին ամրապնդվել էին, այլևս ի վիճակի չլինելով ձախողելու նրանց հետագա զարգացումը, կուլակներն ու ոչ հարազատ տարրերը դերադասում էին մտնել կոլտնտեսությունները և նեղից քայքայել դրանք։ Նրանց հաճախ հաջողվում էր օգտագործել գյուղում բավականին տարածված թայֆայական հակասությունները և գյուղի ղեկավարությունն իրենց ձեռքը վերցնելով նախկին ունևորներին հովանավորում էին, շատ աշխոր տալիս և կոլտնտեսության եկամուտների ճնշող մասը նորից նրանց ձեռքն էր անցնում։ Լենինականի ՄՏԿ-ի քաղբաժինը 1933 թ. մերկացրեց Փ. Ղարաքիլիսայում տեղի ունեցած նման մի դեպք, որին հատուկ անդրադարձավ «Խորհրդային Հայաստան» թերթը, տեղական աշխատողների ուշադրությունը հրավիրելով նման դեպքերի վրա[83]։ «Մերին կուլակային վնասարարության հետևանք չէ այն երևույթը,— նշեց Ա. Խանջյանը ՀԿ(բ)Կ IX համագումարում,— որ ունեինք անցյալ տարի բոլոր շրջաններում, երբ կոլտնտեսություններում զգալի քանակ էին կազմում աշխատանքի դասալիքները, երբ աշխատանքի ամենահարուն շրջանում դաշտ են դուրս գալիս... աշխատող ձեռքերի հազիվ կեսը»[84]։ Համատարած կոլեկտիվացումից հետո գյուղում թափ առնող վնասարարությունների, գողությունների, գյուղատնտեսական մեքենաների փչացման, տեղ գտած անպատասխանատվության և թափթփվածության հեղինակները հիմնականում կուլակային տարրերն էին և նրանց կամակատարները։

Ինչպես Միության մեջ այնպես էլ մեր հանրապետությունում կուլակներն անընդհատ կրճատում էին իրենց ցանքատարածությունները՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը պակասեցնելու և ընդհանուր դժգոհություն առաջացնելու միտումով։ Սակայն ամրապնդվող կոլտնտեսություններն ու սովխոզները արագ տեմպերով ավելացնելով ցանքատարածությունները ու բարձրացնելով բերքատվությունը, կարողացան վիժեցնել կուլակների փորձերը։ Հանրային բաժնի ամրապնդումից բացի, կուլակային տարրերի և նրանց ազդեցության տակ ընկած գյուղացիների տնտեսական սաբոտաժը վերացնելու նպատակով, հատուկ որոշմամբ ցանքի պարտադիր պլան էր իջեցվում նաև մենատնտեսներին և բոլոր միջոցներով օգնություն ցույց տրվում, որպեսզի ներքանք կատարեն այն։ Խուսափողների համար պատիժ էր նախատեսվում։

---

83 «Խորհրդային Հայաստան», 15 հունիսի, 1933։

84 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 21, գ. 1, թ. 28։

Համատարած կոլեկտիվացումից հետո նույնպես կուլակության և կոլտնտեսային կարգի դեմ թշնամաբար տրամադրված տարրերի դեմ կուսակցական կազմակերպությունների պայքարը շարունակվեց։ Գյուղը շարունակում էր մնալ որպես դասակարգային գոտեմարտի հիմնական թատերաբեմ։ «Վերջին շրջանում մեր աշխատանքների հիմնական բեռությունը գյուղի աշխատանքների և գյուղատնտեսության նկատմամբ անբավարար ղեկավարություն է,— նշվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. 4-րդ պլենումում,— Այստեղ է դասակարգային պայքարի հանգուցակետը, այստեղ է ամենից ավելի կատաղի դասակարգային թշնամու դիմադրությունը, այստեղ է, որ ծավալվում է տասնյակ միլիոնավոր՝ երեկվա մանր սեփականատերերի, այսօրվա կոլտնտեսականների սոցիալիստական դաստիարակության գործը»[85]։ Կուլակության բողոքկված ելույթները հետևողաբար մերկացնելու, աշխատավոր գյուղացիությանը կոլտնտեսությունների շուրջը համախմբելու միջոցով խորթ և օտար տարրերը փաստորեն մեկուսացել էին և նրանց, որպես սոցիալական կատեգորիայի՝ վերացնելը բավականին հեշտացել էր։ ՀԿ(բ)Կ 1933 թ. պլենումներից մեկում, որպես կարևոր նվաճում, Ա. Խանջյանը հետևյալն է նշում. «...Մենք մաքրեցինք կոլտնտեսությունները հակահեղափոխական էլեմենտներից, դաշնակ թափթփուկներից, ջախջախեցինք նրանց նոր տակտիկան»[86]։

Սակայն առաջնորդվելով որքան մոտենում է սոցիալիզմի հաղթանակը, այնքան ուժեղանում է դասակարգային պայքարը վերադաս մարմինների կողմից առաջ քաշված սխալ դրույթով, տեղական սովետական և կուսակցական կազմակերպությունների աշխատանքների գնահատման չափանիշը դարձավ թշնամիներին մերկացնելն ու ջախջախելը։ Եվ որքան շուտ՝ այնքան լավ։ Երբ Ախտայի ժողգատարանին դիտողություն էր արվել, որ կուլակների դեմ թույլ է պայքար մղվում՝ սկսել էին աջ և ձախ «կուլակներ» հայտնաբերել ու դատել։ Միայն 1933 թ. հունվարի 15-ից մինչև ապրիլի 20-ը այդտեղ դատապարտվել են 55 կուլակ և 7 միջակ։ «Բանը այնտեղ է հասել,— նշվեց ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարում,— որ դատավորն ու դատախազը ուղղակի շրջելիս են եղել գյուղերը կուլակ «որսալու» համար»[87]։ Հատկապես շատ էին ձերբակալվում գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների նախագահներ, կուսբջջի

85 Նույն տեղում, թ. 21։

86 Նույն տեղում, ց. 22, գ. 5, թ. 162։

87 Նույն տեղում, գ. 2, թ. 99։

քարտուղարներ և այլ դևկավար աշխատողներ, որոնք իբր թե կուլակների քաղաքականություն էին վարում։ Տնտեսական ամենափոքր անհաջողությունը քաղաքական գնահատական էր ստանում։ Երբեմն տեղերում, գուցե և ոչ միամտաբար, զայրացուցիչ միջոցառումների էին դիմում դասակարգային թշնամիներին մերկացնելու համար։ «Ղամարլուի կոլտնտեսության նախագահը,—նշված է արխիվային փաստաթղթերից մեկում,— մատղների կորով ծեծի է ենթարկում մի գյուղացու, ստիպելով նրան... ստորագրություն տալ, որ ինքը դասակարգային խորթ տարր է և խնդրում է խորհրդային իշխանությանը՝ գնդակահարել իրեն»[88]։ Տեսնելով որ գյուղատնտեսական մթերումների պլանը չի կատարվում, ՀԿ(բ)Կ Մեղրու շրջկոմի բյուրոն 1932 թ. դեկտեմբերի 21-ի նիստում, որոշում է մթերումների կատարման համար ակտիվորեն չգայլքարող կոմունիստներին վտարել կուսակցությունից և հանձնարարում է «...պետքաղվարչությանը, դատական և միլիցիայի օրգաններին ուժեղացնել հսկողությունը նրանց նկատմամբ, ովքեր հրաժարվում են իրենց մթերման պլանը կատարելուց»[89]։

Հայտնի է, որ կոլտնտեսային արտադրությունը միանգամից չդրսևորեց իր առավելությունները մասնավորի նկատմամբ և սկզբնական շրջանում վերակառուցման համապատասխան բարձր արդյունքներ չտվեց։ Հաճախ չկարողանալով ինչպես հարկն է կազմակերպել կոլտնտեսային արտադրությունը (օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով), տնդհրում ձախողումների մեղքը սկսում էին բարդել երևակայական թշնամիների վրա և երբեմն նեղ, անձնական և թայֆայական հարաբերություններից ելնելով՝ անմեղ զոհերի առիթ ծառայում։ Դա գնալով մեծ չափերի էր հասնում։ 1933 թ. գարնանը ՀԿ(բ)Կ Կենտկոմը պահանջեց տեղական կազմակերպություններից՝ վերջ տալ ապօրինի ձերբակալումներին. «Կենտկոմում և ժողկոմխորհում տեղեկություններ կան,— նշվում է 1933 թ. մարտին տեղերին ուղղած շրջաբերականում,— որից պարզվում է, որ մեր աշխատակիցների պրակտիկայում դեռևս շարունակվում են մասսայական, ապօրինի ձերբակալությունները։ Ձերբակալում են բոլորը, ով չի ալարում և հատկապես նրանք, ովքեր ձերբակալելու ոչ մի իրավունք չունեն»[90]։ Կենտկոմը իրավացիորեն դատապարտելով այդ ոչ նորմալ երևույթը, միաժամանակ պարզաբանում էր, որ դա

88 Նույն տեղում, գ. 1, թ. 113։

89 Նույն տեղում, ց. 21, գ. 155, թ. 2։

90 Նույն տեղում, գ. 29, թ. 1։

կարող է վարկաբեկել սովետական իշխանության հեղինակությունը գյուղում և լուրջ դժգոհությունների տեղիք տալ։ Կուսակցական կազմակերպություններին կոչ էր արվում հետևողական պայքար մղել նման երևույթների դեմ։

Այսպիսով, կոլտնտեսությունների ու սովխոզների կազմակերպչական ու տնտեսական ամրապնդման հետ մեկտեղ աստիճանաբար թուլանում էր դասակարգային պայքարը գյուղում և դասակարգային խորթ տարրերը էական, վճռական ուժ չէին ներկայացնում սոցիալիստական հաղթարշավի դեմ։ Սակայն անհատի պաշտամունքի ձևավորման տվյալ պայմաններում, դեպքերի զարգացման ընթացքը շեղվեց իր նորմալ հունից և բազում ապօրինությունների տեղիք տալով՝ բավականին ծանր անդրադարձավ մեր երկրի տնտեսական ու հասարակական-քաղաքական առաջընթացի վրա։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Հայտնի է, որ առաջին հնգամյակի հիմնական խնդիրը ինդուստրացման լենինյան պլանի կենսագործումն էր, որի շնորհիվ մեր երկիրը ագրարային հետամնացությունից պիտի վերածվեր զարգացած, ինդուստրիալ երկրի։ Դա, փաստորեն, ուժերի վերախմբավորումն ավարտելու, ամբողջ ճակատով սոցիալիստական հարձակման անցնելու պլան էր, որով նախատեսվում էր տնտեսության բոլոր բնագավառներից արտամղել կապիտալիստական տարրերին։ Հաշվի առնելով ՍՍՀՄ տնտեսական գոտիների զարգացման անհամաչափությունն ու բազմազանությունը, կուսակցության XV համագումարը պահանջից հատուկ ուշադրություն դարձնել «...ազգային հետամնաց ծայրամասերի և հետամնաց շրջանների էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացման հարցերին, ելնելով նրանց տնտեսական և կուլտուրական հետամնացությունից, համապատասխանաբար նախատեսելով էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացման ավելի արագ տեմպ, ելնելով այդ շրջանների կարիքներն ու պահանջները Միության կարիքների և պահանջների հետ շաղկապելուց»[1]։ Այդ հետամնաց ծայրամասային երկրներից մեկը Հայաստանն

1 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս II, էջ 586։

էր, որտեղ 1926 թ. մարդահամարի տվյալներով բնակչության 81%-ը կազմող գյուղացիությունը հիմնական արտադրանք տվողն էր հանդիսանում[2]։ Արդյունաբերական արտադրության տեսակարար կշիռը չնչին էր։ Հայաստանի ինդուստրացումը մեր ամբողջ երկրի ինդուստրացման բաղկացուցիչ մասն էր։ Քանի որ նրա էլակետային բազան բավականին թույլ էր, բնականաբար, անհրաժեշտ էր զարգացման ավելի բարձր տեմպեր նախատեսել։ Ուստի և Հանրապետությունում մշակվող հնգամյա պլանում հիմնական ուշադրությունը կենտրոնացվեց արդյունաբերության զարգացման վրա, որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական և քաղաքական կարևոր նշնակություն (բանվոր դասակարգի քանակական և որակական աճի տեսակետից)։ Փաստորեն Հանրապետության ինդուստրացումը սկսվեց առաջին հնգամյա պլանով՝ մինչ այդ որոշակի նախապատրաստական աշխատանքներ տանելուց հետո։ Հայաստանի համար արդյունաբերության զարգացման ավելի բարձր տեմպեր էին նախատեսվում, քան Միության միջինն էր։ 1931 թ. համար, օրինակ, նախատեսվում էր արդյունաբերական արտադրանքի աճ՝ Սովետական Միության միջինը՝ 45, Անդրկովկասյան Ֆեդերացիայինը՝ 66, իսկ Հայաստանինը՝ 107%[3]։ Հանրապետության արդյունաբերության զարգացման տեմպերը բարձր էին հնգամյակի բոլոր տարիներին։ Դա պայմանավորված էր նաև օգտակար հանածոների առատությամբ։

«Մեզ մինչև 1928 թ. այնպիսի պրակտիկա գոյություն ուներ, որ կուսակցական կազմակերպություններդ առանձին ուշադրություն չէին դարձնում արդյունաբերական շինարարության խնդիրների վրա,— ասաց Ա. Խանջյանը ՀԿ(բ)Կ VII համագումարում,— ապա հաշվետու շրջանում մենք կարողացանք փոխել այդ դրությունը և դա կարևորագույն նվաճումներից մեկն է»[4]։

Հանրապետության արդյունաբերության զարգացման համար ժամանակակից տեխնիկական բազա ստեղծելու խնդրում վճռական նշանակություն ուներ էլեկտրաէներգիայի արտադրության ավելացումը։ Ուստի պատահական չէր, որ առաջին հնգամյա պլանում հատուկ ուշադրություն էր դարձվում էլեկտրակայանների շինարարության վրա։ Հնգամյակի առաջին տարիներին շահագործման հանձնվեց Շիրակի ջրանցքի վրա կառուցված Լենինականի հիդրոէլեկտրակայանի առաջին հերթը,

---

2 «Советская Армения за 40 лет», стр. 17.

3 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿՄ, ֆ. 112, ց. 2, գ. 815, թ. 16։

4 ՄԼԻ ՀՄՄ, ֆ. 1, ց. 15, գ. 1, թ. 30։

որը էներգիա էր մատակարարում Լենինաքանիլ գործարանին, Արթիկ-ամուֆ և Անիպեմզա հանքավայրերին։ Ելնելով տեքստիլ և շինանյութերի արդյունաբերության նշանակությունից և զարգացման հեռանկարներից, ՀԿ(բ)Կ VI համագումարի որոշմամբ շարունակվեց Լենինականի հիդրոէլեկտրակայանի երկրորդ հերթի շինարարությունը, որը հաջողությամբ ավարտվեց 1933 թ.։ 1932 թ. շահագործման հանձնվեց Հանրապետության խոշորագույն հիդրոէլեկտրակայանը՝ Զորագետը։ Առաջին հնգամյակի տարիներին դրվեցին Քանաքեռագետի հիմքերը, որով փաստորեն սկսվեց Սևան-Հրազդան կասկադի շինարարությունը։ Տեղական կարիքները բավարարելու նպատակով կառուցվեցին նաև մի շարք շրջանային հիդրոէլեկտրակայաններ (Իջևանում, Դիլիջանում, Գորիսում, Մեղրիում և այլն)։ Առաջին հնգամյակի տարիներին Հանրապետությունում կառուցվեցին 9 խոշոր հիդրոէլեկտրակայաններ։ Հնգամյակի սկզբում արտադրվող 20,3 մլն. կիլովատ ժամ էլեկտրաէներգիայի փոխարեն 1932 թ. արտադրվում էր 53,8 մլն. կիլովատ[5] ժամ։ Էլեկտրաէներգիայի արտադրության ավելացումը ժողովրդական տնտեսության կարիքները բավարարելուց բացի, որը հիմնականն էր, կարևոր նշանակություն ունեցավ նաև աշխատավորության կուլտուր-կենցաղային կարիքները բավարարելու խնդրում։

Հանրապետության ծանր արդյունաբերության առավել կարևոր առաջատար ճյուղը գունավոր մետալուրգիան էր, որի զարգացումը միութենական նշանակություն ուներ։ Այդ հարցին հատուկ անդրադարձավ ՀԿ(բ)Կ կենտկոմի և ԿՎՀ-ի 1929 թ. հուլիսյան պլենումը, որտեղ լսվեց «Հայպղինձ»-ի հաշվետվությունը[6]։ Շուտով (1930) Ալավերդիում և Զանգեզուրում ինքնուրույն կոմբինատներ կառուցվեցին, և «Հայպղինձ»-ը լուծարքի ենթարկվեց։ Արդեն 1930 թ. նախորդ տարվա համեմատությամբ մոտ 1000 տոննա ավելի պղինձ ձուլվեց, և արտադրանքը հասցվեց 3325 տոննայի։ 1926/27 տնտեսական տարվա անփոփոխ գներով, առաջին հնգամյակի տարիներին պղնձի և պղնձահանքի արտադրությունը 2,8 մլն. ռուբլուց հասավ 7 մլն. ռուբլու։ Միաժամանակ խոշոր աշխատանքներ կատարվեցին նոր պղնձահանքեր հայտնաբերելու ուղղությամբ։ Պղնձարդյունաբերության բազայի ընդլայնումը և նրա արտադրության զարգացումը կարևոր նշանակություն ունեցավ ծանր արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացման գործում։

---

5 «Социалистическое стоительство Армянской ССР», стр. 24.

6 *ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 11, գ. 124, թ. 12։*

Փաստորեն առաջին հնգամյակի տարիներին ստեղծվեց հանրապետության քիմիական արդյունաբերությունը, որը հաջորդ հնգամյակների ընթացքում վճռական դեր պիտի խաղար ժողովրդական տնտեսության հաշվեկշռի մեջ։ 1927 թ. Երևանում շահագործման հանձնվեց կարբիտի գործարանը՝ հանրապետության քիմիական արդյունաբերության առաջնեկը։ 1929 թ. Ղարաբլիսայում սկսվեց կալցիումի ցիանամիդի գործարանի կառուցումը, որը քիմիական պարարտանյութ պիտի մատակարարեր նաև հարևան հանրապետություններին։ Նախատեսվում էր այն ավարտել հնգամյակի վերջում։ Ամենուր լայն ճակատով հարձակում էր սկսվել քիմիական գործարանների կառուցման ու ընդլայնման ուղղությամբ հնգամյակի նախագծումները ժամկետից շուտ ավարտելու համար։

Արդյունաբերական և կուլտուր-կենցաղային օբյեկտների մասսայական շինարարությունը, բնականաբար, շինանյութերի արտադրության ավելացման նորանոր պահանջներ պիտի ներկայացներ հանրապետության բանվոր դասակարգին։ ՀԿ(բ)Կ VI համագումարը հատուկ ընդգծեց Արթիկտուֆի և Անիպեմզայի վերակառուցման ու ընդլայնման անհրաժեշտությունը։ 1926—1928 թթ. ուսումնասիրվեցին Արթիկտուֆի հանքավայրերը և հարուստ շերտեր հայտնաբերվեցին, իսկ պեմզայի նոր հանքավայրեր հայտնաբերվեցին Անի կայարանի մոտ։ Բանվոր դասակարգի հերոսական պայքարի շնորհիվ կուսակցության հնգամյա նախագծումները կատարվեցին ժամկետից շուտ։ Շինանյութերի արտադրությունը հանրապետությունում ավելացավ մոտ 7 անգամ՝ 0,6 միլիոն ռուբլուց հասնելով 4,3 միլիոն ռուբլու[7]։

Ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանում, ծանր արդյունաբերության բազմակողմանի զարգացման հետ մեկտեղ, որը մյուս ճյուղերի զարգացման հիմքն էր հանդիսանում, խոշոր տեղ էր հատկացվել նաև սննդի և թեթև արդյունաբերության զարգացմանը, որը, վերջին հաշվով, վճռական նշանակություն ուներ աշխատավորության կենսամակարդակի բարձրացման խնդրում։ Հնգամյակի տարիներին զգալիորեն ընդլայնվեցին Լենինականի տեքստիլ կոմբինատը, Երևանի կաշվի, մետաքսեղենի գործարանները։ Որոշակի տեղաշարժեր եղան կահույքի և տնային իրերի արտադրությունն ավելացնելու ուղղությամբ։ Կառուցվեցին Երևանի փայտամշակման կոմբինատը, կահույքի ֆաբրիկան, Իջևանի փայտամշակման գործարանը և

7 Նույն տեղում, ց. 18, գ. 75 բ, թ. 6։

այլն[8]։ Վերակառուցվեցին և ընդլայնվեցին «Արարատ» օրևսոը, ձևիօճառի գործարանը։ Տարբեր շրջաններում պանրի և յուղի շուրջ 15 գործարաններ կառուցվեցին, իսկ Երևանում և Լենինականում՝ խոշոր սառցարաններ[9]։ Միայն սննդարդյունաբերության հիմնական ֆոնդերը հնգամյակի ընթացքում 2 մլն. 490 հազարից հասան 9 մլն. 138 հազար ռուբլու[10]։ Տնտեսության այս ճյուղերի զարգացումը վկայում էր աշխատավորության նյութական պայմանների բարելավման, նրանց գնողունակության աճի մասին։

Այսպիսով, առաջին հնգամյակի տարիներին վերցնելով արդյունաբերության վերականգնման ու զարգացման բավականին բարձր կուրս, հանրապետության բանվոր դասակարգը փայլուն նվաճումների հասավ։ Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին 22 խոշոր ձեռնարկություններ, իսկ 24 գործարաններ և ֆաբրիկաններ, որոնց կառուցումն սկսվել էր առաջին հնգամյակի տարիներին, շարք մտան հաջորդ հնգամյակում։ Առաջին հնգամյակի տարիներին հանրապետության արդյունաբերական արտադրանքը գերազանցեց գյուղատնտեսական արտադրությանը։ Արդյունաբերության համախառն արտադրանքը 1927/28 տնտեսական տարվա 21,5%-ից հնգամյակի վերջում հասավ 58%-ի[11]։ Որոշակի ընդգծվեցին արդյունաբերական այն ճյուղերը, որոնք համամիութենական նշանակություն ունեին (քիմիական, գունավոր մետաղների, շինանյութերի, պահածոների և այլն)։ Դա հնգամյակի խոշոր նվաճումն էր, որը հիմք ծառայեց հետագայում ավելի մեծ նվաճումներ ձեռք բերելու համար։

1932 թ. մշակվեց ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը, որով նախատեսվում էր կառուցել նոր գործարաններ ու ֆաբրիկաններ, ինտենսիվ կերպով ծավալել հետախուզական աշխատանքներ՝ բնական հարստություններն ավելի ռացիոնալ օգտագործելու համար։ Հնգամյա պլանով նախատեսվում էր վերակառուցել պղնձարդյունաբերության բոլոր ձեռնարկությունները, ընդլայնել քիմիական գործարանները, զարկ տալ շինանյութերի և էլեկտրաէներգիայի արտադրությանը։ Հատուկ ուշադրություն էր դարձվում թեթև և սննդի արդյունաբերության զարգացման վրա։

---

8 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 39.

9 *ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 18, գ. 75բ, թ. 18։*

10 *ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 3530, թ. 21։*

11 *«ՀՍՖՀ կառավարության հաշվետվության նյութերը խորհուրդների 8-րդ համագումարում», Երևան, 1935, էջ 19։*

Հնգամյա պլանում մեծ տեղ էր հատկացվում Սևան-Հրազդան կասկադի կառուցմանը, որի առաջին կայանը՝ Քանաքեռգէսը լրիվ կարողությամբ շահագործման էր հանձնվել։ Շուտով գործարկվեցին նաև Զորագէսի մյուս ագրեգատները։ Սկսվեցին Սևան-Հրազդան կասկադի մյուս խոշոր հիդրոէլեկտրակայանի՝ Գյումուշգէսի նախագծային աշխատանքները։ Շարունակվեց նաև շրջանային հիդրոկայանների կառուցումը (Եղեգնաձոր, Բալին, Գորիս և այլն)։ 1937 թ. հանրապետությունում գործում էին 48 հիդրոէլեկտրակայաններ, 1932 թ. 29-ի փոխարեն։ Դրանց ընդհանուր կարողությունը կազմում էր 76,8 հազար կիլովատ (հնգամյակի ընթացքում աճել էր 55,5 հազար կիլովատով)[12]։ Էլեկտրաէներգիայի արտադրության ավելացումը հնարավորություն էր տալիս լայն թափով վերակառուցել սոցիալիստական արդյունաբերությունը։ Ամենից առաջ դա վերաբերում էր գունավոր մետալուրգիային, որի զարգացումը երկրորդ հնգամյակի հիմնական խնդիրներից մեկն էր։ Ուստի խոշոր կապիտալ ներդրումներ կատարվեցին հանրապետության պղնձարդյունաբերության հիմնական կենտրոնների՝ Ալավերդու և Ղափանի ձեռնարկությունները ընդլայնելու և վերակառուցելու համար[13]։ ՀԿ(բ)Կ կենտկոմը և ՀՍՍՀ ժողկոմխորհը մի քանի անգամ քննարկեցին Ալավերդու և Ղափանի արդյունաբերական ձեռնարկությունների վիճակը և միջոցառումներ մշակեցին նրանց աշխատանքները արագորեն բարելավելու համար։ ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշմամբ մոտ 100 կուսակցական և կոմերիտական աշխատողներ ուղարկվեցին պղնձարդյունաբերության այդ կենտրոններում աշխատելու համար։ 1936 թ. շահագործման հանձնվեց Ալավերդու կոմբինատի մետաղաձուլական գործարանը, կառուցվեց Ալավերդու պղնձարջասպի գործարանը, Ղափանի հարստացուցիչ գործարանը և այլն։ Հնգամյակի տարիներին պղնձարդյունաբերության արտադրությունը 7 մլն. ռուբլուց աճեց 9 մլն-ի[14]։ Բավականին մեծ ծավալ ստացան երկրաբանական-հետախուզական աշխատանքները՝ հատկապես գունավոր մետալուրգիայի հումքային բազան ամրապնդելու նպատակով։

Երկրորդ հնգամյակի տարիներին նոր թափով շարունակվեց քիմիական արդյունաբերության զարգացումը։ Դրան մեծապես նպաստում էր առատ հումքի և էժան էլեկտրաէներգիայի առկայությունը։ ՀԿ(բ)Կ X համագումարի որոշմամբ, հաշվի առնելով քիմիական արդյունաբերու-

12 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 24.

13 «ՀԿ(բ)Կ 8-րդ համագումարի բանաձևը», Երևան, 1932, էջ 9—10։

14 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 26.

բյան ժողովրդատնտեսական կարևոր նշանակությունը, համաժողովրդական պայքար ծավալվեց նրա հանդուցային կենտրոնների՝ Երևանի սինթետիկ կաուչուկի և Կիրովականի քիմիական կոմբինատի շինարարության համար[15]։ Քիմիական արդյունաբերության այդ խոշոր կենտրոնների կառուցումը վճռական նշանակություն ունեցավ հանրապետության ժողովրդական տնտեսության հետագա մասնագիտացման գործում։ Երկրորդ հնգամյակի տարիներին քիմիական արդյունաբերությունը խոշոր թռիչք ապրեց։ Եթե առաջին հնգամյակի տարիներին նրա համախառն արտադրանքը 0,3 մլն. ռուբլուց աճեց 1,4 մլն. ռուբլու, ապա երկրորդ հնգամյակի վերջում՝ 1937 թ., այն կազմեց 30,9 մլն. ռուբլի[16]։ Դա հանրապետության բանվոր դասակարգի խոշոր նվաճումն էր։

ՀԿ(բ)Կ կենտկոմը 1935 թ. հունվարին հատուկ նամակով դիմեց Արթիկատփի և Անիպեմզայի բանվորներին և կոչ արեց հնգամյակի առաջադրանքները ժամկետից շուտ կատարել։ Հնգամյակի ընթացքում շահագործման հանձնվեցին բաղալտի, պեմզաբլոկի, մարմարի, ցեմենտի և մի շարք այլ գործարաններ։ Հնգամյակի առաջադրանքները զգալի չափով գերակատարվեցին[17]։

Երկրորդ հնգամյակի տարիներին ծանր արդյունաբերության համարյա բոլոր ճյուղերը վերակառուցվեցին և փոխվեցին հիմնական ատրքավորումները։ Դրա շնորհիվ զգալիորեն բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը և հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը 1937 թ. հասավ 84,5%-ի։ Բացի այդ, էական փոփոխությունների ենթարկվեցին նաև արդյունաբերության ատորաբաժանումների աճի տեմպերը։ Եթե առաջին հնգամյակի տարիներին Հանրապետությունում արտադրության միջոցների արտադրությունը (Ա խումբ) և սպառման առարկաների արտադրությունը (Բ խումբ) աճում էին մոտավորապես հավասար տեմպերով, ապա երկրորդ հնգամյակի տարիներին Ա խումբն աճեց 3,1 իսկ, Բ խումբը՝ 1,8 անգամ[18]։ Ինչպես տեսնում ենք, երկրորդ հնգամյակի ընթացքում ծանր արդյունաբերությունը գրավեց իր օրինական տեղը՝ վճռական դեր խաղալով ժողովրդական տնտեսության զարգացման գործում։

---

15 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 25, գ. 4, թ. 24։

16 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 26.

17 Նույն տեղում, էջ 40։

18 «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 50։

Երկրորդ հնգամյակի տարիներին սովետական իշխանության բազմակողմանի օգնությամբ զգալի չափով ընդլայնվեց տնայնագործական կոոպերացիայի ցանցը, և ավելացավ նրա արտադրանքը (1933 թ. նրա համախառն արտադրանքը կազմում էր 25, իսկ 1937 թ.՝ 54,5 միլիոն ռուբլի)[19]։ Այդ խնդրում մեծ դեր խաղացին արտասահմանից Հայաստան եկած բազմահմուտ արհեստավորները։ Այսպես, օրինակ, Հունաստանից եկած դորգագործները կառուցեցին գորգերի քիմիական մաքրման արհեստանոց, որն առաջինն էր ՍՍՀՄ-ում։ Բազմաթիվ արհեստանոցներ ու արտելներ հիմնվեցին Նոր Արաբկիրի, Նոր Մալաթիայի, Նոր Սեբաստիայի համարյա թե ամայի վայրերում, որոնք մեկ երկու հնգամյակի ընթացքում խոշոր ֆաբրիկաններ ու գործարաններ դարձան[20]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1933 թ. հատուկ քննարկելով թեթև և սննդի արդյունաբերության զարգացման հարցերը, պահանջեց քանակի հետ մեկտեղ պայքարել որակի բարձրացման համար։ Երևանի և Լենինականի թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկություններում լայն պայքար սկսվեց արտադրանքի որակի բարձրացման համար։ Շուտով վերակառուցվեցին Երևանի կարի, կոշիկի, մետաքսյա գործվածքների ֆաբրիկանները, իսկ Լենինականում կառուցվեցին մանվածքային, կարի, կոշիկի երկրորդ ձեռնարկությունները։ Երկրորդ հնգամյակի ընթացքում զգալի չափով ավելացավ թեթև արդյունաբերության արտադրանքը։ Այսպես, եթե 1932 թ. արտադրվեց 9,4 մլն. մետր բամբակի գործվածք, ապա 1938 թ.՝ 14,9 մլն. մետր, մետաքսյա գործվածքը 8,1 մլն. մետրից աճեց 139,8 մլն. մետրի, իսկ գորգերի արտադրությունը՝ 9,1 հազար քառ. մետրից հասավ 18 հազարի[21]։

Երկրորդ հնգամյակի տարիներին հանրապետությունում մսի արտադրությունը 4,1 հազար տոննայից հասավ 8,2 հազար տոննայի, յուղինը՝ (կենտրոնացված) 132 տոննայից 343,7 տոննայի, պանրինը՝ 489 տոննայից 748 տոննայի, պահածոներինը՝ 12,4 մլն. պայմանական տուփից 20,6 մլն-ի[22]։

Այսպիսով, որոշ նախապատրաստական աշխատանքներ տանելուց հետո առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին փաստորեն ձևա-

---

19 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 39.

20 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 25, գ. 238, թ. 18—25։

21 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 38.

22 Նույն տեղում, էջ 37։

վորվեց և թափչքաձև զարգացում ապրեց Հանրապետության արդյունաբերությունը։ Ստորև բերվող աղյուսակը ցույց է տալիս այդ փոփոխությունները (1926—27 թթ. գներով, մլն. ռուբլի)[23]։

	1927—28	1932	1937
Ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը	28,2	111,0	255,2
որից խոշոր	19,4	85,6	214,3
մանր	8,8	25,4	40,9
Խոշոր արդյունաբերության տեսակարար կշիռը	68,8	77,1	84

Ինչպես տեսնում ենք, մեկ տասնամյակի ընթացքում ՀՍՍՀ արդյունաբերությունը դարձավ տնտեսության առաջատար ճյուղը։ Բարձր տեմպերով զարգացավ հատկապես ծանր արդյունաբերությունը։ ՀԿ(բ)Կ X համագումարն ամփոփելով երկրորդ հնգամյակի արդյունքները, նշեց, որ արդյունաբերության զարգացման բարձր տեմպերի շնորհիվ այն դարձել է տնտեսության առաջատար ճյուղը, մի քանի անգամ գերազանցելով գյուղատնտեսական արտադրանքը։

Արդյունաբերության տեսակարար կշիռը հետևյալ կերպ էր փոխվել (տոկոսներով)[24]։

	1919	1927—28	1932	1936
Արդյունաբերություն	10	21,6	57,2	69,2
Գյուղատնտեսություն	90	78,4	42,8	30,8

Այսպիսով, Սովետական Հայաստանը լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ ագրարային հետամնաց երկրից սեղմ ժամկետում վերաճեց ինդուստրիալ-ագրարային երկրի։

---

23 Նույն տեղում, էջ 23։

24 Նույն տեղում, էջ 24։

2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական արտադրական հարաբերությունների հիմքը արտադրության միջոցների հանրային սեփականությունն է, որը բացառում է շահագործողական հարաբերություններ: Այդ պայմաններում ձևավորված մրցությունը լավագույն ձևով զուգակցում է յուրաքանչյուրի անհատական և հասարակական շահերը, որովհետև կոլեկտիվի, ամբողջ հասարակության նվաճումները միաժամանակ նրա յուրաքանչյուր անդամի նվաճումն են հանդիսանում: Սոցիալիստական մրցությունը օբյեկտիվ կատեգորիա է, որը հատուկ է միայն արտադրության հանրային եղանակին: Այն նոր թափ ստացավ, երբ կենսագործվում էր երկրի ինդուստրացման ծրագիրը, երբ նպատակասլաց պայքար էր մղվում առաջին հնգամյակի առաջադրանքները կատարելու համար:

Համկ(բ)կ XVI կոնֆերանսը հատուկ կոչով դիմեց սովետական ժողովրդին՝ մրցություն ծավալել հնգամյակի առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար: «...Մրցությունն ու հնգամյակը,—նշվում էր դիմումի մեջ,— անխզելիորեն կապված են միմյանց հետ: Այդ խընդիրների կատարման նշանաբանի ներքո ՍՍՀՄ պրոլետարիատը գնում է հետագա հարձակման՝ պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային թշնամիների դեմ»[25]: Ժողովրդական տնտեսության զարգացման պլանը արտադրության զարգացման որոշակի հեռանկար է, որին հասնելու համար բանվոր դասակարգը ուղիներ ու միջոցներ է որոնում, կատարելագործում ինչպես աշխատանքի կազմակերպման, այնպես էլ արտադրության ավելացման պրոցեսները: Կուսակցությունը մեծ հույսեր էր կապում հնգամյակի առաջադրանքները կատարելու գործում բանվոր դասակարգի ստեղծագործական նախաձեռնության հետ: «Սոցիալիստական մրցությունը,—նշվեց Համկ(բ)կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումում,— պետք է հանդիսանա ամբողջությամբ վերցրած պլանի կատարման կարևորագույն պայմաններից ու նախադրյալներից մեկը»[26]:

Ոգևորված հնգամյակի խաղաղ շինարարական ծրագրով, բանվոր դասակարգը համամիութենական մրցություն ծավալեց հարվածային աշխատանքով նոր բնագծեր նվաճելու համար: Ինչպես Միության շատ քաղաքներում, արդյունաբերական ձեռնարկություններում, մեր հան-

---

25 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս III, Երևան, 1969, էջ 783:

26 Նույն տեղում, էջ 796:

բապետությունում նույնպես առաջին հնգամյակի տարիներին արմատավորվեցին մրցության նորանոր ձևեր։ Մեծ ծավալ ընդունեց հարվածայինների շարժումը, որը հիմնականում գլխավորում էին արհեստակցական միությունները։ Զևավորվում էր նորարարների շարժումը։ Առաջին հնգամյակի տարիներին հարվածայինների շարժման մասսայական բնույթի մասին է վկայում այն, որ եթե 1929 թ. դեկտեմբերին Հանրապետությունում հարվածային բրիգադներում ընդգրկված էր բանվորության 30%-ը, ապա 1931 թ.՝ 69%-ը (ժողտնտխորհին ենթակա ձեռնարկություններում 98,6%-ը)։ Հնգամյակի վերջում բանվոր դասակարգի 82—84%-ը մասնակցում էր հարվածայինների շարժմանը[27]։ *Զուր չէր, որ ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը սոցիալիստական մրցության խաղացած դերը համեմատում էր ինդուստրացման փոխառության հետ. «...Ինդուստրացման երրորդ փոխառությունը,— գրում է նա,— որն այնքան խանգավառ ընդունելություն գտավ խորհրդային ողջ հասարակության կողմից՝ սոցիալիստական մրցությունը, որը չտեսնված ծավալ ստանալով դարձավ մեր սոցիալիստական շինարարության արագացման կարևորագույն լծակը...»*[28]։

Առաջին հնգամյակի տարիներին ծավալված համամիութենական սոցիալիստական մրցության նախաձեռնողներ Հանդիսացան Լենինականի տեքստիլագործները, Երևանի կարբիդի և ձեթ-օճառի գործարանների բանվորները։ Դրանց օրինակին հետևեցին Ալավերդու և Զափանի բանվորները, Հանրապետության մյուս ֆաբրիկաների ու գործարանների կոլեկտիվները։ Նրանք պարտավորվեցին բարձր որակով և ժամկետից շուտ կատարել հնգամյակի առաջին տարվա պլանները[29]։ *Այդ նպատակով, ինչպես նշվեց Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչների 1929 թ. մայիսին կայացած կոնֆերանսում, բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողները պարտավոր էին մինչև տարվա վերջն ավարտել սոցիալիստական մրցության կոլեկտիվ պայմանագրերի կնքումը։ Այդպիսի առաջին պայմանագրերը կնքվեցին Զորագէսի և Ռիոնգէսի շինարարների, Երևանի բամբակազտիչ գործարանի և Կիրովաբադի ձեթ-օճառի գործարանի, Անիպեմզայի և Ախալցխայի լեռնագործների կոլեկտիվների միջև։ 1929 թ. կնքվեց մոտ 230 կոլեկտիվ պայմանագիր, ընդգրկելով ավելի քան 18,5 հազար բանվոր-*

---

27 *ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 3, գ. 1045, թ. 54։*

28 *Ա. Խանջյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1963, էջ 154։*

29 *«Խորհրդային Հայաստան», 30 մայիսի, 1928։*

ծառայողի[30]։ Այս պայմանագրերն անգնահատելի նշանակություն ունեին նաև ժողովուրդների բարեկամության ամրապնդման տեսակետից, մանավանդ որ փոխադարձ այցելությունները վեր էին ածվում տոնական տարուբերությունների։

1930 թ. փետրվարին ՀԿ(բ)Կ Կենտկոմը հատուկ նամակով դիմեց հանրապետության բոլոր արտադրական կազմակերպություններին, կոչ անելով անհրաժեշտ պայմաններ ստեղծել գործարար մրցություն ծավալելու համար[31]։ Այդ նամակը քննարկվեց բոլոր կոլեկտիվներում և նպաստեց մրցությունը նոր թափով ծավալելուն։ Նույնպիսի նամակով երիտասարդության դիմեց ՀԼԿԵՄ Կենտկոմը։ ՀԼԿԵՄ գավկոմներն ու շրջկոմները կազմակերպեցին մրցություն նախապատրաստող հատուկ հանձնաժողովներ, որոնք տեղերում հարվածային բրիգադներ էին կազմակերպում։ Դրանք պայքարում էին արտադրության ինքնարժեքի իջեցման, որակի բարձրացման, արտադրանքի ավելացման համար, ինչպես նաև օգնության էին հասնում ետ մնացող արտադրամասերին։

Առաջին հնգամյակի պլանները ժամկետից շուտ կատարելու և սոցիալիստական մրցությունը գլխավորելու գործում կարևոր դեր խաղացին նաև արհմիություններն։ Այդ տարիներին սկիզբ առան արհմիություններին և արտադրական խորհրդակցություններին կից գործող գիտատեխնիկական խմբակները, որոնք պայքարում էին գիտության և տեխնիկայի նվաճումներն արտադրության մեջ ներդնելու, առաջավոր փորձը տարածելու համար։ 1932 թ. Հանրապետությունում գործում էին 45 գյուտարարական խմբակներ, որտեղ ընդգրկված էին շուրջ 700 բանվորներ։ Նրանց նորարարական առաջարկների արմատավորումը հարյուր հազարավոր ռուբլիների եկամուտ էր բերում և դրական նպաստում արտադրության պրոցեսների կատարելագործմանը։

Հանրապետությունում ծավալված սոցիալիստական մրցության արդյունքներն ամփոփելու, նկատված որոշ թերություններն ու սխալները վերացնելու խնդրում կարևոր դեր խաղաց 1931 թ. մայիսին Լենինականում հրավիրված հարվածայինների I համագումարը։ Այդտեղ բազում տվյալներ վկայակոչվեցին մրցության հաջող կազմակերպման և արտադրության բարձրացման վրա նրա ունեցած բարերար ազդեցության մասին։ 1931 թ. առաջին կիսամյակում Հանրապետության 34 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպվել էր 119 հարվա-

30 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 18, գ. 94, թ. 16։

31 Նույն տեղում, թ. 32։

ծային ցեխ, 205 հարվածային բրիգադ, 50 արտադրական կոլեկտիվ։ Հարվածայինների շարքերում ընդգրկված էին արդյունաբերական բանվորների 65, մասնագիտական կադրերի՝ 46, կանանց՝ 84%-ը և այլն[32]։ Սոցիալիստական մրցությունը մասսայաբար ի հայտ էր բերում առաջավոր բանվորների և արտադրության կազմակերպիչների, որոնց փորձը լայնորեն ուսումնասիրվում էր։ Հանրապետության առաջավոր բանվորներից էին խառատ Հ. Դիլանյանը (Ձերժինսկու անվան գործարան), թունելադործ Հ. Գրիգորյանը («Քանաքեռգէսշին»), մեքենավար Հ. Հարությունյանը («Արարատ» տրեստ) և ուրիշներ։

Առաջին հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու շնորհիվ հիմնականում փոխվեց ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերի արտադրական բազան, որն ամուր հիմք էր հանդիսանում հետագա առաջընթացի համար։ Հիմնական խնդիրը, որի լուծումն առաջնահերթ նշանակություն ուներ, բարձրորակ կադրերի ու մասնագետների պատրաստումն էր։ Պատահական չէր, որ երկրորդ հնգամյակի սկզբներին մեր երկրում ծնունդ առավ տեխնիկայի լավագույն ձևով տիրապետելու շարժումը, որի նպատակն էր արտադրության առաջավորների, լավագույն վարպետների փորձը հաղորդել երիտասարդներին։ Բանվորական բարձրորակ հերթափոխի պատրաստման համար ծավալվող մրցության ձևերից մեկը իզոտովյան շարժումն էր, որին լայնորեն արձագանքեցին մեր երկրի բոլոր շրջանները։ Հայաստանում իզոտովյան շարժումը տարածվեց Երևանի կարբիդի և մեխանիկական գործարաններում, Ալավերդու և Ղափանի հանքահորերում։ Միայն սինթետիկ կաուչուկի գործարանում տեխուսուցման ցանցում 1936 թ. ընդգրկված էին 605 բանվորներ, իսկ սոցիալիստական աշխատանքի վարպետների դասընթացներին մասնակցում էին 78 առաջավորներ[33]։

Դեռևս 1933 թ. սեպտեմբերին ՀԱՄԽ-ի նախագահությունը հատուկ քննարկեց «Հայկական ՍՍՀ-ում Իզոտով-Վորովինի մեթոդների կիրառման ընթացքի մասին» հարցը և նշելով, որ այն արդյունավետ տարածում է գտել հանրապետությունում, մի շարք միջոցառումներ նշեց նրա հետագա բարելավման համար[34]։ Սոցիալիստական մրցությունը լավ կազմակերպելու և արտադրության առաջավորների փորձի օգտագործման շնորհիվ, 1933 թ. բարձր ցուցանիշների հասան Երևանի մեխանի-

32 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, էջ 323։

33 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 24, գ. 246, թ. 53։

34 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 65, ց. 4, գ. 1223, թ. 5։

կական, պահածոների գործարանների, ձեթ-օճառի, կիրովականի քիմիական կոմբինատի և «Արարատ» սրճատի կոլեկտիվները, որոնք պարգևատրվեցին ՀՍՍՀ Կենտգործկոմի պատվոգրերով[35]: ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկուցագրերից պարզվում է, որ արդյունաբերության տարբեր ճյուղերի միջև ծավալված մրցությունը 1934 թ. լավ էր կազմակերպված հատկապես մեքենաշինության, քիմիական, պոլիգրաֆ և սննդարդյունաբերության բնագավառներում, որտեղ բանվոր-ծառայողների 95—98%-ն ընդգրկված էր սոցիալիստական մրցության մեջ[36]: 1934 թ. հունիսին հանրապետության 60 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող մոտ 14400 բանվորներից սոցմրցման, հարվածայնության պայմանագրեր էր կնքել 12100 հոգի (մոտ 83%-ը), որից 1670-ը իրենց պայմանագրային պարտավորությունները (որոնք անհամեմատ բարձր էին պլանային առաջադրանքներից) ժամանակին կատարելու համար արժանացան պարգևատրման[37]:

Երկրորդ հնգամյակի տարիները մեր երկրում ծնունդ առավ և արագ տարածվեց արտադրության դերազանցիկների շարժում, որտեղ ընդգրկվածները, որպես կանոն, միայն բարձր որակի արտադրանք էին տալիս, իսկ 1935 թ. երկրորդ կեսին ծնունդ առավ ստախանովյան շարժումը, որի դերը մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործում դժվար է գերագնահատել: Դա հայրենասիրական շարժում էր, որը նոր աստիճանի բարձրացրեց սոցիալիստական մրցությունը: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1935 թ. դեկտեմբերյան պլենումը ստախանովյան շարժումը բնութագրեց որպես սոցիալիստական մրցության նոր, ավելի բարձր ձև և պահանջեց այն արմատավորել ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում:

Ստախանովյան շարժման առաջին արձագանքները Հայաստանում եղան 1935 թ. (Ալավերդու, Ղափանի մետաղագործները, Արթիկտուֆի և Անիպեմզայի բանվորները, Քանաքեռգէսի շինարարները): 1935 թ. Քանաքեռգէսի շինարարությունում 117 ստախանովյան բրիգադներ կային: Նախաձեռնողներն էին Հ. Գրիգորյանը, Մ. Կալուժնին, Ա. Ստեփանյանը և ուրիշներ, որոնք մրցելով միմյանց հետ, զգալիորեն գերակատարում էին ամենամսյա առաջադրանքները[38]: Տեխնիկային տիրապետելու, ար-

35 «Խորհրդային Հայաստան», 6 հունվարի, 1934:

36 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 22, գ. 118, թ. 205:

37 «ՀԽՍՀ կառավարության հաշվետվության նյութերը», Երևան, 1934, էջ 25:

38 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 23, գ. 172, թ. 102:

տադրական պրոցեսների կազմակերպման արվեստը հասկանալու և մասսայականացնելու նպատակով ստախանովականների համար հատուկ դասընթացներ էին կազմակերպվում, որտեղ նրանք մասնագիտական նոր որակավորում էին ձեռք բերում (Լենինականում 4 այդպիսի դասընթացներ էին գործում, Քանաքեռում՝ 5 և այլն)։ Այդտեղ ուսումնասիրում էին նաև Սովետական Միության համապատասխան արտադրական ձեռնարկությունների առաջավոր փորձը։

Դեռևս 1935 թ. աշնանը ստախանովյան տեմպերով սկսվեց սինթետիկ կաուչուկի գործարանի շինարարությունը։ Այն յուրահատուկ դպրոց հանդիսացավ և մրցության բազմաթիվ առաջավորներ, արտադրության տաղանդավոր կազմակերպիչներ առաջ քաշեց։ Եթե 1935 թ. վերջերին այդտեղ հաշվվում էր 326 ստախանովական, ապա 1936 թ. հունվարին՝ 580, փետրվարին՝ 825։ Աչքի ընկած ստախանովականներից էին բետոնագործներ Բ. Թաթոսյանը, Լ. Ղազարյանը, սևագործ բանվորներ Զ. Ջավադովը, Հ. Շարաբչյանը, Հ. Կոստանջյանը, Ղ. Մնացականյանը, Ս. Շիրոևը, Գ. Մարտիրոսյանը և ուրիշներ[39]։ Ստախանովյան շարժումը խոր և հիմնավոր մուտք գործեց Ալավերդու պղնձաձուլական կոմբինատ։ Դեռևս 1935 թ. հոկտեմբերին Ալավերդիում հրավիրված հարվածայինների հավաքը որոշեց մասսայաբար անցնել աշխատանքների կազմակերպման ստախանովյան մեթոդներին։ Առաջին հերթին որոշվեց պայքարել ամենօրյա առաջադրանքները գերակատարելու համար։ Լենհանքերի բանվորները մտնելով սոցիալիստական մրցության մեջ, 1935 թ. նոյեմբեր-դեկտեմբերի առաջադրանքները գերակատարեցին 1,5 անգամ։ Ալավերդցիների մրցակիցներն էին Ղափանի մետաղագործները։ 1935 թ. վերջերին Ղափանում ևս կազմակերպվեցին ստախանովյան առաջին բրիգադները (Մ. Պապյան, Ա. Մկրտչյան, Լ. Ստեփանյան, Հ. Հարությունյան և ուրիշները)։ Կոմբինատի կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների գլխավորությամբ ստախանովյան շարժումը շուտով ընդգրկեց բոլոր արտադրամասերը, և բանվորների մեծ մասը ակտիվորեն մասնակցում էր դրան։

Աշխատանքների կազմակերպման ստախանովյան մեթոդները լայն արձագանք գտան հանրապետության շինանյութերի արտադրության ձեռնարկություններում և առաջին հերթին Արթիկի ու Անիի հանքավայրերում։ 1935 թ. վերջերից այդտեղ հրավիրվեցին ժողովներ և արտադրական խորհրդակցություններ, որտեղ պարզաբանվում էին ստախա-

39 Նույն տեղում, ց. 24, գ. 246, թ. 65։

նովյան շարժման մեթոդները, նրա էությունը և լայնորեն արմատավորելու անհրաժեշտությունը։ Ինչպես ամենուր, այստեղ ևս առաջին ստախանովականներն արտադրության առաջավորներն էին, կոմունիստներն ու կուսակցականները, որոնք միշտ գերակատարում էին իրենց առաջադրանքները (Արթիկից քարհատներ Ա. Բաբայանը, Գ. Նահապետյանը, Հ. Կյուրեղյանը, Ս. Վարդանյանը և ուրիշներ, Անիպեմզայից՝ Ա. Մելիքյանը, Կ. Գասպարյանը, Ա. Հարությունյանը, Բ. Հարությունյանը, Խաչատրյանը և ուրիշներ)։ Կանգնելով ստախանովյան հերթափոխի, նրանք իրենց առաջադրանքները կատարում էին 180—200%-ով[40]։

Սոցիալիստական մրցության մասսայական ծավալման շնորհիվ 1935 թ. պլանները ղգալիորեն գերակատարեցին Ղափանի պղնձաձուլական, Կիրովականի քիմիական, Լենինականի մսի կոմբինատները, «Արաբատ» տրեստը, Երևանի կաշվի և պահածոների գործարանները[41]։ Իրենց զյուտարարական և նորարարական առաջարկներով աչքի ընկան շինարար բանվորներ Հ. Եղիազարյանը, Հ. Գրիգորյանը, Գ. Ամիրյանը, Ա. Տիրատուրյանը, Ա. Թերզյանը և ուրիշներ[42]։ 1936 թ. հունվարի վերջին մամուլում հրապարակվեց «Քանաքեռգէսշին»-ի բանվոր-ծառայողների դիմումը, որով կոչ էր արվում փետրվարի 1—10-ը ստախանովյան շարժման տասնօրյակ հայտարարել և բոլոր միջոցները մոբիլիզացնել պլանները կատարելու համար։ Բոլոր ձեռնարկությունները լայնորեն քննարկեցին այդ դիմումը և նորանոր պարտավորություններ ստանձնեցին[43]։ Հատկապես բարձր ցուցանիշների հասան Լենինականի տեքստիլագործները, Ալավերդու և Ղափանի հանքագործները, Երևանի կարբիդի, կաշվի և փայտամշակման գործարանները, Դավալուի ցեմենտագործները, Արթիկի ու Անիի բանվորները։ Դրանց մեծ մասը պայքարում էր կրկնակի պլան կատարելու համար[44]։ Երկրորդ հնգամյակի հատկապես վերջին տարիները ոչ միայն արտադրության բարձրացման զուտ քանակական տեղաշարժերի տարիներ էին, այլև արտադրության կազմակերպման, որակական փոփոխությունների տարիներ, երբ համարձակորեն դեն էին նետվում հին տեխնիկական նորմաները՝ բազմիցս գերակատարելով դրանք։ Հետագայում դա դարձավ մեր երկրի սոցիալիստական առաջընթացի հիմնական պայմանը։ Ինչպես առաջին, այնպես էլ երկ-

40 «Խորհրդային Հայաստան», 28 նոյեմբերի, 1935։
41 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 23, գ. 172, թ. 34։
42 Նույն տեղում, ց. 24, գ. 246, թ. 69—70։
43 «Խորհրդային Հայաստան», 27 հունվարի, 1936։
44 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 24, գ. 223, թ. 18—25։

որդ հնգամյակները ժամկետից շուտ կատարելու գործում մեծ էր աշխատավորության տնտեսական նախաձեռնությունը բարձրացնելու համար նյութական և բարոյական խրախուսանքի միջոցների խելացի օգտագործմամբ սոցիալիստական մրցության նոր, ավելի բարձր աստիճանի՝ սոսկանովյան շարժման մասսայական արմատավորման նշանակությունը։ Այն նպաստեց աշխատանքի արտադրողականության շեշտակի բարձրացմանը, որը վերջին հաշվով հիմնականն է նոր հասարակարգի կառուցման խնդրում։ Այդ պրոցեսում զգալիորեն վերափոխվեց նաև ինքը, Հայաստանի բանվոր դասակարգը։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԵՏԱԳԱ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

1. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Երկրի ինդուստրացման կուրսը, որն այնպես հետևողաբար կենսագործում էր կուսակցությունը, բնականաբար սկսի լուրջ փոփոխություններ առաջացներ հանրապետության բնակչության սոցիալական կառուցվածքում։ Արդյունաբերության հետագա զարգացման բարձր տեմպերն ապահովելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր լուծել բանվորական ուժի պրոբլեմը։ Անընդհատ ընդլայնվող սոցիալիստական արդյունաբերությունը հրամայաղաբար պահանջում էր աշխատանքային ռեսուրսների այնպիսի վերաբաշխում, որպեսզի երկրի մասշտաբով լուծվեն բնակչության զբաղվածության, ինչպես նաև որակյալ կադրերի պլանաչափ պատրաստման հարցերը։

Կուսակցության XVI համագումարն ընդգծեց, որ առանց գործիմաց, բարձրորակ կադրերի պրոբլեմը լուծելու, որը «...դառնում է մեր սոցիալիստական շինարարության կենտրոնական պրոբլեմը»[1], հնարավոր չէ ապահովել մեր երկրի ինդուստրացման բարձր տեմպերը։ Դա բավականին բարդ և դժվար խնդիր էր, որի լուծման տարբեր ուղիներ և միջոցներ գոյություն ունեին։

Եթե նախասովետական շրջանում մի կտոր հաց վաստակելու համար հայ աշխատավորները մասսայաբար արտագաղթում էին երկրից, ապա

1 «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», մաս III, էջ 16։

սովետական կարգերի հաստատմամբ Հայաստանը ձգողական կենտրոն հանդիսացավ համայն հայության համար: Սովետական Հայաստանում ապաստան գտավ նաև արևմտահայ գաղթականության զգալի մասը. Եթե 1926 թ. մարդահամարի տվյալներով հանրապետության բնակչությունը 881,3 հազար էր, ապա 1939 թ. այն կազմեց 1 միլիոն 282 հազար, կամ աճեց 45,4%-ով: Նույն ժամանակաշրջանում գյուղական բնակչության աճը կազմեց 28, իսկ քաղաքայինը՝ 119%[2]: Քաղաքային բնակչության այդպիսի շեշտակի ավելացումը ինդուստրացման կարևոր պայմաններից էր և նրա բնական հետևանքը: Ի դեպ, նախասովետական Անդրկովկասի քաղաքաբնակ վայրերում նույնպես հայազգի բանվորության տեսակարար կշիռը բավականին բարձր էր: Ա. Մյասնիկյանի վկայությամբ Անդրկովկասի քաղաքային բնակչության կեսից ավելին հայեր էին[3]: Հասկանալի է, որ վերադառնալով Հայաստան, նրանք հիմնականում բնակություն էին հաստատում քաղաքներում՝ խտացնելով բանվորության (հաճախ նաև գործազուրկների) շարքերը: Այդ բոլորի հետևանքով քաղաքային բնակչության աճի տեմպերը մեզ մոտ բավականին բարձր էին (հատկապես արդյունաբերության վերականգնման և առաջին հնգամյակի տարիներին):

Սովետական իշխանության տարիներին քաղաքային բնակչության աճի հետ մեկտեղ որոշակի փոփոխություններ տեղի ունեցան նրա սոցիալական կառուցվածքում: Եթե նախկինում քաղաքային բնակչության գերակշռող մասը բուրժուազիան էր մանր արհեստավորների հետ մեկտեղ, ապա սովետական շրջանում հիմնական բնակչությունը բանվորներն ու ծառայողներն էին: Շահագործողների վերացման հետ մեկտեղ, որպես նրա բնական հետևանք, մեր երկրում վերացվեց նաև գործազրկությունը: Գործազրկության վերացմամբ և շինարարության բուռն ծավալման շնորհիվ, հատկապես գյուղի սոցիալիստական վերակառուցումից հետո, վերջ տրվեց բանվորության տարերային հավաքման պրակտիկային: Այլևս չկար դյուղը լքելով քաղաք գալու պրոբլեմ: Այժմ հիմնական դժվարությունը որակյալ բանվորական կադրեր պատրաստելու, ժողովրդական տնտեսությանը անհրաժեշտ բանուժով ապահովելու խնդիրն էր: Այդ նպատակով 1932 թ. հունվարին կազմակերպվեց աշխատանքի հաշվեկշռի հանրապետական հանձնաժողով, որը պիտի հաշվի առներ բանվորության քանակը, որակը և այն պլանավորներ՝ ըստ կարի-

---

2 «Социалистическое строительство Армянской ССР», стр .9.

3 «Մարտակոչ», 11 ապրիլի, 1923:

քի բաշխելու համար։ Սակայն այդ հանձնաժողովը չկարողացավ հաղթահարել եղած դժվարությունները և շոշափելի արդյունքի չհասավ։ Հիմնական դժվարությունն այն էր, որ բանվորական ուժի պահանջը, որպես կանոն, բավարարվում էր որոշակի մասնագիտական որակավորում չունեցող գյուղացիների հաշվին, որոնք սովորաբար գյուղատնտեսական կուլտուրաների բերքահավաքի շրջանում աշխատանքը թողնում և գյուղ էին գնում։ Բացի այդ, նրանք բավականին ծանր բնակարանային և կուլտուր-կենցաղային պայմանների մեջ էին գտնվում։ Բանվորների մեծ մասը ապրելու տեղ չուներ։ «Կոնսերվարեսա»-ի Երևանի սովխոզի բանվորների մասին ժողկոմխորհին ներկայացված զեկուցագրում նշվում է. «...շատ ծանր են բանվորների բնակարանային-կենցաղային պայմանները։ Բանվորները ո՛չ ճաշարան ունեն, ո՛չ ակումբ, ո՛չ հանրակացարան և քաղաքական աշխատանք էլ համարյա չի տարվում»[4]։ Բնականաբար, դա տեղիք էր տալիս բանվորական ուժի հոսունության, որը դնալով մեծ չափերի էր հասնում։ Այսպես, 1929/30 տնտեսական տարում պղնձարդյունաբերության մեջ աշխատանքի էին ընդունվել 2735 բանվոր և աշխատանքից ազատվել 2297-ը (որոնցից 1666-ը՝ 72,5%-ը, իրենց դիմումների համաձայն)։ Հոսունությունը մեծ չափերի էր հասնում շինանյութերի արտադրության բնագավառում. եթե 1930 թ. բանվորների միջին ամսական հոսունությունը 6,4% էր կազմում, ապա 1931 թ.՝ 15,2, իսկ առանձին ձեռնարկություններում՝ 29—46%[5]։ «Այժմ, վերակառուցման շրջանում,— գրում էր «Խորհրդային Հայաստանը»,— երբ վիթխարի չափերի է հասել արտադրության մասշտաբը և ծայր աստիճան բարդացել է տեխնիկական սարքավորումը, բանուժի հոսունությունը արտադրության համար դարձել է մի չարիք, որը կազմալուծում է մեր ձեռնարկությունների աշխատանքը»[6]։ Բանվորության հոսունությանը նպաստում էին նաև վարձատրության բնագավառում գոյություն ունեցող սխալները, և առաջին հերթին գործավարձի թույլ արմատավորումը[7]։ Բանվորության հոսունության և աշխատանքից անհարկի բացակայությունների դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով ՍՍՀՄ Կենտգործկոմը և ժողկոմխորհը 1932 թ. նոյեմբերին հատուկ որոշում ընդունեցին նմաններին աշխատանքից հեռաց-

4 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 126, ց. 1, գ. 59, թ. 69—70։

5 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 17, գ. 1, թ. 34 և «Խորհրդային Հայաստան», 27 փետրվարի, 1932։

6 «Խորհրդային Հայաստան», 26 հուլիսի, 1931։

7 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 22, գ. 2, թ. 50—55։

նելու մասին։ Այդ որոշմամբ ուժեղացվում էր նաև միանձնյա ղեկավարությունը[8]։

Հանրապետության բանուժով ապահովվածությունը 1933 թ. հասնում էր 75,8%-ի[9]։ Դա զգալիորեն արգելակում էր արտադրության զարգացումը։ Աշխժողկոմատի 1933 թ. զեկուցագրերից մեկում նշվում էր, որ Ալավերդու և Ղափանի պղնձահանքերում աշխատելու համար անհրաժեշտ է հավաքագրել 1540 բանվոր։ Սակայն դա մեծ դժվարությունների հետ է կապված և խանգարում է պլանների կատարմանը[10]։ Երբ ամենուր խիստ զգացվում էր բանվորության կարիքը, նրա հոսունությունը խանգարում էր որակավորման բարձրացման և կայուն կադրեր պատրաստելու աշխատանքներին։ 1933 թ. ընթացքում Ալավերդիում աշխատանքի էր ընդունվել 3095 բանվոր, ազատվել՝ 2772-ը։ Եվ դա այն դեպքում, երբ մոտ 200 բանվորի կարիք կար[11]։

Անընդհատ բարձրացնելով բանվորների մասնագիտական որակավորումը, բարելավելով նրանց բնակարանային և կուլտուր-կենցաղային պայմանները, կուսակցությունը բոլոր միջոցները ձեռք էր առնում բանվորության հոսունությունը դադարեցնելու, արտադրության համար մշտական և բարձրորակ կադրեր պատրաստելու համար։ Առաջին հնգամյակի ընթացքում բանվորների թիվը 42,5 հազարից հասավ մոտ 94 հազարի, կամ կրկնապատկվեց, իսկ 1936 թ. հասավ 104,5 հազարի[12]։ Սա խոշոր նվաճում էր։

Սոցիալիստական արդյունաբերության նվաճումները և հատկապես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը նոր բովանդակություն հաղորդեց նաև բանվորագյուղացիական դաշինքին։ Այժմ անհատական մի՛ջակ տնտեսությունը գյուղատնտեսական արտադրության կենտրոնական դեմքը չէր և կուսակցությունը չէր կարող հենվել նրա հետ դաշինքն ամրապնդելու քաղաքականության վրա։ Գյուղի հիմնական դեմքը կոլտնտեսային գյուղացիությունն էր։ ՀՍՍՀ սովետների VI համագումարն այդ առթիվ նշեց. «Կոլտնտեսություն մտած միջակը, նախկին բատրակի ու չքավորի և այժմ կոլտնտեսականի հետ միասին դառնում է խորհրդային իշխանության իրական ու ամուր հենարանը գյուղում։ Դրանով իսկ հսկայական չափով ամրանում է բանվոր դասա-

8 Նույն տեղում, ց. 19, գ. 159, թ. 1։

9 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1417, թ. 14։

10 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 16, գ. 6, թ. 17։

11 «Խորհրդային Հայաստան», 19 ապրիլի, 1934։

12 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 12.

կարգի կապը գյուղացիության հետ, ընդլայնվում բանվորագյուղացիական իշխանության պատվանդանը, որի համար այսուհետև գյուղում հիմնական ու գլխավոր հենարան է կոլտնտեսային գյուղացիությունը»[13]։ Ուստի և բնական է, որ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումից հետո սովետական իշխանությունը հիմնական միջոցները (ֆինանսական, նյութական և այլն) օգտագործում էր կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազան ամրապնդելու, կոլտնտեսային արտադրությունը զարգացնելու համար։ Դա դաշինքի ամրապընդման հիմնական օղակն էր։ Արմատական վերափոխումների և դասակարգային պայքարի ծայրահեղ սրման պայմաններում, երբ կուսակցությունն ամբողջ ճակատով հարձակման էր անցնում կուլակության դեմ՝ հենվելով կոլտնտեսությունների վրա, այլևս չէր կարելի դաշինքի հիմքում դնել գյուղացիության այս կամ այն շերտը։ Ավելին, այն չքավոր և միջակ տնտեսությունները, որոնք բացահայտ կամ դաղտնի պայքարում էին կոլտնտեսությունների դեմ, թուլացնում կոլտնտեսության շինարարության տեմպերը, չէին կարող բանվոր դասակարգի դաշնակիցն ու հենարանը լինել։ Նրանք փաստորեն օգնում էին դասակարգային թշնամուն։ Ճիշտ էր նկատել Հանրապետության սովետների VI համագումարը, որ «խորհրդային իշխանության իրական և ամուր հենարան դառնալու համար անհատական չքավորի և միջակի առաջ կա միայն մի ճանապարհ՝ օգնել կոլտնտեսություններին և ապա մտնել կոլտնտեսության մեջ»[14]։ Ուստի, առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին կոլտնտեսային շինարարության ծավալմանը բանվոր դասակարգի ցույց տված օգնությունը բանվորագյուղացիական դաշինքի հիմնական հանգույցն էր, որի վրա անհրաժեշտ ուշադրություն էր դարձվում։ Մինչև համատարած կոլեկտիվացումը բանվոր դասակարգը դաշինքում իր դեկավար դերը հիմնականում ապահովում էր գյուղացիական անհատական տնտեսություններին ցույց տրվող օգնության և կոոպերացիայի ամրապընդման միջոցով։ Այդ շրջանում երբ դեռևս չէր լուծվել ով՝ ում հարցը և բանվոր դասակարգի շարքերը բավականին նոսր էին, դաշինքը մի յուրահատուկ միություն էր, ուղղված շահագործողների դեմ։ Կոլտնտեսային կարգի հաղթանակից հետո բանվոր դասակարգի դերը գյուղատնտեսության զարգացման գործում ավելի բարձրացավ։ Իր հասարակական, քաղաքական դեկավարությունից բացի, այժմ բանվոր դասակարգն

13 «Խորհրդային Հայաստան», 2 ապրիլի, 1931։

14 Նույն տեղում, 3 ապրիլի, 1931։

էր ստեղծում կոլտնտեսությունների տնտեսական բազան։ Բանվոր դասակարգի մի հսկայական բանակ զբաղված էր գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների արտադրությամբ, ինչպես նաև դրանց արդյունավետ օգտագործմամբ։ Շահերի և նպատակների նույնությունն էլ ավելի էր ամրապնդում բանվորագյուղացիական դաշինքը և բարձրացնում բանվոր դասակարգի առաջատար դերն այդ դաշինքում։

Հանրապետության բանվոր դասակարգի աճն ուներ նաև այն առանձնահատկությունը, որ բանվորությունը գնալով կենտրոնանում էր խոշոր ձեռնարկություններում։ Եթե 1928 թ. 100-ից ավելի բանվոր ունեցող ձեռնարկությունների թիվը ցեղային արդյունաբերության մեջ 12 էր, ապա 1932 թ. հասավ 28-ի, որտեղ աշխատում էր բանվորության մոտ 80%-ը[15]։ Ընդ որում, այդպիսի ձեռնարկությունների տեսակարար կշիռը բավականին բարձր էր մեքենաշինության, մետաղամշակման, տեքստիլ արդյունաբերության բնագավառում։ Դա խոշոր նվաճում էր։ Ձևավորվում և արագ տեմպերով զարգանում էր սովետական բանվոր դասակարգը, որն արմատապես տարբերվում էր իր բանուժը վաճառող պրոլետարիատից։ Վերականգնելով ու վերակառուցելով սոցիալիստական արդյունաբերությունը, իր արտադրական գործունեության պրոցեսում փոխվեց նաև հանրապետության բանվոր դասակարգը (որակը, տարիքը, սոցիալական և քաղաքական դիմագիծը)։ Հատկապես փոխվեց նրա մասնագիտական որակավորումը։ Ձեռքի պրիմիտիվ աշխատանքի հետ կապված բազում գործողություններ վերացան, իրենց տեղը զիջելով մեքենայի աշխատանքին, որը բարձրորակ կադրերի նոր պահանջ էր ներկայացնում։ Սովետական իշխանությունն այդ հարցը լուծում էր բուհերի, տեխնիկումների, ֆաբրիկագործարանային ուսումնարանների ցանցը տարեցտարի ընդլայնելով, և անմիջապես արտադրության պրոցեսում զանազան դասընթացներ ու խմբակներ կազմակերպելով։ Երկրորդ հնգամյակի տարիներին հանրապետությունում գործում էին 9 բուհ և 65 միջնակարգ մասնագիտական հաստատություն, որոնք որակյալ կադրեր պատրաստելու հիմնական դարբնոց էին հանդիսանում։ Երևանից բացի, տեխնիկումներ կազմակերպվեցին նաև հանրապետության մյուս քաղաքներում (Լենինական, Ալավերդի, Ղափան, Արթիկ և այլն)։ Որակյալ բանվորական կադրեր պատրաստելու գործում խոշոր դեր խաղացին տեղերում կազմակերպվող ֆաբրիկագործարանա-

---

15 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 1, ց. 15, գ. 91, թ. 20։

յին ուսումնարանները։ 1932—33 ուս. տարում Հանրապետությունում գործում էր 30 ֆաբգործուս, մոտ 3500 սովորողով[16]։ Դա որակյալ և երիտասարդ բանվորության թարմ հոսանք էր, որը կարևոր դեր խաղաց հնգամյակի առաջադրանքները ժամանակին կատարելու գործում։ Կարևոր նշանակություն ուներ նաև աշխատավորության հանրակրթական և քաղաքական մակարդակի բարձրացումը։ Բացի այդ, բանվորների մասնագիտական որակավորումը բարձրացնելու գործում կարևոր դեր խաղացին ՀՍՍՀ ժողկոմխորհի 1932 թ. օգոստոսի 22-ի որոշմամբ կազմակերպված բանվորական կրթության կոմբինատները, որոնք ելնելով տեղական պահանջներից, անհրաժեշտ կադրեր էին պատրաստում։ Նման կոմբինատներ գործում էին բոլոր արդյունաբերական և շինարարական կենտրոններում, «Հայտնարկոոպ»-ի ձեռնարկություններում[17]։ Ելնելով ուսուցումը արտադրության հետ կապելու պահանջից, 1931 թ. վերակառուցվեց ուսուցման ամբողջ սիստեմը (բանֆակից մինչև բուհ)։ Արտադրության կարիքները բավարարելու ուղղությամբ դրական աշխատանքներ կատարվեցին Երևանի, Ալավերդու, Դափանի ձեռնարկություններին կից գործող ուսումնական հաստատություններում։ Բանվոր դասակարգի որակական աճին և կուլտուր-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված այդ միջոցառումները նպաստեցին ոչ միայն արտադրության առաջավորների, այլև հասարակական-քաղաքական ակտիվ գործիչների առաջ քաշելուն, որոնց օրինակը դաստիարակչական մեծ նշանակություն ուներ շատերի համար։ Այդպիսի առաջավորներից էին Մ. Պապյանը (Դափանից), Գ. Ղազարյանը (Կիրովականից), Թ. Պողոսյանը (Լենինականից), Ե. Աբրահամյանը (Լենինականից), Գ. Հովհաննիսյանը (Արարատից), Հ. Քոթանջյանը (Երևանից), Կ. Ֆեոխովը (Քանաքեռից) և շատ ուրիշներ[18]։

Հատկապես երկրորդ հնգամյակի տարիներին ամուր հիմքերի վրա դրվեցին բանվոր դասակարգի կազմը պլանավորված համալրելու աշխատանքները։ Դա կարևոր նվաճում էր։ Տեղական կադրերի պատրաստման հաշվին պլանավորվեցին նաև կանանց արտադրության մեջ լայնորեն ընդգրկելու աշխատանքները։ Նախապատերազմյան հնգամյակների տարիներին բանվոր-ծառայողների կազմում զգալիորեն ավելացավ կանանց տեսակարար կշիռը։ Եթե 1929 թ. Հանրապետության ֆաբրիկա-

16 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 113.

17 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 119, ց. 1, գ. 1223, թ. 18—20։

18 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 25, գ. 4, թ. 21։

ներում և գործարաններում աշխատող կանայք կազմում էին տղամարդկանց թվի 19,6%-ը[19], ապա 1936 թ.՝ 35,9%-ը[20]:

Քանի որ Հանրապետության արդյունաբերությունը փաստորեն ստեղծվեց սովետական իշխանության տարիներին, բանվոր դասակարգի աճը հիմնականում տեղի էր ունենում երիտասարդության հաշվին: 1932 թ. արդյունաբերության բնագավառում աշխատողների ավելի քան 30%-ը 18—20 տարեկան էին: Առաջին հնգամյակի վերջում արդյունաբերության տարբեր ճյուղերում աշխատող բանվորների 60%-ը աշխատանքային գործունեությունը սկսել էին 1926 թ. հետո: Դրանք հիմնականում կապիտալիստական շահագործում չտեսած գրագետ և որակյալ կադրեր էին, որոնք նոր, թարմ հոսանք էին ավելացնում բանվորության մեջ: Բանվոր դասակարգի երիտասարդացման ու որակավորման բարձրացման ավյալները վկայում են այն մեծ հոգատարության մասին, որ սովետական իշխանությունը հանդես էր բերում աշխատավորության հանդեպ: Եվ դա բնական էր:

Բանվոր դասակարգի քանակական և որակական աճը միաժամանակ հնարավորություն էր ընձեռում առավել առաջավորներին առաջ քաշելու տնտեսական և սովետականղեկավար աշխատանքներին: Բանվորների առաջքաշման քաղաքականությունը լայնորեն կենսագործվում էր նախապատերազմյան հնգամյակների տարիներին, որի շնորհիվ արտադրության բազմաթիվ հմուտ կազմակերպիչներ առաջ քաշվեցին պատասխանատու աշխատանքների և խոշոր ծառայություն մատուցեցին սոցիալիստական շինարարության գործին: 1928—1936 թթ. Հանրապետությունում ղեկավար աշխատանք կատարելու համար առաջ են քաշվել 124 բանվոր, որոնք չնչին բացառությամբ արդարացրել են իրենց: Կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեները հետևում էին առաջ քաշվածների աշխատանքներին և նրանց օգնություն ցույց տալիս: Հաշվի առնելով, որ նրանց կուլտուրական և կրթական մակարդակը հաճախ շատ ցածր էր, հատուկ դասընթացներ էին կազմակերպվում նրանց համար: Այդ աշխատանքները լավ էին կազմակերպվում Երևանի, Կիրովականի, Ալավերդու, Ղափանի կազմակերպություններում[21]: Բանվորների առաջքաշման հարցում ևս հաճախ տեղ էին գտնում բյուրոկրատիզմի դրսևորումներ: Փաստաթղթերից մեկում նշված է. «...շատ անգամ այդ առաջքաշումը ծիծաղելի բնույթ է ստանում, արտադրության մեջ լավ

19 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 15, գ. 91, թ. 4:

20 Մշի ՀՄԱ, ֆ. 1, ց. 25, գ. 255, թ. 4:

21 Նույն տեղում, ց. 17, գ. 160, թ. 103:

աշխատողին տանում, դարձնում են ճաշարանի վարիչ, պահեստապետ, դանձապահ և այլն»[22]: Կուսակցական կազմակերպությունները հաճախ անդրադառնալով այդ հարցին, ուղղում էին առաջքաշման աշխատանքներում տեղ գտած սխալները՝ ելնելով արտադրության բարձրացման և կադրերի ավելի ռացիոնալ օգտագործման շահերից:

Արդյունաբերության սոցիալիստական վերակառուցումը և բուն զարգացումը առաջ քաշեց ոչ միայն բարձրորակ բանվորության, այլև ինժեներատեխնիկական կադրերի պատրաստման անհրաժեշտությունը, որոնց կարիքը տարեցտարի աճում էր: Հայտնի է, որ սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին մտավորականության հիմնական մասը ժառանգություն էր մնացել անցյալից: Ի պատիվ հայ մտավորականության պետք է նշել, որ նրանց հիմնական մասը բարեխղճությամբ ծառայեց վերածնվող, աղգային զարթոնք ապրող իր ժողովրդին: Սակայն մտավորականության այդ ջոկատը սակավաթիվ էր և անբնդհատ նվազող: Սովետական իշխանության տարիներին վիթխարի աշխատանք կատարվեց բանվոր դասակարգի և գյուղացիության շարքերից, նոր, սոցիալիստական մտավորականություն ձևավորելու համար: Եթե 1920 թ. մինչև առաջին հնգամյակի վերջը հանրապետության բուհերում պատրաստվել էր 130 ինժեներ և 252 տնտեսագետ, ապա միայն երկրորդ հնգամյակի տարիներին արտադրություն ուղարկվեց 377 ինժեներ և 121 տնտեսագետ[23]: Միջնակարգ մասնագիտական հաստատությունների (հիմնականում արդյունաբերական թեքում ունեցող) շրջանավարտների քանակը մինչև երկրորդ հնգամյակը 772 էր, իսկ երկրորդ հնգամյակի տարիներին հասավ 1524-ի[24]: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ տեխնիկական մտավորականության մեջ ևս ղգալիորեն բարձրացավ բանվորության տեսակարար կշիռը: Դա բանվոր դասակարգի պատմական միսիան ավելի հաջողությամբ կատարելու կարևոր նախապայմաններից մեկն էր:

Այսպիսով, սոցիալիզմի նյութական բազայի ստեղծման հետ միաժամանակ քանակապես և որակապես աճեց հանրապետության բանվոր դասակարգը, բարձրացավ նրա հասարակական-տնտեսական դերը:

2. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻՆ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կուլակության՝ որպես դասակարգի վերացման քաղաքականությունը նոր խըն-

22 Նույն տեղում, ց. 15, գ. 1, թ. 212:

23 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 114.

24 Նույն տեղում, էջ 115:

դիրներ դրեց նաև բանվոր դասակարգի առջև։ Առանց բանվոր դասակարգի բազմակողմանի օգնության հնարավոր չէր սոցիալիստական շինարարություն ծավալել գյուղում։ Գյուղացիության կյանքում տեղի ունեցող այդ ճակատագրական շրջադարձի ժամանակաշրջանում ավելի շատ էր զգացվում բանվոր դասակարգի եղբայրական օգնության կարիքը, օգնություն, որով առաջին հերթին շահագրգռված էր ինքը՝ բանվոր դասակարգը։ Վերջին հաշվով, գյուղի սոցիալիստական վերակառուցումը և այդ հիմքի վրա վերջին շահագործող դասակարգի վերացումը պրոլետարական հեղափոխության հաղթարշավի շարունակությունն էր, մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցման անհրաժեշտ պայմանը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացումը յուրահատուկ քննություն էր նաև բանվոր դասակարգի համար, որով մեկ անգամ ևս պիտի ապացուցվեր գյուղացիության առաջնորդ լինելու նրա օրինական իրավունքը։ Որպես հասարակության առաջատար ուժ, բանվոր դասակարգը վճռական դեր էր խաղում գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում, որը, վերջին հաշվով, բոլոր կարգի վերակառուցումների հիմքն էր հանդիսանում։

Ինչպես ամբողջ ժողովրդական տնտեսության, այնպես էլ գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, ինչպես հայտնի է, ըստեղծվում էր Միության մասշտաբով՝ բոլոր հանրապետությունների ու տնտեսական գոտիների փոխադարձ օգնությամբ։ Հանրապետության գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան անընդհատ համալրվում էր նորագույն մեքենաներով ու գործիքներով։ Սարդարաբադում հիմնված առաջին մեքենատրակտորային կայանը, ինչպես նաև նրան մեքենայական շարասյունները (Վաղարշապատ, Ուլուխանլու, Զամարլու և այլն) խոշոր դեր խաղացին գյուղատնտեսության կոլեկտիվացման, առաջին կոլտնտեսությունների ամրապնդման և գյուղացիության դարավոր կենցաղի ու արտադրության վերափոխման գործում։ Գյուղատնտեսական մեքենաների պահպանման, վերանորոգման ու շահագործման հիմնական աշխատանքները բանվոր դասակարգի անմիջական մասնակցությամբ և ակտիվ օգնությամբ էր տեղի ունենում։

Հաշվի առնելով գյուղատնտեսության օրավուր աճող պահանջները, Համկ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումը անհրաժեշտ համարեց վերձված բանվորներից 25 հազար մարդ ուղարկել գյուղ՝ դեկավար աշխատանք կատարելու[25]։ Դա յուրահատուկ կոչ էր՝ ուղղված բան-

25 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս II, էջ 819—820։

վոր դասակարգին, որը լայն արձագանք գտավ Միության բոլոր հանրապետություններում: Սեղմ ժամկետում շուրջ 70 հազար դիմում ստացվեց: Դասակարգային պարտքի և հասարակական դերի բարձր գիտակցումով արտադրության առաջավոր բանվորները ցանկություն հայտնեցին գյուղ մեկնել և նյութական ու այլ կարգի զոհողությունների գնով օգնել կուսակցության առաջադրած խնդիրները լուծելուն: Այդ որոշումով որպես քսանհինգհազարականներ գյուղ ուղարկվեց 26,360 մարդ[26]:

Քսանհինգհազարականների մասին կոչը լայն արձագանք գտավ նաև Անդրկովկասում: Հայաստանում այդ կոչով 66 մարդ ուղարկվեց գյուղում աշխատելու համար: Նրանցից 12-ը եկել էին Բաքվից: «Քսանհինգհազարականների հաշվին Հայաստանում մոբիլիզացվեցին և կոլխոզային աշխատանքներին ուղարկվեցին 66 մարդ,—գրված է ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. մարտի 2-ի հաղորդագրության մեջ,—որից 12-ը Բաքվի ձեռնարկություններից, իսկ 54-ը՝ հանրապետության ֆաբրիկաներից ու գործարաններից»[27]: Շուտով դրանցից 15-ը ևս կանչվեցին (չկարողացան աշխատել կամ դժվարություններին չդիմացան), իսկ մնացածները պատվով կատարեցին կուսակցության առաջադրանքը: Գյուղ ուղարկված բանվորների մեծ մասին ընտրեցին կոլտնտեսությունների նախագահներ և վարչության անդամներ (36-ը՝ կոլտնտեսության նախագահ, 5-ը՝ նախագահի տեղակալ, մյուսները վարչության անդամներ)[28]: Քսանհինգհազարականները կարևոր դեր խաղացին կոլտնտեսությունների ամրապնդման, աշխատանքների ճիշտ կազմակերպման, կուսակցության ագրարային քաղաքականությունը կենսագործելու խնդրում:

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը հաջողությամբ ավարտելու նպատակով քսանհինգհազարականներից բացի բանվոր դասակարգը տարբեր ուղիներով ու միջոցներով իր հեղբայրական ձեռքն էր մեկնում գյուղացիությանը: Այդ խնդրում կարևոր դեր խաղաց բանվոր դասակարգի շեֆական օգնությունը ինչպես գյուղատնտեսության ընդհանուր զարգացման, այնպես էլ գյուղում սոցիալիստական սեկտորի ամրապնդման գործում: 1930 թ. վերջերին և 1931 թ. սկզբներին, տեղական սովետների ընտրությունների կամպանիայի ժամանակ գյուղ մեկնած բանվորական բրիգադները օգնում էին ընտրական ցուցակները

---

26 С. А.Ахвердян, նշվ. աշխ., էջ 91:

27 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 17, գ. 160, թ. 33:

28 Նույն տեղում, ց. 5, գ. 4, թ. 5:

կազմելուն և պայքարում, որպեսզի աշխատավոր գյուղացիներն ու կոլտնտեսականներն ընտրվեն սովետներում: Բանվորական բրիգադների միջոցով հարյուրավոր բանվորներ ակտիվորեն մասնակցում էին գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքներին: Ղափանից հաղորդում էին, որ պղնձահանքի բանվորական բրիգադները (մոտ 300 հոգի) մեկնել են կոլտնտեսությունները՝ բերքահավաքին օգնելու[29]: Զորագետի շինարարներից ու ծառայողներից կազմված 85 հոգիանոց բրիգադը մեկնել էր Ծաթեր գյուղի կոլտնտեսությանը օգնելու, 84 հոգուց կազմված մի այլ բրիգադ՝ Դսեղ գյուղին, իսկ 40 հոգուց հատուկ բրիգադը՝ կարմիր բանակայինների ընտանիքներին օգնելու համար և այլն: 1930 թ. հուլիս-օգոստոսին Զորագետից 357 բանվորներ տարբեր բրիգադների կազմում մասնակցել էին բերքահավաքին: Բանվորական բրիգադների քաղաքական-դաստիարակչական աշխատանքների շնորհիվ 1931 թ. սովետների ընտրությունների ժամանակ հիմնականում ընտրվեցին աշխատավոր գյուղացիներն ու կոլտնտեսականները[30]: Դա կարևոր նշանակություն ունեցավ տեղական սովետների ամրապնդման, նրանց հեղինակության բարձրացման և կոլտնտեսային շարժումը նոր թափով ծավալելու գործում:

Սակայն գյուղի սոցիալիստական վերակառուցումը նոր խնդիրներ առաջ քաշեց: Այժմ առաջին պլան էր մղվում կոլեկտիվ տնտեսությունների ամրապնդման, աշխատանքների կազմակերպման, խոշոր սոցիալիստական տնտեսություններ ստեղծելու հարցերը: Մեծ տեղ էր հատկացվում քաղաքական-դաստիարակչական և կուլտուրական աշխատանքների ծավալմանը: Բանվորական կոլեկտիվների շեֆական աշխատանքները հիմնականում գլխավորում էին արհմիությունները: 1930 թ. սկզբներին Երևանի, Լենինականի, Ղարաքիլիսայի, Ալավերդու և այլ վայրերի բանվորական կոլեկտիվները վերցրել էին առանձին կոլտնտեսությունների շեֆությունը: Նրանք բանվորական բրիգադներ էին ուղարկում ենթաշեֆ գյուղերը, որտեղ կուլտուրական, քաղաքական և տնտեսական մի շարք միջոցառումներ էին կազմակերպում: Ալավերդու քանվորները հատուկ ֆոնդ էին ստեղծել ենթաշեֆ Օձունի կոլտնտեսությանը օգնելու համար: Նրանք կոլտնտեսությանը նվիրեցին մեկ տրակտոր և պարբերաբար բրիգադներ էին ուղարկում այնտեղ՝ գյուղատըն-

---

29 «Խորհրդային Հայաստան», 14 օգոստոսի, 1930:

30 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 1929, թ. 39:

տեսական կամպանիային օգնելու համար[31]: Բանվորական բրիգադները կարևոր դեր խաղացին 1930 թ. գարնանացանը ժամանակին ավարտելու գործում, որը ձախողման վտանգի առաջ էր կանգնած: Այդ նպատակով մի քանի բանվորական բրիգադներ եկան նաև Բաքվից (մոտ 100 բանվոր):

Հանրապետության կուլտուրական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները խոշոր աշխատանքներ ծավալեցին կարճատև ժամանակով բանվորական բրիգադները դյուղ ուղարկելու համար: Սովորաբար դրանք կազմակերպվում էին բանվորական կոլեկտիվների որոշմամբ, որոնք մի քանի օր (երբեմն 1—2 շաբաթ) մնում էին գյուղում, օգնում կոլտնտեսությունների աշխատանքներին: Դա մեծ ազդեցություն էր ունենում նաև մենատնտես գյուղացիների վրա: Բանվորագյուղացիական դաշինքի ղրսևորման այս ձևը տվյալ ժամանակաշրջանում բավականին արդյունավետ էր: 1930 թ. սկզբներին գյուղ ուղարկվող 169 բանվորական բրիգադների համար (շուրջ 1000 բանվոր), Երևանում, Լենինականում, Ալավերդում և Ղափանում կարճատև դասընթացներ կազմակերպվեցին, որտեղ նրանք ծանոթացան կուսակցության ագրարային քաղաքականության հետ[32]: Կուսակցության Երևանի կոմիտեն մեկ ամսվա ընթացքում (1930 թ. ապրիլ-մայիս), գյուղում աշխատելու համար մոբիլիզացրեց շուրջ 500 մարդու: Բացի այդ, ենթաշեֆ գյուղերն էին ուղարկվում առանձին բրիգադներ՝ այս կամ այն աշխատանքը կատարելու համար[33]: 1930 թ. գարնանը Լենինականի գավառկոմիության ենթաշեֆ գյուղերն էին ուղարկվել 8 բանվորական բրիգադներ, որոնք օգնում էին կոլտնտեսություններին, վերանորոգում գյուղգործիքները[34]: Բացի այդ, ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշմամբ մի շարք դասընթացներ կազմակերպվեցին կոլտնտեսությունների նախագահներ և հաշվապահներ պատրաստելու համար, որոնց կարիքն ամենուր զգացվում էր: Ճիշտ գնահատելով կոլտնտեսային առաջին գարնանացանի նշանակությունը և այն, որ դասակարգային թշնամին ամեն կերպ ձգտում էր ձախողել այն, Երևանի կոմերիտական կազմակերպության նախաձեռնությամբ պայքար սկսվեց նյութական միջոցներ կուտակելու և կոմերիտական տրակտորային շարասյուն ստեղծելու համար:

---

31 «Խորհրդային Հայաստան», 2 հունվարի, 1930:

32 ՄԼի ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 4, թ. 3—4:

33 Նույն տեղում, ց. 18, գ. 31 թ. 38:

34 «Խորհրդային Հայաստան», 11 ապրիլի, 1930:

Ջերմորեն արձագանքելով այդ կոչին, կոմերիտմիությունը և արտամիութենական երիտասարդությունը միջոցներ չխնայեցին, ղգալի քանակությամբ մեքենաներ և գյուղգործիքներ գնեցին ու նվիրեցին կոլտնտեսություններին: Հետևելով կուսակցության օրինակին, կոմերիտականները նույնպես երիտասարդական բրիգադներ էին կազմակերպում և մեկնում կոլտնտեսություններում աշխատելու: Հանրապետության կոմերիտմիությունը վերցրեց նաև գյուղմեխանիզատորներ պատրաստելու շեֆությունը և սեղմ ժամկետում ղգալի հաջողությունների հասավ:

Գյուղի սոցիալիստական վերակառուցմանն օգնելու նպատակով բանվոր դասակարգը նորանոր միջոցների էր դիմում: Այսպես, օրինակ, Լենինականի դեպոյի բանվորները 1929 թ. դեկտեմբերին հատուկ նամակով դիմեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմին և ամբողջ բանվոր դասակարգին՝ կոչ անելով սոցիալիստական մրցություն ծավալել գյուղին օգնելու համար: Նրանք առաջարկում էին շաբաթօրյակներ անցկացնել և ստացված եկամուտները տրամադրել նորաստեղծ կոլտնտեսություններին: Այդ կոչը լայն արձագանք գտավ Երևանի, Ալավերդու և Ղափանի բանվորական կոլեկտիվներում: Կոչին արձագանքեցին նաև եղբայրական մյուս հանրապետությունների հայազգի բանվորները[35]:

Համատարած կոլեկտիվացման սխալներն ուղղելուց բացի, շեֆական բրիգադները մեծ ուշադրություն էին դարձնում գյուղի կոլեկտիվացման հարցերին, պայքարում այն նոր թափով ծավալելու համար: Նրանք քաղաքական-մասսայական աշխատանքներ էին կատարում մենատնտես գյուղացիների մեջ և նրանց համոզում կոլտնտեսություն մտնել: Միայն Երևանում 1930 թ. գարնանը 47 շեֆական բջիջ կար, մոտ 4600 անդամով[36]:

Կոլտնտեսություններին և մենատնտես գյուղացիներին բազմակողմանի օգնություն էին ցույց տալիս նաև սովխոզների բանվորները: Նրանք ոչ միայն մեքենաներ ու գյուղգործիքներ էին տրամադրում կոլտնտեսություններին (մասամբ նաև մենատնտես գյուղացիներին), այլև ժամանակից շուտ ավարտելով աշխատանքները, բրիգադներով օգնում էին նրանց՝ գյուղատնտեսական կամպանիաները ժամանակին ավարտելու համար (բերքահավաք, ցանք և այլն): Սովխոզային շեֆական բրիգադներն ավելի հեշտությամբ էին մտերմանում գյուղացիության

35 Նույն տեղում, 28 դեկտեմբերի, 1929:

36 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 65, ց. 5, գ. 625, թ. 15:

հետ և կարողանում նրան համոզել կոլտնտեսային կարգի առավելությունների մեջ։

Գյուղի նկատմամբ բանվորական շեֆությունը նոր թափ ստացավ 1931 թ.։ Միայն գարնանացանի կամպանիայի ժամանակ գյուղ ուղարկվեցին 1650 բանվորական բրիգադներ[37]։ Բերքահավաքի ժամանակ Լենինականից 404 բանվորական բրիգադներ աշխատեցին տարբեր գյուղերում, որոնք մոտ 3000 հեկտարից հացահատիկի բերք հավաքեցին և հանձնեցին կոլտնտեսություններին[38]։ 1930 թ. աշնանը, երբ նոր, կամավոր հոսք սկսվեց դեպի կոլտնտեսությունները, գործարանների, ֆաբրիկաների և երկաթգծի բանվորները նոր թափով ձեռնամուխ եղան շեֆական աշխատանքներին։ Գյուղացիության դարավոր կացութաձևի վերափոխման այս նոր շրջադարձը ճիշտ ղեկավարելու և նախկինում նկատված սխալներից ու թերություններից խուսափելու համար կուսակցական կազմակերպություններն անընդհատ գյուղ էին ուղարկում բանվորական նորանոր ջոկատներ։ Սովորաբար այդ ջոկատները գլխավորում էին փորձված կուսակցական և սովետական աշխատողները, որոնք այնուհետև մնում էին գյուղում՝ մշտական աշխատանքի։ Անդրբերկրկոմի 1931 թ. հուլիսի 13-ի որոշմամբ շուրջ 500 կուսակցական աշխատողներ ղեկավար աշխատանքի ուղարկվեցին գյուղատնտեսության մեջ աշխատելու (100-ը՝ Հայաստանում)[39]։ Նրանք հիմնականում գլխավորում էին նորաստեղծ կոլտնտեսությունների աշխատանքները։ Ինչպես նշված է 1931 թ. փաստաթղթերից մեկում, այդ տարվա ընթացքում «արտադրական, կուսակցական, կոմերիտական և շեֆական կազմակերպությունների կողմից գյուղերն էին ուղարկվել հազարից ավելի բրիգադներ»[40]։ Դա բանվորական օգնության լավագույն ապացույցն էր, առանց որի դժվար կլիներ սեղմ ժամկետում գյուղացիությանը փոխադրել ընդարձակման սոցիալիստական ուղին։

Հանրապետության բանվոր դասակարգը, որպես բանվորագյուղացիական դաշինքի առաջատար ու ղեկավար ուժ, փաստորեն գլխավորեց նաև գյուղի սոցիալիստական վերակառուցման գործը։ Մանր արտադրության վրա հենված գյուղացիության կոլեկտիվացումը և այդ բազայի վրա կուլակությանը՝ որպես դասակարգի վերացումը, բանվոր

---

37 «Խորհրդային Հայաստան», 9 ապրիլի, 1930։

38 Նույն տեղում, 18 դեկտեմբերի, 1931։

39 С. Аллахвердян, նշվ. աշխ., էջ 76։

40 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 65, ց. 5, գ. 624։ թ. 8։

դասակարգի սրբազան գործն էր, որը նա կատարեց հաջողությամբ։ Դա ՍՄԿԿ խոշոր հաղթանակն էր մեր երկրում սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում։

3. ՄՏԿ-ՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԸ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, կոլտնտեսությունների ամրապնդումն ու զարգացումը հրամայողաբար պահանջում էին վերափոխել նրա նյութատեխնիկական բազան, կատարելագործել մեքենայական սպասարկումը։ Հայաստանի պայմաններում գյուղատնտեսական մեքենաների դերն ավելի մեծ էր (հատկապես նոր հողատարածություններ յուրացնելու գործում)։ Գյուղատնտեսության նյութատեխնիկական բույլ բազան մթերատվության բարձրացման հիմնական խոչընդոտն էր հանդիսանում։ Նորաստեղծ սովետական հանրապետությունն ի սկզբանե հատուկ ուշադրություն էր դարձնում դրա վրա։

Մինչև համատարած կոլեկտիվացումը, պետությունը զգալի միջոցներ էր ծախսում գյուղատնտեսական զանազան ընկերությունների, միությունների, առաջին կոլտնտեսությունների համար մեքենաներ ձեռք բերելու համար։ Սակայն դա շոշափելի արդյունք չէր տալիս։

ՀՍՍՀ ժողկոմխորհի որոշմամբ 1930 թ. սկզբներին «Բամբակամիության» տարբեր վայրերում գրված տրակտորներից կազմակերպվեցին չորս մեքենատրակտորային շարասյուներ (Վաղարշապատում, Ուլուխանլուում, Ղամարլուում և Դավալուում)[41]։ Դրանք հիմնականում պետության օգնությամբ ստեղծված կոոպերատիվ ձեռնարկություններ էին, որոնք ֆինանսավորվում էին գյուղատնտեսական կոոպերացիայի կողմից։ Շարասյուների աշխատանքն անհամեմատ արդյունավետ էր (բարելավվել էր տրակտորների խնամքը, վերանորոգումը և շահագործումը)։ Այսպես, եթե 1929 թ. ընթացքում մեկ տրակտորը վարել էր 80, ապա 1930 թ. միայն գարնանացանի ժամանակ՝ 75 հեկտար հող։ Մեկ հեկտար վարի ինքնարժեքը 1929 թ. կազմեց 29 ռ., իսկ 1930 թ.՝ 15—16 ռ.[42]։ Մեքենատրակտորային շարասյունները մեծ դեր խաղացին՝ չքա-

41 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 15, գ. 357, թ. 80։

42 Նույն տեղում, ֆ. 1, ց. 15, գ. 43, թ. 8։

վոր գյուղացիության ղգալի մասին ազատելով կուլակներից ծանր պայմաններով քաշող ուժ վարձելուց։

Սակայն մեքենատրակտորային շարասյուները ժամանակավոր, միջանցիկ օղակներ էին, որոնց փորձի ընդհանրացման հիման վրա մեր երկրում ծնունդ առան մեքենատրակտորային կայանները։ Վերջիններս խոշոր պետական ձեռնարկություններ էին, որոնց միջոցով տնտեսական ամուր կապ էր հաստատվում արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, ամրապնդվում բանվոր-գյուղացիական դաշինքը։ Ելնելով Համկ(բ)կ XVI կոնֆերանսի որոշումներից, ՀԿ(բ)Կ կենտկոմը 1929 թ. օգոստոսին որոշեց կազմակերպել Սարդարաբադի ՄՏԿ-ն, որը մեր հանրապետության առաջնեկն էր։ Այն կազմակերպվեց 1930 թ. փետրվարին (ուներ մոտ 100 տրակտոր, 104 տրակտորային դուբան, 5 կալսիչ մեքենա, 33 շարքացան և այլն)[43]։ Ղուրդուղուլու շրջանը (Հոկտեմբերյան), որտեղ կազմակերպվեց Սարդարաբադի ՄՏԿ-ն, հանրապետության ամենահարուստ և առաջավոր շրջաններից մեկն էր, որտեղ հիմնականում զբաղվում էին բամբակագործությամբ։ 1930 թ. այդտեղ կոլեկտիվացված էր գյուղացիության 28%-ը։ Սարդարաբադի ՄՏԿ-ն առաջին հերթին սպասարկում էր այդ շրջանի 26 կոլտնտեսություններին (հիմնականում կատարելով վարի, ցանքի, և կալսման աշխատանքներ)։ Այն օգնում էր նաև մանատնտես գյուղացիներին[44]։ Հաջորդ տարում՝ 1931 թ., հանրապետությունում կազմակերպվեցին նաև Ուլուխանլուի, Վաղարշապատի, Դավալուի ՄՏԿ-ները։ Ինչպես տեսնում ենք, առաջին ՄՏԿ-ները հիմնականում կազմակերպվում էին Արարատյան հարթավայրում, որտեղ կոլեկտիվացումը բավականին բարձր տեսակարար կշիռ ուներ։ Հիմնականում բամբակագործական գոտու մեքենայական սպասարկման հարցերը կարգավորելուց հետո՝ 1932 թ., ՄՏԿ-ներ հիմնվեցին նաև մյուս շրջաններում՝ Լենինականում, Ստեփանավանում, Ախտայում (Հրազդան)[45]։

Հանձինս ՄՏԿ-ների, սովետական պետությունը գյուղում ստեղծում էր սոցիալիստական վերակառուցման հենակետեր, որոնց դերը չէր սահմանափակվում սոսկ մեքենայական սպասարկմամբ։ Դրանք կարևոր կազմակերպչական աշխատանք էին կատարում, օգնում կոլտնտե-

43 «Սովետական Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1936, էջ 116։

44 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 1, 1706, թ. 15։

45 Նույն տեղում, ֆ. 1, գ. 123, գ. 1701, թ. 1։

սային կարգի հաղթանակի և ամրապնդման գործին։ Վերջին հաշվով, գյուղում հաստատված արտադրության նոր, սոցիալիստական եղանակն իր առավելությունները կարող էր դրսևորել առաջավոր տեխնիկայի օգտագործմամբ։ ՄՏԿ-ների հանդես գալը և կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդումը տեղի ունեցավ սոցիալիստական արդյունաբերության վերակառուցման ու նվաճումների հիման վրա, բանվոր դասակարգի օգնության շնորհիվ։ Առաջին հնգամյակի վերջում Հանրապետության 7 ՄՏԿ-ներում կենտրոնացված էր 296 տրակտոր, 245 տրակտորային գութան, 115 շարքացան (հացահատիկային և բամբակացան), 28 կալսիչ, և այլ գործիքներ[46]։ ՄՏԿ-ները սպասարկում էին 270 կոլտնտեսությունների, որտեղ ընդգրկված էին գյուղացիական տնտեսությունների 39,1%-ը[47]։

ՄՏԿ-ների մասսայական շինարարությունը և հատկապես դրանք հայրենական արտադրության մեքենաներով համալրելը, բնականաբար, պիտի ավելացներ մեխանիզատորական կադրերի կարիքը։ Անհրաժեշտ էր փոխել մեխանիզատորներ պատրաստելու դոյություն ունեցող կարգը։ 1934 թ. ընդամենը 225 մեխանիզատոր էր պատրաստվել, իսկ բերքահավաքի ժամանակ ղգացվում էր 1300 մեխանիզատորի կարիք[48]։ Սկզբնական շրջանում Սարդարաբադի ՄՏԿ-ն կարճատև դասընթացներով մեխանիզատորական կադրեր էր պատրաստում մյուս ՄՏԿ-ների համար։ Սակայն 1930 թ. վերջերից, տրակտորիստներ, մեխանիկներ, նորոգող վարպետներ և այլ մասնագետներ էին պատրաստվում նաև Երևանում և դավառային կենտրոններում։

ՄՏԿ-ների հանդես գալու հետ մեկտեղ գործարար սոցիալիստական մրցության ծավալվից նրանց մեջ կադրեր և մասնագետներ պատրաստելու, մեքենաները ժամանակին վերանորոգելու և բարձր արտադրողականությամբ աշխատեցնելու համար։ Դա նոր տիպի մրցություն էր, որի հիմքում դրված էին փոխադարձ օգնության, գիտության և առաջավոր փորձի մասսայականացման սկզբունքները։ Մրցության և փոխադարձ օգնության շնորհիվ սեղմ ժամկետում ՄՏԿ-ներում աճեցին արտադրության լավագույն կազմակերպիչներ ու առաջավորներ, որոնք խոշոր ծառայություն մատուցեցին գյուղի սոցիալիստական վերակառուցման գործին (Ս. Տոնյանը՝ Լենինականի ՄՏԿ-ից, Մ. Գրիգորյանը և Ա. Պողոսյա-

---

46 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 59.

47 «Սովետական Հայաստանի 15 տարին թվերով», էջ 116։

48 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 22, գ. 123, թ. 32։

նը՝ Թալինի ՄՏԿ-ից, Գ. Սուքիասյանը՝ Սարդարաբադի ՄՏԿ-ից և ուրիշներ)[49]։

Հանրապետության գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հաջողությունները և հատկապես 1933 թ. սկսված նոր շրջադարձի կարիքները բավարարելու համար երկրորդ հնգամյակի տարիներին նոր թափ ստացավ ՄՏԿ-ների շինարարությունը։ Դա, անշուշտ, կապված էր նաև սոցիալիստական արդյունաբերության, հատկապես գյուղատնտեսական մեքենաշինության ձեռք բերած վիթխարի հաջողությունների հետ։ Երկրորդ հնգամյակի տարիներին հանրապետության 27 շրջաններից 24-ում ստեղծվեցին մեքենատրակտորային կայաններ։ Դրանք սպասարկում էին 646 կոլտնտեսությունների, որը կազմում էր ընդհանուրի 72,6%-ը[50]։ Աճեց նաև ՄՏԿ-ների տրակտորների, կոմբայնների և գյուղատնտեսական այլ մեքենաների քանակը։ 1937 թ. ՄՏԿ-ներում կենտրոնացված էին 1111 տրակտոր, 1183 տրակտորային գութան, 128 կոմբայն, 168 բեռնատար մեքենա, 385 շարքացան, 185 կալսիչ մեքենա և այլն[51]։ ՄՏԿ-ների միջոցով կոլտնտեսային գյուղատնտեսության սպասարկմամբ ղբաղված մեխանիզատորների թիվը անցնում էր երեք հազարից[52]։

Գյուղատնտեսության տեխնիկական բազայի ամրապնդումը հնարավորություն տվեց երկրորդ հնգամյակի տարիներին աշխատանքների հիմնական մասը մեքենաների օգնությամբ կատարել. եթե 1934 թ. մեկ տրակտորի միջին բեռնվածությունը 135 հեկտար էր, ապա 1935 թ.՝ 182 հեկտար[53]։ Հատկապես դաշտավարության ասպարեզում այն արտամղեց պապենական պարզունակ հողագործությունը և գյուղատնտեսության առաջադիմությունը դրեց գիտական հիմքերի վրա։ Երկրորդ հնգամյակի տարիներին ղգալիորեն ընդլայնվեց ՄՏԿ-ների սպասարկման ոլորտը, բազմազան դարձան նրանց կատարած աշխատանքները։ Նախկինում կատարվող միայն վարի փոխարեն, այժմ հիմնականում ՄՏԿ-ներն էին կատարում ցանքը, բերքահավաքը, կալսումը, ղբաղվում ոռոգման և պարարտացման հարցերով։ Նրանք ակտիվորեն պայքարում էին նոր հողերի յուրացման, հողատարածությունների բարելավման հա-

---

49 Նույն տեղում, ց. 25, գ. 4, թ. 83։

50 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 57.

51 Նույն տեղում, էջ 59։

52 Նույն տեղում, էջ 61։

53 ՄԼի ՀՄԱ, ֆ. 1, ց. 23, գ. 1, թ. 12։

մար, ինչպես նաև խոշոր օգնություն էին ցույց տալիս կոլտնտեսությունների արտադրաֆինանսական պլանավորման աշխատանքներին: Այդ բոլորի շնորհիվ ՄՏԿ-ների սպասարկած կոլտնտեսություններն արագորեն ամրապնդվեցին և սեղմ ժամկետում մեծ վերելք ապրեցին: Սարդարաբադի ՄՏԿ-ի սպասարկած կոլտնտեսություններում 1933 թ. վերջերին կատարված ստուգումները ցույց տվեցին, որ դրանք. «...իրենց գոյության ընթացքում առաջին անգամ կարողացան վերադարձնել պետությանը իրենց բոլոր պարտքերը: Առաջին անգամ է, որ այդ կոլտնտեսությունները նոր տնտեսական տարին են մտնում առանց պարտքերի: Շրջանի բոլոր կոլտնտեսությունները կատարել ու գերակատարել են իրենց պլանները»[54]: Նույնն է նշվում Վաղարշապատի ՄՏԿ-ի քաղաքացնի զեկուցագրում. «1933 թ. Վաղարշապատի ՄՏԿ-ի կոլտնտեսությունների համար շրջադարձային տարի է, վերելքի տարի»[55]:

ՄՏԿ-ները սոցիալիզմի ինդուստրիալ բազան հանդիսացան գյուղում և որպես կարևորագույն հենակետեր մեծ հնարավորություններ էին ընձեռում սովետական իշխանությանը՝ կոլտնտեսությունների նկատմամբ պետական զեկավարությունն ապահովելու գործում: Ուստի պետությունը խոշոր ծախսեր էր կատարում ՄՏԿ-ների շինարարության ու մեքենայական պարկի հարստացման վրա, դրանք դիտելով որպես գյուղի սոցիալիստական վերակառուցման կարևոր լծակ: Եթե առաջին հնգամյակի տարիներին ՀՍՍՀ-ում այդ ուղղությամբ ծախսվել է 3,2 միլիոն ռուբլի, ապա երկրորդ հնգամյակի տարիներին՝ 20,5 միլիոն ռուբլի[56]: Կոլտնտեսությունների սպասարկումը զգալիորեն բարելավելուց և գյուղում սոցիալիստական կացութաձևի ամրապնդումից բացի, ՄՏԿ-ները օգնություն էին հասնում նաև մենատնտես գյուղացիներին՝ մի կողմից գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու, իսկ մյուս կողմից՝ նրանց աստիճանաբար կոլտնտեսությունների մեջ ընդգրկելու միտումով: Ուստի բնական է, որ մեքենայացումը հանդիպում էր գաղափարգային թշնամու դիմադրությանը (որպեսզի չամրապնդվի սոցիալիստական սեկտորը), որը փորձում էր օգտագործել գյուղացիության սովորութային ու կենցաղային հետամնացությունը և նրան հեռու պահել մեքենաներ օգտագործելուց և այլն:

---

54 Նույն տեղում, ց. 21, գ. 248, թ. 12:

55 Նույն տեղում, գ. 284, թ. 48:

56 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 43.

Համկ(բ)կ Կենտկոմի 1933 թ. հունվարյան պլենումը քննելով կոլտնտեսային շինարարության հետագա զարգացման խնդիրները, ծրագրային որոշումներ ընդունեց գյուղում տարվող աշխատանքների մասին: Պլենումի որոշմամբ ՄՏԿ-ներում և սովխոզներում ստեղծվեցին քաղբաժիններ, որոնք պետք է գլխավորեին գյուղում տարվող քաղաքական-մասսայական աշխատանքները, օգնեին կոլտնտեսությունների կուսակցական կազմակերպություններին՝ լուծելու իրենց առջև դրված ծանր և բարդ խնդիրները: Կենսագործելով այդ որոշումը, Հկ(բ)կ Կենտկոմը 1933 թ. շրջանային կուսկազմակերպություններում և կոլտնտեսային բջիջներում աշխատանքի ուղարկեց մոտ 450 կուսաշխատողների[57]: 1933 թ. հանրապետության 7 ՄՏԿ-ներում կազմակերպվեցին քաղբաժիններ (Ղամարլու, Վաղարշապատ, Ստեփանավան, Սարդարաբադ, (Հոկտեմբերյան) Վեդի և Լենինական): Հաջորդ տարում դրանց թիվը հասավ 15-ի: ՄՏԿ-ների քաղբաժինների պետեր նշանակվեցին փորձված և նվիրված կուսակցական ու սովետական աշխատողներ:

Քաղբաժիններն առաջին հերթին ձեռնամուխ եղան ՄՏԿ-ների աշխատանքների կարգավորմանը: Շատ ՄՏԿ-ների աշխատողներ բնակարանային և կենցաղային նորմալ պայմաններ չունեին, որի պատճառով կադրերի հոսունությունը մեծ չափերի էր հասնում: Դա, անշուշտ, բացասաբար էր անդրադառնում ՄՏԿ-ների աշխատանքների վրա, որոնք կոչված էին խաղալու ինչպես նյութատնտեսական, այնպես էլ քաղաքական և կազմակերպչական կենտրոնի դեր: Քաղբաժինների նախաձեռնությամբ ՄՏԿ-ների աշխատողների համար բնակելի և կենցաղային նշանակություն ունեցող շենքեր կառուցվեցին, որոնք զգալի չափով կանխեցին կադրերի հոսունությունը: Բացի այդ, քաղբաժինները հսկայական աշխատանք ծավալեցին հատկապես կոլտնտեսությունների կազմակերպչական ամրապնդման ուղղությամբ (չնայած բազում ցուցումներին, կոլտնտեսություններում արտադրական բրիգադները դեռևս կայուն ու մշտական օղակ չէին դարձել): Վաղարշապատի, Ստեփանավանի, Սարդարաբադի և մյուս ՄՏԿ-ների քաղբաժինները 1933—1934 թթ. կարողացան լուրջ հաջողությունների հասնել կոլտնտեսային բրիգադների ամրապնդման և դրանք արտադրության հիմնական օղակ դարձնելու խնդրում: Քաղբաժինները հսկայական քաղաքական-դաստիարակչական աշխատանք ծավալեցին նաև մենատնտես գյուղացի-

57 «Խորհրդային Հայաստան», 12 հունվարի, 1934:

նների շրջանում և բավականին կարևոր դեր խաղացին կոլտնտեսային կարգի լիակատար հաղթանակի գործում: Հանդիսանալով գյուղում սոցիալիստական մրցության կազմակերպիչներ, ՄՏԿ-ների քաղբաժինները միաժամանակ առաջավոր փորձի, գիտության ու տեխնիկայի նվաճումներն արտադրության մեջ արմատավորելու ակտիվ պրոպագանդիստներն էին: Վերցնելով հետամնաց և թույլ կոլտնտեսությունների շեֆությունը, ՄՏԿ-ների քաղբաժինները բոլոր միջոցներով օգնում էին նրանց, այդ վիճակից դուրս գալու համար: ՄՏԿ-ների քաղբաժինները շրջանային կուսակցական կազմակերպությունների հետ միասին և գյուղական ակտիվի աջակցությամբ մեծ աշխատանքներ կատարեցին կոլտնտեսությունները խորթ տարրերից մաքրելու գործում: Դա փաստորեն դասակարգային պայքարի շարունակությունն էր, որը հաջողությամբ մինչև վերջ հասցրին քաղբաժինները: 1932—1933 թթ. կոլտնտեսային ունեցվածքը հափշտակելու, աշխատանքային կարգապահությունը խախտելու, հանրային գույքը փչացնելու և կուլակային տարրերի հետ գաղտնի գործակցելու համար կոլտնտեսություններից վտարվեց մոտ 4000 անտեսություն[58]: Քաղբաժինների ղեկավարությամբ 1933 թ. հանրապետությունում ստուգվեց 857 կոլտնտեսության վարչություն (912-ից): Դրա հետևանքով 434 հաշվային ու պահեստային աշխատողներ հեռացվեցին, որից 81-ը դատի տրվեցին[59]: Այդ միջոցառումների շնորհիվ կոլտնտեսությունները մաքրվեցին խորթ տարրերից, բարելավվեց նրանց ղեկավարությունը: Դա կարևոր նախապայման հանդիսացավ կոլտնտեսային արտադրության վերելքի և մենատնտես գյուղացիներին կոլտնտեսականների շուրջը համախմբելու գործում:

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման և կոլտնտեսային արտադրության մեքենայական սպասարկումը բարելավելու շնորհիվ ՄՏԿ-ների քաղբաժինները իրենց կարճատև գոյության ընթացքում բացառիկ դեր խաղացին կոլտնտեսային կարգի վերջնական հաղթանակի, գյուղացիության մանր սեփականատիրական հոգեբանության սոցիալիստականի վերափոխման գործում[60]: Քանի որ կոլտնտեսությունները տնտեսապես ամրապնդվել էին և բռնել անշեղ վերելքի ուղին, կուլակությունը լիովին վերացել էր և անհատական ցաքուցրիվ

58 Նույն տեղում, 17 հունվարի, 1934:
59 Նույն տեղում, 17 հունվարի, 1934:
60 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 21, գ. 284:

տնտեսություններն այլևս էական դեր չէին խաղում, ՄՏԿ-ների քաղբաժինները վերացվեցին՝ պատմականորեն սպառելով իրենց։ Գյուղերում ամրապնդված կուսակցական կազմակերպություններն արդեն ի վիճակի էին գլխավորելու կոլտնտեսային արտադրությունը։ Համկ(բ)Կ Կենտկոմի 1934 թ. նոյեմբերյան պլենումը որոշեց ՄՏԿ-ների քաղբաժինները վերակազմել սովորական կուսկազմակերպությունների և ձուլել կուսշրջկոմներին։

Այսպիսով, հանդես գալով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրոցեսում, ՄՏԿ-ները որպես սոցիալիստական ձեռնարկություններ, կարևոր հենակետեր էին պրոլետարիատի դիկտատուրայի ձեռքում՝ լենինյան ագրարային ծրագրի կենսագործման խնդրում։ Հանձինս ՄՏԿ-ների, պետությունը գտավ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լավագույն ձևը, որը խոշոր դեր խաղաց գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։ ՄՏԿ-ների քաղբաժինները իրենց կարճատև գոյության ընթացքում խոր հետքեր թողեցին կոլտնտեսային արտադրության վերելքի, կոլտնտեսությունները կազմակերպչորեն և քաղաքականապես ամրապնդելու, կոլտնտեսային գյուղացիության ձևավորման, ինչպես նաև դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարի գործում։

* * *

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և գյուղացիության վերադաստիարակման կարևոր օղակներից են սովխոզները, որոնք հենվում են համաժողովրդական սեփականության վրա։ Մեր երկրում սոցիալիստական շինարարության բոլոր էտապներում սովխոզները կարևոր դեր են խաղացել գյուղատնտեսության զարգացման գործում։ Միաժամանակ նրանք օրինակ են ծառայել մանր գյուղացիական, անհատական տնտեսությունների համար՝ նրանց կոլեկտիվիզմի ոգով դաստիարակելու գործում։ Սովետական կառավարությունը միշտ էլ հատուկ ուշադրություն է դարձրել սովխոզային շինարարության վրա՝ պայքարելով սովխոզները գյուղատնտեսական մթերքների հիմնական արտադրողներ դարձնելու համար։

Հայաստանում սովխոզային շինարարությունը բավականին դժվարությունների հանդիպեց հիմնականում օրինակելի, խոշոր կալվածատիրական տնտեսությունների համարյա բացակայության պատճառով։ Անհրաժեշտ էր նոր, խոշոր տնտեսություններ կազմակերպել, որոնց շի-

նաբարությունը կապված էր ֆինանսական խոշոր ներդրումների հետ, որպիսիք այն ժամանակ համարյա թե բացակայում էին։ Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին գյուղատնտեսական մթերքների ճգնաժամը որոշ չափով մեղմելու նպատակով բոլոր հիմնարկները ձգտում էին օժանդակ տնտեսություններ և գերատեսչական սովխոզներ ձևավ բերել։ Սակայն դրանք օրինակելի տնտեսություններ չդարձան և ժողովրդական տնտեսությունը վերականգնելուց հետո դադարեցին էական դեր խաղալ։

Հանրապետությունում օրինակելի, խոշոր տնտեսություններ կազմակերպելու համար Հողժողկոմատի ենթակայության տակ մի քանի սովխոզներ կազմակերպվեցին։ Առաջին սովխոզը կազմակերպվեց Երևանում, 1921 թ., նախկին Սարդարի պտղատու և խաղողի այգիների հիման վրա։ Հետագայում (1925) առաջին սովխոզին միացվեցին նաև Շուստովի և Սարաջևի այգիները և նրա ընդհանուր հողատարածությունը հասավ 65 դեսյատինի։ Սովխոզի տնկարանների հիման վրա 1927 թ. կազմակերպվեց այգեգործական կայան։ Երկրորդ սովխոզը (1921), որը 1924 թ. կոչվեց Ալ. Մյասնիկյանի անվամբ, կազմակերպվեց Կոտայքում (Աբովյան), Մելիք Ադամալյան-Սողոմոնյանի շուրջ 100 դեսյատին տարածություն ունեցող կալվածքի հիման վրա։ Այստեղ 1923 թ. առաջին անգամ ծխախոտ մշակվեց և պտղաբուծության զարգացման նպատակով տնկարան հիմնվեց։ Առաջին անգամ այստեղ կազմակերպվեց ցեղային խաղաբուծարան։ Երրորդ սովխոզը նույնպես կազմակերպվեց 1921 թ., էջմիածնի Փարաքար գյուղի մոտ՝ Հ. Աթաբեկյանի նախկին կալվածքի հիման վրա և ուներ 250 դեսյատին ջրարբի և նույնքան էլ անջրդի հողատարածությամբ։ Այստեղ հիմնականում զբաղվում էին խաղողագործությամբ և բամբակագործությամբ։ Չորրորդ սովխոզը (1921) ձևավորվեց Լոռի-Փամբակի գավառում, Ախթալա կայարանի մոտ, Արամյանցի նախկին կալվածքում։ Այն ուներ 153 դեսյատին հողատարածություն և, հիմնականում զբաղվում էր այգեգործությամբ-խաղողագործությամբ։ Հաջորդը՝ անասնապահական թեքում ունեցող Լոռվա սովխոզն էր (1921), որը կազմակերպվեց կոմս Գուտլիբի նախկին ֆերմայի հիման վրա։ Այն ուներ 200 գլուխ բարձրորակ անասուն և 1750 դեսյատին արոտավայր ու մարգագետին։ Դրանք ստեղծվեցին սովետական կարգերը հաստատելուց անմիջապես հետո, երբ եղած կալվածատիրական մի քանի տնտեսությունները պարզապես վերանվանվեցին սովխոզներ։ Սակայն այդ սովխոզները չկարողացան դառնալ գյու-

գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման իսկական կենտրոններ (միջոցներ չունեին, չկային արտադրական հարմարություններ, տնկարան, բուժարան, փորձնական հողամաս, մեքենաներ, գործիքներ և այլն):

Սկզբնական շրջանում սովխոզները գտնվում էին Հողժողկոմատի գյուղատնտեսական վարչության տնօրինության տակ: 1923 թ. կազմակերպվեց սովխոզների միություն, որը 1924 թ. վերածվեց սովխոզների տրեստի: Փաստորեն մինչև սովխոզների տրեստի ստեղծումը նրանց աշխատանքները բարձրող վիճակում էին. նրանց արտադրական գործունեությունը չէր պլանավորվում, աշխատանքները կատարվում էին պապենական ավանդույթներով: 1924 թ. սկսած սովխոզների տրեստը մշակեց միասնական արտադրական պլան, բարելավեց նրանց վարկավորման, մատակարարման հարցերը: Աստիճանաբար բարելավվեցին նաև սովխոզների բանվորների աշխատանքային պայմանները, կարգավորվեց վարձատրությունը և այլն: 1929 թ. սեպտեմբերից ՀՍՍՀ Ժողկոմխորհի որոշմամբ սովխոզներում մտցվեց գործավարձային վարձատրություն, որը զգալիորեն նպաստեց գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում բանվորների նյութական շահագրգռվածության բարձրացմանը: Ժողովրդական տնտեսության նվաճումները հնարավորություն էին տալիս անընդհատ ավելացնելու սովխոզներին հատկացվող միջոցները: 1928 թ. Հանրապետության 15 սովխոզներում և պետական կոլեկտիվ տնտեսություններում էին կենտրոնացվել գյուղատնտեսության մեջ եղած 166 տրակտորներից 157-ը[61]: Սովխոզներում կենտրոնացված մեքենաները հնարավորություն էին տալիս նախ ժամանակին և բարձր որակով կատարելու աշխատանքները, և միաժամանակ օգնություն ցույց տալ շրջապատի մենատնտես գյուղացիներին: Սովխոզները գյուղացիներին բաժանում էին նաև բարձրորակ սերմացու և ցեղական մատղաշ: Որպես խոշոր տնտեսություններ, աշխատանքի կազմակերպման իրենց փորձով և շրջապատին ցույց տված օգնությամբ սովխոզները բարերար ազդեցություն ունեցան կոլտնտեսային շինարարության վրա, հեշտացրին մանր գյուղացիական տնտեսությունների շրջադարձը դեպի կոլեկտիվ տնտեսություններ: Չնայած Հանրապետությունում սովխոզների տեսակարար կշիռը բավականին ցածր էր, հետևաբար և մեծ չէր նրանց տնտեսական դերը, այնուամե-

61 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 48—49.

նայնիվ նրանց դաստիարակչական նշանակությունը շատ մեծ էր։ Ամրապնդվող կոլեկտիվ տնտեսությունների հետ մեկտեղ նրանք սոցիալիզմի ուղի էին հարթում անհատական գյուղացիական տնտեսությունների համար։

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց սովխոզների կազմակերպական ամրապնդման վրա։ 1933 թ. մտցվեց կայուն բրիգադներ կազմակերպելու կարգը. բրիգադներին էին ամրացվում աշխատողները, հողատարածությունները ու մեքենաները։ Վերացվեց նաև սովխոզներում գոյություն ունեցող վարձատրության տարիֆային կարգը և 1934 թ. սկզբներից մտցվեց ուղղակի և անսահմանափակ գործավարձը։ Մեծ աշխատանքներ ծավալվեցին սովխոզների հողատարածությունների ընդլայնման, դրանք բանվորական ուժով ապահովելու, գիտության և առաջավոր փորձի նվաճումներն արմատավորելու միջոցով դրանք օրինակելի տնտեսություններ դարձնելու վրա։ Այդ նպատակով Համկ(բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ (1936), Հայկական ՍՍՀ-ի սովխոզների և բանվորական մատակարարման բաժինների (բանմատբաժինների) մի մասը (թույլ և զարգացման հեռանկար չունեցող մասը) վերացվեց և մոտ 71 հազար հեկտար տարածություններ հատկացվեցին կոլտնտեսություններին[62]։ 1937 թ. հանրապետությունում գոյություն ունեին 16 սովխոզներ, որոնք մշակում էին 2,5 հազար հեկտար տարածություն։ Մի քանի անգամ աճեց սովխոզների բանվորների թիվը։ Սովխոզների հիմնական արտադրական միջոցները 1928 թ. 0,6 մլն. ռուբլուց 1937 թ. հասան 26,4 մլն. ռուբլու[63]։ Հանրապետության սովխոզները իրենց ստեղծման ժամանակից սկսած որոշակի մասնագիտանում էին այս կամ այն կուլտուրայի մշակմամբ։ Դրանք մեծ դեր խաղացին հատկապես անասնապահության և այգեգործության զարգացման խնդրում։

---

62 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 25, գ. 4, թ. 71։

63 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 38.

ՆԻՊԸ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով նոր փուլ է սկսվում նաև մտավորականության ձևավորման, զարգացման և սոցիալական շերտավորման պրոցեսում: Հայկական մտավորականությունը լինելով ցարիզմի կողմից անընդհատ հալածված և ընդդիմադիր ուժ, սովետական իշխանության հաստատման մեջ նկատեց ազգային կոնսոլիդացիայի ու վերածնման պահը և ավելի հեշտությամբ անցավ նրա կողմը: Ոչ միայն երկրի, այլև արտասահմանի հայազգի մտավորականներից շատերը հոժարակամ հայրենիք եկան և ավիրվեցին նրա վերաշինության գործին: Սա կարևոր առանձնահատկություն է, որով պետք է բացատրել հայկական մտավորականության հիմնական մասի պասսիվ արձագանքը իրենց այլազգի կոլեգաների հակասովետական գործունեությանը:

Նէպի առաջին փուլը փաստորեն սովետահայ մտավորականության ձևավորման էտապ հանդիսացավ: Հանրապետությունում սովետական կարգեր հաստատելու ժամանակ մտավորականներ համարյա թե չկային, եթե չհաշվենք հատուկենտ ուսուցիչներին և կրտսեր մասնագետներին: Հայ մտավորականության հիմնական մասը Հայաստանի սահմաններից դուրս էր գտնվում: Նրանց տունդարձի կազմակերպումը Հայաստանի սովետական իշխանության առաջնահերթ խնդիրներից մեկն էր:

Ինչպես Միության մյուս հանրապետություններում, այնպես էլ մեզ մոտ, նորահաստատ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, մտավորականությունը հիմնականում ձևավորվեց երկու ուղիով. 1) հին, բուրժուական կադրերի օգտագործման և դաստիարակման և 2) նոր, բանվորագյուղացիական երիտասարդ կադրերի պատրաստման միջոցով: Հայաստանի սովետական իշխանության ձգտումն էր ոչ միայն իր կողմը գրավել երկրի ներսում եղած մտավորականներին (դա անհրաժեշտ էր) այլև հրավիրել և բերել նրա սահմաններից դուրս գտնվողներին: Սա բավականին դժվար և տևական աշխատանք պահանջող խնդիր էր[1]: Սովետական իշխանության վճռական միջոցառումները ա-

[1] Մանրամասն տե՛ս К. С. Худавердян, Культурная революция в Армении, Ереван, 1968, стр. 152—153.

վերված տնտեսությունը վերականգնելու և աշխարհով մեկ ցրված հայությանը հավաքելու, համախմբելու ուղղությամբ ոգևորեցին նաև երկրից դուրս գտնվող մտավորականներին, որոնց լավագույն ներկայացուցիչները վերադառնալով հայրենիք, նոր թափ հաղորդեցին տնտեսության, գիտության և արվեստի զարգացմանը։ Ռուսաստանի և Եվրոպայի խոշոր կենտրոններում մասնագիտական կրթություն և աշխատանքային հարուստ փորձ ձեռք բերելով, նրանք, փաստորեն, տարբեր երկրների առաջավոր կուլտուրայի և գիտության նվաճումներն էին հայրենիք բերում, որոնց ներդրումը մեր երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքում խոշոր նշանակություն ունեցավ։ Սովետական նշանավոր գրող Մ. Շահինյանը նրանց համարում է «...ինքնատիպ մարդիկ, որոնք թողեցին հանգստությունը, հարմարավետությունը, սովորական միջավայրը, փառքը, նյութական բարեկեցությունը, որպեսզի աշխատեն մոխրակույտերից բարձրացող, բայց դեռևս համարյա աղքատ ու կիսավեր փոքրիկ սովետական հանրապետությունում»[2]։ Սովետական Հայաստանը դառնում էր հայ ժողովրդի դարավոր մշակույթի և գիտության զարգացման միակ կենտրոնը։

Անկասկած է, որ մեզ մոտ ևս բուրժուական մտավորականության որոշ մասը որոշակի հույսեր էր կապում նեպի միջոցով կապիտալիզմի վերականգնման հետ։ Դա հիմնականում նեպի պայմաններում մանրբուրժուական գաղափարախոսության արձագանքն էր մտավորականության որոշ մասի մեջ։

Հայաստանի Հեղկոմը հենց սկզբից մասնագետների հաշվառման փորձ կատարեց՝ խուսափողներին ապառնալով պատժել հեղափոխական ժամանակաշրջանի օրենքներով։ Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանի 1920 թ. դեկտեմբերի 31-ի հրամանով հանրապետությունում եղած մտավորականությունը պետք է երեք օրվա ընթացքում ներկայանար տեխնիկական ուժերի հաշվառման հանձնաժողովին։ Չներկայացողները պատժվում էին որպես դասալիքներ[3]։ Ձեռնարկված վճռական միջոցառումների շնորհիվ ղզալի թվով կադրեր և մասնագետներ հավաքագրվեցին և բաշխվեցին ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում աշխատելու։

---

2 М. Шагинян, Об армянской литературе и искусстве, Ереван, 1961, стр. 151.

3 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, էջ 450։

Սակայն ժողովրդական տնտեսության, գիտության և կուլտուրայի բուռն վերելքի պահանջները միայն հին մտավորականության օգնությամբ հնարավոր չէր լուծել։ Դա պարզապես լոկ մեղմացնում էր կադրերի հարցում ամենուր նկատվող սովը։ Ուստի, սովետական իշխանությունը հիմնական շեշտը դնում էր նոր կադրերի պատրաստման վրա, որն ի վերջո պիտի գար լուծելու մեր երկրի առջև կանգնած հիմնական խնդիրները։ «Խորհրդային բանվորագյուղացիական ինտելիգենցիա ստեղծելը հրամայական անհրաժեշտություն է մեր իշխանության համար»,— նշվեց ՀԿ(բ)Կ IV համագումարում[4]։

Ինչպես հայտնի է, Հայաստանի սովետական իշխանությունը հարկադրված էր միանգամայն ամայի տարածության մեջ հիմնադրելու միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Այդ ուղղությամբ որևէ ժառանգություն չէր ստացվել, որովհետև նախասովետական շրջանում նման հաստատություններ գոյություն չունեին։ Ուստի բավականին դժվար էր բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության սիստեմի կազմակերպման գործը, որովհետև տեղական փորձ չկար։ Դա որոշակի բարդություններ էր առաջ բերում, որոնց հաղթահարելու գործում անգնահատելի էր Սովետական Ռուսաստանի հարուստ փորձը՝ ինչպես աշխատանքների կազմակերպման, այնպես էլ համապատասխան կադրեր հավաքելու և օգտագործելու իմաստով։

1921 թ. հունվարի 23-ին բացվեց Երևանի համալսարանը, իր երկու ֆակուլտետներով՝ բնագիտական և հասարակագիտական (225 ուսանողներով)։ Համալսարանի առաջին ռեկտորն էր Հ. Մանանդյանը։ Համալսարանում դասախոսելու համար մասնագետներ հրավիրվեցին ինչպես մյուս հանրապետություններից, այնպես էլ արտասահմանից[5]։ Ելնելով ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման պահանջներից, շուտով համալսարանի բնագիտական ֆակուլտետը վերածվեց գյուղատնտեսական ֆակուլտետի, և բացվեցին տեխնիկական, մանկավարժական, արևելագիտական, սովետական շինարարության և բժշկական ֆակուլտետները։ Մինչև 1920-ական թվականների վերջերը համալսարանի կառուցվածքում բազում փոփոխություններ ու վերակառուցումներ եղան։

---

4 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 5, գ. 5, թ. 22։

5 К. С. Худавердян, նշվ. աշխ., էջ 134—136։

1930 թ. համալսարանից անջատվեցին գյուղատնտեսական, բժշկական և տեխնիկական ֆակուլտետները և վերածվեցին ինքնուրույն ինստիտուտների (հետագայում նաև մանկավարժական ֆակուլտետը)։

Սովետական կառավարության հոգատարության և ձեռք առած միջոցառումների շնորհիվ տարեցտարի ավելացավ համալսարանի ուսանողների և դասախոսների թիվը։ Այսպես, եթե 1921 թ. այն ուներ 225 ուսանող, ապա հաջորդ՝ 1922—23 ուս. տարում, 463, 1923—24 ուս. տարում՝ 938, 1925—26 ուս. տարում՝ 1160, իսկ 1929—30 ուս. տարում՝ ավելի քան 1300 ուսանող։ Դասախոսների թիվը սկզբնական 23-ից 1923—24 ուս. տարում հասավ 32-ի, հաջորդ տարում՝ 85-ի, 1925—26 ուս. տարում՝ 104-ի, իսկ 1929—30 ուս. տարում՝ 138-ի[6]։

Ելնելով նոր տնտեսական քաղաքականության պայմաններում կիրառվող շեշտված դասակարգային քաղաքականությունից, Հայաստանի սովետական կառավարությունը ձգտում էր, որպեսզի բուհերն ու տեխնիկումներն ընդունվեին բանվորներն ու գյուղացիները, որպեսզի հնարավոր լիներ պատրաստել սոցիալիզմի գործին նվիրված, քաղաքական բարձր մակարդակ ունեցող կադրեր։ Դա տվյալ շրջանում շատ կարևոր էր։ Համալսարանում առաջին հերթին բանվորների ու գյուղացիների երեխաներին ընդունելու նպատակով, հետևելով Սովետական Ռուսաստանի փորձին, 1923 թ. հունվարից համալսարանին կից հիմնվեց բանֆակ, որտեղ մոտ 400 մարդ էր սովորում։ Նույնպիսի բանֆակ բացվեց նաև Ալեքսանդրապոլում։ Բանֆակները սովորողներին միջնակարգ կրթություն էին տալիս և պատրաստում բուհ ընդունվելու համար։ Ձեռնարկած միջոցառումների շնորհիվ արդեն 1926 թ. համալսարանի ուսանողների ճնշող մասը (1461-ից մոտ 1200-ը) բանվորների, գյուղացիների և սովետական ծառայողների երեխաներ էին։ Ուսանողուհիները կազմում էին ընդհանուրի 35,5%-ը[7]։

Հաջորդ բուհը, որ բացվեց Երևանում՝ կոնսերվատորիան էր (1923)։ Նրա հիմնադրման գործում անգնահատելի է կոմպոզիտոր Ռ. Մելիքյանի դերը։ Սովետահայ երաժշտության զարգացման և մասնավորապես կոնսերվատորիայի պատմության մեջ խոշոր բեկում հանդիսացավ Ալ. Սպենդիարյանի Հայաստան գալը (1924 թ.)։ Կոնսերվատորիայում համախմբված հայ երաժիշտ մանկավարժների ջանքերով այն վերածվեց

---

6 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1960, № 1, էջ 31—38։

7 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 6, գ. 155, թ. 6—11։

երաժշտական կադրերի պատրաստման յուրահատուկ դարբնոցի, որը վճռական դեր խաղաց սովետահայ երաժշտության զարգացման գործում:

1928 թ. Երևանում բացվեց Անդրկովկասյան անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը, որը կադրեր էր պատրաստում ամբողջ Անդրկովկասի համար: Ապա 1930 թ. պետական համալսարանի վերակառուցման շնորհիվ մի շարք նոր ինստիտուտներ բացվեցին, որոնք հնարավորություն էին տալիս ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի կարիքները բավարարելու համար կադրեր պատրաստել տեղում: Դրա հետ մեկտեղ հանրապետության համար զգալի թվով մասնագետներ էին պատրաստվում Միության մյուս քաղաքներում: 1923 թ. Մոսկվայի տարբեր բուհերում սովորում էր Հայաստանից գործուղված 34 մարդ:

Միջնակարգ մասնագիտական կադրեր պատրաստելու նպատակով 1920-ական թվականներին հանրապետությունում մի քանի տեխնիկումներ կազմակերպվեցին, որոնք բավականին լայն ընդգրկում ունեին և բավականին մասնելի էին բանվորների ու գյուղացիների զավակների համար (ինդուստրիալ, գյուղատնտեսական, մանկավարժական, գեղարվեստական-արդյունաբերական): Դրանք զգալիորեն մեղմացրին կադրերի հարաճուն կարիքը և մեծ դեր խաղացին ժողովրդական տնտեսության զարգացման գործում: Միջնակարգ մասնագիտական կրթության բարելավման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀՍՍՀ ԺողկոմխորհԻ 1929 թ. հունիսի 11-ի որոշումը «Նոր մասնագետների պատրաստման ու բաշխման մասին»: Այնտեղ ընդգծվում էր, որ անհրաժեշտ է տարեցտարի ավելացնել տեխնիկումներում սովորողների թիվը «ելնելով ՀՍՍՀ հիմնարկների կարիքից և ի նկատի ունենալով հանրապետության ժողովրդական տնտեսության նախատեսվող անշեղ վերելքը, երկրի էլեկտրաֆիկացիայի և քիմիացման կարիքները»[8]: 1929—1930 թթ. վերակառուցվեց միջնակարգ մասնագիտական ուսուցման ամբողջ սիստեմը: Զգալիորեն ընդլայնվեց նրա ցանցը և ավելացավ սովորողների թիվը: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ տեխնիկումների մի մասը փոխադրվեց հանրապետության մյուս քաղաքները (Լենինական, Ստեփանավան, Դիլիջան, Կիրովական, Գորիս և այլն): Ընդունելության ժամանակ խիստ կերպով հաշվի էր առնվում դիմողների սոցիալական ծագումը և հիմնականում ընդունվում էին աշխատավորների զավակները:

---

8 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 343, թ. 32:

Այսպիսով՝ տարեցտարի ընդլայնվող բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատությունները հնարավորություն տվեցին աստիճանաբար ավելացնելու բանվորներից և գյուղացիներից պատրաստվող կադրերի ու մասնագետների քանակը և բավարարել ժողովրդական տնտեսության հարաճուն պահանջները։ Եթե մինչև 1929 թ. Հանրապետությունում գործում էր 2 բուհ, 23 տեխնիկում, և 2 բանֆակ, ապա 1930 թ.՝ 5 բուհ, 48 տեխնիկում և 9 բանֆակ[9]։ Այսպիսի շեշտակի թռիչքը ժողովրդական տնտեսության վերակառուցմանը համապատասխան ուսումնական հաստատությունների վերակառուցման հետևանքն էր։

Նէպի առաջին փուլում սովետական իշխանության նկատմամբ ունեցած վերաբերմունքով Հանրապետության մտավորականությանը կարելի է բաժանել երեք խմբի։ Առաջինը՝ հիմնական մասը, ճիշտ կողմնորոշվելով սոցիալական հեղաշրջման բավարկանին բարդ ու խճճված հարաբերություններում, անվերապահորեն անցավ սովետական իշխանության կողմը։ Մյուս խումբը դեռևս կասկածելով սովետական իշխանության հաստատուն լինելու վրա, սպասողական տակտիկա էր վարում և եթե համագործակցում էր, ապա զուտ տնտեսական նկատառումներով՝ չհրաժարվելով կապիտալիզմի վերահաստատման գաղափարից՝ մեծ հույսեր կապելով նէպի հետ։ Մեր երկրում սոցիալիստական շինարարության հաջողությունների և կոմունիստական կուսակցության իմաստուն քաղաքականության շնորհիվ, մտավորականության այդ մասը «չեղոքության» կամրջով աստիճանաբար անցում կատարեց դեպի սոցիալիզմը։ Մտավորականության երրորդ՝ փոքրաթիվ խումբը, որն ատելությամբ էր տրամադրված սովետական կարգերի նկատմամբ, վճռեց ձեռքին նրա դեմ պայքարելով գաղթից արտասահման։

Անդրադառնալով սովետական իշխանության նկատմամբ մեր հանրապետության տեխնիկական մտավորության ցույց տված վերաբերմունքին, Ալ. Գրիգորյանցը փաստորեն վերջին երկու խումբը միավորում է մեկի մեջ, որը մեր կարծիքով, ճիշտ չէ[10]։ Մտավորականության երկու ծայրահեղ թևերի՝ աշխատավորական մասի և բարձրաստիճան վերնախավի վերաբերմունքն ու նրա նկատմամբ պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքականությունը պարզ էր և որոշակի։ Այստեղ կարևոր

---

9 ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 257, թ. 7։

10 *А. Григорянц*, Формирование и развитие технической интеллигенции в Армении, Ереван, 1966, стр. 90—91.

նշանակություն ուներ, այսպես կոչված «միջին» շերտերի նկատմամբ սովետական իշխանության վերաբերմունքը, որը հիմնականում արտահայտվում էր խրախուսանքի, նյութական և բարոյական միջոցների խելացի օգտագործմամբ նրանց հատուկ հոգատարությամբ շրջապատելու մեջ։ Հետևաղաբար պայքարելով մասնագետներին համամատած թշնամի հանարելու դեմ, սովետական իշխանությունը կարողացավ աստիճանաբար վերացնել նրանց և բանվորության միջև եղած անդունդը։

Անդրադառնալով բուրժուական մասնագետներին օգտագործելու բնագավառում ձեռք բերված նվաճումներին, «Խորհրդային Հայաստանը» գրում էր. «Անկասկած է այն, որ խորհրդային իշխանության՝ մասնագետների հանդեպ ունեցած քաղաքականությունը դրական արդյունքներ է տվել այն տեսակետից, որ ցարական ռեժիմի դաստիարակության հետևանքով մասնագետների ու պրոլետարիատի միջև ստեղծված նախկին թշնամական հարաբերությունները փոխվեցին բարեկամական հարաբերությունների»[11]։ Դա կոմունիստական կուսակցության խոշոր նվաճումներից մեկն էր։ Սակայն ճիշտ չհատկանալով կուսակցության քաղաքականությունը տեղերում, մասնագետների նկատմամբ երբեմն թույլ էին տրվում որոշ սխալներ, որոնք հաճախ բավականին ծանր հետևանքներ էին ունենում։ Այս առումով ուշագրավ է Ա. Բեկզադյանի 1921 թ. մարտի 26-ի նամակը Ռկ(բ)կ Կենտկոմին, որտեղ նշվում է, որ մեր հանրապետությունում չհիմնավորված բռնություններ են թույլ տրվել շատ մասնագետների նկատմամբ, որով փաստորեն նրանց վանում, հեռացնում են սոցիալիստական շինարարությունից[12]։ Այդ սխալներն ուղղվեցին հիմնականում քաղաքացիական կռիվներից հետո, երբ Հայաստան եկավ Ալ. Մյասնիկյանը, իր հետ բերելով Վ. Ի. Լենինի ծրագրային նամակը։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին տասնամյակում էական տեղաշարժեր եղան մտավորականության շարքերում։ Այն հիմնականում դարձավ սոցիալիզմի հետ համագործակցող ուժ։ Հին մասնագետների աշխարհայացքի ու հոգեբանության վերափոխման հիմնական գործոնը, որով պայմանավորվում է նրա մասսայական անցումը սովետական իշխանության կողմը՝ սոցիալիզմի ձգողական

---

11 «Խորհրդային Հայաստան», 20 մայիսի, 1927։

12 Մանրամասն տե՛ս А. Григорян, նշվ. աշխ., էջ 96—97։

ուժի չտեսնված աճն էր, սոցիալիստական շինարարության վիթխարի հաջողությունները։

* * *

Մեր հանրապետությունում գիտության սկզբնավորումն ու զարգացումը սովետական իշխանության ծնունդն է։ Նախկինում առանձին հայազգի գիտնականներ իրենց համար ուղի էին հարթում Ռուսաստանի և Եվրոպայի գիտական հաստատություններում։ Գիտությունը մեզ մոտ, փաստորեն, սաղմնավորվեց պետական համալսարանի հիմնադրմամբ, որի ամբիոններում ու լաբորատորիաներում իրենց առաջին մկրտությունն էին ստանում ապագա գիտնականները։ 1928 թ. կազմակերպվեց պետական համալսարանի ասպիրանտուրան, որը հնարավորություն տվեց պլանավորելու գիտական կադրերի պատրաստումը։

Մյուս կարևոր կենտրոնը, որտեղ ձևավորվում էր սովետահայ գիտական միտքը՝ էջմիածնի գիտական ինստիտուտն էր։ Այստեղ համախմբվել էին այնպիսի գիտնականներ, ինչպիսիք էին Ս. Սարգսյանը, Ե. Տեր-Մինասյանը, Հ. Աճառյանը, Լեոն և ուրիշները։ 1922 թ. լույս տեսավ ինստիտուտի ամսագիրը՝ «Բանբերը»։

ՀՍՍՀ ժողկոմխորհի որոշմամբ 1925 թ. էջմիածնի գիտության ինստիտուտի բազայի վրա հիմնվեց ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը, որի իսկական անդամներ հաստատվեցին հանրապետության լավագույն գիտնականներն ու արվեստի մշակները (Հ. Հովհաննիսյան, Ա. Հովհաննիսյան, Հ. Քեչեկ, Ալ. Թամանյան, Ա. Տերտերյան, Հ. Գյուլիքեխվյան և ուրիշներ)[13]։ Այն ուներ երեք բաժին՝ պատմահասարակագիտական, բնապատմական-մաթեմատիկական և գեղարվեստական։ Դա, փաստորեն, հանրապետության առաջին գիտական օջախն էր, որի հիման վրա հետագայում ձևավորվեց գիտությունների ակադեմիան[14]։

Այդ ժամանակաշրջանում բավականին աշխատանքներ ծավալեց նաև Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն, որը կազմվեց ժողկոմխորհի 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետով։ Շուրջ տասը տարի այն գլխավորեց ճարտարապետ Ալ. Թամանյանը, որը մեծ դեր խաղաց հատկապես ճարտարապետական հուշարձանների պահպանման և ոսումնասիրության գործում։ 1932 թ. հանրապետությունում գոր-

13 «Խորհրդային Հայաստան», 3 փետրվարի, 1925։

14 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 257, թ. 78։

ծում էին 39 ինքնուրույն գիտական հիմնարկներ, որոնց մեծ մասը ենթարկվում էր համապատասխան ժողովրդական կոմիսարիատներին։ Գիտական օջախների հիմնադրումը և կադրերի պատրաստումն ու հավաքագրումը ռեալ հիմք հանդիսացան գիտության զարգացման համար։

Հայաստանի սովետական իշխանությունը տնտեսական շինարարության հետ մեկտեղ ծավալեց նաև կուլտուրական շինարարություն, զարմանք շարժելով նրանց մեջ, որոնք սովետական կարգերի օրերը հաշված էին համարում։

1920 թ. դեկտեմբերին Հայաստանի Հեղկոմի դեկրետով բավականին լայն իրավունքներով ձևավորվեց լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, որի հիմնական խնդիրն էր անհրաժեշտ պայմաններ ստեղծել դպրոցական, գիտական, գրական և արվեստի աշխատանքները կազմակերպելու, աշխատավորության կուլտուր-կրթական մակարդակը բարձրացնելու համար (1920—1921 թթ. լուսավորության ժողկոմն էր Աշ. Հովհաննիսյանը, 1921—1922 թթ.՝ Պ. Մակինցյանը, իսկ 1923—1929 թթ. Ա. Մռավյանը)։

Բարձր գնահատելով լուսավորության դերն ընդհանրապես, Ալ. Մյասնիկյանն ընդգծում էր, որ Անդրկովկասի հանրապետություններում այն առանձնահատուկ դեր ունի կատարելու։ «Լուժողկոմատի աշխատանքը,— գրում է նա,— մեզ մոտ ամենահարվածային, ամենակարևոր, ամենաանհրաժեշտն է։ Լուժողկոմատը մեր ազգային քաղաքականության անկյունաքարն է Անդրկովկասում»[15]։

Բնական է, որ խաղաղ, ստեղծագործ աշխատանքի անցնելով ավելի մեծ նշանակություն էր ստանում կուլտուրական շինարարությունը, որն աշխատավորության կոմունիստական դաստիարակության հիմնական պայմաններից մեկն էր։ «...Միանգամայն բացառիկ անհրաժեշտություն պիտի դառնար այդ աշխատանքը նոր տնտեսական քաղաքականության պայմաններում,— գրել է Աշ. Հովհաննիսյանը,— երբ լուսավորության ֆրոնտի ամրապնդումը դառնում էր տնտեսական ֆրոնտի պաշտպանության նախապայմաններից մեկը»[16]։

Քաղաքական-լուսավորական աշխատանքները հաջողությամբ ծավալելու գործում անգնահատելի էր մամուլի դերը։ Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից՝ 1920 թ. դեկտեմբերի սկզբներին, հրատարակվեց Հայաստանի Հեղկոմի և կու-

15 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 444։

16 «Խորհրդային Հայաստան», 3 հունվարի, 1924։

սակցության կենտկոմի օրգան «Կոմունիստ» օրաթերթը (հայերեն և ռուսերեն)։ Ապա լույս տեսան նաև այլ թերթեր ու ամսագրեր, որոնց շուրջը համախմբված բանդյուղիղիակիցները կարևոր ուժ էին հանդիսանում քաղլուսավորական աշխատանքները ծավալելու գործում։ Աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ «Ջանգի» (ադրբեջաներեն) և «Ռյա թազա» (քրդերեն) թերթերի լույս ընծայումը։ Մեծ էր մամուլի դերը նաև աշխատավորության հասարակական ակտիվության և դասակարգային գիտակցության բարձրացման գործում, մանավանդ գյուղում, որը տնտեսական ծանր պայմանների հետևանքով անտանելի հետամնացության մեջ էր գտնվում։ Եթե 1913 թ. Հայաստանում լույս էին տեսնում 6 թերթ և երկու ամսագիր, ապա 1928 թ.՝ 9 թերթ և 22 ամսագիր, իսկ առաջին հնգամյակի վերջում հրատարակվող թերթերի թիվը հասնում է 40-ի, ամսագրերինը՝ 22-ի[17]։ Դա սովետական իշխանության ներքին և արտաքին քաղաքականությունը աշխատավորության մեջ լուսաբանելու հզոր միջոց էր, որը կարևոր դեր խաղաց նոր՝ սոցիալիստական մարդու ձևավորման համար մղվող պայքարում։

Աշխատավորության հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման գործում կարևոր դեր խաղացին ակումբներն ու խրճիթ-ընթերցարանները, որտեղ առօրյա թերթերի սովորական ընթերցանությունն ու կարևոր հոդվածների շուրջը մտքերի փոխանակությունն անգամ շատ կարևոր նշանակություն ուներ կուսակցության քաղդաստիարակչական ծրագրի կենսագործման խնդրում։

Հայաստանի առաջին բանվորական ակումբը բացվեց 1922 թ. օգոստոսին, Երևանում։ Այն ուներ քաղաքական, գրական-գեղարվեստական, նկարչական, թատերական և սպորտային բաժիններ, որտեղ ամեն օր զբաղվում էին 1000—2200 մարդ[18]։ Եթե 1923 թ. Հանրապետությունում գործում էին 23 ակումբային հիմնարկներ, ապա 1927 թ. դրանց թիվը հասավ 237-ի[19]։ Ակումբներն ու խրճիթ-ընթերցարանները սովորաբար ունեին գրադարաններ, որտեղ աշխատավորությունը ծանոթանում էր գիտության և կոլտուրայի նվաճումների հետ։ Կային նաև առանձին գրադարաններ։ 1922 թ. Հայաստանում գործում էր 85 ինքնուրույն գրադարան (78 հազար գրքային ֆոնդով), որից 79-ը քաղաք-

17 «Культурное строительство в Армянской ССР», Ереван, 1962, стр. 118.

18 *ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 1, գ. 283, թ. 22։*

19 «Культурное строительство в Армянской ССР», стр. 104.

ներում էր գտնվում և միայն 6-ը գյուղական վայրերում։ 1925 թ. արդեն կային 146 գրադարան (175 հազար գրքով), որից քաղաքներում՝ 20, գյուղական վայրերում՝ 125։ 1929 թ. գրադարանների քանակը հասավ 230-ի (մոտ 200 հազար գրքային ֆոնդով), որից քաղաքներում՝ 57 և գյուղական վայրերում՝ 173[20]։ Ակումբները, խրճիթ-ընթերցարանները ու գրադարանները անգնահատելի աշխատանք կատարեցին աշխատավորության քաղաքական ու կուլտուրական դաստիարակության գործում, նպաստեցին նրա ստեղծագործական ունակությունների բացահայտմանն ու զարգացմանը։

Կուսակցական քաղաքական-դաստիարակչական աշխատանքների ամենակարևոր բնագավառը աշխատավորության անգրագիտության վերացումն էր, առանց որի հնարավոր չէ լուրջ կերպով զբաղվել գաղափարական և տնտեսական հարցերով։ Գրագիտությունն ինքնին դեռևս քաղաքական լուսավորություն չէ, բայց չկա քաղաքական լուսավորություն առանց գրագիտության։ Այդ առթիվ Վ. Ի. Լենինը գրել է. «...քանի դեռ երկրում կա մի այնպիսի երևույթ, ինչպիսին անգրագիտությունն է, չափազանց դժվար է խոսել քաղաքական լուսավորության մասին։ Սա քաղաքական խնդիր չէ, սա միայն մի պայման է, առանց որի չի կարելի խոսել քաղաքականության մասին... Անգրագետ մարդը քաղաքականությունից դուրս է, նրան նախ պետք է այբուբեն սովորեցնել։ Առանց սրան չի կարող քաղաքականություն լինել...»[21]։

Սովետական կարգերի հաստատման նախօրյակին Հայաստանում աղգաբնակչության ավելի քան 80%-ն անգրագետ էր և զուրկ գրագիտության ձեռք բերելու հնարավորությունից։ Դեռևս 1921 թ. հունվարին Հայաստանի արհմիությունների բյուրոն տեղական կազմակերպություններից պահանջեց, որպեսզի մինչև փետրվարի 3-ը կազմեն 14—50 տարեկան անգրագետների և կիսագրագետների ցուցակները և նրանց պարտադիր կարգով ընդգրկեն այդ նպատակով բացվող դպրոցներում ու խմբակներում[22]։ Ժողկոմխորհի 1921 թ. հուլիսի 21-ի որոշմամբ հանրապետությունում կազմակերպվեցին լիկվկայաններ և տասնամյա գրագիտական դպրոցներ (վերջիններս տարրական դպրոցների ծրագրով էին պարապում)։ 1921 թ. սեպտեմբերին ՀՍՍՀ Ժողկոմխորհը Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ ընդունեց անգրագիտության վե-

---

20 Նույն տեղում, էջ 101։

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 72։

22 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 26, թ. 6։

րացման դեկրետը[23]։ Բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները պարտավոր էին միջոցներ ձեռք առնել իրենց 16—50 տարեկան անգրագետ աշխատակիցների համար խմբակներ կազմելու և սեղմ ժամկետում նրանց գրագետ դարձնելու համար։ Այդ աշխատանքները գլխավորելու նպատակով հանրապետության լուսավորության ժողկոմխորհին կից ստեղծվեց անգրագիտության վերացման կենտրոնական արտակարգ հանձնաժողով։ Շուտով հաստատվեց այդ հանձնաժողովի կանոնադրությունը, որտեղ մանրամասն շարադրված էին աշխատանքների կարգն ու կատարման միջոցները[24]։

Ամենուր լարված պայքար սկսվեց անգրագիտությունը վերացնելու համար. կազմակերպվեցին անգրագետների ցուցակները, առանձնացվեցին պարապմունքների վայրերն ու միջոցները։ Եթե 1922—23 ուս. տարում 316 լիկկայան էր գործում 6400 սովորողներով, ապա 1923—24 ուս. տարում լիկկայանների թիվը հասավ 430-ի, իսկ սովորողներինը՝ 8500-ի[25]։ 1924 թ. փետրվարին անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողովը (որը շուտով վերակառուցվեց «Կորչի անգրագիտության» ընկերության), «Խորհրդային Հայաստան» թերթի միջոցով դիմեց հանրապետության աշխատավորությանը, կոչ անելով ավելի ակտիվ մասնակցություն հանդես բերել (անձնական և նյութական) երկրում անգրագիտության վերացման գործում։ Դիմումում նշվում էր, որ մինչև 1924 թ. հանրապետությունում կազմակերպվել է 394 լիկկայան, շուրջ 10 հազար սովորողով։ Անգրագիտության վերացման կենտրոնական խորհրդի նախագահն էր Ռ. Դաշտոյանը, անդամները՝ Կ. Ղազարյանը, Ս. Դավթյանը, Վ. Տարախչյանը և ուրիշներ[26]։

Ժողովրդական տնտեսության հաջողությունները նոր թափ հաղորդեցին նաև անգրագիտության վերացման աշխատանքներին։ 1925 թ. լիկկայանների թիվը հասավ 535-ի, իսկ սովորողներինը՝ 17282-ի։ Ուշագրավ է, որ դրանց ճնշող մասը գտնվում էր գյուղական վայրերում, որտեղ անգրագետների թիվն անհամեմատ շատ էր։ 1926 թ. մարդահամարի տվյալներով զգալիորեն բարձրացել էր Հայաստանի գրագետների տեսակարար կշիռը։ Եթե 1897 թ. տվյալներով 1000 մարդուն ընկնում էր 122 գրագետ (104 արական և 18 իգական), 1926 թ.՝ 336

23 «ՀՍՍՀ դեկրետների և որոշումների ժողովածու», № 8, էջ 63—64։

24 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿՄ, ֆ. 122, ց. 1, գ. 650, թ. 152։

25 «Սովետական Հայաստանը հինգ տարում», էջ 309։

26 «Ժողովրդական լուսավորություն», 1928, № 7—8։

(համապատասխանաբար 358 և 142)։ Ընդ որում, գյուղական վայրերում 1000 տղամարդուց գրագետ էր 501-ը։ ՀՍՍՀ լուսժողկոմատը նախատեսում էր մինչև 30 տարեկան բնակչության անգրագիտությունը վերացնել նախքան Հոկտեմբերյան հեղափոխության 10-րդ տարեդարձը (1927 թ.), իսկ 1933 թ. (առաջին հնգամյակի վերջում) ավարտել անգրագիտության վերացումը մեր հանրապետությունում։ Սակայն մի շարք պատճառներով դա ձգձգվեց և հիմնականում ավարտվեց նախապատերազմյան հնգամյակների տարիներին։

Անգրագիտության վերացման ամբողջ հոգսը միայն լիկբեզների վրա չէր դրված։ Նախ, 1920—1921 թթ. հիպերտրոֆիայի հիմնական մասը զորակոչված էր, և անգրագիտության վերացումը կատարվում էր կարմիր բանակի շարքերում։ Զորացրված կարմիրբանակայիններն սովորաբար տարրական կրթություն էին ունենում և քաղաքական որոշակի պատրաստվածության շնորհիվ իրենք էին ակտիվորեն պայքարում անգրագիտության վերացման համար։ Այդ աշխատանքներին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս նաև կինբաժինները։ Նրանց բացատրական և կազմակերպչական աշխատանքների շնորհիվ զգալի թվով կանայք ընդգրկվեցին լիկբեզներում և դարձան նոր հասարակարգի ակտիվ կառուցողներ։ Քանի որ անգրագիտության վերացումը հիմնականում կատարվում էր հասարակական կարգով՝ այն չէր կարող վրիպել նաև արհմիությունների ուշադրությունից։ Եվ իրոք, վերջիններս մեծ աշխատանք կատարեցին հատկապես բանվոր դասակարգի մեջ անգրագիտության վերացման ուղղությամբ։ Դեռևս մինչև ԺՈղկոմխորհի համապատասխան որոշումը Հայաստանի արհմիությունների բյուրոն 1921 թ. հունվարին որոշակի աշխատանքներ էր ծավալել արհմիության անդամների անգրագիտության վերացման ուղղությամբ։ Մեծ աշխատանք կատարեց նաև կոմերիտմիությունը։

1920-ական թվականների վերջերին անգրագիտության վերացման ծանրության կենտրոնը տեղափոխվեց գյուղ և այն ավելի կազմակերպված բնույթ ստացավ։ «Հեղափոխության զարգացման այժմյան էտապում,— արձանագրել է ՀԿ(բ)Կ VI համագումարը,— կուլտուրական հեղափոխության կենսագործումը գյուղում, նրա սոցիալիստական վերակառուցման կարևորագույն պայմաններից մեկն է»[27]։ Դա, անկասկած, բխում էր ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա

27 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 12, գ. 64, թ. 7։

պլանից, մեր երկրում սոցիալիզմի հիմքերի կառուցման խնդիրներից։ 1928 թ. փետրվարի 4-ին «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը դիմեց բոլորին. «Յուրաքանչյուր կուսակցական, յուրաքանչյուր կոմերիտական, արհմիության ամեն մի անդամ և յուրաքանչյուր քաղաքացի պետք է սովորեցնի մեկ անգրագետի։ Մտավորականության լավագույն ուժերը պետք է տրամադրվեն անգրագիտության դեմ պայքարելու համար»[28]։

1929 թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցավ «Կորչի անգրագիտությունը» ընկերության I համագումարը, որը մի շարք միջոցառումներ մշակեց ժողովրդական տնտեսության վերակառուցման պայմաններում անգրագիտության արագ տեմպերով վերացման մասին[29]։ Ընկերության տեղական սեկցիաները աշխատավորական լայն մասսաներին ընդգրկելու տեսակետից հիմնական հաջողությունների հասան առաջին հնգամյակի տարիներին։ Անգրագիտության վերացման համար ծավալված իրոք համաժողովրդական պայքարի շնորհիվ 1920—21—1928—29 ուսումնական տարիներին անգրագիտության վերացման դասընթացներում սովորեց 119,5 հազար մարդ, որից 78 հազարը՝ գյուղերում[30]։ 1929—30 ուս. տարում «Կորչի անգրագիտությունը» ընկերության բջիջներում սովորողների թիվը հասավ 35,5 հազարի։ Անգրագիտության վերացման վրա հատուկ ուշադրություն էր դարձնում հանրապետական մամուլը, բազմաթիվ հոդվածներ ու նամակներ տպագրելով այդ մասին։

Անգրագիտության վերացման աշխատանքները լավ էին կազմակերպված հատկապես Երևանում և Մեղրիի, Շամշադինի, Ղափանի, Գորիսի, Ամասիայի, Բասարգեչարի, Ստեփանավանի շրջաններում[31]։

«Կորչի անգրագիտությունը» ընկերությունը վերացվեց 1936 թ. մարտին։ ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահության որոշմամբ նրա ունեցվածքը հանձնվեց լուսավորության ժողովրդական կոմիսարիատին, որը պիտի շարունակեր այդ աշխատանքները[32]։

Անգրագետների անընդհատ համալրվող կոնտիգենտը նվազեցնելու և մասսայական գրագիտություն սովորեցնելու հիմնական միջոցը

---

28 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 4, գ. 523, թ. 11—12։

29 «Խորհրդային Հայաստան», 4 նոյեմբերի, 1928։

30 «Культурное строительство в СССР», М., 1940, стр. 93.

31 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 24, գ. 19ա, թ. 284—285։

32 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 209, թ. 12։

հանրակրթական մասսայական դպրոցն էր։ Նորահաստատ հանրապետությունը, փաստորեն, պիտի նորից կազմակերպեր ու հունի մեջ դներ այդ գործը։ Նախ, դեմոկրատացվեց դպրոցական, ուսումնադաստիարակչական աշխատանքը։ Դպրոցն անջատվեց եկեղեցուց։ ՀՍՍՀ ժողկոմխորհի 1921 թ. հոկտեմբերի դեկրետով ռազմական և քաղաքական կազմակերպություններին պարտավորեցվում էր մինչև հունվարի 1-ը ազատել դպրոցական շենքերը և տրամադրել լուսժողկոմատին[33]։ Դպրոցական շենքերի պատրաստման աշխատանքներին լայնորեն մասնակցում էին աշխատավորները։

Դպրոցական հարցը հատուկ քննարկեց ՀԿ(բ)Կ II համագումարը և համապատասխան միջոցառումներ մշակեց այն ծանր վիճակից դուրս բերելու համար։ Դպրոցական աշխատանքները կարգավորելու գործում մեծ էր նաև Ռուսաստանից ստացված օգնության դերը (գրենական պիտույքներ, թուղթ և այլն)։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից հեղկոմները հատուկ ուշադրություն էին դարձնում ուսուցչության վրա, ամեն տեսակի օգնություն ու օժանդակություն ցույց տալով նրանց։ Կոտայքի գավհեղկոմը գյուղական հեղկոմներից պահանջում էր «դպրոցական աշխատավորներին, ուսուցիչներին և ուսուցչուհիներին ցույց տալ ամենալայն աջակցություն, ձեռք բերելու էժան կենսամթերքներ, քանի որ նրանք գտնվում են տնտեսական ամենածանր պայմաններում»[34]։ Սովետական իշխանության հոգատարությանը ուսուցչությունը ջերմ վերաբերմունքով պատասխանեց։ 1921 թ. հունվարին հրավիրվեց Երևանի և Էջմիածնի գավառների դպրոցական աշխատողների համագումարը, որն իր համերաշխությունը հայտնեց սովետական իշխանությանը և պատրաստակամություն հանդես բերեց աշխատելու դպրոցներում և աշխատավորությանը դաստիարակելու կոմունիստական սկզբունքներով։ Նման համագումարներ հրավիրվեցին նաև մյուս գավառներում[35]։

1924 թ. մարտի 15-ին «Խորհրդային Հայաստան» թերթում լույս տեսավ կառավարության «Գյուղական ուսուցչության մեջ կատարվելիք աշխատանքների մասին» որոշումը, որտեղ ընդգծվում էր գյուղական ուսուցիչների մասսայական շրջադարձը դեպի սովետական իշխանու-

33 Նույն տեղում, ֆ. 144, ց. 1, գ. 194, թ. 85։

34 Նույն տեղում, ֆ. 140, ց. 1, գ. 1, թ. 19։

35 Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 12, թ. 29—37։

թյունը և խորհուրդ էր տրվում նրանց լայնորեն ներգրավել հասարակական աշխատանքների մեջ, վստահել և բարելավել նրանց նյութական վիճակը։ Այս որոշումը կարևոր նշանակություն ունեցավ մտավորականությանը (հատկապես գյուղական) սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու գործում[36]։

Հայաստանի ուսուցչությունը վճռական շրջադարձ կատարելով բանվորագյուղացիական կառավարության կողմը, պատվով կատարեց իր առջև դրված խնդիրները։ «Ընդհանրապես զգացվում է,— գրված է պաշտոնական փաստաթղթերից մեկում,— որ գյուղական մտավորականության և առանձնապես ուսուցչության համար հասարակական, սովետական աշխատանքը դառնում է պարտադիր, որպես իր քաղաքացիական պարտքը սովետական իշխանության և մեր կուսակցության հանդեպ[37]։ Դա ցայտուն կերպով արտահայտվեց ուսուցիչների համահայաստանյան առաջին համագումարում (1924 թ. դեկտեմբեր)։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Հովհաննիսյանի «Պրոլետարական հեղափոխությունը և ուսուցչությունը» զեկուցման մեջ պարզորոշ ցույց էր տրվում, որ ուսուցչությունը անվերապահորեն խզել է իր կապերը անցյալի հետ և անցել սովետական իշխանության կողմը։ Համագումարի բանաձևում արձանագրվեց. «Ինչպես ընդհանուր համախորհըրդային, այնպես էլ Հայաստանի ուսուցչության առաջ մեկայն երկու ճանապարհ կա՝ հեղափոխության և հակահեղափոխության։ Մենք ասում ենք, որ գոյություն չունի միջին ճանապարհ, ուստի հրապարակով հայտարարում ենք Հայաստանի մասսայական ուսուցչության կողմից, որ մեր ուղին հեղափոխության հետ է. մենք ամբողջովին և կատարելապես լծվում ենք բանվորագյուղացիական մասսաների իսկական շահերին ծառայելու գործին, քանի որ այդ մասսան է միայն, որ պիտի կերտե նոր կյանք ու աշխատանքի թագավորություն»[38]։

Կուսակցության նախագծումների հետևողական կենսագործման շնորհիվ արդեն 1925—26 ուս. տարում հանրապետությունում գործում էր 758 դպրոց, 77 հազար սովորողով[39]։

---

36 «Խորհրդային Հայաստան», 15 փետրվարի, 1924։

37 ՄԼի ՀՄՄ, ֆ. 1, ց. 7, գ. 179, թ. 34։

38 «Խորհրդային Հայաստան», 1 հունվարի, 1925։

39 «Սովետական Հայաստանը 5 տարում», էջ 292։

Ահա այդ տարիներին Հայաստանի հանրակրթական դպրոցների և սովորողների աճի դինամիկան[40]։

Ուս. տարի	Դպրոցների թիվը	Սովորողների թիվը (հազ.)
1920—21	383	37,3
1921—22	545	67,4
1922—23	607	67,8
1923—24	605	72,3
1924—25	758	77,0

Սակայն անհրաժեշտ է նշել, որ դպրոցաշինարարությունը դեռևս բավականին ծանր վիճակում էր գտնվում։ Այսպես, օրինակ, Վեդի-բասարի Շոռոլու (Մասխի շրջանի Մեհմանդար) գյուղի դպրոցը տեղավորված էր քանդված բաղնիքի շենքում, որը չուներ դուռ և լուսամուտներ։ Թանաքը դասարանում սառչում էր։ 110 աշակերտ տեղավորված էին 17 նստարանի վրա[41]։ «Վաղարշապատի շրջանի որոշ գյուղերում,— ըըրված է կուսակցության Կենտկոմին հղած զեկուցագրերից մեկում,— դպրոցները չորս պատից բացի ոչինչ չունեն... Ոչ, կարավանք, կարախշլակ գյուղերի նոր բացված դպրոցներում պարապմունքները կանգնած են անցկացվում»[42]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1926 թ. հունիսյան պլենումը քննելով հանրապետությունում ծավալվող դպրոցաշինարարության հարցը, նպատակահարմար գտավ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում կառուցել տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցներ, իսկ գյուղական վայրերում՝ հիմնականում տարրական։

1920-ական թվականները դարձան գյուղերում մասսայաբար դըպրոցներ կառուցելու տարիներ։ 1921—1928 թթ. 108 գյուղական դպրոցական շենքեր կառուցվեցին[43]։ Դա գալիս էր լուծելու պարտադիր տարրական կրթություն մտցնելու հարցը։ Սակայն տակավին սովետական իշխանության առաջին տարիներից զգացվող ուսուցչական կադրերի կարիքը գնալով իրեն ավելի զգացնել տվեց հետագա տարիներին։

---

40 Ա. Մովսիսյան, Ս. Սաֆրոսյան, Գ. Նազիկյան, *Ակնարկներ Սովետական Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության*, Երևան, 1955, էջ 28—29։

41 *ՄԼի ՀՄԱ, ֆ. 1, ց. 17, գ. 180, թ. 36։*

42 *Նույն տեղում, ց. 7, գ. 199, թ. 48։*

43 «Советская Армения за 40 лет», Ереван, 1960, стр. 145.

Հանրապետության դպրոցների համար ուսուցիչներ էին պատրաստում պետական համալսարանը, Երևանի, Լենինականի, Վաղարշապատի և Ստեփանավանի մանկավարժական տեխնիկումները։ Հարկ է նշել, որ տեխնիկումները բավականին ծանր վիճակի մեջ էին, թույլ էր նրանց նյութական բազան և չկային գործիմաց մանկավարժներ։ Այդ առթիվ Ա. Մռավյանը գրել է. «Թվով չափազանց սակավ մեր երկրի համար, զուրկ ամենակարևոր գործիքներից, կարող ուսուցիչներից, դասագրքերից և այլ հարմարություններից՝ մեր տեխնիկումները փաստորեն ատելներ են միայն, որ ապրում են լավ օրերի հույսով»[44]։ Այդ ծանր վիճակը, անշուշտ, պայմանավորված էր նաև ֆինանսական միջոցների սղությամբ, որը հնարավոր եղավ վերացնել հետագա շրջանում։ 1930 թ. հիմնվեց հայկական մանկավարժական ինստիտուտը, որի շնորհիվ տարեցտարի բարելավվեց բարձրագույն կրթությամբ մանկավարժների պատրաստման հարցը։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ ձեռք բերած նվաճումները ռեալ հիմք հանդիսացան ինչպես դպրոցաշինության ծավալման, այնպես էլ ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման համար։ Անշուշտ, դա թիում էր ժողովրդական տնտեսության հետագա զարգացման, մեր երկրում սոցիալիզմի կառուցման շահերից։ Պարտադիր տարրական կրթության մասին կուսակցության XV համագումարի որոշումը նոր թափ հաղորդեց դպրոցաշինարարությանը։ 1926—1930 թթ. հետևյալ փոփոխությունների է ենթարկվել հանրապետության դպրոցական ցանցը[45]։

Ուս. տարի	Դպրոցների թիվը	Աշակերտների թիվը (հազ.)
1925—26	792	85,9
1926—27	779	81,1
1927—28	823	83,5
1928—29	846	94,3
1929—30	900	132,3

Այս դպրոցների մեծագույն մասը (մոտ 90%-ը) տարրական դպրոցներ էին, որոնք հիմնականում գտնվում էին գյուղական վայրերում։ Դա պարտադիր տարրական կրթությունը կենսագործելու ժամանակաշրջանն էր։

44 Ա. Մռավյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 167։

45 Ի. Մովսիսյան, Մ. Սանթրոսյան, Դ. Նազիկյան, նշվ. աշխ., էջ 41—42։

* * *

Նոր տնտեսական քաղաքականության ազդեցության հետևանքով որոնումների որոշակի շրջան ապրեց սովետահայ գրականությունը, որը կոչված էր արտացոլելու կյանքում տեղի ունեցող փոփոխությունները։ Կուսակցությունն այն դիտելով որպես աշխատավորության գաղափարական դաստիարակության կարևոր միջոց, որպես կանոն, ամեն մի էտապում այն ծառայեցնում էր ընդհանուր քաղաքականությանը։ Ուստի, 1920-ական թվականների գրականությունն ու արվեստը պիտի արտացոլեին նէպը և նպաստեին սոցիալիստական գաղափարախոսության զարգացմանը մեր երկրում։ Սովետահայ գրականության մեջ այդ ժամանակից սկսած արդեն ուղենշվել էր որոշ սահմանազատում՝ դեմոկրատական գրականության կողքին ձևավորում էր պրոլետարականը։

Նէպի պայմաններում տնտեսական զարգացման հակասական և իրարամերժ կացութաձևերը բնականաբար ծնում էին նաև հակամերժ ուղղություններ գրականության մեջ։ Հայտնի է, որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ մեզ մոտ, որոշ նիհիլիստական, ժխտողական վերաբերմունք ցուցաբերվեց գրականության անցյալի ժառանգության նկատմամբ (1922 թ. «Երեքի դեկլարացիան»)։ Դա հակասում էր կուսակցության քաղաքականությանը, որը գտնում էր, որ անհրաժեշտ է ստեղծագործաբար յուրացնել դարերի ընթացքում ստեղծված գրականությունն ու արվեստը և այն ծառայեցնել մեր երկրում կոմունիստական շինարարության շահերին։ Արդեն 1922—1923 թթ. Երևանում և Մոսկվայում տարբեր քաղաքներում (Մոսկվա, Թիֆլիս) հանդես են գալիս տարբեր գրական ընկերություններ («Դարբնոց», «Մուրճ», «Քուռ»), որոնք հիմնականում պայքարում էին նոր, սոցիալիստական գրականության արմատավորման համար։ Երևանում գործող «Մուրճ» գրական խմբակի հիման վրա 1923 թ. սկզբներին ձևավորվեց Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան, որը երիտասարդ գրողներին համախմբելով իր շուրջը, որոշակի աշխատանքներ ծավալեց նրանց միավորելու համար։ Սակայն ոչ մի տեղ նէպի ազդեցությունն այնքան որոշակի չէր, որքան այստեղ։ Պայքարելով «զուտ պրոլետարական» գրականության համար, պրոլետգրողները, որպես «մանր բուրժուականների», իրենց շարքերից դուրս էին նետում այնպիսի գրողների, ինչպիսիք էին Զարենցը, Բակունցը, Զորյանը, Շիրվանզադեն և ուրիշներ։

Գրականության բնագավառում նկատվող ոչ լրջմիտ խմբավորումների և իրարամերժ խմբակների գոյությունը դուցե և երկար շարունակվեր, եթե Համկ(բ)կ Կենտկոմը 1925 թ. հունիսին հատուկ որոշում չընդուներ այդ մասին («Կուսակցության քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում»)։ Յույց տալով այդ ասպարեզում եղած սխալները, կուսակցությունը պահանջում էր բոլոր հնարավորություններն օգտագործել գրականության միջոցով սոցիալիստական գաղափարախոսությունը պրոպագանդելու համար։ Այդ որոշման մեջ խոստորեն դատապարտվեցին անցյալի կուլտուրական ժառանգությունը թերթևամտորեն ժխտելու փորձերը։ Մեկ տարի անց՝ 1926 թ. հունիսին, նույնատիպ որոշում ընդունեց ՀԿ(բ)կ Կենտկոմը։ Այդ որոշումները կարևոր դեր խաղացին սոցիալիստական գրականության արմատավորման խնդրում և որոշակի հստակություն մտցրին, որը բարերար ազդեցություն ունեցավ նրա հետագա վերելքի վրա։ Սակայն մեզ մոտ գրական խմբավորումներն ու ներքին հակամարտությունները շարունակեցին նաև այդ որոշումներից հետո։ Որոշակի հակասություն էր նկատվում «հին» և «նոր» գրողների միջև, որն ըստ երևույթին, պրոլետկուլտուրական շարժման հետևանքն էր։ Միայն 1920-ական թվականների վերջերին, երբ ուժերի վերախմբավորման քաղաքականությունը մոտենում էր ավարտին, և արդեն որոշակի ընդգծվել էր սոցիալիստական մոտեցման հաղթանակը, գրականության մեջ նույնպես անվերադարձորեն հաղթանակեց սոցիալիստական ռեալիզմի ուղղությունը։ 1929 թ. եղած խմբակները միավորվեցին սովետական գրողների ֆեդերացիայի մեջ, հատուկ ընդգծելով նրա քաղաքական նպատակասլացությունը։ Դա ձեռք բերվեց կուսակցության ամենօրյա ղեկավարությամբ, թերությունների ու սխալների դեմ պայքարի միջոցով։

Աշխատավորության գաղափարական դաստիարակության վրա մեծ ազդեցություն էին թողնում նաև կերպարվեստը, երաժշտությունը և այլն։ Այս բնագավառներում ևս նեպի առաջին փուլը ձևավորման ու բուռն զարգացման շրջան հանդիսացավ՝ նպաստելով սոցիալիստական գաղափարախոսության ամրապնդմանը։

Այսպիսով, նեպի առաջին փուլում, որը միաժամանակ կուլտուրական հեղափոխության առաջին փուլն էր հանդիսանում, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հսկայական աշխատանք տարվեց աշխատավորության կոմունիստական դաստիարակության, կոմունիստական գաղափարախոսության հաղթանակի համար։ Ճիշտ գնահա-

տելով, որ նէպի պայմաններում բուրժուական դաղափարախոսությունը որոշակի աշխուժացում է ապրում, կուսակցությունը բոլոր միջոցները կենտրոնացրեց նրա ազդեցությունը թուլացնելու և պրոլետարական դաղափարախոսությունն ամրապնդելու համար։ Նէպի առաջին փուլում ձեռք բերած հսկայական հաջողությունները հիմք ծառայեցին ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրական զարգացման տարբեր մակարդակների աստիճանական համահարթեցման և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական միասնական կուլտուրայի զարգացման համար։

* * *

Առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին հանրապետության արդյունաբերությունը մեծ վերելքի հետևանքով անհրաժեշտ էր ավելացնել արդյունաբերության հրամանատարների՝ տեխնիկական մտավորականության քանակը, առանց որի հնարավոր չէ պատկերացնել տնտեսության հետագա առաջընթացը։ Այդ հարցի լուծման գործում անգնահատելի էր ՍՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1929 թ. սեպտեմբերի 11-ի որոշումը՝ ինդուստրիալ-տեխնիկական կրթության միասնական կարգի մասին[46]։ Կենսագործելով այդ որոշումը, Հայաստանում բացվեցին պոլիտեխնիկական ինստիտուտը և բազմաթիվ տեխնիկումներ։ 1930 թ. գործող 48 տեխնիկումներից 12-ը կադրեր էին պատրաստում արդյունաբերության և շինարարության համար։ Հատուկ ուշադրություն էր դարձվում ուսանողների սոցիալական կազմի վրա։ Հայաստանի սովետների VII համագումարը (1931) արձանագրեց, որ ուսանողության 60—70%-ը բանվորներ են, չքավոր գյուղացիներ կամ բատրակներ[47]։

Հանրապետության սոցիալիստական արդյունաբերության հետագա առաջընթացն ապահովելուն մեծապես նպաստեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կազմակերպումը, որը յուրահատուկ դարբնոց հանդիսացավ ինժեներատեխնիկական բարձրորակ մասնագետներ պատրաստելու գործում։ Նրա հիմնական ֆակուլտետները՝ էներգետիկ, շինարարական, քիմիական, հիդրոտեխնիկական և այլն, անհրաժեշտ մասնագետներ էին պատրաստում արդյունաբերության համապատասխան ճյուղերի համար։ Եթե իր կազմակերպման առաջին տարում պոլի-

46 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 257, թ. 6։

47 Նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 1155, թ. 70։

տեխնիկական ինստիտուտում սովորում էր 465 ուսանող, ապա 1940 թ.՝ 2000[48]։

Սակայն արդյունաբերության և շինարարության զարգացման բուռն տեմպերը շարունակ նոր կադրերի պահանջ էին առաջադրում։ Այդ պահանջը մասամբ լրացվում էր կարճատև դասընթացներում արտադրության առաջավորների որակավորման, գիտության և առաջավոր փորձի նվաճումներին նրանց ծանոթացնելու միջոցով։ Բարձրորակ մասնագետների սովը որոշ չափով մեղմացվում էր նաև տեխնիկումներում և այլ ոստումնական հաստատություններում պատրաստվող միջնակարգ-մասնագիտական կրթություն ունեցող կադրերի շնորհիվ։ Երկրորդ հնգամյակի տարիներին մոտ 1900 մասնագետներ պատրաստվեցին այդ հաստատություններում[49]։ Զգալի թվով կադրեր և մասնագետներ էին Հայաստան գալիս նաև Միության այլ քաղաքներից։

Գյուղի սոցիալիստական վերակառուցման շնորհիվ կազմակերպված կոլեկտիվ տնտեսություններն ու սովխոզները սոցիալական խոշոր հեղաշրջում մտցրին գյուղացիության դարավոր կացութաձևի մեջ։ Դրա նց խելացի ղեկավարումն ու մասնագիտական սպասարկումը առաջնահերթ նշանակություն էր ստանում։ Ինչպես Երևանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի հիման վրա կազմակերպված գյուղատնտեսական ինստիտուտի, այնպես էլ 1928 թ. գործող անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը (որը 1930 թ. վերանվանվեց Անդրկովկասյան անասնաբուժական ինստիտուտի), սոցիալիստական գյուղատնտեսությանը տված իրենց կադրերով վճռական դեր խաղացին նրա հետագա զարգացման գործում։ Եթե Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը 1921—1930 թթ. տվել է 290 շրջանավարտ, ապա գյուղատնտեսական ինստիտուտը 1931—1939 թթ. ընթացքում տվել է ավելի քան 550 շրջանավարտ[50]։ Ելնելով ամենուր զգացվող պահանջից, արագ տեմպերով աճում էր նաև անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում սովորողների թիվը. եթե սկզբնական շրջանում (1931) այն 115 ուսանող ուներ, ապա 1939 թ.՝ 1000-ից ավելի (այդ թվում նաև Վրաստանից ու Ադրբեջանից)։

1930-ական թվականների սկզբներին պետական համալսարանի վերակառուցման շնորհիվ բժշկական ֆակուլտետի բազայի վրա կազ-

---

48 К. С. Худавердян. նշվ. աշխ., էջ 208։

49 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 115.

50 К. С. Худавердян, նշվ. աշխ., էջ 209։

մակերպվեց Երևանի բժշկական ինստիտուտը, երկու հիմնական ֆակուլտետներով՝ բուժական և սանհիգիենիկ։ Այդտեղ նույնպես տարեցտարի ավելացավ սովորողների թիվը։ Եթե 1932 թ. Հանրապետությունում գործում էին 41 բուժհիմնարկներ, որից 18-ը գյուղական վայրերում (բոլորը միասին 1638 մահճակալով), ապա 1938 թ.՝ բուժհիմնարկների թիվը հասավ 85-ի, որից 40-ը գյուղական վայրերում, 34 հազարից ավելի մահճակալով[51]։ Դա աշխատավորության նկատմամբ ցուցաբերած հոգատարության լավագույն վկայականն է։ Երկրորդ հնգամյակի ընթացքում Հանրապետությունում աշխատող բժիշկների թիվը աճեց 369-ով, իսկ կրտսեր սպասարկող բուժանձնակազմը՝ 1031-ով[52]։ Բժշկական հիմնարկների այսպիսի ավելացումը հնարավորություն տվեց շահավետ պայքար մղելու մի շարք համաճարակային հիվանդությունների դեմ և զգալիորեն բարելավել աշխատավորության բուժսպասարկումը։

Կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության հոգատարության շնորհիվ Հանրապետության բուհերում գիտամանկավարժական բեղմնավոր աշխատանք էին կատարում սոցիալիզմի գործին նվիրված, հիմնականում այլ վայրերից Հայաստան վերադարձած կադրերը։ Միաժամանակ ձևավորվում էին բանվորագյուղացիական ծագում ունեցող գիտական կադրերը, որոնք նախասովետական շրջանում տարրական կրթություն ստանալու մասին անգամ երազել չէին կարող։ Հանրապետության ժողովրդական տնտեսության և գիտության զարգացմանը խոշոր ծառայություն մատուցեցին այնպիսի մասնագետներ, ինչպիսիք էին Լ. Հովհաննիսյանը, Բ. Ֆանարջյանը, Ռ. Յոլյանը, Ա. Մելիք-Ադամյանը, Գ. Միրզա-Ավագյանը (բժշկություն), Ա. Թամանյանը, Ա. Հակոբյանը, Ստ. Համբարյանը, Հ. Ռոտինյանը, Ա. Տոնյանը (տեխնիկական գիտություններ), Խ. Երիցյանը, Ա. Թամամշիևը, Պ. Քալանթարյանը, Մ. Թումանյանը, Գ. Աղաջանյանը, Բ. Մասինոն, Ս. Յուզբաշյանը (գյուղատնտեսական գիտություններ), Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Աշ. Հովհաննիսյանը, Մ. Աբեղյանը, Ն. Դաբաղյանը (հասարակական գիտություններ) շատ ու շատ ուրիշներ։

Մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցման ժամանակաշրջանում բարձրագույն դպրոցի նվաճումները ակնհայտ էին։ 1920—1940 թթ. Հանրապետության բուհերը պատրաստել են 7268 մաս-

51 Նույն տեղում, էջ 100։

52 Նույն տեղում, էջ 106։

նագետ, որից միայն երկրորդ հնգամյակի տարիներին՝ 3242-ը, իսկ միջնակարգ մասնագիտական հաստատությունները՝ համապատասխանաբար 19300 և 5772 մասնագետ[53] Բուհերն ու տեխնիկումները բարձրորակ կադրեր էին պատրաստում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար: Բացի այդ, զգալի թվով հայ երիտասարդներ բարձրագույն կրթություն էին ստանում Միության այլ քաղաքներում:

Այսպիսով, նախապատերազմյան հնգամյակների տարիներին ձևավորվեց և ամրապնդվեց Սովետական Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության սիստեմը, որոշակիորեն կայունացան մասնագիտացման հիմնական ուղղությունները և ուրվագծվեցին նրա զարգացման հեռանկարները: Ելնելով ժողովրդական տնտեսության զարգացման շահերից, տարեցտարի ավելանում էին մասնագիտական ուսումնական հաստատությունները ու դրանցում սովորողների քանակը: Առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին հետևյալ քանակությամբ կադրեր ու մասնագետներ են պատրաստվել մեր հանրապետությունում[54]:

Ուս. տարի	Բուհերում	Տեխնիկումներում	Բանֆակներում	Ֆաբզդրծ. ուս.
1928—29	1366	1852	659	2169
1932—33	3590	7683	2614	3425
1937—38	4956	10049	665	853

Ինչպես տեսնում ենք, մեկ տասնամյակում հսկայական փոփոխություններ են տեղի ունեցել կադրերի պատրաստման գործում: Սակայն բարձրագույն կրթության կազմակերպման, կադրերի պատրաստման ու դաստիարակության աշխատանքներին խոշոր վնաս հասցրեց անհատի պաշտամունքի արատավոր մթնոլորտը, երբ բազում ազնիվ աշխատողներ, բարձրորակ մասնագետներ 1936—1938 թթ. կամայականության զոհ դարձան: Դա խոշոր վնաս հասցրեց, ինչպես տնտեսության զարգացմանը, այնպես էլ գիտության ու արվեստի հետագա վերելքին:

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման և արագ տեմպերով զարգացման շահերը լուրջ պահանջներ էին ներկայացնում նաև գիտության զարգացմանը: Եվ դա բնական էր: 1920-ական

53 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 114.

54 Նույն տեղում, էջ 121:

թվականների վերջերին հանրապետությունում հիմնվեցին մի շարք լաբորատորիաներ ու փորձադաշտեր (նախ բուհերին կից, ապա նաև գիտահետազոտական ինստիտուտներում), որտեղ բավականին աշխատանքներ կատարվեցին գիտական արժեքավոր պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ։ 1929 թ. վերակառուցվեցին գիտահետազոտական աշխատանքները և հանրապետությունում կազմակերպվեցին արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման շահերից բխող նոր գիտական կենտրոններ։ Դրանց թվում էին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, բույսերի պաշտպանության ինստիտուտները, մի քանի ճյուղային, զոնալ կայաններ և այլն[55]։ Ուշադրությունից դուրս չէին մնում հասարակական գիտությունները։ ՀՍՍՀ Ժողկոմխորհի 1930 թ. նոյեմբերի 1-ի որոշմամբ գիտության և արվեստի ինստիտուտը վերակառուցվեց գիտությունների ինստիտուտի, իսկ 1932 թ. կազմակերպվեց կուլտուրայի պատմության ինստիտուտը, որի բազայի վրա 1935 թ. ձևավորվեց պատմության և գրականության ինստիտուտը. շուտով այն մտավ ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կազմի մեջ։ Առաջին հնգամյակի վերջում հանրապետությունում 39 ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկներ կային, որից 21-ը հողժողկոմատի տնօրինության տակ էին, 6-ը՝ առողջապահության ժողկոմատի, 4-ը՝ ժողտնտխորհի և այլն[56]։ Այդ ինստիտուտները կոնկրետ, հիմնականում պրակտիկ նշանակություն ունեցող աշխատանքներ ծավալեցին՝ հանրապետության բնական հարստությունները ու ռեսուրսները ավելի արդյունավետ օգտագործելու համար։ Հասարակագիտության բնագավառում աշխատանքներ էին տարվում նաև արվեստի պատմության ինստիտուտում, պետական պատմական թանգարանում, հեղափոխության թանգարանում, Մատենադարանում և այլ օջախներում։

1932 թ. հանրապետությունում 12 ինքնուրույն գիտահետազոտական ինստիտուտներ կային, որից 6-ը գյուղատնտեսական թեքումով։ Գիտահետազոտական հիմնարկների և կադրերի անընդհատ աճը թելադրում էր դրանց ղեկավարությունը միավորել մեկ կենտրոնում։ 1932 թ. կազմակերպվեց ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղը, իսկ 1935 թ.՝ ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղը (Արմֆան)։ Դա խոշոր իրադարձություն էր հանրապետության գիտական մտքի զարգացման

55 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 1, ց. 13, գ. 339, թ. 96։

56 Նույն տեղում։

պատմության մեջ։ Արմֆանում կենտրոնացվեցին ոչ միայն կադրերը, այլև նյութական միջոցները։ Դրա շնորհիվ անհրաժեշտ գիտական բազա ստեղծվեց հանրապետության բնական հարստությունների ու հասարակական կյանքը բազմակողմանի ուսումնասիրելու և սոցիալիստական շինարարությանը ծառայելու համար։ ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի մեջ սկզբնական շրջանում ընդգրկվեցին գոյություն ունեցող հիմնական գիտահետազոտական կենտրոնները։ Կազմակերպվեցին երկրաբանական ինստիտուտը (դիրեկտոր՝ Հ. Կարապետյան), քիմիական ինստիտուտը (դիրեկտոր՝ Հ. Հովհաննիսյան), բիոլոգիական ինստիտուտը (դիրեկտոր՝ Ս. Յուզբաշյան) և հնագիտության, ազգագրության ու պատմության սեկտորը։ Հետագայում կազմակերպվեցին նոր ինստիտուտներ և բաժիններ, և տարեցտարի ավելացավ գիտաշխատողների քանակը։ Եթե իր կազմավորման շրջանում ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղում զբաղված էին 73 գիտական աշխատողներ, ապա 1939 թ. նրանց թիվն անցնում էր 150-ից, իսկ 1940 թ.՝ հասավ 180-ի[57]։ Այժմ բուհերի հետ մեկտեղ գիտական կադրերի պատրաստման կենտրոն էին դարձել գիտությունների ակադեմիայի ինստիտուտներն ու բաժինները։ Հիմնադրման սկզբում ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի նախագահն էր Լևինսոն-Լեսսինգը, իսկ 1938-ից՝ ակադ. Հ. Օրբելին, որն անգնահատելի ծառայություն մատուցեց սովետահայ գիտական մտքի զարգացմանը։ Արմֆանը նախապատերազմյան տարիներին գիտության բոլոր հիմնական բնագավառներում զգալի աշխատանքներ ծավալեց իր առջև դրված խնդիրները լուծելու համար։

Այսպիսով, Հայաստանում գիտության զարգացումը ծայր առնելով 1920-ական թվականներից, մեկ-երկու տասնամյակների ընթացքում ձևավորվեց կազմակերպչորեն, ստեղծեց ամուր նյութական բազա և կոլտուրական ու ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող խոշոր նվաճումներ ձեռք բերեց։

* * *

Սոցիալիստական շինարարության առաջին տարիներին, երբ համատարած անգրագիտությունն էր թագավորում, կուսակցությունը գլխավորեց դրա վերացման համար ծավալվող համաժողովրդական պայքարը և չնայած տնտեսության ծանր վիճակին՝ հսկայական միջոցներ հատ-

57 К. С. Худавердян, նշված աշխ., էջ 248։

կացրեց դպրոցական և կուլտուր-լուսավորական հիմնարկների կառուցմանը։ Չնայած ձեռք բերած նվաճումներին, արդյունքները դեռևս բավարար չէին։ Այդ ուղղությամբ տարվող աշխատանքները մեծ թափ ստացան 1930-ական թվականներին։ Դեռևս Համկ(բ)Կ XV համագումարում հաստատված առաջին հնգամյա պլանի դիրեկտիվներում այդ առթիվ ընդգծվեց, որ պետք է «հնգամյա պլանը կազմելիս հաշվի առնվի բնակչության կուլտուրական մակարդակի վճռական վերելքի անհրաժեշտությունը և կուլտուրական շինարարության պլանը շաղկապվի երկրի ինդուստրացմանը, որպես ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության ընդհանուր պլանի մի անհրաժեշտ մաս»[58]։ Ելնելով մեր երկրում սոցիալիզմի հիմքերի կառուցման շահերից, հնգամյա պլանով նախատեսվում էր կենսագործել պարտադիր տարրական կրթություն, որը կարևոր նախադրյալ էր համարվում կուլտուրական հեղափոխության զարգացման գործում։ «Ընդհանուր պարտադիր ուսուցման հաջող կենսագործումը,— նշվեց Համկ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հուլիսի 25-ի որոշման մեջ,— խոշորագույն տաղտնակ կլինի ոչ միայն կուլտուրական, այլև քաղաքական և տնտեսական ճակատում»[59]։

Ելնելով բոլոր վայրերում ընդհանուր տարրական պարտադիր ուսուցում մտցնելու և քաղաքատիպ վայրերում պարտադիր յոթնամյա ուսուցման անցնելու մասին Համկ(բ)Կ XVI համագումարի որոշումներից, ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. օգոստոսի 7-ի և ՀՍՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. հոկտեմբերի 5-ի որոշումներով 1930—31 ուս. տարվանից հանրապետության բոլոր շրջաններում մտցվեց տարրական պարտադիր ուսուցում (քաղաքներում և բանվորական ավաններում՝ յոթնամյա)։ Այդ աշխատանքները գլխավորելու նպատակով 1930 թ. ՀՍՍՀ Ժողկոմխորհին կից ստեղծվեց պարտադիր ուսուցման հանրապետական կոմիտե (պարտուս), որն իր համապատասխան մարմիններն ուներ տեղական սովետներին առընթեր։ Փաստորեն 1930—31 ուս. տարվանից հանրապետության գյուղերում կենսագործվեց տարրական պարտադիր ուսուցումը։ Ժողկոմխորհի հատուկ որոշմամբ (1930 թ. սեպտեմբերի 19-ի), 1930—31 թ. ուս. տարում պարտադիր ուսուցում մըտցվեց 8—10 տարեկան երեխաների համար, իսկ 1931—32 ուս. տարվանից՝ 11 տարեկանների։ Բացի այդ, 11—15 տարեկան երեխաների հա-

58 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», մաս II, էջ 244։

59 «Директивы КПСС и Советского правительства по хозяйственным вопросам», т. I, стр. 97.

մար հատուկ դասընթացներ էին կազմակերպվում, որտեղ նրանք մեկ կամ երկու տարվա ընթացքում տարրական կրթություն պետք է ստանային[60]։ Որպեսզի չքավորների երեխաները դպրոցից դուրս չմնային, ՀԿ(բ)Կ VI համագումարի որոշմամբ պետական և տեղական բյուջեներից միջոցներ հատկացվեցին խիստ կարիքավոր երեխաներին նյութական օժանդակություն ցույց տալու համար[61]։ Միաժամանակ, տեղերում ստեղծվում էին «պարտուսի ֆոնդեր»՝ չքավորների երեխաներին օգնություն ցույց տալու համար, դպրոցներին կից հանրակացարաններ էին կազմակերպվում այլ վայրերի երեխաների համար և այլն։ Դպրոցները կարիքավոր երեխաներին ձրի սնունդ, հագուստ և գրենական պիտույքներ էին տալիս։

Հանրապետության դպրոցները բարձրորակ կադրերով ապահովելու հարցը լուրջ մտահոգում էր կուսակցական և սովետական մարմիններին։ ՀՍՍՀ սովետների VIII համագումարը (1934) «կուլտուրական շինարարության մասին» հատուկ որոշում ընդունեց, որով նպատակահարմար համարվեց 1935 թ. կազմակերպել երկամյա մանկավարժական ինստիտուտ, նոր տեխնիկումներ բացել հանրապետության հեռավոր շրջաններում (Ղափան, Եղեգնաձոր)։ Նախատեսվում էր 1935—36 ուս. տարվանից մանկավարժական տեխնիկումներ բացել նաև Երևանում ու Լենինականում և ավելացնել սովորողների քանակը։ Ձեռնարկված վճռական միջոցառումների շնորհիվ նախապատերազմյան տասնամյակում զգալիորեն ավելացավ միջնակարգ մասնագիտական հաստատությունների քանակը և դրանցում սովորող ուսանողների թիվը։ Այսպես, 1929—30 ուս. տարում հանրապետությունում գործում էր 21 այդպիսի հաստատություն, ավելի քան 2,5 հազար սովորողով։ Երկու տարի անց՝ 1931—32 ուս. տարում, դրանց թիվը կրկնապատկվեց՝ հասնելով 48-ի, մոտ 5,5 հազար սովորողով։ 1940—41 ուս. տարում այդ հիմնարկների թիվը իջավ 62-ի, սակայն սովորողների քանակն անցավ 8900-ից[62]։ Համապատասխանորեն աճում էր նաև միջնակարգ մանկավարժական ուսումնարանների և նրանցում սովորողների քանակը. 1933 թ. դրանց թիվը հասնում էր 19-ի (մի մասը մանկավարժական թևքում ստացած երկրորդ աստիճանի դպրոցներ էին), որտեղ սովորում

60 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 11, գ. 10, թ. 17։

61 Մէի ՀՄԱ, ֆ. 1, ց. 29, գ. 7, թ. 24։

62 «Культурное строительство в Армянской ССР», стр. 63.

էր 2172 ուսանող։ 1935—36 ուս. տարում սովորողների թիվը հասավ 2818-ի[63]։

1930-ական թվականներին անընդհատ ավելացող միջնակարգ և յոթնամյա դպրոցների բարձրագույն կրթությամբ մանկավարժների կարիքը միայն պետական համալսարանը այլևս բավարարել չէր կարող։ Ուստի սեղմ ժամկետում հանրապետությունում բացվեցին Երևանի հայկական մանկավարժական, ռուսական մանկավարժական, Լենինականի մանկավարժական, հեռակա մանկավարժական և ուսուցչական ինստիտուտները։ Եթե 1929—30 ուս. տարում հանրապետությունում 3 բուհ կար՝ 1555 սովորողով, ապա 1930—31 ուս. տարում դրանց թիվը հասավ 8-ի՝ 3902 սովորողով։ 1932—33 ուս. տարում բուհերի թիվը աճեց ևս մեկ միավորով և այդպես մնաց մինչև պատերազմը, իսկ սովորողների թիվը հասավ 11 120-ի[64]։ Դա խոշոր նվաճում էր, որ ձեռք բերվեց կուլտուրական հեղափոխության ճակատում։

Այդ միջոցառումների շնորհիվ տարեցտարի աճեց հանրապետության դպրոցների և աշակերտների թիվը, և Հայաստանը սեղմ ժամկետում վերածվեց համատարած գրագիտության և բարձր զարգացած կուլտուրայի հանրապետության։ Այդ է վկայում հետևյալ աղյուսակը[65]։

Ուս. տարի	Դպրոցների քանակը	Աշակերտների քանակը (հազ.)
1930—31	971 (որից տարրական 815)	132,2
1931—32	1067 (820)	162,0
1932—33	1099 (782)	179,2
19 3—34	1121 (750)	185,0
1934—35	1131 (735)	194,6
1935—36	1148 (820)	215,0
1936—37	1661 (557)	241,8

Ինչպես տեսնում ենք, անընդհատ աճի հետ մեկտեղ աստիճանաբար դպրոցների մեծ մասը դարձել է միջնակարգ և յոթնամյա, որով զգալիորեն հեշտանում էր յոթնամյա պարտադիր կրթության անցնելու մասին կուսակցության XVIII համագումարի որոշումների կատարումը։ Պարտուսի աշխատանքները հատկապես լավ էին կազմակերպված Սպիտակի, Նոր-Բայազետի (Կամո), Շամշադինի, Ստեփանավանի և Մար-

63 Ս. Մովսիսյան, Մ. Սաֆրոսյան, Դ. Նազիկյան, նշվ. աշխ., էջ 100։

64 «Культурное строительство в Армянской ССР», стр. 63.

65 Ս. Մովսիսյան, Մ. Սաֆրոսյան, Դ. Նազիկյան, նշվ. աշխ., էջ 86։

տունու շրջաններում, որտեղ տարրական դպրոցների մեծ մասը վեր էին ածվել յոթնամյա դպրոցների։ Առաջին հնգամյակի վերջում հիմնականում կենսագործվեց ընդհանուր պարտադիր տարրական ուսուցումը և ռեալ պայմաններ ստեղծվեցին յոթնամյա պարտադիր ուսուցման անցնելու համար։ Դա թելադրվում էր կյանքի կողմից, քանի որ մասսայաբար ավարտելով տարրական դպրոցները, աշակերտները պետք է հնարավորություն ունենային ուսումը շարունակելու յոթնամյա դպրոցներում։ Ուստի, 1931—32 ուս. տարում որոշակի միջոցառումներ ձեռնարկվեցին յոթնամյա պարտադիր ուսուցման անցնելու համար։

Երկրորդ հնգամյա պլանով նախատեսվում էր ամբողջ երկրի մասըշտաբով կենսագործել ընդհանուր յոթնամյա պարտադիր ուսուցումը։ Դա առաջին հերթին վերաբերում էր գյուղական վայրերին, որտեղ սոցիալիստական վերակառուցումից հետո խիստ կերպով զգացվում էր գրագետ, բազմակողմանի, զարգացած աշխատողների կարիքը։ ՀԿ(բ)Կ IX համագումարը (1934) ելնելով կուսակցության XVII համագումարի որոշումներից, տեղական կազմակերպություններին առջև խնդիր դրեց, որպեսզի 1935 թ. հիմնականում կենսագործվի յոթնամյա պարտադիր կրթությունը։

Սոցիալիզմի տնտեսական հիմքերի կառուցման հաջողությունները (հատկապես արդյունաբերության զարգացման բնագավառում) հուսալի պայմաններ ստեղծեցին ազգային ծայրամասերի տնտեսական և կուլտուրական հետամնացության վերացման համար։ Երկրորդ հնգամյակի վերջում հանրապետությունում արդեն գործում էին 500-ից ավել յոթնամյա դպրոցներ (որից 204-ը գյուղական վայրերում)։ Երկրորդ հնգամյակի տարիներին յոթնամյա դպրոցների ցանցը (և սովորողների քանակը) հետևյալ փոփոխությունների ենթարկվեց[66]։

Ուս. տարի	Դպրոցների քանակը	Սովորողների քանակը (հազ.)
1932—33	302	104,6
1935—36	432	116,1
1937—38	510	200

Ինչպես տեսնում ենք, հաջողությամբ կենսագործվում էր յոթնամյա պարտադիր ուսուցումը։ Հնգամյակի վերջում բոլոր գյուղերն

66 Ա. Աբրահամյան, *Ժողովրդական կրթության նվաճումները Սովետական Հայաստանում*, Երևան, 1959, էջ 81։

ունեին իրենց դպրոցները, որտեղ ընդգրկված էին դպրոցահասակ բոլոր երեխաները։

Յոթնամյա պարտադիր ուսուցման կենսագործման հիմնական դժվարությունը մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման հարցն էր։ Մինչև երկրորդ հնգամյակի վերջերը Հանրապետությունում գործում էին ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման միամյա, վեցամսյա և մեկամսյա դասընթացներ, որտեղ զգալի թվով երիտասարդներ, հատկապես գյուղական ուսուցիչներ, մանկավարժական որակավորում էին ստանում։ ՀՍՍՀ Ժողկոմխորհի որոշմամբ 1935 թ. կազմակերպվեց լուսավորության աշխատողների որակավորումը բարձրացնող հատուկ ինստիտուտ, որը խոշոր դեր խաղաց բարձրորակ մանկավարժներ պատրաստելու գործում[67]։ 1937—1938 թթ. Հանրապետության դպրոցներում աշխատում էր 8021 մարդ, որը 1,8 անգամ ավելի էր քան 1932—1933 թթ. և մոտ 3 անգամ ավելի՝ 1928—1929 թթ. համեմատությամբ[68]։ Դա մի հզոր ուժ էր, որն անձնուրաց կերպով ծառայում էր մատաղ սերնդի ուսուցման և մարքս-լենինյան դաստիարակության գործին։

Երկու հնգամյակների տարիներին Հանրապետության ուսուցչության քանակը հետևյալ փոփոխությանը ենթարկվեց[69]։

Ուս. տարի	Ուսուցիչների թիվը
1930—31	3540
1931—32	4123
1932—33	4482
1933—34	4682
1934—35	5135
1935—36	5549
1936—37	7819

Սովետական իշխանության տարիներին արմատական փոփոխությունների ենթարկվեց ուսուցչության սոցիալական կազմը։ Եթե նախկինում գլխավորապես իշխող դասակարգերի ներկայացուցիչներն էին զբաղվում ուսուցչությամբ, ապա այժմ հիմնականում աշխատավորների զավակներն էին համալրում մանկավարժների շարքերը։ Բնական է, որ այդ նոր ուսուցչությունը սովետական իշխանության հաստատուն նեցուկն

67 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 2, էջ 97։

68 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 83։

69 Լ. Մովսիսյան, Մ. Սաֆրոսյան, Դ. Նազիկյան, նշվ. աշխ., էջ 98։

էր ոչ միայն գրագիտություն և կուլտուրա տարածելու գործում, այլև կուսակցության քաղաքականությունը մասսայականացնելու խնդրում։

Նախապատերազմյան երկու հնգամյակների տարիներին դպրոցական ցանցի ընդլայնումը հնարավորություն տվեց հաջողությամբ կենսագործելու յոթնամյա պարտադիր ուսուցումը։ Դա սովետական ժողովրդի մեծ նվաճումն էր, մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցման անհրաժեշտ պայմաններից մեկը։ Ահա այդ փոփոխությունն արտահայտող աղյուսակը[70].

Ուս. տարի	Դպրոցներ	Ուսուցիչներ	Աշակերտներ
1927—28	823	2598	83395
որից գյուղական վայրերում	736	1629	58736
1932—38	1099	4482	175150
որից գյուղական վայրերում	1015	3301	144461
1937—38	1130	8021	272479
որից գյուղական վայրերում	1050	5630	199778

Ինչպես տեսնում ենք, հատուկ ուշադրություն էր դարձվում գյուղական բնակչության կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման վրա, որը բխում էր գյուղի սոցիալիստական վերակառուցման շահերից։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀՍՍՀ ԺողկոմխորհԻ մշտական հոգատարության շնորհիվ Սովետական Հայաստանը 1000 մարդուն ընկնող սովորողների հաշվով զգալիորեն առաջ անցավ Միության մյուս հանրապետություններից։ Ահա տվյալները (ըստ հանրապետությունների)[71]։

Թվականներ	Ռուսաստ.	Ուկր.	Բել.	Ադրբ.	Վրաստ.	Թուրքմ.	Ուզբեկ.	Տաջիկ.	Կազախ.	Հայաստ.
1928	84	88	102	82	110	37	36	18	50	98
1938	187	176	192	195	196	163	176	170	79	237

Սա հանրապետության աշխատավորության խոշոր նվաճումն էր, նրա լավագույն ավանդույթների դրսևորումը, որի համար անհրաժեշտ

70 «Культурное строительство Армянской ССР», стр. 104.
71 «История СССР», т. IX, М., 1971, стр. 232.

պայմաններ էին ստեղծվել լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ։

Այսպիսով, հանդիսանալով ձևավորվող մտավորականության ամենաբազմամարդ խավը՝ ուսուցչությունը սովետական իշխանության հաստատումից հետո փոխվեց թե՛ իր սոցիալական վիճակով, թե՛ տնտեսական և թե հասարակական-քաղաքական դերով։ Պարտադիր յոթնամյա ուսուցման կենսագործմամբ ուսուցչությունն ակտիվորեն պայքարեց նոր մարդու դաստիարակության համար, առանց որի հնարավոր չէր կառուցել նոր հասարակարգը։

Ինչպես տեսնում ենք, մեր երկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի բաղկացուցիչ մասերից մեկը կուլտուրական հեղափոխության իրականացումն էր։ Սովետական կարգեր հաստատվելուց հետո հանրապետության տնտեսական զարգացումը չէր կարող կուլտուրական կյանքի վերածնունդ չբերել հայ ժողովրդին։ Եվ իրոք, սեղմ ժամկետում համաժողովրդական պայքար ծավալվեց անգրագիտության վերացման համար և հանրապետությունը ծածկվեց դպրոցների և ակումբ-ընթերցարանների խիտ ցանցով։ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների վերակառուցման և նոր թափով ծավալման շնորհիվ ձևավորվեց Սովետական Հայաստանի մտավորականությունը, որը կարևոր դեր խաղաց կուսակցության նախագծերի իրականացման գործում։ Դա մեծ Հոկտեմբերի շնորհիվ վերածնված հայ ժողովրդի մեծագույն նվաճումն էր։

ՎԵՐՋԱԲԱՆ

Վ. Ի. Լենինի կողմից մշակված և հիմնավորված նոր տնտեսական քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ ՍՄԿԿ գլխավորությամբ սովետական ժողովուրդը թոթափեց անցյալի տխուր ժառանգության՝ տնտեսական և կուլտուրական հետամնացության փուշին, ստեղծեց ժամանակակից տեխնիկայով զինված սոցիալիստական արդյունաբերություն, որը հիմնված լինելով արտադրության միջոցների համաժողովրդական սեփականության վրա, պատմական սեղմ ժամկետում դրսևորեց իր բուռն զարգացման անսպառ հնարավորությունները։ Ծանր արդյունաբերության առաջնահերթ, բազմակողմանի զարգացումը հիմք ծառայեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման համար։

Սովետական ժողովուրդների բազմակողմանի օգնության շնորհիվ տարեցտարի ավելացավ նաև մեր Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը, որի մեջ նույնպես առանցքային տեղը պատկանում էր ծանր արդյունաբերությանը։ Այդ է վկայում ժողովրդական տնտեսության զարգացման առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին արդյունաբերության աճի դինամիկան (1926—1927 թթ. անփոփոխ գներով, միլիոն ռ.)[1]։

Արդյունաբերության ճյուղերը	1928	1932	1937
Արդյունաբերության համախառն արտադրանքը	28,2	111,0	255
որից			
Ծանր արդյունաբերությունը	19,4	85,6	344,1
Թեթև արդյունաբերությունը	8,8	25,4	40,9

Ինչպես տեսնում ենք, Հանրապետության արդյունաբերության զարգացումը բնութագրվում է առաջին հերթին ծանր արդյունաբերության բուռն վերելքով, որը հնարավորություն տվեց սեղմ ժամկետում առաջավոր տեխնիկայի հիման վրա վերակառուցել ամբողջ ժողովրդական տնտեսությունը։ 1919 թ. համեմատությամբ արդյունաբերության արտադրանքի ծավալի աճի տեմպերը 1928 թ. ավելացան 4 անգամ, 1932 թ.՝ 8 անգամ, իսկ 1937 թ.՝ 19 անգամ[2]։ Արդյունաբերության այսպիսի բուռն զարգացումը առաջին հերթին պայմանավորված էր տարեցտարի ավելացող կապիտալ ներդրումներով։ 1921—1928 թթ. Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել էր 73,1 մլն. ռուբլի, առաջին հնգամյակի տարիներին՝ 312 մլն., իսկ երկրորդ հնգամյակի ընթացքում՝ 984 մլն. ռուբլի[3]։ 1921—1937 թթ. Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ ներդված 1369 միլիոն ռուբլու ճնշող մասը ծախսվել է սոցիալիստական արդյունաբերության զարգացման վրա, որի արտադրանքը 1937 թ. կազմում էր ամբողջ արտադրության 71,7%-ը։ ՀԿ(բ)Կ X համագումարը (1937) նշեց, թե ինչպես նախկին կիսաոնաչնագործական, պարզունակ արդյունաբերության փոխարեն սովետական իշխանության տարիներին

1 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 23.
2 «Армения в единой семье народов СССР», стр. 39.
3 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 19.

ստեղծվել է բարձր զարգացած արդյունաբերություն, որի շնորհիվ փոխվել է նրա տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ (տոկոսներով)[4]։

Տնտեսության հյուղերը	1919 թ.	1927—1928 թթ.	1932 թ.	1934 թ.	1936 թ.
Արդյունաբերություն	10	21,6	57,2	64	69,2
Գյուղատնտեսություն	90	78,4	42,8	36	30,8

Սոցիալիստական արդյունաբերության այդպիսի բուռն զարգացման աննախադեպ տեմպերը, մեր երկրի, կոմունիստական կուսակցության ձեռք բերած խոշոր նվաճումն էր։ «ՍՍՀՄ ինդուստրացումը,— գրված է ՍՄԿԿ Ծրագրում,— բանվոր դասակարգի, ամբողջ ժողովրդի մեծ սխրագործությունն է, ժողովուրդ, որը չէր խնայում ոչ ուժ, ոչ միջոցներ, գիտակցաբար դիմում էր զրկանքի՝ երկիրը հետամնացությունից դուրս բերելու համար»[5]։

Սոցիալիստական շինարարության տարիներին որոշակի փոփոխություններ տեղի ունեցան Հանրապետության արդյունաբերական արտադրության կառուցվածքում։ Եթե ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում դեռևս իշխողը սննդի և թեթև արդյունաբերության, հիմնականում ձեռքի աշխատանքի վրա հիմնված պարզունակ արտադրությունն էր (սննդամթերքի, կաշվի, գինու և այլն), ապա 1930-ական թվականներին ավելի ու ավելի մեծանում է գունավոր մետաղամշակման, քիմիական, շինանյութերի, էլեկտրաէներգիայի արտադրության տեսակարար կշիռը, որով փաստորեն, Հանրապետությունը բևեռակոխեց ինդուստրիալ-ագրարային զարգացման ուղին։ Այդ շրջանում չտեսնված արագությամբ ավելացավ քաղաքային բնակչությունը, աճեց բանվոր-ծառայողների թիվը։ 1926 թ. մարդահամարի տվյալներով Հանրապետությունում 7 քաղաք կար (141,6 հազար բնակչությամբ) և 14 բանավան (25,5 հազար բնակչությամբ), որոնցում ապրում էր 167,1 հազար մարդ։ 1939 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում 9 քաղաք կար, որոնց բնակչությունը հասնում էր 333,9 հազարի և 9 բանավան՝ 32,5 հազար բնակչությամբ։ Այսպիսով, քաղաքային բնակչության թիվը

4 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 24, գ. 51, թ. 9 և «Խորհրդային Հայաստան», 8 հունիսի, 1937։

5 «ՍՄԿԿ Ծրագիրը», էջ 15։

հասնում էր 366,4 հազարի[6]։ Քաղաքային բնակչության այսպիսի արագ աճը, որը պայմանավորված էր արդյունաբերության և շինարարության զարգացման բարձր տեմպերով, բնականաբար, պիտի բերեր բանվոր-ծառայողների քանակի ավելացում։ 1922 թ. Հանրապետությունում հաշվվում էր մոտ 30 հազար բանվոր-ծառայող, 1928 թ.՝ 42,5 հազար, 1932 թ.՝ 94 հազար իսկ 1937 թ.՝ 104,5 հազար։ Սա էական տեղաշարժ էր Հանրապետության սոցիալական կառուցվածքում, որը վճռական նշանակություն ունեցավ սոցիալիզմի հիմքերի կառուցման գործում։

Ժողովրդական տնտեսության մեջ արդյունաբերության առաջատար դերի բարձրացումը հնարավորություն տվեց նոր տեխնիկական բազա ստեղծել նաև գյուղատնտեսության համար, առանց որի հնարավոր չէր հաջողությամբ կենսագործել նրա սոցիալիստական վերակառուցումը։ Իսկ դա, ինչպես հայտնի է, պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելուց հետո անցման շրջանի ամենաբարդ և ամենադժվարին խնդիր էր։ Այդ դժվարությունն ամենից առաջ կայանում էր նրանում, որ այն տեղի էր ունենում դասակարգային լարված պայքարի պայմաններում, սոցիալական բավականին բարդ իրադրության մեջ, երբ խիստ կերպով զգացվում էր տեխնիկայի, միջոցների, անհրաժեշտ կադրերի պակաս, փորձի բացակայություն և այլն։ Խոսելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մասին, Լ. Ի. Բրեժնևը նշել է. «Դա չափազանց դժվարին խնդիր էր։ Պետք էր հաղթահարել մանր սեփականատիրոջ սովորույթի դարավոր ուժը, նրա նեղ շահերի և կյանքի նկատմամբ ունեցած հայացքների նեղությունը, փոխել նրա հոգեբանությունը։ Հարկավոր էր անհատապաշտ գյուղացուն դարձնել կոլեկտիվ աշխատանքի ու հասարակական կյանքի ակտիվ մասնակիցը»[7]։

Գյուղատնտեսության կոլեկտիվացմամբ մանրապրանքային կացութաձևը, որը հիմնականն էր հայկական գյուղում, հեղափոխականորեն արտամղվեց սոցիալիստական կացութաձևով, և երեկվա մենատնտես գյուղացին կանգնեց սոցիալիզմ կառուցելու ուղու վրա։ Դրանով լուծվեց անցման շրջանի հիմնական հակասություններից մեկը, որը գոյություն ուներ խոշոր սոցիալիստական արդյունաբերության և մանրապրանքային գյուղացիական տնտեսությունների միջև։ Գյուղացիական անհատական արտադրությունն այլևս չէր բավարարում արդյունաբերության պլանաչափ զարգացման և քաղաքային բնակչության անընդհատ աճի

---

6 «Армения в единой семье народов СССР», стр. 200.

7 Լ. Ի. Բրեժնև, *Սոցիալիզմի մեծ հաղթանակների 50 տարին*, Երևան, 1967, էջ 21։

պահանջները։ Կենսագործելով նեպի հիմնական սկզբունքները, սովետական իշխանությունը հսկայական օգնություն ցույց տվեց Հանրապետության գյուղատնտեսության վերականգնմանն ու զարգացմանը։ Եթե 1921—1928 թթ. գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները կազմեցին 17,8 միլիոն ռուբլի, ապա առաջին հնգամյակի տարիներին՝ 96,6 միլիոն, իսկ երկրորդ հնգամյակում՝ 209,8 միլիոն ռուբլի[8]։ Միայն ջրաշինարարական աշխատանքների վրա 1921—1937 թթ. պետությունը ծախսեց 101,2 միլիոն ռուբլի, որի շնորհիվ յուրացվեցին 43,4 հազար հեկտար հողեր[9]։ Ամրապնդվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան։ Այդ բոլորը բախտորոշ նշանակություն ունեցան Հանրապետության գյուղատնտեսության և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման համար։

Հետևողականորեն կենսագործելով նեպը, կուսակցությունը կարողացավ ուժերի ճիշտ վերախմբավորման շնորհիվ մեկուսացնել շահագործողական տարրերին և ամբողջ ճակատով հարձակման անցնելով վերացնել շահագործում ծնող բոլոր պայմանները։

Կոլտնտեսային կարգի հաղթանակը հեղափոխական խոշոր հեղաշրջում էր գյուղի դարավոր կացութաձևի մեջ։ Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հսկայական աշխատանք կատարվեց մանրգյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ուղու վրա փոխադրելու համար։ 1927—1928 թթ. ծլարձակած առաջին կոլտնտեսությունները սովետական իշխանության բազմակողմանի օժանդակությամբ ամրապնդվեցին և աստիճանաբար դարձան գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և աշխատավորության կուլտուր-կենցաղային պայմանների բարելավման հիմնական բջիջները։ Օգտագործելով գյուղի սոցիալիստական վերակառուցման մի[illegible]նական հարուստ փորձը, շուրջ մեկ տասնամյակի ընթացքում մեր Հանրապետությունը ծածկվեց կոլտնտեսությունների խիտ ցանցով և գյուղացիության գարավոր հարցը գտավ իր ճիշտ և արդարացի լուծումը։ Ահա գյուղատնտեսության կոլեկտիվացման հանրագումարները առաջին և երկրորդ հնգամյակների տարիներին[10] (տե՛ս էջ 297)։

Կոլտնտեսային գյուղացիության ձևավորմամբ և գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի անբաժան տիրապետության հաս-

8 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 19.

9 Նույն տեղում, էջ 45։

10 «Социалистическое строительство Армянской ССР», стр 65; «Армения в единой семье народов СССР», стр. 79.

Կոլտնտեսությունների աճի դինամիկան	1928 թ.	1932 թ.	1935 թ.	1937 թ.
Կոլտնտեսությունների քանակը	55	892	1007	1072
Կոլեկտիվացված տնտեսություններ (տոկոսներով)	0,7	37,2	62.4	88,7
Կոլտնտեսությունների ցանքատարածութ. (տոկոսներով)	0,5	39,2	64,5	92,6

տատամամբ ունալ պայմաններ ստեղծվեցին նրա բուռն զարգացման համար։ Եթե 1928 թ. հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմում էր 72,4 մլն. ռուբլի (1926—1927 թթ. գներով), ապա 1937 թ. այն հասավ 99,1 միլիոնի[11]։ Դա խոշոր նվաճում էր։

Կոլտնտեսային կարգի հաղթանակով արմատապես փոխվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան։ Վերացվեցին անցյալից ժառանգություն մնացած արտադրության պրիմիտիվ միջոցները և ՄՏԿ-ների ստեղծմամբ ապահովվեց ժամանակակից մեքենայական սպասարկումը։ 1931 թ. գոյություն ունեին չորս ՄՏԿ-ներ, որոնք սպասարկում էին 153 կոլտնտեսությունների։ 1932 թ. արդեն յոթ ՄՏԿ կար, որոնց սպասարկած կոլտնտեսությունների թիվը հասնում էր 250-ի, 1935 թ. ՄՏԿ-ների թիվը հասավ 20-ի, որոնք սպասարկում էին շուրջ 450 կոլտնտեսության։ 1937 թ. հանրապետությունում գործում էին 24 ՄՏԿ-ներ, որոնք ժամանակակից բարդ մեքենաներով ու սարքավորումներով սպասարկում էին 641 կոլտնտեսություն[12]։ «Սովետական գյուղի անցումը խոշոր սոցիալիստական տնտեսության,— գրված է ՍՄԿԿ Ծրագրում,— մեծ հեղափոխություն էր տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիական կյանքի ամբողջ կազմաձևի մեջ։ ...Լենինյան կոոպերատիվ պլանի հիման վրա գյուղացիական դարավոր հարցը գտավ իր իսկական լուծումը»[13]։

Սոցիալիստական հասարակարգի կառուցմամբ մեր երկրում վերացան հակամարտ դասակարգերը։ Ազգաբնակչության հիմնական մասը կազմեցին երկու բարեկամական դասակարգերը՝ բանվոր դասակարգը և գյուղացիությունը։ Ձևավորվեց սովետական նոր մտավորականությունը։

11 «Социалистическое строительство Армянской ССР», стр. 47.

12 Նույն տեղում, էջ 57—58։

13 «ՍՄԿԿ Ծրագիրը», էջ 15։

Սոցիալիզմի հաղթանակով արմատական հեղաշրջում տեղի ունեցավ նաև հասարակության հոգևոր կյանքում: Կուսակցության ղեկավարությամբ կենսագործված կուլտուրական հեղափոխությունը տնտեսական և հասարակական գործունեության նոր ասպարեզներ բացեց աշխատավորության առջև: Սեղմ ժամկետում մեր երկրում վերացվեց անցյալի ամենածանր ժառանգություններից մեկը՝ անգրագիտությունը: 1926 և 1939 թթ. մարդահամարների տվյալներով հանրապետությունում հետևյալ նվաճումներն էին ձեռք բերվել 9—45 տարեկան բնակչության անգրագիտության վերացման ուղղությամբ (տոկոսներով)[14]:

Գրագիտությունը	1926 թ.	1939 թ.
Բնակչության գրագիտությունը ընդ.՝	88,7	83,9
Քաղաքային բնակչության	68,3	91,9
Գյուղական բնակչության	30,5	80,1

Կարևոր նվաճում էր նաև կանանց մասսայական անգրագիտության վերացումը, որով տնտեսական և հասարակական գործունեության լայն ասպարեզ բացվեց նրանց առջև: Կուլտուրական բեղափոխության կենսագործմամբ ձևավորվեց ազգային մտավորականությունը, զարգացան գիտության բոլոր բնագավառները:

Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի տնտեսական և կուլտուրական նվաճումների շնորհիվ որոշակի փոփոխություններ տեղի ունեցան մեր երկրի դասակարգային կառուցվածքում. փոխվեց դասակարգերի սոցիալական դեմքը, նրանց դերն ու տեղը հասարակական արտադրության մեջ: Սովետական բանվոր դասակարգը դադարեց իր ուժը շահագործողներին վաճառող պրոլետար լինելուց և հեղափոխության շնորհիվ իր տիրապետությունը հաստատելով արտադրության հիմնական միջոցների նկատմամբ, դարձավ մեր երկրի առաջատար ուժը: Սոցիալիզմի հաղթանակով վերացվեց նաև բանվոր դասակարգի ուսերին ծանրացած գործազրկությունը: Տրեցտարի զարգացող արդյունաբերության հետ մեկտեղ ավելացավ բանվոր դասակարգի քանակը:

Լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ մեր հանրապետությունում առաջացան բանվոր դասակարգի նորանոր

14 «Армения в единой семье народов СССР», стр. 84.

ջոկատներ, որպիսիք չկային նախասովետական շրջանում (քիմիական, էներգոարդյունաբերական, սովխոզային, ՄՏԿ-ների և այլն)։ Բանվոր դասակարգի շարքերում իրենց հաստատուն տեղը գրավեցին կանայք։ Հանրապետությունում նոր արդյունաբերական կենտրոնների առաջացումը զգալի փոփոխության ենթարկեց բանվոր դասակարգի տեղաբաշխման աշխարհագրությունը։ Լուրջ փոփոխությունների ենթարկվեց նաև բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական դեմքը։ Կուլտուրական հեղափոխության կենսագործման շնորհիվ զգալիորեն բարձրացավ նրա մակարդակը։ Բանվոր դասակարգի շարքերը համալրվում էին բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն կամ բարձր որակավորում ունեցող երիտասարդներով։ Եթե 1921 թ. Հանրապետությունում գործում էին 2 բուհեր (557 սովորողով), ապա 1937 թ. 8 բուհերում սովորողների թիվը հասնում էր 5000-ի։ Միջնակարգ մասնագիտական հաստատությունների թիվը նույն ժամանակաշրջանում 4-ից աճեց 57-ի, իսկ սովորողների թիվը 485-ից՝ 10049-ի[15]։ Հանրապետության բանվոր դասակարգը պատվով էր կատարում հասարակության առաջնորդի դերը, և իր շուրջը համախմբելով ամբողջ աշխատավորությանը, նրան նպատակամղում էր սոցիալիզմի կառուցմանը։

Արմատական փոփոխությունների ենթարկվեց հանրապետության գյուղացիությունը։ Մանր արտադրության վրա հիմնված, անընդհատ քայքայվող և շերտավորվող մասնավոր սեփականատիրական դասակարգից այն վերաճեց սոցիալիստական նոր դասակարգի՝ կոլտնտեսային գյուղացիության, որը հենվում էր արտադրության միջոցների կոլեկտիվ սեփականության վրա, պայքարում սոցիալիստական հասարակարգի կառուցման համար։ Կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ միասնական, բանվոր դասակարգի շուրջը համախմբված դասակարգ։ Հատկապես կուլակության վերացումը ստեղծագործական նոր թափ հաղորդեց կոլտնտեսային գյուղացիությանը. առաջ եկան ոչ միայն արտադրության առաջավորներ, այլև խոշոր, բազմաճյուղ տնտեսությունների լավագույն կազմակերպիչներ ու ղեկավարներ։ Կոլտնտեսային գյուղացիությունից էին ձևավորվում նաև մեխանիզատորական կադրերը։ Սա արտադրության կազմակերպման կոլտնտեսային կարգի խոշոր նվաճումն էր, որը ձեռք բերվեց անցման շրջանում։ Մինչև կոլեկտիվացումը գյուղացիության հիմնական մասը գտնվում էր տնտեսական և կուլտուրական ծանր պայմաններում։ Կոլտնտեսային կարգի հաղթա-

15 Նույն տեղում, էջ 141, 163։

նակի շնորհիվ գյուղում ևս վերացվեցին շահագործում ծնող պայմանները և կանխվեց գյուղացիության հետագա շերտավորումն ու քայքայումը։ Չնայած գյուղացիության մասնատիրական հոգեբանությունն ու մանրբուրժուական սովորույթները միանգամից չվերացան, կոլեկտիվային գյուղացիությունը մեկընդմիշտ խզեց իր կապերը մանր արտադրության հետ։ Կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ բանվոր դասակարգի հուսալի դաշնակիցը, առանց որի հնարավոր չէր մեր երկրում կառուցել սոցիալիստական հասարակարգը։ Այն ակտիվորեն մասնակցում էր երկրի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքին, ամրապնդելով սովետական պետության քաղաքական հիմքը՝ բանվորագյուղացիական դաշինքը։ Հաղթանակող սոցիալիզմի կարևոր նվաճումներից մեկը գյուղի և քաղաքի հակադրության վերացումն էր, նրանց տնտեսական և կուլտուրական կապերի ամրապնդումը։

Մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցումով արմատական փոփոխության ենթարկվեց նաև մտավորականությունը։ Սովետական կարգերի հաստատման սկզբնական շրջանում կուսակցությունը բավականին արտոնյալ պայմաններ ստեղծեց բուրժուական բարձրորակ մտավորականության համար՝ նրան տնտեսական շինարարության մեջ ներգրավելու նպատակով։ Հայաստանի բուրժուական մտավորականությունը, որի ճնշող մասը հայրենիք էր վերադարձել սովետական կարգեր հաստատվելուց հետո, հայրենասիրական մեծ նվիրումով ծառայեց սովետական իշխանությանը։ Դրա հետ մեկտեղ լուրջ աշխատանքներ կատարվեցին բանվորագյուղացիական նոր մտավորականության պատրաստելու համար։ Այդ խնդրում վճռական դերը պատկանում էր բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններին, որոնց թիվը տարեցտարի ավելանում էր։ Սովետական իշխանության հոգատարության շնորհիվ անցման շրջանում ձևավորվեց ազգային մտավորականությունը, որի հանդես գալը լենինյան ազգային քաղաքականության փայլուն դրսևորումն էր։ Ի տարբերություն կապիտալիզմի, մտավորականությունը մեզ մոտ չէր կենտրոնանում միայն քաղաքներում՝ խորացնելով մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակասությունը։ Ձևավորվեց նաև գյուղական մտավորականությունը (ուսուցիչներ, բժիշկներ, գյուղատնտեսական և տեխնիկական մասնագետներ և այլն), որը կարևոր դեր խաղաց գյուղատնտեսական վերելքի, ինչպես նաև նոր մարդու ձևավորման գործում։ Տարեցտարի ավելացող մտավորականությունը վճռական ուժ էր դառնում տնտեսության բոլոր բնագավառներում։ Սովետական մտավորականությունը նոր

էր ոչ միայն իր ծագումով, այլև իր բարոյաքաղաքական նկարագրով։ Զինված մարքս-լենինյան աշխարհայացքով և մասնագիտական գիտելիքներով, սովետական մտավորականությունն իր գործունեության հիմնական նպատակն էր համարում աշխատավորությանը ծառայելը, նորի, առաջավորի հաստատման համար պայքարելը։

Սոցիալիզմի պայմաններում ոչ միայն արմատական փոփոխությունների ենթարկվեց դասակարգերի կառուցվածքն ու սոցիալական դիմանկարը, այլև փոխվեց նրանց փոխհարաբերությունների բնույթը։ Արտադրության և բաշխման նկատմամբ ունեցած հարաբերությունները սովետական մարդկանց ավելի շատ մերձեցնում, քան թե հեռացնում են իրարից, ինչպես տեղի է ունենում կապիտալիզմի պայմաններում։ Մեզ մոտ մարդկանց տնտեսական և հասարակական դիրքը որոշվում է ոչ թե նրանց դասակարգային ծագումով, այլ աշխատանքով և ունակություններով։ Դրա լավագույն ապացույցն է կնոջ տնտեսական և հասարակական դերի բարձրացումը։ Արմատական փոփոխությունների ենթարկվեց հայկական ընտանիքը։ Նախկին բազմամարդ գերդաստանները, երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունների ազդեցության տակ, մասնատվեցին առանձին ընտանիքների, ձևավորվեց հայկական նոր ընտանիքը։ Չափազանց հատկանշական էր այն, որ երիտասարդ սերունդը առանց ցավագին հետևանքների առանձին ընտանիքներ էր կազմում, որոնք զերծ էին անցյալի մի շարք նահապետական սովորություններից։ Զգալիորեն բարելավվել էին աշխատավորների բնակարանային պայմանները, փոխվել էր նրանց պապենական հագուստն ու ապրելակերպը։ Նոր կենցաղի հաստատմամբ աստիճանաբար արտամղվեց նաև սնահավատությունը, թուլացավ եկեղեցու ազդեցությունը աշխատավորության վրա (հատկապես երիտասարդության)։ Սեղմ ժամկետում ձեռք բերած կուլտուր-կենցաղային այդպիսի խոշոր փոփոխությունները կարևոր նվաճում էին նոր մարդու ձևավորման համար կուսակցության և սովետական կառավարության մղած պայքարում։

Այդ նվաճումների հիման վրա ձևավորվեց սոցիալիստական հայ ազգը, որի առաջացման տնտեսական հիմքը արտադրության միջոցների հանրային սեփականությունն է (պետական և կոոպերատիվ-կոլտնտեսային)։ Սոցիալիստական ազգերին խորթ է շահագործողական գործունեությունը, և նրանց հոգևոր դեմքը բնութագրվում է ազգային և ինտերնացիոնալ շահերի խելացի զուգորդումով։ Լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի արդյունքն էր հանդիսանում ՍՍՀՄ ժո-

ղովուրդների բարեկամությունը, որը հզոր ուժ է նոր հասարակարգի կառուցման գործում։ Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակով ամրապնդվեց սովետական ժողովրդի սոցիալական և բարոյա-քաղաքական միասնությունը, որի հիմքում դրված է բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության անխախտ դաշինքը։ Երե սովետական կարգերի հաստատման սկզբնական շրջանում բանվոր դասակարգը հենվում էր սոցիալիստական խոշոր արդյունաբերության վրա, իսկ գյուղացիությունը՝ մանր, անհատական տնտեսությունների վրա, ապա սոցիալիզմի հաղթանակով միասնական տնտեսական հիմք ստեղծվեց երկու դասակարգերի համար։ Բանվոր դասակարգի հետ միասին կոլտնտեսային գյուղացիությունը ակտիվորեն պայքարում էր սոցիալիզմի հաղթանակի համար, որի ընթացքում էական փոփոխություններ տեղի ունեցան նրա հոգեբանության մեջ։

Նէպի հետևողական կենսագործմամբ, կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում հանրապետության սոցիալ-տնտեսական և կուլտուրական կյանքում տեղի ունեցած վիթխարի փոփոխությունները իրենց արտացոլումը գտան ՍՍՀՄ նոր սահմանադրության հիման վրա կազմված ՀՍՍՀ սահմանադրության մեջ։ Մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցմամբ որակական փոփոխություններ տեղի ունեցան տնտեսական և դասակարգային կառուցվածքում, որը բնականաբար պիտի արտացոլվեր հաղթանակած սոցիալիզմի սահմանադրության մեջ։ 1924 թ. գոյություն ունեցող սահմանադրությունը չէր արտահայտում երկրում տեղի ունեցած այդ փոփոխությունները։ ՍՍՀՄ սովետների VII համագումարը (1935 թ. փետրվար) որոշեց նոր սահմանադրություն մշակել։ 1936 թ. հունիսին ՍՍՀՄ նոր սահմանադրության նախագիծը հրապարակվեց մամուլում և դրվեց համաժողովրդական քննարկման։ ՍՍՀՄ սովետների VIII արտահերթ համագումարը (1936 թ. նոյեմբեր—դեկտեմբեր) հաստատեց նոր սահմանադրությունը, որտեղ փաստորեն, հանրագումարի էին բերվում մեր հասարակության շուրջ 20-ամյա նվաճումները։

ՍՍՀՄ նոր սահմանադրությամբ վերացվեց Անդրֆեդերացիան և Անդրկովկասի հանրապետությունները մտան ՍՍՀՄ կազմի մեջ, որպես ինքնուրույն միավորներ։ Հասկանալի է, որ ամեն մի հանրապետություն, ելնելով համաժողովրդական հավանության արժանացած ՍՍՀՄ սահմանադրությունից, պետք է մշակեր իր սահմանադրությունը և օրենսդրական կարգով ամրապնդեր իր ձեռք բերած տնտեսական ու քաղաքական նվաճումները։ ՀՍՍՀ սահմանադրությունը, որպես հիմնական

օրենք, հաստատվեց 1937 թ. մարտին։ Այնտեղ իրավաբանական ձևակերպում ստացավ մեր հանրապետության հասարակական և պետական կառուցվածքի սոցիալիստական բնույթը, սահմանվեցին իշխանության բարձրագույն և տեղական մարմինների դերն ու խնդիրները, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներն ու պարտավորությունները։ Դա հայ ժողովրդի խոշոր նվաճումն էր, նրա անցման շրջանի հաղթանակների ամփոփումը։ Որպես ինքնուրույն և իրավահավասար հանրապետություն Սովետական Հայաստանը, ՍՍՀՄ մյուս հանրապետությունների հետ մեկտեղ, բռնեց անշեղ վերելքի ուղին և նոր նվաճումների հասավ կոմունիստական հասարակարգի կառուցման ճանապարհին։

Մեր երկրում սոցիալիզմի կառուցումը ՍՄԿԿ գլխավորությամբ սովետական ժողովրդի հերոսական սխրանքն է։ Ղեկավարվելով մարքսլենինյան ուսմունքով, կոմունիստական կուսակցությունը կարողացավ բավականին բարդ և ծանր պայմաններում, ստեղծագործաբար մշակել բանվորապյուղացիական դաշինքի ամրապնդման և տնտեսության ղեկավարման այնպիսի ձևեր ու մեթոդներ, որպեսզի կարողանա ճնշել դասակարգային թշնամու դիմադրությունը և իր շուրջը համախմբելով աշխատավորությանը՝ պատմության մեջ առաջին անգամ ուղի հարթել դեպի սոցիալիզմ։ Սոցիալիստական շինարարության մեջ փորձված նեպի հիմնական սկզբունքները լայնորեն օգտագործվեցին և փայլուն քննություն բռնեցին նաև սոցիալիզմի ուղին թևակոխած մյուս երկրներում։ Սովետական ժողովուրդների սոցիալիստական շինարարության պատմական փորձը վիթխարի ազդեցություն ունեցավ համաշխարհային պատմության հեղափոխական զարգացման վրա։ Սոցիալիզմի կառուցումը միայն մեր երկրի ներքին գործը չէր. դրանով իսկ սովետական ժողովուրդն իր ինտերնացիոնալ պարտքն էր կատարում աշխարհի ժողովուրդների հանդեպ՝ գլխավորելով միջազգային պրոլետարիատի պայքարը միջազգային իմպերիալիզմի դեմ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ՆԱՀԱՆՋԻ ԵՎ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱՇԱՄԲԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ

(1921—1929)

Գլուխ առաջին.—Սովետական Հայաստանը նէպին անցնելու նախօրյակին

Սոցիալ-տնտեսական վիճակը և «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Հայաստանում 22

Գլուխ երկրորդ.—Անցում նէպին

1. *Նոր տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները* . . . 38
2. *Անցում նէպին Հայաստանում* 46

Գլուխ երրորդ.—Սոցիալ-տնտեսական վերելքի սկիզբը

1. *Գյուղատնտեսության վերականգնումն ու զարգացումը* 57
2. *Արդյունաբերության վերականգնումն ու վերակառուցումը* 77
3. *Կոոպերացիայի զարգացումը նէպի առաջին փուլում* 98

Գլուխ չորրորդ.—Նէպը և բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդումը

1. *Գյուղի շերտավորումը* 127
2. *Բանվորագյուղացիական դաշինքի ամրապնդումը* 149
3. *Դասակարգային պայքարի սրումը* 163

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄԲՈՂՋ ՃԱԿԱՏՈՎ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՓՈՒԼ

(1929—1936)

Գլուխ առաջին.—Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը

1. *Գյուղատնտեսության կոլեկտիվացումը* 187
2. *Կուլակության՝ որպես դասակարգի, վերացումը* 206

Գլուխ երկրորդ.—Սոցիալիզմի տնտեսական հիմքի ստեղծումը

1. *Սոցիալիստական արդյունաբերության նվաճումները* 218
2. *Սոցիալիստական մրցության ծավալումը* 227

Գլուխ եօթերորդ.—Բանվորագյուղացիական դաշինքի հետագա ամրապնդումը

1. Բանվոր դասակարգի առաջատար դերի բարձրացումը 234
2. Բանվոր դասակարգի օգնությունը գյուղին 242
3. ՄՏԿ-ների տնտեսական և քաղաքական դերը 249

Գլուխ չորերորդ.—Նէպը և կուլտուրական հեղափոխության կենսագործումը Հայաստանում 260

Վերջաբան 292

ԳՈՒՐԳԵՆ ՄԻՔԱՅԵԼԻ ԳԵՂԱՄՅԱՆ
ГУРГЕН МИХАЙЛОВИЧ ГЕГАМЯН

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՊԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1921—1936)

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎՅ 00049 Պատվեր 297 Հրատ. 4760 Տպաքանակ 1000

*Հանձնված է շարվածքի 17.03. 1978 թ.։ Ստորագրված է տպագրության. 25.07. 1978 թ.։
Տպագր. 19,13 մամուլ, պայման. 17,79 մամուլ, հրատ. 16,94 մամուլ։
Թուղթ № 60×84 1/16։ Գինը 2 ռ. 70 կ.։*

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, 375019, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան
Типография издательства АН АрмССР, 375019, Ереван, Барекамутян, 24.

Ա 61147

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220061147